# ԳԻՐՔ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ


ЛЕНИН



ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Պատմության ինստիտուտ

# ԳԻՐՔ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ

A III/2856

Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ — 1964



1941—1945 թվականների Հայրենական մեծ պատերազմի ճակատամարտերում ամբողջ վեհությամբ բացահայտվեց սովետական բանակի ամենահաղթ ուժը, որի հզոր հարվածների տակ ջախջախվեց հիտլերյան Գերմանիայի, միլիտարիստական Ճապոնիայի ու նրանց սատելիտների ռազմական մեքենան։

Սովետական բանակը, որպես նոր տիպի բանակ, որպես մեր երկրի ժողովուրդների՝ բանվորների ու գյուղացիների բանակ, ստեղծվել է 1918 թվականին կոմունիստական պարտիայի և համաշխարհային պրոլետարիատի մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ։ Նա կռվել է քաղաքացիական պատերազմի և օտարերկրյա ինտերվենտների դեմ մղած կռիվներում, պաշտպանել ու ամրապնդել է ռևոլյուցիայի նվաճումները, սովետական երկրի իրավահավասար ժողովուրդների ազատությունն ու անկախությունը։

Սովետական բանակը ազատության և խաղաղության արթուն պահապանն է։ Ազատությունն ու խաղաղությունը հանդիսացել ու հանդիսանում են սովետական վառ հայրենասիրությամբ տոգորված, պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակված մարտիկների ու հրամանատարների հերոսության անսպառ աղբյուրը։ Սովետական բանակը Հայրենական պատերազմի տարիներին ավելի պերճախոս կերպով դրսևորեց իր ժողովրդական և ինտերնացիոնալիստական բնույթը։

*«Պատերազմի ընթացքում... կարմիր բանակի մարտական արիության մեջ,— ասված է ՍՄԿՊ պատմության գրքում,— մարմնավորվեցին սովետական ժողովուրդների հոգևոր հզորությունը, նրանց բարոյա-քաղաքական միասնությունը։ Սովետական ռազմիկները գիտեին, որ իրենք պաշտպանում են իրենց սոցիալիստական Հայրենիքի անկախությունը և Եվրոպայի ու Ասիայի ժողովուրդների ազատությունը։ Դա սովետական-զորքերին մարտական սխրագործությունների էր ոգեշնչում և նրանց տանում էր դեպի հաղթանակ թշնամու բանակի դեմ...»*[1]։

*Հայրենական պատերազմի վճռական ճակատամարտերում ամեն օր ծնվում էին նորանոր խիզախներ, նորանոր հերոսներ, որոնք հավատարիմ սոցիալիստական Հայրենիքին, զինվորական երդմանը, արհամարհելով մահը, նետվում էին մոլեգնող մարտերի մեջ և քայլ առ քայլ ետ շպրտելով ու ջախջախելով ֆաշիստական զավթիչներին, ազատագրում էին սովետական սրբազան հողը, դեպի արևմուտք տանելով հաղթանակի կարմիր դրոշը։ Սովետական բանակը և նրա արիասիրտ ռազմիկները թշնամուն դուրս քշելով մեր Հայրենիքի տերիտորիայից, պատվով կատարեցին նաև իրենց պատմական միսիան՝ եղբայրական օգնության ձեռք մեկնելով Եվրոպայի և Ասիայի ժողովուրդներին նրանց ազատագրական պայքարում։*

*Մեր գործը արդար էր, մենք հաղթեցինք։ Ֆաշիստական զավթիչների դեմ տարած այդ համաշխարհային-պատմական հաղթանակը սովետական ժողովուրդն ու նրա փառապանծ զինված ուժերը ձեռք բերեցին անսահման զրկանքների ու զոհաբերությունների, միլիոնավոր սովետական մարդկանց արյան ու կյանքի գնով։ Այդ վճռական զոհաբերություններն իրենց բեղմնավոր արդյունքները տվին։ Դրա կենդանի ապացույցն է խաղաղության, սոցիալիզմի և դեմոկրատիայի ճամբարի գոյությունը, նրա հարաճուն հզորացումը։*

*Սովետական ժողովուրդը և ողջ աշխարհի առաջադեմ մարդկությունը երախտապարտությամբ իրենց արժանի հարգանքն են մատուցում սովետական ազատարար բանակին ու նրա փառապանծ ռազմիկներին, դյուցազնական մահով զոհված նրա հերոսների ու հերոսուհիների հիշատակին։*

*Հայրենական մեծ պատերազմի արիասիրտ ռազմիկների սխրագործությունների տարեգրության մեջ առանձնահատուկ տեղ են գրավում Սովետական Միության հերոսները։*

*Սովետական Միության պանծալի հերոսների թիվը պատերազմի վերջում հասավ մոտ 12 հազարի։ Նրանց մեծամասնությունը կոմունիստական պարտիայի և կոմերիտմիության անդամներ են, դաստիարակվել են մարքսիզմ-լենինիզմի անհաղթ գաղափարներով, կռվել կարմիր բանակի շարքերում. հանդիսանալով մարտական-քաղաքական պատրաստության առաջավորներ։*

---

[1] *«Սովետական Միության կոմունիստական պարտիայի պատմություն», Հայպետհրատ, 1959, էջ 715։*

*Հերոսների այդ պլեադայի ականավոր ներկայացուցիչներից են Սովետական Միության հերոսներ՝ Ն. Գաստելլոն, Վ. Տալալիխինը, Ա. Մատրոսովը, Զ. Կոսմոդեմյանսկայան, Յու. Սմիրնովը, Վ. Սաֆրոնովը, Մ. Կանտարիան, Մ. Հուսեյնովը, Դ. Կարբիշևը, Ռ. Իբարուրին, Ս. Պանֆիլովը, Մ. Ջալիլը, Սովետական Միության կրկնակի հերոսներ՝ Ա. Կովպակը, Ա. Շիլինը, Տ. Բեգելդինովը, Սովետական Միության եռակի հերոսներ՝ Ի. Կոժեդուբը, Ա. Պոկրիշկինը և շատ ուրիշներ, որոնք անթառամ փառքով պսակեցին իրենց անունները։*

*Սովետական Միության հերոսների մարտական շարքերում իրենց արժանի տեղն են գրավում նաև Սովետական Միության 106 հայ հերոսները՝ հայ ժողովրդի արժանավոր զավակները[1], ինչպես Հունան Ավետիսյանը, անվանի օդաչու կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանը և մյուսները։*

*Հայ ժողովուրդը իր բազմադարյան պատմության ընթացքում, օտար զավթիչների, բռնակալների ու շահագործողների դեմ՝ ազգային ու սոցիալական ազատագրության համար մղած պայքարում շատ հերոսներ է ծնել, որոնք անձնուրաց կռվել ու նահատակվել են հանուն հայրենիքի, հանուն ազատության։ Միաժամանակ նա նզովել ու անարգանքի սյունին է գամել երկչոտին, դավաճանին, նրա առաջ փակել հայրենական օջախի դռները։ Եվ ընդհակառակը, նա մեծարել ու փառաբանել է հայրենանվեր խիզախներին, հավերժացրել նրանց հիշատակը։*

*Հայ ռազմիկը սովետական բանակում հարստացրեց ռազմական իր հմտությունն ու տրադիցիոն խիզախությունը, կենդանի օրինակ ունենալով ռուս, գյուղացի ռուս զինվորին, սովետական բանակի խիզախ ռազմիկին։ Այդ ցայտուն կերպով դրսևորվեց քաղաքացիական կռիվների, առավելապես Հայրենական մեծ պատերազմի տարիներին, երբ հայ ռազմիկների և ամբողջ ժողովրդի ակտիվ մասնակցությունը սոցիալիստական հայրենիքի պաշտպանությանը՝ հենց սկզբից ընդհանուր ճանաչողության արժանացավ և բարձր գնահատվեց պարտիայի և սովետական կառավարության կողմից։ 1941 թվականի օգոստոսի 25-ին «Պրավդա» թերթը «Հայ ժողովուրդը Սովետական Միության ազատագրական պայքարի մարտական մասնակիցն է» առաջնորդողում գրել է. «Հայ ժողովուրդը իր մարտական տեղն է գրավել իրենց անկախության և ազատության համար Սովետական Միության բոլոր ժողովուրդների մղած ընդհանուր պայքարում։ Հայրենական պատերազմի ճակատներում իրենց ցուցաբերած անձնուրաց անվեհերությամբ ու արիությամբ հռչակված... հայ ժողովրդի... շատ զավակների պանծալի անունները հայտնի են ամբողջ Սովետական Միությանը։ Հայ ժողովուրդը, ինչպես և Սովետական Միության մյուս բոլոր ազատ ու իրավահավասար ժողովուրդները, առավել խորապես զգաց մեր երկրի վրա կախված վտանգն այն պատճառով, որ նա իր բազմադարյան պատ-*

---

[1] *Սույն գրքում նյութեր են զետեղված միայն 100 հերոսների մասին։*

մության մեջ բազմիցս ենթարկվել է օտար բռնակալների հարձակումներին։ Նա գիտե, թե ինչ է կոտորածը, ավերը, սովը, բռնությունը։ Հայ ժողովուրդը չի մոռացել հայերի ֆիզիկական ոչնչացումը, որ կազմակերպել էր արյունռուշտ Հիտլերի նախորդ Վիլհելմ կայսրը՝ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին։

Այդ պատճառով, երբ արյունոտ հրեշի պես բռնկվեց պատերազմը, որ սկսել էր մարդակեր Հիտլերը Սովետական Միության դեմ, ամբողջ հայ ժողովուրդը մի մարդու պես ոտքի ելավ Հայրենիքը պաշտպանելու»։

Պատերազմի ընթացքում հայ ռազմիկներին կարելի էր հանդիպել բոլոր ռազմաճակատներում, տարբեր տեսակի զորքերի շարքերում։ Հավատարիմ զինվորական երդմանը, նրանք քաջությամբ պաշտպանեցին սովետական Հայրենիքը, Հոկտեմբերյան ռևոլյուցիայի ծնունդ՝ սովետական իշխանությունը, գիտակցելով, որ իրենց հարազատ հայ ժողովրդին միայն սովետական իշխանությունը փրկեց օտար բռնակալների, իմպերիալիստների և սեփական շահագործողների լծից, պարգևեց նրան ազատություն, ազգային պետականություն տվեց, ապահովեց նրա խաղաղ ստեղծագործական աշխատանքը, ազգային վերածնունդը, տնտեսական ու կուլտուրական բուռն վերելքը։

Հայրենական մեծ պատերազմում հայ ժողովուրդը պատվով բռնեց քննությունը։ Նա անդուլ աշխատանք ծավալելով թիկունքում, համաժողովրդական օգնություն ցույց տալով բանակին, միաժամանակ իր զավակներից ռազմաճակատ ուղարկեց հարյուր հազարավոր ռազմիկներ։ Նա ձևավորեց և ռազմաճակատ ուղարկեց ազգային հինգ դիվիզիա, որոնք թշնամու դեմ մղած պայքարում փառքով պսակեցին իրենց մարտական դրոշները։ Հայ մարտիկները, ռուս, ուկրաինացի, վրացի, ադրբեջանցի և սովետական մյուս ժողովուրդների զավակների հետ ձեռք ձեռքի տված, ջախջախելով թշնամուն, նրան դուրս վռնդեցին մեր երկրի սահմաններից և որպես ազատարարներ, անցան Եվրոպայի տասնյակ երկրների սահմանները, մասնակցեցին Բեռլինի գրավմանը, ֆաշիստական Գերմանիայի ու միլիտարիստական Ճապոնիայի ջախջախմանը, մեր վերջնական հաղթանակի նվաճմանը։

Հայ ռազմիկների շարքերից առաջ քաշվեցին հմտալի զորավարներ, ավելի քան վաթսուն գեներալ և երեք մարշալ։ Առաջին Մերձբալթյան ռազմաճակատի զորքերի հրամանատարն էր այժմ Սովետական Միության մարշալ, պաշտպանության մինիստրի տեղակալ Ի. Ք. Բաղրամյանը, ՍՍՌՄ ռազմա-ծովային ուժերի ժողկոմի տեղակալն էր նավատորմի ադմիրալ Ի. Ս. Իսակովը, ռազմա-օդային ուժերի շտաբի պետն էր ավիացիայի մարշալ Ս. Ա. Խուդյակովը (Ա. Ա. Խանֆերյան)։ Խոշոր միավորումների հրամանատարներ կամ քաղաքական աշխատողներ էին այժմ գեներալ-գնդապետ Հ. Խ. Բաբաջանյանը, հետանու գեներալ-գնդապետ Մ. Ա. Պարսեղովը, գեներալներ Վ. Ս. Տամրուչին, Ս. Թ. Գալաջևը, Բ. Ի. Առուշանյանը, Գ. Ա. Տեր-Գասպարյանը, Ս. Ս. Մարտի-

բայանը, Ն. Գ. Սաֆարյանը, Հ. Հ. Մարտիրոսյանը, Ա. Գ. Կարապետյանը և ուրիշներ։

Մարտերում հանդես բերած հերոսական սխրագործությունների համար ՍՍՌՄ շքանշաններով ու մեդալներով պարգևատրվեցին մոտ 70 հազար հայ մարտիկներ։

Մեր հաղթանակի կոփման գործում խոշոր դեր կատարեց թիկունքը։ Հայկական ՍՍՌ թիկունքի աշխատավորներից 376.038 հոգի պարգևատրվեցին «Կովկասի պաշտպանության» և «1941—1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում աշխատանքային արիության համար» մեդալներով։

Արժանի գնահատական տալով Հայրենական պատերազմում հայ ժողովրդի ցուցաբերած ակտիվ մասնակցությանը, ՍՄԿՊ Կենտրոնական կոմիտեն և ՍՍՌՄ Ժողկոմսովետը Հայաստանում սովետական կարգերի հաստատման 25-ամյակի առթիվ ուղարկած ողջույնի հեռագրում նշել են, որ «...Հայրենական պատերազմի տարիներին հայ ժողովուրդը պատվով կատարեց իր պարտքը հայրենիքի հանդեպ։ Հայ մարտիկները, Սովետական Միության մյուս ժողովուրդների զավակների հետ միասին, անձնվիրաբար պաշտպանում էին մեր հայրենիքի ազատությունը և անկախությունը։ Հայաստանի բանվորները, կոլտնտեսականները և ինտելիգենցիան անդուլ կերպով աշխատում էին թշնամու դեմ հաղթանակ նվաճելու համար»[1]։

Այդ բարձր գնահատականի մեջ մեծ է Սովետական Միության հերոսների բաժինը, որոնք թշնամու դեմ մղված պայքարում միշտ ընթացել են առաջավոր շարքերում, ցույց տալով հերոսական սխրագործությունների և անձնազոհության փառավոր օրինակներ։

Երբ մենք դարերի ընթացքում գուրգուրանքով ու երախտագիտությամբ պահպանել ենք մեր քաջարի նախնիների հիշատակը և նրանց մասին հաղորդում ենք սերնդից սերունդ, ապա Սովետական Հայաստանի ազատ ու երջանիկ ժողովուրդը այժմ առավել հպարտ է սովետական բանակի իր մարտիկ զավակներով, Սովետական Միության հերոսների պանծալի գործերով։ Նրանք Հայրենական մեծ պատերազմում բազմապատկեցին հայ ժողովրդի մարտական փառքը, արժանի ավանդ ներդրեցին ֆաշիզմի դեմ հաղթանակ նվաճելու ընդհանուր պայքարում։ Հայ ժողովուրդը իր հերոսական տարեգրության մեջ, իր երգերում հավերժացրել է Սովետական Միության հերոսների գործն ու հիշատակը, նրանց անունները։ Կանցնեն տարիներ, կանցնեն դարեր, բայց հերոսների փառքը երբեք չի խամրի։

---

1 «Սովետական Հայաստան», 25 նոյեմբերի, 1945 թ.։

*Սովետական Հայրենիքի ազատության ու անկախության համար մղած մարտերում Հայաստանի աչքի ընկած զավակներից Սովետական Միության հերոսի կոչման են արժանացել.*

*ՌՍՖՍՌ տերիտորիայում մղած մարտերում . . . . . . . 7 մարդ*
*Կովկասում և Ղրիմում մղած մարտերում . . . . . . . 8 »*
*Հերոս քաղաքների պաշտպանության մարտերում . . . . . 9 »*
*Դնեպրի գետանցման մարտերում . . . . . . . . . 18 »*
*Ուկրաինայի, Բելոռուսիայի և Մերձբալթյան ռեսպուբլիկաների ազատագրման մարտերում . . . . . . . . . 17 »*
*Բեռլինի գրավման մարտերում . . . . . . . . . 4 »*
*Արտասահմանյան և հեռավորարևելյան տերիտորիաներում մղած մարտերում . . . . . . . . . . . 33 »*
*Սովետա-ֆիննական պատերազմում (1939 թ. վերջ 1940 թ. մարտ) 4 »*

## Ըստ ժամանակագրական կարգի այդ ռազմիկներին Սովետական Միության հերոսի կոչում է շնորհվել

*1942 թ. . . . . . . . . . . . . . . 3 մարդու*
*1943 թ. . . . . . . . . . . . . . . 14 »*
*1944 թ. . . . . . . . . . . . . . . 31 »*
*1945 թ. . . . . . . . . . . . . . . 43 »*
*1946 թ. . . . . . . . . . . . . . . 5 »*
*1939—1940 թթ. սովետա-ֆիննական պատերազմում . . . 4 »*

## Ըստ զորքերի տեսակների

1. *Հետևազորային . . . . . . . . . 53 մարդ*
2. *Հրետանավոր . . . . . . . . . 14 »*
3. *Օդաչու (որոնցից մեկը Սովետական Միության կրկնակի հերոս) . 10 »*
4. *Տանկիստ . . . . . . . . . 17 »*
5. *Սակրավոր . . . . . . . . . 3 »*
6. *Բժշկա-սանիտարական ծառայության անձնակազմ . . . 1 »*
7. *Հեծելազորային . . . . . . . . . 2 »*

## Ըստ զինվորական կոչումների

1. *Բանակի գեներալ . . . . . . . . . 1 մարդ*
2. *Գեներալ-մայոր . . . . . . . . . 3 »*
3. *Կոմդիվ . . . . . . . . . 1 »*
4. *Գնդապետ և փոխ-գնդապետ . . . . . . . 8 »*
5. *Մայոր . . . . . . . . . . 4 »*

6. Կոմիսար . . . . . . . . . . 1 »
7. Կապիտան . . . . . . . . . . 13 »
8. Ավագ լեյտենանտ, լեյտենանտ և կրտսեր լեյտենանտ . . 32 »
9. Ավագ . . . . . . . . . . 5 »
10. Ավագ սերժանտ և սերժանտ . . . . . . . 24 »
11. Եֆրեյտոր և շարքային . . . . . . . . 8 »

Սովետական Միության այս հերոսներից 95 հոգին հայեր են, իսկ հինգը եղբայրական մյուս ժողովուրդների զավակներ, որոնք ծնվել և դաստիարակվել են Հայաստանում։ Հերոսներից կոմունիստական պարտիայի և կոմերիտմիության անդամ են 86 և անկուսակցական՝ 14 հոգի։ Ինը ռազմիկներ հերոսի կոչման են արժանացել Հայկական 89-րդ կարմրադրոշ, «Կարմիր աստղի» և «Կուտուզովի» երկրորդ աստիճանի շքանշանակիր Թամանյան դիվիզիայում, որը հաղթանակի փառավոր ուղի է անցել Կովկասի նախալեռներից մինչև Բեռլին և Էլբայի ափերը։

Սովետական Միության հերոսներից 37-ը զոհվել են ռազմաճակատում։ Նրանցից շատերը հերոսի կոչման են արժանացել հետմահու։

«Գիրք հերոսների մասին» ներկա աշխատությունը Սովետական Միության հերոսի կոչման արժանացած՝ Հայաստանի զավակների մասին մի ամփոփ աշխատություն ստեղծելու առաջին փորձերից մեկն է*։ Գրքում հերոսները ներկայացված են զինվորական կոչումների հաջորդականությամբ, տրված են նրանց համառոտ կենսագրությունները ու մարտական գործունեությունը։ Այդ հերոսների կատարած հայրենասիրական սխրագործությունները օրինակ են ծառայում և ոգեշնչում են մեր աշխատավորներին, սովետական բանակի ռազմիկներին՝ Հայրենիքի պաշտպանությունն ամրապնդելու, կոմունիզմի կառուցմանը ակտիվ մասնակցելու գործում։

Սույն գրքի մասին անշուշտ կլինեն դիտողություններ, օգտակար առաջարկություններ, որոնք մեծ գոհունակությամբ հաշվի կառնվեն աշխատության հետագա հրատարակության ժամանակ։

ԽՄԲԱԳԻՐՆԵՐ

---

* 1947 թվականին Հայպետհրատը հրատարակել է Ա. Մալխասյանի կազմած՝ «Հայ գեներալներ և Սովետական Միության հերոսներ» ալբոմը, որը շատ համառոտ տեղեկություններ են տրվում նաև Սովետական Միության 82 հերոսների մասին։



# ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԱՍՏԻՃԱՆ՝ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍԻ ԿՈՉՈՒՄ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՍՍՌՄ Կենտգործկոմի 1934 թ. ապրիլի 16-ի որոշումից)

*1. Պետության հանդեպ անձնական կամ կոլեկտիվ ծառայությունների համար, որոնք հանդիսանում են հերոսական սխրագործություններ, սահմանել գերազանցության բարձրագույն աստիճան՝ Սովետական Միության հերոսի կոչում։*

*2. Սովետական Միության հերոսի կոչում շնորհվում է բացառապես ՍՍՌ Միության Կենտրոնական գործադիր կոմիտեի որոշմամբ։*

*3. Սովետական Միության հերոսներին տրվում է հատուկ պատվագիր։*

ՍՍՌ Միության ԿԳԿ նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 1934 թ., ապրիլի 16։*

## Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին կանոնադրությունից

*(ՍՍՌ Միության Կենտգործկոմի 1936 թ. հուլիսի 29-ի որոշումից)*

*1. Սովետական Միության հերոսի կոչումը հանդիսանում է գերազանցության բարձրագույն աստիճան և շնորհվում է պետությանը մատուցած անձնական կամ կոլեկտիվ այնպիսի ծառայությունների համար, որոնք կապված են հերոսական սխրագործության հետ։*

*2. Սովետական Միության Հերոսի կոչումը շնորհվում է բացառապես ՍՍՌ Միության Կենտրոնական գործադիր կոմիտեի որոշումներով։*

*3. Սովետական Միության Հերոսներին՝*

*ա) Հանձնվում է ՍՍՌ Միության բարձրագույն պարգևը—Լենինի շքանշան։*

*բ) Տրվում է ՍՍՌ Միության Կենտրոնական գործադիր կոմիտեի հատուկ պատվոգիր։*

ՍՍՌ Միության ԿԳԿ նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌ Միության ԿԳԿ քարտուղարի պաշտոնակատար՝ Ի. ՈՒՆՇԼԻԽՏ

*Մոսկվա, Կրեմլ, 1936 թ., հուլիսի 29։*

## ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՇԱՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*(ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1939 թ. օգոստոսի 1-ի և հոկտեմբերի 16-ի հրամանագրերից)։*

*Ի լրացումն և ի զարգացումն Սովետական Միության Հերոսի կոչման մասին գործող կանոնադրության, Սովետական Միության Հերոսի կոչման արժանացած և նոր հերոսական սխրագործություններ կատարած քաղաքացիներին առանձնապես նշելու համար.*

*Սահմանել հնգաթև ձև ունեցող «Ոսկե աստղ» մեդալ, հակառակ երեսում «ՍՍՌՄ Հերոս» մակագրությամբ։*

*«Ոսկե աստղ» մեդալով պարգևատրվում են Սովետական Միության Հերոսները, ըստ որում առաջին մեդալը տրվում է Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելիս Լենինի շքանշանը հանձնելու հետ միաժամանակ։*

*Սովետական Միության Հերոսը, կատարելով երկրորդ հերոսական սխրագործությունը, որը ոչ պակաս է նրանից, որի համար նման սխրագործություններ կատարած ուրիշ անձինք արժանանում են Սովետական Միության Հերոսի կոչման, պարգևատրվում են «Ոսկե աստղ» երկրորդ մեդալով և ի նշանավորումն նրա հերոսական սխրագործությունների հերոսի ծննդավայրում կանգնեցվում է նրա բրոնզե կիսանդրին՝ պատվանդանին համապատասխան մակագրությամբ։*

*Երկու «Ոսկե աստղ» մեդալներով պարգևատրված և իր ծննդավայրում կիսանդրի կանգնեցնելուն արժանացած Սովետական Միության Հերոսը երրորդ հերոսական սխրագործության համար պարգևատրվում է երրորդ «Ոսկե աստղ» մեդալով և ի նշանավորումն նրա կատարած հերոսական սխրագործությունների, պարգևատրվածի բրոնզե կիսանդրին համապատասխան մակագրությամբ, սյունաձև պատվանդանով դրվում է Մոսկվայում, Սովետների պալատի մոտ։*



# ԻՎԱՆ ՔՐԻՍՏԱՓՈՐԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ




## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**Կարմիր բանակի մարշալներին և գեներալներին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին**

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում գերագույն գլխավոր հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել Սովետական Միության հերոսի կոչում, հանձնելով Լենինի շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ։*

*1. Բանակի գեներալ Իվան Քրիստափորի Բաղրամյանին*

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝

Մ. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 20 հուլիսի 1944 թ.։*







Սովետական բանակի բարձր հրամանատարության շարքերում իր պատվավոր տեղն է գրավում հայ ժողովրդի տաղանդավոր զավակ, Սովետական Միության Հերոս, այժմ Համազորային մարշալ Իվան (Հովհաննես) Քրիստափորի (Խաչատուրի) Բաղրամյանը։

Իվան Բաղրամյանը ծնվել է 1897 թվականի դեկտեմբերի 2-ին Ելիզավետպոլ (այժմ Կիրովաբադ) քաղաքում, երկաթուղային բանվորի ընտանիքում։ Նախնական կրթությունը ստացել է երկաթուղային երկդասյան դպրոցում և ապա Թիֆլիսի երկաթուղային տեխնիկական ուսումնարանում։ Ուսումն ավարտելուց և մի քանի ամիս աշխատելուց հետո, Բաղրամյանը 1915 թվականի սեպտեմբերին գնում է բանակ, որպես ռուսական էքսպեդիցիոն կորպուսի Կովկասյան 2-րդ սահմանապահ գնդի շարքային զինվոր։ Այստեղ էլ սկսվում է նրա զինվորական ծառայությունը։ Էքսպեդիցիոն կորպուսը, որը թուրքական զորքերի դեմ համառ մարտեր մղելով Իրանի վրայով շարժվում էր դեպի Բաղդադ, շատ ծանր փորձությունների է ենթարկվում։ Բնական դժվարին պայմաններում, հոգնեցուցիչ արշավանքի ու մարտերի ընթացքում Բաղրամյանը ստանում է իր առաջին մարտական մկրտությունը, իրեն դրսևորելով որպես քաջ և դիմացկուն զինվոր, կոփված ռազմիկ։

*1916 թվականի ամառը Բաղրամյանը, որպես երիտասարդ ընդունակ ռազմիկ, գործուղվում է Թիֆլիսի պրապորշչիկների դպրոցը սովորելու։ Այն ավարտում է 1917 թվականի հունիսին և կրտսեր հրամանատարի աստիճանով նորից մեկնում ռազմաճակատ, նշանակվելով Ուրմիո լճի շրջանում գտնվող 3-րդ գնդի հրաձգային դասակի հրամանատար։*

*Պրոլետարական ընտանիքում մեծացած, երիտասարդ սպան ցնծությամբ է ողջունում Փետրվարյան ռևոլյուցիան, ինքնակալության տապալումը և քաղաքական ակտիվ գործունեության մեջ ներգրավվում։ Նա ընտրվում է սկզբում վաշտի, ապա գումարտակի զինվորական դեպուտատների կոմիտեի անդամ։ Ռազմաճակատում էլ նա դիմավորում է Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան։*

*Ռուսական բանակն Անդրկովկասից հեռանալուց հետո, Բաղրամյանը Կարսում հայկական 1-ին հեծելագնդի շարքերում 1918 թվականի ապրիլին կռվում է Անդրկովկաս արշավող թուրքական բանակի դեմ, իսկ 1920 թվականին Ալեքսանդրապոլ (այժմ Լենինական) քաղաքում իր էսկադրոնով մասնակցում է բոլշևիկների գլխավորած մայիսյան զինված ապստամբությանը, որը, սակայն, ճնշվում է։*

*1920 թվականի նոյեմբերին Հայաստանի բանվորները և գյուղացիները նորից ապստամբություն են բարձրացնում։ Սովետական Ռուսաստանի կարմիր բանակի եղբայրական օգնությամբ տապալվում է դաշնակների տիրապետությունը և Հայաստանում հաստատվում Սովետական իշխանություն։*

*Հենց սկզբից Բաղրամյանը ծառայության է մտնում երիտասարդ Սովետական Հայաստանի կարմիր բանակի՝ հայկական առաջին հեծյալ գնդում՝ որպես էսկադրոնի հրամանատար։ Նա իր էսկադրոնով 1921 թվականին 11-րդ բանակի զորամասերի հետ միասին, ակտիվորեն մասնակցում է Հայաստանի և Վրաստանի քաղաքացիական կռիվներին։*

*1921 թվականի ամռան վերջին, քաղաքացիական կռիվներն ավարտվելուց հետո, Բաղրամյանն իր էսկադրոնով Զանգեզուրից փոխադրվում է Երևան, 1923 թվականին նշանակվում է Հայկական առաջին հեծյալ գնդի հրամանատար և այդ պաշտոնում մնում է մինչև 1931 թվականը։ Այդ գունդը շնորհիվ իր հմուտ հրամանատարի, հայկական հրաձգային դիվիզիայում դառնում է ամենաօրինակելի զորամասերից մեկը։ Բաղրամյանի հրամանատարական սկզբունքների հիմքում ընկած էր սուվորովյան ոսկե կանոնը. «Ուսուցման մեջ շատ քրտինք, կռվում՝ քիչ արյուն»։*

*Բաղրամյանը, պրակտիկ աշխատանքներին զուգահեռ, մտահոգվում է, լրացնելու իր գիտելիքները, ավելի խորապես տիրապետելու ռազմական արվեստին. 1924—1925 թվականներին նա սովորում և ավարտում է կարմիր բանակի Լենինգրադի՝ հեծելազորային հրամկազմի կատարելագործման դասընթացը։ Այստեղ նրա հետ միասին միևնույն կուրսում են սովորել այժմ Սովետական Միության մարշալներ՝ Ռոկոսովսկին, Երեմենկոն, Ժուկովը և ուրիշ-*

ներ։ Այնուհետև Իվան Քրիստափորիչը 1931—1934 թվականներին փայլուն հաջողությամբ, գերազանց գնահատականներով սովորում և ավարտում է Մոսկվայի Մ. Վ. Ֆրունզեի անվան ակադեմիան, երկու տարի աշխատում Կիևի հատուկ ռազմական օկրուգի հեծելազորային դիվիզիայի շտաբի պետ, իսկ 1936—1938 թվականներին նա նորից սովորելու է մեկնում՝ կարմիր բանակի Գլխավոր Շտաբի Ռազմական ակադեմիան։ Ավարտելուց հետո նրան, որպես պատրաստված և ընդունակ շրջանավարտի, պահում են ակադեմիայում, տակտիկայի գծով ավագ դասախոս։ Նա սովետական զինված ուժերի համար մեծ թվով բարձրորակ կադրեր է պատրաստում, որոնցից շատերը աչքի ընկնող դեր կատարեցին Հայրենական մեծ պատերազմի տարիներին։

1940 թվականին գնդապետ Բաղրամյանը աշխատանքի է անցնում Կիևի հատուկ ռազմական օկրուգում, ուր և 1941 թվականին ընդունվում է ՍՄԿՊ շարքերը։

Պատերազմի սկզբից գնդապետ Բաղրամյանը Հարավ-արևմտյան ռազմաճակատի շտաբի պետի տեղակալն էր և օպերատիվ բաժնի պետը։ 1941 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին նա Հարավ-արևմտյան ռազմաճակատի հրամանատարության հետ միասին կազմակերպում ու ղեկավարում է Կիևի պաշտպանությունը։ Թշնամին երկու ամիս չկարողացավ գրավել քաղաքը և մեծ կորուստներ կրելով հրաժարվեց գրոհելուց։ Մեր զորքերը Կիևը թողեցին միայն սեպտեմբերի 20-ին, երբ հակառակորդը համարյա ամբողջովին շրջանցել էր քաղաքը և տիրել աջափնյա Ուկրաինային։

Բաղրամյանը 1941 թվականի աշնանից արդեն գեներալ-մայորի կոչում ուներ։ Նա մեծ նախաձեռնություն հանդես բերեց նաև 1941 թվականի նոյեմբերին Դոնի Ռոստովի ազատագրման օպերացիայի նախապատրաստման և իրականացման ընթացքում, ինչպես և դեկտեմբերին, Մոսկվայի տակ տեղի ունեցած վճռական ճակատամարտերի օրերին, գերմանական զորքերի աջ թևի Ելեցյան խմբի ջախջախման և Ելեց քաղաքի ազատագրման ժամանակ։

Այս հաղթանակները բարձրացրին Բաղրամյանի զորավարական հեղինակությունը։ 1941 թվականի նոյեմբերին սովետական կառավարությունը նրան պարգևատրում է Կարմիր դրոշի շքանշանով, իսկ Ռոստովի ու Ելեցի օպերացիաներից հետո Բաղրամյանին շնորհում է գեներալ-լեյտենանտի կոչում։ Նա նշանակվում է Հարավ-արևմտյան ռազմաճակատի շտաբի պետ։

1942 թվականի հուլիսի 14-ին Բաղրամյանը փոխադրվում է Արևմտյան ռազմաճակատ և նշանակվում 16-րդ բանակի հրամանատար։ Նրա բանակը օգոստոս-սեպտեմբերին Կալուգայից դեպի հարավ ետ շպրտելով հակառակորդի տանկային խոշոր ուժերը, ձախողում է նրանց հարձակումը։ Իսկ 1943 թվականի փետրվար-մարտին, ճեղքելով Ժիզդրա քաղաքից դեպի հյուսիս ընկած գերմանացիների խոր էշելոնացված ամրությունների գիծը, պարտության է

Н ш/2856

[illegible]աանում թշնամուն։ Այս փայլուն օպերացիաների իրականացման համար Բաղրամյանը պարգևատրվում է Կուտուզովի առաջին աստիճանի շքանշանով, իսկ նրա ղեկավարած բանակը վերակազմվում է 11-րդ գվարդիական բանակի։

Այս հաղթանակները ուղի հարթեցին հետագա ավելի փայլուն հաջողությունների համար։ 1943 թվականի հուլիսին 11-րդ գվարդիական բանակի միավորումները դասավորված էին Կոզելսկ և Սուխինիչի քաղաքներից հարավ՝ գերմանացիների Օրյոլ-Կուրսկի խմբավորման աջ թևի ուղղությամբ։ Նրանց խնդիր էր տրված թշնամու ռազմաճակատի կենտրոնի վրա՝ մեր զորքերի հարձակման ժամանակ խփել և հակառակորդի աջ թևով դուրս գալ Օրյոլ քաղաքի թիկունքը։ Բաղրամյանը այս օպերացիան նախապատրաստում էր գերագույն գլխավոր հրամանատարության տված ժամկետից դեռ շատ առաջ, արագ և այնպիսի գաղտնապահությամբ, որ թշնամին մինչև հարձակման պահը 11-րդ բանակի գրաված հատվածը համարում էր միանգամայն անվտանգ։ 1943 թվականի հուլիսի 12-ին հարձակվող մյուս միավորումների կազմում Բաղրամյանի զորքերը բոլոր տեսակի զենքերի ուժգին հարվածով փայլուն կերպով իրականացնում են հակառակորդի ռազմաճակատի գծի ճեղքումը և, հարաճուն ու սրընթաց կերպով զարգացնելով այն, 12 օրում անցնում են 160—180 կիլոմետր, դուրս գալով Բրյանսկ-Օրյոլ երկաթուղագիծը՝ թշնամու օրյոլյան խմբավորման խոր թիկունքը։ Նրանք, համագործակցելով հարձակման անցած Բրյանսկի և Կենտրոնական ռազմաճակատների հետ, ջախջախում են թշնամուն և օգոստոսի 5-ին ազատագրում Օրյոլ ու Բելգորոդ քաղաքները։

Գերագույն գլխավոր հրամանատարությունը օգոստոսի 5-ի հատուկ հրամանով շնորհակալություն է հայտնում Օրյոլ և Բելգորոդ քաղաքներն ազատագրած քաջարի զորքերին ու զորավարներին, որոնց թվում նաև Բաղրամյանին։ Այդ օրը մեր Հայրենիքի մայրաքաղաք Մոսկվան առաջին անգամ սալյուտ է տալիս, որը դառնում է պատերազմական ժամանակվա տրադիցիա։

Օրյոլի հաջող օպերացիայի համար Բաղրամյանին շնորհվում է գեներալ-գնդապետի կոչում։ Միաժամանակ նա պարգևատրվում է Սուվորովի առաջին աստիճանի զորավարական շքանշանով։

Այս օպերացիային հաջորդում է Բրյանսկի ազատագրումը։ Դրանից հետո Բաղրամյանն իր գվարդիական բանակով փոխադրվում է Մերձբալթյան 2-րդ ռազմաճակատ և 1943 թվականի նոյեմբերի 19-ին նշանակվում Մերձբալթյան առաջին ռազմաճակատի զորքերի հրամանատար՝ բանակի գեներալի կոչումով։

Մերձբալթյան առաջին ռազմաճակատի զորքերը, բանակի գեներալ Բաղրամյանի ղեկավարությամբ, բազմաթիվ դժվարին ճակատամարտեր մղեցին գերմանացիների կուրլանդական խմբավորման դեմ, որը կազմված էր Ֆինլանդիայից, Լենինգրադի և Մերձբալթյան ռազմաճակատներից նահանջած, ինչպես նաև Ռումինիայից այստեղ կենտրոնացված ֆաշիստական ընտիր զորքերից։ Հիտլերականները նպատակ ունեին այդտեղից ճեղքել, դուրս գալ սա-

վետական բանակի թիկունքը և կասեցնել նրա հետագա շարժումը դեպի արևմուտք։

Բայց թշնամին ջախջախվեց։ Այդ բանում մեծ դեր խաղացին Բաղրամյանի ղեկավարած զորքերը։

1943 թվականի աշնանը Նևել քաղաքից արևմուտք և հարավ-արևմուտք Մերձբալթյան առաջին և երկրորդ ռազմաճակատների միացման շրջանում մեր զորքերի համար դժվարին դրություն էր ստեղծվել։ Նևելի ուղղությամբ գործող մեր երեք բանակները թիկունքի հետ կապվում էին մի նեղ հատվածով, որն ուժեղ կերպով գնդակոծվում էր թշնամու կողմից։ Հիտլերականները հարավից իրենց Իդեշչենսկ-Գորոդոկյան խմբավորման համառ գրոհներով ամեն կերպ ձգտում էին կտրել միջանցքը և շրջապատել մեր զորքերին։ Անհրաժեշտ էր շտապ կարգով վերացնել այդ սպառնալիքը։

Գերագույն գլխավոր հրամանատարությունը այդ խնդրի կատարումը հանձնարարում է Բաղրամյանի գլխավորած ռազմաճակատի զորքերին։ Ծանր էր այդ առաջադրանքի կատարումը։ Անհրաժեշտ էր հաղթահարել ոչ միայն վիրավոր գազանի նման կատաղությամբ գրոհող թշնամու ուժերը, այլև բնական շատ դժվարությունները՝ անանցանելի ճահիճներ, անտառապատ տեղանք, անձրևներից ավերված ու կպչուն կավով ծածկված ճանապարհներ։ Բաղրամյանը կարճ ժամանակամիջոցում պլանավորելով իր ռազմաճակատի գործողությունները, հրետանային և ավիացիոն նախապատրաստությունից հետո, դեկտեմբերի 13-ին անցնում է հարձակման և հինգօրյա համառ ու արյունահեղ մարտերից հետո, հաղթահարելով բոլոր արգելքները, շրջապատում ու ջախջախում է հակառակորդի խմբավորումը։ Այնուհետև, զարգացնելով հարձակումը, նրա զորքերը դեկտեմբերի 24-ին շեշտակի գրոհով ազատագրում են Վիտեբսկի ուղղությամբ գերմանացիների պաշտպանության կարևորագույն հենակետ՝ Գորոդոկ քաղաքն ու երկաթուղային կայարանը։ Թշնամին մարտի դաշտում թողնում է ավելի քան 20 հազար սպանված, բազմաթիվ գերիներ ու ռազմավար։

1944 թվականի հունիսի 23-ին Մերձբալթյան առաջին ռազմաճակատի զորքերը, Բելոռուսական երրորդ ռազմաճակատի զորքերի (հրամանատար բանակի գեներալ Չերնյախովսկի) հետ միասին, ավիացիայի ու հրետանու կենտրոնացված հարվածների աջակցությամբ հարձակման անցնելով, երկու օրվա ընթացքում ճեղքում են Վիտեբսկի ամրացված շրջանը և 80 կիլոմետր ճակատով հասնում Արևմտյան Դվինա գետին։ Այստեղից թևային խոր շրջանցումով օղակի մեջ սեղմելով գերմանական հինգ դիվիզիայից բաղկացած խմբավորումը, ոչնչացնում և հունիսի 26-ին գրոհով գրավում են Բելոռուսիայի մարզային խոշոր կենտրոն Վիտեբսկ քաղաքը։

Սովինֆորմբյուրոն 1944 թվականի հունիսի 30-ի հաղորդման մեջ հանրագումարի բերելով հունիսի 23—27-ը հարձակողական գործողությունների արդյունքները, տեղեկացնում է, որ գերմանացիների կրած ընդհանուր կորուստ-

ները մարտական տեխնիկայի և կենդանի ուժի տեսակետից կազմում են՝ գերի և սպանված 77000 մարդ, 495 տանկ և ինքնագնաց հրանոթ, 2074 տարբեր տրամաչափի թնդանոթ, 1130 ականանետ, 6728 գնդացիր, 7590 ավտոմեքենա և այլն։

Այս խոշոր հաղթանակը Բաղրամյանին նոր փառք է բերում։ Նրա զորքերը շարունակելով հարձակումը, խորտակելով հակառակորդի խոր էշելոնացված ամրությունների սիստեմը, մարտերով գետանցում են Արևմտյան Դվինան և հուլիսի 4-ին ազատագրում Պոլոցկ քաղաքը՝ Դվինայի ուղղությունը փակող գերմանացիների պաշտպանության ամրացված շրջանը։ Սրանից հետո հաղթանակները հետևում են մեկը մյուսին։ Բաղրամյանի զորքերը հակառակորդին հետ շպրտելով, անցնում են ավելի քան 500 կիլոմետր տարածություն, ազատագրում Լատվիայի մեծ մասը, Լիտվայի, Բելոռուսիայի, Լեհաստանի մի շարք շրջանները և մտնում Գերմանիայի սահմանին։

1944 թվականի հուլիսի 27-ին Մերձբալթյան առաջին ռազմաճակատի զորքերը հետևակի ու տանկային միավորումների սրընթաց գրոհի շնորհիվ գրավում են Շաուլայ (Շավլի) և 31-ին Ելգավա (Միտավա) քաղաքները՝ Մերձբալթիկան Արևելյան Պրուսիայի հետ միացնող կոմունիկացիաների խոշոր հանգույցները։

Բարձր գնահատելով բանակի հրամանատար Ի. Ք. Բաղրամյանի մարտական ծառայությունները, զորավարական հմտությունը, և արիությունը, նրա ղեկավարած զորքերի աչքի ընկնող հաջողությունները՝ ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահությունը 1944 թվականի հուլիսի 29-ի հրամանագրով նրան շնորհում է Սովետական Միության հերոսի կոչում։

Ոգեշնչված հայրենիքի և սովետական կառավարության բարձր պարգևով, Բաղրամյանը իր ղեկավարած ռազմաճակատի զորքերով, օգոստոսին հաջող կերպով ետ մղելով հակառակորդի կատաղի հակահարձակումները, ձեռնամուխ է լինում նոր հարձակողական օպերացիաների, ձգտելով դուրս գալ դեպի Բալթիկ ծովի ափը, թշնամուն շրջապատել և ջախջախել։ Հարվածի հիմնական ուղղությունն ընտրելով Շաուլայի շրջանից դեպի հյուսիս-արևմուտք, Բաղրամյանը, համեմատաբար կարճ ժամանակամիջոցում, խիստ գաղտնապահությամբ, վերախմբավորում է իր ռազմաճակատի ուժերը։ Նա զորքերի հսկայական զանգվածներ և գրահատանկային ու ավիացիոն ուժեր է կենտրոնացնում թշնամու պաշտպանության ձախ թևում։ Երբ ամեն ինչ ավարտվում է, ռազմաճակատի զորքերը հուժկու հարձակում են սկսում։ Ճեղքելով Շաուլայից հյուսիս-արևմուտք և հարավ-արևմուտք 280 կիլոմետր լայնությամբ և 100 կիլոմետր խորությամբ ձգվող ռազմաճակատի գիծը, Մերձբալթյան առաջին ռազմաճակատի զորքերը Բելոռուսական երրորդ ռազմաճակատի զորքերի համագործակցությամբ, սրընթաց գրոհներով, սրբում, դեն են շպրտում հակառակորդի պաշտպանության հզոր հանգույցները, արգելափակոցները և հոկտեմբերի 10-ին հաղթանակով դուրս գալիս Բալթիկ ծովի ափը՝ Կլայպեդա քա-

պաքը։ Դրանով նրանք Արևելյան Պրուսիայից կտրում են Մերձբալթիկայում գտնվող գերմանական զորքերի խմբավորումը։

Հոկտեմբերի 13-ին Բաղրամյանի զորքերը Մերձբալթյան երկրորդ ռազմաճակատի զորքերի հետ միասին, ազատագրում են նաև Լատվիայի մայրաքաղաք Ռիգան ու Լիտվայի մեծ մասը, և Տուկումսի ու Լիբավա քաղաքների շրջանում օղակի մեջ առնելով գերմանական զորքերի 30 դիվիզիաներից բաղկացած խմբավորումը, աստիճանաբար լիկվիդացնում են այն։

1945 թվականի մարտից բանակի գեներալ Բաղրամյանը նշանակվում է Բելոռուսական երրորդ ռազմաճակատի շտաբի պետ, որի հրամանատարն էր Սովետական Միության մարշալ Ա. Մ. Վասիլևսկին։ Այստեղ նա փայլուն հաջողությամբ մասնակցում է Արևելյան Պրուսիայում կենտրոնացված ֆաշիստական ուժերի ջախջախման ու ֆաշիստական ագրեսորների ստրատեգիական հանգուցակետ Քյոնիգսբերգ քաղաքի (այժմ Կալինինգրադ) գրավման մարտերին։ Դրա համար նա երկրորդ անգամ պարգևատրվում է Սուվորովի առաջին աստիճանի զորավարական շքանշանով և մի քանի անգամ նշվում գերագույն գլխավոր հրամանատարության շնորհավորական հրամաններում։

Բաղրամյանի կուրծքը զարդարված է Լենինի՝ չորս, Կարմիր դրոշի՝ երեք, Սուվորովի առաջին աստիճանի՝ երկու, Կուտուզովի առաջին աստիճանի և ուրիշ շքանշաններով, «Ոսկե աստղ» ու մի շարք այլ մեդալներով։

ՍՍՌՄ Մինիստրների սովետը 1955 թվականի մարտի 11-ին Ի. Ք. Բաղրամյանին շնորհեց Սովետական Միության մարշալի կոչում։ Նա այժմ Սովետական Միության զինված ուժերի մինիստրի տեղակալներից մեկն է։ 1946 թվականից սկսած Ի. Ք. Բաղրամյանը շարունակ ընտրվել է ՍՍՌՄ Գերագույն սովետի, ապա Լատվիական և Հայկական ՍՍՌ Գերագույն սովետների դեպուտատ։ Նա ՍՄԿՊ XX և XXI համագումարներում ընտրվել է ՍՄԿՊ Կենտկոմի անդամության թեկնածու, իսկ XXII համագումարում՝ ՍՄԿՊ Կենտկոմի անդամ։

Բաղրամյանը սովետական զինված ուժերի անխոնջ ղեկավար գործիչներից մեկն է։ Հայ ժողովուրդը 1962 թվականի մարտի 18-ին նրան նորից ընտրեց Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի դեպուտատ։



# ՀԱՄԱԶԱՍՊ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ



## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի գեներալներին, սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում Հրամանատարության մարտական առաջադրանքները օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած հերոսության ու խիզախության համար,* շնորհել Սովետական Միության հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

2. *Գվարդիայի փոխգնդապետ* Համազասպ Խաչատուրի Բաբաջանյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝

М. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 26 ապրիլի 1944 թ.։*





Շարքային մարտիկից մինչև գեներալ-գնդապետ, հրաձգային ջոկի հրամանատարից մինչև ռազմական օկրուգի հրամանատար,—ահա այն մարտական ուղին, որ անցել է Սովետական Միության Հերոս Համազասպ Խաչատուրի Բաբաջանյանը։

Համազասպ Բաբաջանյանը ծնվել է 1906 թվականին Շամխորի շրջանի Չարդախլու գյուղում, չքավոր գյուղացու ընտանիքում։ Նա իր նախնական կրթությունն ստացել է գյուղի ծխական քառամյա դպրոցում, որից հետո 1915 թվականին փոխադրվում է Թիֆլիս և հաջող քննություն տալով՝ ընդունվում հայկական դպրոցի 5-րդ դասարանը։ Սակայն ուսումը երկար չի տևում։ Ծնողների նյութական սուղ պայմանները հարկադրում են նրան նորից տուն վերադառնալ և մինչև 1925 թվականը զբաղվել գյուղատնտեսական աշխատանքներով։

Հետաքրքրասեր ու աշխույժ կոմերիտականը դեռևս պատանեկան տարիներից երազում է զինվորական ծառայության մասին։ 1925 թվականին նա մըտնում է կարմիր բանակի հայկական դիվիզիայի Երևանի ռազմական դըպրոցը, իսկ 1927 թվականից ուսումը շարունակում Թիֆլիսի հետևազորային դպրոցում և այն ավարտում 1929 թվականին։ Երիտասարդ սպան այնուհետև

ծառայում է կարմիր բանակի զանազան զորամասերում՝ Բաքվում, Լենինգրադում և Սովետական Միության մյուս վայրերում։ Նա դեռևս ռազմական դպրոցում, իր ծառայությունն սկսելով ջոկի և դասակի հրամանատարի պաշտոններից, աստիճանաբար աճում, առաջ է քաշվում ավելի բարձր զինվորական պաշտոնների։ 1937 թվականին Ֆրունզեի անվան Ռազմական ակադեմիան ավարտելուց հետո, Բաբաջանյանը դառնում է կարմիր բանակի կրթված, բարձրորակ կադրային հրամանատարներից մեկը։ 1928 թվականին մտնում է ՍՄԿՊ շարքերը։

Մայոր Բաբաջանյանը մարտական առաջին մկրտությունն ստանում է 1939—1940 թվականներին սպիտակ ֆինների դեմ մղած կռիվներում և ցուցաբերած ակտիվ մարտական ծառայությունների համար արժանանում ՍՍՌՄ պաշտպանության ժողովրդական կոմիսարի շնորհակալության։

Հայրենական մեծ պատերազմի սկզբում Բաբաջանյանը մայորի աստիճան ուներ։ Հուլիսի 5-ից մեկնելով Արևմտյան ռազմաճակատ, Սմոլենսկի համար մղվող կատաղի մարտերում նա ստանձնում է հրաձգային գնդի հրամանատարությունը և իր կուտակած ռազմական ողջ փորձառությունն օգտագործում գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ մղվող կռիվներում։

Համազասպ Բաբաջանյանը Հայրենական մեծ պատերազմի առաջին հայ խիզախներից մեկը եղավ։ Նրա գունդը, ժամանակավոր նահանջի ծանր պայմաններում, արտակարգ համառությամբ պաշտպանելով մայր Հայրենիքի ամեն մի թիզ հողը, 1941 թվականի սեպտեմբերի 8-ին հաղթահարելով թշնամու գերազանց ուժերի կատաղի դիմադրությունը, առաջինների թվում մտնում է Ելնյա քաղաքը և մյուս զորամասերի հետ միասին արժանանում գվարդիականի պանծալի կոչման։

Ելնյան գրավելուց հետո միավորումը փոխադրվում է Կուրսկ քաղաքը՝ հանգստանալու և համալրվելու համար։ Բայց դա շատ կարճատև է լինում։ Շուտով նրա զորամասը նորից մարտերի մեջ է մտնում, Ֆատեժից դեպի ձախ հատվածում, պաշտպանելով Կուրսկի էվակուացիան։

Այստեղ Բաբաջանյանի զորամասերի շարքերը համալրում են Կուրսկի աշխարհազորայինները, որոնք և դառնում են նրա գնդի կորիզը։ Պատերազմի այդ ծանր օրերին, Կուրսկի բնակիչները հիացմունքով էին նայում սովետական առաջին գվարդիականների վրա, որոնք իրենց քաջությամբ հաղթանակի անհողդողդ հույս ու հավատ էին ներշնչում։ Բաբաջանյանն իր անձնական օրինակով գվարդիականի իսկական տիպար էր։ Նա իր զորամասով 1941—1942 թվականներին հերոսական շատ մարտեր մղեց Կուրսկի, նրա մերձակա Տիմ, Շչիգրի քաղաքների ու բազմաթիվ բնակավայրերի համար, դարձավ մարզի աշխատավորների ամենասիրելի ռազմիկներից մեկը։

Բաբաջանյանի գունդը 1942 թվականի հունվարին հրաման է ստանում գրավելու գերմանացիների պաշտպանության կարևոր հենակետերից մեկը՝ Սոկոլյա-Պլոտա գյուղը Կուրսկի շրջանում։ Հետախուզությունը պարզում է,

որ այստեղ հակառակորդը կենտրոնացրել է վեց անգամ ավելի շատ ուժ, քան ուներ Բաբաջանյանը։ Ամբողջ գիշեր գնդապետը նստում է օպերացիայի պլանի մշակման վրա, որոշում է թշնամուն խփել այն տեղից, որտեղից նա ամենևին չէր սպասում։ Կարճատև մարտերից հետո նրա գունդը ճեղքում է հակառակորդի պաշտպանությունը։ Հիտլերականները խուճապի մատնվելով և 1500 սպանված տալով՝ թողնում են գյուղը։

Չդադարեցնելով հետապնդումը, Բաբաջանյանի գվարդիականները գրավում են Վիպոլզովո գյուղը և ապա Շումակովո կայարանը, կտրում անցնում են Կուրսկ-Բելգորոդ երկաթուղային մագիստրալը ու խորանում Կուրսկից հարավ-արևելք Սեդվենսկիյի շրջանը՝ ոչնչացնելով մի քանի հազար հիտլերական զինվոր ու սպա։

Բաբաջանյանը նորից Կուրսկ է գալիս, 1943 թվականի հուլիսին և մասնակցում Օրյոլ—Կուրսկ—Բելգորոդի հռչակավոր ճակատամարտին, այս անգամ արդեն որպես գվարդիական 8-րդ մոտո-մեքենայացված կորպուսի 20-րդ տանկային բրիգադայի հրամանատար։

Բաբաջանյանի գվարդիականները, պաշտպանելով Օբոյան խճուղին, փակում են թշնամու ճանապարհը դեպի Կուրսկի մատույցները, որի վրա հարավից ու հյուսիսից մոլեգնորեն գրոհում էին ֆաշիստական զրահատանկային ուժերը։ Բրիգադան այստեղ շատ ջանք ու արյուն թափեց։ Վիրավորվեց նաև բրիգադայի հրամանատար Բաբաջանյանը, որը բուժվելուց հետո շուտով վերադարձավ զորամաս։

1943—1944 թվականների ձմեռային հարձակման ընթացքում պահպանելով միավորման հարձակողական բարձր տեմպերը՝ սրընթաց ու ճկուն տեղաշարժերը, Բաբաջանյանը իր միավորման բոլոր ուժերը կենտրոնացնելով վճռական հատվածներում, շշմեցուցիչ հարված հասցրեց հակառակորդին և փայլուն կերպով կատարեց վերադաս հրամանատարության մարտական առաջադրանքները։ Նրա միավորումը Ուկրաինական առաջին ռազմաճակատի զորքերի կազմում կրնկակոխ հետապնդելով թշնամուն և առաջ շարժվելով, մասնակցեց Վիննիցայի, Ժմերինկայի, Տարնոպոլի ուղղություններում կարմիր բանակի մղած ճակատամարտերին։ Կիևից հարավ-արևմուտք երկաթուղային խոշոր հանգույց Կազատին քաղաքի և կայարանի ազատագրման ժամանակ, Բաբաջանյանի գվարդիական տանկիստները համարձակ տեղաշարժերով ակցանի մեջ վերցնելով գերմանական 70-րդ մոտո-մեքենայացված դիվիզիային՝ գլխովին ջախջախեցին նրա երկու գնդերը։

Այդ շրջանում գվարդիական 20-րդ մոտո-մեքենայացված բրիգադան, որը բազմաթիվ մարտերում փառքով էր պսակել իր անունը, պարգևատրվեց կարմիր դրոշի շքանշանով։ Նրա հազարավոր մարտիկներ ու սպաներ նույնպես պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով։ Չորս մարտական շքանշանների ասպետ էր դարձել բրիգադայի հրամանատարը՝ Համազասպ Բաբաջանյանը։

1944 թվականի մարտին Ստանիսլավ քաղաքի ուղղությամբ Դնեստր գետն անցնելու և նրա աջ ափին պլացդարմ գրավելու համար Բաբաջանյանի բրիգադան 11 օր շարունակ համառ մարտեր է մղել և հաջողությամբ կատարել է առաջադրանքը։ 1944 թվականի ապրիլի 2-ին գվարդիական կարմրադրոշ 8-րդ մոտո-մեքենայացված կորպուսի հրամանատարությունը Բաբաջանյանին ներկայացնում է Սովետական Միության Հերոսի կոչման։ Գեներալ-մայոր Դրեմովը այդ կապակցությամբ Բաբաջանյանի մասին կազմած պարգևաթերթիկում արձանագրել է հետևյալը.

1944 թվականի մարտի 21-ից մինչև ապրիլի 1-ը Ուկրաինական առաջին ռազմաճակատում Ստանիսլավի ուղղությամբ բրիգադայի հարձակողական գործողությունների ժամանակամիջոցում ընկեր Բաբաջանյանը գերմանական զավթիչների դեմ մղվող կռիվներում ցույց տվեց արիություն և հերոսություն։ Ղեկավարելով բրիգադան, շեշտակի տեղաշարժերով, համառությամբ ու վճռականությամբ թևանցելով հակառակորդին, կտրեց նրա նահանջի ճանապարհները, ջախջախիչ հարվածներ հասցրեց թշնամուն և նրա թիկունքին։

Բաբաջանյանն իր զորամասից խմբեր առանձնացնելով և գլխավորելով նրանց մարտերը՝ սկսում է գրավել քաղաք քաղաքի հետևից։ Այդ մարտերի ընթացքում ազատագրվում են ավելի քան 60 խոշոր բնակավայր ու քաղաք։ Զալեշչիկ քաղաքը սրընթաց գրոհով գրավելուց հետո, Բաբաջանյանը, թշնամու տեղատարափ կրակի տակ, անձամբ Դնեստր գետի վրա ծանծաղուտ գտնելով, կազմակերպում է միավորման անցումը մյուս ափը։ ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահությունը 1944 թվականի ապրիլի 26-ի հրամանագրով Համազասպ Բաբաջանյանին շնորհում է Սովետական Միության Հերոսի կոչում։ Իսկ նրա բրիգադան ստանում է «Կարպատյան» անունը։

1944 թվականի ամառվանից սկսած մինչև 1945 թվականի մայիսը, Բաբաջանյանի կարմրադրոշ տանկային միավորումը գործում էր Բելոռուսական առաջին և երկրորդ ռազմաճակատների զորքերի կազմում։

1945 թվականի հունվարին մասնակցելով Վիսլայի Մագնուշևյան ամրությունների ճեղքմանը, հունվարի 19—31-ը Բաբաջանյանի զորամասերը իրենց բոլոր տեսակի զենքերի հուժկու կրակի օգնությամբ ուղղություն են վերցնում դեպի Լեհաստանի խորքը։ Նրանք աչքի են ընկնում Լոձ, Կուտնո, ապա դեպի Պոզնան տանող երկաթուղային և խճուղային ճանապարհների խոշոր հանգուցակետ Գնեզնո և այլ քաղաքների ազատագրման համար մղվող մարտերում։ Մոտենալով Վարտա գետին՝ նրանք հաղթահարում են գերմանացիների կառուցած նախակամրջային ամրությունները և գետանցում։ Այնուհետև հունվարի 31-ին նրանք հաղթականորեն մտնում են Գերմանիա՝ գրավում Լանդսբերգ, Միզերիտց, Շվիբուս, Ցյուլիխաու և մյուս քաղաքները՝ ֆաշիստական զորքերի կարևոր կոմունիկացիաները։

Այսպես, շարունակելով իրենց հաղթարշավը, Բաբաջանյանի գվարդիական տանկիստները, ուղի հարթելով հետևակի համար, ռազմաճակատի մյուս

միավորումների հետ միասին, մարտ ամսվա ընթացքում մասնակցում են Պոմերանիայում հիտլերականների պաշտպանության ուժեղ հենակետերի լիկվիդացմանը, այնուհետև, բելոռուսական երկրորդ ռազմաճակատի զորքերի հետ միասին, Բալթիկ ծովի ռազմածովային կարևոր բազա Գդինիա և ուրիշ շատ քաղաքների գրավմանը։

Հասնում է Բեռլինը գրոհի ու բերկրալի էտապը։ Սովետական Միության Հերոս Համազասպ Բաբաջանյանը իր զորամասերով նորից Բելոռուսական առաջին ռազմաճակատի զորքերի շարքերումն էր։ Տոգորված վերջնական հաղթանակի բուռն տենչով, Բելոռուսական առաջին ռազմաճակատի քաջարի զորքերը 1945 թվականի ապրիլի 16-ին Օդերի ձախափնյա պլացդարմից անցնում են վճռական հարձակման։ Հրետանու և ավիացիայի կենտրոնացված հուժկու հարվածների աջակցությամբ ճեղքելով Բեռլինը արևելքից փակող հակառակորդի պաշտպանության էշելոնացված ամրությունների բարդ սիստեմը, նրանք սրընթաց գրոհով ապրիլի 23-ին գրավում են Օդերի Ֆրանկֆուրտը և Բեռլինի մերձակա մի շարք քաղաքներ։ Այնուհետև Ուկրաինական առաջին ռազմաճակատի զորքերի հետ համագործակցած մտնում գերմանական միլիտարիզմի կենտրոն Բեռլինը և փողոցային մի քանի օրվա համառ մարտերից հետո, մայիսի 2-ին գրավում այն։

Առաջինը Բեռլին թափանցած տանկային զորամասերի շարքերումն էին նաև Բաբաջանյանի գվարդիականները։ Ի նշանավորումն ձեռք բերած մեծ հաղթանակների, գերագույն գլխավոր հրամանատարի 1945 թվականի մայիսի 2-ին հրապարակած հրամանում, Բեռլինի գրավման ճակատամարտերում աչքի ընկած զորքերի ու զորավարների թվում նշվում և շնորհակալություն է հայտնըվում նաև գնդապետ Բաբաջանյանին ու նրա գլխավորած դիվիզիային։ Դա 1944—1945 թվականների ժամանակամիջոցում Բաբաջանյանի ստացած 11-րդ շնորհակալական հրամանն էր։ Հրամանի համաձայն զորամասերը ստանում են «Բեռլինյան» երկրորդ անվանակոչումը, իսկ հազարավոր ռազմիկներ պարգևատրվում են նոր շքանշաններով։ Բաբաջանյանը արդեն 11 մարտական շքանշանների ասպետ էր։ Նրա կուրծքը զարդարվել էր Լենինի երկու, Կարմիր դրոշի չորս, Սուվորովի առաջին և երկրորդ աստիճանների, Կուտուզովի առաջին աստիճանի, երկու Կարմիր աստղի, Հայրենական պատերազմի առաջին աստիճանի, ինչպես նաև լեհական երկու շքանշաններով, Հերոսի «Ոսկե աստղ» և մի շարք այլ մեդալներով։

1945 թվականի հուլիսի 11-ին Սովետական Միության հերոս գվարդիայի գնդապետ Բաբաջանյանն արժանանում է տանկային զորքերի գեներալ-մայորի կոչման, իսկ հետագա տարիներին արագ կերպով աճելով, հասնում է գեներալ-գնդապետի աստիճանի և նշանակվում տանկային բանակի, ապա Օդեսայի ռազմական օկրուգի զորքերի հրամանատար։ Նա 1950 թվականին ընտրվել է ՌՍՖՍՌ, իսկ 1954 թվականին Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի դեպուտատ։



# ՄԻՔԱՅԵԼ ԱՐՏԵՄԻ ՊԱՐՍԵՂՈՎ



## ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի պետկազմին և շարքային կազմին Խորհրդային Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Ֆիննական սպիտակգվարդիականության դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար* Խորհրդային Միության հերոսի *կոչում շնորհել, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկի աստղ» *մեդալ.*

*109.* Կոմդիվ Միքայել Արտեմի Պարսեղովին:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 21 մարտի 1940 թ.։*






Միքայել Արտեմի Պարսեղովը սովետական բանակի հնագույն զորավարներից է։ Նա մասնակցել է քաղաքացիական կռիվներին, սովետա-ֆիննական պատերազմին, ֆաշիստական Գերմանիայի և միլիտարիստական Ճապոնիայի դեմ մղած պատերազմներին։ Միքայել Պարսեղովի ամբողջ գիտակցական կյանքը կապված է սովետական հայրենիքի պաշտպանության գործի հետ, որին նա հավատարմորեն ծառայում է 1918 թվականից ի վեր՝ շարքային մարտիկից հասնելով գեներալ-գնդապետի բարձր կոչմանը։

Միքայել Պարսեղովը ծնվել է 1899 թվականին Լեռնային Ղարաբաղի Մաշադիքենդ (այժմ Կոլխոզաշեն) գյուղում, բրուտագործի ընտանիքում։

Դառն է եղել Միքայելի կյանքը ցարիզմի օրոք։ Դեռ մանուկ էր նա, երբ զրկվեց ծնողներից։ Թողնելով ուսումը և հայրենի օջախը, 12-ամյա որբը մեկնում է օտար վայրեր՝ սեփական քրտինքով ապրուստ հոգալու համար։ Դեռահաս Միքայելը սևագործի ուժից վեր աշխատանք է տարել Միջին Ասիայի Անդիժան քաղաքի փայտեղենի պահեստներում և բամբակազտիչ գործարաններում։

Զորակոչվելով բանակ, 1916—1917 թվականներին նա մասնակցել է առա-

ջին համաշխարհային պատերազմին Կովկասյան ռազմաճակատում, որպես հրանոթի հրամանատար։

Սովետական իշխանությունն ասպարեզ բացեց Միքայելի ընդունակությունների զարգացման համար, որոշեց նրա կյանքի ուղին։ 1918 թվականին Միքայելը կամավոր զինվորագրվեց նորաստեղծ կարմիր բանակին, ընդունվեց կոմունիստական պարտիայի շարքերը և նվիրվեց սովետական իշխանության ու կոմունիստական պարտիայի մեծ գործին։

1918—1920 թվականներին Սովետական իշխանության թշնամիները, սկսած անգլիական ինտերվենտներից և վերջացրած բասմաչիներով, փորձում էին ոչնչացնել Հոկտեմբերյան ռևոլյուցիայի նվաճումները, արյան մեջ խեղդել Թուրքեստանյան Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկան։

Այդ ժամանակ Միքայել Պարսեղովը ծառայում էր Անդիժանի ամրոցում և նրա անձնակազմի հետ միասին մասնակցել է բասմաչիական բանդիտների և սովետական կարգերի մյուս թշնամիների դեմ մղած բազմաթիվ կռիվներին՝ Անդիժանում, Կոկանդում, Նամանգանում, Սկոբելևում (այժմ Ֆերգանա)։ 1920 թվականի օգոստոս-սեպտեմբերին Տաշքենդի հրետանային դպրոցի ունկնդիր Պարսեղովը Կարմիր բանակի այն զորամասի շարքերում էր, որն օգնեց Բուխարայի աշխատավորներին՝ տապալելու իմպերիալիզմի գործակալ Բուխարայի էմիրի տիրապետությունը։

Սոցիալիստական շինարարության տարիներին Միքայել Պարսեղովն ուսումնասիրում էր հրետանային տեխնիկան, կատարելագործվում զենքի այդ տիպի զորքի ղեկավարման բնագավառում։ 1936 թվականին նա ավարտեց Ֆրունզեի անվան զինվորական ակադեմիան։

Պարսեղովը Լենինգրադի ռազմական օկրուգի հրետանու պետն էր, երբ սկսվեց սովետա-ֆիննական պատերազմը։ Պարսեղովի վրա դրվեց կարևոր և միաժամանակ դժվարին պարտականություն՝ 7-րդ բանակի հրետանու ղեկավարումը։

Այս պատերազմում դրսևորվեցին Պարսեղովի զորահրամանատարական բարձր ընդունակությունները և ռազմական հմտությունը։

Կարմիր բանակին և առանձնապես սովետական հրետանուն վիճակված էր ճեղքելու Մաններհայմի պաշտպանական գիծը։ Հաղթահարելով անառիկ համարված այդ գծի երկաթ-բետոնե ամրությունները, Կարելական պարանոցի բազմաթիվ լճակները, ճահիճները, անտառներն ու խոր ձյունը, խիստ սառնամանիքների պայմաններում կարմիր բանակի միավորումները հաջողությամբ կատարեցին սովետական հրամանատարության առաջադրանքները։

...Բանակի հրետանու պետ կոմդիվ Պարսեղովն անընդհատ շրջում էր զորամասից-զորամաս, հրետանավորներին սովորեցնում հետախուզել, հայտնաբերել թշնամու դոտերը, ականային թակարդները և այլ կարգի ամրություններն ու կրակամիջոցները, ցուցում էր տալիս կրակելու և ոչնչացնելու դրանք։

Պարսեղովի ղեկավարած հրետանին ոչնչացրել է հակառակորդի բազմա-

*թիվ ամրություններ ու կրակակետեր, ճանապարհ հարթել մեր հետևակի և զորքի մյուս տեսակների առաջխաղացման համար։*

*...Կիպոլա գյուղի մոտ դանդաղել էր մեր հետևակի առաջխաղացումը։ Անմիջապես մեկնելով վաշտ և ուսումնասիրելով դրությունը, Պարսեղովը հրամայում է կրակ բացել № բարձունքի դիրքերի վրա, որտեղից հակառակորդը կատաղի կրակ էր տեղում։ Շուտով թշնամու կրակակետերը լռության մատնվեցին։*

*Տրոնդոանդի ուղղությամբ կռվող մեր հրաձգային դիվիզիային, որին սպիտակ-ֆինները կատաղի դիմադրություն էին ցույց տալիս, անհրաժեշտ էր հրետանու օգնությունը, իսկ վերջինս ուշանում էր։ Կոմդիվ Պարսեղովի հայտնվելը ոգևորեց հրետանավորներին, որոնք շտապ անցան սառույցը և օգնության հասան հետևակին։*

*1940 թվականի մարտի սկզբին Մաններհայմի պաշտպանական գիծը ճեղքված էր։*

*Սպիտակ ֆինների դեմ մղած կռիվներում «Հրամանատարության մարտական առաջադրանքները կատարելու ժամանակ ցուցաբերած հերոսական սխրագործության համար» ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1940 թվականի մարտի 21-ի հրամանագրով Միքայել Արտեմի Պարսեղովն արժանանում է Սովետական Միության Հերոսի կոչման։ Նույն օրը նա ստանում է կոմկորի (կորպուսի հրամանատար) զինվորական կոչում։ Սովետական Միության Հերոսի բարձրագույն պարգևին արժանացան նաև Պարսեղովի ղեկավարած միավորման ավելի քան քսան մարտիկներ ու հրամանատարներ։ Իսկ Սովետական Միության Ժողկոմսովետի նույն թվականի հունիսի 4-ի որոշումով նրան շնորհվեց հրետանու գեներալ-լեյտենանտի կոչում։*

*Հայրենական պատերազմի նախօրյակին Սովետական Միության Հերոս Միքայել Պարսեղովը Կարմիր բանակի հրետանու գեներալ-տեսուչ էր, ապա Կիևի ռազմական օկրուգի հրետանու պետ։*

*Սովետական ժողովրդի Հայրենական մեծ պատերազմի սկզբից մինչև 1942 թվականի մարտը գեներալ-լեյտենանտ Պարսեղովը նախ Հարավ-արևմտյան ռազմաճակատի, ապա Հարավ-արևմտյան ուղղության (Հարավ-արևմտյան, Բրյանսկի և Հարավային ռազմաճակատներ) հրետանու պետն էր։*

*Պատերազմի սկզբնական շրջանում թշնամու գերակշռող ուժերի ճնշման տակ Կարմիր բանակը հարկադրված էր ժամանակավորապես նահանջել։ Պարսեղովի ղեկավարած հրետանային զորամասերը պաշտպանելով մեր զորքերի ժամանակավոր նահանջը, զգալի կորուստ էին պատճառում թշնամու կենդանի ուժին և տեխնիկային։ Մեր հրետանին և հետևակը հիտլերյան զորքերին ուժեղ դիմադրություն ցույց տվեցին Տերնոպոլի, Լվովի և հատկապես Կիևի շրջանում, որի մատույցներում թշնամու առաջխաղացումը կաշկանդվեց ավելի քան երկու ամիս, իսկ քաղաքը թողնվեց միայն այն ժամանակ, երբ մեր զորքերը շրջապատման վտանգի տակ էին։*

1941—1942 թվականների ձմռանը, Մոսկվայի ճակատամարտի ժամանակ, Հարավային ռազմաճակատի զորքերն ակտիվ պատերազմական գործողություններ ծավալեցին և ազատագրեցին Ռոստովը։ Իսկ Հարավ-արևմտյան ռազմաճակատի աջ թևի զորքերը, որոնք Կենտրոնական և Արևմտյան ռազմաճակատների զորքերի հետ միասին իրականացնում էին ֆաշիստական զորքերի ջախջախումը Մոսկվայի տակ, ուժեղ կռիվներով թշնամուն դուրս վռնդեցին Ելեցից և հաջող մարտական գործողություններ ծավալեցին Օրյոլի ուղղությամբ։

1942 թվականի փետրվարին, միայն մեկ գիշերային մարտում,— հաղորդել է սովետական Ինֆորմբյուրոն,— Պարսեղովի հրամանատարությամբ գործող զորամասերը ջախջախեցին հակառակորդի դիմադրության ամրացված հանգույցը և գրավեցին 17 հակատանկային հրանոթ ու այլ ռազմավար՝ ոչնչացնելով 350 հիտլերականի։

Այնուհետև Պարսեղովի ղեկավարած 40-րդ բանակը Հարավ-արևմտյան, ապա Բրյանսկի ռազմաճակատներում պաշտպանողական կռիվներ է մղում։

1942 թվականի կեսերից Միքայել Պարսեղովն ստանձնեց Հեռավոր արեվելքում սովետական զորքերի հրետանու հրամանատարի պաշտոնը։

Ճապոնական միլիտարիստների դեմ մղած պատերազմում նա Հեռավոր-արևելյան երկրորդ ռազմաճակատի հրետանային զորքերի հրամանատարն էր։ Պարսեղովի ղեկավարած զորքերը, մյուս ռազմաճակատների զորքերի հետ միասին, ջախջախեցին ճապոնացիների երկարատև խոր էշելոնացված ամրությունները Մանջուրիայում և Կվանտունյան բանակը։ Նրա զորքերը մասնակցեցին Խարբինի և չինական բազմաթիվ այլ քաղաքների ու բնակավայրերի, ինչպես և Սախալինի հարավային մասի ու Կուրիլյան կղզիների ազատագրմանը։

Բարձր գնահատելով Միքայել Պարսեղովի ծառայությունները Հայրենիքի ու սովետական ժողովրդի հանդեպ, սովետական կառավարությունը նրան պարգևատրել է ութ շքանշանով և բազմաթիվ մեդալներով։ Նրա կուրծքը զարդարում են Սովետական Միության Հերոսի, «Ոսկե աստղ» մեդալը, Լենինի՝ երեք, Կարմիր Դրոշի՝ չորս, Սուվորովի երկրորդ աստիճանի շքանշանները։

Հետպատերազմյան ժամանակաշրջանում փառաբանված գեներալը՝ ծառայել է մի շարք ռազմական օկրուգներում, ավարտել է ռազմական բարձրագույն ակադեմիան, և 1958 թվականին նրան շնորհվել է հրետանու գեներալ-գնդապետի կոչում։

Գեներալ-գնդապետ Մ. Պարսեղովը մահացել է 1964 թ. ապրիլին։ Մինչև իր կյանքի վերջը նա ծառայում էր Սովետական բանակի շարքերում։



Սովետական Միության հերոսների աղբյուր-հուշարձաններ Երևանի մանկական երկաթուղու զբոսայգում:



# ՍԱՐԳԻՍ ՍՈՂՈՄՈՆԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի գեներալներին և սպայական կազմին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում Հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար,* շնորհել Սովետական Միության Հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

*14. Գեներալ-մայոր* Սարգիս Սողոմոնի Մարտիրոսյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ
ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 29 մայիսի 1945 թ.*







Սարգիս Սողոմոնի Մարտիրոսյանը սովետական զինված ուժերի կադրային սպաներից է։ Նա շարքային մարտիկից աճել դարձել է կորպուսի հրամանատար։ Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատներում զորքերի հմուտ ղեկավարման, անձնական խիզախությունների համար արժանացել է գեներալ-լեյտենանտի և Սովետական Միության Հերոսի բարձր կոչումներին։

Սարգիս Մարտիրոսյանը ծնվել է 1902 թվականի սեպտեմբերի 21-ին Ադրբեջանական ՍՍՌ Շամախու շրջանի Մադրասա հայկական գյուղում։ Նախնական կրթությունը նա ստացել է ծննդավայրում, ապա սովորել է Էջմիածնի Հոգևոր ճեմարանում, որը կիսավարտ թողնելով, վերադարձել է իր ծննդավայրը և այդտեղից 1917 թվականի մայիսին կամավոր մտել Բաքվի կարմիր գվարդիայի շարքերը։

Մարտիրոսյանը մասնակցել է Ադրբեջանում և Հայաստանում սովետական կարգերի հաստատմանը և քաղաքացիական կռիվներին։ 1922 թվականին նա հայկական հրաձգային դիվիզիայի 2-րդ գնդի գնդացրային դասակի հրամանատարն էր։ Մտահոգվելով իր ռազմական գիտելիքները հարստացնելու, կրթված հրամանատար դառնալու ցանկությամբ, Մարտիրոսյանը 1923 թվա-

կանից հաճախում է ռազմական մի շարք դասընթացներ։ Նա ավարտում է Թբիլիսիի հետևազորային դպրոցի հրամկազմի վերապատրաստման դասընթացների գնդացրային, ապա հետախուզական բաժինները, իսկ 1928 թվականին Մոսկվայում՝ ԲԳԿԲ գլխավոր շտաբին կից բարձրագույն հետախուզական կադրերի կատարելագործման դասընթացները։

Ս. Մարտիրոսյանը 1925 թվականից ՍՄԿԿ անդամ է։ 1924—1938 թվականներին նա հրամանատարական պաշտոններ է վարել 76-րդ հայկական լեռնա-հրաձգային դիվիզիայում՝ վաշտի հրամանատար, հետախուզության գծով գնդի շտաբի պետի տեղակալ, դիվիզիայի շտաբի հետախուզության բաժնի պետ, օպերատիվ բաժնի պետ և այլն։

Նախապատերազմյան հնգամյակների տարիներին լծվելով սոցիալիստական Հայրենիքի և նրա բանակի շինարարության գործին, Մարտիրոսյանը պատրաստել է մեծ թվով հետախույզներ, գնդացրորդներ և սնայպերներ, դաստիարակել է հրամանատարական կադրեր։

1938 թվականին մայոր Սարգիս Մարտիրոսյանը փոխադրվում է Բելոռուսական ռազմական օկրուգ։ 1936—1940 թվականներին նա հրամանատարական ղեկավար աշխատանք է տարել 30-րդ և ապա՝ 121-րդ դիվիզիաներում և իր ղեկավարած զորամասով ակտիվորեն մասնակցել Արևմտյան Բելոռուսիայի և Մերձբալթյան երկրների ազատագրմանը։

Երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, փոխգնդապետ Մարտիրոսյանը ծառայում էր Խարկովի ռազմական օկրուգում։ Նա վերադաս հրամանատարության հանձնարարությամբ Դոնբասի բանվորներից կազմակերպում է 227-րդ հրաձգային դիվիզիան և նշանակվում է նրա շտաբի պետ։ 1941 թվականի հունիսի 26-ից Մարտիրոսյանը այդ դիվիզիայի հետ միասին մեկնում է ռազմաճակատ։ Դիվիզիան սկզբում Հարավային ռազմաճակատում, ապա Կիևից հարավ- արևելյան շրջաններում ու Դնեպրի ափերին պաշտպանական մարտեր է մղում մեր Հայրենիքը ներխուժած ֆաշիստական զավթիչների դեմ։ Ապրելով ժամանակավոր նահանջի բոլոր դառնությունները, նա հենց սկզբից հանդես է բերում սովետական կադրային սպայի անընկճելի կամք ու տոկունություն։

Մոսկվայի պաշտպանության մարտերի լարված շրջանում, գնդապետ Մարտիրոսյանը 340-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարն էր։ Նրա դիվիզիան 49-րդ բանակի միավորումների հետ միասին, կատաղի մարտեր մղելով գերմանական տխրահռչակ գեներալ Գուդերիանի գրահատանկային զորամասերի դեմ և ետ շպրտելով նրանց՝ դեկտեմբերի 19-ին Տուլայի մոտ մեծ հաղթանակներ է տանում։

Հետապնդելով նահանջող թշնամուն, սովետական զորքերը ազատագրում են Մոսկվայի և Տուլայի մարզերի քաղաքներն ու գյուղերը։ Մարտիրոսյանի միավորումը մտնելով 50-րդ բանակի կազմում մասնակցում է Ալեկսինի, Կալուգա, իսկ 1942 թվականի փետրվարին նաև Յուխնով քաղաքների և շատ այլ

*բնակավայրերի ազատագրմանը։ Տուլայի պաշտպանության և ձեռք բերած հաղթանակների համար դիվիզիայից մեծ թվով մարտիկներ ու սպաներ պարգևատրվում են շքանշաններով ու մեդալներով։ Դիվիզիայի հրամանատար Մարտիրոսյանը պարգևատրվում է Կարմիր դրոշի շքանշանով։*

*50-րդ բանակի ռազմական խորհուրդը, շնորհավորելով Մարտիրոսյանին պարգևատրման առթիվ, գրել է.*

*«...Ձեր ղեկավարությամբ դիվիզիան անցավ փառավոր մարտական ուղի, լուրջ հարված հասցրեց գերմանա-ֆաշիստական զորքերին»։*

*Մոսկվայի պաշտպանությունից հետո 1942 թվականի հուլիսին տանկային 5-րդ բանակի կազմում Մարտիրոսյանի միավորումը առաջադրանք է ստանում ջախջախել դեպի Դոնի տափաստանը գրոհող թշնամու զորքերի խմբավորումը և ընդլայնել գետի արևմտյան ափի դիրքերը։ Հաջողությամբ պաշտպանելով իրենց դիրքերը և հետ մղելով հակառակորդի իրար հետևից կրկնվող գրոհները Մարտիրոսյանի զորամասերը հուլիսի 21-ին վճռական հակագրոհով ջախջախում են թշնամու խմբավորումը և առաջ շարժվելով, ամրանում են ստրատեգիական տեսակետից կարևոր նշանակություն ունեցող բնագծերում։*

*Այդ մարտերում Մարտիրոսյանի միավորումը ցրիվ է տալիս հակառակորդի 15 գումարտակ, ոչնչացնում 85 տանկ և այլ սպառազինություն։ Թշնամին կռվի դաշտում թողնելով մի քանի հազար սպանված, նահանջում է։ Դիվիզիան 1942 թվականի սեպտեմբերին Վորոնեժի ռազմաճակատում ակտիվ պաշտպանական մարտեր է մղում նաև 38-րդ բանակի կազմում։ Որպես արժանի գնահատություն զորքերի հմուտ ղեկավարման և տարած հաղթանակների ՍՍՌՄ Ժողկոմսովետը գնդապետ Մարտիրոսյանին 1942 թվականի դեկտեմբերի 20-ին շնորհում է գեներալ-մայորի կոչում։*

*1942—1943 թվականների ձմեռային հարձակումների ժամանակ Մարտիրոսյանը իր դիվիզիայով 40-րդ բանակի կազմում 200 կիլոմետր մարտական երթ է կատարում Դոնի միջին հոսանքի ուղղությամբ։*

*1943 թվականի հունվարի 12-ին մյուս միավորումների համագործակցությամբ Ուրիվ գյուղի շրջանում հարձակման անցնելով և Վորոնեժից հարավ ճեղքելով հակառակորդի երեք խոր էշելոնացված պաշտպանական ամրությունները, գեներալ Մարտիրոսյանի զորամասերն ազատագրում են Օստրոգոժսկ քաղաքը։ Հմտորեն կիրառելով թշնամու ուժերի թևանցման տակտիկան, դիվիզիայի զորամասերը փետրվարին մեծ հաջողությամբ մասնակցում են Ստարի Օսկոլ, Կորոչա, Բելգորոդ, Խարկով, ապա Պիսարևկա, Տրոստյանեց, Գադյաչ քաղաքների և շատ ուրիշ բնակավայրերի ազատագրմանը, ոչնչացնում ու գերի են վերցնում հազարավոր հիտլերական զինվոր ու սպա, գրավում են մեծ քանակությամբ զենք ու սպառազինություն։*

*Այդ հաղթանակների համար 340-րդ դիվիզիան և նրա հրամանատար գեներալ-մայոր Մարտիրոսյանը նշվում են գերագույն գլխավոր հրամանատարի հրամաններում։ 1943 թվականի փետրվարի ընթացքում գեներալը պար-*

գնահատվում է Սուվորովի երկրորդ աստիճանի և Կարմիր դրոշի շքանշաններով: Վորոնեժի ռազմաճակատի ռազմական խորհուրդը և նրա հրամանատարը 40-րդ բանակին ուղարկած հրամանում հանրագումարի բերելով ձմեռային կամպանիայի արդյունքները և շնորհակալություն հայտնելով բանակի դիվիզիաների անձնակազմին ու հրամանատարներին ձեռք բերած հաղթանակների համար, հատուկ կետով արձանագրել են. «Առանձնապես նշում եմ դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Մարտիրոսյանի լավ աշխատանքը մարտեր ղեկավարելու գործում»:

1943 թվականի հուլիսի 8-ին վերադաս հրամանատարությունը գեներալ Մարտիրոսյանին նշանակում է 50-րդ հրաձգային կորպուսի հրամանատար, որը մտնում էր 38-րդ բանակի մեջ: Այդ բանակը պաշտպանական մարտեր էր մղում Սումի քաղաքից արևելք և նախապատրաստվում էր մասնակցելու խոշոր հարձակումների՝ Ուկրաինայի տերիտորիան ազատագրելու համար: 50-րդ կորպուսի մեջ էին մտնում 340, 232 և 167-րդ հրաձգային դիվիզիաները:

Գերմանացիները երկար ժամանակ ամրացել էին Սումի քաղաքում: Գեներալ Մարտիրոսյանի կորպուսը օգոստոսի 8-ից գրոհներ սկսելով, փողոցային համառ մարտերից հետո սեպտեմբերի 2-ին ազատագրում է մարզային այդ կենտրոնը, ապա Ռոմնի ու Պրիլուկի քաղաքները: Այնուհետև զետանցելով Դեսնան, կորպուսը մոտենում է լայնահուն Դնեպրին և սեպտեմբերի երկրորդ կեսին՝ Կիևից հյուսիս, մարտերով հաղթահարելով ջրային այդ խոշոր բնագիծը, ամուր պլացդարմ է գրավում նրա աջ ափին: Ոչ թշնամու օդային ու հրետանային ռմբակոծությունները, ոչ էլ տանկերի ու հետևակային զորքերի համառ դիմադրությունը չկարողացան կասեցնել կորպուսի դիվիզիաների առաջխաղացումը, որոնք հուլիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում հալածելով նահանջող թշնամուն և մարտերով 337 կիլոմետր առաջ շարժվելով դեպի արևմուտք, ազատագրեցին 569 բնակավայր, ոչնչացրին ու վիրավորեցին 30000-ից ավելի ֆաշիստական զինվոր ու սպա, վերցրեցին մեծ թվով գերիներ, սպառազինություն և տեխնիկա:

Գերագույն գլխավոր հրամանատարը շնորհակալություն է հայտնում կորպուսի միավորումների անձնակազմին և նրա 340, 232 և 167-րդ դիվիզիաներին շնորհում է «Սումիյան», իսկ սեպտեմբերից կորպուսի մեջ մտած 163-րդ դիվիզիային՝ «Ռոմնիյան» կոչումը:

Մարտիրոսյանը զարգացած, կուլտուրական զորավար է, հոգատար հայր մարտիկների համար, մի բան, որը նշանակալիորեն օժանդակում էր նրա հաջողությանը: Դնեպրի ափերին մղվող մարտերի օրերին, ռազմաճակատում Մարտիրոսյանին հյուր է գնում տաղանդավոր սովետական գրող Իլյա Էրենբուրգը, որը Մարտիրոսյանի մասին գրել է հետևյալ տողերը. «Բրովարիում Վ. Ս. Գրոսմանի հետ մենք մինչև կես գիշեր նստեցինք գեներալ Ս. Ս. Մարտիրոսյանի մոտ: Նա ինձ զարմացրեց իր մարդկայնությամբ, հումանիզմով, մտքերի և զգացմունքների արտասովոր ազնվությամբ»:

1943 թվականի նոյեմբերի սկզբից Ուկրաինական առաջին ռազմաճակատի զորքերը՝ բանակի գեներալ Վատուտինի ղեկավարությամբ սկսում են Կիևի ազատագրման մարտերը: Շատ դաժան եղան, հակառակորդը կատաղի դիմադրում էր, բայց զորամասերը անզուսպ թափով առաջ էին նետվում, անցնելով կրակի հեղեղի միջով, շտապեցնում հարազատ քաղաքամայր Կիևի ազատագրումը:

Այդ ժամանակ հյուսիսային խմբավորման՝ Լյուտեժից դեպի Կիև գրոհող 38-րդ բանակի շարքերում էր գործում նաև Մարտիրոսյանի կորպուսը:

1943 թվականի նոյեմբերի 5-ի լույս 6-ի գիշերը, վաղ լուսաբացին Ուկրաինական առաջին ռազմաճակատի քաջարի զորքերը կենտրոնացված հարվածով ազատագրում են Սովետական Ուկրաինայի մայրաքաղաք Կիևը: Առաջին քաղաք մտած տանկային զորամասերի հետ էին Մարտիրոսյանի հրաձգային կորպուսի դիվիզիաները: Գերմանական օկուպանտներից ազատագրված Կիևի կայազորի առաջին պետ է նշանակվում գեներալ Մարտիրոսյանը: Կորպուսի դիվիզիաները ռազմաճակատի աչքի ընկնող միավորումների թվում նշվում են Գերագույն գլխավոր հրամանատարի հրամանում, «Կիևյան» կոչում են ստանում և պարգևատրվում մարտական շքանշաններով: Կորպուսի հրամանատար Ս. Մարտիրոսյանը պարգևատրվում է Լենինի շքանշանով: Սուվորովի երկրորդ աստիճանի շքանշանով է պարգևատրվում նաև կորպուսի կազմում գտնվող չեխոսլովակյան առաջին հրաձգային բրիգադան, որի հրամանատարն էր գնդապետ Լյուդվիգ Սվոբոդան:

Կրնկակոխ հետապնդելով թշնամուն, Մարտիրոսյանի գլխավորած քաջարի զորքերը այնուհետև ազատագրում են Վասիլկովը, Ֆաստովը, Ժաշկովը, Բելայա-Ցերկով քաղաքները: Սկսվում է հերոսապատումներով լի մարտերի մի նոր շրջան: Ճեղքելով թշնամու ուժեղ ամրությունների բնագծերը, կորպուսի դիվիզիաները Ուկրաինական երկրորդ ռազմաճակատի զորքերի կազմում գետանցում են Հարավային Բուգը, Դնեստրը: Ապրիլի 3-ին կորպուսը անցնելով Պրուտ գետը և պլացդարմ գրավելով նրա արևմտյան ափին, առաջինների թվում է հասնում սովետական պետական սահմանին, մտնում Ռումինիա, գրավում Խոտին, Դորոխոյ, Սերետ, Սուչավա, Ռեդեուցի, Մարգինա, Սոլկա, Միխայլեն քաղաքներն ու 377 այլ բնակավայրեր: Այդ հաղթանակների համար կորպուսի դիվիզիաները պարգևատրվում են շքանշաններով, դառնում են Կարմրադրոշ և Բոգդան Խմելնիցկու շքանշանակիր միավորումներ:

Երկրորդ անգամ Սուվորովի երկրորդ աստիճանի շքանշանով է պարգևատրվում նաև կորպուսի հրամանատար գեներալ-մայոր Մարտիրոսյանը:

1944 թվականի ապրիլից Մարտիրոսյանը 40-րդ բանակից փոխադրվում է Ուկրաինական երկրորդ ռազմաճակատի 52-րդ բանակը և նշանակվում նրա 73-րդ հրաձգային կորպուսի հրամանատար: Այդ կորպուսի կազմում էին գտնվում 50, 115 և 254-րդ հետևակային դիվիզիաները:

Հայ ժողովրդի արժանավոր զավակը, որը նախորդ մարտերին ցույց էր տվել զորավարական կարողություն, ռազմական լայն մասշտաբի գործողություններ պլանավորելու և կենսագործելու հմտություն, շարժվում է դեպի կարպատները։ Նա 1944—1945 թվականների ընթացքում իր նոր կորպուսով մեծ հաջողությամբ մասնակցում է Ուկրաինական երկրորդ և առաջին ռազմաճակատների ձեռնարկած կարևոր բոլոր օպերացիաներին՝ Յասսի-Քիշինևյան խմբավորման ջախջախմանը և Սանդոմիրյան հզոր պլացդարմի ստեղծմանը։ Խորտակիչ հարվածներ հասցնելով թշնամուն և կրնկակոխ հետապնդելով նրա քայքայված, ցիրուցան եղած զորքերին, 73-րդ կորպուսի զորամասերը, Ուկրաինական առաջին ռազմաճակատի զորքերի կազմում, հունվարի 21-ի գիշերը մտնում են Գերմանիայի տերիտորիան. գետանցելով Օդերը, Նեյսեն շարունակում են իրենց հաղթարշավը դեպի Բրեսլաու և Տիգլիտ քաղաքները։

Այդ մարտերի ընթացքում Մարտիրոսյանի միավորումը հինգ անգամ նշվում է գերագույն գլխավոր հրամանատարի հրամաններում։ Կորպուսի դիվիզիաները անվանվում են «Օդերյան», իսկ նրա հրամանատար Մարտիրոսյանը երկրորդ անգամ պարգևատրվում է Լենինի շքանշանով և Կարմիր դրոշի ևս երկու շքանշաններով։

Վրա է հասնում բեռլինյան օպերացիան։ Մարտիրոսյանն իր կորպուսով նորից Ուկրաինական առաջին ռազմաճակատի քաջարի զորքերի շարքերում է, նրանց հետ միասին գրոհում է Բեռլինի ուղղությամբ։

Ապրիլի 16-ի լուսաբացին ավիացիայի և հրետանային ամբակոծությունից հետո, նրա զորամասերը, հարձակումը զարգացնելով Դրեզդենի ուղղությամբ, անցնելով Նեյսե գետը, թշնամուն դուրս են մղում խրամատներից և մոտենում Բեռլինի մատույցներին։

Մարտիրոսյանի կորպուսը հենց միայն Գերմանիայի տերիտորիայում գրավել է 16 քաղաք, ավելի քան 1000 բնակավայր, ոչնչացրել ավելի քան 20.600 ֆաշիստական զինվոր ու սպա, 83 տանկ, 21 ինքնաթիռ, վերցրել մեծ քանակությամբ գերիներ, ռազմական գույք և այլն։ Այդ մարտերում կորպուսի մարտական առաջադրանքներն անթերի կատարելու և անձնական խիզախությունների համար գեներալ Սարգիս Մարտիրոսյանը վերադաս հրամանատարության կողմից ներկայացվում է Սովետական Միության Հերոսի կոչման։ ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահությունը 1945 թվականի մայիսի 29-ին նրան շնորհում է Սովետական Միության Հերոսի կոչում։

Բեռլինի մատույցներից Մարտիրոսյանը իր կորպուսով, մի շարք այլ միավորումների թվում շարժվում է Էլբայի ափերով դեպի Չեխոսլովակիա և պատերազմն ավարտում 1945 թվականի մայիսի 10-ին մասնակցելով Պրագայի ազատագրմանը, որի համար պարգևատրվում է Չեխոսլովակյան «Սպիտակ առյուծի» երկրորդ աստիճանի և «Խաչ սուսերով» մարտական շքանշաններով։

Մարտիրոսյանը ուկրաինական և չեխ եղբայրական ժողովուրդների սիրելի

*զորավարներից մեկն է։ Նա հերոսական մարտեր մղեց Ուկրաինայի ամեն մի թիզ հողի համար, մի շարք խոշոր միավորումների թվում օգնության հասավ Պրագային։*

*Ավարտվեց Հայրենական մեծ պատերազմը։ Հայ ժողովրդի արժանավոր զավակը մարտական փառքով վերադարձավ հայրենի տուն։*

*Բանակի հրամանատարությունը 1945 թվականի մայիսի 15-ին Մարտիրոսյանի մասին կազմած բնութագրում գրել է.*

*«Հայրենական մեծ պատերազմի մարտական գործողությունների ամբողջ ժամանակամիջոցում գեներալ-մայոր Մարտիրոսյանը ցույց է տվել զորքերն հմտորեն ղեկավարելու վարպետության օրինակ, մարտերում ցուցաբերել է քաջություն և խիզախություն, Հայրենիքին անսահմանորեն նվիրվածություն։ Նա դաստիարակել է հարյուրավոր, հազարավոր շքանշանակիրներ ու հարյուրավոր Սովետական Միության հերոսներ»։*

*Մարտիրոսյանի կուրծքը զարդարված է 14 մարտական շքանշաններով՝ Լենինի 4, Կարմիր դրոշի 4, Սուվորովի երկրորդ աստիճանի, 2 Կարմիր աստղի, Հայրենական պատերազմի առաջին աստիճանի և երկու Չեխոսլովակյան շքանշաններով ու մի շարք մեդալներով։*

*Հայ ժողովրդի արժանավոր զավակ, Սովետական Միության հերոս, այժմ պահեստի գեներալ-լեյտենանտ Սարգիս Մարտիրոսյանն ապրում է Երևանում։ Նա Երևանի քաղաքային սովետի դեպուտատ է, և ակտիվորեն մասնակցում է հասարակական-քաղաքական աշխատանքներին։*

## Հ Ր Ա Մ Ա Ն

### Կիև քաղաքի կայազորի պետի

6 նոյեմբերի 1943 թ. — № 2 — ք. Կիև

§ *1*

*1943 թվականի նոյեմբերի 5-ի լույս 6-ի գիշերը կարմիր բանակի քաջարի մարտիկները կատարելով գերագույն գլխավոր հրամանատարի հրամանը ջախջախիչ հարված հասցրին թշնամուն և գրոհով գրավեցին Կիև քաղաքը։*

*Ազատագրված է Ուկրաինական ՍՍՌ մայրաքաղաք Կիևը՝ ռուսական քաղաքների մայրը։ Քաղաքի վրա հերոս ազատագրողների ձեռքով բարձրացված կարմիր դրոշը հպարտ ծածանվում է և կոչ է անում մեզ հետագա սխրագործությունների՝ հանուն հայրենիքի, ֆաշիստական զավթիչներին մեր սովետական հողից վերջնականապես վռնդելու համար։*

§ 2

Շնորհավորում եմ մարտիկներին, սպաներին և Կիև քաղաքի աշխատավորներին՝ Սովետական Ուկրաինայի մայրաքաղաքի ազատագրման առթիվ, թշնամու դեմ կարմիր բանակի ևս մեկ հաղթանակի առթիվ։

Աշխատավորներին կոչ եմ անում ամեն կերպ աջակցել կարմիր բանակի զորամասերին քաղաքում ռևոլյուցիոն կարգ հաստատելու, պետական գույքը պահպանելու, գերմանական բոլոր լրտեսներին, դիվերսանտներին ու նրանց աջակիցներին հայտնաբերելու գործում։

Կեցցե հերոսական կարմիր բանակը։

Կեցցե մեր Սովետական Հայրենիքը, Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միությունը։

Կեցցե Սովետական Ուկրաինան։

Կիև քաղաքի կայազորի պետ՝
գեներալ-մայոր՝ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



# ՀՄԱՅԱԿ ԳՐԻԳՈՐԻ ԲԱԲԱՅԱՆ



## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի գեներալներին, սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում Հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար,* շնորհել Սովետական Միության հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

*18. Գեներալ-մայոր Հմայակ Գրիգորի Բաբայանին:*

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 31 մայիսի 1945 թ.:*





Գեներալ-մայոր Հմայակ Գրիգորի Բաբայանը Հայրենական մեծ պատերազմը դիմավորեց Արևմտյան Բելոռուսիայի Օստրովենկա սահմանամերձ քաղաքում։

Բաբայանը ծնվել է 1901 թվականի օգոստոսի 15-ին Կարսի մարզի Ժպրչի գյուղում, չքավոր գյուղացու ընտանիքում։ 1918 թվականին թուրքական կոտորածի զոհ են դառնում Հմայակի ծնողները և որբացած 17-ամյա պատանին թողնելով հայրենի գյուղը, իր բախտակիցներից շատերի հետ գաղթում է Երևան։

1920 թվականի նոյեմբերին նոր կյանքի արև է բացվում Հմայակի համար. Նա մտնում է Կարմիր բանակի շարքերը և Հայկական հրաձգային դիվիզիայի 2-րդ գնդի կազմում մասնակցում Հայաստանի, ինչպես նաև Վրաստանի քաղաքացիական կռիվներին։

Կոմերիտական Բաբայանը 1924 թվականին լենինյան կոչով ընդունվեց կոմունիստական պարտիայի շարքերը և իր ամբողջ գիտակցական կյանքը նվիրեց պարտիայի մեծ գործին։ Ռազմական կրթություն ստանալով նախ՝ Երևանի Մյասնիկյանի անվան, ապա Կիևի հրամանատարական ռազմական դպրոցներում, Բաբայանը դառնում է Հայկական հրաձգային դիվիզիայի ճանաչված

սպաներից մեկը։ 1938 թվականին փոխ-գնդապետի կոչումով Բաբայանը ծառայում էր Մինսկի ռազմական օկրուգում։

Հայրենական պատերազմի ծանր օրերին փոխ-գնդապետի հրամանատարության տակ գտնվող զորամասի վրա դրված էր պատասխանատու առաջադրանք. ինչ գնով էլ լինի պաշտպանել Նարև գետի կամուրջներից երեքը, որոնցով պետք է հետ քաշվեին ժամանակավորապես նահանջող սովետական զորքերը։ Թշնամին հրետանային և ականանետային կրակի տարափ էր բացել կամուրջները պաշտպանող Բաբայանի զորամասի վրա։ Հակառակորդը ձգտում էր մրրկային կրակով ահաբեկել, թուլացնել այդ հատվածը պաշտպանող սովետական զորամասին, ճեղքել պաշտպանության գիծը և անցնել Նարև գետի արևելյան ափը։ Երեք օր անընդհատ սովետական ռազմիկները պողպատե պատնեշի նման կանգնեցին հակառակորդի գերակշռող ուժերի առաջ՝ թույլ չտալով թշնամուն մոտենալ գետին։ Երբ մեր զորամասերը ետ էին քաշվել Նարևի արևելյան ափը և ամրացել, հրամանատարը հաջող մանևրով իր զորամասը ես անցկացրեց գետի մյուս ափը և կարգադրեց կամուրջները պայթեցնել։ Թշնամու առաջխաղացման ճանապարհը փակված էր։ Սովետական տանկերն ու հրետանին կրակի տարափ տեղացին գետափին կուտակված թշնամու վրա՝ նրան պատճառելով կենդանի ուժի ու տեխնիկայի մեծ կորուստ։

1941 թվականի հուլիս ամսին փոխ-գնդապետ Բաբայանի գունդը արյունահեղ մարտեր մղեց հիտլերյան զավթիչների դեմ Բելոստոկի, Վոլկովիսկի, Բարանովիչի քաղաքների համար։ Այս կատաղի կռիվների ընթացքում Բաբայանը երկու անգամ վիրավորվում է, ընդ որում երկրորդ անգամ՝ ծանր, և նրան տեղափոխում են թիկունքային հոսպիտալ։ Ապաքինվելուց հետո նա նորից մեկնում է ռազմաճակատ։

1941 թվականի դեկտեմբերի առաջին օրերին ահեղ մարտեր ծավալվեցին Ելեց քաղաքի շրջանում։ Գերմանական զորքերը, մեծ ուժեր կենտրոնացնելով, ճեղքեցին մեր զորամասերի պաշտպանությունը և գրավեցին Ելեց քաղաքը։ Արագորեն կենտրոնացնելով իրենց ուժերը՝ սովետական զորքերը հակագրոհի անցան։ Չորս օր չէր դադարում կատաղի պայքարը Ելեցի համար։ Ջախջախելով հակառակորդի երկու հետևակային դիվիզիա՝ կարմիր բանակի զորքերը դեկտեմբերի 9-ին ետ վերցրին քաղաքը։ Հարավ-արևմտյան ռազմաճակատի այս կարևոր հաջողության մեջ իր համեստ բաժինն ուներ նաև փոխ-գնդապետ Բաբայանի զորամասը։ Այդ մասին Բաբայանի մարտական բնութագրում կարդում ենք. «Ելեց քաղաքի, Օլշանեց, Կազակի գյուղերի համար մղվող մարտերում ընկեր Բաբայանը գնդի ղեկավարման գործում հանդես բերեց համարձակություն և խիզախություն»։ Ելեցի մարտերում ցուցաբերած հրամանատարական բարձր ընդունակությունների, անձնական արիության և խիզախության համար Բաբայանն արժանացավ գնդապետի զինվորական կոչման և պարգևատրվեց Կարմիր դրոշի մարտական շքանշանով։

1942 թվականի ապրիլ-մայիս ամիսները չափազանց լուրջ ու պատաս-

խանատու օրեր էին Ղրիմի ռազմաճակատի համար։ Այստեղ կենաց ու մահու կռիվ էր մղում նաև Հայկական 390-րդ դիվիզիան։ Այդ մարտերում հերոսի մահով ընկավ դիվիզիայի հրամանատար գնդապետ Ս. Զաքյանը։ Ահա այդ ծանր ու դաժան օրերին դիվիզիայի հրամանատարությունն ընդունեց գնդապետ Բաբայանը, որը սակայն շուտով փոխադրվեց այլ զորամաս։

1943 թվականի ամռանը գնդապետ Բաբայանը նորից ռազմաճակատ մեկնեց։ Օգոստոսի 27-ից կատաղի և համառ մարտեր սկսվեցին Ելնյա քաղաքի համար։ Իր ղեկավարած 76-րդ հրաձգային դիվիզիայով գնդապետ Բաբայանը ևս մասնակցում է Ելնյայի ազատագրմանը։ Այդ մարտերում Բաբայանը իրեն դրսևորեց որպես զորքերի հմուտ ղեկավար։ Նա մշակեց թշնամու ամրությունների ճեղքման դիվիզիայի գործողությունների պլանը և կազմակերպեց հետևակի, հրետանու և տանկերի փոխգործողությունները։ Բաբայանը ղեկավարեց քաղաքի գրոհումը։ Դիվիզիան քաղաքը շրջանցեց հյուսիսից ու հարավից և կոտրելով թշնամու համառ դիմադրությունը, մյուս զորամասերի փոխգործողությամբ, օգոստոսի 30-ին ազատագրեց Ելնյա քաղաքը։

Հետապնդելով նահանջող թշնամուն և թույլ չտալով նրան ամրանալու նոր դիրքերում՝ Բաբայանի զորամասն ազատագրեց 48 բնակավայր, թշնամուն պատճառելով կենդանի ուժի և տեխնիկայի զգալի կորուստ։ Այստեղ գնդապետը նորից ծանր վիրավորվեց։

Ելնյա քաղաքի ազատագրման համար մղած մարտերում առավել աչքի ընկնելու, մարտական գերազանց գործողությունների համար գնդապետ Բաբայանի 76-րդ հրաձգային դիվիզիային ևս գերագույն գլխավոր հրամանատարության կողմից հայտնվում է շնորհակալություն և նրան շնորհվում «Ելնյան» անվանումը, իսկ Բաբայանը արժանանում է զորավարական բարձր պարգևի՝ Կուտուզովի երկրորդ աստիճանի շքանշանի։

Ապաքինվելուց հետո, 1944 թվականի հունվարին Բաբայանն ուղարկվում է ռազմական ակադեմիա՝ կատարելագործելու ռազմական գիտելիքները։ Ակադեմիան ավարտելուց հետո գնդապետը նորից մեկնում է ռազմաճակատ և Բելոռուսական երրորդ ռազմաճակատի զորքերի կազմում մասնակցում Վիլնյուսի ազատագրմանը։

Բարձր գնահատվեց Բաբայանի հրամանատարական ծառայությունները. ՍՍՌՄ Ժողկոմսովետի 1944 թվականի հուլիսի 15-ի որոշմամբ նրան շնորհվեց գեներալ-մայորի զինվորական կոչում, իսկ սեպտեմբերին նա արժանացավ Կարմիր դրոշի երկրորդ շքանշանին։

Զորավարական այդ կոչումն էլ ավելի է ոգևորում Բաբայանին, և նա նոր եռանդով իր միավորումով մասնակցում է Կաունաս քաղաքի և ամրոցի գրավմանը։ Նրա ղեկավարած միավորումն նորից արժանանում է շնորհակալությունների։

1945 թվականի հունվարից Բաբայանը Բելոռուսական առաջին ռազմաճակատումն էր։ Որպես 35-րդ մեքենայացված Կարմրադրոշ բրիգադայի հրամա-

նատար, նա մասնակցում է Լեհաստանի մայրաքաղաք Վարշավայի և լեհական տերիտորիան ֆաշիստական բանակներից ազատագրելու, ինչպես նաև թշնամուն իր իսկ տերիտորիայում ջախջախելու արյունահեղ մարտերին։

Այն կորպուսը, որի կազմի մեջ էր Բաբայանի բրիգադան, 1945 թվականի ապրիլի 15-ին, Օդերն անցնելուց հետո, մարտեր ծավալեց Բեռլինի ուղղությամբ։ Բրիգադան ապրիլի լույս 20-ի գիշերը գրավեց Բեռնաու քաղաքը, իսկ 21-ի գիշերը կատաղի մարտեր սկսեց Բեռլինի մատույց Վեյսենզեեի համար։ Հաղթահարելով հակառակորդի համառ դիմադրությունը, բրիգադան մարտերով դուրս եկավ Վեյսենզեեի հարավային մասը, Բեռլինի ուղղությամբ մղվող մարտական գործողությունների ժամանակ թշնամուն պատճառեց մեծ կորուստներ։

Կատաղի կռիվներ էին մղվում Բեռլինից հյուսիս-արևելք գտնվող Լենդենբերգ գյուղի համար։ Կռվի վճռական մոմենտին գեներալն անձամբ նստում է տանկ և առաջ սլանում՝ ամբողջ բրիգադան տանելով իր հետևից։ Կարճ ժամանակից բրիգադան գրավում է գյուղը և ճանապարհ հարթում դեպի Բեռլին։ Մարտերը փոխադրվում են Բեռլինի մատույցները։ Հրամանատարական տանկը նորից խոյանում է առջևից։ Հակառակորդը խաչաձև կրակ է բացում, առջևից սլացող տանկը բոցավառվում է և կանգ առնում։ Բաբայանը տանկից դուրս է թռչում և շարունակում հրամաններ արձակել, ոգևորել ռազմիկներին։ Գեներալի երևալը ավելի է ուժեղացնում թշնամու կրակը։ Այս անգամ թշնամու գնդակը չի վրիպում։ Բոցավառվող տանկի մոտ հերոսաբար զոհվում է ողջ բրիգադայի կողմից հարգված ու սիրված հրամանատարը։

Զինվորական երդմանը հավատարիմ, գեներալ Բաբայանը դաժան ու արյունահեղ մարտերով ճանապարհ հարթեց հաղթանակի համար, բայց, դժբախտաբար, չտեսավ հաղթանակի փառավոր ու երջանիկ օրը։ Գեներալի մահը մեծ վիշտ պատճառեց նրա միավորման բոլոր մարտիկներին ու հրամանատարներին։ Ավելի մեծ վրեժով և ատելությամբ լցված, Բաբայանի տանկիստները, հրետանավորները, ականաձիգները մրրկային կրակ բացեցին Բեռլինի վրա և շուտով այդ հատվածում լռեցրին հակառակորդի կրակակետերը։

Բարձր գնահատելով աննկուն հրամանատարի զորավարական տաղանդն ու անձնական սխրագործությունները՝ ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահությունը 1945 թվականի մայիսի 31-ի հրամանագրով գեներալ-մայոր Հմայակ Գրիգորի Բաբայանին հետմահու շնորհեց Սովետական Միության Հերոսի կոչում։



# ԱՍՔԱՆԱԶ ԳԵՎՈՐԳԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ




## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի գեներալներին, սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական ուժեղ ամրաշերտը ճեղքելու, Հրամանատարության մարտական առաջադրանքները օրինակելիորեն կատարելու և Մելիտոպոլ քաղաքը ազատագրելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու արիության համար, շնորհել Սովետական Միության հերոսի կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

*32. Գնդապետ* Ասքանազ Գևորգի Կարապետյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 1 նոյեմբերի 1943 թ.:*





Շատ վտանգներով անցավ Բատկոն Հայրենական մեծ պատերազմի օրերին։ Մինչև հիմա էլ զարմանքը պատում է ինձ, երբ հիշում եմ, թե ինչպիսի համարձակությամբ էր ղեկավարում նա մեր անցումը Սևաստոպոլի մոտ՝ Հյուսիսային ծովախորշով։ Թշնամու արկերն ուղղակի ընկնում էին նրա կողքին։ Բայց Բատկոն, վախն ինչ է, չգիտեր։ Նա կարծես ծնվել է կռվելու և հաղթելու համար»,— գրում է 315-րդ Մելիտոպոլյան կրկնակի շքանշանակիր դիվիզիայի ավագ Գ. Ս. Արխիմենկոն իր հրամանատարի՝ Սովետական Միության հերոս, գեներալ-մայոր Ասքանազ Կարապետյանի մասին։

Ասքանազ Գևորգի Կարապետյանը անցել է կյանքի հիանալի ճանապարհ՝ շարքային կարմիրբանակայինից աճել և դարձել է փառաբանված գեներալ։ Նա ծնվել է 1889 թվականին, Երևանի նահանգի Սուրմալվի գավառի Էվջիլար գյուղում, չքավոր գյուղացու ընտանիքում։ Դառը կյանքը ստիպում է տակավին պատանի Ասքանազին թողնել հայրենի գյուղը և 1915 թվականին մեկնել Հյուսիսային Կովկաս՝ աշխատանք որոնելու։ Այստեղ նա մինչև 1919 թվականը զբաղվում է սևագործ բանվորությամբ, ապա վերադառնում է

Հայաստան։ Դաշնակցական մաուզերիստները բռնի կերպով Ա. Գ. Կարապետյանին զորակոչում են բանակ և ուղարկում Սարիղամիշ։ Կապվելով տեղի բոլշևիկյան խմբի հետ, որին ղեկավարում էր անվեհեր ռևոլյուցիոներ Լիպարիտ Մխչյանը, նա Սարիղամիշում մասնակցում է 1920 թվականի Մայիսյան հերոսական ապստամբությանը, որի պարտությունից հետո, խուսափելով դաշնակցականների հետապնդումից, Ա. Գ. Կարապետյանը անցնում է Ադրբեջանի Ղազախի շրջանը։ Շուտով նա կամավոր կերպով մտնում է կարմիր բանակի շարքերը և իր ամբողջ կյանքը կապում նրա հետ, զենքը ձեռքին քաջաբար մարտնչում հարազատ ժողովրդին դաշնակցական մղձավանջից ազատագրելու և Հայաստանում սովետական իշխանություն հաստատելու համար։

1920 թվականին Ա. Գ. Կարապետյանը ընդունվում է կոմունիստական պարտիայի շարքերը և 1921 թվականին մասնակցում դաշնակների դեմ մղված քաղաքացիական կռիվներին։ 1923 թվականին Կարապետյանը ընդունվում է Երևանի Ալ. Ֆ. Մյասնիկյանի անվան հրամանատարական զինվորական դպրոցը, դառնում կարմիր բանակի կադրային սպա։

Իրար են հաջորդում ուսման ու աշխատանքի տարիները։ 1937 թվականին Ա. Կարապետյանը 76-րդ Հայկական լեռնա-հրաձգային կարմրադրոշ դիվիզիայի 226-րդ գնդի հրամանատարն էր։ 1938 թվականին կարմիր բանակի 20-ամյակի կապակցությամբ նա պարգևատրվում է Կարմիր աստղ շքանշանով և «ԲԳԿԲ-ի 20 տարին» հոբելյանական մեդալով։

Հայրենական մեծ պատերազմը Կարապետյանը դիմավորում է արևմտյան սահմանի վրա՝ Բրեստ-Լիտովսկում, որտեղ նա մոտո-հրաձգային գնդի հրամանատար էր։ Գունդը անհավասար կռվի մեջ է մտնում մինչև ատամները զինված ֆաշիստական զավթիչների գերազանց ուժերի դեմ, ցույց տալով Հայրենիքին անսահման նվիրվածության բազմաթիվ օրինակներ։ Անհավասար կռվում զորամասը ընկնում է շրջապատման մեջ։ Սովետական մարտիկների մասսայական խիզախության, նրանց հրամանատարի հաստատակամության, իրադրությունը ճիշտ ըմբռնելու և գնահատելու ունակության շնորհիվ գունդը 21-օրյա կատաղի մարտերից հետո, դուրս է գալիս թշնամու օղակից և Մոզիրի շրջանում միանում սովետական բանակի մյուս զորամասերին։

1942 թվականի սկզբներին գերագույն գլխավոր հրամանատարությունը Ա. Գ. Կարապետյանին ուղարկում է սովորելու կարմիր բանակի Մ. Վ. Ֆրունզեի անվան Լենինի շքանշանակիր և Կարմրադրոշ ռազմական ակադեմիայում։ Նույն թվականի սեպտեմբերին ակադեմիան ավարտելուց հետո նա ստանում է կարևորագույն առաջադրանք՝ կազմակերպել մոտո-մեքենայացված բրիգադա, ստանձնել նրա հրամանատարությունը։ Դա այն ժամանակ էր, երբ Վոլգոգրադի տակ կանգնեցնելով ֆաշիստական հրոսակներին, սովետական բանակը պատրաստվում էր վճռական հակահարձակման։

Կազմակերպելով բրիգադան, Ա. Գ. Կարապետյանը ժրաջան կերպով գլխավորում է նրա մարտական և քաղաքական պատրաստությունը։ Կարճ ժա-



270—4

մանակամիջոցում միավորման անձնակազմը կարողացավ ծանոթանալ ռազմա-կան տեխնիկային, պատերազմական փորձին և տակտիկային: Բրիգադան դարձավ ռազմաճակատի մարտունակ միավորներից մեկը՝ պատրաստ լուծելու բարձր հրամանատարության առաջադրանքները:

Ա. Գ. Կարապետյանը լավ գիտեր, որ Վոլգոգրադի ճակատամարտում մեր զորքերի հաղթանակի հետ էր կապված ինչպես ամբողջ Սովետական Միության, այնպես էլ նրա բաղկացուցիչ մասը հանդիսացող Սովետական Հայաստանի բախտը, որի վրա հարձակվելու խարդախ պլաններ էին մշակել և նրա սահմաններում զորքեր էին կուտակել այն ժամանակ Հիտլերի դաշնակից թուրքական զավթիչները:

Շուտով բրիգադան մտնում է համառ և ծանր հարձակողական մարտերի մեջ:

Հաջողությամբ կատարելով մարտական առաջադրանքը, նա իր հարվածում ճեղքում է թշնամու ռազմաճակատի գիծը և Կալաչ քաղաքի մոտ միանում Դոնի ռազմաճակատի զորամասերին: Դա այն ժամանակն էր, երբ սովետական զորքերի երկաթե օղակը իր մեջ էր առել ֆաշիստների ավելի քան 300 հազարանոց խմբավորումը: Կուտակելով մեծաքանակ զորք և տեխնիկա, թըշնամին օրհասական ճիգեր էր թափում փրկելու շրջապատման մեջ ընկած իր բանակը: Ա. Գ. Կարապետյանի բրիգադան մի շարք միավորումների թվում առաջադրանք է ստանում հակահարված տալ և ջախջախել դեպի Վոլգոգրադ շարժվող հիտլերյան զորքերին: Այդ առաջադրանքը ևս կատարվում է գերազանց, որի համար բրիգադան պարգևատրվում է Կարմիր դրոշի շքանշանով և անվանվում Վոլգոգրադյան 9-րդ մոտո-մեքենայացված գվարդիական բրիգադա: Հրամանատարության մարտական առաջադրանքները հմտորեն կատարելու համար Ա. Գ. Կարապետյանը նույնպես պարգևատրվում է Կարմիր դրոշի շքանշանով:

Ամբողջ ճակատով հարձակման անցած սովետական զորքերի կազմում ընդգրկված Ա. Գ. Կարապետյանի բրիգադան հաղթականորեն առաջ էր շարժվում, ազատագրելով սովետական սրբազան հողը ֆաշիստական զավթիչներից: 1943 թվականի մայիսին Ա. Գ. Կարապետյանը նշանակվում է 315-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարի տեղակալ, իսկ որոշ ժամանակ անց հրամանատար: Նրա հրամանատարությամբ 315-րդ դիվիզիան հերոսական ուղի է անցնում, գրելով բազմաթիվ պանծալի էջեր Հայրենական մեծ պատերազմի տարեգրության մեջ: Դիվիզիան անմիջական մասնակցություն է ունենում Նոր Նախիչևան, Նովոչերկասկ, Նովո-Շախտինսկ, Ջերժինսկ, Լոզովոկ քաղաքների ազատագրմանը:

*Ճեղքելով թշնամու պաշտպանական ուժեղ բնագծերը Միուս և Մոլոչնոյե գետերի շրջանում, դիվիզիան ռազմաճակատի մյուս միավորումների հետ միասին, 1943 թվականի հոկտեմբերի 12-ին մարտեր է սկսում Մելիտոպոլ քաղաքի համար, որը հանդիսանալով Ղրիմի նախադուռը, ուներ ստրատեգիական խոշոր նշանակություն։ Ֆաշիստական զորքերը կատաղի դիմադրություն են ցույց տալիս։ Տեղի են ունենում փողոցային ծանր մարտեր։ Գտնվելով կրակի առաջին գծում, որը սովորական երևույթ էր Կարապետյանի համար, նա կազմակերպում է գրոհային խմբեր և անձամբ ղեկավարում նրանց գործողությունները։ Մելիտոպոլը տուն առ տուն, փողոց առ փողոց, թաղամաս առ թաղամաս ազատագրվում է օկուպանտներից, որոնք այստեղ կորցնում են մոտ 5000 զինվոր ու սպա, 42 տանկ և մեծ քանակությամբ ռազմական այլ տեխնիկա։*

*Գերմանա-ֆաշիստական զորքերի ուժեղ ամրացված պաշտպանության գոտին ճեղքելու և Մելիտոպոլ քաղաքը ազատագրելու, հրամանատարության մարտական առաջադրանքները պատվով կատարելու և ցուցաբերած խիզախության ու անվեհերության համար գնդապետ Ասքանազ Գևորգի Կարապետյանին շնորհվում է Սովետական Միության հերոսի բարձր կոչում։ 315-րդ դիվիզիան պարգևատրվում է շքանշանով և անվանվում Մելիտոպոլյան։*

*Դիվիզիան շարունակում է իր հաղթական արշավը դեպի Ղրիմ։ Նահանջող թշնամին ամրանալով Պերեկոպի պաշտպանական ուժեղացված բնագծում, ճիգեր է թափում կասեցնելու սովետական զորքերի հարձակումը։ Պերեկոպի համար մղած մարտերում, իրեն հատուկ համարձակությամբ, ֆաշիստների անառիկ թվացող պաշտպանության գծերը ճեղքելու և հաղթահարելու հիանալի ունակության հետ Ա. Գ. Կարապետյանն անձնական օրինակով ոգևորում էր մարտիկներին, որի համար նա պարգևատրվում է Կարմիր դրոշի երկրորդ շքանշանով։ Ա. Գ. Կարապետյանի դիվիզիան հերոսաբար մարտնչում էր Ղրիմի ազատագրման համար։ Դիվիզիայի մարտական սխրագործությունների փառքն է կազմում անցումը Հյուսիսային ծովախորշով և Սևաստոպոլի գրոհն ու ազատագրումը, որի համար նա պարգևատրվում է Կարմիր դրոշի շքանշանով։*

*Դիվիզիայի հրամանատար Ա. Գ. Կարապետյանը մարտական օպերացիաները հմտորեն ու արիաբար ղեկավարելու համար պարգևատրվում է Սուվորովի երկրորդ աստիճանի շքանշանով։ ՍՍՌՄ Ժողկոմսովետի 1944 թվականի նոյեմբերի 2-ի որոշմամբ նրան շնորհվում է գեներալ-մայորի զինվորական կոչում։*

*Սովետական բանակի շարքերում երկարատև և անբասիր ծառայության համար Ա. Գ. Կարապետյանը 1945 թվականին պարգևատրվում է Լենինի, իսկ 1948 թվականին՝ Կարմիր դրոշի շքանշանով։*

*Մոտ երեք ու կես տասնամյակ ազնվորեն և նվիրվածությամբ ծառայելով սովետական բանակում, նա այժմ գտնվում է հանգստի մեջ և ակտիվորեն մասնակցում է ռեսպուբլիկայի հասարակական-քաղաքական կյանքին։*



# ԱՆԴՐԱՆԻԿ ԱԲՐԱՀԱՄԻ ՂԱԶԱՐՅԱՆ



## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**Կարմիր բանակի գեներալներին, սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին**

*Կիևից հյուսիս՝ Դնեպրը հաջողությամբ գետանցելու, Դնեպր գետի արևմտյան ափին հենակետը կայուն ամրացնելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել* Սովետական Միության հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

*63. Գեներալ-մայոր* Անդրանիկ Աբրահամի Ղազարյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
М. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 16 հոկտեմբերի 1943 թ.։*





*Նրա ամբողջ գիտակցական կյանքը կապված է սոցիալիստական հայրենիքի պաշտպանության գործի հետ։ Զինվորական ծառայության 40 տարին բոլորած Անդրանիկ Աբրահամի Ղազարյանը շարքային մարտիկից սեձելով Հայրենական պատերազմի ժամանակ հասավ դիվիզիայի հրամանատարի պաշտոնին։*

*Անդրանիկ Ղազարյանը ծնվել է 1904 թվականին Բաքվում, դերձակի ընտանիքում։ Վաղ տարիքում նա զրկվել է մորից, ապա՝ հորից։ 1920 թվականին Անդրանիկը տեղափոխվում է Հայաստան։*

*Երբ Հայաստանում հաղթանակեց սովետական իշխանությունը, 16-ամյա պատանին զինվորագրվեց նորաստեղծ կարմիր բանակին։ 1927 թվականին նա ընդունվեց կոմունիստական պարտիայի շարքերը։ Պատերազմի նախօրյակին Ղազարյանը աշխատում էր Երևանի պետական համալսարանում որպես ռազմագիտության ամբիոնի վարիչ։*

*Հայրենական պատերազմի սկզբից մինչև նրա հաղթական վախճանը Անդրանիկ Ղազարյանը, զորային տարբեր միավորումների գլուխն անցած, մարտնչել է գերմանա-ֆաշիստական և ճապոնական զավթիչների դեմ, մասնակցել է բազմաթիվ ճակատամարտերի։*

*1941 թվականի սեպտեմբերին 230-րդ հրաձգային դիվիզիայի 988-րդ*

*գունդը, որի հրամանատարն էր փոխ-գնդապետ Անդրանիկ Ղազարյանը, Դնեպրոպետրովսկի մարզի Նովո-Մոսկովսկ քաղաքի շրջանում ավելի քան տասն օր ծանր մարտեր էր մղում թշնամու հետևակի և տասնյակ տանկերի դեմ՝ կասեցնելով նրանց առաջխաղացումը։ Այդ ժամանակ նա ծանր վիրավորվում է։*

*1942 թվականի մայիսից 134-րդ բրիգադան, ապա նրա հիման վրա կազմակերպված 74-րդ դիվիզիան, Անդրանիկ Ղազարյանի հրամանատարությամբ, Բրյանսկի ռազմաճակատում հաջողությամբ կասեցնում է թշնամու հարձակումը՝ նրան պատճառելով կենդանի ուժի և տեխնիկայի մեծ կորուստներ։*

*ՍՍՌՄ ժողկոմսովետի 1943 թվականի փետրվարի 22-ի որոշմամբ գնդապետ Անդրանիկ Ղազարյանին շնորհվում է գեներալ-մայորի զինվորական կոչում։*

*Մարդկային և տեխնիկական խոշոր ուժեր կենտրոնացնելով Կուրսկ-Բելգորոդ աղեղում, թշնամին 1943 թվականի հուլիսի սկզբին անցավ հարձակման։ 74-րդ դիվիզիան դիրքեր էր գրավել Օրյոլից հարավ՝ Մալոարխանգելսկ քաղաքի մոտ՝ երկու կիլոմետրանոց հատվածում։ Միայն երկու օրվա ընթացքում նա 13 անգամ հակագրոհից հակառակորդի վրա։ Վերջինիս հաջողվեց առաջ խցկվել ընդամենը մեկ կիլոմետր։ Հետ մղելով հիտլերյան հետևակի և 150 տանկի գրոհները, դիվիզիան վերականգնեց իր դիրքերը՝ մեծ կորուստ պատճառելով թշնամուն։*

*Կուրսկի ճակատամարտում հիտլերյան զորքերի ջախջախմանը հաջորդեց սովետական բանակի արագ առաջխաղացումը դեպի արևմուտք։ Ավելի քան 200 կիլոմետր մարտական երթից հետո, սեպտեմբերին դիվիզիան հասավ Դեսնա գետին՝ Կորոպ քաղաքից հարավ և անմիջապես սկսեց գետանցումը։ Դիվիզիայի գնդերից մեկն արդեն անցել էր գետը և լուսադեմին դիմել գրոհի, երբ գերմանացիները նկատելով այդ, սկսեցին դիմադրել։ Մի քանի օր շարունակ կատաղի կռիվներ էին գնում գրաված հենակետը պաշտպանելու և ընդլայնելու համար։ Կռվի երրորդ օրը հակառակորդի գերակշռող ուժերը, տանկերի օգնությամբ նեղեցին դիվիզիայի զորամասերին և նրանց հարկադրեցին նահանջել։ Մինչև գետը մնում էր ընդամենը 500 մետր։ Այս փոքրիկ հողակտորի վրա դիվիզիայի խիզախ մարտիկները 5—6 օր, կատաղի կռիվներով, քաջությամբ պաշտպանեցին հենակետը և ետ շպրտեցին հակառակորդին։ Այնուհետև գետն անցած զորամասերն, առաջ շարժվելով, ազատագրեցին Նովգորոդ-Սևերսկի քաղաքը։*

*Դեսնայի անցումը և մարտերը հենակետում դիվիզիայի համար մեծ փորձ էր։ Այդ ընթացքում դիվիզիայի զորամասերը «ցույց տվեցին քաջություն և խիզախություն,—գրել է կորպուսի հրամանատարությունը Անդրանիկ Ղազարյանի պարգևաթերթիկում,—դժվարին պայմաններում ջրային արգելքն անցնելու կարողություն»։*

Նախքան Դնեպրը անցնելը բանակի ռազմական խորհուրդը զորամասերին կոչ էր անում՝ «Անցնել գետը այնպիսի արագությամբ ու հմտությամբ, ինչպես Ղազարյանի և Գուձի փառապանծ մարտիկները»։

Դնեպրի վրա հիտլերյան հրամանատարությունը մեծ հույսեր էր դրել։ Սովետական բանակի հարվածների տակ նահանջող հիտլերյան զորքերը փորձում էին կանգ առնել և ամրանալ գետի աջ ափին։ Սակայն ոչինչ չէր կարող կանգնեցնել մեր զորքերի հաղթական առաջընթացը։

74-րդ դիվիզիան առաջիններից էր, որ 1943 թվականի սեպտեմբերի վերջերին Կիևից հյուսիս և Չեռնիգովից արևմուտք գտնվող հատվածում, թշնամու կրակի տակ, սկսեց անցնել Դնեպրը, որի լայնությունն այստեղ հասնում է 600 մետրի։ Անցման համար օգտագործվում էին Դեսնան հաղթահարելու ժամանակ արդեն հայտնի միջոցները և պարտիզանների կողմից տրամադրված միակ ձկնորսական նավակը, որը նրանք թաքցրել էին հիտլերականներից։ Իսկ ոմանք անցնում էին լողալով։ Առաջին գիշերը գետն անցան մի քանի հարյուր խիզախ մարտիկներ, որոնք կռիվ սկսեցին թշնամու դեմ պարտիզանների կողմից գրավված Կոմարին քաղաքի մոտ, ընդամենը 300×400 մետր տարածության վրա։ Այդ փոքրիկ հողակտորի վրա երկու օր ու գիշեր գեներալ-մայոր Ա. Ղազարյանի դիվիզիայի քաջերը կենաց ու մահու կռիվ էին մղում թշնամու մի քանի անգամ գերազանցող ուժերի դեմ, մինչև օգնության եկան գետն անցած հիմնական զորամասերը։ Այդ զորամասերի հետ միասին 74-րդ դիվիզիան մի քանի օր շարունակ արյունահեղ կռիվներ էր մղում Դնեպրի և Պրիպյատի միջև և քայլ առ քայլ խորացնում պլացդարմը։

Դնեպրի համար մղած մարտերը ավարտվեցին հաղթանակով, որից հետո մեր զորքերն սկսեցին ազատագրել աջափնյա Ուկրաինան և Բելոռուսիան։

Դնեպրը անցնելու, նրա աջ ափին ամուր հենակետ գրավելու և այդ ժամանակ ցուցաբերած հրամանատարական հմտության ու խիզախության համար ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1943 թվականի հոկտեմբերի 16-ի հրամանագրով 74-րդ դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանին շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում։ Հերոսի կոչման արժանացան նաև դիվիզիայի 33 մարտիկներ ու հրամանատարներ։ Դիվիզիայի ողջ անձնակազմը մեծ ցնծությամբ ընդունեց բարձրագույն պարգևը։

Այնուհետև դիվիզիան պարտիզանների օգնությամբ անցավ Պրիպյատ գետի աջ ափը՝ Չեռնոբիլ քաղաքի շրջանում (Կիևի մարզ), որտեղ սկսեց մղել ծանր կռիվներ։ Այդ կռիվներում դիվիզիայի հրամանատար Անդրանիկ Ղազարյանն ստացավ ծանր կոնտուզիա։ Իսկ դիվիզիան շուտով մասնակցեց Սովետական Ուկրաինայի մայրաքաղաք Կիևի ազատագրմանը։

Առողջանալուց հետո, 1944 թվականին գեներալ-մայոր Ա. Ղազարյանն ուղարկվում է Բելոռուսական երրորդ ռազմաճակատ, որտեղ գլխավորում է 215-րդ հրաձգային դիվիզիան։ Դիվիզիան մասնակցում է Բելոռուսական ՍՍՌ

և Լիտվական ՍՍՌ ազատագրմանը։ Գերագույն գլխավոր հրամանատարության հրամաններում 215-րդ դիվիզիային շնորհակալություն է հայտնվել Բերեզինա գետը և ջրային այլ արգելքներ հաղթահարելու, Վիտեբսկ, Բորիսով, Մինսկ, Վիլնյուս, Կաունաս և բազմաթիվ այլ քաղաքների և բնակավայրերի ազատագրմանը ակտիվորեն մասնակցելու համար։

Սովետական Միության հերոս Անդրանիկ Ղազարյանի ղեկավարած դիվիզիան առաջիններից մեկը հասավ Արևելյան Պրուսիա և աչքի ընկավ այստեղ թշնամու երկարատև խոր էշելոնացված ամրությունները ջախջախելու, ինչպես և Ինստերբուրգ, Հայլսբերգ, Ֆրիդլանդ, Քյոնիգսբերգ և այլ քաղաքների գրավման համար մարտերում։

Այնուհետև 215-րդ դիվիզիան, գեներալ-մայոր Անդրանի Ղազարյանի հրամանատարությամբ, փառքով պսակեց իր դրոշները ճապոնական միլիտարիստական բանակների ջախջախման և չինական հողի ազատագրման մարտերում։ Հեռավոր-Արևելյան առաջին ռազմաճակատի զորքերի կազմում դիվիզիան անցավ Ուսուրի գետը, մասնակցեց Մանջուրիայում ճապոնացիների վաղուց կառուցված՝ խոր էշելոնացված ամրությունները հաղթահարելու գործողություններին, ինչպես և չինական Հոբեյ, Մուլին, Մուդանցզյան, Դունխուա, Գիրին և այլ քաղաքների ու բազմաթիվ բնակավայրերի ազատագրմանը։

Սովետական կառավարությունը բարձր է գնահատել Անդրանիկ Ղազարյանի ծառայությունները Հայրենիքի հանդեպ։ Նրա կուրծքը զարդարում են Սովետական Միության հերոսի «Ոսկե աստղ» մեդալը, Լենինի երկու, Սուվորովի երկրորդ աստիճանի՝ երեք, Կարմիր դրոշի՝ հինգ, չինական Յուն Գույ (Վզի ժապավենով) շքանշանները և բազմաթիվ մեդալներ։

Հայրենական պատերազմի ավարտից հետո գեներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանը ծառայել է տարբեր ռազմական օկրուգներում, ղեկավարել է առանձին միավորումներ։ Այժմ Ա. Ղազարյանը պահեստի գեներալ է։



# ԳՈԳԱ ԳՐԻԳՈՐԻ ԱՂԱՄԻՐՈՎ.



## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Հեռավոր գործողության ավիացիայի սպայական կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել Սովետական Միության հերոսի կոչում, հանձնելով Լենինի շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ.*

*1. Գվարդիայի կապիտան Գոգա Գրիգորի Աղամիրովին:*

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 5 նոյեմբերի 1944 թ.:*





Երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, Գոգա Գրիգորի Աղամիրյանը ծառայում էր քաղաքացիական օդային նավատորմում որպես օդաչու հրահանգիչ։ Աղամիրյանը ծնվել է 1918 թվականին Գրոզնի քաղաքում, այստեղ էլ նա ստացել է իր սկզբնական կրթությունը։ 1931 թվականին ընդունվել է կոմերիտմիության շարքերը։

Իններորդ դասարանից ընդհատելով ուսումը, 1932 թվականին Գոգան աշխատանքի է ընդունվում «Օկտյաբր-նեֆտ» տրեստում և ձեռք է բերում խառատի մասնագիտություն։ Այստեղից շուտով նրան սովորելու են գործուղում քաղաքացիական օդային նավատորմի 3-րդ օդաչուական դպրոցը, որը նա ավարտում է 1937 թվականին։ 1939 թվականին Աղամիրյանը զորակոչվում է կարմիր բանակ՝ պարտադիր ծառայության։ Բանակում նա ընդունվում է Սովետական Միության կոմունիստական պարտիայի շարքերը։

1942 թվականի հոկտեմբեր ամսին, երբ մեր հայրենիքն ապրում էր ծանր օրեր, Աղամիրյանը արդեն գտնվում էր մարտական օդաչուների շարքերում։

Սկզբնական շրջանում Աղամիրյանը թռիչքներ է կատարում երկնային վտանգավոր ուղիներով՝ օդային նավատորմի առաջին հատուկ գնդի տրանսպորտային ռմբակոծիչ առաջին էսկադրիլիայի կազմում, ռազմամթերք և պարենամթերք է փոխադրում պարտիզաններին։

*1942 թվականի հոկտեմբերի 21-ին Արևմտյան ռազմաճակատի հրամանատարության կողմից լեյտենանտ Աղամիրյանը առաջադրանք է ստանում փնտրել գեներալ-լեյտենանտ Իվնևի պարտիզանական բրիգադան։ Ցուրտ աշուն էր, թռիչքի համար եղանակը անբարենպաստ։ Չնայած դրան, լեյտենանտ Աղամիրյանը օդ է բարձրանում և ցածր ու խիտ ամպամածության դժվարին պայմաններում կարողանում է գտնել պարտիզանական բրիգադան և ռադիոկապ հաստատել նրա հետ։ Հրամանատարության առաջադրանքն օրինակելիորեն կատարելու համար, առաջին օդային բանակի հրամանատար Ս. Ա. Խուդյակովը (Ա. Ա. Խանֆերյանց) նոյեմբերի 24-ին նրան պարգևատրում է Կարմիր դրոշի շքանշանով։*

*Գերագույն գլխավոր հրամանատարության նույնպիսի առաջադրանքով 1943 թվականի հունիսի 2-ին լեյտենանտ Աղամիրյանը ռազմական խորհրդի անդամ գնդապետ Մորոզովի հետ հաջողությամբ թռիչք է կատարում դեպի Սովետական Միության հերոս Գրիշինի պարտիզանական բրիգադայի գործողությունների շրջանը։*

*1942 թվականի հոկտեմբերից մինչև 1943 թվականի հունիսի կեսերը նա դեպի թշնամու խոր թիկունքը կատարում է 69 գիշերային մարտական թռիչք՝ պարտիզանական ջոկատներին հասցնելով ռազմամթերք ու սննդամթերք։ Այդ մարտական առաջադրանքները կատարելու համար, պարտիզանական շարժման շտաբի կողմից 1943 թվականի հունիսի 24-ին խիզախ օդաչուն պարգևատրվում է Հայրենական պատերազմի պարտիզանի առաջին աստիճանի մեդալով։*

*1943 թվականի հուլիսի 23-ից Աղամիրյանը փոխադրվում է հեռավոր գործողության 22-րդ գվարդիական ավիագունդը՝ որպես օդակի հրամանատար։ Նա մի քանի օրում տիրապետում է նոր տիպի ինքնաթիռին և հուլիսի 28-ից անցնում է մարտական առաջադրանքների կատարմանը։ Աղամիրյանը շուտով ստանում է ավագ լեյտենանտի, ապա կապիտանի կոչում։*

*Դնեպրի անցման ժամանակ, 1943 թվականի աշնանը, օդաչու Աղամիրյանը հրամանատարության առաջադրանքներով բազմաթիվ անգամ ռմբակոծում և հետախուզական նպատակով լուսավորում է Դնեպրի ձախ ափին գտնըվող թշնամու դիրքերը ու զորքի կուտակումները։ Մարտական այդ առաջադրանքները բարձր վարպետությամբ կատարելու համար գվարդիայի կապիտան Աղամիրյանը նույն թվականի սեպտեմբերին երկրորդ անգամ պարգևատրվում է Կարմիր դրոշի շքանշանով։*

*1944 թվականի փետրվարի 6—18-ը մի շարք առաջավոր օդաչուների թվում գվարդիայի կապիտան Աղամիրյանին խնդիր է տրվում՝ ռմբակոծել Հելսինկիի երկաթուղային հանգույցը։ Չնայած թշնամու ուժեղ դիմադրությանը, նա հաջողությամբ կատարում է առաջադրանքը։*

*Փորձված և հմուտ օդաչուի մարտական սխրագործությունները դրանցով չեն սահմանափակվում։*

*Գվարդիայի կապիտան Աղամիրյանը և իր մարտական ընկերները՝ գվարդիայի լեյտենանտ Կուզմինը, շտուրման, գվարդիայի մայոր Կրիլովը, օդային հրաձիգ-ռադիստներ, գվարդիայի ավագներ Լեժերեկովը և Ինտեզարովը առանձնացվեցին՝ Հարավսլավիայի ժողովրդա-ազատագրական բանակին օգնելու գործում հրամանատարության հատուկ առաջադրանքները կատարելու համար։*

*Աղամիրյանը դեպի Հարավսլավիա իր առաջին մարտական թռիչքը կատարում է 1944 թվականի մարտի 21-ին, փոխադրելով հատուկ բեռ։ Անցնելով Կարպատյան լեռներով և կտրելով ավելի քան 1000 կմ տարածություն, օդանավի անձնակազմը հաջողությամբ գտնում է նշված վայրը և ցած է նետում բեռը։ Խիզախ օդաչուն նույնպիսի առաջադրանքներ է կատարում ապրիլի 7-ին և մայիսի 6-ին։*

*Հունիսի 12-ին գվարդիայի կապիտան Աղամիրյանին առաջադրանք է տրվում՝ Հարավսլավական ժողովրդա-ազատագրական բանակի սպայական կազմի մի խումբ ավագ հրամանատարների տեղափոխել հայրենիք։ Գիշերային թռիչքներում կոփված օդաչուն սպայական կազմին անվտանգ իջեցնում է նշանակված տեղը և հաջողությամբ վերադառնում։ Նա դեպի Հարավսլավիա կատարել է 44 մարտական թռիչք։*

*Հարավսլավական կառավարությունը արժանավայել գնահատելով թռիչքների խիզախ վարպետի ծառայությունները, Աղամիրյանին պարգևատրել է Պարտիզանական աստղ առաջին աստիճանի շքանշանով։*

*Աղամիրյանը երիտասարդ օդաչուներին հաղորդել է իր մարտական հարուստ փորձը։ Օդաչուներ Դոլժենկոն, Պրոնշատովը և Սաֆանովը նրանից սովորել են հեռավոր թռիչքների վարպետությունը և կատարել մարտական կարևոր շատ առաջադրանքներ։*

*Հրամանատարության առաջադրանքներն անթերի կատարելու, թռիչքային բարձր վարպետություն և հերոսություն ցուցաբերելու համար ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1944 թվականի նոյեմբերի 5-ի հրամանով Գոգա Գրիգորի Աղամիրյանին շնորհվում է Սովետական Միության հերոսի բարձր կոչում։*

*Շարունակելով մարտերը հիտլերյան զավթիչների դեմ, գիշերային հեռավոր թռիչքների վարպետը նորանոր անձնուրաց սխրագործություններով հարստացնում է իր մարտական հաշիվը, որի համար 1945 թվականի սկզբին պարգևատրվում է Ալեքսանդր Նևսկի շքանշանով։ Նրա էսկադրիլիայի անձնակազմից 62 հոգի պարգևատրված են կառավարական շքանշաններով, իսկ նրանցից ոմանք 2—3 շքանշանների ասպետներ են։*

*Աղամիրյանի մարտական հաշվում գրանցված է մարտական 234 թռիչք։ Օդային հերոսի ընդհանուր թռիչքները կազմում են մոտ 2500 ժամ, որից գիշերը՝ ավելի քան 1000 ժամ։*

*Հայրենական պատերազմի հաղթական ավարտից հետո գվարդիայի կապիտան Աղամիրյանը, մնալով Սովետական Միության զինված ուժերի շար-*

քերում, իր բոլոր ջանքերն ու գիտելիքները նվիրաբերում է սովետական պետության պաշտպանության հզորության ամրապնդման սրբազան գործին։

Սովետական Միության Հերոս, գնդապետ Աղամիրյանը այժմ ծառայում է ավիացիոն զորամասում։ Նրա կուրծքը զարդարված է մարտական 8 շքանշանով և 10 մեդալով։



# ԳՐԻԳՈՐ ԿԱՐԱՊԵՏԻ ԲԱՂՅԱՆ



## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի գեներալական, սպայական ու շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար,* շնորհել Սովետական Միության հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

2. *Փոխ-գնդապետ* Գրիգոր Կարապետի Բաղյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի Նախագահության Նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի Նախագահության Քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 29 հունիսի 1945 թ.*





Կարմիր բանակի կադրային սպա Գրիգոր Կարապետի Բաղյանը պատերազմի սկզբում մարտերին մասնակցել որպես գնդի պրոպագանդիստ: Պատերազմի փորձություններում նա կոփվեց և քաղաշխատողից աճեց ու դարձավ գնդի հրամանատար:

Գրիգոր Բաղյանը ծնվել է 1912 թվականին Ելիզավետպոլի (Կիրովաբադ) նահանգի Խաչակապ գյուղում, չքավոր գյուղացու ընտանիքում: Սկզբնական կրթությունն ստացել է հայրենի գյուղում, այնուհետև տեղափոխվել է Բաքու և ուսումը շարունակել Բաքվի Հ. Թումանյանի անվան հայկական № 22 միջնակարգ դպրոցում: Աշխատանքային գործունեությունը Գրիգորն սկսում է բանվորությամբ: Այդ տարիներին նա ընդունվում է լենինյան կոմերիտմիության շարքերը և շուտով ընտրվում կոմերիտական կազմակերպության քարտուղար, ապա մեկնում է Լեռնային Ղարաբաղ՝ աշխատելով որպես ուսուցիչ, ժողկրթբաժնի մեթոդիստ, այնուհետև՝ ժողկրթբաժնի վարիչ: 1937 թվականին նա աշխատում է «Խորհրդային Ղարաբաղ» թերթի խմբագրությունում որպես բաժնի վարիչ: Բաղյանը ՍՄԿԿ շարքերն է ընդունվել 1938 թվականին և կարճ ժամանակից հետո նշանակվել է Լեռնային Ղարաբաղի պարտիական մարզային կոմիտեի դպրոցական բաժնի վարիչ:

1941 թվականի հունվարին Բաղյանը մեկնում է կարմիր բանակ և նշանակվում 136-րդ դիվիզիայի 387-րդ գնդի պրոպագանդիստ։ 1941 թվականի օգոստոսին դիվիզիան Լենինականից մեկնում է ռազմաճակատ և մարտի մեջ է մտնում սեպտեմբերին, Զապարոժիեի շրջանի Մալայա Բելոզերկա գյուղում։ Այնուհետև դիվիզիան ետ է շարժվում Վասիլկովա, Կրասնոարմեյսկ, Տագանրոգ քաղաքների ուղղությամբ, մեր մյուս զորամասերի հետ միասին մարտեր մղելով ֆաշիստական գեներալ Կլեյստի տանկային բանակի զորամասերի դեմ։

Այնուհետև դիվիզիան շարժվում է դեպի Դիակովա, Նովո-Շախտինսկ, Նովո-Չերկասկ՝ Ռոստովը հյուսիսից պաշտպանելու համար։ Այս կռիվներում առավել աչքի ընկնելու համար 136-րդ դիվիզիան արժանացավ Կարմիր դրոշի շքանշանի և գվարդիական կոչման։ Այդ օրերին Բաղյանը արդեն գնդի պինկոմ էր։ Բաղյանի գունդը մասնակցում է Վոլգոգրադի հերոսական պաշտպանությանը և աչքի է ընկնում իր մարտական գործողություններով։

1943 թվականի մայիսի 15-ին 7-րդ գվարդիական բանակի ռազմական խորհրդի որոշմամբ կապիտան Բաղյանն ուղարկվում է գնդի հրամանատարների «Վիստրել» դասընթացներում սովորելու։ Նույն թվականի նոյեմբերին, դասընթացներն ավարտելուց հետո, Բաղյանն անմիջապես մեկնում է Ուկրաինական առաջին ռազմաճակատ, ուր նշանակվում է 30-րդ հրաձգային կարմրադրոշ դիվիզիայի 71-րդ գնդի հրամանատարի տեղակալ, իսկ հրամանատարի զոհվելուց հետո՝ գնդի հրամանատար։ Գունդը մասնակցում է Կամենեց-Պոդոլսկ քաղաքի ազատագրմանը, ապա Դեսնայի գետանցմանը ու Ստանիսլավ քաղաքի ազատագրմանը։ Այս մարտերում գունդը հմուտ ղեկավարելու համար Բաղյանն արժանանում է Ալեքսանդր Նևսկու շքանշանի։

1944 թվականի օգոստոս ամսին դիվիզիան մարտերով հասավ Կարպատների «Ռուսական լեռնանցք» կոչված վայրը, որտեղ հատկապես կատաղի մարտեր մղեց 987-րդ բարձունքի համար։ Այստեղ մեկ օրվա ընթացքում սովետական ռազմիկները հարկադրված եղան ետ մղելու թշնամու 15 հակահարձակում։ Լեռնանցքը գրավելու, մարտերը լավ ղեկավարելու և անձնական քաջության համար գնդի հրամանատար Բաղյանը պարգևատրվում է Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանով։

1945 թվականի փետրվարի սկզբներին Ռուբկա քաղաքի շրջակայքում դիվիզիայի զորամասերը հրաման են ստանում ճեղքել գերմանացիների պաշտպանության գիծը և դուրս գալ Մեծ-Տատրայի լեռնանցքը, թիկունքից չթողնել գերմանացիներին օժանդակ ուժեր ստանալ։ Այս կարևոր խնդրի կատարումը վստահվում է մայոր Բաղյանի գնդին։ Բաղյանը վերցնելով ավտոմատավորներից և սակրավորներից կազմված մի դումարտակ, ձյունապատ և անանցանելի ճանապարհներով, բարձրանում է լեռները։ Գիշերը դումարտակը իջնում է լեռներից, իսկ լուսաբացին հանկարծակի գրոհելով թշնամու վրա, գրավում Ռուբկա քաղաքը։ Քաղաքի գրավումով Բաղյանի գունդը ապահովում

է բանակի առաջխաղացումը 50 կիլոմետրով։ Այս օպերացիայի հաջող կատարման համար գնդի հրամանատարը պարգևատրվում է Կարմիր դրոշի շքանշանով։

Սկսած ապրիլի 15-ից գվարդիայի փոխ-գնդապետ Գրիգոր Բաղյանի գունդը մարտեր է սկսում Մորավյան կղզիների շրջանում. գրոհային գունդը չեխոսլովակյան Բոզով գյուղի շրջակայքում ճեղքելով գերմանացիների ամուր պաշտպանությունը, կրելով մարտի ողջ ծանրությունը, սրընթաց անցնում է Օպավա գետը և աստիճանաբար ընդլայնում գետի ձախ ափին գտնվող հենակետը։ Մարտական գործողությունները հմտորեն ղեկավարելու և ցուցաբերած անձնական խիզախության համար Բաղյանը պարգևատրվում է Կարմիր դրոշի երկրորդ շքանշանով։

Մայիսի 7-ին գվարդիայի փոխ-գնդապետ Բաղյանի գունդը խնդիր է ստանում գրավել Մորավա գետի ափին գտնվող Օլոմոուց քաղաքը, որը գերմանացիների պաշտպանության ուժեղ հենակետ էր։

Բաղյանը գունդը բաժանում է առանձին խմբերի, որոնք անտառի միջով գիշերը աննկատելիորեն մոտենում են քաղաքին՝ գետի կողմից։ Գետի վրայի կամուրջը պաշտպանվում էր թշնամու գնդացրային ուժերով։ Շտապով սովետական ռազմիկները լիկվիդացնում են կամուրջի պաշտպանությունը և ներխուժում քաղաք։ Այստեղ նրանց է միանում մեր տանկային գումարտակներից մեկը։ Համատեղ գործողություններով նրանք զարգացնում են հարձակումը և մայիսի 8-ին գրավում քաղաքը։ Օլոմոուց քաղաքը գրավելու ժամանակ զորամասերը հմտորեն ղեկավարելու, հրամանատարության մարտական առաջադրանքը ժամանակին և օրինակելիորեն կատարելու, ցուցաբերած անձնական սխրագործությունների համար ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1945 թվականի հունիսի 29-ի հրամանագրով փոխ-գնդապետ Գրիգոր Կարապետի Բաղյանին շնորհվում է Սովետական Միության Հերոսի կոչում՝ հանձնելով նրան Լենինի շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ։

Հայրենական պատերազմի ավարտումից հետո, Սովետական Միության Հերոս Բաղյանը շարունակում է զինվորական ծառայությունը։

1953—1955 թվականներին փոխ-գնդապետ Բաղյանը սովորում և ավարտում է սովետական բանակի գլխավոր շտաբի բարձրագույն ռազմական ակադեմիան։ Այժմ գնդապետ, Սովետական Միության Հերոս Բաղյանը ղեկավար աշխատանք է կատարում ռազմական օկրուգում։



# ԳՐԻԳՈՐ ՇԱՀՈՒՄԻ ԿԱԼՈՒՍՏՈՎ

## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**Կարմիր բանակի զրահատանկային և մեխանիզացված զորքերի սպայական կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին**

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում Հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար,* շնորհել Սովետական Միության հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

*2. Գվարդիայի գնդապետ* Գրիգոր Շահումի Կալուստովին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 4 նոյեմբերի 1943 թ.։*





**1942** թվականի հուլիսին գերմանա-ֆաշիստական զորքերը հարձակման անցան ռազմաճակատի հարավային հատվածում։ Թշնամին ցանկանում էր հարվածել Վոլգոգրադին, Ռոստովին, անցնել Դոնն ու Վոլգան, ջախջախել սովետական բանակի ուժերի ձախ թևը, ծավալել հարձակում դեպի նավթային շրջանները, գրավել Կովկասը։

Դաժան օրեր ապրեց մեր Հայրենիքը Վոլգոգրադի և Կովկասի պաշտպանության օրերին։ Ահեղ ճակատամարտեր ծավալվեցին Վոլգոգրադի տափաստաններում և Կովկասյան նախալեռներում։

Վոլգոգրադը պաշտպանում էին սովետական բոլոր ժողովուրդների զավակները, որոնք ցուցաբերեցին հայրենասիրության վառ օրինակներ և փառքով պսակեցին իրենց անունները։

Այդ հերոսների շարքերումն էր նաև հայ ժողովրդի զավակ, գվարդիայի գնդապետ Գրիգոր Շահումի Գալստյանը։

Գրիգոր Գալստյանը ծնվել է 1908 թվականին Բաքվում, բանվորի ընտանիքում։ Նա 1915 թվականին ընդունվում է տեղի տարրական դպրոցը, բայց թերավարտ թողնելով ուսումը սկսում է աշխատել նավատորմում։ Բաքվի պրոլետարիատի շարքերում Գրիգորը ձեռք է բերում աշխատանքային և ռևոլյուցիոն ունակություններ։

Սովետական իշխանության հաստատումից հետո նա սկսում է ծառայել

«Բոյնոյ» նավի վրա, որի անձնակազմը մեծ դեր է խաղում Գրիգորի դաստիարակման գործում։ 1925 թվականին նավի ինտերնացիոնալ ընտանիքը Գրիգորին ընդունում է լենինյան կոմերիտմիության շարքերը։ Աշխատանքի հետ մեկտեղ նա շարունակում է սովորել և ավարտում է միջնակարգ դպրոցը։

1928 թվականին Գրիգոր Գալստյանը զորակոչվում է կարմիր բանակ, և ողջ կյանքը կապում սովետական Հայրենիքի պաշտպանության գործին։ 1929 թվականին Գալստյանն ընդունվում է կոմունիստական պարտիայի շարքերը, ավարտում է Բաքվի հետևակային դպրոցը, ապա Թիֆլիսի հրամանատարական դասընթացները և դառնում քաղաշխատող։

Երբ ֆաշիստական զորքերը հարձակվեցին մեր Հայրենիքի վրա, Գրիգոր Գալստյանը մեկնեց ռազմաճակատ։

Վոլգոգրադի պաշտպանության օրերին Գրիգոր Գալստյանն արդեն տանկային ստորաբաժանման հրամանատար էր։ Հարևան ստորաբաժանումների հետ միասին իր խիզախների գլուխն անցած՝ Գալստյանն ամուր պատնեշում է թշնամու առաջխաղացման ճանապարհը և մինչև վերջ մասնակցում հակառակորդի խոշոր խմբավորման շրջապատման ու լիկվիդացման մարտերին։ Այստեղ Գալստյանն աչքի է ընկնում իր կատարած խիզախություններով և պարգևատրվում Լենինի շքանշանով։

Սովետական բանակի հարձակողական մարտերի ժամանակ փոխ-գնդապետ Գալստյանը աննկարագրելի սխրանքներ է գործում, որի համար արժանանում է գվարդիայի գնդապետի կոչման։ Զինվորական նոր աստիճանն էլ ավելի է ոգևորում Գալստյանին։ Տանկային նոր զորամասով նա մասնակցում է Կուրսկի աՀեղ ճակատամարտին։ Այդ մարտերում նա հանդես է բերում ռազմավարական մեծ շնորհք և հմտություն։ Բայց դժբախտաբար, երկար չտևեց նրա կյանքը։ 1943 թվականի հուլիսին Կուրսկի տակ մղվող կատաղի մարտերում գնդապետ Գալստյանը ընկնում է հերոսի մահով։

Բարձր գնահատելով գվարդիայի գնդապետ Գրիգոր Գալստյանի մատուցած ծառայությունները, ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1943 թվականի նոյեմբերի 4-ի հրամանագրով նրան հետմահու շնորհվում է Սովետական Միության հերոսի կոչում։



# ԼԵՎՈՆ ԽՆԿԱՆՈՍԻ ԴԱՐԲԻՆՅԱՆ



## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքները օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար,* շնորհել Սովետական Միության հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

*Գեներալ* Լևոն Խնկանոսի Դարբինյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 10 հունվարի 1944 թ.։*






Սովետական բանակի կադրային սպա Լևոն Խնկանոսի Ղարիբջանյանը ծնվել է 1905 թվականին Ախալքալաքի շրջանի Ալաստան գյուղում, անտառապահի ընտանիքում։ 1907 թվականին մահանում է նրա հայրը։ Լևոնը մնում է մոր խնամքի տակ, որը նյութական դըժվարին պայմաններում որդուն կրթություն է տալիս գյուղական եռամյա դպրոցում։

1918 թվականին Ախալքալաքի շրջանը թուրքական բանակի կողմից գրավվելուց հետո, նրանց ընտանիքը գաղթի ժամանակ բոլորովին քայքայվում է, իսկ անապաստան Լևոնը ընկնում է Բորժոմի որբանոցը։

1920 թվականին որբանոցից հեռացվելուց հետո, Լևոնը գալիս է Ալեքսանդրապոլ (այժմ Լենինական), որը նույնպես օկուպացվում է թուրքական զավթիչների կողմից։ Սովատանջ ու հալածական օրեր անցկացնելով, ապրելով հայկական կոտորածների սարսափը, Լևոնը 1921 թվականի ապրիլին մի խումբ հայ երիտասարդների հետ միասին փախչում է քաղաքից և Ղալթախչի կայարանում հանդիպելով դեպի Ալեքսանդրապոլ շարժվող 11-րդ կարմիր բանակի զորամասերին, կամավոր կերպով մտնում է նրա շարքերը և մասնակցում Ալեքսանդրապոլի ազատագրմանը։

1922 թվականին Լևոնը բանակից զորացրվում է և վերադառնում Ախալքալաք։ Այստեղ 1923 թվականին ընդունվում է կոմերիտմիության շարքերը, ակտիվորեն մասնակցում է ինչպես հասարակական-քաղաքական աշխատանքներին, այնպես էլ բանդիտիզմի ու մենշևիկյան կոնտրռևոլյուցիայի դեմ մղվող պայքարին։

1924 թվականին Լևոնը վերջնականապես փոխադրվում է Սովետական Հայաստան և մտնում Երևանի Մյասնիկյանի անվան ռազմական դպրոցը։ 1927 թվականին շարունակում է իր ուսումը Թիֆլիսում, Անդրկովկասյան հետևակային դպրոցում, որը ավարտելուց հետո, 1928 թվականին նշանակվում է դասակի հրամանատար։ Երիտասարդ հրամանատարն այնուհետև ջանասիրությամբ ձգտում է զինվորական բարձրագույն կրթության։ 1934 թվականին նա գերազանց գնահատականներով ավարտում է Մոսկվայի «Վիստրել» կուրսերը, իսկ հետո մտնում է Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան, որը պատերազմի պատճառով չի կարողանում ավարտել։

Լևոն Դարբինյանը կոմունիստական պարտիայի անդամ է 1928 թվականից։ Զինվելով մարքս-լենինյան ուսմունքով և հմտանալով ռազմական արվեստում՝ նա բանակում աճում ու դառնում է ռազմական դպրոցի պետ, գումարտակի, գնդի և ապա ավելի մեծ միավորումների հրամանատար՝ իր ամբողջ կյանքը նվիրաբերելով Հայրենիքի պաշտպանության գործին։

Հայրենական պատերազմի երկրորդ ամսից մայոր Դարբինյանը մեկնում է Կենտրոնական ռազմաճակատ։ Գոմելի մոտ տեղի ունեցած մարտերում ղեկավարում է կործանիչ ջոկատի, իսկ այնուհետև Հարավ-արևմտյան ռազմաճակատում՝ Խարկովի շրջանում, 47-րդ լեռնա-հրաձգային դիվիզիայի 148-րդ գնդի մարտական գործողությունները։ Պատերազմի բարդ իրադրության պայմաններում հանդես բերելով կադրային սպային հատուկ համարձակություն, նախաձեռնություն, սառնասրտություն և արագ կողմնորոշվելու ունակություն, Դարբինյանն իր մարտիկների ու սպաների համար դառնում է սիրելի ընկեր, հեղինակավոր հրամանատար, որի հետևից նրանք գնում են ամենավտանգավոր առաջադրանքները կատարելու պատրաստակամությամբ։

Մարտերի հմուտ կազմակերպման շնորհիվ նրա գունդը 1941 թվականի աշնան սկզբից Խարկովի և Իզյում-Բարվենկովսկի շրջաններում, երկար ժամանակ հետ է մղում թշնամու հետևակի ու տանկերի կատաղի գրոհները։ Հոկտեմբերի 26-ին Դարբինյանը Նովո-Վասինցովկայում գլխից վիրավորվում է, բայց չհեռանալով գնդից՝ ղեկավարում է նրա մարտերը։ Գունդը երկար ժամանակ համառությամբ դիմադրում է գերմանացիների գերակշիռ ուժերի ճնշմանը և նոյեմբերին հակագրոհների դիմելով՝ պաշտպանում է «Ջելյոնի-կալոդեց» և Տերնովայայի հատվածը՝ մեծ կորուստներ պատճառելով հակառակորդին։ 1941 թվականի նոյեմբերի 22-ին Սովինֆորմբյուրոյի հաղորդման մեջ այդ մասին ասված է. «Հարավ-արևմտյան ճակատներից մեկում գործող ընկ. Դարբինյանի զորամասի մարտիկները նոյեմբերի 20-ին գրոհով, լուրջ

հարված հասցրին թշնամուն։ Գերմանացիները նահանջեցին՝ կռվի դաշտում թողնելով իրենց զինվորների ու սպաների ավելի քան 400 դիակ։ Ընկ. Դարբինյանի զորամասը գրավեց 7 հրանոթ, 13 գնդացիր, մեծ քանակությամբ հրացան, արկ և փամփուշտ»։

Փոխ-գնդապետ Դարբինյանի համար ծանր ու կրիտիկական եղան 1942 թվականի մայիսից սեպտեմբեր ամիսներին Խարկովի, Ցիմլյանսկի ու Կալմիցսկի տափաստանում մղած մարտերը։ Այդ մարտերում նա 244-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարի տեղակալն էր։ Դիվիզիան երկար ժամանակ արյունահեղ մարտեր մղելով հարձակվող թշնամու տանկային ու հետևակային խոշոր ուժերի դեմ, մի քանի անգամ ընկավ շրջապատման մեջ։ Դարբինյանը, որին հանձնարարված էր միավորման արիերգարդի ղեկավարությունը, օրհասական ճիգեր գործադրելով, շրջապատումից դուրս է բերում մեծ թվով մարտիկների և մնացած ուժերով դիմում է պարտիզանական կռվի ու զարմանալի հնարամտություններ գործադրելով, հետախուզական աշխատանք է կազմակերպում թշնամու թիկունքում։

Շրջապատումից դուրս գալուց հետո Դարբինյանը 1943 թվականի փետրվարից ծառայում է 32-րդ մեքենայացված բրիգադայում, իսկ հոկտեմբերի 10-ից արդեն գնդապետի աստիճանով նշանակվում է մեքենայացված 9-րդ կորպուսի 69-րդ բրիգադայի հրամանատար։ Նա իր միավորումով Վորոնեժի և ապա Ուկրաինական առաջին ռազմաճակատի զորքերի կազմում ակտիվորեն մասնակցում է սովետական բանակի 1943 թվականի հարձակողական օպերացիաներին և աչքի է ընկնում ինչպես Խարկովի ազատագրման, այնպես էլ Դնեպրի գետանցման, Բուկրինսկի հենակետի, Կիևի, Ֆաստովի, Բրուսիլովի համար մղած մարտերում։

1943 թվականի փետրվարի 23-ին Դարբինյանն իր զորամասերից մեկի գլուխն անցած, որն ուներ ընդամենը 10 տանկ և հետևակի փոքրիկ ստորաբաժանում, հետապնդում է նահանջող թշնամուն և երեկոյան հասնում է Շևչենկո խուտորին, որտեղ կանգնած էր հակառակորդի ավելի քան 150 ավտոմեքենա՝ զինվորներով։ Չսպասելով իր բրիգադայի մյուս զորամասերի տեղ հասնելուն և չվախենալով ուժերի անհավասարությունից. Դարբինյանը իր փոքր ուժերով արագությամբ գրոհում է խուտորի վրա և գնդացրային ու հրետանային տեղատարափ կրակով ցաք ու ցրիվ անում հակառակորդին։ Հիտլերականները խուճապի մատնվելով, փախուստի են դիմում, թողնելով մեծ քանակությամբ ռազմավար։ Ահաբեկումն այն աստիճանի է լինում, որ նրանք փախչում են նույնիսկ հարևան Բելոգորոդսկ բնակավայրից և ճանապարհը շփոթելով, մի քանի անգամ ընկնում Դարբինյանի զորամասերի հարվածների տակ ու մեծ կորուստներ կրում։

Շևչենկո խուտորը գրավելուց հետո, գնդապետը հետախուզական տեղեկություն է ստանում, որ անտառում, իրենցից ոչ հեռու, կանգնած է Ֆրանսիայից հենց նոր սովետա-գերմանական ռազմաճակատ բերված ֆաշիստա-

կան 25-րդ տանկային դիվիզիայի 146-րդ գունդը, որն ուներ 40 տանկ և 10 թնդանոթ: Չնայած խիստ վտանգավորությանը, համարձակ հրամանատարը որոշում է այդ հարմար առիթը նույնպես ձեռքից բաց չթողնել:

Մութն ընկնելուն պես Դարբինյանը հրամայում է իր զորամասին տանկերով և գերմանացիներից խլած ավտոմեքենաներով անտառի շուրջը և խուտորի ճանապարհով անընդհատ երթևեկություն կատարել հետ և առաջ՝ դեպի գերմանացիների կողմը գնալ վառած լուսարձակներով, իսկ ետ վերադառնալ լույսերը հանգցրած:

Այս ձևով նա տպավորություն է ստեղծում, որ անտառը շրջապատվում է սովետական զորքերի մեծ ուժերով: Դարբինյանը հասնում է իր նպատակին. խաբված և ահաբեկված հիտլերականները, գիշերը թողնելով անտառը, առանց դիմադրության նահանջում են: Լուսաբացին մեր զորամասերը հետապնդելով տեղահան եղած թշնամուն, գլխովին ջախջախում են նրան:

Դարբինյանը հաճախակի առաջավոր գծում հայտնվում էր իր մարտիկների կողքին: Նրա ներկայությունը կրկնապատկում էր մարտիկների եռանդը: Նրանք հավատում էին, որ եթե իրենց հետ է Դարբինյանը, ապա ոչ մի թշնամի սարսափելի չէ: Ուկրաինական երկաթուղային մի կայարանի մոտ, հիտլերական ավտոմատավորների խումբը «Վագր» տիպի 8 տանկերով ու ինքնագնաց հրանոթներով հարձակվելով Դարբինյանի գլխավորած մի փոքր զորամասի վրա, այն բաժանում է երկու մասի և կտրում առաջ շարժվելու ճանապարհը: Այդ մոմենտին երկնքում երևում են նաև ֆաշիստական 25 ռմբակոծիչներ: Տխրություն է համակում մարտիկներին: Դարբինյանն անմիջապես հաջող ելք է գտնում. նա լավ գիտեր թշնամու ազդանշանային ձևերը, իր մոտ ունեցած գերմանական հրթիռներով ազդանշան է տալիս տանկերի ուղղությամբ: Գերմանական օդաչուները խաբվելով, ռումբի ամբողջ բեռը թափում են իրենց տանկերի վրա, որոնցից 3-ը հրդեհվում են, իսկ մնացածները փախուստի են դիմում: Հակառակորդի տանկային գրոհը տապալվում է: Դարբինյանի զորամասը ազատվելով վերահաս վտանգից շարունակում է իր առաջընթացը:

Ահա այսպես հնարամիտ ու համարձակ հրամանատար էր Դարբինյանը: Պայքարելով հարազատ ուկրաինական հողի ազատագրման համար նա 1943 թվականին անցնում էր այն վայրերով, որտեղից 1941—1942 թվականներին նահանջել էր ծանր ու արյունահեղ մարտերով: «Մտաբերում եմ իմ նախկին հերոսների գերեզմանները,—գրել է Դարբինյանը իր նամակներից մեկում,— ուր գյուղացիները թշնամուց գաղտնի ծաղիկներ են ցանել: Հիշում եմ անցյալ մարտերը, հանում պայուսակից մատյանը, ուղեւորում տալիս... գումարտակի հրամանատար Կալչենկոյի, ախալցխացի բանակային Մելիքյանի, վաշտի հրամանատար Ուսմիևի, բանակային Կուրբանովի շիրիմների վրա... Արցունքը խեղդում է ինձ, բայց արտասվելը պատիվ չէ ինձ: Նա ներքին ճանա-

պարհով կաթում է սրտիս վրա, որը ավելի է... պարտավորեցնում թարմացնել շիրիմները թշնամու արյունով»։

«Երդվում եմ՝ թշնամուն չհաղթած չվերադառնալ,— ասում է Դարբինյանը իր մի ուրիշ նամակում,— կամ կմեռնեմ մարտում արժանի մահով, կամ կվերադառնամ հաղթանակով»։

Գվարդիայի գնդապետ Դարբինյանը հատկապես մեծ խիզախություն կատարեց և աչքի ընկավ 1943 թվականի դեկտեմբերյան հարձակումների ժամանակ։

1943 թվականի դեկտեմբերի երկրորդ կեսին Ուկրաինական առաջին ռազմաճակատի գվարդիական 3-րդ տանկային բանակի հրամանատարությունը Դարբինյանի 69-րդ մեքենայացված բրիգադային, որը բանակում հարվածող միավորումներից մեկն էր, մարտական նոր առաջադրանք է տալիս՝ ճեղքել գերմանացիների ամրությունները Կիևից արևմուտք Կորոստիշևի ուղղությամբ, օժանդակել շրջանային այդ խոշոր կենտրոնի գրավմանը և բանակի հետագա առաջշարժմանը դեպի Ժիտոմիր։

69-րդ բրիգադան փայլուն կերպով կատարեց նաև այս առաջադրանքը և անթառամ փառք նվաճեց։ Դարբինյանի գլխավորությամբ բրիգադը հարձակողական մարտեր է սկսում 1943 թվականի դեկտեմբերի 25-ին։ Հրամանատարն ամբողջ ժամանակ գտնվելով զորամասերի մարտակարգերի դասավորությունների մեջ, իր համարձակ ու վճռական գործողություններով կազմակերպում է հակառակորդի պաշտպանության գծի ճեղքումը։

Միավորումն առաջ շարժվելով՝ գրավում է Ջաբելևչե, Կոչերովո բնակավայրերը և ընդհուպ մոտենում Կորոստիշևին։ Հակառակորդի կատաղի դիմադրության պայմաններում Դարբինյանը ճարպիկ տեղաշարժեր կատարելով՝ իր ուժերի մի մասով սրընթաց անցնում է Տետերև գետը, դուրս է գալիս Կոզիևկայի մոտ և հյուսիսից անակնկալ հարձակվելով, հնարավորություն է տալիս տիրապետելու Կորոստիշև քաղաքին։ Կորոստիշևի գրոհի ժամանակ գնդապետ Դարբինյանը ծանր վիրավորվում է։ Դա հինգերորդ վերքն էր, որ նա ստանում էր ռազմաճակատում։ Այդ ծանր վերքից նա մահանում է 1943 թվականի դեկտեմբերի 28-ին։

Բանակի հրամանատարությունը (հրամանատար, գվարդիայի գեներալ-գնդապետ, այժմ տանկային զորքերի մարշալ Ռիբալկո, բանակի ռազմական խորհրդի անդամ գեներալ-մայոր Մելնիկով) բարձր գնահատելով Դարբինյանի մատուցած ծառայությունները, նրան ներկայացնում է Սովետական Միության հերոսի կոչման։ ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահությունը, ընդառաջելով բանակի հրամանատարության միջնորդությանը, 1944 թվականի հունվարի 10-ի հրամանագրով, հետմահու Սովետական Միության հերոսի կոչում է շնորհում գվարդիայի գնդապետ Լևոն Խնկանոսի Դարբինյանին, նրան պարգևատրելով Լենինի շքանշանով ու «Ոսկե աստղ» մեդալով։ Դարբինյանը նախորդ մարտերում պարգևատրվել էր նաև Կարմիր դրոշի ու Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշաններով։



# ԳԵՎՈՐԳ ԹԱՄՐԱԶԻ ՀԱԿՈԲՅԱՆՑ





## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի գեներալներին, սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում Հրամանատարության մարտական խնդիրներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել Սովետական Միության Հերոսի կոչում, հանձնելով Լենինի շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ.*

*1. Մայոր Գևորգ Թամրազի Հակոբյանցին:*

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 3 հունիսի 1944 թ.*





Գևորգ Թամրազի Հակոբյանցը ծնվել է 1920 թվականին Հյուսիսային Կովկասի Պյատիգորսկ քաղաքում, քարտաշ-որմնադիրի ընտանիքում։ Նրա ծնողներն այդտեղ էին տեղափոխվել Ղարաբաղի Շուշու գավառի Արանզամին գյուղից՝ դեռևս առաջին համաշխարհային պատերազմի տարիներին։

1928 թվականին Գևորգն ընդունվում է Պյատիգորսկի միջնակարգ դպրոցը և 1939 թվականին ավարտում այն։ Նույն թվականին նա սովորելու է գործուղվում Կրասնոդարի ռազմա-հետևակային ուսումնարանը։ Այստեղ նա ընդունվում է ՀամԼԿԵՄ շարքերը։

1941 թվականի մայիսին Գ. Հակոբյանցը ավարտում է ռազմա-հետևակային ուսումնարանը, ստանում լեյտենանտի կոչում և նշանակվում հրաձգային դասակի հրամանատար՝ Լվով քաղաքում գտնվող 81-րդ մոտո-մեքենայացված դիվիզիայի 323-րդ գնդում։

Երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, նրա առաջին իսկ օրերից 21-ամյա լեյտենանտ Գևորգ Հակոբյանցը մտավ ահեղ մարտերի մեջ։ 8-րդ մոտո-մեքենայացված դիվիզիան ծանր պաշտպանական մարտեր էր մղում ֆաշիստական զավթիչների դեմ։

Հեշտ չէր սովետական մարտիկների համար թշնամուն թողնել հարազատ Հայրենիքի թեկուզ մի թիզ հողը։ Երիտասարդական ավյունով ու թշնամու նկատմամբ լի ատելությամբ մարտի էր նետվում կոմերիտական լեյտենանտ, դասակի հրամանատար Գ. Հակոբյանը։ Դժվարին նահանջի ճանապարհին, Շեպետովկայի մոտ, Զուդնո ավանում 1941 թվականի հուլիսի 20-ին Գ. Հակոբյանը ոտքից ծանր վիրավորվում է։ Բուժվելուց հետո, նույն թվականի նոյեմբերին նա ուղարկվում է Արմավիր՝ Հարավային ռազմաճակատի շտաբի տրամադրության տակ, ուր նշանակվում է 347-րդ դիվիզիայում վաշտի հրամանատար։ Այդ միավորման կազմում նրա վաշտը մասնակցում է Դոնի Ռոստովի, Տագանրոգի և Վորոշիլովգրադի ազատագրման համար մղած մարտերին։

1942 թվականի հունվարին ավագ լեյտենանտ Հակոբյանը նշանակվում է գնդի շտաբի պետի տեղակալ, իսկ ապրիլին՝ գումարտակի հրամանատար։ Մարտերում աչքի ընկած գումարտակի հմուտ ղեկավար Հակոբյանին 1942 թվականի հուլիսին շնորհվում է կապիտանի կոչում։ Մարտից-մարտ, օրեցօր աճում և կոփվում էր երիտասարդ սպան։

Ժամանակավոր ծանր նահանջից հետո սովետական զորքերը 1943 թվականի հունվարյան ցրտաշունչ օրերին Կովկասի ռազմաճակատում անցան ընդհանուր հարձակման։ Կապիտան Գ. Հակոբյանի գումարտակն ակտիվորեն մասնակցում է Արմավիր, Կրասնոդար, Կրիմսկայա և այլ քաղաքների ու բնակավայրերի ազատագրման համար մղած մարտերին։

1943 թվականի ապրիլին Հակոբյանը հատուկ գումարտակով, դժվարին տեղանքներում, 15 օր անընդհատ համառ մարտեր է մղում Ադագամկա գետի ափերին և ճանապարհ հարթում Կեսլերովո-Կիևսկի բնակավայրերի ուղղությամբ։ Սակայն ֆաշիստների ստեղծած ուժեղ պատնեշները շրջանցելու նպատակով, ռազմաճակատի հրամանատարությունը փոխում է հիմնական հարվածի ուղղությունը դեպի Կրիմսկ-Թաման։ Կարճ ժամանակից հետո Հակոբյանն իր զորամասով տեղափոխվում է Միուսի և Մոլոչնայա գետերի շրջանը և աչքի է ընկնում Դոնեցկի, Արմյանսկ և այլ քաղաքների համար մղած մարտերում։

1943 թվականի հուլիսին Գ. Հակոբյանն ընդունվում է ՍՄԿՊ շարքերը։ Շուտով նրան շնորհվում է մայորի կոչում։

Սովետական զորքերը վճռական հարվածներ հասցնելով գերմանական զավթիչներին՝ արագորեն մոտենում էին Դնեպրին, որտեղ թշնամին հույս ուներ կասեցնել նրանց առաջխաղացումը։ 1944 թվականի մարտի 13-ին մայոր Գ. Հակոբյանն առաջադրանք է ստանում Խերսոն քաղաքի շրջանում իր գումարտակով անցնել Դնեպրը, հենակետ գրավել նրա աջ ափին և ապահովել մյուս զորամասերի գետանցումը։ Գ. Հակոբյանը գումարտակից առանձնացնում է հարվածային հատուկ խմբեր և հրետանային ուժեղ կրակի պաշտպանությամբ հմտորեն կազմակերպում նրանց գետանցումը։ Զորամա-

յա համառ մարտերից հետո նրանց հաջողվում է փոքրիկ հենակետ գրավել և ամրանալ Դնեպրի աջ ափին։

Վարպետորեն օգտագործելով ձեռքի տակ եղած հնարավոր բոլոր միջոցները, մայոր Գ. Հակոբյանցն ամբողջ գումարտակը արագորեն փոխադրում է Դնեպրի աջ ափը և համարձակ ձեռնամարտի դիմելով, թշնամուն դուրս շպրտում խրամատներից։ Ետ մղելով հակառակորդի երկու հակագրոհը՝ Հակոբյանցի ղեկավարած ստորաբաժանումը սրընթաց գրոհով ճեղքում է թշնամու պաշտպանությունն ու մտնում Խերսոնի արվարձանը։ Վեցժամյա փողոցային համառ մարտերից հետո գումարտակը միանում է արևմտյան կողմից արդեն քաղաք մտնող իրենց գնդի մյուս գումարտակին։

Դնեպրի անցման և Խերսոնի ազատագրման ժամանակ ցուցաբերած անձնական համարձակության, խիզախության, ինչպես նաև բարդ իրադրության մեջ գումարտակը հմտորեն ղեկավարելու համար, ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1944 թվականի հունիսի 3-ի հրամանագրով, մայոր Գևորգ Թամրազի Հակոբյանցին շնորհվում է Սովետական Միության Հերոսի կոչում։

Բարձրագույն պարգևը նորանոր սխրագործությունների ներշնչեց Հակոբյանցին։ Հետագայում նա իր զորամասով փայլուն կերպով կատարեց հրամանատարության առաջադրանքները Նիկոլաև, Օչակով, Օդեսա և այլ քաղաքների ու գյուղերի ազատագրման և Դնեստրի անցման մարտերում։

1944 թվականի ամռանը սովետական զորքերը ձեռնամուխ են լինում Յասսի-Քիշինևյան խոշոր օպերացիայի իրականացմանը։ Այդ մարտերին մասնակցում էր նաև փոխ-գնդապետ Գ. Հակոբյանցի ղեկավարած զորամասը։

Հակոբյանցն այնուհետև իր զորամասով հանդես է գալիս Վիսլայի օպերացիաներում, հաղթական մարտերով անցնում Լեհաստանի տերիտորիայով և շարունակում թշնամու հետապնդումը բուն գերմանական հողում։

Պատերազմի հաղթական ավարտից հետո, 1945 թվականի սեպտեմբերին, Սովետական Միության Հերոս Գևորգ Հակոբյանցն ընդունվում է Մոսկվայի Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան, որն ավարտելուց հետո 1948 թվականին նշանակվում է 31-րդ մոտո-մեքենայացված դիվիզիայում՝ որպես գումարտակի հրամանատար։

1949 թվականի դեկտեմբերին նա տեղափոխվում է 89-րդ Հայկական Թամանյան դիվիզիան, որպես մոտոցիկլետային գումարտակի հրամանատար։ 1952 թվականին Հակոբյանցը նշանակվում է նույն դիվիզիայի 400-րդ գնդի հրամանատարի տեղակալ։ 1953 թվականի ապրիլի 30-ին նրան շնորհվում է գնդապետի կոչում։

1956 թվականին Գևորգ Հակոբյանցն աշխատանքի է անցնում Երևանի գյուղատնտեսական ինստիտուտում։

Պահեստի գնդապետ Գևորգ Թամրազի Հակոբյանցի կուրծքը զարդարում են

*Լենինի, երկու Կարմիր դրոշի, Հայրենական պատերազմի առաջին և երկրորդ աստիճանի, Կարմիր աստղի շքանշանները, «Ոսկե աստղ» և այլ մեդալներ։*

*Երկարատև ու անբասիր զինվորական ծառայության համար Գ. Հակոբյանը երկու անգամ պարգևատրվել է Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահության պատվոգրով։*



# ԳԵԴԵՈՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ




## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի գեներալներին, սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու մասին

*Դնեպրի հաջող գետանցման, Դնեպր գետի արևմտյան ափին հենակետ հաստատելու, այն ընդլայնելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել* Սովետական Միության Հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և «*Ոսկե աստղ*» մեդալ.*

*105. Գվարդիայի փոխ-գնդապետ* Գեդեոն Հայրապետի Միքայելյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 26 հոկտեմբերի 1943 թ.*





Տանկերի գվարդիական Հերոս Գեդեոն Միքայելյանը ծնվել է 1907 թվականին Նոր Բայազետ (այժմ Կամո) քաղաքում։ Ինը տարեկան հասակում Գեդեոնն ընդունվում է քաղաքի տարրական դպրոցը, բայց ծայր աստիճան աղքատությունը թույլ չի տալիս նրան ուսումը շարունակելու. նա հարկադրված թողնում է դպրոցը, դառնում կոշկակարի աշակերտ։

Սովետական իշխանությունը նոր կյանքի ուղի է բացում պատանի Գեդեոնի համար։ 1924 թվականին լենինյան կոչով նա ընդունվում է կոմերիտմիության շարքերը։ Նույն թվականին ընդունվում է Երևանի Ալ. Մյասնիկյանի անվան հետևակային զինվորական դպրոցը, այնուհետև ռազմական ուսումը շարունակում է Թիֆլիսի անդրկովկասյան հետևակային դպրոցում, որն ավարտում է 1928 թվականին և նշանակվում կարմիր բանակի Հայկական 2-րդ գնդում որպես դասակի հրամանատար։

1928 թվականի նոյեմբերին Հայկական հրաձգային 2-րդ գնդի պարտկազմակերպությունը երիտասարդ սպա Միքայելյանին ընդունում է կոմունիստական պարտիայի շարքերը։

1932 թվականին Միքայելյանը սովորում և ավարտում է Մոսկվայի զին-



270—6

վորական օկրուգի Համամիութենական Կենտգործկոմի անվան դպրոցը, որից հետո, 1933 թվականին աշխատանքի է անցնում Բաքվի Ս. Օրջոնիկիձեի անվան ռազմական հետևակային դպրոցում։

Նախապատերազմյան տարիներին կապիտան Միքայելյանը տեղափոխվում է Հայաստան և նշանակվում 227-րդ զինվորական դպրոցի պետ, ապա Հայկական ՍՍՌ պաշքավիաքիմի կենտրոնական խորհրդի նախագահ։

Հայրենական պատերազմի սկզբին հմուտ հրամանատարը նշանակվում է ռեսպուբլիկայի աշխարհազորային շտաբի պետի տեղակալ, իսկ հուլիսին թողնում է թիկունքային աշխատանքը և մեկնում Կենտրոնական ռազմաճակատ, մասնակցում Սովետական Բելոռուսիայի պաշտպանական մարտերին։

Մոսկվայի պաշտպանության օրերին գնդի հրամանատար Միքայելյանի ղեկավարած զորամասը մասնակցում է Մոսկվայի տակ գերման-ֆաշիստական զորքերի ջախջախմանը, ապա Եփրեմով, Ելեց քաղաքների ազատագրմանը և մարտերով հասնում Օրյոլի մարզի Նովոսիլ քաղաքը։ 1942 թվականի աշնանը մայոր Միքայելյանը ստանում է փոխ-գնդապետի կոչում և գործուղվում Մ. Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիա՝ կարճատև դասընթացներում սովորելու, որն ավարտելուց հետո, 1943 թվականի հուլիսին մեկնում է Ուկրաինական երկրորդ ռազմաճակատ։

Փոխ-գնդապետ Միքայելյանի գունդը 7-րդ գվարդիական բանակի 73-րդ գվարդիական դիվիզիայի կազմում, Վոլգոգրադյան էպոպեայից հետո, թշնամուն կրնկակոխ հետապնդելով՝ մարտերով հասնում է Խարկով, Մերեֆա, Կրասնոգրադ, ընդհուպ մոտենում Դնեպրին և կռիվներ սկսում Կրեմենչուգ-Դնեպրոպետրովսկ հատվածում։

Դիվիզիայի հրամանատարությունը 1943 թվականի սեպտեմբերի 25-ին գնդի հրամանատար Գնդեն Միքայելյանին մարտական առաջադրանք է տալիս՝ գնդի ուժերով գիշերն անցնել Դնեպրը և գետի աջ ափին ստեղծել հենակետ՝ դիվիզիայի գլխավոր հարձակման համար։ Գնդի հրամանատարն իսկույն անցնում է մարտական առաջադրանքի կատարմանը։ Նա անձամբ հետախուզում է գետանցման տեղանքը Ստարի Օրլիկ գյուղի ուղղությամբ, ձեռք բերում ձկնորսական նավակներ և գետանցման այլ միջոցներ։

Առաջինը գետն անցնելու ցանկություն է հայտնում կոմերիտական սերժանտ Ալեքսանդր Անիշչենկոն։ Նրա օրինակին հետևում են սերժանտներ Ախնինը, Ալեքպերովը և մի քանի ուրիշ խիզախ հետախույզներ։ Փոխ-գնդապետն ընտրում է ամենախիզախներին և նրանց նախապատրաստում գետանցման համար։

Գիշերվա ժամը 12-ին սկսվում է գետանցումը, ուղարկվում է առաջին նավակախումբը սերժանտ Անիշչենկոյի գլխավորությամբ։ Դնեպրի հորձանուտ ալիքների միջով նավակները մոտենում են գետի աջ կողմում գտնվող Գլինսկ-Բորոդաևսկ փոքրիկ կղզուն։ Սկսվում է ուժեղ ձեռնամարտ։ Կղզին

պաշտպանող հիտլերականները համառ կերպով պաշտպանում էին իրենց դիրքերը։ Գնդի հրամանատարն անհամբեր սպասում էր ազդանշանի։

Կես գիշեր էր... Հանկարծ գիշերային լռությունը խզվում է։ Լսվում են միաժամանակ մի քանի նռնակների պայթյուններ և ավտոմատի մի համազարկ, ապա գետի աջ ափից վերջապես նկատվում են ազդանշանի պայմանական՝ կարմիր, կանաչ և սպիտակ հրթիռները։ Շտապով նավակները հետ են ուղարկվում։ Գնդի հրամանատարը տեղեկանում է, որ գետն անցնողների առաջին խումբը Գլինսկ-Բորոդաևկա կղզու վրա կարճատև մարտեր մղելուց հետո, շրջանցել է կղզին, գրոհով թշնամուց խլել մի փոքր տարածություն, խրամատավորվել և աշխատում է աստիճանաբար ընդլայնել այն։ Լուսադեմին Միքայելյանի գնդի մնացած ռազմիկներն անսպասելի կերպով տարբեր կողմերից դուրս են գալիս կղզու վրա և միանգամից գրոհում թշնամու դիրքերը։ Հիտլերականները փորձում են դիմադրել։ Կղզու վրա ծավալվում են կատաղի մարտեր։ Մեկ օրվա ընթացքում Միքայելյանի գունդը ետ է շպրտում թշնամու հինգ հակագրոհ։ Գիշերային հարձակումների ժամանակ Միքայելյանը ցուցաբերում է ռազմական մեծ վարպետություն։ Նրա գունդը որպես ավանգարդային զորամաս, արընթաց և շեշտակի հարվածներով ոչնչացնում է թշնամու դիմադրող զորային միավորումը և այնուհետև, անցնելով գետի աջ ափը, միանում գետն անցած խմբերին։

Գետանցումը կատարվում էր բացառիկ ծանր պայմաններում։ Միքայելյանի ռազմիկները հարկադրված էին հաղթահարելու անասելի դժվարություններ՝ մերթ թշնամուն շփոթության մեջ գցելով, մերթ փոխելով գետանցի վայրերը, մերթ առաջ շարժվելով նրա տեղատարափ կրակի տակ։ Հաջորդ օրվա երեկոյան ամբողջ գունդը լրիվ անցել էր Դնեպրը։

Համառ և կատաղի մարտեր սկսվեցին գետի աջ ափին գտնվող Բորոդաևկա գյուղի համար։ Գետի ձախ ափից անհրաժեշտ օգնություն ստանալն անհնարին էր, քանի որ գետի այդ հատվածում անցման ոչ մի ուղի չկար, ռազմամթերքը սպառվելու վրա էր, մարտիկների շարքերը գնալով նոսրանում էին։ Փոխ-գնդապետը մի քանի անգամ մարտիկներին գրոհի տարավ միայն հակատանկային նռնակներով, հաճախ դիմելով ձեռնամարտի։ Գունդը գրավում է Բորոդաևկա գյուղը, թշնամուն պատճառելով մարդկային մեծ կորուստներ, ռազմավար է վերցնում 15 տանկ ու հրանոթ։

Հրամանատարության մարտական առաջադրանքը կատարված էր օրինակելիորեն։

Դնեպր գետը հաջողությամբ անցնելու, նրա աջ ափին հենակետ ստեղծելու, այն ընդարձակելու և այդ ժամանակ ցուցաբերած արիության և հերոսության համար ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահությունը 1943 թվականի հոկտեմբերի 26-ի հրամանագրով Սովետական Միության հերոսի կոչում շնորհեց գվարդիայի փոխ-գնդապետ Գ. Հ. Միքայելյանին և նրա գնդի ութ խի-

գախ մարտիկների, որոնց թվում սերժանտներ Անիշչենկոյին, Ախնինին և Ալեքպերովին, հանձնելով նրանց Լենինի շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ։

Այնուհետև փոխ-գնդապետ Միքայելյանի գունդը մասնակցեց Կիրովոգրադի մարզի և աջափնյա Ուկրաինայի մի շարք այլ քաղաքների ու խոշոր բնակավայրերի ազատագրման մարտերին։ Հետագա մարտերում աչքի ընկած ծառայությունների և հրամանատարական հմտության համար Միքայելյանը պարգևատրվում է Կարմիր դրոշի շքանշանով։ Սովետական բանակի շարքերում երկարամյա և անբասիր ծառայությունների համար 1948 թվականին Միքայելյանն արժանանում է Լենինի երկրորդ շքանշանին, իսկ 1949 թվականի աշնանը՝ գնդապետի զինվորական աստիճանի։

Այժմ պահեստի գվարդիայի գնդապետ Միքայելյանը աշխատում է Հայկական ՍՍՌ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում որպես գիտական աշխատող։



# ԱՇՈՏ ՀԱԲԵԹԻ ԱՄԱՏՈՒՆԻ



## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել Սովետական Միության հերոսի կոչում, հանձնելով Լենինի շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ.*

*11. Գվարդիայի լեյտենանտ Աշոտ Հաբեթի Ամատունուն:*

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Մ. Կալինին

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝ Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 27 փետրվարի, 1945 թ.:*





Սովետական Միության հերոս Խըդր Մուստաֆաևը ծնվել է 1905 թվականին Կիրովականի շրջանի Գյոզալդարա գյուղում։ Խըդրը երկար տարիներ աշխատել է Ալավերդու պղնձաձուլական կոմբինատում իբրև բանվոր, միաժամանակ սովորելով երեկոյան դպրոցում։ Այստեղից էլ 1927 թվականին մեկնել է կարմիր բանակ ծառայության։ Ժամկետը լրանալուց հետո նա որոշում է մնալ կարմիր բանակում։ 1930 թվականին Խըդրը ընդունվում է կոմունիստական պարտիայի շարքերը, 1934 թվականին ավարտում է Անդրկովկասյան հետևակային դպրոցը։

Մուստաֆաևը համառորեն ուսումնասիրում էր գնդացրային և հրետանային գործը։ Նա նշանակվեց գնդացրային վաշտի հրամանատար։ Իր ռազմական գիտելիքները զարգացնելու հետ միաժամանակ նա մասնակցել է հրետանային կադրերի պատրաստմանը։ Իսկ երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, Խըդրը դարձավ տանկիստ։

Կապիտան Խըդր Մուստաֆաևի մարտական գործունեությունն սկսվեց Վոլգոգրադում։ Մարտերից մեկի ժամանակ, որ վարում էր Մուստաֆաևի ստորաբաժանումը, տանկային գումարտակի դեմ թշնամին նետեց կրկնակի ուժ։ Տեղի ունեցավ կատաղի մարտ, որի հետևանքով հակառակորդը կռվի դաշտում թողեց 34 տանկ, իսկ մնացածները դիմեցին փախուստի։

*1943 թվականի հունվարի 23-ին հակառակորդի օդանավակայանի վրա գրոհելու ժամանակ Մուստաֆաևը ծանր վիրավորվեց։*

*Վոլգոգրադի ճակատամարտում ցուցաբերած քաջության համար նա պարգևատրվեց Կարմիր աստղի շքանշանով։*

*1943 թվականի մայիսին, ապաքինվելուց հետո, Մուստաֆաևը վերադարձավ ռազմաճակատ։ Նրա ղեկավարած տանկային գումարտակը մասնակցեց Կուրսկի նշանավոր ճակատամարտին և հաջողությամբ կատարեց մարտական առաջադրանքը։ Օպտուխա գետի արևմտյան ափին ամուր հենակետ գրավելու համար Մուստաֆաևը պարգևատրվեց Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանով և ստացավ մայորի կոչում։*

*Մուստաֆաևի ղեկավարած տանկային զորամասը հատկապես աչքի ընկավ Դնեպրն անցնելու, նրա աջ ափին ամուր հենակետ գրավելու և Կիևը ազատագրելու համար մղված մարտերում։ Վորոնեժի ռազմաճակատի զորքերը 1943 թվականի սեպտեմբերի վերջերին հասնելով Դնեպրին, երթից անցան այն՝ Կիևից հյուսիս և հարավ-արևելք ընկած շրջաններում։ Կիևից հարավ-արևելք՝ Պերեյասլավ-Խմելնիցկիի մոտ գրաված հենակետը ամուր պահողներից էր նաև Մուստաֆաևի ղեկավարած տանկային զորամասը, որը շուտով տեղափոխվեց Կիևից հյուսիս՝ Լյուտեժի հենակետը և նոյեմբերի սկզբին մասնակցեց Կիևի ուղղությամբ Ուկրաինական առաջին ռազմաճակատի (նախկին Վորոնեժի ռազմաճակատ) զորքերի հարձակողական գործողություններին։ Նոյեմբերի 6-ին սովետական զորքերն ազատագրեցին Ուկրաինայի մայրաքաղաքը։*

*Այդ նույն ժամանակ 3-րդ գվարդիական տանկային բանակի հրամանատարությունը հանձնարարեց Մուստաֆաևին ղեկավարել բանակի հարվածային խումբը, խորանալ թշնամու թիկունքում և ազատագրել Ֆաստովը։*

*Տանկային, հրետանային և մոտո-հրաձգային գումարտակներից բաղկացած հարվածային խումբը նոյեմբերի 6-ի վաղ առավոտյան Կիևից շարժվեց դեպի հարավ-արևմուտք։ Նա ճանապարհին շրջապատեց Պլեսեցկոյե գյուղը և մեկ ու կես ժամ տևող մարտում ջախջախեց հակառակորդի խոշոր կայազորը։ Գերի վերցվեցին հարյուրավոր գերմանացիներ։*

*Շարունակելով առաջխաղացումը և օգտվելով գիշերային մթությունից՝ հարվածային խումբը հյուսիս-արևմուտքից արագորեն և զգուշությամբ մոտեցավ Ֆաստովին։ Սովետական Միության հերոս, ավագ սերժանտ Չիստյակովի ղեկավարությամբ հետախուզության ուղարկված խումբը պարզեց, որ կայարանում կենտրոնացած են մեծաքանակ զենիթային հրանոթներ, կանգնած են մեծ թվով բարձված էշելոններ և շարունակվում է ռազմական տեխնիկայի բեռնումը, և որ հիտլերականները ցրված են տներում ու հարձակման չեն սպասում։*

*Մուստաֆաևը անմիջապես անձամբ մշակեց քաղաքը գրավելու պլանը։ Հարձակումը կատարվելու էր նույն գիշերը, հանկարծակի։ Նախ և առաջ գրավ-*

վելու էր երկաթուղային կայարանը, որպեսզի հակառակորդը չկարողանար այնտեղից էշելոններ դուրս բերել։ Արևելքից և հյուսիս-արևմուտքից հասցրած հարվածներով Մուստաֆաևի ղեկավարած ստորաբաժանումներն առաջին հերթին շրջապատեցին երկաթուղային կայարանը և տարբեր կողմերից թափանցեցին քաղաք։ Հարձակումն այնքան անակնկալ էր, որ գերմանացիները չկարողացան դիմադրություն կազմակերպել։ Խըդր Մուստաֆաևի խելացի հմուտ ղեկավարության և զորամասերի վճռական գործողությունների շնորհիվ, Ֆաստով քաղաքը գրավվեց առանց ուժեղ մարտերի և կորուստների։ Դա Կիևի ազատագրման հաջորդ օրն էր՝ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիայի տարեդարձի օրը։ Գրավվեց մեծ քանակությամբ ռազմավար. ռազմամթերքով բեռնված 16 գնացք, 64 զենիթային հրանոթ, ռազմական հանդերձանքի և սննդամթերքի ավելի քան 20 պահեստ, ինչպես նաև մեծ քանակությամբ վառելանյութ և այլն։

Գերմանացիները, կենտրոնացնելով մեծ ուժեր, այդ թվում՝ տանկեր, քաղաքը ետ գրավելու մի քանի փորձ կատարեցին։ Մեր զորամասերը քաջաբար պահեցին քաղաքը մինչև հիմնական ուժերի հասնելը։

Ֆաստով քաղաքը գրավելու ժամանակ ցուցաբերած հմտության և խիզախության համար ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1944 թվականի հունվարի 10-ի հրամանագրով մայոր Խըդր Մուստաֆաևը արժանացավ Սովետական Միության Հերոսի կոչման։

Այնուհետև Սովետական Միության Հերոս Խըդր Մուստաֆաևի ղեկավարած զորամասը մասնակցեց Ռադոմիշլ, Չերնյախով, Ժիտոմիր, Բերդիչև, Չերտկով, Տերնոպոլ և ուկրաինական բազմաթիվ այլ քաղաքների ազատագրմանը։

1944—1945 թվականներին Խըդրը սովորեց տանկային ուժերի բարձրագույն սպայական դպրոցում (Լենինգրադ)։

Հայրենական պատերազմի ավարտից հետո, շարունակելով զինվորական ծառայությունը, Մուստաֆաևը եղել է տանկային բրիգադի հրամանատարի տեղակալ և հրամանատար, զինվորական պարետ՝ Բաքվում, ապա տանկային գնդի հրամանատար։ 1949 թվականին նա ավարտել է Բաքվի Կիրովի անվան պետական համալսարանը, իսկ 1951—1952 թվականներին սովորել է Մոսկվայի զրահատանկային զորքերի ակադեմիայում։ Մուստաֆաևը 1946 թվականին ստացել է փոխ-գնդապետի, իսկ 1951 թվականին՝ գնդապետի կոչում։

Խըդր Մուստաֆաևը մի քանի անգամ ընտրվել է Ադրբեջանական ՍՍՌ Գերագույն սովետի դեպուտատ։

Նրա կուրծքը զարդարում են Սովետական Միության Հերոսի «Ոսկե աստղ» մեդալը, Լենինի-երկու, Կարմիր դրոշի, Կարմիր աստղի՝ երկու և Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանները։

Այժմ Սովետական Միության Հերոս, պահեստի սպա Խըդր Մուստաֆաևը բնակվում է Բաքվում։



# ԱՇՈՏ ՀԱԲԵԹԻ ԱՄԱՏՈՒՆԻ



## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**Կարմիր բանակի սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին**

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել Սովետական Միության հերոսի կոչում, հանձնելով Լենինի շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ.*

*11. Գվարդիայի լեյտենանտ* Աշոտ Հարբերի Ամատունուն:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Մ. Կալինին

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 27 փետրվարի, 1945 թ.*





Աշոտ Հարեթի Ամատունին ծնվել է 1923 թվականին Լենինական քաղաքում, երկաթուղայինի ընտանիքում։ Նա իր մանկությունն ու պատանեկությունն անց է կացրել հայրենի քաղաքում, սովորել ու ավարտել է անդրկովկասյան երկաթուղային № 51 դպրոցը։ 1938 թվականին Աշոտ Ամատունին ընդունվում է լենինյան կոմերիտմիության շարքերը։ 1939—1940 ուս. տարում նա ընդունվում է Լենինականի երկամյա մանկավարժական ինստիտուտի ֆիզիկո-մաթեմատիկական ֆակուլտետը, որտեղ սովորում է մինչև 1941 թվականի դեկտեմբեր ամիսը։

Հայրենական մեծ պատերազմի ծանր օրերին Աշոտը մեկնում է կարմիր բանակ և սովորում Օրջոնիկիձե քաղաքի երկրորդ հետևակային ուսումնարանում։ Ուսումնարանը դեռ չավարտած, մեկնում է ռազմաճակատ և մասնակցում Վոլգոգրադի հերոսական պաշտպանությանը։

Վոլգոգրադի մարտերում սերժանտ Ամատունուն հաճախակի հետախուզական դժվարին առաջադրանքներ են հանձնարարում, որոնք նա կատարում է համարձակորեն։ Քաղաքի գործարանային թաղամասերից մեկում թշնամու դեմ մղվող թեժ կռիվների ժամանակ Աշոտը վիրավորվում է։ Ապաքինվելուց հետո նա գործուղվում է Սարատովի երկրորդ տանկային դպրոցը, որն ավար-

*տում է 1943 թվականին և ստանում կրտսեր լեյտենանտի կոչում և նորից մեկնում ռազմաճակատ։*

*1944 թվականին 135-րդ տանկային բրիգադի կազմում Աշոտ Ամատունու հրամանատարությամբ գործող տանկային դասակն Ուկրաինական երրորդ ռազմաճակատում ակտիվորեն մասնակցում է Կրիվոյ-Ռոգ, Վոզնեսենսկ, Օդեսա, Տիրասպոլ, Նիկոլաև և Մարիուպոլ քաղաքների ազատագրման համար մղած մարտերին։ Այդ մարտերում Աշոտ Ամատունին աչքի է ընկնում որպես խիզախ ու հմուտ հրամանատար։ Հրամանատարության առաջադրանքները հաջողությամբ կատարելու համար նա պարգևատրվում է Կարմիր աստղի շքանշանով։ Նույն թվականին նա ընդունվում է ՍՄԿԿ շարքերը։*

*1944 թվականի հուլիսին Աշոտ Ամատունու վաշտը հարվածային երկրորդ տանկային բանակի կազմում մասնակցում է Լյուբլին քաղաքի ազատագրման մարտերին։ Լյուբլինի ազատագրման համար հրամանատարությանը անհրաժեշտ էին տեղեկություններ՝ հակառակորդի ուժերի քանակի, դասավորության, կրակակետերի մասին։ Այդ դժվարին առաջադրանքը հանձնարարվում է Ամատունուն։ Սովետական Երեք տանկ Ամատունու հրամանատարությամբ անցնում են հակառակորդի պաշտպանության գիծը և խորանում նրա թիկունքում։ Թշնամին նկատում է, որ սովետական տանկերը խճուղով շարժվում են Լյուբլինի ուղղությամբ։ Սովետական տանկերի շարժումը արգելելու համար գերմանական «Վագր» տանկը շարժվում է դեպի խճուղին։*

*Երբ հակառակորդի տանկը մոտենում է, Ամատունու տանկիստներն սկսում են կործանիչ կրակ բացել։ Մարտը տևում է շատ կարճ։ Սովետական քաջարի տանկիստներին հաջողվում է շարքից դուրս բերել հակառակորդի տանկը և նրա անձնակազմը գերի վերցնել։*

*Հրամանատարության համար անհրաժեշտ տեղեկությունները ստացվել էին։ Հետախուզության առաջադրանքը հաջող կատարելու համար Ամատունին պարգևատրվում է Կարմիր աստղի երկրորդ շքանշանով։ Եվ այն տանկային զորամասը, որի կազմում էր գտնվում Աշոտ Ամատունու վաշտը, առաջինն է մտնում Լյուբլին քաղաքը։ Նրա տանկային վաշտը հաջողությամբ մասնակցում է նաև Մալոլեցկի, Դեմբլին (Իվանգորոդ), Վարշավա և Պոզնան քաղաքների ազատագրմանը։*

*Գվարդիական Ամատունու հրամանատարությամբ գործող տանկային վաշտը 1945 թվականի հունվարին հասնում է Վիսլայի ափը։ Հունվարի 14-ին գումարտակի քաղղեկի տեղակալ Տինկովն Ամատունուն և կոմերիտմիության կազմակերպիչ Օլեգ Մատվեևին հատուկ առաջադրանք է տալիս՝ Սոխաչևի և Ինովրոցլավի շրջաններում ճեղքել թշնամու պաշտպանության գիծը, անցնել թիկունք և կտրել նրա կոմունիկացիաները, որն անհրաժեշտ էր գումարտակի հետագա առաջշարժման համար։*

*Ամատունին, իր տանկային վաշտով, Օլեգ Մատվեևի տանկային խմբի օգնությամբ սրընթաց գրոհով հանկարծակիի բերելով թշնամուն, հունվարի*

16-ի գիշերը ներխուժում է Սոխաչև քաղաքը և փակում հակառակորդի նահանջի ճանապարհները։ Այդ մարտերում տանկային վաշտը ոչնչացնում է 3 շոգեքարշ, 110 ավտոմեքենա, 2 հրանոթ, 2 զենիթային թնդանոթ, 6 փողանի 6 ականանետ, ռազմամթերքի և պարենամթերքի 8 պահեստ, շարքից հանում է գերմանական ավելի քան 300 զինվոր ու սպա, ազատագրում 250 սովետական ռազմագերի և 150 սովետական քաղաքացի։

Տանկային գրոհը թշնամու թիկունքում դեռևս շարունակվում էր։ Հունվարի 19-ին տանկային վաշտը ներխուժելով Լյուբեն քաղաքի արվարձանը, գրոհում է օդանավակայանի վրա և ոչնչացնում 17 ինքնաթիռ՝ անձնակազմով։

Ամատունու վաշտը և Օլեգ Մատվեևի տանկային խումբը գվարդիական երկրորդ տանկային բանակի 12-րդ գվարդիական տանկային կորպուսի կազմում այնուհետև մասնակցեցին հակառակորդի հենակետերից մեկի՝ Ինովրոցլավ քաղաքի ազատագրմանը։ Չնայած հակառակորդի համառ դիմադրությանը, տանկիստները գրոհով ներխուժում են քաղաքը, երկաթուղային կայարանը, ոչնչացնում են երեք շոգեքարշ, 3 երկաթուղային էշելոն, 2 հրանոթ և 2 տանկ։ Իսկ քաղաքի օդանավակայանում ոչնչացնում են 10 ինքնաթիռ, 35 ավտոմեքենա, շարքից հանում հակառակորդի ավելի քան 250 զինվոր ու սպա։

Հրամանատարության առաջադրանքը կատարվում է օրինակելիորեն։ Բոլոր կռիվներում տանկիստ-հրամանատարն առաջինն է նետվում մարտի, օրինակ հանդիսանում շատերի համար և նորանոր սխրագործությունների ոգեշնչում իր մարտական ընկերներին։ Ամատունու վաշտում տանկի վարորդ էր նաև իր քաջ հայրենակից Նշան Դարբինյանը։

Հունվարի 19-ից մինչև 22-ը Սոխաչև, Լյուբեն և Ինովրոցլավ քաղաքների ազատագրման ժամանակ հրամանատարության հատուկ առաջադրանքները հաջող կատարելու և ֆաշիստական զավթիչների դեմ մղած մարտերում խիզախություն ու հերոսություն ցուցաբերելու համար, ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1945 թվականի փետրվարի 27-ի հրամանագրով գվարդիայի լեյտենանտ Աշոտ Ամատունուն շնորհվում է Սովետական Միության հերոսի կոչում։

Հերոսի բարձր կոչումը նոր խիզախությունների է ոգեշնչում երիտասարդ հրամանատարին։ Օդերի ափին Ֆրանկֆուրտ քաղաքի համար մղած մարտերում ցուցաբերած խիզախության համար Աշոտ Ամատունին արժանանում է Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանի և պարգևատրվում է մի շարք մեդալներով։

Աշոտ Ամատունին այժմ ծառայում է սովետական բանակում։ Նա Հայրենական պատերազմում ձեռք բերած հարուստ փորձը և ռազմական գիտելիքները մեծ եռանդով հաղորդում է մարտիկներին։ Սովետական բանակում աճելով՝ նա այժմ հասել է փոխ-գնդապետի զինվորական աստիճանի։



# ՀՐԱՆՏ ԱՐՍԵՆԻ ԱՎԱԳՅԱՆ





## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ՍՍՌՄ զինված ուժերի սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում Հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել Սովետական Միության Հերոսի կոչում, հանձնելով Լենինի շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ.*

*3. Լեյտենանտ Հրանտ Արսենի Ավագյանին:*

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Ն. Շվերնիկ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 15 մայիսի, 1946 թ.:*





Հրանտ Արսենի Ավագյանը ծնվել է 1924 թվականին Բաքվում, ատաղձագործի ընտանիքում։ 1941 թվականի նոյեմբերին 10-րդ դասարանի աշակերտ, կոմերիտական Հրանտը կամավոր մեկնում է պաշտպանելու Հայրենիքը։

1942 թվականի հոկտեմբերին, երբ մեր զորքերը ծանր մարտեր էին մղում Հյուսիսային Կովկասում, Բաքվի ռազմա-ծովային բժշկական ուսումնարանի նախկին կուրսանտ 18-ամյա Հրանտ Ավագյանը ստացավ իր առաջին մարտական մկրտությունը։ Հակատանկային հրացանի նշանառու, ապա գնդացրային հաշվարկի հրամանատար Ավագյանը մարտնչել է Հյուսիսային-Կովկասյան, Ուկրաինական երրորդ և չորրորդ, Բելոռուսական առաջին ռազմաճակատներում։

1943 թվականի նոյեմբերից նա գումարտակի կոմերիտական կազմակերպիչ էր և իր անձնական օրինակով ոգևորում ու մարտի էր տանում կոմերիտականներին, ցույց տալով խիզախության և արիության օրինակներ։ Նույն թվականին Ավագյանն ընդունվեց կոմունիստական պարտիայի շարքերը։

Ուկրաինական Բոլշայա Լեպատուխա բնակավայրի մոտ մի բարձունքի համար մղած կռվում, առաջնորդելով գրոհող մարտիկներին, Ավագյանն առա-

ջինն է հասնում բարձունքին և նրա վրա բարձրացնում կարմիր դրոշ։ Ետ մղելով գերմանացիների հակագրոհները, խումբը մի ամբողջ օր իր ձեռքում է պահում բարձունքը, մինչև օգնության են գալիս մեր զորամասերը։

...Ուժեղ կռիվներ էին գնում Դնեպրի աջ ափին՝ գրավված հենակետը ընդլայնելու համար։ Բարձունքներից մեկը պաշտպանող վաշտի հրամանատարը զոհվել էր։ Իր վրա վերցնելով վաշտի հրամանատարությունը, Ավագյանը կազմակերպում է բարձունքի պաշտպանությունը։ Գերմանացիները տանկերի օգնությամբ շարունակում էին հակագրոհները։ Մեկ օրվա ընթացքում ետ մղելով թշնամու չորս հակագրոհ և մեծ կորուստ պատճառելով նրան, վաշտը ոչ մի քայլ ետ չնահանջեց գրաված դիրքերից։

Սովետական զորքերի 1945 թվականի հունվարյան հարձակման ժամանակ այն գումարտակը, որի կոմերիտական կազմակերպիչը լեյտենանտ Հրանտ Ավագյանն էր, Բելոռուսական առաջին ռազմաճակատի հատվածներից մեկում հաջողությամբ կատարեց գերմանացիների պաշտպանությունը ճեղքելու հրամանատարության առաջադրանքը, որի համար պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով։

1945 թվականի ապրիլի 16-ին սկսվեց մեր զորքերի վճռական հարձակումը Բեռլինի ուղղությամբ։ Թշնամուն հասցվող այդ վերջին հարվածի հենց առաջին օրը Հրանտ Ավագյանի մարտական գործերը հարստացան փայլուն սխրագործությամբ։ Կյուստրինի հենակետում (Օդեր գետի ձախ ափին) երկաթուղային կայարաններից մեկի մոտ գտնվող անտառում և նրա շրջակայքում ամրացել էին զգալի թվով թշնամու ուժեր, որոնք խանգարում էին մեր գնդի հարձակմանը։ Ավագյանը և մարտիկ Իլյան շարժվում են դեպի թշնամու ուժերի դասավորությունը։ Սողեսող մոտենալով տնակին, Ավագյանը լուսամուտից ներս է նետում երեք նռնակ։ Շատերը սպանվում են։ Կենդանի մնացած հիտլերականներին, անսպասելի հարձակումից հանկարծակիի եկած, խուճապահար փախուստի են դիմում։ Այդ մարտում ոչնչացվեց 56 հիտլերական և գերի վերցվեց 14 զինվոր ու սպա։ Գրավվեց երկու սարքին զրահատրանսպորտյոր։ «Այդ խիզախության շնորհիվ,— գրել է հրամանատարությունը Ավագյանի պարգևաթերթիկում,— գունդը ճեղքեց գերմանացիների պաշտպանությունը մեծ խորությամբ»։

Մի քանի օր անց դիվիզիան, որտեղ էր և Ավագյանը, մոտենում է Շպրեե գետին և պատրաստվում գետանցման։ Զորամասի շարժման ուղղությամբ առաջին անցնողներից էր կոմերիտական կազմակերպիչը, գումարտակի մի խումբ համարձակ կոմերիտականների հետ միասին։ Թշնամու ուշադրությունը շեղելու նպատակով դիվիզիայի հրամանատարությունը «մարտ խաղաց» աջ թևում, իսկ կոմերիտական մարտիկներն Ավագյանի ղեկավարությամբ, Բեռլինից ընդամենը մի քանի տասնյակ կիլոմետր հեռավորության վրա, հաջողությամբ անցան Շպրեեն։ Հինգ ժամ անց գունդն արդեն գտնվում

էր գրավված հենակետում։ Իսկ լուսադեմին հարձակման անցավ ամբողջ դիվիզիան։

1945 թվականի ապրիլի 24-ին Բեռլինի համար մղվող կատաղի մարտում Հրանտ Ավագյանը ծանր վիրավորվեց։

Բեռլինի ճակատամարտում գումարտակի կոմերիտական կազմակերպիչ լեյտենանտ Հրանտ Ավագյանի կատարած համարձակ և խիզախ գործողությունների համար ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահությունը 1946 թվականի մայիսի 15-ի հրամանագրով նրան շնորհեց Սովետական Միության Հերոսի կոչում։

Հրանտը պարգևատրված է Լենինի, Կարմիր դրոշի, Կարմիր աստղի՝ երկու, Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշաններով, Հերոսի «Ոսկե աստղ» և մի շարք մեդալներով։

Հայրենական պատերազմի ավարտումից հետո Հրանտ Ավագյանը շարունակեց ծառայել սովետական բանակում։ Նա ավարտել է Լենինի անվան զինվորական-քաղաքական ակադեմիան։

Այժմ Սովետական Միության Հերոս, փոխ-գնդապետ Հրանտ Արսենի Ավագյանը սովետական բանակի քաղաքական աշխատող է։



# ԹԱԴԵՎՈՍ ԱՐՇԱԿԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ





## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում Հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել Սովետական Միության Հերոսի կոչում, հանձնելով Լենինի շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ.*

*Գվարդիայի փոխ-գնդապետ* Թադևոս Արշակի Եղիազարյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 24 մարտի 1945 թ.:*





Թադևոս Արշակի Եղիազարյանը ծնվել է Կարսի մարզի Բուլանղ գյուղում 1905 թվականին։ Երեք տարեկան էր նա, երբ մահացավ մայրը։ 1918 թվականին թուրքական արշավանքների ժամանակ 13-ամյա մանուկը, փախչելով թուրքական բարբարոսների վայրագություններից, գնում է Ապարանի շրջան և բատրակություն անում։ Այնուհետև ընդունվում է որբանոց, ուր ստանում է տարրական կրթություն։ Այսպես տխուր է եղել Թադևոս Արշակի Եղիազարյանի կյանքը՝ մինչև Հայաստանում սովետական կարգերի հաստատումը։

1924 թվականին Եղիազարյանը զինվորագրվեց կարմիր բանակին և դարձավ նրա կադրային ռազմիկներից մեկը՝ շարքային մարտիկից հասնելով փոխ-գնդապետի աստիճանի։

Անդրկովկասյան հետևակային դպրոցն ավարտելուց հետո Եղիազարյանը շարունակեց ծառայել 76-րդ Հայկական լեռնա-հրաձգային դիվիզիայում, որպես վաշտի հրամանատար։ Հիշյալ դպրոցում սովորելու ժամանակ ակտիվ կոմերիտականն ընդունվում է ՍՄԿՊ-ի շարքերը։

Հայրենական պատերազմի նախօրյակին նա վերոհիշյալ դիվիզիայում գնդի դպրոցի պետն էր, ապա գնդի հրամանատարի տեղակալը։

1942 թվականի ամռանը 76-րդ Հայկական հրաձգային դիվիզիան Հարա-

վային ռազմաճակատում ծանր մարտեր էր մղում ֆաշիստական զորքերի դեմ, որոնք օգտվելով իրենց ժամանակավոր գերակշռությունից, անցել էին հարձակման և առաջանում էին դեպի Վոլգոգրադ ու Կովկաս։ Այդ մարտերի ակտիվ մասնակիցն էր նաև գնդի հրամանատարի տեղակալ Եղիազարյանը։

Այնուհետև Եղիազարյանը մի տարի սովորում է Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայում և փոխ-գնդապետի կոչումով վերադառնում է ռազմաճակատ։

Այն գունդը, որի հրամանատարը փոխ-գնդապետ Եղիազարյանն էր, 1943 թվականի երկրորդ կեսին Ուկրաինական չորրորդ ռազմաճակատի զորքերի կազմում մասնակցեց Դոնբասի և Ձախափնյա Ուկրաինայի հարավային շրջանների ազատագրմանը։ Գունդը մյուս զորամասերի հետ միասին հասավ Պերեկոպի պարանոցը, հաղթահարեց Տուրեցկի վալը և կռիվներ սկսեց Արմյանսկ քաղաքի համար։ Տուրեցկի վալի համար մղած կռիվներում, 1943 թվականի նոյեմբերի 3-ին, Եղիազարյանը վիրավորվում է։

Մարտական գործողություններին մասնակցելու և զինվորական երկարամյա ծառայության համար 1944 թվականի ապրիլին Եղիազարյանը պարգևատրվում է Կարմիր աստղի շքանշանով։

Նա հատկապես աչքի ընկավ Հունգարիայի ազատագրման մարտերում։ Ուկրաինական երկրորդ ռազմաճակատի զորքերը, որտեղ Եղիազարյանը գնդի հրամանատարի տեղակալն էր, 1944 թվականի հոկտեմբերին Հունգարիայում կատաղի կռիվներով հասան Տիսսա գետը և առանձին հատվածներում սկսեց անցնել այն։ Պետոկա գյուղի մոտ 81-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի 233-րդ գնդի գետանցումն անձամբ կազմակերպեց և ղեկավարեց Եղիազարյանը։ Գունդը արագությամբ խրամատավորվեց և հենակետ գրավեց գետի աջ ափին և այն հաջողությամբ պահպանեց մինչև մեր հիմնական զորամասերի հասնելը։ Գետանցման օրը հակառակորդը մի քանի անգամ դիմեց հակագրոհի՝ իր նախկին դիրքերը վերականգնելու և մեր զորամասերը գետը նետելու նպատակով։ Նրա բոլոր փորձերը ձախողվեցին։ Հաջորդ օրը՝ հոկտեմբերի 26-ին, Կերյու գյուղից հյուսիս-արևմուտք ընկած շրջանում թշնամին տաս տանկի պաշտպանությամբ դիմեց ուժեղ հակագրոհի, որը նույնպես ետ մղվեց հրամանատար Եղիազարյանի կողմից ցուցաբերած «կայունության և կրակի փոխգործողության ճիշտ դասավորության շնորհիվ»։ Այդ մարտում խփվեց երկու տանկ և սպանվեց 40 հիտլերական։

Նույն օրվա վերջին հակառակորդը մեր դիրքերի վրա բացեց հրետանային ուժեղ կրակ, որի ժամանակ մարտական պոստում հերոսաբար զոհվեց փոխ-գնդապետ Թադևոս Եղիազարյանը։

Հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու, գունդը հմտորեն Տիսսա գետը անցկացնելու և նրա աջ ափին հենակետ գրավելու համար փոխ-գնդապետ Թադևոս Աշոտի Եղիազարյանը ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1945 թվականի մարտի 24-ի հրամանագրով հետմահու արժանացավ Սովետական Միության հերոսի կոչման։



# ԳՐԻԳՈՐ ՄԻՔԱՅԵԼԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ




## ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի պետկազմին և շարքային կազմին Խորհրդային Միության Հերոսի կոչում շնորհելու մասին

*Ֆիննական սպիտակ գվարդիականության դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել Խորհրդային Միության Հերոսի կոչում, հանձնելով Լենինի շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ.*

*1. Կրտսեր լեյտենանտ* Գրիգոր Միքայելի Հայրապետյանին:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 7 ապրիլի 1940 թ.*





Գուրգեն (Գրիգոր) Միքայելի Հայրապետյանը Հայրենական պատերազմը դիմավորեց արդեն որպես Սովետական Միության Հերոս: Այդ փառքին նա հասել էր սովետա-ֆիննական պատերազմում:

Գուրգեն Հայրապետյանը ծնվել է 1914 թվականին Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Մինգրելսկ գյուղում, չքավոր գյուղացու ընտանիքում: 1929 թվականին Գուրգենը ընդունվում է տեղի յոթնամյա դպրոցը: Սովորելու հետ մեկտեղ, 1930 թվականին սկսում է աշխատել կոլտնտեսությունում: Այդտեղ Գուրգենը ընդունվում է լենինյան կոմերիտմիության շարքերը: Յոթնամյակն ավարտելուց հետո, 1936 թվականին Հայրապետյանը զորակոչվում է կարմիր բանակ: 1938—1939 թվականներին նա սովորում է հրամանատարական դասընթացներում և այն ավարտում կրտսեր լեյտենանտի աստիճանով՝ նշանակվելով 75-րդ հրաձգային գնդում վաշտի հրամանատար: Երիտասարդ սպան մասնակցում է Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելոռուսիայի ազատագրմանը:

Սովետա-ֆիննական պատերազմի ընթացքում, երբ կատաղի մարտեր էին մղվում Մաններհայմի խիստ ամրացված պաշտպանական գծի ճեղքման հա-

մար, կազմակերպվում են առանձին կամավորական գրոհային խմբեր։ Այդպիսի գրոհային խմբերից մեկի հրամանատար է նշանակվում կրտսեր լեյտենանտ Գ. Հայրապետյանը։

1940 թվականի փետրվարի 11-ին դիվիզիայի առաջընթաց հարձակումն ապահովելու նպատակով լեյտենանտ Հայրապետյանի գրոհային խմբին մարտական առաջադրանք է տրվում՝ գրավել այդ հատվածում գտնվող երկու դոտերը։ Այդ գրոհային խումբը բաղկացած էր 32 մարտիկից։ Առաջադրանքը բավականին բարդ էր և պատասխանատու։ Խմբի հրամանատար Հայրապետյանը հրամայում է մարտիկներին՝ նետել պայուսակները և պահեստային շինելները, վերցնել միայն նռնակներ, զենքեր, փամփուշտներ և մոտենալ ֆիննական խրամատներին։ Շուտով սովետական գրոհայինները հուժկու ուռայով հարձակման են անցնում։ Ֆինների մի մասը, կարծելով, թե սովետական զինվորներն արդեն մոտ են, խուճապի են մատնվում։ Մարտը տեղափոխվում է խրամատների ներսը։ Սովետական գրոհայիններին հաջողվում է գրավել թշնամու դոտերը և ընդլայնելով գրաված տարածությունը, առաջ շարժվել։ Խրամատային մարտի ժամանակ առանձնապես իրեն լավ է դրսևորում կրտսեր լեյտենանտ Հայրապետյանը, որն անվախ, նռնակների տարափ է տեղում խրամատներում կուտակված թշնամու վրա։ Նրան հաջողվում է շարքից հանել ավելի քան 20 զինվոր ու սպա։ Հրամանատարության մարտական առաջադրանքը կատարված էր, գրավված էին Մաններհայմի ամրության երկու կարևոր դոտեր, ոչնչացված էին ավելի քան 200 ֆիննական զինվոր ու սպա, վերցված էին շատ տեսակի արժեքավոր փաստաթղթեր, անհրաժեշտ սխեմաներ և զենք։

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության, 1940 թվականի ապրիլի 7-ի հրամանագրով, սպիտակ ֆինների դեմ մղվող պայքարում հանդես բերած անձնուրացության ու հերոսության համար կրտսեր լեյտենանտ Գուրգեն Միքայելի Հայրապետյանին շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում։

1941 թվականի հունիսի 22-ին, երբ հիտլերյան Գերմանիան հարձակվեց մեր Հայրենիքի վրա, Սովետական Միության հերոս Գուրգեն Հայրապետյանը Լենինգրադի Կիրովի անվան հետևակային ուսումնարանի այն հրամանատարներից էր, որ առաջինը ցանկություն հայտնեց մեկնել ռազմաճակատ։ Հայրենական պատերազմի ընթացքում նա սկզբում մասնակցեց Նարվա և Լուգա քաղաքների պաշտպանական մարտերին, այնուհետև տեղափոխվելով Կովկաս, նշանակվեց 8-րդ առանձին լեռնա-հրաձգային ստորաբաժանման հրամանատար։ Ավագ լեյտենանտ Գուրգեն Հայրապետյանն իր ալպինիստական ստորաբաժանման մարտական գործողություններով օժանդակում էր 20-րդ դիվիզիայի մերձծովյան խմբավորման և 40-րդ մոտո-հրաձգային բրիգադայի ստորաբաժանումների լեռնանցումների գործին։ Այստեղ խիզախ հրամանատարն ընդունվում է ՍՄԿԿ շարքերը։

1942 թվականի դեկտեմբերին Հայրապետյանը 236-րդ դիվիզիայում նշա-

նակվում է հրաձգային գումարտակի հրամանատար և մասնակցում Կուբանի ազատագրման համար մղվող մարտերին։ 1943 թվականի օգոստոսին 236-րդ դիվիզիան մեկնում է Միլլերովո՝ հանգստի և համալրման։ Այդ ժամանակ Հայրապետյանն ստանում է կապիտանի զինվորական աստիճան։ Միլլերովոյում Հայրապետյանը նշանակվում է 409-րդ հայկական դիվիզիայի 814-րդ գնդում գումարտակի հրամանատար։ Դիվիզիան նորից մեկնում է ռազմաճակատ և Ուկրաինական երկրորդ ռազմաճակատի զորքերի շարքերում մասնակցում Զնամենկա քաղաքի ազատագրմանը, ապա հարձակման անցնում Դնեպրոձերժինսկի ուղղությամբ և ընդհուպ մոտենում ուկրաինական մայր գետին՝ Դնեպրին։

Դնեպրի ձախ ափը, որը հարուստ էր տերևախիտ ծառերով՝ բնական քողարկում էր ստեղծում մարտական գործողությունների համար։ Կապիտան Հայրապետյանն այստեղ հասնելով՝ իսկույն հրավիրում է վաշտի հրամանատարներին և յուրաքանչյուրին բացատրում իր դիրքավորման վայրը և անելիքները։ Հազիվ էր խորհրդակցությունն ավարտվել, երբ գնդի հրամանատար Մալինինը իր մոտ է կանչում Հայրապետյանին, նրան նշանակում գրոհային խմբի հրամանատար և առաջադրանք է տալիս՝ հենակետ գրավել Դնեպրի աջ ափին։

Մառախիտ խորշերում Հայրապետյանը դասավորում է իր ավտոմատավորների, գնդացրորդների, ականանետների լաստերն ու նավակները և սպասում գետանցի ազդանշանին։ Նշանակված ժամին սկսվում է հրետանային ուժեղ գնդակոծությունը։ Թշնամին սկսում է պատասխան կրակ։ Վերջապես անցնում է երկար սպասումի ժամը։ Սովետական Միության հերոսը տալիս է գետանցի հրամանը։ Սովետական մարտիկներն արհամարհելով մահը, դժվարին գետանցը կատարում են արագությամբ և հաջողությամբ։ Հրետանու պաշտպանությամբ անցնելով Դնեպրի աջ ափը, Դնեպրոձերժինսկից դեպի հյուսիս, Հայրապետյանի գրոհայինները կատաղի մարտի են բռնվում հիտլերականների հետ։ Մեր ռազմիկներին հաջողվում է հետ շպրտել հակառակորդին, Դնեպրի աջ ափին ձեռք բերել հենակետ և այն ընդլայնել մինչև օժանդակ ուժերի հասնելը։

1944 թվականի հունվար ամսի առաջին օրերն էին. համառ ու կատաղի մարտեր էին մղվում մարզային կենտրոն Կիրովոգրադ քաղաքի համար։ Այստեղ 409-րդ հրաձգային դիվիզիային առաջադրանք է տրվում անցնել Կիրովոգրադի հարավային մասով, ապահովել դեպի քաղաքը շարժվող մեր զորամասերի առաջընթացը, հնարավորություն տալ մեր առաջապահ միավորումներին շրջապատել և ոչնչացնել Կիրովոգրադում կենտրոնացված թշնամու խմբավորումը։

409-րդ հայկական հրաձգային դիվիզիան պատվով է կատարում հրամանատարության կողմից տրված այդ առաջադրանքը։ 1944 թվականի հունվարի 8-ին մեր զորքերը ազատագրում են Կիրովոգրադը։ Կիրովոգրադի համար մըղ-

վող մարտերում առավել աչքի ընկնելու համար դիվիզիան արժանանում է «Կիրովոգրադյան» կոչմանը։ Այնուհետև դիվիզիան գետանցում է Հարավային Բուգ, Դնեստր գետերը և հետապնդելով նահանջող թշնամուն, անցնում է Հունգարիայի սահմանը և գետանցում Տիսան։ Այդ մարտերի ընթացքում Հայրապետյանը նույնպես հանդես է բերում հրամանատարական հմտություն և արիություն։

1944 թվականի հոկտեմբերին, Տիսա գետն անցնելուց հետո Հայրապետյանն ուղարկվում է Մոսկվա՝ «Վիստրել» դասընթացներում սովորելու։ Հայրենական պատերազմի հաղթական ավարտից հետո մայոր Հայրապետյանը, ավարտելով գնդի հրամանատարների այդ դասընթացները, նշանակվում է նախ՝ ավագ հրահանգիչ, ապա՝ գնդի հրամանատարի տեղակալ, իսկ 1951 թվականին տեղափոխվում է Անդրկովկասյան ռազմական օկրուգ։ 1948—1952 թվականներին նա հեռակա կարգով սովորում և ավարտում է Մոսկվայի Մ. Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիան՝ փոխ-գնդապետի կոչումով։

Սկսած 1955 թվականից Հայրապետյանն աշխատում է Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտում որպես դասախոս։ Գուրգեն Հայրապետյանի կուրծքը զարդարում են Լենինի շքանշանը, «Ոսկե աստղ» մեդալը, Կարմիր դրոշի, Կարմիր աստղի երկու շքանշանները և մի շարք մեդալներ։



# ԱՇՈՏ ՎԱՂԱՐՇԱԿԻ ՂԱԶԱՐՅԱՆ



## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում Հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել* Սովետական Միության հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

*75. Գվարդիայի կապիտան* Աշոտ Վաղարշակի Ղազարյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 24 մարտի 1945 թ.*







*Տանկային գումարտակի հրամանատար կապիտան Աշոտ Վաղարշակի Ղազարյանը Հայրենական մեծ պատերազմում մարտական սխրանքներով լի ուղի է անցել։*

*Աշոտը ծնվել է 1919 թվականին Թիֆլիսի նահանգի Ծալկայի շրջանի Ջիֆթքիլիսա գյուղում, գյուղացու ընտանիքում։ Վաղ հասակում նա զրկվել է ծնողներից։ Մանկությունն ու պատանեկությունն անց է կացրել հայրենի գյուղում և սովորել տեղական դպրոցում։ 1936 թվականին Աշոտը տեղափոխվում է Թբիլիսի և շարունակում ուսումը։ Այստեղ 1939 թվականին նա ընդունվում է լենինյան կոմերիտմիության շարքերը։*

*Պատանին դեռևս աշակերտական տարիներին երազում էր դառնալ զինվորական, ծառայել սովետական բանակում։ Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո 1939 թվականին նա մեկնում է սովետական բանակ և ընդունվում Լենինգրադի հետևակային գնդերից մեկի դպրոցը։ Այն ավարտելուց հետո, որպես գնդացրորդ նույն թվականի դեկտեմբերին մասնակցում է սովետա-ֆիննական պատերազմին։*

*Հրամանատարությունը խիզախ երիտասարդին առաջադրանք է տալիս գրավել մի իշխող բարձունք։ Բարձունքը գնդացրային շեշտակի կրակի տակ*

անելով՝ Ղազարյանն ստիպում է թշնամուն թողնել ամրացված դիրքերը։ Առաջադրանքն օրինակելիորեն կատարելու համար Ղազարյանը հրամանատարության կողմից արժանանում է շնորհակալության։

Սովետա-ֆիննական պատերազմի ավարտից հետո, Աշոտ Ղազարյանը 1940 թվականին տեղափոխվում է Մերձբալթիկա։

Ֆաշիստական զորքերի հարձակման առաջին հարվածներն իր վրա կրողներից էր նաև Շաուլյայում տեղավորված 186-րդ հրաձգային գունդը, որտեղ ծառայում էր Աշոտ Ղազարյանը։

Թշնամու մեծաքանակ ուժերը համառորեն ձգտում էին անցնել սահմանամերձ Բայուրա գետը և շրջապատել սովետական զորամասերին։ Ղազարյանը առաջադրանք է ստանում իր դասակի ուժերով կանխել թշնամու գետանցումը։ Հակառակորդի ավելի քան 200 հոգուց բաղկացած առաջապահ ջոկատը, հրետանային ուժեղ ռմբակոծությունից հետո, անցնում է հարձակման՝ ցանկանալով դուրս գալ գետի մյուս ափը։ Այն պահին, երբ թշնամու արկերը տեղում էին դասակի վրա, Ղազարյանը թշնամու առաջապահ ջոկատը ոչնչացնելու համար որոշեց գետի ափին՝ ճահիճների մեջ դարան սարքել։ Եվ երբ թշնամին այդ ուղղությամբ բավականին խորանում է, Ղազարյանի գնդացրային դասակը խաչաձև և ավերիչ կրակով կանխում է նրա առաջխաղացումը։ Այդ օրը հակառակորդը կորցնում է մոտ 400 զինվոր ու սպա։ Առաջադրանքը հաջողությամբ կատարելու համար Ղազարյանն արժանանում է հրամանատարության շնորհակալության։

Մեծ կորուստների գնով թշնամին շարունակում էր թափանցել սովետական տերիտորիան։ Նա ներխուժել էր Լենինգրադի մարզը։ Նոյեմբերին արդեն արյունահեղ մարտեր էին մղվում Պրոխով քաղաքի համար։ Քաղաքը հերոսաբար պաշտպանող ռազմիկների շարքերում իր դասակով ակտիվ մարտնչում էր նաև Աշոտ Ղազարյանը։ Առաջադրանքը կատարելիս նա վիրավորվում է։ Բուժվելուց հետո Ղազարյանը սովորելու է գործուղվում Վոլոգդայի մարզի Կաշուբա քաղաքի միամյա տանկային ուսումնարանը, 1942 թվականին նա ավարտում է ուսումնարանը, ստանում կրտսեր լեյտենանտի կոչում և նշանակվում 196-րդ տանկային բրիգադայում որպես դասակի հրամանատար։

Օգոստոսին Ռժև քաղաքի մոտ Կորովինո գյուղի շրջակայքում (Կալինինի մարզ) թեժ մարտեր էին մղվում։ Ղազարյանին առաջադրանք է տրվում հակառակորդին հետ շպրտել այդ գյուղից, որը թշնամու պաշտպանության ուժեղ հենակետն էր։ Դասակի տանկիստները երդվում են կռվել մինչև վերջին շունչը, մինչև արյան վերջին կաթիլը և կատարել առաջադրանքը։ Նրանք սրընթաց գրոհով առաջ են շարժվում, հանդիպում թշնամու հուժկու կրակի և ականապատ դաշտի։ Սակայն դա չի կասեցնում տանկիստների առաջխաղացումը։ Նրանք գրոհը շարունակում են և ճնշելով հակառակորդի դիմադրությունը, ազատագրում գյուղը։ Թշնամու գազազած ուժերը փորձում են ետ վերցնել կարևոր հենակետը։ Հակառակորդի մի զորախումբ՝ չորս տանկի

*ուղեկցությամբ, մի քանի անգամ հարձակում է գործում տանկային դասակի վրա, բայց բոլոր փորձերը անհաջողությամբ են ավարտվում։*

*Կորովինո գյուղի գրավման համար մղած մարտերում Ղազարյանն իր տանկային դասակով ոչնչացնում է թշնամու երկու տանկ, մեկ ինքնագնաց հրանոթ և ավելի քան 40 զինվոր ու սպա։ Այդ մարտերում ցուցաբերած խիզախության համար Ղազարյանը պարգևատրվում է Կարմիր դրոշի շքանշանով։ Շուտով նա ստանում է կապիտանի կոչում և նշանակվում է տանկային վաշտի հրամանատար։*

*1943 թվականի օգոստոսի 13-ին Աշոտ Ղազարյանի վաշտին առաջադրանք է տրվում՝ կտրել գետի Սպաս-Դեմենսկ տանող թշնամու ճանապարհը։ Տանկային վաշտը, հարմար դիրքեր գրավելով, կատաղի մարտերում ոչնչացնում է 300 ավտոմեքենա, խփում «վագր» տիպի 5 տանկ և ինքնագնաց հրանոթ և մյուս զորամասերի հետ միասին ազատագրում Սպաս-Դեմենսկ քաղաքը ու մի շարք բնակավայրեր։*

*Բարձր գնահատելով Ղազարյանի մարտական գործունեությունը այդ մարտերում, հրամանատարությունը նույն թվականի սեպտեմբերին նրան պարգևատրում է երկրորդ Կարմիր դրոշի շքանշանով։*

*Կիրով քաղաքի համար մղած մարտերում Աշոտ Ղազարյանը ծանր վիրավորվում է։ Առողջանալուց հետո նա մասնակցում է Խիսլավիչի և Մստիսլավ քաղաքների ազատագրմանը։*

*1943 թվականին Ա. Ղազարյանն ընդունվում է կոմունիստական պարտիայի շարքերը։ 1944 թվականի սկզբներին իր ստորաբաժանումով նա մասնակցում է Մոգիլևի ուղղությամբ մղվող մարտերին և հասնում է մինչև Պրոն գետը։*

*1945 թվականի սկզբներին Աշոտ Ղազարյանը առաջադրանք է ստանում տանկային իր գումարտակով մասնակցել Ժիլին քաղաքի գրավմանը, որը պաշտպանության չորս գծով խիստ ամրացված շրջան էր։ Ղազարյանի տանկային գումարտակի տանկիստները հաղթահարելով հակառակորդի համառ դիմադրությունը, ճեղքում են նրա պաշտպանության գիծը և սրընթաց գրոհով մասնակցում քաղաքի գրավմանը։ Տանկիստները հետապնդում են նահանջող թշնամուն և զարգացնելով մարտական գործողությունները, խորանում են նրա թիկունքում։ Հակառակորդի զորքերի մեջ առաջանում է իրարանցում։ Նախապես պատրաստված դիրքերում ամրանալու թշնամու բոլոր փորձերը ոչ մի հաջողություն չեն ունենում։*

*1945 թվականի հունվարի 17—23-ը սովետական տանկային միավորման կազմում գտնվող Ղազարյանի գումարտակը մարտերով անցնում է հարյուրավոր կիլոմետր ճանապարհ։ Նրա քաջարի տանկիստները ոչնչացնում են թշնամու 20 տանկ ու ինքնագնաց հրանոթ, տարբեր տրամաչափի 86 թնդանոթ, 41 ականանետ, 39 գնդացիր, 1400 փոխադրասայլ, 70 զրահատրանսպորտյոր, 215 մոտոցիկլ և մինչև 300 զինվոր ու սպա։ Գումարտակը գրավում է թշնամու տարբեր տեսակի 28 պահեստ, 300 ավտոմեքենա և այլն։*

*Անձնուրաց տանկիստները փրկում են ֆաշիստական ճամբարներում տառապող 660 սովետական ռազմագերիների։*

*Այդ մարտերում տանկային գումարտակը հմտորեն ղեկավարելու, կարևոր հաջողությունների հասնելու, անձնական հերոսության և քաջագործություն ցուցաբերելու համար ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1945 թվականի մարտի 24-ի հրամանագրով գվարդիայի կապիտան Աշոտ Վաղարշակի Ղազարյանը արժանանում է Սովետական Միության հերոսի կոչման։*

*Գվարդիայի փոխ-գնդապետ Աշոտ Ղազարյանը այժմ շարունակում է ծառայել սովետական բանակում։*



# ՂՈՒԿԱՍ ԿԱՐԱՊԵՏԻ ՄԱԴՈՅԱՆ





## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի սպետկազմին և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար,* շնորհել Սովետական Միության հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

*29. Ավագ լեյտենանտ* Ղուկաս Կարապետի Մադոյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 31 մարտի 1943 թ.*



Սովետական պաշտպանության հերոսներից մեկն է հայ ժողովրդի արժանավոր զավակ, փոխ-գնդապետ Ղուկաս Կարապետի Մադոյանը:

Ղուկաս Մադոյանը ծնվել է 1906 թվականին Կաղզվանի շրջանի Բերս գյուղում։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին զրկվելով ծնողներից, գաղթի ու զրկանքների ենթարկվելով, նա չարքաշ կյանք է վարում:

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո Մադոյանը կամավոր մտնում է կարմիր բանակի շարքերը և 11-րդ բանակի զորամասերի հետ միասին մասնակցում 1921 թվականի փետրվարին Վրաստանում մենշևիկների, իսկ մայիս-հուլիսին Հայաստանում (Զանգեզուր-Մեղրի) դաշնակների դեմ մղվող քաղաքացիական կռիվներին։

1925 թվականի հունվարին Ղուկասը ընդունվում է ՍՄԿԿ շարքերը։ Նրա առջև բացվում է կյանքի լայն ճանապարհ։

1940 թվականի վերջին նա արդեն վաշտի հրամանատար էր. սկզբում աշխատում էր Երևանում, 207-րդ լեռնա-հրաձգային գնդում, ապա Բիկովո քա-



# ՂՈՒԿԱՍ ԿԱՐԱՊԵՏԻ ՄԱԴՈՅԱՆ





## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

### Կարմիր բանակի պետկազմին և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել Սովետական Միության հերոսի կոչում, հանձնելով Լենինի շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ.*

*29. Ավագ լեյտենանտ Ղուկաս Կարապետի Մադոյանին:*

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 31 մարտի 1943 թ.:*



Փետրվարի 7-ին բանակի հրամանատարությունը Մադոյանին նոր առաջադրանք է տալիս՝ գումարտակի ուժերով գրավել Դոնի Ռոստովի երկաթուղային կայարանը և պաշտպանական բնագիծ բռնել նրա հյուսիսային մասում՝ մինչև բանակի հիմնական ուժերի հասնելը:

Դժվար էր առաջադրանքը, բայց ինչ գնով էլ լիներ, պետք է կատարվեր: Դա Հայրենիքի հրամանն էր: Ոգևորված բարձր վստահությամբ՝ ավագ լեյտենանտ Գ. Մադոյանը փետրվարի 7-ի լույս 8-ի գիշերը իր գումարտակով և օժանդակ ուժերով մոտենում է Դոնի ափին: Նա գումարտակի գլխին անցած՝ գետի թույլ սառույցների վրայով արագորեն մտնում է քաղաք և կատարում մարտական առաջադրանքը: Այդ օրը մյուս զորամասերը նույնպես թափանցելով քաղաք՝ հյուսիսային մասից կռվի էին բռնվել թշնամու հետ:

Փետրվարի 8-ի առավոտից հակառակորդը չորս տանկով և մոտ 200 ավտոմատավորներով ութ կատաղի գրոհներ է կատարում՝ քաղաք թափանցած Մադոյանի մարտիկներին ոչնչացնելու համար: Հաստատակամորեն ետ մղելով բոլոր գրոհները և մեծ կորուստներ պատճառելով հակառակորդին, մեր մարտիկները դուրս են գալիս Բուդյոննու և Էնգելսի անվան փողոցները ու հասնում քաղաքի կենտրոնը: Այստեղ կտրվում է Մադոյանի զորամասի և նրա հետ գործող 1-ին և 4-րդ գումարտակների կապը թիկունքի հետ, նրանք շրջապատվում են թշնամու կողմից: Մադոյանը ինքնուրույն վճռում է իր հրամանատարության տակ վերցնել ետ մնացած 1-ին և 4-րդ գումարտակների ղեկավարությունը, որոնց հրամանատարներն արդեն սպանված էին: Նա որոշում է երեք գումարտակներից կազմված իր ջոկատով դաշույնի նման խրվել հիտլերականների թիկունքը և ակտիվորեն նպաստել սովետական զորքերի կողմից քաղաքի ազատագրմանը:

Այս որոշումը ոգևորում է եղբայրական միասնությամբ միաձուլված 18 ազգությունների ռազմիկներից կազմված ջոկատին: Մարտիկները համերաշխ իրենց խիզախ հրամանատարի հետ՝ նրա ղեկավարությամբ գրավում են երկաթուղային կայարանը մերձակա շենքերով, ամրանում այնտեղ, կազմակերպում շրջանաձև պաշտպանություն և դիմում կենաց ու մահու կռվի:

Երկու օրվա մարտերի ընթացքում ջոկատը Ռոստովի կայարանում հակառակորդից խլում է ռազմամթերքով բեռնված յոթ էշելոն, մի քանի տասնյակ ավտոմեքենաներ, մոտոցիկլետներ և չորս թնդանոթ: Ոչնչացվում է ավտոմեքենաներով կայարանից դեպի օդանավակայան ուղևորվող հիտլերական օդաչուների մի մեծ խումբ, որից երեքը գերի են վերցվում:

Այսպես, վեց օր ու գիշեր թշնամու գերազանց ուժերով շրջապատված ջոկատը, առանց քնի ու հանգստի, նվազագույն սննդով, դիմադրում ու ետ է մղում հակառակորդի հետևակի, տանկերի ու հրետանու ավելի քան 32 կատաղի գրոհները: Գնալով ավելի էին թեժանում մարտերը: Հիտլերականները հուսահատ ճիգեր էին թափում՝ կայարանը ետ վերցնելու համար: Այդ նպատակով փետրվարի 10-ին նրանք տանկերի և ծանր հրանոթների աջակցու-

*թյամբ 23 անգամ գրոհի են դիմում մեր ջոկատի գրաված դիրքերի վրա։ Մյուս օրը լուսաբացին, շարունակելով գրոհները, օդային ուժեղ ռմբակոծությամբ գերմանացիները հրդեհում են կայարանի շրջապատի բոլոր շենքերը, որի հետևանքով Մաղոյանի ջոկատը հարկադրված է լինում այրվող քարածխի դեզերի վրայով փոխադրվել Լենինի անվան գործարանի ձուլման ցեխը և այնտեղից շարունակել կրակի տակ պահել կայարանի շենքն ու կայարանամերձ հրապարակը։ Առաջին օրինակը ցույց է տալիս Մաղոյանը։ Նա թռչելով իր վալինկաները, անցնում է այրվող քարածխի վրայով։ Քաջ հրամանատարին հետևում են նաև մարտիկները։*

*Ծանր օրեր է ապրում ջոկատը։ Մաղոյանն անձամբ ղեկավարելով մարտերը՝ շարունակ շրջագայում է դիրքերը, ոգևորում մարտիկներին, համաձայնեցնում ստորաբաժանումների գործողությունները։*

*Պաշտպանության վեց օրվա ընթացքում ամբողջ քաղաքը բոցերի մեջ էր։ Թշնամու ինքնաթիռները հրդեհում են նաև կայարանը, շոգեկառքերի վերանորոգման գործարանը։ Կրակե օղակը հետզհետե սեղմվում է Մաղոյանի մարտիկների շուրջը, որոնք ռազմամթերքի վերջին պաշարներն էին գործածում։ Բայց նրանց կամքը անհողդողդ էր, ոչինչ չընկճեց նրանց։ Վոլգոգրադի պաշտպանների օրինակով տոկունությամբ կռվելով մինչև փետրվարի 14-ը, ջոկատը նորից ետ է գրավում կայարանը և կայարանամերձ հրապարակը։ Մարտերում առանձնապես աչքի են ընկնում բալթեկ Շունդենկոն, կրտսեր լեյտենանտ Ազիլխանը, կրտսեր սերժանտ Կաչկինը, մարտիկներ՝ Միրոնովը, Շալգան, ռոստովցի Կովալչուկը և շատ ուրիշներ։ Նրանք իրենց գրոհային փոքրիկ խմբերով, ամեն օր թշնամու թիկունքը թափանցելով, ոչնչացնում էին հիտլերականներին, զենք ու ռազմամթերք էին խլում նրանցից՝ ջոկատի մարտերը շարունակելու համար։*

*Փետրվարի 14-ի գիշերվա ժամը 2-ին Հարավային ռազմաճակատի մեր զորքերը, հուժկու հարվածով ընկճելով հիտլերականների դիմադրությունը, ազատագրում են Ռոստով քաղաքը։ Այդ գործում մեծ էր Մաղոյանի և նրա ջոկատի ավանդը։ Մաղոյանին գրկախառնությամբ ու համբույրներով են դիմավորում ռազմաճակատի հրամանատարները։*

*Մարտական առաջադրանքը փայլուն կերպով կատարելու, մարտերում հանդես բերած անձնական արիության ու խիզախությունների համար ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1943 թվականի մարտի 31-ին ավագ լեյտենանտ Գուկաս Մաղոյանին շնորհում է Սովետական Միության հերոսի կոչում։ Ռազմաճակատի քաղվարչությունը բաց է թողնում հատուկ ագիտացիոն թերթիկ, որի մեջ նկարագրված է Գուկաս Մաղոյանի և նրա զորամասի կողմից Ռոստովի կայարանը պաշտպանելու մարտերում հանդես բերված տոկունությունն ու սխրագործությունները։*

*1943 թվականի օգոստոսից մինչև 1944 թվականի մայիս մայոր Մադոյանը սովորում է Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայում, որն ավարտելուց հետո փոխ-գնդապետի աստիճանով նշանակվում է Ուկրաինական առաջին ռազմաճակատի 359-րդ Յարցևյան հրաձգային դիվիզիայում գնդերից մեկի հրամանատար։ Նա Դեմբիցա քաղաքի մատույցներում նոր քաջագործություններ է կատարում՝ հարձակողական մարտերի առաջնորդելով իր գնդին։ Այստեղ Մադոյանը երրորդ անգամ ծանր վիրավորվում է և զրկվում ձախ ոտքից, որի պատճառով 1945 թվականի հոկտեմբերին ազատվում է բանակի շարքերից՝ պսակված մարտական փառքով։ Պատերազմի վերջում Հայրենիքը նրա կուրծքն արդեն զարդարել էր Լենինի, Կարմիր դրոշի, Հայրենական պատերազմի երկու շքանշաններով և «Ոսկե աստղ» ու մի շարք այլ մեդալներով։ Մադոյանը պարգևատրվեց նաև ԱՄՆ-ի այն ժամանակի պրեզիդենտ Ֆ. Ռուզվելտի կողմից՝ ամերիկյան «Մարտական ծառայության» մեդալով։*

*Այժմ Սովետական Միության Հերոս Ղուկաս Մադոյանն ապրում է Երևանում. ակտիվորեն մասնակցում է ռեսպուբլիկայի հասարակական-քաղաքական աշխատանքներին։*



# ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԻԳՈՐԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ



## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել* Սովետական Միության հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկի աստղ» *մեդալ.*

*Լեյտենանտ* Ալեքսանդր Սիգորի Մնացականյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 24 մարտի 1945 թ.*





Ալեքսանդր Սիմոնի Մնացականյանը ծնվել է 1921 թ. փետրվարի 23-ին Օրջոնիկիձե քաղաքում։

Երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, նա Թբիլիսիի Անդրկովկասյան երկաթուղային տրանսպորտի ինժեներական ինստիտուտի առաջին կուրսի ուսանող էր։ 1941 թվականի օգոստոսին բանակ զորակոչվելով, հրամանատարությունը նրան ուղարկում է Կամիշինի զրահատանկային ուսումնարանը սովորելու։

1942 թվականի օգոստոսին Ա. Մնացականյանը, ավարտելով տանկային ուսումնարանը, ստանում է լեյտենանտի կոչում։ Մեկնելով Վոլգոգրադի ռազմաճակատ, 3-րդ տանկային բրիգադայի կազմում նա մասնակցել է Վոլգոգրադի մարտերին։ 1942 թվականի օգոստոսից մինչև 1943 թվականի հունվարը տանկային բրիգադայի հիման զորքերը Կոտլուբան կայարանի մոտ գտնվող սովխոզում էր, ուր նրանք ամրացել էին։ Այդտեղից տանկային միավորումները, այդ թվում տանկիստ Մնացականյանը, անցնում են մարտական գործողությունների։ Շուտով Մնացականյանը այրվածք է ստանում։ Նրան տեղափոխում են հոսպիտալ։ Հոսպիտալում նրա դեմքի վրա կատարում են պլաստիկ օպերացիա, և նա նորից շարք է վերադառնում։

1943 թվականի ապրիլին Ա. Մնացականյանը մեկնում է Նիժնի Տագիլի զրահատանկային զորամաս։ Այնտեղ նա ստանում է նոր տանկ և մեկնում Լենինգրադի ռազմաճակատ։ Սինյավինյան բարձունքներում հետախուզության գնալու և մարտական առաջադրանքը կատարելու համար, նրան պարգևատրում են «Խիզախության համար» մեդալով։ 1944 թվականի հունվարին սկսվում է թշնամու պաշտպանական գծերի ճեղքումը Պուլկովյան բարձունքներում։ Ա. Մնացականյանի տանկային անձնակազմը հարձակվող զորամասերի շարքերում էր գտնվում։ Նրանք կոտրելով թշնամու դիմադրությունը և անցնելով Ռոպշայի շրջանը, միանում են երկրորդ հարվածային բանակի զորքերին, որոնք հարձակվում էին Օրանիենբաումի շրջանում՝ նպատակ ունենալով Լենինգրադի մոտ լրիվ շրջապատելու թշնամու խմբավորումները։

1944 թվականի հունվարի 19-ի գիշերը, № 4 ճամբարի շրջանում, ճահիճներն անցնելու համար, Ա. Մնացականյանին նշանակում են հետախուզության ջոկատի շարժական խմբի հրամանատար։ Հարձակումը դանդաղում էր, որովհետև հետևակը չէր կարողանում արագ կերպով դուրս գալ ճահիճներից և հասնել ջրային սահմանին։ Առաջխաղացումը արագացնելու համար որոշում են գործողությունները սկսել գիշերը, տանկային խմբով ճեղքել թշնամու ամրությունները, և այդպիսով առաջ շարժվել, քանի որ խճուղին փակված էր, իսկ շրջակայքը ականապատված ճահճուտներ էին։ Ծանր վիճակ էր ստեղծվել։ Անհրաժեշտ էր սեղմել օղակը և թշնամուն չթողնել դուրս գալու շրջապատումից։ Ա. Մնացականյանը, միացնելով տանկերի լույսերը, համարձակ առաջ է շարժվում։ Գերմանացիները կարծելով, որ իրենց տանկերն են մոտենում, կրակը դադարեցնում են։ Սովետական տանկերը մտնում են բնակավայրը, ուր տեղավորված էր թշնամու շտաբը։ Նրանք շեշտակի կրակով խուճապի մատնելով թշնամու զորամասին, ոչնչացնում են նրա տեխնիկան և կենդանի ուժը։

Ա. Մնացականյանի տանկային անձնակազմը, մյուս ստորաբաժանումների հետ ոչնչացնելով թշնամուն, առաջ է շարժվում։

Ալեքսանդր Մնացականյանի պարգևաթերթում գրված է, որ 1944 թվականի հունվարի 17—25-ը (Լենինգրադի ռազմաճակատում) իր մարտական գործողության ճանապարհին Կրասնոյե սելոյից մինչև Կիպեն հենակետը և Վոյսկովիցի երկաթուղային կայարանը լեյտենանտ Մնացականյանը թշնամու թիկունքում, ինչպես նաև ճակատում անդադար մարտերի է բռնվել։ Նա հետախուզում է թշնամու պաշտպանության դիրքերը։ Տելեզի հենակետի մատույցներում թշնամին ցույց է տալիս կրակային ուժեղ դիմադրություն։ Նա, անցնելով հակատանկային շրջանը և ճնշելով թշնամու չորս հրանոթների կրակը, մյուս ստորաբաժանումների հետ մտնում է գյուղ։ Թշնամին գյուղում պատրաստել էր ծանր բեռներով լցված ավտոմեքենաների շարասյուն։ Լռեցնելով վեց հրանոթները՝ Մնացականյանը վնասում է 10 ավտոմեքենա, 8 ծանրաքարշ և այլ բազմաթիվ փոխադրական միջոցներ։ Հերոս տանկիստը միաժամանակ ցրում է թշնամու շտաբը և ոչնչացնում մի քանի տասնյակ գերմանացի։ Ծախսե-

յով իր ամբողջ զինամթերքը, նա ոչնչացնում է թշնամու ևս երկու կրակային կետ։

Մարտերով ձգտելով առաջ՝ Մնացականյանի դասակը մյուս ստորաբաժանումների հետ ապահովում է տանկերի անցումը դեպի Ռուսկո-Վիսոցկոյե գյուղը, և մասնակցում Կիպեն հենակետի գրավմանը։

Լենինգրադի ռազմաճակատում, Ռեպուզի ամրացված կետի մատույցներում թշնամին հրետանային կրակով փակել էր տանկային շարասյան ճանապարհը։ Մնացականյանը արագ կողմնորոշվելով՝ իր դասակով դուրս է գալիս թշնամու թիկունքը և ջախջախում թշնամու հրետանային կետը։ Դրանով հնարավորություն է ստեղծում տանկային շարասյան առաջխաղացմանը։ Մնացականյանի դասակը մյուս ստորաբաժանումների հետ առաջինը շարժվելով դեպի Իժորա գետը, ամրանում է ջրափին և պաշտպանում գրաված դիրքերը մինչև հիմնական ուժերի ժամանումը։ Թշնամին ուժեր կուտակելով՝ անցնում է հակահարձակման։ Մեր զորքերը հետ են մղում թշնամուն, այդ մարտերում ոչնչացնում երեք հակատանկային հրանոթ և մոտ քառասուն զինվոր։

Չերնովո հենակետում մղված մարտերում Ա. Մնացականյանի տանկային անձնակազմը հարևան ստորաբաժանումների օգնությամբ թափանցում է թշնամու դիրքերը և խուճապի մատնում։ Մարտական այդ առաջադրանքի կատարմամբ ապահովվում է նաև Պետլինո և Չերնովո գյուղերի գրավումը։ Այդ ընթացքում թշնամու թիկունքում մարտերով կատարած հետախուզության ընթացքում Ա. Մնացականյանի տանկային անձնակազմը ոչնչացնում է տարբեր տրամաչափի 10 հրանոթ, 10 ավտոմեքենա, 8 քարշիչ, 3 շտաբային սայլ, մոտ 15 բեռնատար ավտոմեքենա, 3 գնդացրային դզոտ, թշնամու զորամասային շտաբը և մի քանի հարյուր գերմանական զինվոր ու սպա։

Լենինգրադի ազատագրման համար մղած մարտերում թշնամու պաշտպանական գծերը ճեղքելու և այդ մարտերում արիություն և հերոսություն ցուցաբերելու համար, ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1945 թվականի մարտի 24-ի հրամանագրով ավագ լեյտենանտ Ալեքսանդր Մնացականյանին շնորհում է Սովետական Միության հերոսի կոչում։

Հայրենիքի բարձր պարգևը կրկնապատկեց Մնացականյանի եռանդը։

Մի անգամ գիշերը Ա. Մնացականյանի տանկային անձնակազմի դեմ-առդեմ դուրս են գալիս հինգ «վագր» տիպի տանկեր։ Ա. Մնացականյանը առանց շփոթվելու, դիպուկ կրակով թշնամու տանկերից մեկը հրկիզում է և անձնակազմը գերի վերցնում։ Հակառակորդի մեկ ուրիշ տանկ հարձակվում է ուղիղ Մնացականյանի տանկի վրա՝ խոյահարելու համար, բայց վրիպում է։ Կապիտանը մոտենալով թշնամուն՝ իր տանկի աշտարակի անցքից նրա վրա նետում է մի քանի նռնակ՝ շարքից հանում այն։ Հակառակորդի խափանված տանկի անձնակազմը գերի է հանձնվում, որի մեջ լինում է նաև թըշնամու ջախջախված հետևակային գնդի շտաբի պետը։ Սա մի օրինակ է կա-

պիտան Մնացականյանի կատարած հերոսական սխրագործություններից, որով լի է երիտասարդ տանկիստ հրամանատարի մարտական կենսագրությունը։

Ռազմաճակատի զորքերի թվում Ա. Մնացականյանի տանկային անձնակազմը 1944 թ. մասնակցում է Պսկովի ազատագրման համար մղվող համառ կռիվներին։ Ա. Մնացականյանի ստորաբաժանումը այդ մարտերում կորցնում է իր ունեցած տեխնիկայի մեծ մասը։ Պսկովի վրա գրոհելիս վաշտը ղեկավարում էր կապիտան Գորոդինը։ Նա կռվի լարված մոմենտին ծանր վիրավորվում է ու շարքից դուրս գալիս։ Հրամանատարությունը իր վրա է վերցնում Ա. Մնացականյանը։ Վիրավորվում է նաև մյուս տանկի հրամանատարը, Մնացականյանը մնում է մենակ՝ իր խափանված տանկով։ Առաջ շարժվելը դառնում է անհնար։ Մարտից դուրս գալու հարցումին վերադաս հրամանատար մայոր Գնեդինի կողմից ստանում է բացասական պատասխան։ Նրանք պաշտպանվում են խփված տանկերի մեջ փակված։ Մեր մյուս գրոհող ստորաբաժանումները անցնելով ճահիճները, ետ են շպրտում թշնամուն և փրկում Մնացականյանի տանկային անձնակազմին։

1944 թվականի ապրիլի վերջերին ռազմաճակատի զորքերը մտնում են Կարելական պարանոցը և ջախջախում թշնամու զորքերին։ Այդ մարտերից հետո, 1944 թվականի մայիսի 15-ին 220-րդ տանկային կարմրադրոշ Գատչինյան բրիգադայի հրամանատարությունը վաշտի հրամանատար Ա. Մնացականյանին ուղարկում է սովորելու գրահատանկային զորքերի ռազմական ակադեմիա։

Ավարտելով ակադեմիան նա ծառայության է նշանակվում նախ Օրջոնիկիձեում, ապա Երևան՝ Թամանյան դիվիզիա։ Այժմ փոխ-գնդապետ Ա. Մնացականյանը շարունակում է իր զինվորական ծառայությունը Մոսկվայում՝ սովետական բանակի գլխավոր շտաբում։



# ԿՈՍՏԱՆԴԻՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՆԱԶԱՐՈՎ



## ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի [illegible] սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար,* շնորհել Սովետական Միության հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

25. *Ավագ լեյտենանտ* Կոստանդին Ալեքսանդրի Նազարովին:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 21 փետրվարի 1945 թ.:*





Հյուսիսային Կովկասի Կիսլովոդսկ քաղաքում 1923 թվականի օգոստոսի 17-ին հին բոլշևիկ Ալեքսանդր Նազարովի ընտանիքում ծնվեց երրորդ զավակը: Դա ապագա Սովետական Միության Հերոս, հրետանու փոխ-գնդապետ Կոստանդին Նազարովն էր: Կոստանդինը երկու տարեկան էր, երբ նրանց ընտանիքը բնակություն հաստատեց Բաքվում, ուր անցան նրա մանկության ու պատանեկության տարիները:

Դպրոցում սովորելու տարիներին նա մեծ սիրով ընթերցում էր գեղարվեստական գրքեր և ամեն կերպ ցանկանում նմանվել հայրենասեր հերոսներին: 1938 թվականին Կոստանդինն ընդունվում է լենինյան կոմերիտմիության շարքերը և ակտիվ մասնակցում կոմերիտական և սպորտային աշխատանքներին: 1941 թվականի հունիսին նա ընդունվում է Թբիլիսիի լեռնա-հրետանային ուսումնարանը: Սովորելու ընթացքում Կոստանդինը ոչ մի ջանք չի խնայում ռազմական գործը լավ ուսումնասիրելու համար: 1941 թվականի դեկտեմբերի վերջին Նազարովն ավարտում է հրետանային ուսումնարանը: Նրա ավարտական բնութագրում ուսումնարանի ղեկավարությունը գրել է. «Գործնական է, ընկերների շրջանում վայելում է մեծ հեղինակություն: Առաջադրված խնդիրները կատարում է ճիշտ և արագ, մեծ կամքի տեր է, եռանդուն,

վճռական և նախաձեռնող, պահանջկոտ, կարգապահ։ Անցած ուղին յուրացնում է շատ լավ, աշխատասեր է և պարտաճանաչ»։

1942 թվականի հունվարին 277-րդ հրաձգային դիվիզիայի 846-րդ հրետանային գնդի կազմում ռազմաճակատ մեկնեց նորավարտ լեյտենանտ Նազարովը։ Նա առաջին անգամ մարտի մեջ է մտնում Խարկովի տակ։ Այնուհետև մասնակցում է Օսկոլ, Կուպյանսկ քաղաքների պաշտպանությանը։

1942 թվականի հունիսի 10-ին ուժեղ հրետանային-ականանետային կրակից հետո թշնամին Օսկոլ քաղաքի ուղղությամբ անցնում է հարձակման։ 277-րդ հրաձգային դիվիզիայի հետևակային ստորաբաժանումները հետ են նահանջում, իսկ հրետանային ստորաբաժանումներից մի քանիսը շարունակում են կրակ տեղալ առաջխաղացող թշնամու մարտակարգերի վրա։ Հանկարծ գերմանական մոտ 200 ավտոմատավորներ անցնում են «հովհարանական» գրոհի։ Սովետական հրետանավորները հիտլերականներին հրակոծում էին միայն այն ժամանակ, երբ նրանք գտնվում էին 100—150 մետր հեռավորության վրա։ Հրետանավորներին հաջողվում է շարքից հանել նրանց կեսին, իսկ մյուս կեսը խուճապի մատնվելով՝ դիմում է փախուստի։ Հիտլերականներին օգնության է գալիս ավիացիան։ Սովետական հրետանավորները ծանր մարտերով հետ են քաշվում մինչև Կուպյանսկ քաղաքը, որտեղ լեյտենանտ Նազարովը վիրավորվում է երկու անգամ, բայց շարքից դուրս չի գալիս։ Փոխարինելով մարտկոցի զոհված հրամանատարին, նա երեք օր անընդհատ ղեկավարում էր մարտը։ Չորրորդ օրը միայն գնդի հրամանատարի հրամանով նա հարկադրված թողնում է մարտադաշտը և մեկնում հոսպիտալ։

Ապաքինվելուց հետո լեյտենանտ Նազարովը նորից մեկնում է ռազմաճակատ և այս անգամ մասնակցում Վոլգոգրադի հերոսական պաշտպանությանը։

1943 թվականի հունվարի վերջին օրերն էին։ Թշնամին զենիթային և խոշոր տրամաչափի հրանոթներից կրակ էր տեղում մեր առաջխաղացող հետևակի վրա։ Գնդի հետախուզության պետ Նազարովը հրաման է ստանում՝ գիշերը հայտնաբերել գերմանացիների կրակակետերի դասավորությունը։ Լեյտենանտ Նազարովն իր հետ վերցնելով մեկ հետախույզ և մեկ ռադիստ ռադիոկայանով, սպիտակ վերնաշապիկներով քողարկված, անցնում է գերմանացիների դասավորության գոտին։ Հայտնաբերելով կրակակետերը, ռադիոյով շտապ հայտնում են հրետանային մարտկոցի պետին։ Սովետական հրետանին ջարդում է ողջ գիշերը, իսկ առավոտյան մեր հետևակն անցնում է հարձակման։ Մարտական այս առաջադրանքի կատարման համար Նազարովը և նրա երկու մարտիկները պարգևատրվում են «Խիզախության համար» մեդալով։

Այնուհետև Կոստանդին Նազարովը մասնակցում է Բելոռուսական մի շարք քաղաքների և բնակավայրերի ազատագրման մարտերին։ 1943 թվականի աշնանը մեր հետևակային զորամասերը Սոժ գետի արևմտյան ափին գրավել էին 500 մետր երկարությամբ, 300 մետր խորությամբ հենակետ։ Հիտլերականները փորձում էին կատաղի գրոհներով նրանց շպրտել գետը։ Լեյտենանտ

*Նազարովը, ավագ լեյտենանտ Բոնդարը, մեկ հետախույզ և երկու կապավորներ իրենց պատրաստած նավակով գիշերով գետանցում են Սոժը, միանում հետևակայիններին և ապահովում հետախուզական կապը մեր հրետանու հետ։ Մեր հրետանավորները մի քանի օր շարունակ գետի մյուս կողմից կրակ են տեղում թշնամու դիրքերի վրա. հետևակայիններն աստիճանաբար ընդարձակում էին գրաված հենակետը, ստանալով նոր համալրումներ՝ անցնում են հարձակման և ետ շպրտում հակառակորդին։ Խնդրի հաջող կատարման համար լեյտենանտ Նազարովը պարգևատրվում է Կարմիր աստղ շքանշանով և ստանում ավագ լեյտենանտի կոչում։*

*Կոստանդին Նազարովն այնուհետև գտնվում էր Արևմտյան Ուկրաինայի և Լեհաստանի տերիտորիան ազատագրողների առաջին շարքերում։ Մենդլիժեց քաղաքը գերմանացիները վեր էին ածել դիմադրության ուժեղ կետի։ Ավագ լեյտենանտ Նազարովը հրաման է ստանում հրետանային ուղիղ նշանառությամբ ոչնչացնել թշնամու կրակակետերը և նա հաջողությամբ իրականացնում է այդ մարտական առաջադրանքը։ Մենդլիժեց քաղաքի համար մղած մարտերում ցուցաբերած քաջագործության համար ավագ լեյտենանտ Նազարովը պարգևատրվում է Հայրենական պատերազմի Երկրորդ աստիճանի շքանշանով։*

*Բազմաթիվ են Նազարովի կատարած սխրագործությունները, բայց հերոս հրետանավորը հատկապես աչքի է ընկնում Վիսլայի Նարև վտակն անցնելիս և նրա արևմտյան ափին հենակետ գրավելիս։ Դա 1944 թվականի հոկտեմբերի 5—7-ը տեղի ունեցած մարտերի ժամանակ էր։*

*Հակառակորդը Մուրովանկա գյուղի ուղղությամբ անցել էր հակագրոհի։ Նրա հետևակայիններին օժանդակում էին տանկերը։ Ավագ լեյտենանտ Նազարովի մարտկոցը կիսաշրջապատված էր։ Մարտկոցի հրետանավորները իրենց հրամանատարի գլխավորությամբ կռվում էին բացառիկ արիությամբ և խիզախությամբ։ Սովետական հրետանավորներին հաջողվում է երեք օր շարունակ իրենց ձեռքում պահել գրաված բնագծերը։ Ավագ լեյտենանտ Կոստանդին Նազարովի հրետանավորները անընդհատ կրկնում էին իրենց հրամանատարի խոսքերը. «Կմեռնենք, բայց չենք նահանջի»։ Վերջում հրետանավորները հարկադրված են լինում անցնելու անհավասար նռնակային մարտի։ Հակառակորդի հակագրոհը ետ է շպրտվում։ Երեքօրյա մարտերի ընթացքում ավագ լեյտենանտ Նազարովի մարտկոցի հրետանավորները հրետանագնդացրային, ավտոմատային կրակով և նռնակներով ոչնչացնում են հակառակորդի հինգ տանկ և մոտ 300 զինվոր ու սպա։ Այդ մարտերում ցուցաբերած հերոսության ու խիզախության համար ՍՍՌՄ Գերագույն սովետի Նախագահության հրամանագրով Նազարովը արժանանում է Սովետական Միության հերոսի կոչման։*

*Նազարովը, Բելոռուսական առաջին ռազմաճակատի զորքերի շարքերում, իր հրետանավորներով մասնակցում է Լեհաստանի ազատագրմանը և Բեռլինի*

ճակատամարտին։ Այդ ժամանակ կապիտան Նազարովը գնդի շտաբի պետի առաջին տեղակալն էր։

Հայրենական պատերազմի հաղթական ավարտից հետո, կապիտան Կոստանդին Նազարովը շարունակում է ծառայել սովետական բանակի շարքերում։ 1952 թվականին նա ավարտում է Մոսկվայի Ֆ. Է. Ձերժինսկու անվան Հրետանային ակադեմիայի հրամանատարական ֆակուլտետը՝ մայորի կոչումով, իսկ երկու տարի անց ստանում է փոխ-գնդապետի կոչում։

Ակադեմիան ավարտելուց հետո Նազարովը ծառայում է Մոսկվայի ռազմական օկրուգում։

Փոխ-գնդապետ, Սովետական Միության Հերոս Կոստանդին Ալեքսանդրի Նազարովի կուրծքը զարդարում են Լենինի շքանշանը, «Ոսկե աստղ» մեդալը, Հայրենական պատերազմի առաջին աստիճանի երկու, Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի, Կարմիր աստղի երկու շքանշանները և մի շարք մեդալներ։



# ՍՈՒՐԵՆ ԳՐԻԳՈՐԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ





## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել Սովետական Միության հերոսի կոչում, հանձնելով Լենինի շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ.*

*5. Գվարդիայի ավագ լեյտենանտ Սուրեն Գրիգորի Պետրոսյանին:*

ՍՍՀՄ Գերագույն սովետի Նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՀՄ Գերագույն սովետի Նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 24 ապրիլի 1944 թ.:*







Պետրոսյանը հայ ժողովրդի անվախ, հավատարիմ զավակն է, քաջ է մարտերում։ Նա միշտ պատրաստ է անձնական օրինակով մարտիկներին հերոսական սխրագործությունների տանել իր հետևից,— գրել է 5-րդ գվարդիական օդա-դեսանտային բրիգադայի հրամանատարությունը Վոլգոգրադի հերոսական ճակատամարտի և Դնեպրի գետանցման կռիվների ակտիվ մասնակից, գվարդիայի կապիտան Սուրեն Պետրոսյանի մասին։

Սուրեն Գրիգորի Պետրոսյանը ծնվել է 1916 թվականին Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտի շրջանի Ռև գյուղում, աշխատավոր գյուղացու ընտանիքում։ Նա ավարտել է հարևան Բադարա գյուղի միջնակարգ դպրոցը։ 1939 թվականին Սուրենը մեկնում է կարմիր բանակ։ Դեռ չէր լրացել նրա ծառայության ժամկետը, երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը։ Հենց առաջին օրերին նա մասնակցեց կռիվներին Կամենեց-Պոդոլսկի և այլ շրջաններում։

1942 թվականին հաջողությամբ ավարտելով օդային դեսանտի ռազմական դպրոցը՝ լեյտենանտի կոչումով, Ս. Պետրոսյանը վերադարձավ ռազմաճակատ և նշանակվեց գվարդիական վաշտի հրամանատար։

Նույն թվականի աշնանը կատաղի կռիվներ էին գնում Վոլգայի ափին, լեգենդար Վոլգոգրադ քաղաքի համար։ Թշնամին, կանգ չառնելով ոչնչի առաջ, ձգտում էր, ինչ գնով էլ լինի, գրավել այն։

...Պետրոսյանի ղեկավարած վաշտը, № գնդի մյուս ստորաբաժանումների հետ միասին, առաջադրանք ստացավ ռազմաճակատի հատվածներից մեկում անցնել Վոլգայի աջ ափը և հետախուզել մեր զորքերի գետանցման համար։ Գիշերը իր խմբով Պետրոսյանը հայտնվում է թշնամու խրամատների առաջ և կռվի բռնվում։ Այդ ժամանակ մեր զորամասերն անցնում են Վոլգայի աջ ափը և այնտեղից թշնամուն ետ շպրտում 15 կիլոմետր։ Մարտում Սուրենը ծանր վիրավորվում է։ Հրամանատարության առաջադրանքները օրինակելիորեն կատարելու համար նա պարգևատրվում է Կարմիր դրոշի շքանշանով։ Վոլգոգրադի մարտերում աչքի ընկած կոմերիտական Սուրեն Պետրոսյանն այդտեղ էլ ընդունվում է Սովետական Միության կոմունիստական պարտիայի շարքերը։

Այդ մարտերում Պետրոսյանն իրեն ցույց է տալիս որպես հմուտ հրամանատար և քաջ կռվող։ Նրա հրամանատարական հմտությունը և մարտական ընդունակությունները հատկապես դրսևորվում են Դնեպրի անցման համար մղած կռիվներում։ Այդ մեծ ջրային արգելքը հաղթահարելու համար 1943 թվականի սեպտեմբեր-նոյեմբերին կարմիր բանակը հերոսական մարտեր ծավալեց, որոնք ավարտվեցին փայլուն հաղթանակով։ Այդ ժամանակ ավագ լեյտենանտ Սուրեն Պետրոսյանը ղեկավարում էր 5-րդ գվարդիական օդա-դեսանտային բրիգադի 3-րդ գումարտակը, որը բրիգադի մյուս գումարտակների հետ միասին դեսանտ իջավ Դնեպրի ափին՝ Չերկասի քաղաքի շրջանում։ Նրա հիմնական խնդիրն էր՝ թիկունքից, պարտիզանների համագործակցությամբ, հարվածել թշնամուն և հեշտացնել Դնեպրի անցումը մեր զորամասերի համար։

1943 թվականի սեպտեմբերի 24—28-ը Պետրոսյանի հրամանատարությամբ մի խումբ դեսանտայիններ ոչնչացնում են հինգ ավտոմեքենա՝ թշնամու հետևակով և երեք գնդացրային հաշվարկ։ Հոկտեմբերի 3-ին Պասակ գյուղում նրա մարտիկները մասնակցում են հակառակորդի գումարտակի շտաբի ջախջախման գործողությանը։ Հաջորդ օրը Պետրոսյանի դեսանտայինները ավելի քան հինգ ժամ կռիվ մղելով, ոչնչացնում են 90 հիտլերական և գրավում մեծ քանակությամբ ռազմավար։ Այդ մարտում նրա խումբը շրջապատվում է թշնամու կողմից։ Իրենց հրամանատարի հմուտ ղեկավարության և ճարպկության շնորհիվ մարտիկները հաջողությամբ ճեղքում են շրջապատման օղակը։

Հոկտեմբերի 24-ին Չերկասիի անտառում դեսանտայինները մասնակցում են թշնամու վեց գրոհները ետ մղելու գործողություններին, որի ժամանակ Պետրոսյանն անձամբ ոչնչացնում է 10 հիտլերական։

Փորձված դեսանտային Սուրեն Պետրոսյանի հրամանատարությամբ դա-

մարտակի վաշտերից մեկը նոյեմբերի 13-ին մասնակցում է Սվիդովոկ գյուղի շրջանում հակառակորդի ուժեղ պաշտպանության ճեղքման գործողություններին և գրավում Նիկոլաևկա ամրացված գյուղը։ Գյուղի գրավումը իր վրա է բևեռում թշնամու ուշադրությունը, որն այստեղ է տեղափոխում իր ուժերի մի մասը. դա մեր հիմնական զորամասերին հնարավորություն է տալիս առանց կորստի, ավելյալ հատվածում անցնելու Դնեպրի աջ ափը։ Այդ մարտերում վաշտը ոչնչացնում է մոտ 80 հիտլերական, հինգ ավտոմեքենա և գրավում պարենամթերքի երկու պահեստ։

Դնեպրի անցման համար մղած ճակատամարտի ամբողջ ընթացքում, հայտնվելով մեկ այստեղ, մեկ այնտեղ, Պետրոսյանի գվարդիայինները թըշնամու թիկունքում քայքայում էին նրա կոմունիկացիաները, շեղում հակառակորդի ուշադրությունը և օգնում սովետական զորամասերին՝ անցնելու Դնեպրը։

Այդ մարտերում ցուցաբերած քաջության ու խիզախության համար հրամանատարությունը գումարտակի հրամանատար ավագ լեյտենանտ Սուրեն Պետրոսյանին ներկայացնում է Սովետական Միության Հերոսի կոչման, որ նրան շնորհվեց ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1944 թվականի ապրիլի 24-ի հրամանագրով։

Սովետական Միության Հերոսի «Ոսկե աստղ» մեդալից և Լենինի շքանշանից բացի, նա պարգևատրված է Կարմիր դրոշի, Կարմիր աստղի երկու շքանշաններով, Հայրենական պատերազմի պարտիզանի առաջին աստիճանի և մի շարք այլ մեդալներով։

1944—1945 թվականներին 5-րդ օդա-դեսանտային բրիգադան, որտեղ Պետրոսյանը գումարտակի հրամանատար էր, կատարում էր թիկունքային ծառայություն։

1946 թվականին Պետրոսյանը զորացրվում է բանակից և վերադառնում Երևան։ Մինչև 1948 թվականը նա աշխատել է ՀԿ(բ)Պ Երևանի Կիրովյան շրջանային կոմիտեում։ Սովետական Միության Հերոս, փոխ-գնդապետ Սուրեն Պետրոսյանն այժմ աշխատում է Հայկական ՍՍՌ հասարակական կարգի պահպանության մինիստրությունում։



# ՍԱՄԱՆԴ ԱԼԻԻ ՍԻԱԲԱՆԴՈՎ




## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար,* շնորհել Սովետական Միության հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

268. *Փոխ-գնդապետ* Սամանդ Ալիի Սիաբանդովին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 24 մարտի 1945 թ.*





Սամանդ Ալիի Սիաբանդովը ծնվել է 1909 թվականի նոյեմբերի 20-ին Կարսի նահանգի Ասանջան գյուղում, քուրդ չքավոր գյուղացու ընտանիքում։ 1914 թվականին նրանց ընտանիքը տեղափոխվում է Թիֆլիս, ապա մի քանի տարի հետո՝ Հայկական ՍՍՌ Ապարանի շրջան։

Ս. Սիաբանդովը նախնական կրթություն է ստանում Թիֆլիսի № 109 աշխատանքային դպրոցում։ 1924 թվականին նա ընդունվում է բանֆակ, իսկ 1928 թվականին գործուղվում Լենինգրադ՝ արևելագիտական ինստիտուտում սովորելու։ 1931 թվականին Ս. Սիաբանդովը ընդունվում է ՍՄԿՊ շարքերը։ 1932 թվականին նա վերադառնում է Ապարանի շրջան և աշխատում Սանգյար գյուղում իբրև դպրոցի վարիչ։ 1935 թվականին նա առաջ է քաշվում պարտիական աշխատանքի, սկզբում ՀԿՊ Ապարանի շրջկոմում իբրև հրահանգիչ, իսկ 1938 թվականին ընտրվում է ՀԿՊ Ալագյազի շրջկոմի առաջին քարտուղար։

Երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, Ս. Սիաբանդովը սովորում էր Մոսկվայում ՀամԿ(բ)Պ կենտկոմին կից պարտիական բարձրագույն դպրոցում։ Այստեղից էլ նա մեկնում է ռազմաճակատ և 1941 թվականի հունիսից

№ 217 դիվիզիայի քաղբաժնում որպես հրահանգիչ, մասնակցում Մոսկվայի հերոսական պաշտպանությանը։ 1942 թվականի սեպտեմբերից նշանակվում է նույն դիվիզիայի № 155 գնդի կոմիսար, իսկ այնուհետև գնդի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ. այդ պաշտոնում էլ մնում է մինչև 1945 թվականի օգոստոս ամիսը։

№ 217 դիվիզիան, Տուլայից սկսած մարտական ուղի է անցել մինչև Գերմանիա։ Նա մասնակցել է Բելոռուսիայի և Լեհաստանի ազատագրմանը։

1943 թվականի աշնանը Բոբրույսկ-Մինսկ մայրուղին անցնելիս, Օսիպովիչի ռայոնից ոչ հեռու՝ Մալի Գարոշկի գյուղի մոտ № 155 գնդի ստորաբաժանումներից մեկը մարտի է բռնվում։ Ճանապարհների խաչմերուկում թշնամին հարձակում է գործում մի քանի տանկով։ Ստորաբաժանումը Ս. Սիաբանդովի ղեկավարությամբ, վեց ժամ կռվելուց հետո, թշնամու տանկերը ոչնչացնում է և գերի վերցնում մի քանի հարյուր զինվոր։

1943 թվականի դեկտեմբերին Բելոռուսիայի Սոժ գետի անցման և նրա մյուս ափում հենակետ ստեղծելու համար համառ մարտեր են տեղի ունենում։ № 217 դիվիզիայի գնդերը ազատագրում են Ստարիի սելոն, իսկ նրա № 155 գնդի ստորաբաժանումները՝ Կալինովկան։

1944 թվականի աշնանը № 217 դիվիզիայի գնդերը մարտական առաջադրանք ստացան անցնել Նարև գետը, հենակետ ստեղծել և պահպանել այն մինչև օգնություն ստանալը։ Նրանց դեմ դուրս էին եկել թշնամու մեծ ուժեր։ Մի շարք դիվիզիաների, այդ թվում № 217 դիվիզիայի ստորաբաժանումներն անցան գետը և հենակետ ստեղծեցին Դըբոնտ գյուղի շուրջը։ Այն պահպանելու համար մի քանի օր համառ ու հերոսական մարտեր տեղի ունեցան, մեր զորամասերը թշնամուն մեծ կորուստներ պատճառեցին։ Թշնամին անցավ հակագրոհի՝ հենակետը լիկվիդացնելու և այնտեղ գտնված մեր զորամասերը ոչնչացնելու համար։ Հրամանատարությունը փոխ-գնդապետ Ս. Սիաբանդովին հանձնարարում է միավորել իր ունեցած բոլոր ուժերը և ինչ գնով լինի, պահպանել հենակետը։ Ս. Սիաբանդովը պատվով է կատարում մարտական այդ առաջադրանքը, հանդես բերելով քաջ հրամանատարի հմտություն և տոկունություն։ Դըրոնտ գյուղի շուրջը ստեղծված հենակետը պահպանելու ծանր մարտերում ցուցաբերած հերոսության համար ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1945 թվականի մարտի 24-ի հրամանագրով փոխ-գնդապետ Սամանդ Ալիի Սիաբանդովին շնորհվում է Սովետական Միության հերոսի կոչում։

Այդ կապակցությամբ բանակի հրամանատար գեներալ-լեյտենանտ Գուսևը և ռազմական խորհրդի անդամ գեներալ-մայոր Լոստմինը 1945 թվականի ապրիլի 28-ին հատուկ նամակ են ուղարկում Ս. Սիաբանդովի հորը՝ որի մեջ գրված է. «Ձեր որդի, փոխ-գնդապետ Ս. Սիաբանդովը գերմանական զավթիչների դեմ մղվող պատերազմում ցույց տվեց մեր Հայրենիքին անսահման նվիրվածություն՝ իբրև կարմիր բանակի քաջ սպայի։ Նա պատվով կատարեց իր

զինվորական պարտքը: Ռազմաճակատում կռիվների ամենադաժան պահին Ս. Սիաբանդովը առաջավոր գծում զինվորների մեջ էր գտնվում: Նա իր անձնական օրինակով և քաջությամբ հերոսական սխրանքներ էր ոգեշնչում մարտիկներին՝ մարտական առաջադրանքը սրբությամբ կատարելու համար»:

Փոխ-գնդապետ Ս. Սիաբանդովը պարգևատրվել է Լենինի շքանշանով, «Ոսկե աստղ» մեդալով, ինչպես նաև երկու Կարմիր դրոշի, Հայրենական պատերազմի առաջին և երկրորդ աստիճանի, Կարմիր աստղի շքանշաններով և հինգ մեդալներով:

1945 թվականի դեկտեմբերին զորացրվելով բանակից, Ս. Սիաբանդովը Սովետական Հայաստանում ղեկավար պարտիական աշխատանք է կատարում: 1952 թվականից նա աշխատում է Հայկական ՍՍՌ գյուղատնտեսության մինիստրությունում իբրև մինիստրի տեղակալ և կադրերի գլխավոր վարչության պետ:

1937 թվականից սկսած Ս. Սիաբանդովը ընտրվել է ինչպես ՍՍՌՄ, այնպես էլ Հայկական ՍՍՌ Գերագույն սովետների դեպուտատ: Այժմ նա Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի դեպուտատ է:

Ս. Սիաբանդովը միաժամանակ զբաղվում է գրական աշխատանքով:





# ՆԵԼՍՈՆ ԳԵՎՈՐԳԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ





## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

### Ռազմա-ծովային նավատորմի պետկազմին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում Հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել Սովետական Միության Հերոսի կոչում, հանձնելով Լենինի շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ.*

*14. Կապիտան Նելսոն Գևորգի Ստեփանյանին:*

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 23 հոկտեմբերի 1942 թ.*





Քաղաքացիական ավիացիայի անվանի օդաչու Նելսոն Գևորգի Ստեփանյանը Հայրենական մեծ պատերազմի երկրորդ օրը, կամավոր կերպով ռազմական ինքնաթիռի վրա փոխադրվելով, մեկնում է գործող բանակ։ Այդ մասին հարազատներին գրած նամակում նա հանդիսավորությամբ հայտարարում է. «Իմ տեղը հայրենիքի պաշտպանների առաջին շարքերումն է... քանի դեռ բաբախում է սիրտս, իմ սրբազան պարտքն է մինչև արյանս վերջին կաթիլը պաշտպանել իմ սիրելի Հայրենիքը, մեր հիանալի սովետական ժողովուրդը, մեր ծաղկած քաղաքներն ու գյուղերը»։

Նելսոնը պատվով կատարեց իր խոսքը, դարձավ լայն ժողովրդականություն վայելող սիրելի հերոսներից մեկը։

Նելսոն Ստեփանյանը ծնվել է 1913 թվականին Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքում։ Նա մեկ ու կես տարեկան էր, երբ նրանց ընտանիքը տեղափոխվում է Հայաստան և մշտական բնակություն հաստատում Երևան քաղաքում։ Երևանում Նելսոնը սովորում է Մաքսիմ Գորկու անվան յոթնամյա դպրոցում։ Պիոներ Նելսոնը դպրոցական տարիներից հափշտակվում է ավիացիայով, դառնում է Երևանի ավիամոդելիստների ակումբի ամենաակտիվ անդամը և բուռն ցանկությամբ երազում է օդաչու դառնալ։

Դպրոցն ավարտելուց հետո, 1927 թվականին Նելսոնը ուղարկվում է Բաքվի Օրջոնիկիձեի անվան Անդրկովկասյան հետևակային ռազմական դպրոցը։ Բայց հետևակը նրա տարերքը չէր։ Նա առաջվա նման մտածում էր օդաչու դառնալու մասին։

Վերջապես իրականանում է կոմերիտմիության անդամ Նելսոնի երազանքը։ 1932 թվականին Ադրբեջանի Կ(բ)Պ Կենտկոմը Նելսոնին գործուղում է Բատայսկի քաղաքացիական օդաչուների դպրոցը, որը նա ավարտում է գերազանց գնահատականով և թողնվում է դպրոցում որպես օդաչու-հրահանգիչ։ Բատայսկում Նելսոնն ընդունվում է կոմունիստական պարտիայի շարքերը և սկսում է ակտիվ հասարակական կյանքով ապրել։

1935 թվականին Նելսոնը հրահանգչի պաշտոնով փոխադրվում է Միներալնի Վոդիի բարձր թռիչքային կուրսերը, որտեղ օդաչուական կադրեր է պատրաստում քաղաքացիական ավիացիայի համար և վիրտուոզային կատարելագործման է հասցնում իր թռիչքային վարպետությունը։

Ահա այդպիսին էր Նելսոն Ստեփանյանը, երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը։ Հունիսի 23-ից նա Եյսկում ռազմական ինքնաթիռների վրա մի քանի օր վարժություններ կատարելուց հետո, գործուղվում է Լենինգրադի ռազմաճակատ և կարմրադրոշ բալթիական ռազմա-ծովային նավատորմում նշանակվում որպես գրոհային ավիացիայի օդաչու։ Այդ ժամանակից սկսած մինչև 1944 թվականի դեկտեմբերը Նելսոնը ակտիվորեն մասնակցում է Լենինգրադի, Օդեսայի, Սևաստոպոլի, Կովկասի և Մերձբալթիկայի հերոսական պաշտպանության ու ազատագրման ճակատամարտերին։ Ինչպես անհատաբար, այնպես էլ իր ղեկավարած գրոհային ավիացիայի ստորաբաժանումներով նա անընդհատ ամրագրոհային հարվածներ է հասցնում թշնամուն ծովում, օդում և ցամաքի վրա։

Նելսոնը թշնամու հետ առաջին անգամ դեմ առ դեմ հանդիպում է Հարավ-արևմտյան ռազմաճակատում։

Մեր հայրենիքի համար արտակարգ ծանր՝ 1941 թվականի ամռան օրերն էին... Մինչև ատամները զինված ֆաշիստական հրոսակները ավերելով ու հրի մատնելով Սովետական Ուկրաինայի շեն քաղաքներն ու գյուղերը, բնաջնջելով ժողովրդին, սև ամպի նման շարժվում էին դեպի Դնեպր, մահվան օղակի մեջ էին առել Օդեսան, որի պաշտպանները անօրինակ հերոսությամբ դիմագրավում էին թշնամու գերազանց ուժերի ճնշմանը։

Եվ ահա այդ օրերին Օդեսայի պարզ երկնակամարի վրա երևում է կարմրադրոշ բալթիական նավատորմից օգնության ուղարկված Իլ-2 գրոհային օդանավերի էսկադրիլիան, որի աջ թևում թռչում էր կրտսեր լեյտենանտ Նելսոն Ստեփանյանը։ Թշնամին զենիթային հրանոթներից բաց է անում մրրկային կրակ։ Նելսոնը, առանց շփոթվելու, ճեղքելով չորս կողմից պայթող արկերի ամպրոպը, կայծակի արագությամբ խոյանում է ցած, թշնամու դիրքերի



վրա և ընկերների հետ միասին հիտլերականների գլխին թափում ամբողջ մահաբեր բեռը։

Գրոհայինները վայրասլաց մի քանի թռիչքներով, գնդացրային շեշտակի կրակահերթերով «խուզում» են նաև գետի Օդեսա շարժվող թշնամու հեծելազորը։ Նելսոնը այստեղ ոչնչացնում է ավելի քան 50 ֆաշիստական զինվոր ու սպա և մեկ զենիթայ։ Այնուհետև նրանք մարտական թռիչքներ են կատարում Նիկոլաևի, Կախովկայի, Զապորոժիեի, Պոլտավայի շրջաններում, ոչնչացնում են մինչև 900 հիտլերականների, որից երկու հարյուրին Նելսոնը և իր երկու ընկերները ջրասույզ են անում Դնեպրում։

Սեպտեմբերի սկզբին Ստեփանյանը ոտքից ծանր վիրավորվելով՝ ընկնում է թշնամու օկուպացված տերիտորիան։ Ուկրաինական պարտիզանները նրան օգնում են անցնելու ռազմաճակատի գիծը։ Ստեփանյանին փոխադրում են Խարկովի հոսպիտալը, որտեղից, կարճատև բուժումից հետո, նա վերադառնում է կարմրադրոշ բալթիական նավատորմը։ Այստեղ նշանակվում է 8-րդ ավիա-բրիգադայի 57-րդ գնդի 2-րդ էսկադրիլիայի օղակի հրամանատար և մարտեր է մղում Լենինի քաղաքի մատույցներում։

1941 թվականի սեպտեմբերի 28-ից մինչև հոկտեմբերի 13-ը օղակի 2—3 ինքնաթիռներից բաղկացած խմբերով Նելսոնը քսան հաջող մարտական թռիչքներ է կատարում, ոչնչացնում է թշնամու տեխնիկան և կենդանի ուժը, որի համար նա 1941 թվականի նոյեմբերի 24-ին պարգևատրվում է Կարմիր դրոշի շքանշանով։ Դա ապագա հերոսի առաջին մարտական շքանշանն էր։ Դեկտեմբերին Նելսոնի մարտական թռիչքների հաշիվը եռապատկվում է։ Կարմրադրոշ բալթիական նավատորմի ռազմա-օդային ուժերի հրամանատարությունը 1941 թվականի դեկտեմբերի 28-ին Նելսոնին ներկայացնում է Սովետական Միության հերոսի կոչման։

Բայց մինչև հերոսի կոչում ստանալը, Նելսոնը կարևոր շատ նոր առաջադրանքներ է կատարում։ 1942 թվականի աշնանը նա արդեն 57-րդ գրոհային ավիագնդի 1-ին էսկադրիլիայի հրամանատարն էր և ուներ կապիտանի կոչում։ Պատերազմի սկզբից մինչև 1942 թվականի հոկտեմբերի 4-ը 150 մարտական թռիչքների ընթացքում, ըստ պարգևաթերթիկների ու Բալթիական նավատորմի քաղվարչության հրատարակած տվյալների, Նելսոն Ստեփանյանը անձամբ և խմբակային թռիչքների ժամանակ ոչնչացրել էր հակառակորդի մոտ 50 տանկ, 138 ավտոմեքենա, 86 զենիթային հրանոթ, 40 երկաթուղային վագոն և հարյուրավոր ֆաշիստական զինվոր ու սպա։

Նելսոնը վարպետ էր նաև օդային մարտերում։ Կատարելապես տիրապետելով «Իլ-2» ինքնաթիռին, մարտի մեջ նա կարողանում էր օգտագործել ինքնաթիռի ամբողջ հզորությունը և թռիչքային հատկությունները։ Նա գրոհիչ ինքնաթիռով նույնիսկ կռվում էր ռմբակոծիչների դեմ։ Մեկ անգամ հանդիպելով գերմանական «Յու-88» տիպի երկու ինքնաթիռի, որոնք գնում էին

ոմբակոծելու մեր մարտակարգերը, իր հրանոթի դիպուկ կրակով Նելսոնը երկուսին էլ ցած է գցում։

Հետագայում ավելի է ուժեղանում հակառակորդի ավիացիայի դեմ մղվող պայքարը։ Դա 1942 թվականի աշնանն էր։ Գերմանացիները, խոշոր ավիացիոն ուժեր նետելով Լենինգրադի մատույցները, կենտրոնացված ոմբակոծություններով խանգարում էին ճակատամերձ ճանապարհներով շարժվելուն, Լենինգրադի պաշտպաններին համալրումներ, ռազմամթերք և պարեն հասցնելուն։ Գերմանացիների վրա հակազդելու, նրանց հարվածող ուժը ի չիք դարձնելու համար Լենինգրադի ռազմաճակատի հրամանատարությունը Բալթիական նավատորմի ավիացիային առաջադրանք էր տվել՝ ջախջախել թշնամու ոմբակոծիչներին հենց իրենց օդանավակայաններում։ Այդ գործում նույնպես մեծ եղավ Նելսոնի ավանդը։ Հետախուզության միջոցով պարզելով հակառակորդի օդանավերի բազավորման վայրերը՝ նա ոչնչացնում է այդ բազաները։ 1942 թվականի հոկտեմբերի 4-ին Նելսոնը և Մորոզովը, իրենց մի խումբ գրոհայիններով, հաղթահարելով հակառակորդի զենիթային կատաղի կրակի պատնեշը, թափանցում են օդանավակայաններից մեկի շրջանը և մի քանի անգամ համառությամբ կրկնելով գրոհային հարվածները, տեղնուտեղը ոչնչացնում են քառամոտոր, ինչպես նաև միջին ու փոքր տիպի 22 ոմբակոծիչ և նրանց մոտ գտնվող անձնակազմը, պայթեցնում են ռազմամթերքի պահեստը, զենիթային կետերը ու անկորուստ վերադառնում իրենց բազան։

Բայց Նելսոնի տարերքը, ինչպես ճիշտ կերպով ընդգծել է նավատորմի ծովակալ Ի. Իսակովը, ծովային մարտերն էին։ Ինչպես բլոկադայի մեջ գտնվող Լենինգրադի մատույցներում երևացող գերմանական էշելոնները, այնպես էլ Ֆիննական ծոցում լողացող նրանց նավերն ու նավաքարավանները, որոնք այդ օրերին ուժեղացրել էին սպառազինության ու զորքերի տեղափոխումները, հանգիստ ու փրկություն չունեին Նելսոնի արկերից ու ռումբերից։ «Իլ»-երի փոքրիկ խմբերը, որոնց շարունակ առաջնորդում էր ինքը՝ Նելսոնը, 1942 թվականի մայիսի սկզբին խորտակում են 8 տրանսպորտային նավ, որոնցից մի քանիսը մինչև 5000 տոննա ջրածավալով, 3 պահակային կատեր ու 15 այլ փոքր նավեր։ Հունիսին նրանք խորտակում են երկու գծանավ, մեկ արագաշարժ կատեր, իսկ օգոստոսի 26-ից մինչև հոկտեմբերի 4-ը՝ մեկ ականակիր, մեկ արագընթաց կատեր և ոչնչացնում երկու զենիթային ու երկու հրետանային մարտկոց։

Այս հաղթանակների համար Ստեփանյանը հունիսի 9-ին պարգևատրվում է Լենինի, իսկ հոկտեմբերի 21-ին Կարմիր դրոշի երկրորդ շքանշանով։ Երկու օր հետո, հոկտեմբերի 23-ին, հրապարակվում է ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիր, որով Նելսոն Ստեփանյանին շնորհվում է Սովետական Միության Հերոսի կոչում։

Սովետական Միության Հերոսի բարձր կոչումը ավելի է պարտավորեցնում Ստեփանյանին։ Ամբողջ զորամասի անձնակազմի կողմից սիրված ու

*հարգված Նելսոնը այդ շրջանում ընտրվում է նաև էսկադրիլիայի պարտբյուրոյի քարտուղար և պարտիական ամբողջ աշխատանքների հիմքում դնում մարտական առաջադրանքների հաջող կատարումը։ Նա իր հարուստ մարտական փորձը տալիս է երիտասարդ օդաչուներին, անձնական օրինակով կոփում է նրանց կամքը, սովորեցնում է լինել կարգապահ, համարձակ, մարտերում փոխադարձաբար օգնել իրար և շարունակ ուժեղացնել թշնամուն հասցրվելիք հարվածների թափը։ Ստեփանյանի անխախտ նշանաբանն էր՝ «Այսօր թշնամուն հարվածել ավելի լավ, քան երեկ, վաղը ավելի լավ, քան այսօր»։*

*1943 թվականի մարտին Սովետական Միության հերոս Նելսոն Ստեփանյանը կարճատև արձակուրդ ստանալով՝ գալիս է Երևան իր ծնողներին այցելության, իսկ մայիսի վերջին նորից վերադառնում ռազմաճակատ։ Մեկնելուց առաջ Հայաստանի կոմունիստական պարտիայի Կենտկոմի հասցեով թողած իր նամակում Նելսոնը անդրադառնալով հայ ժողովրդի՝ ռազմաճակատում գտնվող իր զավակներին ուղարկած նամակին, գրում է. «Ես միշտ հիշում եմ իմ ժողովրդի խոսքը և սրբությամբ կկատարեմ նրա պատվերը»։*

*1944 թվականի հունվարին, երբ մեր զորքերը Լենինգրադի բլոկադան արդեն ճեղքել էին, գերմանացիները հուսահատ կատաղությամբ սկսում են քաղաքը ուժեղ հրետանակոծության ենթարկել։ Նրանք այստեղ էին բերել հեռահար և «Մեծ բերտա» տիպի պաշարողական հզոր հրետանու մարտկոցները և բարբարոսաբար ավերում էին քաղաքը ու սպանում խաղաղ բնակչությանը։*

*Գերմանական հրետանու դեմ համառ կռվի է դուրս գալիս ռազմա-ծովային նավատորմի ավիացիան։ Նելսոնը նորից մարտնչողների առաջին շարքերումն էր։ Հետախուզության տվյալներով Տոսնոյի շրջանում հայտնաբերելով «Մեծ բերտա» մարտկոցի բազավորման տեղը, նա գրոհայիններ Ձելնոկովի, Մազուրենկոյի, փոխ-գնդապետ Պավլովի հետ միասին թռչում է հարվածելու մարտկոցին։*

*«Մեծ բերտա»-ի շուրջը թշնամին տասնյակ ավտոմատ զենիթային թնդանոթների կրակի պատնեշ էր ստեղծել և ճշտակի հարվածում էր մեր գրոհայիններին։ Կործանիչների օժանդակությամբ Նելսոնը, գրոհելով դեպի մարտկոցը, ռմբահարվածներով ու թնդանոթի կրակով լռեցնում է ֆաշիստական մարտկոցը։ Նելսոնը իր ֆուգասային ու բեկորային ռմբահարվածներով ճնշում, ոչնչացնում է նաև հակառակորդի մի շարք ականանետային ու գնդացրային կետեր, ավերում բլինդաժներ ու խրամատներ, օժանդակում հետևակին՝ գետանցելու ջրային բնագծեր։ Նա ճնշում է Ֆիննական ծոցի կղզիների առափնյա ֆաշիստական մի շարք մարտկոցներ և օգնում մեր նավերին՝ հաջողությամբ դեսանտ իջեցնելու։ Նրա ձեռքից փախչել չէր կարող թշնամին. «Մարտադաշտից չեմ հեռանա,— ասում էր Նելսոնը,— այնքան ժամանակ, մինչև որ իմ սեփական աչքով չտեսնեմ, որ թշնամուց մնացել է միայն փշուրներ»։ Նա այդպես էլ սովորեցնում, դաստիարակում էր իր ենթականերին, որոնցից լավագույնները արժանացան Սովետական Միության հերոսի կոչման։*

1944 թվականի հունվարին Լենինգրադն արդեն ազատագրված էր։ Գարնանից Նելսոնը նշանակվում է կարմրադրոշ Բալթյան ռազմածովային նավատորմի գրոհային 11-րդ ավիա-դիվիզիայի 47-րդ գրոհային գնդի հրամանատար, գունդ, որը առանձնապես աչքի ընկավ Վիբորգի ազատագրման օպերացիայում։

Ապրիլին մայոր Ստեփանյանը և Չելնոկովն իրենց զորամասերով գործուղվում են Ղրիմի ռազմաճակատ։ Ստեփանյանը այստեղ հատկապես աչքի է ընկնում Սևաստոպոլի, Ֆեոդոսիայի ու Սուդակի ազատագրման համար մղված մարտերում, կործանիչ հարված է հասցնում հակառակորդի նավերին Սևաստոպոլ—Ռումինիա ծովային գծում։ Ստեփանյանի զորամասը Սև ծովում ջրասույզ է անում ավելի քան 60 նավ և մակույկ, ոչնչացնում մի քանի հազար ֆաշիստական զինվոր ու սպա։

1944 թվականի ապրիլին Ստեփանյանի գունդը արժանանում է գերագույն գլխավոր հրամանատարի շնորհակալության, «Ֆեոդոսյան» անուն է ստանում և պարգևատրվում է Կարմիր դրոշի շքանշանով։ Կարմիր դրոշի շքանշանով է պարգևատրվում նաև գնդի հրամանատար Նելսոն Ստեփանյանը։ Դա նրա երրորդ Կարմիր դրոշի շքանշանն էր։

1944 թվականի հունվարին Լենինգրադի բլոկադան վերջնականապես լիկվիդացնելուց հետո, մեր զորքերը ակտիվ գործողություններ են ծավալում Մերձբալթյան երկրամասը ազատագրելու համար։ Ռազմաճակատի գիծը հետզհետե հեռանում էր դեպի արևմուտք։ Մայիսին Ստեփանյանի գունդը վերադառնում է բալթիական նավատորմ։ Նա իր օդաչուներով Ֆիննական ծոցում ոչնչացնում է 13 նավերից բաղկացած մի նավախումբ և այնուհետև մասնակցում է Բալթիկայի ազատագրման մարտերին։ Առանձնապես հիշատակության են արժանի 1944 թվականի սեպտեմբերի 22-ի և դեկտեմբերի 14-ի մարտերը։

Լենինգրադի և Մերձբալթյան ռազմաճակատներից նահանջող թշնամին իր ջախջախված ուժերի մնացորդները էվակուացնելու համար Տալլինի նավահանգիստն էր կուտակել մեծ թվով տրանսպորտային նավեր։ Բալթիական ռազմածովային նավատորմի հրամանատարությունը իր ավիացիային առաջադրանք է տալիս ոչնչացնել դրանք։ Այդ օպերացիայի կատարման համար թռչում են վայրասլաց ռմբակոծիչների ու գրոհիչների երեք խմբեր։ Երրորդ խումբը գլխավորում էր Ստեփանյանը։ Նրան բաժին էր ընկել ամենածանր աշխատանքը։ Գերմանացիները նավերից ու առափնյա հրանոթներից սկսել էին խափանող կրակ բանալ։ Փոխադրանավերը մանևրում և փորձում էին բաց ծով դուրս գալ։ Ստեփանյանը թույլ չտվեց, որ հակառակորդը փախչի։ Հենց առաջին թռիչքի ընթացքում նա ջրասույզ արեց 8000 տոննա ջրատարողություն ունեցող փոխադրանավը, իսկ 6000 տոննա ջրատարողության մյուս փոխադրանավը մեծ վնասվածք ստացավ։ Տալլինի ծովախորշը վերածվեց գերմանական շոգե-

նավերի հսկայական գերեզմանի։ Սեպտեմբերի 22-ի ընթացքում բալթիական օդաչուները ջրասույզ արեցին 11 խոշոր փոխադրանավ։

Այսպես, հայ ժողովրդի անձնվեր զավակ Նելսոն Ստեփանյանը իր մարտական լուման դրեց նաև Սովետական Մերձբալթիկայի ազատագրման գործում։

Բավական է հիշատակել, որ Սովետական Միության Հերոս Նելսոն Ստեփանյանը պատերազմի սկզբից մինչև 1944 թվականի օգոստոսի 18-ը անձամբ արդեն կատարել էր 239 մարտական թռիչք, որի ընթացքում ջրասույզ էր արել 13 տարբեր տիպի նավեր, ոչնչացրել 80 տանկ, 600 ավտոմեքենա, 140 դաշտային և զենիթային հրանոթ, 130 գնդացրային կետ, 40 երկաթուղային վագոն, 1 շոգեքարշ, 4 գետանցուղի, 27 տարբեր տիպի ինքնաթիռ և մինչև 5000 ֆաշիստական զինվոր ու սպա։ Ստրատեգիական օբյեկտներում առաջ էր բերել ավելի քան 150 պայթյուն և հրդեհ։ Իսկ նրա ղեկավարած կարմրադրոշ «Ֆեոդոսյան» գրոհային ավիագունդը, որը 1944 թվականի ապրիլի 12-ից կատարել էր 1454 մարտական թռիչք, ոչնչացրել էր 53 տարբեր տիպի մարտական նավ՝ ընդամենը 30.000 տոննա ջրատարողությամբ, և ավելի քան 4000 ֆաշիստական զինվոր ու սպա։ Կարմրադրոշ բալթյան նավատորմի ռազմա-օդային ուժերի 11-րդ գրոհային ավիացիոն դիվիզիայի հրամանատարությունը 1944 թվականի օգոստոսի 20-ին կարմրադրոշ 47-րդ գրոհային ավիագնդի հրամանատար, փոխ-գնդապետ, Սովետական Միության Հերոս Նելսոն Ստեփանյանին ներկայացնում է Սովետական Միության կրկնակի Հերոսի կոչման։

Բայց Նելսոնը, քաջերից այդ քաջը, որին նավատորմում Բալթիկայի մրրկահավ անվանեցին, չապրեց մինչև Գերագույն սովետի հրամանագիրը։ Նա վերջին անգամ թռիչք կատարեց 1944 թվականի դեկտեմբերի 14-ին։ Մառախլապատ այդ օրը նա առաջադրանք ստանալով, իր մի խումբ օդաչուներով թռավ դեպի Լիբավայի ծովախորշը։ Այստեղ կուտակված էին մեծ թվով տրանսպորտային ու ռազմական նավեր, որոնցով հիտլերյան բանակի հրամանատարությունը փորձում էր Մերձբալթիական առաջին ռազմաճակատի մեր զորքերի կողմից մահվան օղակի մեջ սեղմված իր 30 դիվիզիաներին փախցնել Գերմանիա, որն, իհարկե, չհաջողվեց։

Մեր օդաչուները հասան նպատակակետին։ Հիտլերականները գրոհիչների դեմ դուրս են բերում մինչև 80 կործանիչներ և մրրկայի կրակ են բացում բոլոր նավերից ու ափնյա զենիթային հրանոթներից։ Նելսոնը ղեկավարում էր առաջատար գրոհիչների խումբը։ Թշնամին իր կրակի ամբողջ հարվածը կենտրոնացնում է խմբի դեմ։ Մարտերը բացե ի բաց կատաղի բնույթ են ընդունում։ Շրջապատված հակառակորդի կործանիչներով՝ Նելսոնը չի նահանջում, շարունակ գրոհելով, ճանապարհ է հարթում իր գրոհիչների համար։ Ահա նա ցած է գցում թշնամու մեկ կործանիչ, բայց նույն մոմենտին զենիթային արկի ուղիղ հարվածից պայթում է նրա մեքենայի բենզինի բակը։ Կրակի ու ծխի մեջ կորած՝ նա իր բոցավառված ինքնաթիռով մխրճվում է թշնամու նավա-

խմբի շրջանում, իր ինքնաթիռի պայթյունով նոր վնասվածքներ հասցնում հակառակորդի նավերին և ապա սուզվում է Բալթիկ ծովի ջրերում։

Նելսոնի մահը ցնցեց նրա զինակիցներին ու ռազմիկներին։ «Պարզ ու համեստ մի մարդ, մտերիմ ու սիրված բոլորից, նա մեզանից յուրաքանչյուրի համար հայր էր և ուսուցիչ, բարեկամ էր և հրամանատար,— այսպես են գրել Նելսոնի ծնողներին ուղարկած իրենց նամակում Սովետական Միության հերոսներ՝ Զոկինը, Լազարևը, Կլիմովը, Ակաևը, Պոպովը, Ուզալցովը և ուրիշները։— Այդ ճակատագրական օրը, երբ Նելսոն Գևորգիչը չվերադարձավ, մենք լալիս էինք։ Ասում են, որ արցունքները հանգստություն են բերում։ Բայց զինվորի ժլատ արցունքները, ինչպես շիկացած մետաղի կաթիլներ, այրում են սիրտը՝ կոչելով վրեժխնդրության...»։

1945 թվականի մարտի 6-ին ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Նելսոն Ստեփանյանին հետմահու շնորհվում է Սովետական Միության կրկնակի հերոսի կոչում։ Այդ հրամանագրում ասված է. «Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքները օրինակելիորեն կատարելու համար, որն իրավունք է տալիս ստանալու Սովետական Միության հերոսի կոչում, Սովետական Միության հերոս, գվարդիայի փոխ-գնդապետ Նելսոն Գևորգի Ստեփանյանին պարգևատրել «Ոսկե աստղ» երկրորդ մեդալով և նրա բրոնզե կիսանդրին կանգնեցնել պատվանդանի վրա պարգևատրվածի ծննդավայրում»։

Նելսոնի բրոնզյա հուշարձան-կիսանդրիներ են կանգնեցվել Երևան և Շուշի քաղաքներում, նրա անունով են կոչվում փողոցներ, պիոներական ջոկատներ, կոլտնտեսական օղակներ։ Գրողները Նելսոնի մասին պոեմներ, պատմըվածքներ են գրել ու շարունակում են գրել։ Այսպես, ժողովուրդն ու կառավարությունը շարունակ հավերժացնում են իրենց արժանավոր զավակի՝ Նելսոնի անունն ու պայծառ հիշատակը։



# ՎԱԶԳԵՆ ՄԻՔԱՅԵԼԻ ՕԳԱՆԵՍՈՎ





## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

### ՍՍՌՄ Զինված ուժերի սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել Սովետական Միության հերոսի կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

*151. Ավագ լեյտենանտ* Վազգեն Միքայելի Օգանեսովին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 15 մայիսի 1946 թ.*





Վյանքի մեծ ուղի է անցել Սովետական Միության հերոս, կործանիչ ավիացիայի օդաչու, այժմ պահեստի փոխ-գնդապետ Վազգեն Միքայելի Օգանեսովը (Հովհաննիսյան)։

Վազգեն Օգանեսովը ծնվել է 1920 թվականի փետրվարի 10-ին Ալեքսանդրապոլի (այժմ Լենինական) Արթիկի շրջանի Հոռոմ գյուղում։ Նրա հայրը Բաքվի նավթագործ բանվոր լինելով՝ 1921 թվականին իր ընտանիքը գյուղից Բաքու է փոխադրում։

Վազգենը սովորում է Բաքվի հայկական 7-ամյա դպրոցում։ 5-րդ դասարանից արհեստագործական ուսումնարան փոխադրվելով՝ ավարտում է այն և աշխատանքի անցնում նավթային տրեստի 7-րդ հանքում։ Նա աճում, դառնում է որակյալ խառատ։

Մանկության տարիներից Վազգենը հատուկ սեր է տածում դեպի ավիացիան. աշխատելու հետ զուգահեռ, նա հաճախում է Բաքվի ավիաակումբը, որտեղից Օգանեսովը գործուղվում է Թբիլիսիի զինվորական օդաչուական դպրոցը, որն ավարտում է գերազանց առաջադիմությամբ և 1941 թվականի հունիսի 27-ին նշանակվում 259-րդ կործանիչ ավիագնդում, որպես Ի-153 ինքնաթիռի օդաչու

Այսպիսով, Վազգեն Օգանեսովը իր ապագան վերջնականապես կապում է հայրենական ավիացիայի հետ։

Դա պատերազմի սկիզբն էր։ 1941 թվականի սեպտեմբերի 18-ին երիտասարդ օդաչուն Իրանում գտնվող մեր զորքերի շարքերից փոխադրվում է Կերչ—Ղրիմի ռազմաճակատ։ Այդ շրջանից մինչև պատերազմի հաղթական ավարտը Վազգենը սովետա-գերմանական ռազմաճակատներում արիությամբ մարտնչում է ֆաշիստական զավթիչների դեմ և պատերազմն ավարտում Բեռլինում։

Պատերազմի ընթացքում Օգանեսովը շարքային օդաչուից աճում, բարձրանում է մինչև մայորի աստիճանի, դառնում է ավիա-էսկադրիլիայի շտուրման։ Նա կատարում է 324 մարտական թռիչք, մասնակցում է ավելի քան 67 օդային մարտի, անձամբ ցած է գցում թշնամու 23 ինքնաթիռ, պարգևատրվում է մարտական վեց շքանշաններով և մի շարք մեդալներով։

1941 թվականի դեկտեմբերի 25-ին լեյտենանտ Տիշչենկոյի օղակի կազմում Վազգենը թռչում է պաշտպանելու Թամանի նավահանգիստները և մեր զորքերի դեսանտը Կերչի թերակղզում, որտեղ դաժան կռիվներ էին գնում պլացդարմի համար։ Ֆաշիստական զենիթային արկը խփում է Վազգենի ինքնաթիռին, բայց օդաչուն իրեն չի կորցնում, վնասված ինքնաթիռով վայրէջք է կատարում Ազովի ծովի թույլ սառույցների վրա, Կազաչուշկա կղզյակի կողքին։ Այստեղ օգնության են հասնում մեր հետևակայինները և ինքնաթիռը ցամաք դուրս բերելով, ազատում օդաչուին։

1942 թվականի մայիսի 9—12-ը Վազգենը նոր մարտական թռիչքներ է կատարում Ֆեոդոսիայի շրջանում։

Դժվար օրեր էին... գերմանացիները Ղրիմից մեր նահանջող զորքերի դեմ դուրս էին բերել մի քանի հարյուր ռմբակոծիչներ, գրոհիչներ և կործանիչներ։ Սովետական ցամաքային զորքերին պաշտպանելու ընթացքում Վազգենը հանդիպում է թշնամու ռմբակոծիչների խմբին, որոնք գնում էին ռմբակոծելու մեր մարտակարգերը։ Ցասումով լցված՝ նա գրոհում է այդ խմբի վրա, խփում, ցած է գցում գերմանական Me-109 առաջին ռմբակոծիչը և բաց է անում իր մարտական հաշիվը։

Բայց ահա վրա են հասնում թշնամու կործանիչները, սկսվում է օդային կատաղի մարտ։ Սովետական 9 ինքնաթիռների վրա հարձակվում են հակառակորդի 25 կործանիչներ։ Նրանք օգտվելով իրենց թվական գերակշռությունից, խախտում են սովետական ինքնաթիռների մարտակարգը և վայր են գցում հինգ ինքնաթիռ։ Մնացած ինքնաթիռները շարունակում են օրհասական մարտը։ Վազգենը մեն-մենակ կռվում է չորս կործանիչների դեմ։ Մոտորների կատաղի հռնդյունի մեջ, մահաբեր գնդակների ու արկերի տարափի քաոսում, նա կայծակի արագությամբ մեկ խոյանում է ցած՝ թշնամու ինքնաթիռների «փորի» տակ, մեկ էլ բարձրանում վեր։ Ճարպիկ մանևրելով, իր կործանիչը դուրս է բերում թշնամու օդանավերից մեկի պոչի կողմը և մեկ քառորդ թեքության վրա ռեակտիվ արկով հարվածում է նրան, որը վայրկենապես կրակ ու



270—10

*ծուխ ժայթքելով՝ փշրվում է օդում և թափվում գետին։ Դա Վազգենի խփած երկրորդ օդանավն էր։ Այս մարտում երկու ինքնաթիռ է խփում նաև խիզախ օդաչու Տիշչենկոն։ Նույն ժամանակ թշնամու ինքնաթիռները գնդացրային շեշտակի կրակով կտրում են Վազգենի ինքնաթիռի էլեկտրալարերը և վնասում յուղի բակը։ Վազգենը ստիպված է լինում անմիջապես վայրէջքի գնալ, որովհետև ուշանալը անխուսափելի մահ էր սպառնում։*

*—Այդ օրը ես վերին աստիճանի ուրախ էի, որ Հայրենիքիս առաջ կատարեցի պարտքս,—ասում է Վազգենը,—բայց սիրտս այրվում էր զոհված ընկերներիս համար... անմոռանալի կապիտան Իվանովի, Ստարշինովի, ավագ լեյտենանտ Բաբիչի և մյուսների համար։*

*1942 թվականի ամռանը, Հյուսիսային Կովկասում սկսված լարված մարտերի ժամանակ Օգանեսովը ընդունվում է կոմունիստական պարտիայի շարքերը։ Նա 17 նոր մարտական թռիչքներ է կատարում Տիխորեցկի, Մայկոպի, Արմավիրի շրջաններում, գրոհում է թշնամու տեխնիկայի ու կենդանի ուժերի վրա, գերմանական օդանավակայանում ոչնչացնում է Ю-88 երկմոտորանի և Ю-52 տրանսպորտային ինքնաթիռներ, մեկ զենիթային հրանոթ և մեկ գնդացրային կետ, ռազմական բեռներով բարձված 26 ավտոմեքենա ու սայլեր, ավելի քան 300 ֆաշիստական զինվոր ու սպա։ Վազգենը պարգևատրվում է Կարմիր դրոշի շքանշանով։*

*Ավիագունդը, ուր ծառայում էր Վազգենը, 1943 թվականի հունիսին ստանում է ЯК-9 սովետական նոր տիպի կործանիչներ, որոնք իրենց մարտական տվյալներով գերազանցում էին թշնամու կործանիչներին։ Հուլիս-օգոստոս ամիսներին գունդը մասնակցում է Օրյոլ-Կուրսկի մեծ ճակատամարտին։ Գունդը այդ օրերին կենտրոնական ճակատամասում խփում է թշնամու ավելի քան 164 ինքնաթիռ, որոնցից երկուսը ոչնչացնում է Օգանեսովը։ Այստեղ նա պարգևատրվում է Կարմիր աստղի շքանշանով։*

*Օգոստոսին Վազգենը արդեն ավագ լեյտենանտի կոչում ուներ և նշանակվել էր էսկադրիլիայի հրամանատարի տեղակալ։ Նա ղեկավարում էր օդային մարտերը՝ Դնեպրի անցումներում, Գոմելի, Լոևի, Չերնիգովի, Իվան-Ռոմնի և մյուս շրջաններում։ Սեպտեմբերի 20-ին Օսետրի մոտ հանդիպելով հակառակորդի 20 ռմբակոծիչների, նա իր օղակով անմիջապես գրոհում է նրանց վրա և ցած է գցում խմբին առաջնորդող ինքնաթիռը։ Հոկտեմբերի 22-ին Կալպենի շրջանում խփում է հակառակորդի ևս մեկ կործանիչ և պարգևատրվում է երկրորդ Կարմիր դրոշի շքանշանով։*

*1944—1945 թվականներին ավագ լեյտենանտ Օգանեսովը նոր հաղթանակներ է ձեռք բերում Լեհաստանում և Գերմանիայում մղած մարտերում։*

*1944 թվականի օգոստոսի 9-ին կործանիչների նրա քառյակը Վիլգայի շրջանում օդային կատաղի մարտում խփում է ֆաշիստական հինգ ինքնաթիռ, որից երեքը խփել էր հրամանատարը։ 1945 թվականի մարտի 13-ին, Օդերի ձախափնյա հենակետի համար մղած օդային մարտերում նա ոչնչացնում է թշնամու ևս երկու ինքնաթիռ։*

Այս շրջանում ավագ լեյտենանտ Օգանեսովի անձնական հաշվում արդեն կար հակառակորդի խփված 16 ինքնաթիռ։ 1945 թվականի մարտի 27-ին 193-րդ կարմրադրոշ Ռադոմյան կործանիչ ավիացիոն դիվիզիայի 347-րդ գնդի հրամանատարությունը, բարձր գնահատելով էսկադրիլիայի հրամանատարի տեղակալ, էսկադրիլիայի շտուրման, ավագ լեյտենանտ Վազգեն Օգանեսովի արիությունն ու խիզախությունները, նրան ներկայացնում է Սովետական Միության Հերոսի կոչման։

Խիզախ օդաչուի մարտական գործունեությունը նոր թափ ստացավ սովետական զորքերի՝ Բեռլինի վրա կատարած գրոհների ընթացքում։

Բեռլինի մատույցներում նրանց գնդին հանձնարարվում է հիմնականում զբաղվել հետախուզությամբ։ Չնայած դրան, Օգանեսովը, հաճախակի, գնդի հրամանատարի թույլտվությամբ, գնում է ֆաշիստական ինքնաթիռներ որսալու, այդ մարտերի ընթացքում ցած է նետում թշնամու 7 ինքնաթիռ։ Նա թռիչքներ կատարեց Ֆյուրստենվալդի և Բեռլին քաղաքների վրա, Տեմպելհոֆի օդանավակայանի և Ռայխստագի վրա։ Վերջին թռիչքի ժամանակ թշնամու զենիթային հրանոթի արկը կպչում է նրա ինքնաթիռին և շարքից հանում ղեկավարման սարքը։ Բարեբախտաբար այդ պահին նրա ինքնաթիռը քթով ուղղված է լինում դեպի մեր զորքերի դիրքերը։ Գերմարդկային ճիգեր թափելով՝ վնասված ինքնաթիռով նա կարողանում է հասնել մեր օդանավակայանը. վայրէջքի ժամանակ, 25 մետր բարձրությունից, ինքնաթիռը ընկնում է զենիթային հրանոթի վրա ու փշրվում։ Օդաչուն մնում է ինքնաթիռի խցիկում, մետաղյա մասսայի մեջ ճզմված։ Կոտրվում է աջ ձեռքի բազուկը և աջ ոտքի ծունկը, ճեղքվում է ճակատը, փշրվում են ատամները։ Վազգենին ուշաթափ վիճակում դուրս քաշելով օդանավի խցիկից, փոխադրում են հոսպիտալ։

Սա Վազգենի վերջին թռիչքն էր։ Գնդի հրամանատարությունը բեռլինյան նրա մարտական թռիչքների մասին գրել է հետևյալը. «Ֆաշիստական գազանի որջի վրա վճռական հարձակումների օրերին, ավագ լեյտենանտ Վ. Օգանեսովը իրեն դրսևորեց որպես գերազանց հետախույզ... Նա օդային մարտերում հանդես է բերել արտակարգ արիություն ու հերոսություն՝ բարձրացնելով օդաչուի փառքը»։

Բեռլինյան գրոհի համար Վազգեն Օգանեսովը պարգևատրվում է երրորդ Կարմիր դրոշի շքանշանով, իսկ 1946 թվականի մայիսի 15-ին ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով նա արժանանում է Սովետական Միության Հերոսի կոչման։

Պանծալի օդաչուն պատերազմից հետո չորս տարի ևս ծառայեց սովետական բանակի օկուպացիոն զորքերի շարքում։ Այստեղ նա նշանակվեց ավիագնդի հրամանատարի տեղակալ և բանակից զորացրվեց փոխ-գնդապետի աստիճանով։

Այժմ պահեստային սպա Օգանեսովը թոշակառու է և ապրում է Բաքվում՝ ակտիվորեն մասնակցելով պարտիական ու հասարակական աշխատանքներին։



# ԱՇՈՏ ՄԻՆԱՍԻ ԱՍՐՅԱՆ





## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի շարքային և սպայական կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել* Սովետական Միության հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

*2. Գվարդիայի կրտսեր լեյտենանտ* Աշոտ Մինասի Ասրյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 2 նոյեմբերի 1944 թ.:*





Աշոտ Մինասի Սարյանը ծնվել է 1920 թվականի մարտի 3-ին Թիֆլիսում, արհեստավորի ընտանիքում։ 1927 թվականին նա ընդունվում է 73-րդ դպրոցը, ուր սովորում է մինչև 7-րդ դասարանը։ 1935 թվականին փոխադրվում է ավտովարորդների դպրոց։ Ավարտելով այն՝ 1936 թվականից մինչև 1940 թվականի դեկտեմբերի սկիզբը աշխատում է իբրև ավտովարորդ։

Հայրենական պատերազմի սկսվելուց Աշոտը գտնվում էր բանակում։ Նա պարտադիր ծառայության էր կանչվել 1940 թվականից։ Սկզբում զինվորական հրամանատարությունը ավտովարորդ Սարյանին գործուղում է տանկային կարճատև դասընթացներ։ 1942 թվականին ստանալով կրտսեր լեյտենանտի կոչում, Ա. Սարյանը նշանակվում է տանկի հրամանատար և մեկնում Հյուսիսային ռազմաճակատ։ 1944 թվականի աշնանը սովետական բանակի միավորումները հերոսական մարտեր էին մղում Կարելական ԱՍՍՌ Պետսամո նավահանգստային քաղաքի ազատագրման համար։ Ա. Սարյանի «Տ-34» տանկն իր անձնակազմով այդ մարտերում ոչնչացնում է թշնամու հակատանկային մի քանի հրանոթ։ Պետսամոյի համար մղվող թեժ մարտերում նրա տանկը բոցավառվում է թշնամու արկից, բայց տանկի խիզախ անձնակազմը չի շփոթ-

*վում, հանգցնելով կրակը, շարունակում է մարտը։ Կռիվը կատաղի էր և արյունալի։ «Տ-34» տանկն իր գլարուն թրթուրներով ակոսելով սառած գետինը դուրս է գալիս բարձունքի լանջը, ապա նորից մոլեգնությամբ սլանում դեպի ցած։ Հանկարծ ռադիոյով հետախույզը հաղորդում է, որ ձորակում ֆաշիստական մեքենաների շարասյուն կա։*

*Ասրյանի տանկը շարժվում է առաջ։ Երբ այն մոտենում է ձորակիրանին, թշնամու հակատանկային հրանոթը սկսում է կրակել նրա վրա։ Փակում է տանկի ճանապարհը. բարձունքում հակառակորդի քողարկված զինվորները միաժամանակ սկսում են նռնակներ նետել դեպի Ասրյանի տանկը։ Թշնամու կրակը կանխելու նպատակով, Ասրյանը արագ թեքվում է դեպի հակառակորդի հակատանկային հրանոթը։ Նա խոյանում է առաջ և տեղն ու տեղը կրակային կետը ճզմում տանկի թրթուրների տակ։ Այնուհետև Ասրյանի տանկը մոտենում է թշնամու մեքենաների շարասյանն ու սկսում հարվածներ հասցնել նրան։ Հանկարծ Ասրյանի տանկը սկսում է այրվել։ Նրա հրամանատարը ուշքի է գալիս այն պահին, երբ գլխի մազերը սկսում են խանձվել։ Նա դուրս է սողում տանկի ներքևի անցքից, իր հետ տանելով մեխանիկ-վարորդին։ Արհամարհելով իրենց վրա տեղացող թշնամու կրակը, արկերի պայթյունը, նրանք սկսում են կաթսայիկներով և սաղավարտներով մոտիկ ճահճից ջուր բերել ու հանգցնել հրդեհը։*

*Փրկելով տանկը, նորից շարժվում են առաջ։ Համառ մարտեր են սկսվում մի խաչմերուկում, որտեղ պետք էր իրար միանային մեր զորքերի երկու թևերը։ Թշնամին բոլոր տեսակի զենքերից կրակ էր բացում մեր ստորաբաժանումների վրա, նպատակ ունենալով խանգարել նրանց միացմանը։ Հենց այդ մարտում նորից վնասվում է Ասրյանի տանկը, բայց նրա քաջարի անձնակազմը նորից գործի է գցում մեքենան և շարունակում մարտը։*

*«Երեք ժամ տանկերը կռվում էին խաչմերուկի համար, քանի դեռ հետևակը չէր հասել,—գրում է «Պրավդան»։—Տանկի հրամանատար Ասրյանն իր այրվող տանկի կրակը հանգցրեց և շարքից դուրս չբերեց այն»։*

*Ապա գվարդիայի կրտսեր լեյտենանտ Ա. Ասրյանի տանկը ճանապարհին ոչնչացնելով գերմանական չորս հրանոթ, մի քանի տասնյակ ավտոմեքենա, հարյուրից ավելի գերմանացի, մտնում է Պեստամո նավահանգստային քաղաքը։ Դա 1944 թվականի հոկտեմբերի 15-ն էր։ Պեստամոյում մղած մարտերում խիզախություն ցուցաբերելու համար, ՍՍՌՄ Գերագույն սովետի Նախագահությունը 1944 թվականի նոյեմբերի 2-ի հրամանագրով կրտսեր լեյտենանտ Աշոտ Մինասի Ասրյանին շնորհում է Սովետական Միության հերոսի կոչում։*

*Ա. Ասրյանը Բելոռուսական առաջին ռազմաճակատի զորքերի հետ մասնակցում է Լեհաստանի ազատագրմանը։ Այնուհետև Ասրյանի տանկը, հազարավոր ուրիշ տանկերի հետ, ուղղություն է վերցնում դեպի Բեռլին։ Գերմա-*

*նիայի մայրաքաղաք մտնող սովետական առաջին տանկերի թվումն էր նաև Աշոտ Ասրյանի տանկը։*

*Ա. Ասրյանի կուրծքը զարդարում է Սովետական Միության Հերոսի «Ոսկե աստղ» մեդալը, Լենինի և Կարմիր դրոշի շքանշանները, զվարդիականի կըրծքանշանն ու բազմաթիվ մեդալներ։*

*Ա. Ասրյանը այժմ մայոր է և գտնվում է սովետական բանակում զինվորական ծառայության մեջ։*



# ՀՐԱՆՏ ԳԵՎՈՐԳԻ ԲԱԲԱՅԱՆ



## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ՍՍՌՄ Զինված ուժերի սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել Սովետական Միության Հերոսի կոչում, հանձնելով Լենինի շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ.*

*12. Մայոր Հրանտ Գևորգի Բաբայանին:*

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 15 մայիսի 1946 թ.:*







Հրանտ Գևորգի Բարայանը ծնվել է 1921 թվականին Կոտայքի շրջանի Բալա գյուղում՝ բանվորի ընտանիքում։ 1929 թվականին նրանց ընտանիքը տեղափոխվում է Երևան։ Հրանտը այստեղ սովորում է Մաքսիմ Գորկու, ապա Աբովյանի անվան դպրոցներում։ 7-րդ դասարանն ավարտելուց հետո նա աշխատում է և միաժամանակ սովորում գիշերային դպրոցում։ Իր աշխատանքային գործունեությունը Հրանտն սկսում է 15 տարեկան հասակից։

1936 թվականին Հրանտն ընդունվում է կոմերիտմիության շարքերը։ Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո, 1939 թվականին նա դիմում է Կիրովյան զինկոմիսարիատին՝ իրեն զինվորական դպրոց ուղարկելու համար։ Շուտով նա մեկնում է Բելոռուսական Կոլենկովիչ քաղաքի հետևակային դպրոցը։ 1940 թվականին այդ դպրոցը տեղափոխվում է Կալինինի մարզի Վիշնի Վոլոչեկ քաղաքը։ 1941 թվականի հունիսին Բարայանը ավարտում է զինվորական դպրոցը և ստանում լեյտենանտի կոչում։

Առաջին անգամ Բարայանը կռվի մեջ է մտնում Կիրով քաղաքի համար մղվող մարտերում։ Այնուհետև 21-րդ հրաձգային դիվիզիան, որի շարքերում էր Հ. Բարայանը, մարտերով ետ է նահանջում և Մոսկվայի պաշտպանության

*օրերին բնագիծ գրավում Տուլա և Սերպուխով քաղաքների միջև ընկած հատվածում։ Հոկտեմբերի 23-ին, անցնելով հարձակման, դիվիզիան իր ուժերով ազատագրում է մի շարք գյուղեր և շրջանային կենտրոններ։ Այս մարտերում աչքի ընկնելու համար լեյտենանտ Բաբայանն արժանանում է ավագ լեյտենանտի կոչման։*

*Ազգային զորամասեր կազմակերպելու կապակցությամբ ավագ լեյտենանտ Հրանտ Բաբայանը 1942 թվականի հունվարին ուղարկվում է Երևան և նշանակվում 89-րդ Հայկական հրաձգային դիվիզիայի կրտսեր հրամանատարական դպրոցի մասնագիտական վաշտի հրամանատար, ապա 400-րդ գնդի 2-րդ գումարտակի հրամանատարի տեղակալ՝ շարային գծով։ 1942 թվականի օգոստոսին դիվիզիան մեկնելով ռազմաճակատ, մարտեր է սկսում Գրոզնի քաղաքի ուղղությամբ։ Այդտեղի մի բարձունքի վրա թշնամին ուներ մեծ քանակությամբ գնդացրային կրակակետեր։ Բաբայանը գնդի հրամանատարին խնդրում է, որ թույլատրի իր ստորաբաժանումով մասնակցելու այդ բարձունքի գրավմանը։ Ստանալով հրամանատարի համաձայնությունը, Բաբայանը կատարում է համապատասխան հետախուզություն, պարզում թշնամու դասավորությունը և դեկտեմբերի 23-ին, 50 մարտիկների գլուխն անցած, գրոհում է բարձունքի վրա և գրավում այն։ Այս մարտական խնդիրը կատարելու համար Բաբայանը արժանանում է Կարմիր աստղի շքանշանի։*

*1943 թվականի հունվարի 2-ից սովետական բանակի Կովկասյան ռազմաճակատի զորքերը անցնում են հարձակման։ Այդ զորքերի թվումն էր նաև Հայկական 89-րդ դիվիզիան։ Դիվիզիայի զորամասերը հունվարի 2-ին ազատագրում են Մալգոբեկ քաղաքը, մարտերով առաջ շարժվելով, դուրս գալիս Ազովի ծովափին գտնվող Եյսկ քաղաքը, որտեղ ստանալով համալրում, նախապատրաստվում են նոր մարտերի։ Նույն թվականի փետրվարին կապիտան Բաբայանն ընդունվում է կոմունիստական պարտիայի շարքերը։*

*1943 թվականի սեպտեմբերի 16-ին համառ և արյունահեղ մարտերից հետո ազատագրվում է սևծովյան նավահանգիստ Նովոռոսիյսկը։ Այդ մարտերին ակտիվորեն մասնակցում է 89-րդ Հայկական դիվիզիան, որի շարքերում էր գտնվում Հ. Բաբայանի գումարտակը։ Թաման թերակղզու ազատագրման մարտերում առավել աչքի ընկնելու համար 89-րդ դիվիզիան արժանանում է Թամանյան կոչման։*

*1944 թվականի մայիսի սկզբին համառ մարտեր էին մղվում Սևաստոպոլ քաղաքի համար։ Հայկական Թամանյան դիվիզիան հարձակման հրաման է ստանում։ Կապիտան Բաբայանի գումարտակին առաջադրանք է տրվում՝ մարտերով առաջանալ և ոչնչացնել Գորա-Գորնայա բարձունքի վրա տեղավորված հակառակորդի գնդացրային մի քանի կետեր։ Այդ խնդիրը գումարտակը կատարում է հաջողությամբ և ապահովում մեր զորամասի առաջխաղացումը, որի համար 1944 թվականի հուլիսի 10-ին կապիտան Բաբայանը պարգևատրվում է Կարմիր դրոշի շքանշանով։*

Այնուհետև 89-րդ դիվիզիան, Բելոռուսական առաջին ռազմաճակատի զորքերի կազմում մասնակցում է Վարշավա, Լոձ և մի շարք այլ քաղաքների ազատագրմանը։ Ռուսկի Բրոտի գյուղի շրջակայքում գերմանական մեկ խոշոր զորախմբավորում ստեղծել էր ուժեղ պաշտպանություն։ Թամանյան դիվիզիայի 390-րդ գունդը և 400-րդ գնդից կապիտան Բաբայանի գումարտակը հունվարի 18-ից մինչև 21-ը արյունահեղ մարտեր են մղում թշնամու գերակշիռ ուժերի դեմ։ Հակառակորդը ձգտում է ճեղքել պաշտպանության բնագիծը և ետ նահանջել։ Ռուսկի Բրոտի շրջակայքում գերմանական այդ խոշոր խմբավորումը լիկվիդացնելու, մարտերում ցուցաբերած քաջագործության համար կապիտան Հրանտ Բաբայանը պարգևատրվում է Բոգդան Խմելնիցկու շքանշանով։

Փետրվարի 13-ից սկսվում են Օդեր գետի ձախ ափին հենակետ գրավելու մարտերը, որոնք ավարտվում են հաջողությամբ։ Մոտ երկու ամիս 89-րդ Հայկական Թամանյան դիվիզիայի ստորաբաժանումները մեկ ու կես կիլոմետր երկարությամբ և 800 մետր խորությամբ հենակետը, որը ստացել էր «Հայկական» անունը, պահում են իրենց ձեռքում։

1945 թվականի ապրիլի 16-ին մայոր Բաբայանի գումարտակը մասնակցում է Օդերի Ֆրանկֆուրտի մատույցներում հիտլերականների խիստ ամրացված պաշտպանությունը ճեղքելուն։ Շուտով գումարտակին հաջողվում է սեպաձև խրվել թշնամու մարտակարգերի մեջ և ընդարձակելով ճեղքվածքը, հիտլերականներին ետ շպրտել։ Հարվածի շեշտակիությունը հնարավորություն չի տալիս թշնամուն ամրանալու բնագծերում։ Օգտվելով թշնամու խառնաշփոթությունից, մայոր Բաբայանի գումարտակը շրջանցում է թշնամուն և շեշտակի հարվածով նրան դուրս քշում այն բարձունքից, որը փակում էր Ֆրանկֆուրտի ճանապարհը հարավից։

Երիտասարդ հրամանատար Բաբայանի գումարտակի վճռական գործողությունների շնորհիվ մերկացվում է թշնամու պաշտպանության ձախ թևը, և հարևան ստորաբաժանումները հնարավորություն են ստանում անարգել շարժվել Լոսսով բնակավայրից դեպի արևմուտք։ Թշնամու կատաղի հակագրոհները չէին դադարում։ Անձնուրաց հրամանատարը չնայած վիրավորվում է, բայց շարքից դուրս չի գալիս։ Մայոր Բաբայանի գումարտակը իր հատվածում կոտրում է թշնամու դիմադրությունը և գործամասի մյուս ստորաբաժանումների շարքերում 1945 թվականի ապրիլի 22-ին մտնում Ֆրանկֆուրտ։ Այդ մարտերի ընթացքում Բաբայանի գումարտակը սպանում և վիրավորում է 600 հիտլերական, գերի է վերցնում 47 զինվոր ու սպա, ձեռք է գցում մեծ քանակությամբ ռազմավար։

Այս սխրագործությունների համար մայոր Բաբայանը հրամանատարության կողմից ներկայացվում է Սովետական Միության հերոսի կոչման, որը նրան շնորհվեց ՍՍՌՄ Գերագույն սովետի Նախագահության 1946 թվականի մայիսի 15-ի հրամանագրով։

*Պատերազմի հաղթական ավարտից հետո, 1947 թվականին Սովետական Միության հերոս Բաբայանը զորացրվում է, վերադառնում Հայաստան և մինչև այժմ աշխատում է Երևանում՝ սննդառի ցանցում։ Նա բազմիցս ընտրվել է շրջանային ու քաղաքային սովետի դեպուտատ և արժանացել է Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի պատվոգրին։*



# ԱՇՈՏ ՋՈՒՄՇՈՒԴԻ ԿԱՍՊԱՐՈՎ

## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Հեռավոր գործողության ավիացիայի սպայական կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել Սովետական Միության հերոսի կոչում, հանձնելով Լենինի շքանշան և «Ոսկի աստղ» մեդալ.*

*Մայոր* Աշոտ Ջումշուդի Կասպարովին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 5 նոյեմբերի 1944 թ.։*





Մայոր Աշոտ Ջամշուդի Կասպարովը սովետական բանակի հեռավոր գործողության ավիացիայի օդաչուներից է. նա գործող բանակում է եղել Հայրենական պատերազմի ամբողջ ընթացքում։ Նրա անունը հայտնի էր իրենց զորամասի սահմաններից շատ հեռու և բազմաթիվ պարտիզանական ջոկատներում։

Աշոտ Ջամշուդի Կասպարովը ծնվել է 1909 թվականին Լեռնային Ղարաբաղի Հադրութի շրջանի Դուդուկչի գյուղում, չքավոր գյուղացու ընտանիքում։ Աշոտը սովորել է գյուղական դպրոցում և միաժամանակ բատրակություն արել, իսկ 1926—1931 թվականներին աշխատել է Բաքվում, որպես սևագործ բանվոր։

1931 թվականին Աշոտը կանչվում է զինվորական պարտադիր ծառայության։ Նա սովորում է Բաքվի Օրջոնիկիձեի անվան հետևակային դպրոցում, որտեղ և 1932 թվականին ընդունվում է կոմունիստական պարտիայի շարքերը, այնուհետև, 1935 թվականին ավարտում է Օրենբուրգի օդաչուական դպրոցը։ Խարկովում, ապա Լենինգրադի մարզում ծառայելու ժամանակ նա կատարելագործում է թռիչքային վարպետությունը և խորանում շտուրմանի մասնագիտության մեջ։

Հայրենական մեծ պատերազմի առաջին օրերին Աշոտ Կասպարովն իր ինքնաթիռով ջախջախում էր հակառակորդի կենդանի ուժն ու տեխնիկան, ռմբակոծում նրա գնացքները և խանգարում առաջխաղացումը: Նա կռվել է Կալինինի, Վոլգոգրադի, Լենինգրադի, Արևմտյան, Բելոռուսական առաջին, երկրորդ և երրորդ ռազմաճակատներում: Բազմաթիվ հերոսական սխրագործություններ են գրանցված անվախ բազեի մարտական տարեգրության մեջ: Առանձնապես նա աչքի ընկավ հեռավոր գործողության թռիչքներում:

Ահա մի քանի էպիզոդ քաջարի օդաչուի մարտական գործողություններից:

Պատերազմի առաջին ամիսներն էին: 7-րդ ավիագնդում շտուրման կապիտան Աշոտ Կասպարովի ինքնաթիռի անձնակազմն ստանում է առաջադրանք ռմբակոծել և ոչնչացնել հակառակորդի տանկերի մի խումբ: Չնայած հիտլերականների հրետանային ուժեղ կրակին, ինքնաթիռը դուրս է գալիս նպատակակետի վրա և թափում առաջին ռումբերը: Իսկ հակառակորդի արկերը պայթում էին ինքնաթիռի մոտ և լուսավորում նրան: Այնուամենայնիվ ինքնաթիռը կարողանում է վեց անգամ հայտնվել տանկերի շարասյան վրա և թափել ռումբերի ամբողջ բեռը: Ուժեղ պայթյունները և հրդեհները վկայում էին խնդրի հաջող կատարման մասին:

Մի այլ անգամ ինքնաթիռի անձնակազմին առաջադրանք է տրվել ռմբակոծել Բոլխով քաղաքից դեպի Օրյոլ շարժվող գերմանական մոտոշարասյունը: Օդերևութաբանական աննպաստ պայմանները և թշնամու զենիթային հրետանու ուժեղ դիմադրությունը չկարողացան խանգարել ինքնաթիռին՝ հասնելու նպատակակետին: Նետած ռումբերի պայթյունները հակառակորդի մոտոշարասյան մեջ առաջացրին մեծ հրդեհ, որը երկար ժամանակ երևում էր բավական հեռվից և ուղեցույց ծառայում մեր մյուս ինքնաթիռներին՝ թշնամուն հարվածելու համար:

Կասպարովն առաջնակարգ շտուրման լինելուց բացի, լավագույն լուսանկարող էր: Նրա ղեկավարած ինքնաթիռը մի քանի տասնյակ թռիչք է կատարել հակառակորդի ստրատեգիական կետերը ռմբակոծելու և լուսանկարելու համար: Այդպիսի խնդրով ինքնաթիռը թռավ Լգով երկաթուղային հանգույցի ուղղությամբ: Դուրս գալով կայարանի վրա, Կասպարովն այնտեղ նկատեց հինգ երկաթուղային էշելոն և սկսեց նկարահանել: Մինչև առաջին ռումբերի ընկնելը, հիտլերականները կենդանության ոչ մի նշան ցույց չէին տալիս, որից հետո միայն սկսեցին գործել նրանց լուսարձակները և զենիթային հրետանին: Չնայած ինքնաթիռի մոտ արկերի պայթյուններին և ուժեղ լուսավորությանը, անձնակազմը, արհամարհելով մահվան սպառնալիքը, շարունակում էր կատարել առաջադրանքը: Ինքնաթիռը կրակի և լույսի գոտուց դուրս եկավ միայն այն ժամանակ, երբ բոլոր ռումբերն արդեն նետված էին նպատակակետի վրա: Լուսանկարները հաստատեցին, որ առաջադրանքը կատարված է գերազանց: Ինչպես հետո պարզեց հետախուզությունը, այնտեղ պայթեցվել էր ռազմամթերքի խոշոր պահեստ: Իսկ Օրյոլում մի գիշեր Կասպարովը հաջողությամբ

լուսանկարել է մեր մի քանի հարյուր ինքնաթիռների թռիչքի ռմբակոծության արդյունքները, որի համար արժանացել է Կարմիր դրոշի շքանշանի։

Սկզբում ինքնաթիռի, իսկ 1942 թվականի հուլիսից օդակի շտուրման Կասպարովը հաջողությամբ ռմբակոծել է ֆաշիստական զորքի անցումները Դնեպր գետի վրա։ Նա մեծ հաջողությամբ ռմբակոծեց նաև թշնամու տեխնիկայի ու զորքերի կուտակումները Վյազմա, Օրյոլ, Սմոլենսկ, Լգով, Շչիգրի, Ռոսլավլ, Բրյանսկ, Վիտեբսկ, Մինսկ, Գոմել երկաթուղային հանգույցներում և այլ կարևոր հենակետերում։

Հեռավոր գործողության 101-րդ ավիագնդի (1944 թվականի երկրորդ կեսից՝ հեռավոր գործողության 31-րդ գվարդիական Կրասնոսելսկյան կարմրադրոշ ավիագունդ) էսկադրիլիաներից մեկը, որի շտուրմանը մայոր Կասպարովն էր, բազմիցս ռմբակոծել է կարևոր ռազմաստրատեգիական հանգույցներ, ռազմական ուժի կուտակումներ և արդյունաբերական կենտրոններ՝ հենց թշնամու տերիտորիայում։ Էսկադրիլիան այդպիսի թռիչքներ է կատարել դեպի Հելսինկի, Կոտկա, Տիլզիտ, Ինստերբուրգ, Քյոնիգսբերգ՝ նյութական և տեխնիկական մեծ վնաս պատճառելով հակառակորդին։ Կասպարովը 16 անգամ մասնակցել է Բեռլինի ռմբակոծությանը։

Արդեն 1943 թվականի ապրիլից Կասպարովը էսկադրիլիայի շտուրմանն էր. նրան ճանաչում էին ամբողջ գնդում։ «Կասպարովի մարտական թռիչքները,—գրել է գնդի հրամանատարությունը,—աչքի են ընկնում մեծ էֆեկտիվությամբ և ճշգրտությամբ, որի մասին վկայում են հրկիզված տանկերի կույտերը, հազարավոր հիտլերականների դիակները, պայթեցված կամուրջները, էշելոնները և այրվող ինքնաթիռների ու ցիստեռնների վառ ջահերը»։

Մայոր Կասպարովը ճանաչված էր ո՛չ միայն գնդում։ Նրան գիտեին Ուկրաինայում և Բելոռուսիայում պայքարող բազմաթիվ պարտիզաններ, ինչպես Կովպակի, Վերշիգորայի, Կոզլովի, Սաբուրովի և մյուսների հրամանատարությամբ գործող ջոկատները, որոնց մոտ նա թռիչքներ էր գործում՝ ռազմամթերք մատակարարելու և այլ օգնություն ցույց տալու համար։ 1942 թվականի փետրվարյան մի գիշեր նրա ինքնաթիռը վթարային վայրէջք է կատարում Չերվոննոյե լճի (Բելոռուսական Մոզիր քաղաքի մոտ) սառույցի վրա և տեղափոխում պարտիզանների կողմից գերի վերցրած գերմանական երկու գեներալ։ Մոտ ութ տասնյակ թռիչքների ընթացքում, որից 28 անգամ իջել է պարտիզանների կողմից բացված վայրէջքի հրապարակներում, շտուրման Կասպարովի ինքնաթիռը ժողովրդական վրիժառուներին հասցրել է ավելի քան 90 տոննա ռազմամթերք և այլ անհրաժեշտ նյութեր, թշնամու խոր թիկունքից փոխադրել 420 վիրավոր պարտիզան և երեխա, փրկելով նրանցից շատերի կյանքը, ինչպես և այնտեղ է իջեցրել պարտիզանական շարժման շատ ղեկավարների։

Շտուրման, իրավամբ նաև պարտիզան, Կասպարովին Մինսկի առաջին պարտիզանական բրիգադայի հրամանատարությունը գրանցել է պատվավոր

պարտիզանների ցուցակում, իսկ պարտիզանական շարժման ուկրաինական շտաբը նրան պարգևատրել է Հայրենական պատերազմի պարտիզանի առաջին աստիճանի մեդալով։

Հայրենական պատերազմի ընթացքում Աշոտ Կասպարովի անձնական հաշվում գրանցվել է ավելի քան 300, հիմնականում գիշերային, մարտական թռիչք, որը կազմում է 2650 ժամ։ Նա թշնամու վրա նետել է 256 տոննա մահաբեր ռումբ, ոչնչացնելով բազմաթիվ հիտլերականների և հսկայական ռազմական տեխնիկա։

Բարձր գնահատելով էսկադրիլիայի շտուրման մայոր Աշոտ Կասպարովի մարտական ծառայությունները, ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահությունը 1944 թվականի նոյեմբերի 5-ի հրամանագրով նրան շնորհում է Սովետական Միության Հերոսի կոչում։

Գվարդիայի մայոր Կասպարովը պարգևատրվել է Լենինի, Կարմիր աստղի, Կարմիր դրոշի երկու, Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշաններով, Հերոսի «Ոսկե աստղ» և մի քանի այլ մեդալներով։

Կասպարովի հետ միասին մարտերում աչքի են ընկել նրա ինքնաթիռի անձնակազմի մյուս անդամները՝ ինքնաթիռի հրամանատար Ա. Լ. Նեգորեզովը, օդաչու Վ. Մ. Լոպուխովը, բորտմեխանիկ Ի. Կ. Սամիշևը, ռադիստ Դ. Ի. Տիմոշկինը, հրաձիգ Ա. Գ. Մեշկովը։

Հայրենիքի հանդեպ իր պարտքը պատվով կատարած կոմունիստ Կասպարովը պատերազմի ավարտումից հետո զորացրվում է և վերադառնում գյուղ։ Երկար տարիներ նա հայրենի կոլտնտեսության վարչության նախագահն էր։ Այժմ Աշոտ Կասպարովը աշխատում է Բաքվի գործարաններից մեկում՝ որպես ցեխի պետ։



# ԻՍԱՀԱԿ ՄԱՐԿՈՍԻ ՄԱՆԱՍՅԱՆ





## ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**Կարմիր բանակի սպայակազմին և շարքային կազմին Խորհրդային Միության Հերոսի կոչում շնորհելու մասին**

*Ֆիննական սպիտակգվարդիականության դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել* Խորհրդային Միության Հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկի աստղ» *մեդալ.*

*62. Կրտսեր հրամանատար* Իսահակ Մարկոսի Մանասյանին:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 7 ապրիլի 1940 թ.*



Ռուստամ Մարկոսի Մանասյանը ծնվել է 1917 թվականի հուլիսին Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Խերխան գյուղում, չքավոր գյուղացու ընտանիքում։

Թշվառությունն ու զրկանքը Մարկոս Մանասյանի բազմանդամ ընտանիքի անբաժան ուղեկիցն էին եղել, որոնցից նրանք ազատվեցին միայն սովետական կարգերի հաղթանակի շնորհիվ։

1927 թվականին Մանասյանն ընդունվում է գյուղի ոչ-լրիվ միջնակարգ դպրոցը և 1933 թվականին հաջողությամբ ավարտում այն։ Ընտանիքին օգնելու համար 1934 թվականին նա մեկնում է Բաքու և աշխատանքի ընդունվում որպես ատաղձագործի աշակերտ և շուտով դառնում որակյալ բանվոր։

Մանասյանը 1935 թվականին մտնում է կոմերիտմիության շարքերը և նույն թվականին զորակոչվում բանակ։ 1939 թվականին ավարտելով զինվորական կրտսեր հրամանատարների դպրոցը, նա նշանակվում է 4-րդ հրաձգային դիվիզիայի 39-րդ գնդում դասակի հրամանատար։ Այստեղ էլ ընդունվում է պարտիայի շարքերը։ Կոմունիստ հրամանատարը 1939 թվականի նոյեմբերին իր դասակով մասնակցում է Արևմտյան Բելոռուսիայի և Արևմտյան Ուկրաինայի ազատագրմանը, իսկ նույն թվականի վերջերին, սովետա-ֆիննական պատե-

բազմին։ Մարտերը դաժան ու ծանր էին։ Հակառակորդը մոլեգին կերպով դիմադրում էր։ Հերոսաբար զոհվում է գնդացրորդ, նշանառու Շանը։ Իսկույն փոխարինելով իր մարտական ընկերոջը, Մանասյանը ոչնչացնում է թշնամու երկու սնայպերական կետ և գերում հակառակորդի մեկ զինվոր։ Սուանտո-Ցարվ լճի վրա մղվող մարտերում թշնամին լիակատար պարտություն է կրում։

Այնուհետև գնդին տրվում է նոր առաջադրանք. գրավել Կիրկ կոչվող բարձունքը, որը, ոչ մեծ լեռնային զանգված էր, ծածկված խիտ անտառով։ Նրա առջևում փռված էր մի հարթություն, որի վրայով անցնում էր երկաթգիծը։ Բարձունքից ոչ հեռու գտնվում էր մի եկեղեցի և գերեզմանատուն, որտեղ դիրքավորվել էին ֆինները և անընդհատ կրակի տակ էին պահում բարձունքից ոչ հեռու գտնվող գնդի շտաբը։ Թշնամուն պատասխան կրակով հարվածում է շտաբը պաշտպանող մեր գնդացիրը։ Հակառակորդը օգտվելով իր հարմար դիրքից, շարքից հանում է գնդացրորդին։ Ստեղծվում է ծանր դրություն։ Անհրաժեշտ էր անհապաղ հեռացնել սպառնացող վտանգը։ Այդ պահին գնդացրային վաշտի հրամանատար Մանասյանը առաջադրանք է ստանում՝ խափանել հակառակորդի կրակակետը։ Խիզախ հրամանատարը, առանց վարանելու, սողեսող մոտենում է լռած գնդացրին։ Կարգավորելով այն, նա տեղատարափ կրակով ոչնչացնում է թշնամու կրակակետը։

Գունդը համառ մարտեր մղելով, դանդաղորեն առաջանում էր դեպի բարձունքը։ Հրետանային նախապատրաստությունից հետո նրա ստորաբաժանումները անցնում են հարձակման։ Գրոհայինների շարքերում էր գտնվում Մանասյանը՝ գնդացրային իր վաշտով։

Մանասյանի հրամանատարությամբ գործող գնդացրային վաշտը մյուս ստորաբաժանումների հետ միասին հիմնովին ամրանում է բարձունքի վրա։ Ահա այդ ժամանակ, դահուկավոր կամավորների մի ջոկ, հատուկ խնդիր ունենալով, անցնում է ռազմաճակատի գիծը, որպեսզի ներթափանցի թշնամու թիկունքը։ Հակառակորդը գլխի ընկնելով, ջանում է օղակել նրան։

Մանասյանը, հետևելով դահուկավորների շարժմանը և կռահելով մոտալուտ վտանգը, իր վաշտի անընդմեջ կրակով հարվածում է թշնամուն և դահուկավորներին ազատում վերահաս վտանգից։

Կիրկ բարձունքի գրավման և այնտեղ ամրանալու ժամանակ մարտական առաջադրանքները հմտորեն կատարելու, անձնական խիզախություն ցուցաբերելու համար ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1940 թվականի ապրիլի 7-ի հրամանագրով Իսահակ Մարկոսի Մանասյանին շնորհվում է Սովետական Միության Հերոսի բարձր կոչում։

Ֆիննական պատերազմի հաղթական ավարտից հետո Սովետական Միության Հերոսը գործուղվում է Գորկի՝ Մ. Վ. Ֆրունզեի անվան ռազմա-քաղաքական ուսումնարանում սովորելու։ Ավարտելուց հետո, 105-րդ հրաձգային գնդում նա նշանակվում է մարտկոցի կոմիսար, որտեղ ծառայում է մինչև 1942 թվականի փետրվար ամիսը։

1942 թվականի մայիսից-նոյեմբեր ամիսներին Մանասյանը աշխատում է Բաքվի № 12—88 հոսպիտալում որպես պետ, իսկ 1943 թվականի հունիսից Երևանի № 372 հոսպիտալի պետի քաղաքական գծով տեղակալ։ Նա իր ջանքերը, կազմակերպչական ընդունակությունները չի խնայում վիրավոր ռազմիկների բուժման, նրանց մարտունակությունը վերականգնելու և անձնակազմի քաղաքական-պարտիական դաստիարակության գործը բարձր մակարդակի վրա դնելու համար։

1943 թվականի հուլիսին Մանասյանը գործուղվում է Թբիլիսի, «Վիստրել» դասընթացներում սովորելու։ Այն ավարտելուց հետո, 1944 թվականին նշանակվում է հրաձգային գումարտակի հրամանատար 26-րդ հրաձգային դիվիզիայի 976-րդ գնդում, որտեղ ծառայում է մինչև 1946 թվականը։ 1947 թվականին Մանասյանը զորացրվում է սովետական բանակի շարքերից, որից հետո ավարտում է պարտիական դպրոցը և 1949—1952 թվականներին աշխատում Բաքվի Լենինի անվան տեքստիլ կոմբինատում որպես դիրեկտորի տեղակալ։ Սկսած 1952 թվականից Մանասյանը աշխատում է Ադրբեջանական ՍՍՌ հասարակական կարգի պահպանման մինիստրությունում։



# ՀԱԿՈԲ ԲԱԼԱԲԵԿԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ

## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել* Սովետական Միության հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

*123. Կապիտան Հակոբ Բալաբեկի* Մանուկյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Ն. ՇՎԵՐՆԻԿ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 15 մայիսի 1946 թ.:*





Հայրենական պատերազմում, սովետական անվանի օդաչուների շարքում, խիզախ բազեի համբավ ձեռք բերեց Հակոբ Բաղարեկի Մանուկյանը։ Նա ծնվել է 1916 թվականին Եկատերինոդարի երկրամասի (այժմ Կրասնոդար) Արմավիր քաղաքում, բատրակի ընտանիքում։

Ութ տարեկան հասակում Հակոբն ընդունվում է Արմավիրի Մ. Նալբանդյանի անվան հայկական դպրոցը։ 1931 թվականին Մանուկյանների ընտանիքը տեղափոխվում է Երևան։ Հակոբն ընդունվում է հացի տրեստին կից Ֆաբգործուսում սովորելու։ 1933 թվականին ավարտելով այն, աշխատանքի է ընդունվում Երևանի հացի գործարանում՝ որպես վարպետ։

1935 թվականին Մանուկյանը ՀամԼԿԵՄ Կենտրոնական կոմիտեի կոչով գործուղվում է սովորելու Սևաստոպոլի Ալ. Մյասնիկյանի անվան Կարմրադրոշ առաջին օդաչուական դպրոցը։ Ավարտելով այն, նա 1937 թվականին նշանակվում է Հեռավորարևելյան ռազմաօդային նավատորմում որպես օդաչու, իսկ որոշ ժամանակ անց, էսկադրիլիայի հրամանատար։

1938 թվականին Հակոբ Մանուկյանը մասնակցում է ճապոնական միլի-

տարիստների դեմ Խասան լճի շրջանում մղված կռիվներին։ Մարտերում աչքի ընկնելու համար նրա անունը արձանագրվում է ՀամԼԿԵՄ-ի պատվո գրքում։

1942 թվականի վերջերին Մանուկյանը մեկնում է Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատ և մասնակցում Կովկասի համար մղված մարտերին։

1943 թվականի ապրիլի 27-ին սովետական զորամասերը Կուբանում ուժեղ մարտեր էին մղում հակառակորդի դեմ։ Մեր ինքնաթիռները պաշտպանում էին ցամաքային զորքերի մարտակարգերը։ Օդային մարտերից մեկում լեյտենանտ Մանուկյանը մարտնչում էր թշնամու երեք ինքնաթիռների դեմ։ Քաջ օդաչուն չկորցնելով իրեն, նա է մղում հակառակորդի ինքնաթիռները։

Մարտից դուրս գալու պահին, մեր գրոհիչների վրա հարձակվում է գործում «Մեսսերշմիտների» նոր քառյակ։ Անսպասելիորեն հակառակորդի ինքնաթիռը հայտնվում է Մանուկյանի ինքնաթիռի թիկունքում, բայց խիզախ օդաչուն ճարպիկ շրջադարձ կատարելով, ինքն է դուրս գալիս թշնամու թիկունքը։ Հակառակորդը փորձում է կտրուկ շարժումով վեր խոյանալ, բայց այդ նրան չի հաջողվում, Մանուկյանի դիպուկ համազարկից ֆաշիստական ինքնաթիռը այրվելով, վայր է ընկնում։ Դա լեյտենանտ Մանուկյանի առաջին հաղթանակն էր։

Հաջորդ մարտում մեր կործանիչները հանդիպում են քանակով գերակշռող հակառակորդին։ Չնայած դրան, նրանք համարձակորեն մարտի են մտնում։ Այդ մարտում նորից է աչքի ընկնում լեյտենանտ Մանուկյանը։ Արհամարհելով սպառնացող վտանգը, նա հարձակվում է թշնամու վրա։ Այդ ժամանակ Մանուկյանը վիրավորվում է, իսկ ինքնաթիռը թեթև վնասվածք է ստանում։ Հաղթահարելով ցավերը, նա շարունակում էր մարտը։ Հակառակորդի ինքնաթիռներից մեկը ճակատ առ ճակատ գրոհում է Մանուկյանի ինքնաթիռի վրա։ Համարձակ օդաչուն դիպուկ կրակով ցած է գցում ֆաշիստական ինքնաթիռը։

Մանուկյանի այդ օրվա մարտական սխրագործության մասին սովետական ինֆորմբյուրոյի 1943 թվականի մայիսի 4-ի երեկոյան հաղորդագրության մեջ ասված է. «Կործանիչ օդաչու Մանուկյանը ուղեկցելով մեր ռմբակոծիչներին՝ հանդիպեց գերմանական մի խումբ կործանիչների։ Նրանց հետ մարտի բռնվեց և խփեց երկու ինքնաթիռ»։

Էսկադրիլիայի հրամանատար Մանուկյանի անձնուրաց սխրագործությունը բարձր գնահատվեց հրամանատարության կողմից, որի համար նա պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով։

Մանուկյանը Կուբանում կատարել է մարտական 30 թռիչք, մարտերում ցած է գցել թշնամու վեց կործանիչ և մարտական փայլուն հաջողությունների համար 1943 թվականի հունիսի 2-ին արժանանում է Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանի։ Նույն թվականին խիզախ օդաչուն ընդունվում է Սովետական Միության կոմունիստական պարտիայի շարքերը։

1943 թվականի սեպտեմբերին Հարավային Ուկրաինայում կապիտան Մա-

նուկյանի հրամանատարությամբ թռչող վեցյակը 2000—2500 մետր բարձրությունից պաշտպանում է մեր ցամաքային զորքերի մարտական կարգերը: Շուտով օդաչուները նկատում են, որ 300 մետր բարձրության վրա ֆաշիստական մի ինքնաթիռ մոտենում է իրենց խմբին: Կապիտան Մանուկյանը լեյտենանտ Նովիկովին հրամայում է գրոհել հակառակորդի ինքնաթիռի վրա: Օդաչու Նովիկովը վայրասլաց գրոհով վայր է գցում այն: Սակայն, հենց այդ պահին երևում է թշնամու ինքնաթիռների մի խումբ, որը թռչում էր դեպի հյուսիս-արևմուտք: Անվեհեր հրամանատարի գլխավորությամբ վեցյակը խոյանում է թշնամու ռմբակոծիչների վրա: Թշնամու առաջին ռմբակոծիչին դիպուկ հերթադարկով վայր է գցում Մանուկյանը, երկրորդին՝ լեյտենանտ Նովիկովը, երրորդին՝ կրտսեր լեյտենանտ Շպունյակովը: Էսկադրիլիայի օդաչուները մարտական առաջադրանքը հաջողությամբ կատարելով, առանց կորստի վերադառնում են օդանավակայան:

1944 թվականի փետրվարի 25-ին Սիվաշի անցման շրջանում կապիտան Մանուկյանին և ավագ լեյտենանտ Կուլիկովին առաջադրանք է տրվում՝ օդ բարձրանալ և գերմանացիների կողմից գրաված տերիտորիայի վրա փնտրել կապիտան Ռուդչենկոյի ինքնաթիռը, որը չէր վերադարձել: 2500 մետր բարձրության վրա նրանք հանդիպում են ֆաշիստական ինքնաթիռների: Չնայած հակառակորդի քանակական գերակշռությանը, սովետական օդաչուները մարտի են բռնվում և վայր գցում երկու ռմբակոծիչ և երկու կործանիչ:

Հրամանատարությունը բարձր գնահատելով Մանուկյանի մատուցած ծառայությունները, 1944 թվականին նրա կուրծքը զարդարում է Կարմիր դրոշի ևս երկու շքանշանով, շնորհելով մայորի կոչում:

1944 թվականի մայիսի սկզբներին Սևաստոպոլը հակառակորդից վերջնականապես ազատագրելու օրերին, երբ խիզախ բազեն հակառակորդի թվով գերազանց ինքնաթիռների դեմ օդային կատաղի մարտ էր մղում, ծանր վիրավորվում է: Չնայած արյունաքամ լինելուն և ուժեղ ցավերին, նա կարողանում է ինքնաթիռն անվթար հասցնել օդանավակայան: Բուժվելուց հետո նա մեկնում է նույն ավիացիոն զորամասը և Բելոռուսական առաջին ռազմաճակատում ակտիվ կերպով մասնակցում մի շարք օդային մարտերին, կատարելով մարտական 27 թռիչք: Մայոր Մանուկյանը մասնակցում է նաև Բեռլինի գրոհին և աչքի ընկած սխրանքների համար պարգևատրվում Ալեքսանդր Նևսկի շքանշանով:

Խիզախ օդաչու Մանուկյանը Հայրենական պատերազմի ռազմաճակատներում կատարել է 273 մարտական թռիչք: 89 օդային մարտում նա վայր է գցել հակառակորդի 26 ինքնաթիռ, օդանավակայաններում ոչնչացրել է 11 ինքնաթիռ: Նրա մարտական հաշվում գրանցված է նաև ոչնչացված 2 շոգեքարշ, 5 վագոն, 19 ավտոմեքենա՝ ռազմական բեռով, 3 պահեստ՝ ռազմական հանդերձանքով, 9 զենիթային կրակակետ, մոտ 179 զինվոր ու սպա:

Մանուկյանի ղեկավարած էսկադրիլիան կատարել է ավելի քան 2000

մարտական թռիչք, օդային մարտերում վայր է գցել 140 ինքնաթիռ։ Էսկադրիլիայի խիզախ օդաչուներից 5-ը՝ կապիտան Սերգեյ Շպունյակովը, ավագ լեյտենանտ Պավել Գարիչինը, կապիտան Վլադիմիր Եգորովը, կապիտան Ալեքսեյ Դուդինը և Միխայիլ Պիվովարովը արժանացել են Սովետական Միության Հերոսի կոչման։

Գերմանական օկուպանտների դեմ մղած պայքարում հերոսություն, արիություն և խիզախություն ցուցաբերելու և իր ստորաբաժանումը հմտորեն ղեկավարելու համար մայոր Հակոբ Բալաբեկի Մանուկյանին ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1946 թվականի մայիսի 16-ի հրամանագրով շնորհվում է Սովետական Միության Հերոսի կոչում։

Պատերազմից հետո մինչև 1949 թվականը Հակոբ Մանուկյանը ծառայում էր Բեռլինում գտնվող սովետական օկուպացիոն զորամասերում։ Նույն թվականի փետրվարին նա զորացրվում է և մեկնում Խարկով։ 1952 թվականին Մանուկյանը տեղափոխվում է Երևան և սննդամթերքների տեսչությունում նշանակվում հրահանգիչ, իսկ 1957 թվականից մինչև այժմ հանդիսանում է Հայաստանի ավիացիոն սպորտային ակումբի պետը։



# ԱԼԵՔՍԱՆԴՐ ԻՈՍԻՖԻ ՄՈՒՐԴՈՒԿՅԱՆ



## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի գեներալներին, սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել* Սովետական Միության հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ.*

*1. Մայոր* Ալեքսանդր Իոսիֆի Մուրդուկյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 31 մայիսի 1945 թ.*





Գվարդիայի մայոր Ալեքսանդր Իոսիֆի Մուրդուկյանը (Մուրդուկովը) ծնվել է 1912 թվականին Ստավրոպոլի երկրամասի Բուդյոնովսկ գյուղաքաղաքում։ Նրա հայրը՝ Հովսեփ Մուրդուկյանը, Արևմտյան Հայաստանի Սվազ քաղաքից էր։ 1896 թվականին սուլթանական Թուրքիայի կազմակերպած հայկական կոտորածների ժամանակ նա իր ընտանիքով գաղթում է Ռուսաստան և բնակություն հաստատում Կուբանում։

Ալեքսանդրը 1923 թվականին սովորում է Բուդյոնովսկի № 4 միջնակարգ դպրոցում։ Դեռ ուսումը չավարտած մահանում են նրա ծնողները։ Որբացած պատանին հարկադրված է լինում աշխատանքի մտնել տեղի սայլապանների արտելում և սովորել միայն ազատ ժամերին։

1934 թվականին Մուրդուկյանը կանչվում է սովետական բանակ հերթական ծառայության։ Բանակը դառնում է նրա հարազատ ծնողը, դաստիարակը։ Այստեղ Ալեքսանդրն ընդունվում է ՀամԼԿԵՄ, իսկ 1939 թվականից նաև Սովետական Միության կոմունիստական պարտիայի շարքերը։ Շարքային բանակայինից աճում, հասնում է սպայական աստիճանի և իր ամբողջ կյանքը նվիրում զինվորական ծառայության։

Ալեքսանդրը սպայական առաջին կոչումը ստանում է ռազմա-քաղաքա-

կան դպրոցում, որն ավարտելուց հետո նշանակվում է նախ դիվիզիոնի քաղղեկ, իսկ Հայրենական պատերազմի սկզբից՝ Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիայի հրետանային գնդի կոմիսար և այդ դիվիզիայի հետ 1942 թվականի օգոստոսին մեկնում ռազմաճակատ։

Կովկասի հերոսական պաշտպանության ժամանակ, Գրոզնու տակ սկսված մարտերի առաջին օրերից Մուրղուլյանը իրեն դրսևորում է որպես խիզախ բոլշևիկ-քաղաշխատող։ Հարձակման ընթացքում Մոզդոկի, Մալգոբեկի և Կրասնոդարի մարտերում նա հմտորեն ապահովում է գնդի պարտիական ու քաղաքական ամբողջ աշխատանքը։

Ռազմաճակատում Ալեքսանդրը բուռն ցանկություն է հայտնում քաղաշխատանքից հրամանատարական աշխատանքի անցնելու մասին։ Դիվիզիայի հրամանատարությունը ընդառաջելով նրան՝ ուղարկում է հրետանավորների կարճատև կուրսեր, որն ավարտելուց հետո, 1943 թվականի հոկտեմբերից նշանակվում է հրետանային դիվիզիոնի հրամանատար և գործուղվում Ուկրաինական առաջին ռազմաճակատ, 132-րդ դիվիզիայի 425-րդ հրետգունդը։

Մուրղուլյանն իր դիվիզիոնով մասնակցում է Ուկրաինայի, Բելոռուսիայի, Լեհաստանի ազատագրմանը։ Նրա հրետանային դիվիզիոնի համար առանձնապես նշանակալից եղան Կիևի ազատագրման համար մղած մարտերը։ Հրամանատարության առաջադրանքով դիվիզիոնը մասնակցելով ուկրաինական շրջանային կենտրոնի՝ Մալինի և ապա Ռադոմիշլ քաղաքի ազատագրմանը, դուրս է գալիս թշնամու թիկունքը և մեծ կորուստներ պատճառում նրան։ Դիվիզիոնը կտրում է Ժիտոմիր-Կիև ճանապարհը և համառ դիմադրությամբ իր ձեռքում պահում այն, հիտլերականներին զրկելով ռազմական համալրումներ ու սպառազինություն ստանալու հնարավորությունից։ Կիևի ազատագրումից հետո դիվիզիոնը մասնակցում է Կովել, Մոզիր-Կալինկովիչ քաղաքների ու այլ բնակավայրերի գրավմանը և մի քանի անգամ արժանանում գերագույն գլխավոր հրամանատարության շնորհակալությանը։

1944 թվականի հունվարին մայոր Մուրղուլյանը իր զորամասով փոխադրվում է Բելոռուսական առաջին ռազմաճակատ և ակտիվ գործունեությամբ աչքի է ընկնում Վիսլայի ափին գերմանացիների պաշտպանության ամուր հենակետ Պրագա ամրոցի և ապա Լեհաստանի մայրաքաղաք Վարշավայի ազատագրման մարտերում։

Այդ օրերին, դեռևս մինչև Լեհաստան հասնելը բելոռուսական անտառներով շարժվելիս, մի մեծ բնակավայրի շրջանում, Մուրղուլյանի դիվիզիոնը անակնկալ կերպով դուրս է գալիս թշնամու զորքերի մի խոշոր խմբավորման թիկունքը։ Հիտլերականները նկատելով, որ հրետանավորները հետևակի կողմից պաշտպանված չեն, մտածում են ծուղակի մեջ գցել նրանց, խլել հրանոթները և բոլորին գերի վերցնել։ Սկսվում է անհավասար ու կատաղի գոտեմարտ։ Հանկարծակիի եկած հրետանավորները, խիզախ հրամանատարի ղեկավարությամբ, չկորցնելով իրենց՝ բաց դիրքերից ուղիղ նշանառությամբ ար-

կերի տեղատարափ կրակ են բացում թշնամու վրա։ Նրանք գործի են դնում անձնական զենքերը՝ հրացանները, նռնակները, ավտոմատները և հակագրոհների դիմելով, ոչնչացնում են հակառակորդի մեծ քանակությամբ տեխնիկա, 200 զինվոր ու սպա և գերի են վերցնում 29 հոգու։

Հաջողությամբ դուրս գալով այս փորձությունից, նրանք հերոսության նոր օրինակ են ցույց տալիս գերմանական զորքերի մի այլ խմբավորման լիկվիդացնելու օպերացիայում։ Մարտական առաջադրանքի համաձայն Մուրդուկյանի հրետանավորները, հետևազորին օժանդակելու ժամանակ, անտառի բացատում անակնկալ կերպով նորից հանդիպում են մոտ հազար հոգուց բաղկացած ֆաշիստական զորամասի, որը շարժվում էր երկու ծանր տանկերի և 6 զրահամեքենաների ուղեկցությամբ։ Հրետանավորները Մուրդուկյանի հրամանով արագ վերադասավորվելով և հարմար կրակադիրք ընտրելով՝ հրանոթներից ահեղ կրակ են թափում հակառակորդի վրա։ Ահա հրկիզվում է ֆաշիստական առաջին տանկը, իսկ հետևից խփվում են նաև զրահամեքենաները և 5 ավտոմեքենա։ Հրետանավորները այնուհետև իրենց կրակն ուղղում են երկրորդ տանկի վրա։ Հիտլերական տանկիստները այլևս չդիմանալով՝ լյուկի կափարիչը բաց են անում և հանձնվելու սպիտակ դրոշ բարձրացնում։ Այդ օրը մարտի դաշտում թշնամին կորցնում է մոտ 550 մարդ, որից 350 հոգի գերի են հանձնվում իրենց երկու սպաների գլխավորությամբ։ Մուրդուկյանի մարտիկները սարքին վիճակում ռազմավար են վերցնում մեկ տանկ, տասը ավտոմեքենա և ռադիոկայաններ, որից հետո հաջող մարտերով շարժվում դեպի արևմուտք։

Դիվիզիոնը ավելի խոշոր հաղթանակներ է ձեռք բերում 1945 թվականի փետրվար-մայիս ամիսների ընթացքում՝ Գերմանիայի տերիտորիայում մղած մարտերում։ Նա միավորման զորամասերի հետ փոխգործողությամբ աչքի ընկավ Պոմերանիայում՝ հակառակորդի կոմունիկացիաների կարևոր հանգույց ու պաշտպանության ուժեղ հենակետ Դեյչ-Կրոնե, Ալտդամ քաղաքները գրավելու, ինչպես նաև Շտարգարդից արևելք հիտլերականների պաշտպանությունը ճեղքելու, Կոլբերգի շրջանում Բալթիկ ծովի ափը դուրս գալու և վերջապես Օդերը գետանցելու մարտերում։

Մուրդուկյանի և իր դիվիզիոնի տարած հաղթանակների մեջ անթառամ փառքի պսակ հանդիսացան Բեռլինի գրավման համար մղած մարտերը։

Բեռլինի շրջապատման ժամանակ վերադաս հրամանատարության կողմից Մուրդուկյանի զորամասին խնդիր էր տրված առաջինը թափանցել Բեռլինի արվարձանային Շիլդով քաղաքը։ Հրետանավորները իրենց հուժկու կրակով հետ մղելով հակառակորդի տանկային գրոհները, ոչնչացրին 150 գերմանական զինվոր ու սպա և 85-ին գերի վերցրին։ Նրանք իրենց հմուտ հրամանատարի ղեկավարությամբ նշանակված ժամանակին կատարեցին մարտական առաջադրանքը։ Այդպես նրանք մասնակցեցին նաև Շպանդաու և Պոտսդամ քաղաքների գրավմանը։ Պոտսդամի օդանավակայանում խլեցին 40 ինքնաթիռ

և շատ սպառազինություն։ Այնուհետև հաղթանակները հաջորդեցին մեկը մյուսին։ Ապրիլի 29-ին Գատով գյուղի անտառում հրետանավորները, շրջապատելով ֆաշիստական ջախջախված մի գնդի մնացորդներին, նրանցից խլում են գնդի դրոշակը։ Հիտլերականները հինգ անգամ հակագրոհի են նետվում, դրոշակը հետ վերցնելու համար, բայց արդյունքի չեն հասնում։ Կորցնելով ևս վեց զենիթային սարք, ավելի քան 100 պանցեր-ֆաուստ և 170 սպանված, նրանք հետ են շպրտվում։ Այդ մարտում մեր հրետանավորները գերի են վերցնում գերմանական 180 զինվոր ու սպա՝ ֆաշիստական գնդի հրամանատարի հետ միասին։

Մայիսի 2-ին Վիլհելմշտադում ճարպիկ շրջանցումով դիվիզիոնը ֆաշիստական կենտրոնական խմբից անջատում է մոտ 500 հիտլերականի, փողոցային մարտում հրետանային ահեղ կրակով ավերում 18 տուն, որտեղից հիտլերականները գնդացրային ու ֆաուստային կրակ էին բացում։ Այդ անջատված խմբից 220 մարդ գերի են հանձնվում, իսկ մնացածները դիմադրության ընթացքում ոչնչացվում։

1945 թվականի մայիսի 2-ին սովետական բանակը գրավեց ֆաշիստական Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինը։

Բեռլինի գրավումից հետո էլ Մուրադովյանի ստորաբաժանումը շարունակում էր իր մարտական գործողությունները։ Նրա հրետանավորները մայիսի 3-ին խփում են տասնյակ տանկեր ու զրահատրանսպորտյորներ, ոչնչացնում մոտ 100 հիտլերական և գերի վերցնում 250 զինվոր, որոնք ջախջախված միավորումներից անջատվելով՝ գաղտագողի թափանցել էին մեր զորքերի թիկունքը։ Դիվիզիոնը իր մարտական գործողությունները ավարտում է մայիսի 9-ին՝ Էլբայի ափերին։

Այս խոշոր հաղթանակների համար վերադաս հրամանատարության միջնորդությամբ ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահությունը 1945 թվականի մայիսի 31-ի հրամանագրով Սովետական Միության հերոսի կոչում շնորհեց դիվիզիոնի հրամանատար մայոր Ալեքսանդր Իսաքի Մուրադովյանին։ Հայրենիքը նրա կուրծքը զարդարել է Լենինի, Հայրենական պատերազմի առաջին աստիճանի և Բոգդան Խմելնիցկու շքանշաններով, հերոսության «Ոսկե աստղ» և մի շարք մեդալներով։

Սովետական Միության հերոս Ա. Ի. Մուրադովյանն այժմ գտնվում է սովետական բանակում և պատվով շարունակում է կատարել իր պարտքը Սովետական Հայրենիքի հանդեպ։



# ԼԱԶԱՐ ՍԵՐԳԵՅԻ ՉԱՊՉԱԽՈՎ




## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

### Կարմիր բանակի պետկազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքների օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել Սովետական Միության հերոսի կոչում, հանձնելով Լենինի շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ.*

*17. Գվարդիական կապիտան* Լազար Սերգեյի Չապչախովին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 21 հուլիսի 1942 թ.։*





Լազար Չափչախյանը Հայրենական պատերազմի Սովետական Միության առաջին հայ հերոսն է։

Լազար Չափչախյանը ծնվել է 1911 թվականի մարտի 6-ին Ռոստովի մարզի Բոլշիե-Սալի գյուղում։ Միջնակարգ և բարձրագույն կրթությունն ստանում է Ռոստովում։ Շատ երիտասարդների նման նրա հոգում էլ ամուր նստել էր օդաչու դառնալու միտքը։ Դասերից հետո, ազատ ժամերին նա հաճախում էր Ռոստովի ավիաակումբը։

1933 թվականին Չափչախյանը մեկնում է սովետական բանակ՝ պարտադիր զինվորական ծառայության։ Մի քանի տարի անց նա արդեն ավիացիայի լեյտենանտ էր։ Լազարը ոչ միայն լավագույն օդաչու էր, այլև ակտիվ կոմերիտական։ Երիտասարդ օդաչուն 1936 թվականին ընտրվում է ՀամԼԿԵՄ 10-րդ համագումարի պատգամավոր։

Կոմերիտական աշխատանքներում մեծ փորձ ձեռք բերած Լազարը 1937 թվականին ընդունվում է ՍՄԿՊ շարքերը։ Չափչախյանը նոր էր ավարտել Խարկովի ավիաուսումնարանի կոմիսարների դասընթացները, երբ սկսվեց սովետա-ֆիննական պատերազմը։ Երիտասարդ կոմունիստը այդ պատերազմում

ստացավ իր առաջին մարտական մկրտությունը, արժանացավ Կարմիր դրոշի շքանշանի։

Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրից 38-րդ կործանիչ ավիագնդի կազմում լեյտենանտ Չափչախյանի ինքնաթիռը Արևմտյան Ուկրաինայում սարսափ էր տարածում ֆաշիստական զավթիչների վրա։ Կարճ ժամանակում անվախ օդաչուն արժանանում է հրամանատարության գովասանքին։ Նրա մասին հրամանատարության տված բնութագրում գրված է. «Մարտական առաջադրանքի ամբողջ ժամանակամիջոցում ընկ. Չափչախովն իրեն ցուցաբերել է որպես անվախ կործանիչ-օդաչու։ Օդային կռիվներում ցույց է տվել խիզախություն և հերոսություն։ Իր անվախությամբ նա միշտ ոգեշնչում է էսկադրիլիայի օդաչուներին»։

Գնալով ավելանում էին Լազարի մարտական թռիչքները, նրա հաշվում անընդհատ գրանցվում էին թշնամու ոչնչացված նոր ինքնաթիռներ։ Խիզախության և արիության համար 1941 թվականի դեկտեմբերին նա արժանանում է կառավարական բարձր պարգևի՝ Լենինի շքանշանի և միևնույն ժամանակ ստանում գումարտակային կոմիսարի կոչում։ Նրա ղեկավարած զորամասի օդաչուներն իրենց հրամանատարի օրինակով մտնում են ամենաթեժ մարտերի մեջ։

Լազար Չափչախյանը համարձակ ու պահանջկոտ քաղաշխատող-հրամանատար լինելու հետ մեկտեղ, հոգատար ընկեր էր։ 1942 թվականի հունվարյան մի առավոտ օդ է բարձրանում հրամանատարի ինքնաթիռը։ Շուտով հայտնի է դառնում, որ գումարտակային կոմիսարը թռել է հոսպիտալ՝ իր վիրավոր մարտիկներին տեսնելու։ Կարճ ժամանակից հետո Չափչախյանը նորից զորամասում է և պատրաստվում է մարտական նոր թռիչքի։

Մարտերը մղվում էին Ստարայա Ռուսիայի շրջանում։

Հունվարի 18-ին Չափչախյանը օդաչուներ Բակալի և Նաումովի հետ միասին, Մեդվեդևոյի շրջանում պաշտպանում էր մեր ցամաքային ուժերի տեղաշարժերը։ Նա շատ հաճախ օդից օգնում էր մեր զորամասերին և միշտ խիզախորեն խափանում թշնամու դիտավորությունները։ Այդպիսի մի առաջադրանքի կատարման ժամանակ նա հանդիպում է երկու Մեսսերշմիդտի։ Սկսվում է օդային մարտ, որը ավարտվում է ֆաշիստական ինքնաթիռների կործանումով։

Մեկ այլ անգամ էսկադրիլիայի հրամանատար Շեպետովը գումարտակային կոմիսար Չափչախյանին մարտական առաջադրանք է տալիս՝ իր խմբով անցնել թշնամու թիկունքը և կործանիչ հարվածներով շարքից հանել նրա մոտոմեքենայացված շարասյունը։ Թռիչքից առաջ կոմիսարին է մոտենում երիտասարդ օդաչու Տուրկինը՝ խնդրելով իրեն ևս թույլատրել այդ խմբի հետ օդ բարձրանալու։ Կոմիսարը համաձայնում է։ Շուտով խիզախ բազեները՝ Յակիմովը, Գորբունովը, Վիշագինը, Տուրկինը և մյուսները, հրամանատարի առաջնորդությամբ գրոհում են թշնամու շարասյան վրա։ Հակառակորդի զենիթավորներն ուժեղ կրակ են բացում գրոհող կործանիչների վրա։

Կռվի թեժ պահին զենիթային կրակով շարքից դուրս է գալիս Տուրկինի ինքնաթիռը։ Կոմիսարը նկատում է, որ Տուրկինի մեքենան կորցրեց հավասարակշռությունը։ Մինչ նա մտածում էր օգնության հասնել մարտական ընկերոջը, հանկարծ նկատում է, որ Տուրկինի սավառնակն ուղղություն է վերցրել դեպի խճուղին, որտեղ կենտրոնացված էին հակառակորդի մեծ թվով տանկեր և բենզինի ցիստեռններ։ Մեկ ակնթարթ անց լսվում է խլացնող պայթյուն և առաջանում է բոցի հսկայական լավա։

Իր մարտիկի հերոսական մահից հետո, հրամանատարը մնացած մեքենաները մոտեցնում է շարասյանը և փոքր տարածությունից սկսում բնաջընջել թշնամուն։

Թշնամին կորցնում է հազարից ավելի զինվոր ու սպա և տասնյակ տանկեր ու ավտոմեքենաներ։

1942 թվական։ Ապրիլյան առավոտ էր։ Ռամուշևոյի շրջանում, ցամաքային զորամասերին պաշտպանելու նպատակով, եռյակի հետ օդ է բարձրանում նաև գումարտակի կոմիսարը։ Երբ հասնում են Սիչևոյի շրջանը, նրանց հանդիպում են թշնամու քառասուն «Յունկերս-88» ռմբակոծիչներ, որոնք գնում էին դեպի մեր զորամասերի առաջավոր գիծը։ Հրամանատարն իր եռյակին հարձակման նշան է տալիս և ինքը առաջինն է խոյանում «Յունկերսների» վրա։ Շուտով ֆաշիստական ռմբակոծիչներին օգնության են հասնում վեց դրոհիչներ։ Սկսվում է անհավասար մարտը։ Քառյակին, այնուամենայնիվ, հաջողվում է խախտել թշնամու ռմբակոծիչների մարտակարգը։ Թշնամին անկանոն թափում է մահացու բեռը և հեռանում։

Հրամանատարությունը բարձր գնահատելով Ջափչախյանի անձնական խիզախությունը և հրամանատարական ունակությունները, նրան նշանակում է ավիագնդի հրամանատար։

Բազմաթիվ են խիզախ օդաչուի կատարած սխրագործությունները։ Պատերազմի սկզբից մինչև 1942 թվականի ապրիլը հայ ժողովրդի զավակ Ղազար Ջափչախյանը կատարել է 368 մարտական թռիչք, որի ընթացքում մասնակցել է 59 օդային մարտի, անձամբ ոչնչացրել է թշնամու 11 ինքնաթիռ, խմբակային մարտերում՝ 52, իսկ ցամաքում՝ մեծ քանակությամբ կենդանի ուժ և տեխնիկա։

1942 թվականի ապրիլի 13-ին Լենինգրադի մարզի Կրեստցիի օդանավակայանում մարտական պատասխանատու առաջադրանք կատարելիս խիզախ հրամանատար օդաչու մայոր Ղազար Ջափչախյանը հերոսաբար զոհվում է։

Սովետական կառավարությունը բարձր գնահատելով մայոր Ղազար Սերգեյի Ջափչախյանի սխրագործությունները ֆաշիստական զավթիչների դեմ մղված պայքարում, նրան 1942 թվականի հուլիսի 21-ին հետմահու շնորհում է Սովետական Միության հերոսի բարձր կոչում։



# ԿԱՐԱՊԵՏ ՍԻՄՈՆԻ ՍԻՄՈՆՅԱՆ




## ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**Կարմիր բանակի կարմիրբանակայիններին և պետկազմին Խորհրդային Միության հերոսի կոչում շնորհելու մասին**

*Ֆիննական սպիտակգվարդիականության դեմ պայքարի ճակատում Հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և դրա ընթացքում խիզախության ու հերոսության ցուցաբերելու համար* Խորհրդային Միության հերոսի *կոչում շնորհել՝* Լենինի շքանշանի և «Ոսկե աստղ» *մեդալի հանձնումով.*

7. *Կարմիրբանակային* Կարապետ Սիմոնի Սիմոնյանին։

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 15 հունվարի 1940 թ.*





Սրա հայրը վաղուց գաղթել էր Բիթլիսից, իսկ հետո՝ Կարսից և մշտական բնակություն հաստատել Թիֆլիսում։ Այստեղ 1918 թվականին ծնվեց Կարապետը՝ Սիմոն Սիմոնյանի անդրանիկ որդին։ Անցան տարիներ, և Սիմոնյանների ընտանիքը դարձավ բազմանդամ։ Կարապետը հարկադրված էր սովորելու հետ միասին աշխատել, որպեսզի օգնի ծնողներին՝ վեց երեխաներին պահելու համար։ Կարապետը սովորում է Թբիլիսիի № 94 յոթնամյա դպրոցում, իսկ 1938 թվականին ավարտում է Երկաթուղային № 3 երեկոյան միջնակարգ դպրոցը։ Նույն թվականին նա մեկնում է զինվորական ծառայության, դառնում տանկի հրաձիգ-ռադիստ։ Շուտով նա ընդունվում է լենինյան կոմերիտմիության շարքերը։

Երբ սկսվեց սովետա-ֆիննական պատերազմը, 20-րդ տանկային բրիգադայի 91-րդ առանձին գումարտակի 1-ին վաշտի կազմում տանկի անձնակազմի՝ հրամանատար Վասիլի Գրուզդևի, վարորդ Միխայիլ Լարչենկոյի, տեխնիկ Իվան Կովալի, գնդացրորդներ Միխայիլ Լոբանովի, Բորիս Վոլկի և նշանառու Եվգենի Լուպպովի հետ միասին ռադիստ Կարապետ Սիմոնյանը մտավ մարտերի մեջ։ Նրանց տանկը առաջ էր շարժվում, հաղթահարելով ճահիճները,

հակատանկային փոսերը, բազմաթիվ անգամ շրջանցելով զանազան տիպի արգելքներ։

Մի քանի օրվա ընթացքում խիզախ տանկիստները կատարեցին տասնմեկ գրոհ և մեծ կորուստ պատճառելով հակառակորդին, զգալի չափով առաջ շարժվեցին։ Ռադիստ Կարապետ Սիմոնյանը ապահովում էր անխափան կապը. նա մեկը մյուսի հետևից ռադիոգրամներ էր ուղարկում բրիգադայի շտաբը, հայտնում առաջխաղացման, թշնամուն ջախջախելու մասին և ընդունում համապատասխան հրամաններ։

1939 թվականի դեկտեմբերի երկրորդ կեսին հիշյալ բրիգադան ռազմաճակատի հատվածներից մեկում մարտեր էր մղում Մաններհայմի գծի ամրությունները ճեղքելու համար։

Մեր զորքերը Կարելական պարանոցում առաջ էին շարժվում հաղթահարելով արհեստական և բնական վիթխարի դժվարություններ։ Թշնամին կառուցել էր դոտերի և դզոտերի խիտ ցանց, ամենուրեք ականադաշտեր ստեղծել։ Իսկ սառնամանիքը հասնում էր 35—40 աստիճանի։

...Սովետական երկու տանկերի անձնակազմին տրված էր կարևոր առաջադրանք՝ ոչնչացնել թշնամու կրակային միջոցները և ճանապարհ բացել հետևակի համար։ Անձնակազմը անցավ խնդրի կատարմանը։ Անտառից դուրս գալուց հետո այն տանկը, որի ռադիստը Սիմոնյանն էր, մտավ մի հարթավայր, ուր տեղ-տեղ բարձրանում էին բլրակներ, իսկ դրանցից այն կողմ նորից անտառ էր։ Թշնամու կրակակետերը պետք է որ այստեղ թաքցված լինեին։ Տեղանքն ականապատված էր։ Այդ ամրություններից սպիտակ-ֆինները տանկի վրա բացեցին ուժեղ կրակ։ Անձնակազմը շարունակում էր առաջ գնալ. թշնամու վրա տեղալով ուժեղ պատասխան կրակ։ Շատ չանցած մոտոր հառնչաց, ապա լռեց, իսկ տանկը ցնցվեց և կանգ առավ։ Մեքենավար Լարչենկոն հայտնեց, որ աջ ոտքից վիրավորվել է։ Հակառակորդի արկը ծակել էր զրահը և փչացրել ղեկավարող մեխանիզմը։ «Կռվենք մինչև վերջին արկը»,—հրամայեց Գրուզդևը։ Սիմոնյանը նետվեց վիրակապելու վիրավոր ընկերոջը, ապա ռադիոգիր ուղարկեց հրամանատարությանը, խնդրելով օգնություն։ Բայց ընդունիչը չէր գործում։ Սիմոնյանը կրկնեց հաղորդումը, իսկ ընդունիչը շարունակում էր լռել։

Անհավասար մենամարտը շարունակվում էր։ «Մենք տեսնում ենք,—գրել է մեքենավար Լարչենկոն «Պրավդա» թերթում,—թե ինչպես հսկայական ծխի քուլաներ են վեր ցատկում անտառի եզրի վրա, քարե թմբերի հետևում, որտեղ քողարկված են թշնամու թնդանոթները։ Մինչև այժմ թշնամու մարտկոցն ուժեղ գնդակոծում էր մեզ, բայց նշանառու Լուպպովի ամեն մի նոր կրակոցի հետ միասին, մեկը մյուսի հետևից շարքից դուրս էին գալիս թշնամու թնդանոթները։ Վերջապես սպիտակ-ֆինների մարտկոցը լռեց։ Սակայն ինչ-որ հեռու տեղից մեզ վրա տեղաց մի ուրիշ մարտկոցի շրապնելը։ Կարապետ Սիմոնյանը էֆիր բաց թողեց իր վերջին ռադիոգրամները։ Բենզինը հոսում

էր բաքից, լցնելով մարտական բաժանմունքը։ Մեքենայից կրակելն այլևս վտանգավոր է։ Կարող է հրդեհ առաջանալ։ Հրամանատարն իր խնդիրը համարում է կատարած և անձնակազմին հրամայում է թողնել տանկը։ Ներքին դռնակից մենք իջնում ենք հողի վրա։ Հրամանատարը վերջինն է թողնում տանկը։ Այդ պահին սնայպերի գնդակը վիրավորում է նրան, բայց չկորցնելով իրեն, նա առաջ է նետում ծուխ առաջացնող տուփերը։ Ծխով քողարկված, անձնակազմը մտնում է անտառ»։

Քիչ անց մահացավ սիրելի հրամանատար Գրուզդևը,— հիշում է Սիմոնյանը։ Զոհվել էին նաև Վոլկը և Լոբաստեը, իսկ Կուլալը թեթև վիրավորվել էր։ Ես օգնեցի վիրավոր Լարչենկոյին՝ սողեսող շարժվելու մեր հետևակի ուղղությամբ, որը շտապում էր մեզ օգնության։ Ճանապարհին հանդիպելով երկու սանիտարի, ես վիրավոր ընկերոջս հանձնեցի նրանց և վերադարձա օգնելու մեր՝ խփված երկրորդ տանկի անձնակազմին։

Հրամանատարության մարտական առաջադրանքը կատարված էր։ Մաններհեյմի գծի սիստեմում ոչնչացվել էր երկու դզոտ և հակառակորդի ավելի քան 300 զինվոր ու սպա։ Մեր հետևակայինները առաջ շարժվեցին և գրավեցին առաջադրված տեղանքը։

Այդ մարտում ցուցաբերած խիզախության և հերոսության համար ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1940 թվականի հունվարի 15-ի հրամանագրով Կարապետ Սիմոնի Սիմոնյանին և տանկի անձնակազմի մյուս անդամներին շնորհվեց Սովետական Միության Հերոսի կոչում։ Կարապետ Սիմոնյանը հայ ժողովրդի զավակներից առաջին Սովետական Միության Հերոսն է։

Մի քանի օր անց Լենինգրադում՝ Սմոլնիում, հանդիսավոր իրադրության մեջ մի խումբ պարգևատրվածների հետ միասին Լենինի շքանշան և Սովետական Միության Հերոսի «Ոսկե աստղ» մեդալ հանձնվեց նաև Կարապետ Սիմոնյանին։

Հետագա մարտերում կրտսեր լեյտենանտ Կ. Սիմոնյանը որպես տանկային դասակի հրամանատար, աչքի ընկավ նոր սխրագործություններով և հասավ մինչև Վիբորգ, որտեղ կռիվներից մեկում վիրավորվեց։

Սովետա-ֆիննական պատերազմի ավարտից հետո Սիմոնյանը ռազմատրանսպորտային ակադեմիայում կատարելագործում և հարստացնում էր իր զինվորական գիտելիքները։ 1942 թվականին ավարտելով Թբիլիսիի հրետանային ուսումնարանը, Սիմոնյանը մասնակցում է Հյուսիսային Կովկասում մեր զորքերի պաշտպանողական, ապա հարձակողական գործողություններին ու վիրավորվելուց հետո միայն մարտերից դուրս գալիս։ Այդ ժամանակ նա մարտկոցի հրամանատար էր՝ կապիտանի աստիճանով։ Հենց այդ օրերին Սիմոնյանը ընդունվում է կոմունիստական պարտիայի շարքերը։

1943 թվականից մինչև Հայրենական պատերազմի վերջը Սիմոնյանը ծառայում էր գործող բանակի համար կրտսեր հրամանատարական կադրեր պատրաստող զորամասերից մեկում։

*Հայրենական պատերազմի ավարտից հետո երկար տարիներ մայոր Սիմոնյանն աշխատել է Վրացական ՍՍՌ ներքին գործերի մինիստրության և պետական անվտանգության օրգաններում։*

*Սովետական Միության Հերոս Կարապետ Սիմոնյանը այժմ աշխատում է Թբիլիսիի «Լյուքս» կոշկի ֆաբրիկայում որպես ցեխի վարիչ։*



# ԳԱՌՆԻԿ ԲԱՐՍԵՂԻ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ





## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի գեներալներին, սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել* Սովետական Միության հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

*44. Լեյտենանտ* Գառնիկ Բարսեղի Վարդումյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 27 հունիսի 1945 թ.*





*Հայրենական մեծ պատերազմի երկրորդ ամիսը դեռ չէր լրացել, երբ Երևանի Կարլ Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի քիմիական ֆակուլտետի չորրորդ կուրսի առաջավոր ուսանող, կոմերիտական Գառնիկ Վարդումյանը համալրեց Հայրենիքի պաշտպանների շարքերը։*

*Գառնիկը ծնվել է 1920 թվականին Ղարաքիլիսայի (այժմ Կիրովական) շրջանի Շահալի (այժմ Վահագնի) գյուղում, գյուղացու ընտանիքում։ 1927—1937 թվականներին Գառնիկը սովորում է գյուղի միջնակարգ դպրոցում, որն ավարտում է գերազանց առաջադիմությամբ։ 1934 թվականին Վարդումյանը մտնում է լենինյան կոմերիտմիության շարքերը։*

*Բանակում նա ընդունվում է Թելավի հետևակային դպրոցի ականանետային բաժինը, որն ավարտում է բարձր ցուցանիշներով, ստանալով լեյտենանտի կոչում։*

*1942 թվականի ամռանը հիտլերականները մոտեցել էին Վոլգոգրադին։ Վոլգայի անառիկ ամրոցը պաշտպանելու համար սովետական զորքերը ծանր մարտեր էին մղում։ Հերոս քաղաքի պաշտպանների շարքերում էր նաև լեյտենանտ Գառնիկ Վարդումյանի հրետանային մարտկոցը։*

1943 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին Բրյանսկի ռազմաճակատում, № տանկային կորպուսի կազմում, Վարդումյանն իր դասակով մասնակցում է Օրյոլ և Բրյանսկ քաղաքների ազատագրման մարտերին: Տանկային կորպուսի առջև խնդիր էր դրված՝ ճեղքել հակառակորդի պաշտպանության գիծը և մարտական գործողություններ ծավալել նրա թիկունքում: Վարդումյանի մարտկոցը հմտորեն էր կատարում առաջադրված խնդիրը: Փոթորկալից մարտերից մեկում Վարդումյանը վիրավորվում է: Ապաքինվելուց հետո, նույն զորամասի հետ միասին, նա տեղափոխվում է Ուկրաինական առաջին ռազմաճակատ:

1944 թվականի հունվարի սկզբներին Նովոգրադ-Վոլինսկի քաղաքի ազատագրման մարտերում ցուցաբերած խիզախության համար Վարդումյանը պարգևատրվում է Խիզախության համար մեդալով: Նրա ղեկավարած ստորաբաժանումը մասնակցում է նաև Ռովնո, Դուբնո, Բրոդի, Լվով և Պերեմիշլ քաղաքների ազատագրմանը:

Բրոդի քաղաքի համար մղած մարտերում Վարդումյանը վիրավորվում է երկրորդ անգամ: Բուժվելուց հետո նա նորից վերադառնում է իր զորամասը: Բուգ գետն անցնելու ժամանակ իր ականանետային մարտկոցի կրակով նա կենդանի ուժի և տեխնիկայի մեծ կորուստ է պատճառում հակառակորդին: Այս անգամ հրամանատարությունը Վարդումյանի կուրծքը զարդարում է Կարմիր աստղի շքանշանով: Այդ ժամանակ նա ընդունվում է ՍՄԿՊ շարքերը:

Վարդումյանի ականանետային մարտկոցն աչքի է ընկնում նաև Կարպատյան լեռներում մղած մարտերում, որի համար Գանիկը պարգևատրվում է Կարմիր դրոշի շքանշանով:

1945 թվականի սկզբներին Ուկրաինական առաջին ռազմաճակատի զորքերը, ջախջախելով թշնամու Սանդոմիրյան խմբավորումը, մարտերով հասնում են Օդեր գետին: Հրետանավոր Վարդումյանի հրամանատարությամբ գործող մարտկոցը, զորային մյուս միավորումների հետ միասին, մրրկային կրակով հետապնդում էր նահանջող թշնամուն: Սովետական զորքերը հաջողությամբ անցնելով Օդերը, ամրանում են նրա ձախ ափին: Օդերի գետանցման ժամանակ ցուցաբերած անվեհերության և զինվորական վարպետության համար Վարդումյանը պարգևատրվում է Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով:

Գերմանական Գուբեն քաղաքի գրավման համար մղած մարտերում հետևակային զորամասի և Վարդումյանի մարտկոցի առջև խնդիր էր դրված գրավել մի կարևոր բարձունք: Խիզախ հետևակայինները, մարտկոցի կրակի օգնությամբ, գրոհում են բարձունքը: Հակառակորդի ուժեղ հրետանային կրակի տակ, Վարդումյանը իր կապավորների ու հետախույզների հետ միասին առաջ է անցնում մեր հետևակի մարտակարգերից, ճշտում մարտկոցի կրակը, այնուհետև անվրեպ համազարկերով մեկը մյուսի հետևից լռեցնում հակառակորդի կրակային կետերը:

Բարձունքը նվաճված էր, նվաճված էր նաև Գուբեն քաղաքը։

Վարդումյանը բարձունքի գագաթը դարձնում է իր դիտակայանը։

Մարտկոցը գտնվում էր դիտակետից մոտ 3 կմ թիկունքում։ Շուտով ֆաշիստները հակագրոհ են սկսում. թշնամուն հաջողվում է շրջապատել բարձունքը։ Մարտկոցի ու դիտակետի միջև եղած հեռախոսային կապը կտրվում է։ Շրջապատման օղակն անընդհատ փոքրանում ու փոքրանում էր։ Շրջապատման չորրորդ օրը միայն Վարդումյանին հաջողվում է ռադիոկապ հաստատել մարտկոցի հետ և ցույց տալ հրետանային կրակի նշանակետը։ Մարտկոցի մարտիկներին հայտնի չէր, թե ո՞ւր էին ուղղում իրենց կրակը։ Նրանք ճշտորեն կատարում են Վարդումյանի հրամանները։ Երբ Վարդումյանն իր դիտակետի կողմին հայտնում է, որ մարտկոցի կրակն անհրաժեշտ է ուղղել դիտակետի վրա, նրա մարտական ընկերներից և ոչ մեկը տարակուսության փոքրիկ նշան անգամ ցույց չի տալիս։ Բոլորն էլ՝ լեյտենանտ Իգնատենկոն, հետախույզներ Եռշովը, Կատանովը, Լոզինը, Կոսիխը, ռադիստ Մալիշկինը և կապավոր Սմիրնովը գերադասում են զոհվել պատվով, քան թե կենդանի հանձնվել թշնամուն։ Հակառակորդն անցնում է գրոհի։ Վարդումյանը սառնասրտորեն ու վճռաբար արձակում է մի կարճ հրաման՝ «Կրա՛կ»։ Հրամանին հաջորդում է մարտկոցի որոտը՝ 8—10 րոպեի ընթացքում հարյուրավոր արկեր ցնցում են ողջ բարձունքը։ Վարդումյանի դիտակետի աջ կողմն ամբողջապես փլվում է։ Երբ դադարում է արկերի որոտը, բարձունքի հերոս պաշտպանները թանձր ծխի ու փոշու միջից նկատում են դիտակետի շուրջը դիրքեր գրաված ֆաշիստների խուճապը։ Ատրճանակը ձեռքում սեղմած՝ Վարդումյանը դուրս է գալիս դիտակետից և «ուռա» կոչելով, մարտիկների հետ միասին գրոհում է հակառակորդի վրա։ Վարդումյանի նոր հրամանով մարտկոցի կրակը տեղափոխվում է հակառակորդի մարտական շարքերը։ Բարձունքի համար կռիվն ավարտվում է լիակատար հաղթանակով։ Վարդումյանի քաջության և հնարամտության շնորհիվ մեր մարտիկները իրենց ձեռքումն են պահում բարձունքը։

Գուբեն քաղաքի համար մղած յոթնօրյա կատաղի մարտերում (փետրվարի 26-ից մարտի 3-ը) Վարդումյանի մարտկոցը ոչնչացնում է թշնամու մոտ 400 զինվոր ու սպա, 4 հաստոցային գնդացիր և մեկ ականանետային մարտկոց։ Ճնշվում է 3 հրետանային մարտկոցի կրակ և 7 կրակակետ։

Գուբեն քաղաքի գրավման ժամանակ ցուցաբերած խիզախության համար ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1945 թվականի հունիսի 27-ի հրամանագրով լեյտենանտ Գառնիկ Բարսեղի Վարդումյանին շնորհվում է Սովետական Միության հերոսի կոչում։

Վարդումյանը մասնակցում է նաև Բեռլինի հաղթական գրոհին և պարգևատրվում է Կարմիր աստղ շքանշանով։ Պատերազմի վերջին օրերին նա մասնակցում է Պրագայի ազատագրմանը։

Հայրենական պատերազմի հաղթական ավարտից հետո Գառնիկ Վարդումյանը շարունակում է ծառայել սովետական բանակում։

1947 թվականին նա գործուղվում է սովորելու Մոսկվայի Վ. Վ. Կույբիշևի անվան ռազմական ակադեմիան։ 1953 թվականին ակադեմիան ավարտելուց հետո մայոր Վարդումյանը երկու տարի ծառայում է որպես գումարտակի հրամանատար։

1955 թվականից մինչև այժմ մայոր Վարդումյանը դասավանդում է ռազմական առարկաներ և իր մարտական հարուստ փորձը հաղորդում մեր երիտասարդ սպայական կադրերին։





# ԳԱՐԵԳԻՆ ՇԵԿՈՅԻ ԲԱԼԱՅԱՆ

## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**Կարմիր բանակի գեներալներին, սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին**

*Կիևից հարավ՝ Դնեպրը հաջողությամբ գետանցելու, Դնեպրի արևմտյան ափին ամուր հենակետ ստեղծելու գործում հրամանատարության մարտական առաջադրանքները օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել* Սովետական Միության հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկի աստղ» *մեդալ.*

8. Կապիտան Գարեգին Շեկոյի Բալայանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 23 հոկտեմբերի 1943 թ.*





Դնեպրն անցնող սովետական բազմազգ մարտիկների շարքերում էր հայ ժողովրդի պանծալի զավակ Գ. Բալայանը, որը Հայրենական պատերազմում անթառամ փառքով պսակեց իր անունը։ Նա զոհվեց Դնեպրի ափերին՝ Ուկրաինայի ազատագրման համար մղվող մարտերում։

Գարեգին Շնկոյի Բալայանը ծնվել է 1912 թվականին Գանձակի շրջանի Գյուլիստան գյուղում, չքավոր գյուղացու ընտանիքում։ Նա սովորել և ավարտել է գյուղի դպրոցը։ 1928 թվականին ընդունվել է լենինյան կոմերիտմիության շարքերը։

1934 թվականի նոյեմբերին Բալայանը զորակոչվում է սովետական բանակ, ընդունվում հրաձգային գնդի դպրոցը, որն ավարտելով գերազանց գնահատականներով, ստանում է ջոկի հրամանատարի կոչում։ 1936 թվականին վերջացնելով զինվորական ծառայությունը, Բալայանը մնում է բանակում իբրև գնդի դպրոցի ավագ, իսկ 1939 թվականի ապրիլին, ավարտելով համապատասխան դասընթացներ, ստանում է կրտսեր լեյտենանտի կոչում։ Այդ թվականին նա ընդունվում է ՍՄԿՊ շարքերը։

Գ. Բալայանը իր ռազմական առաջին մկրտությունն ստացել է 1939 թվա-

կանին Կարելական պարանոցում սպիտակ ֆինների դեմ մղված պատերազմում, ուր նա վիրավորվում է և կատարած սխրանքների համար մի քանի անգամ արժանանում է խրախուսանքի։

Գ. Բալայանը Հայրենական պատերազմի առաջին օրերից մասնակցել է մեր երկիրը ներխուժած ֆաշիստական զավթիչների դեմ մղվող կռիվներին։ Նրա ղեկավարած ստորաբաժանումը ակտիվ մասնակցել է Վոլգոգրադի պաշտպանությանը, Արևմտյան և Վորոնեժի ռազմաճակատներում մղվող մարտերին. ցուցաբերած խիզախության համար Գ. Բալայանը պարգևատրվել է Կարմիր աստղի շքանշանով և Վոլգոգրադի պաշտպանության համար մեդալով։

1943 թվականի սեպտեմբերին մեր զորքերը մոտեցել էին Դնեպրին։ Կապիտան Գ. Բալայանի ստորաբաժանումը մարտական խնդիր է ստացել անցնելու Դնեպրի աջ ափը։ Սեպտեմբերի 22-ին գիշերը կապիտան Գ. Բալայանը հմտորեն կազմակերպում է իր գումարտակի անձնակազմի գետանցումը Դնեպրի աջ ափը։ Ղեկավարելով գետանցումը, նա իր մարտիկներին ոգեշնչելով, ասել է՝ «Քաջերին ջուրը չի տանում»։

Դնեպրի աջ ափին թշնամին ցույց է տալիս համառ դիմադրություն։ Բալայանի ստորաբաժանման մարտիկները, մյուս ստորաբաժանումների համատեղ գործողությամբ, թշնամուն քայլ առ քայլ հետ են քշում՝ իրենց գրաված հենակետը լայնացնելու և մեր զորամասերի գետանցումն անվտանգ դարձնելու համար։ Ոչ թշնամու դիմադրությունը, ոչ ավազուտները, ոչ փոսերն ու արգելակները չեն կանգնեցնում Բալայանի մարտիկներին, որոնք իրենց քաջ հրամանատարի օրինակով մարտնչում են թշնամու դեմ, նրան քշում դեպի արևմուտք։

Չորս օր շարունակ կատաղի մարտեր են մղվում Դնեպրի աջ ափում։ Թշնամին հուսահատ դիմադրություն է ցույց տալիս, բայց Բալայանի մարտիկները, մյուս ստորաբաժանումների հետ առաջ են շարժվում՝ ընդարձակելով հենակետը։ Նրանք ազատագրում են Զարուբենցի գյուղը և դրանով ապահովում բրիգադայի գետանցումը։

Գումարտակը մարտերով մտնում է Գրիգորևկա գյուղին։ Բալայանը վճռում է թշնամուն դուրս մղել գիշերային սվինամարտով։ Երբ ազդանշանի հրթիռը երկինք է սլանում, Բալայանի մարտիկները գրոհի են անցնում, նրանք թշնամուն ոչնչացնում են ավտոմատային կրակահերթով, հրացանի խզակոթով և այլ միջոցներով։ Լուսաբացին թշնամին նահանջում է՝ թողնելով իր զինվորների ու սպաների տասնյակ դիակներ, երկու բեռնատար մեքենա, երկու ականանետ, երկու ձեռքի գնդացիր, մեծ քանակությամբ հրացան ու փամփուշտ։

Հաջորդ օրը կապիտան Բալայանի գումարտակը կասեցնում է գերմանացիների հակահարձակումը։ Մեր զորքերն ամուր պահպանում են հենակետը։ 1943 թվականի սեպտեմբերի 25-ին, հենակետի համար մղվող դաժան մարտերում հակառակորդի ավիացիայի հարձակման ժամանակ, կապիտան Գ. Բալայանը զոհվում է հերոսի մահով։

*Դնեպրի աջ ափին, Ուկրաինայի ազատագրման համար ընկավ հայ ժողովրդի հերոս զավակ Գարեգին Բալայանը։ Դեպի արևմուտք շարժվող նրա մարտիկները, ատելությամբ լցված դեպի թշնամին՝ դաժան վրեժ էին լուծում։*

*Կապիտան Գ. Բալայանի խիզախությունների մասին ռազմաճակատի պոետները ոտանավորներ գրեցին, որոնց մի մասը երգի էին վերածել և երգում էին նրա մարտիկները։ Այդ երգերից մեկում ասված է.*

И пусть течет Днепра вода
сквозь времени туман
ты жить остался на всегда
товарищ Балаян

*Դնեպրի գետանցման ժամանակ ցուցաբերած խիզախության, հերոսության և համարձակ մանևրելու համար ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1943 թվականի հոկտեմբերի 23-ի հրամանագրով կապիտան Գարեգին Շեկոյի Բալայանին շնորհեց Սովետական Միության հերոսի կոչում։*

*Դնեպրի աջ ափին, Զարուբենցի գյուղի մոտ գտնվող մի գերեզմանաթմբի հողակտորի վրա գրված է. «Այստեղ թաղված է Կապիտան Գարեգին Բալայանը (1912—1943 թթ.), որը հերոսաբար զոհվեց Դնեպրի ափին հայրենիքի ազատագրման համար մղված մարտերում»։*



# ՍԻՄՈՆ ԿԱՐԱՊԵՏԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ



## ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել* Սովետական Միության Հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

*13. Լեյտենանտ* Սիմոն Կարապետի Բաղդասարյանին:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 24 մարտի 1945 թ.*





**89**-րդ հայկական հրաձգային Թամանյան շքանշանակիր դիվիզիայի հերոսներից է կապիտան Սիմոն Կարապետի Բաղդասարյանը։ Մարտերի բոցերի միջով նա Կովկասյան նախալեռներից հասավ մինչև Բեռլին՝ միշտ բարձր պահելով փառապանծ թամանցիների անունը։

Դառն ու չարքաշ է եղել Սիմոն Բաղդասարյանի մանկությունը։ Նա չի տեսել ու զգացել ծնողական գուրգուրանք ու հոգատարություն։ Հայրը վախճանվել էր, երբ 1913 թվականին ծնվեց Սիմոնը՝ Ալեքսանդրապոլի գավառի Դուզքենդի գավառակի Դիրաքլար գյուղում (ներկայումս Ախուրյանի շրջանի Կառնուտ գյուղ)։ Հազիվ հինգ տարեկան էր նա, երբ մահացավ մայրը։

1920 թվականի նոյեմբերին Հայաստանում հաղթանակած Սովետական իշխանությունը, ինչպես շատ-շատերին, այնպես էլ որբացած Սիմոնին կյանքի հատակից լույս աշխարհ հանեց։

1924 թվականին Սիմոն Բաղդասարյանն ընդունվում է Լենինականի երկաթգծի յոթնամյա դպրոցը, որն ավարտելուց հետո, սովորում է հեռագրիչների վեցամսյա դասընթացներում և որպես հեռագրիչ աշխատում Հայաստանի տարբեր շրջաններում։ 1935 թվականին նա ընդունվում է կոմերիտմիության շարքերը։

Նույն թվականին Բաղդասարյանը զինակոչվում է բանակ և գործուղվում

սովորելու Թբիլիսիի ռազմական ուսումնարանում։ 1938 թվականին Սիմոնը վերադառնում է զինվորական ծառայությունից և անցնում քաղաքացիական աշխատանքի Լենինականում և Երևանում, միաժամանակ հեռակայում մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետում։

1942 թվականի օգոստոսի 8-ին Սիմոնը զինակոչվում է սովետական բանակ և որպես դասակի հրամանատար, կադրեր պատրաստում ռազմաճակատի համար։ 1943 թվականի աշնանը նա մեկնում է ռազմաճակատ։ Նրա անցած մարտական ուղին անխզելիորեն կապված է Թամանյան հայկական դիվիզիայի հերոսական տարեգրության հետ։

1943—1944 թվականների ձմռանը սովետական զորքերը համառ մարտեր էին մղում Կերչը գերմանական ֆաշիստներից ազատագրելու համար։ 89-րդ հայկական Թամանյան դիվիզիային առաջադրանք էր տրված հարձակվել Կերչ քաղաքում ամրացված թշնամու վրա և նրան դուրս մղել իր գրաված դիրքերից։ Հրաման ստանալուց հետո, դիվիզիան սրընթաց գրոհի է դիմում և հանկարծակիի բերելով հակառակորդին՝ արագորեն մտնում քաղաք։ Սկսվում են փողոցային կատաղի մարտեր։ Սովետական զորքերի ճնշման տակ գերմանացիները հետ են շպրտվում Կերչի միջով անցնող Կատերլեզ ջրանցքի մյուս ափը։ Թամանյան դիվիզիան դիրքավորվում է Կատերլեզի արևելյան ափին և երեքօրյա պաշտպանական մարտերից հետո, հարձակման է անցնում ագլուսի գործարանի ուղղությամբ։ Այստեղ թշնամին նպատակ ուներ շրջապատել, օղակի մեջ առնել ու ոչնչացնել սովետական զորքերին։

Ս. Բաղդասարյանի դասակը ագլուսի գործարանի մոտ պաշտպանական ընագիծ էր բռնել թշնամուց ընդամենը մի քանի տասնյակ մետր հեռավորության վրա գտնվող տեղամասում։ Լուսադեմին թշնամին դիմում է գրոհի։ Օգտագործելով տեղանքի հնարավորությունները, լեյտենանտ Բաղդասարյանը իր դասակի կրակային բոլոր միջոցներից հրե կարկուտ է տեղում թշնամու վրա։ Թշնամին մեծ կորուստներ տալով շտապով խուճապահար հետ է քաշվում։

Հաջորդ օրը հակառակորդը հարձակվում է հենց Բաղդասարյանի դասակի վրա, սակայն այս անգամ էլ նույն բախտին է արժանանում։ Այդ մարտերում ցուցաբերած խիզախության համար Բաղդասարյանը պարգևատրվում է Կարմիր աստղի շքանշանով։

1944 թվականին, մարտական այդ եռուն օրերին, Ս. Բաղդասարյանն ընդունվում է ՍՄԿՊ շարքերը։

89-րդ Թամանյան հայկական դիվիզիան ակտիվորեն մասնակցելով Կերչ թերակղզին ֆաշիստական զավթիչներից մաքրելու գործին, մայիսի սկզբներին մասնակցում է Սևաստոպոլի ազատագրման մարտերին։ Այդ մարտերի թեժ պահին զոհվում է վաշտի հրամանատար ավագ լեյտենանտ Հայկազ Աղաջանյանը և վաշտի հրամանատարությունը հանձնարարվում է Բաղդասարյանին։ Հենց այդ ժամանակ էր, 1944 թվականի մայիսի 9-ին, Սևաստոպոլի մատույցներում վաշտին առաջադրանք է տրվում գրոհել թշնամու դիմադրության կարև-

վորագույն հանդույց Գորնայա բարձունքի վրա, լռեցնել գերմանական դոտերն ու դզոտերը, որոնք փակում էին դեպի քաղաք տանող մայրուղին։ Ս. Բաղդասարյանն ընտրում է քսան մարտիկներ, կազմում գրոհային խումբ և զգուշորեն, աննկատելի մոտենում բարձունքի ստորոտին։ Մինչև թշնամուն հասնելը մնացել էր մոտավորապես 30 մետր տարածություն, երբ հակառակորդը ուժեղ կրակ է բացում նրանց վրա։ Բաղդասարյանը հրամայում է բոլորին պառկել, մինչև կրակի թուլանալը. բայց դա կարող էր երկար տևել։ Մարտերում փորձված, հմուտ հրամանատարը որոշում է դիմել խորամանկության։ Նա առանձնացնում է հինգ հոգի և ուղարկում ձախ թևը, որպեսզի նրանք թշնամու վրա կեղծ գրոհի տպավորություն ստեղծեն։ Հակառակորդը, կարծելով, թե սովետական մարտիկներն իրոք գրոհում են ձախ թևից, կրակն ուղղում է դեպի այն կողմը, մինչդեռ Բաղդասարյանն իր հիմնական ուժերով հարձակվում է ճակատից և նռնակների խրձեր է նետում գերմանական դոտերի վրա՝ ընդմիշտ լռության մատնելով նրանց։ Բաղդասարյանի գլխավորած գրոհայիններն ոչնչացնում են նաև երկաթ-բետոնե դոտը, նրա անձնակազմը ու նետվում դեպի բարձունքը, կարմիր դրոշ բարձրացնելով նրա վրա։

Հրամանատարության առաջադրանքը գերազանց կատարելու, Գորնայա բարձունքի գրավման մարտերում ցուցաբերած խիզախության ու անձնական հերոսության համար ավագ լեյտենանտ Սիմոն Կարապետի Բաղդասարյանին ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1945 թվականի մարտի 24-ի հրամանագրով շնորհվում է Սովետական Միության հերոսի կոչում։

Այնուհետև Թամանյան դիվիզիայի կազմում նա մարտերով անցնում է Լեհաստանի տերիտորիայով։ Օդերի ափին ծավալված ահեղ կռիվներում աչքի ընկնելու համար Սիմոնը պարգևատրվում է Կարմիր աստղի երկրորդ շքանշանով։ Իր ստորաբաժանումով Բաղդասարյանն ակտիվ մասնակցում է Բեռլինի գրավմանը։

Պատերազմի հաղթական ավարտից հետո կապիտան Բաղդասարյանը շարունակում է ծառայել Թամանյան դիվիզիայի 400-րդ գնդում որպես գումարտակի շարային գծով հրամանատարի տեղակալ։

1947 թվականի սեպտեմբերին նա զորացրվում է սովետական բանակից և աշխատանքի անցնում Հայկական ՍՍՌ առևտրի մինիստրության սիստեմում. 1949 թվականի սեպտեմբերին Ս. Բաղդասարյանն ընդունվում է ՀԿՊ Կենտկոմին առընթեր պարտիական դպրոցը, որն ավարտելուց հետո վերադառնում է իր նախկին աշխատանքին։



# ԿՈՍՏԱՆԴԻՆ ԻԼԻԱՅԻ ԽԱՉԻԵՎ







## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

### Կարմիր բանակի սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել* Սովետական Միության հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

*323. Ավագ* Կոստանդին Իլիայի Խաչիևին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 24 մարտի 1945 թ.:*



Երբ սկսվեց Հայրենական պատերազմը, կոմունիստական պարտիայի կոչով, հանուն մեր երկրի ազատության ու անկախության, ֆաշիզմի դեմ պայքարի ելան ռուսն ու ուկրաինացին, բելոռուսն ու ղազախը, հայն ու վրացին, ուզբեկն ու ադրբեջանցին։ Սոցիալիստական Հայրենիքի պաշտպանների առաջին շարքերում էին գտնվում նաև վաղուց ի վեր Հայաստանում ապրող հարյուրավոր հույն մարտիկներ, որոնցից շատերն աչքի ընկնելով գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ մղվող մարտերում, արժանացան կառավարական բարձր պարգևների, իսկ նրանցից մեկին՝ գվարդիայի կապիտան Կոստանդին Իլիայի Խաչիևին շնորհվեց Սովետական Միության Հերոսի կոչում։

Կոստանդին Իլիայի Խաչիևը ծնվել է 1911 թվականի մայիսի 18-ին Լոռու գավառի Մաղան ավանում (այժմ Ալավերդու շրջանի Լենինյան հանքերի բանավան)։ Կոստանդինի հայրը՝ Իլիա Խաչիևը հանքափոր բանվոր էր, 1905 թվականից ՌՍԴԲՊ անդամ, Ալավերդու բանվորների ռևոլյուցիոն ելույթների ակտիվ մասնակից։

Կոստանդին Խաչիևն իր սկզբնական կրթությունն ստացել է ծննդավայրում։ 1924 թվականին նա ընդունվում է լենինյան կոմերիտմիության շարքերը

*և աշխատում որպես պիոներական ավագ ջոկատավար։ Աչքի ընկնելով այդ աշխատանքում, 1927 թվականին նա ՀԼԿԵՄ Ալավերդու շրջկոմում առաջ է քաշվում որպես պիոներական հրահանգիչ։*

*1928 թվականի աշնանը Խաչիկը, մի խումբ երիտասարդների հետ, գործուղվում է սովորելու Բաքվի Օրջոնիկիձեի անվան ռազմա-հետևակային ուսումնարանում և լեյտենանտի կոչումով ավարտում է այն 1932 թվականին ու նշանակվում դասակի հրամանատար։ 1935 թվականի ամռանը Խաչիկն աշխատանքի է անցնում նաև Պաշք-Ավիաքիմի Ալավերդու շրջխորհրդում, իսկ 1939 թվականին՝ Վրացական ՍՍՌ Ծղալտուբոյի շրջզինկոմիսարիատում։*

*Մինչև 1942 թվականի ամառը կադրային սպա Խաչիկը զբաղվում է ռազմաճակատի համար կադրեր պատրաստելու գործով. այնուհետև նա մեկնում է ռազմաճակատ՝ որպես հրաձգային դասակի հրամանատար։ 1944 թվականի ապրիլին Խաչիկն իր դասակով մասնակցում է Սիվաշի շրջանում մղվող համառ կռիվներին։ Սիվաշյան մարտերից հետո սովետական զորքերը հարձակումը շարունակում են դեպի Ջանկոյ և Սիմֆերոպոլ։ Վերջինիս համար մղվող մարտերում Խաչիկի ղեկավարած ստորաբաժանումը ոչնչացնում է թշնամու տանկեր, հրակակետեր, կենդանի ուժ և գերի վերցնում գերմանական տասնյակ զինվոր ու սպա։ Այդ մարտերում ցուցաբերած խիզախությունների համար Կոստանդին Խաչիկը պարգևատրվում է Կարմիր աստղի շքանշանով։*

*Իրար հետևից հուժկու հարվածներ հասցնելով հիտլերյան ֆաշիստներին, սովետական զորքերը արագորեն մոտենում են Սևաստոպոլին։ Մեկենզիևա բարձունքի վրա թշնամուն վճռական հարվածներ են տալիս նաև Կ. Խաչիկի մարտիկները։ Ջախջախելով հակառակորդի կատաղի դիմադրությունը սովետական զորքերը 1944 թվականի մայիսի 9-ին մտնում են քաղաք։ Սևաստոպոլ մուտք գործած առաջին զորամասերի թվում է լինում նաև Կ. Խաչիկի հրամանատարությամբ գործող ստորաբաժանումը։*

*Սևաստոպոլի ազատագրման համար մղված մարտերում ցուցաբերած խիզախության ու հերոսության համար ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1945 թվականի մարտի 24-ի հրամանագրով գվարդիայի կապիտան Կոստանդին Իլյայի Խաչիկին շնորհվեց Սովետական Միության Հերոսի կոչում։*

*Կ. Ի. Խաչիկը այնուհետև մասնակցում է Սովետական Մերձբալթիկայի ազատագրման և Քյոնիգսբերգի (Կալինինգրադ) համար մղած մարտերին։ Քյոնիգսբերգի տակ ծավալված կռիվներում նա ուժեղ կոնտուզիա է ստանում և ուղարկվում Մոսկվա՝ բուժման։*

*1947 թվականի հունիսին Կ. Խաչիկը զորացրվում է բանակից և վերադառնում իր ծննդավայրը՝ Ալավերդի։ 1954 թվականին նա տեղափոխվում է Երևան, ուր և ապրում է ներկայումս։*



# ԱՐՄԵՆ ԹԵՎՈՍԻ ՀԱՅՐՅԱՆ



## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի ռազմա-օդային սպայական կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում Հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար,* շնորհել Սովետական Միության հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

1. *Կապիտան* Արմեն Թևոսի Հայրյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
М. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 13 ապրիլի 1944 թ.:*





Արմեն Թևոսի Հայրյանը սովետական խիզախ օդաչուներից է։ Նա ծնվել է 1910 թվականի սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղի Կարյագինոյի շրջանի Տող գյուղում՝ չքավոր գյուղացու ընտանիքում։

1924 թվականին Արմենը տեղափոխվում է Սամարղանդ, որտեղ սովորում և ավարտում է հայկական դպրոցի 4-րդ դասարանը։ Այնուհետև նա որպես փականագործի աշակերտ ընդունվում է Սամարղանդի գործարաններից մեկում, միաժամանակ ուսումը շարունակում բանֆակում։

1931 թվականին Արմենը մեկնում է սովետական բանակ, սովորում է Տաշքենդի օդաչուական դպրոցում, որտեղ և նա մտնում է Սովետական Միության կոմունիստական պարտիայի շարքերը։

Օդաչուական դպրոցն ավարտելուց հետո Հայրյանը որպես մեխանիկ, չորս տարի աշխատում է ավիազորամասում։ 1938 թվականին նա գործուղվում է սովորելու Էնգելսի անվան ռազմա-օդաչուական դպրոցը, որն ավարտելուց հետո, որպես օդաչու ծառայում է Կիրովոգրադի 160-րդ պահեստային ավիացիոն գնդում։

Հայրենական պատերազմի հենց առաջին օրերին Հայրյանը գտնվում էր գործող բանակում և մասնակցում Տիրասպոլ քաղաքի պաշտպանական մարտերին, կատարելով 40 մարտական թռիչք։

1941 թվականի նոյեմբերին Կրեմենչուգ քաղաքի մատույցներում օդաչուներ Հայրյանը և Խինվալևին հակառակորդի զենիթային հրետանու ուժեղ կրակի պայմաններում կարողանում են մահացու բեռը թափել օկուպանտների բենզինի ցիստեռնների վրա, որոնք պայթելով՝ առաջացնում են մեծ ծավալի հրդեհներ։ Ապա գնդացրային կրակով նրանք խուճապի են մատնում թշնամու զինվորներին և ոչնչացնում մոտավորապես 200 հիտլերականի։ Նույն թվականի սեպտեմբերի 10-ին Չերնովի հրամանատարությամբ գործող ավիաջոկատի կազմում Հայրյանը և Խիտալիշվիլին հարձակվում են Պոլտավա քաղաքի օդանավակայանի վրա, խուզող թռիչքով ոչնչացնում թշնամու 14 ինքնաթիռ, որոնք նախապատրաստվում էին թռիչքի։ Կռիվներից մեկում էսկադրիլիայի հրամանատար Նովիկովը, օդաչուներ Հայրյանը, Գոնչարովը, Ուսակովը, Խիտալիշվիլին և Խինվալևին օդ են բարձրանում՝ Կրեմենչուգից դեպի արևելք տանող ճանապարհով անցնող Գուդերիանի տանկային շարասյունը ռմբակոծելու առաջադրանքով։ Հայրյանը և իր ընկերները նկատելով թշնամու շարասյունը, 500 մետր բարձրությունից հաջող և սրընթաց թռիչքով շարքից հանում են 11 տանկ։ Հրամանատարության առաջադրանքը հաջողությամբ կատարելու համար, Հայրյանը պարգևատրվում է Կարմիր աստղի շքանշանով։

Արմեն Հայրյանի նոր սխրագործությունները արժանանում են հրամանատարության ուշադրությանը։ Այսպես, 1942 թվականի հունվարին, ինքնաթիռների օղակը, որի կազմում թռչում էր Հայրյանը, Սևերբրյանսկի Պրուդի շրջանում գրոհում է թշնամու մոտո-մեքենայացված զորքերի վրա և անվրեպ ռմբակոծությամբ ոչնչացնում 20 ավտոմեքենա, 400 զինվոր ու սպա։

Մոզդոկի շրջանում թշնամու զորքերի կուտակումը ռմբակոծելու առաջադրանքով օդ է բարձրանում ավագ լեյտենանտ Հայրյանի ինքնաթիռը։ Նպատակակետին մոտենալիս, նա հանդիպում է հակառակորդի 13 կործանիչների։ Տեղի է ունենում անհավասար մարտ։ Հայրյանի ինքնաթիռը լուրջ վնասվածք է ստանում, բայց օդաչուն հմտությամբ անցնելով ռազմաճակատի գիծը, հաջողությամբ վայրէջք է կատարում մեր տերիտորիայում։ Առաջադրանքը գերազանց կատարելու համար Հայրյանի ինքնաթիռի անձնակազմը 51-րդ բանակի հրամանատարության կողմից արժանանում է շնորհակալության։

1942 թվականի հունիսի 26-ին Հայրյանի ղեկավարած ինքնաթիռների վեցյակը երեք սրընթաց հարձակում է գործում Բրյանսկ քաղաքի օդանավակայանի վրա, որի ժամանակ ոչնչանում է թշնամու 44 ինքնաթիռ, շատ զինվորներ ու սպաներ։ 1942 թվականի օգոստոսին, երբ թշնամու գերակշիռ ուժերն առաջ էին շարժվում մեր տերիտորիայում, էսկադրիլիայի հրամանատար Հայրյանը առաջադրանք է ստանում հինգ ինքնաթիռներով կասեցնել հակառակորդի զորքերի անցումը Դոն գետով։ Թշնամու զենիթային հրետանու կատաղի գնդակոծման պայմաններում, Արմենի էսկադրիլիան խափանում է թշնամու գետանցումը։

1942 թվականի ամռանը ֆաշիստական զորքերն անցնելով հարձակման,

*ճեղքում են սովետական զորքերի պաշտպանությունը Կուրսկ—Վորոնեժի ուղղությամբ։ Այստեղ հանդիպելով սովետական բանակի համառ դիմադրությանը, նրանք թեքվում են դեպի հարավ՝ գլխավոր հարվածը ուղղելով Վոլգոգրադի վրա։ Կատաղի և համառ մարտերից հետո, հիտլերյան զորքերն անցնում են Դոնը և դուրս գալիս Վոլգայի շրջանը։ Սկսվում է Վոլգոգրադի հռչակավոր ճակատամարտը։ Վոլգոգրադը պաշտպանող ռազմա-օդային ուժերի կազմում էր գտնվում նաև Հայրյանի ղեկավարած էսկադրիլիան։ Այստեղ նա կատարում է մարտական 17 թռիչք, ոչնչացնում թշնամու զգալի քանակությամբ կենդանի ուժ և տեխնիկա, որի համար Հայրյանը երկրորդ անգամ պարգևատրվում է Կարմիր դրոշի շքանշանով։*

*Վոլգոգրադում սովետական բանակի կողմից ձեռք բերված պատմական հաղթանակից հետո, Արմեն Հայրյանը գտնվելով Հարավային ռազմաճակատի 5-րդ հարվածային բանակի կազմում, մասնակցում է թշնամու նահանջող զորամասերի հետապնդմանը։*

*Էսկադրիլիայի հրամանատար Հայրյանն ակտիվ կերպով մասնակցում է նաև հակառակորդի Տագանրոգյան խմբավորումը ոչնչացնելու և Դոնբասի ազատագրման համար մղված մարտերին։ Նա անձամբ կատարում է 105 թռիչք և պաշտպանում մեր զորքերի հարձակումը, ոչնչացնում նահանջող հիտլերյան զորքերին։ Այդ սխրանքների համար ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1944 թվականի ապրիլի 13-ի հրամանագրով նա արժանանում է Սովետական Միության Հերոսի կոչման։*

*Օդային մարտերի հմուտ վարպետը Հարավային ռազմաճակատից շուտով տեղափոխվում է Միրձբալթիկա, որպես 954-րդ գրոհիչ ավիագնդի հրամանատարի տեղակալ։ Այստեղ նա ակտիվորեն մասնակցում է թշնամու զորքերի մնացորդների լիկվիդացման գործողություններին։*

*Հայրենական պատերազմի ռազմաճակատներում Հայրյանի հրամանատարությամբ գործող էսկադրիլիան կատարել է մարտական 2600 թռիչք, որոնց ընթացքում ոչնչացվել են թշնամու 18 տանկ, 250 ավտոմեքենա՝ կենդանի ուժով ու բեռով, զենիթային հրետանու 6 մարտկոց, ավելի քան 300 մարդ։ Մարտերում ձեռք բերած փայլուն հաղթանակների համար նրա կուրծքը զարդարված է Լենինի, Կարմիր աստղի, Ալեքսանդր Նևսկու և մի շարք այլ շքանշաններով ու մեդալներով։ Նա բազմիցս արժանացել է հրամանատարության շնորհակալությանը։*

*Հայրենական մեծ պատերազմն ավարտվելուց հետո Սովետական Միության Հերոս Հայրյանը շարունակում է իր ծառայությունը ռազմա-օդային ուժերի նավատորմում՝ որպես գրոհիչ ավիագնդի հրամանատարի տեղակալ։*

*1946 թվականին Արմեն Հայրյանը գործուղվում է ՍՍՌՄ ռազմա-օդային ուժերի բարձրագույն հրամանատարական տակտիկական դասընթացները, որը ավարտում է 1948 թվականին և ստանում մայորի կոչում։ 1951 թվականից մայոր Հայրյանը զորացրվում է սովետական բանակի շարքերից։ Նա այժմ ապրում է Տաշքենդում։*



# ՀՄԱՅԱԿ ԼԵՎՈՆԻ ՂԱԶԱՐՅԱՆ






## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել Սովետական Միության հերոսի կոչում, հանձնելով Լենինի շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ.*

*53. Կապիտան Հմայակ Լևոնի Ղազարյանին:*

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 22 փետրվարի 1944 թ.*





Հմայակ Լևոնի Ղազարյանը ծնվել է 1907 թվականին Վանի նահանգի Խառակոնիս գյուղում։ 1914 թվականին նրա ծնողները գաղթում են Երևան, որտեղ և Հմայակը ստանում է իր կրթությունը։ 1929 թվականին Ղազարյանն ընդունվում է Բաքվի ռազմական դպրոցը։ Երեք տարի սովորելուց հետո, փոխադրվում է Կրասնոդարի հեծելազորային զորամաս։ 1934 թվականին նա աշխատանքի է նշանակվում հայկական դիվիզիայում, այնուհետև փոխադրվում է Մինսկ։

Հ. Ղազարյանը գտնվելով Բելոռուսիայում, Հայրենական պատերազմի սկզբից մասնակցում է ֆաշիստական զավթիչների դեմ մղվող մարտերին, որոնց ընթացքում նա երկու անգամ վիրավորվում է և ցուցաբերած խիզախության համար պարգևատրվում մարտական շքանշանով։

1943 թվականի աշունն էր։ Սովետական բանակի հարձակվող զորային միավորումները, ֆաշիստական զավթիչներին հետ մղելով դեպի արևմուտք, մոտենում էին Դնեպրի ափերին։

Կապիտան Ղազարյանը, իր զորամասով սեպտեմբերի 27-ին և 28-ին ակտիվ գործողություններ է սկսում՝ Դնեպրն անցնելու համար։ Իր գումարտակով նա առաջ է շարժվում։ Նրա մարտիկները, մոտենալով հողնածությունը՝

*անհամբեր սպասում են գետանցման հրամանին։ Շուտով գործում է սովետական հրետանին։ Թշնամու պաշտպանության ամրությունների վրա թափվում են ռումբերը։ Այդ ահեղ մարտերում, կոտրելով թշնամու դիմադրությունը, կապիտան Հ. Ղազարյանի կտրիճները, մյուս զորամասերի մարտիկների հետ միասին, թշնամու հրետանային-ականանետային և հրաձգային տեղատարափ կրակի տակ առաջ շարժվելով, անցնում են Դնեպրի աջ ափը։ Հակառակորդը, որ երբեք չէր սպասում այդպիսի համարձակ անցում, հավաքելով իր ուժերը Աուլի գյուղի շրջանում, դիմում է հակագրոհի։ Ստեղծվում է ծանր վիճակ։ Այդ դժվարին պայմաններում, շարունակելով առաջխաղացումը և ընդլայնելով հենակետը, Ղազարյանի գումարտակի մարտիկները նոր գրոհներով գրավում են գերմանացիների կարևոր ստրատեգիական կետը՝ Վոսկոբոյնյա կիսակայարանը և այդ շրջանում կտրում երկաթգիծը։*

*Հիտլերականները զգալով Դնեպրի աջ ափին ստեղծված հենակետի վտանգավորությունը, նոր ուժեր կենտրոնացնելով, հակագրոհի են դիմում՝ սովետական մարտիկներին գետը շպրտելու համար։ Կատաղի այդ մարտերում մեծ հերոսություն և հրամանատարին հատուկ հմտություն է ցուցաբերում կապիտան Հ. Ղազարյանը։ Նրա գումարտակի մարտիկները, որոնց մեջ կային ռուսներ, ուկրաինացիներ, բելոռուսներ և հայեր, իրենց հրամանատարի օրինակով հերոսաբար մարտնչում են թշնամու դեմ և ետ շպրտում նրան։*

*1943 թվականի հոկտեմբերի 2-ին թշնամին այդ շրջանում յոթ անգամ հակագրոհի է դիմում՝ հենակետը ետ գրավելու համար։ Ղազարյանի գումարտակը, մյուս ստորաբաժանումների հետ միասին ոչ միայն կանխում է գերմանացիների բազմաթիվ հակագրոհները, այլև նրանց պատճառելով մեծ կորուստներ, գրավում է Աուլի գյուղը։ Միայն Ղազարյանի գումարտակը այդ մարտերում ոչնչացնում է մոտ 80 հիտլերական, գրավում 4 հրանոթ, 6 հաստոցավոր գնդացիր, երկու ականանետ, 12 ձեռքի գնդացիր և մեկ ռազմամթերքի պահեստ։ Կորցրած կիսակայարանը ետ խլելու նպատակով գերմանացիները կապիտան Ղազարյանի գումարտակի դեմ նետում են 11 տանկ։ Իր գումարտակի մարտիկներին հմտորեն ղեկավարելով, Հ. Ղազարյանը ետ է մղում թշնամու 4 գրոհները, ոչնչացնում 180 զինվոր և սպա, գրավում երեք գնդացիր և շատ ռազմական այլ ավար։*

*Դնեպրի անցման և նրա աջ ափում հենակետ ստեղծելու, այն լայնացնելու, մղված մարտերում հերոսություն ցուցաբերելու, գումարտակի մարտական գործողությունները հմտորեն ղեկավարելու համար, ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահությունը 1944 թվականի փետրվարի 22-ի հրամանագրով կապիտան Հմայակ Ղազարյանին շնորհում է Սովետական Միության հերոսի կոչում։*



# ԱՆԴՐԱՆԻԿ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ




## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել* Սովետական Միության հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

1. *Գվարդիայի կապիտան* Անդրեյ Ալեքսանդրի Մանուկյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 27 փետրվարի 1945 թ.:*






Սովետական Միության հերոս, գվարդիայի կապիտան Անդրանիկ Ալեքսանդրի Մանուկյանը Հայրենական մեծ պատերազմի տարեգրության մեջ մտավ որպես հմուտ և արիասիրտ հետախույզ-հրամանատար։

*Անդրանիկ Մանուկյանը ծնվել է 1917 թվականի մայիսի 17-ին Բաքու քաղաքում, ծառայողի ընտանիքում։ Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո կոմերիտական Անդրանիկը 1934 թվականին ընդունվում է Բաքվի Ս. Մ. Կիրովի անվան պետական համալսարանի պատմության ֆակուլտետը և միաժամանակ ուսուցչի պաշտոնով աշխատում № 8 դպրոցում։*

*1939 թվականի սեպտեմբերին Մանուկյանը զինակոչվում է սովետական բանակ։ 1940 թվականին նա ընդունվում է կոմունիստական պարտիայի շարքերը։ Հայրենական պատերազմի սկզբից մեկնում է ռազմաճակատ, մասնակցում մեր Հայրենիքի սահմանները ներխուժած ֆաշիստական զավթիչների դեմ սովետական զորամասերի մղած համառ ու արյունահեղ պաշտպանական մարտերին։*

*Այն զորամասը, ուր ծառայում էր Մանուկյանը, համառ դիմադրությամբ նահանջելով թշնամու գերազանց ուժերի ճնշման տակ, աշնանը հասնում է*



270—14

Սևաստոպոլ քաղաքին։ «Այստեղ մենք որոշեցինք մեռնել, բայց գերմանացիներին չհանձնել Սև ծովի սիրտ Սևաստոպոլը»,— ասում է Անդրանիկ Մանուկյանը։ Նրա ստորաբաժանումը մոտ հինգ ամիս պաշտպանում է քաղաքի բնագծերից մեկը և թշնամուն թույլ չի տալիս թափանցելու նավահանգիստը։ Այստեղ Անդրանիկը խիզախ ռազմիկի համբավ է ձեռք բերում։ Գիշերային հետախուզությունների ընթացքում մի քանի անգամ հակառակորդի խրամատները մտնելով՝ «լեզու» է որսում, դառնում է համարձակ հետախույզ և Սևաստոպոլից հեռանում միայն ծանր վիրավորվելուց հետո։

1942 թվականի ամռանը Մանուկյանը Վոլգոգրադի հերոս պաշտպանների շարքերումն էր։ Վոլգոգրադի ռազմաճակատի մեր զորքերի հարձակման ժամանակ նա գվարդիական առաջին տանկային բրիգադայի ավտոմատավորների թվում թշնամու դեմ մարտեր էր մղում Մամաև Կուրգանում և Կալաչի տակ։ Այդ արտակարգ արյունահեղ կռիվներում նա երկրորդ անգամ վիրավորվում է, բայց շուտով զորամաս վերադառնալով, 1943 թվականի հուլիս-օգոստոսին մասնակցում է Կուրսկի աղեղի ճակատամարտերին, որի ընթացքում սովետական բանակը, հյուծելով և ապա ջախջախելով գերմանական զորքերին, հուժկու հարձակումով հասավ Դնեպրի ափը և մասսայաբար սկսեց ազատագրել օկուպացված սովետական քաղաքներն ու գյուղերը։

1943 թվականի սեպտեմբերին Մանուկյանին շնորհվում է կրտսեր լեյտենանտի սպայական առաջին կոչումը։ Նա նշանակվում է տանկային գնդի ավտոմատավորների վաշտի հրամանատար։ Գետանցելով Դնեպրը, դեկտեմբերին գունդը ազատագրում է Կազատին քաղաքը։ Այդ մարտերում ցուցաբերած խիզախության համար առաջին անգամ Անդրանիկը պարգևատրվում է Կարմիր աստղի մարտական շքանշանով։

Շուտով նրանց բրիգադան Ուկրաինական առաջին ռազմաճակատի զորքերի կազմում հարձակումներ է սկսում Մերձկարպատներում՝ Չերնովիցի քաղաքի ուղղությամբ։ Մանուկյանի վաշտը գնդի հրամանատարի առաջադրանքով անցնելով Դնեստրը, նրա արևմտյան ափին գրավում է ամուր հենակետ։ Համառությամբ ետ մղելով թշնամու զորամասերի կատաղի գրոհները, վաշտը ապահովում է տանկային ստորաբաժանումների գետանցումը։ Առաջ շարժվելով, գունդը ազատագրում է Գորոդենկա և Սնյատին քաղաքները։ Համարձակ գործողությունների համար լեյտենանտ Մանուկյանը պարգևատրվում է Կարմիր դրոշի շքանշանով։ Օր-օրի ավելանում է երիտասարդ հրամանատարի փառքը։

1944 թվականի հուլիս ամսից գվարդիայի ավագ լեյտենանտ Անդրանիկ Մանուկյանը նշանակվում է բրիգադայի գնդերից մեկի շտաբի պետի տեղակալ՝ հետախուզության գծով։ Բելոռուսական առաջին ռազմաճակատի զորքերի կազմում գունդը ակտիվորեն մասնակցում է Բուգ, Սան, Վիսլա և այլ խոշոր ջրային բնագծերի հաղթահարման մարտերին։

Հետախուզությունը Մանուկյանի տարերքն էր։ Իր մոտո-հետախուզական

խմբով 1944 թվականի ամռանն անցնելով Արևմտյան Բուգ գետը, նա դուրս է գալիս ՍՍՌՄ պետական սահմանը և ոտք դնում լեհական հողը։ Այնուհետև լեհական Յարոսլավ քաղաքի ուղղությամբ մարտերով առաջ շարժվելով, բրիգադայի զորամասերը հակառակորդից մաքրում են բազմաթիվ բնակավայրեր, որոնց թվում Ալեշիցա քաղաքը։ Նրանք Յարոսլավ քաղաքից 12 կիլոմետր հյուսիս անցնում են նաև Սան գետը և նրա ձախ ափին մահու և կենաց կռիվ մղում գերմանական 24 տանկերի դեմ ու կայունությամբ պահպանում հենակետը մինչև բրիգադայի հիմնական ուժերի հասնելը։ Շուտով բրիգադան ազատագրում է Յարոսլավ քաղաքը։ Այստեղ կապիտան Մանուկյանը պարգևատրվում է Կարմիր դրոշի երկրորդ շքանշանով և նշանակվում գվարդիական տանկային առաջին բրիգադայի հետախուզության պետ։

1945 թվականի ձմռանը սովետական բանակի ընդհանուր հարձակման ժամանակ բրիգադան, հունվարի 14-ին, Բելոռուսական առաջին ռազմաճակատի զորքերի կազմում, հարձակման է անցնում Վիսլա գետի վրա գերմանացիների Մագնուշևյան պլացդարմի դեմ։ Ռազմաճակատի միավորումների հետ միասին ճեղքելով գերմանացիների պաշտպանությունը և կիլոմետր առ կիլոմետր առաջ շարժվելով, բրիգադան մասնակցում է Վարշավայի ազատագրմանը, Վարթա գետի անցմանը, Կոնին, ապա Պոզնան քաղաքների համար մղված մարտերին։

Կապիտան Մանուկյանը հմտորեն ղեկավարելով բրիգադայի հետախուզությունը, նորանոր հաջողությունների է հասնում։ Վերադաս հրամանատարությունը բարձր գնահատելով Մանուկյանի մարտական ծառայությունները Հայրենիքի հանդեպ, 1945 թվականի հունվարի 19-ին նրան ներկայացնում է Սովետական Միության Հերոսի կոչման։ Այդ առթիվ բրիգադայի հրամանատարության կողմից կազմված պաշտոնական բնութագիր-պարգևաթերթիկում հունվարյան հարձակման առաջին չորս օրվա ընթացքում, Մանուկյանի կատարած մարտական գործողությունների մասին արձանագրված է հետևյալը։

Մարտական առաջադրանքի համաձայն Մանուկյանը հունվարի 15-ի գիշերը հետախույզների հետ անցնելով ռազմաճակատի գիծը՝ թափանցում է թշնամու պաշտպանության երկրորդ գիծը և հայտնվում նրանց մարտակարգերի մեջ Ցիցելյուվկայի շրջանում։ Մանուկյանը համարձակորեն ներխուժելով գետնափոր տնակներից մեկը, ռռնակներ է նետում հիտլերականների վրա, սպանում յոթ զինվորի, վիրավորում 2-ին և գերի վերցնում մեկ սպայի՝ գերմանական 19-րդ տանկային դիվիզիայի 73-րդ մոտոգնդի հրամանատար կապիտան Վայսին և բերում շտաբ։ Գերին արժեքավոր տեղեկություններ է տալիս, որոնք հիմնականում վճռում են բրիգադայի այդ օրվա հարձակողական մարտի հաջողությունը։

Հունվարի 17-ին շարժվելով Խժով քաղաքի ուղղությամբ, Մանուկյանը իր հետախույզների խմբով հանդիպում է հակառակորդի ուժեղ ուղեկալի։ Քաղաքի արևելյան կողմում թողնելով հետախուզական խմբի հիմնական ուժերին,

ինքը երկու հոգի վերցնելով, շրջանցում է քաղաքը և մանրամասն հետախուզում թշնամուն: Այդտեղ, քաղաքի արևմտյան ծայրամասում, մարտի է բռնվում գերմանացիների մի խմբի հետ: Նրա ազդանշանով հետախուզական խմբի մյուս մարտիկները նույնպես հարձակման են անցնում արևելյան կողմից: Երկու կողմից նեղելով հակառակորդին՝ ոչնչացնում են նրանց մի մասին, 15 հոգու գերի վերցնում և արտակարգ համարձակություն հանդես բերելով, օժանդակում են Եժով քաղաքի ազատագրմանը:

Բրիգադայի հրամանատար, գվարդիայի գնդապետ Տեմնիկը, հպարտ իր հետախույզներով, այդ օպերացիայի մասին գրել է. «Գվարդիայի կապիտան Մանուկյանը... շնորհիվ իր համարձակ նախաձեռնության և արտակարգ քաջության, հետախուզական խմբի ուժերով օժանդակեց գրավելու Եժով քաղաքը»:

Այդ նույն օրը ճանապարհին հետախույզները իրենց խիզախ հրամանատարի գլխավորությամբ հարձակվում են գերմանական զումակի և զորքի մի շարասյան վրա: Ոչնչացնում են չորս հրանոթ, գրավում ավելի քան 60 ավտոմեքենա, գերի են վերցնում ֆաշիստական 20 զինվոր ու սպա, ցրիվ տալիս շարասյունը: Հունվարի 18-ին, նույն կարգով, թափանցելով Պոտգեմբիցա երկաթուղակայարանը հետախույզները ոչնչացնում են ժամապահներին, գերում կայարանապետին և նրա 2 պաշտոնյաներին ու բերում շտաբ: Այդ գերիների տված տեղեկություններն օգնում են բրիգադային հաջողությամբ կատարելու սկսած օպերացիան:

Ահա այս խիզախությունների համար ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1945 թվականի փետրվարի 27-ի հրամանագրով Սովետական Միության հերոսի կոչում է շնորհվում գվարդիայի կապիտան, հայ ժողովրդի խիզախ զավակ Անդրանիկ Մանուկյանին:

Ոգեշնչված բարձր պարգևից՝ Սովետական Միության հերոս Մանուկյանը, կրկնապատկված եռանդով շարունակելով իր մարտական ուղին, հետախուզական նոր սխրանքներով մասնակցում է Օդերի գետանցմանը, Ֆրանկֆուրտի և Բեռլինի գրավմանը և ֆաշիստական բանակի վերջնական ջախջախմանը:

Գերմանական Բոմենա քաղաքը գրոհելիս, Մանուկյանը հրամանատարության առաջադրանքով իր 20 հետախույզներին գերմանական զինվորի հագուստ հագցնելով, ինքն էլ Օբեր լեյտենանտի համազգեստ հագնելով, մի ամբողջ օր հետախուզում է ռազմաճակատի գծի վրա գտնվող, գերմանացիներով բնակեցված այդ քաղաքը: Մյուս օրը հարուստ տվյալներով նա վերադառնալով, մասնակցում է քաղաքի գրավման համար բրիգադայի մղած համառ մարտերին: Այդ կարգով Մանուկյանը շատ անգամներ օգնել, դուրս է բերել բրիգադային ծանր վիճակից:

Պատերազմի եզրափակիչ շրջանում Մանուկյանն արդեն տանկային գումարտակի հրամանատար էր. նա պատերազմն ավարտում է ծունկի եկած Բեռլինում:

Սովետական Միության հերոս Ա. Մանուկյանը սովետական բանակից զո-

րացրվում է 1946 թվականի սեպտեմբերին, վերադառնում Բաքու և աշխատանքի է անցնում Ադրբեջանի ԿՊ Կենտկոմի ապարատում, իսկ հետագայում՝ դպրոցներում, որպես պատմության դասատու: Նրա կուրծքը զարդարված է Լենինի, երկու Կարմիր դրոշի, Կարմիր աստղի շքանշաններով, «Ոսկե աստղ» մեդալով, լեհական «Գրյունվալդի» շքանշանով և մի շարք այլ մեդալներով։



# ՍԱՄՍՈՆ ՄՈՎՍԵՍԻ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ




## ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի սպակազմին և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում Հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել* Սովետական Միության հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

*8. Կապիտան* Սամսոն Մովսեսի Մկրտումովին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 13 դեկտեմբերի 1942 թ.*





**1943** թվականի մայիսի 26-ին ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ Մ. Ի. Կալինինը Կրեմլում, մի խումբ պարգևատրվածների ներկայությամբ, օդաչու Սամսոն Մկրտումյանին շնորհավորեց Սովետական Միության հերոսի կոչման արժանանալու կապակցությամբ և նրան հանձնեց Լենինի շքանշան ու «Ոսկե աստղ» մեդալ։

Ընդունելով ամենաբարձր պարգևը՝ Մկրտումյանը համբուրեց այն և երդվեց. «Հայրենիքին է պատկանում իմ կյանքը... Հայաստանին... խոստանում եմ Ձեզ, թանկագին Միխայիլ Իվանովիչ, ոչնչացնել գերմանական զավթիչներին մինչև լիակատար հաղթանակը, ոչնչացնել նրանց մինչև այն ժամանակ, քանի դեռ բաբախում է սիրտս։ Երդվում եմ, որ մինչև վերջ կկատարեմ իմ զինվորական պարտքը»։

1910 թվականին Զանգեզուրի Բռնակոթ գյուղում է ծնվել Կովկասի մարտերի հերոսը։ Գյուղական դպրոցում սովորելու հետ մեկտեղ Սամսոնը հարկադրված էր բատրակություն անել։ Նա 14 տարեկան էր, երբ մտավ կոմերիտմիության շարքերը։

1928 թվականին նա տեղափոխվում է Բաքու և աշխատանքի անցնում Բիբի-Հեյբաթի նավթահանքերում, միաժամանակ շարունակելով ուսումը Բաքվի մանկավարժական տեխնիկումում։ Այստեղ 1931 թվականին նա ընդունվում է Սովետական Միության կոմունիստական պարտիայի շարքերը, որից

հետո ընտրվում նավթահանքի կոմերիտական կազմակերպության կոմիտեի քարտուղար, ապա՝ Բաքվի շրջաններից մեկի ԼԿԵՄ կոմիտեի քարտուղար։

1933 թվականին Ադրբեջանի Կ(բ)Պ Կենտկոմի միջնորդությամբ Միրզոյանն գործուղվում է Վոլգոգրադի օդաչուական դպրոցը, որն ավարտում է 1935 թվականին՝ կրտսեր լեյտենանտի կոչումով։ Այնուհետև Բորիսոգլեբսկի օդաչուական դպրոցում նա կատարելագործվում է թռիչքային բարձր տեխնիկայի մեջ։

Առաջին մարտական մկրտությունը Սամսոնն ստանում է սովետա-ֆիննական պատերազմում։ Երբ սկսվում է Հայրենական մեծ պատերազմը, Բելայա Ցերկովում գտնվող ավիամիավորումներից մեկում նա էսկադրիլիայի հրամանատարի տեղակալ էր։ Նա ռազմաճակատ է մեկնում որպես ռմբակոծիչ ավիացիայի օդաչու և առաջին իսկ մարտից հետո փոխարինում է զոհված հրամանատարին։ Միրզոյանի էսկադրիլիայի օդաչուները յուրաքանչյուր մարտական թռիչքի ընթացքում ոչնչացնում են թշնամու ինքնաթիռներ, տանկեր, ավտոմեքենաներ, ռադիոկայաններ, պահեստներ և մեծ քանակությամբ կենդանի ուժ։

Բազմաթիվ են կապիտան Միրզոյանի մարտական սխրագործությունները։ Սակայն նա իրեն առանձնապես դրսևորում է Կովկասի համար մղվող մարտերում։

1942 թվականի աշնանային օրերն էին։

Սամսոն Միրզոյանն իր ությակով մարտական առաջադրանքի կատարումից վերադառնալիս, Գրոզնի քաղաքի մատույցներում նկատում է դեպի իրենց շարժվող մի խումբ «Յունկերսներ»։ Կապիտանը մարտն ընդունելու հնարավորություն չուներ, քանի որ վառելանյութը վերջանալու վրա էր, բայց այլ ելք չկար։ Նա հրամայում է իր ությակին անցնելու ճակատային գրոհի։ Սովետական բազեներին հաջողվում է ցրել «Յունկերսների» առաջին խումբը և նրանցից երկուսին ոչնչացնել։ Շուտով հայտնվում է «Յունկերսների» մեկ ուրիշ խումբ։ Միրզոյանի քաջերը հմուտ գործողություններով ցրում են նաև այդ խումբը և բարեհաջող վայրէջք կատարում իրենց օդանավակայանում։

Երկու շաբաթ շարունակ կատաղի և համառ մարտեր էին մղվում Օրջոնիկիձեի շրջանի Գիզել գյուղի համար։ Հակառակորդը, ռազմաճակատի այդ հատվածում կենտրոնացնելով մեծ քանակությամբ զորք, անընդհատ ռմբակոծության տակ էր պահում Օրջոնիկիձեն ու նրա շրջակայքը։ Կատաղի մարտերից հետո թշնամու տանկերին հաջողվում է ճակատային հարվածով ճեղքել մեր զորքերի պաշտպանությունը և դուրս գալ Օրջոնիկիձեի ամրացված շրջանը։ Համագործակցված են գործում մեր հետևակայինները, հրետանավորները, տանկիստներն ու օդային չորրորդ բանակի օդաչուները։ Այդտեղ էր նաև 805-րդ գրոհային ավիագնդի էսկադրիլիայի հրամանատար Սամսոն Միրզոյանը։

1942 թվականի նոյեմբերի 6-ին ավիագնդի հրամանատարը կապիտան Միրզոյանին իր մոտ կանչելով մարտական առաջադրանք է տալիս. «Կով-

կասը լավ իմացողներից կազմեցինք էսկադրիլիա։ Ձեզ նշանակում եմ այդ էսկադրիլիայի հրամանատար և հրամայում եմ այրել Գիզելի շրջանում կուտակված գերմանական տանկերը... օգնել ցամաքային զորքերին՝ կանգնեցնելու և ջախջախելու հիտլերականներին»։

Լավ գիտակցելով առաջադրանքի կարևոր նշանակությունը, Մկրտումյանը անցնում է կատարմանը։ Նա իր էսկադրիլիայով կտրում է ռազմաճակատի գիծը, լեռնաշղթայի և կիրճերի վրայով ուղղվում դեպի նպատակակետը։ Ներքևում հրամանատարը նկատում է տանկերի և ավտոմեքենաների շարասյունը։ Կլիմայական չափազանց անբարենպաստ պայմաններում սովետական օդաչուների երևալն այնքան անակնկալ էր, որ թշնամին չի հասցնում քողարկվել։ Առջևից սլանում է Մկրտումյանը՝ անձնական օրինակ ցույց տալով իր ընկերներին։ Նրա ինքնաթիռը հարձակման է ենթարկվում ֆաշիստական վեց կործանիչների կողմից։ Նրանցից մեկն ընդհուպ մոտենում է Մկրտումյանի ինքնաթիռին։ Կատարելով ճարպիկ մանևր, խիզախ օդաչուն հրդեհում է այդ կործանիչը։ Ֆաշիստական մյուս մեքենաները գնդակոծում են Մկրտումյանի՝ արդեն վնասվածքներ ստացած ինքնաթիռը։

Մկրտումյանը վիրավորվում է վեց տեղից, ծանր վերքեր է ստանում գլխից և մեջքից, աջ թևն այլևս չի շարժվում։ Վայրէջք կատարելու ոչ մի հնարավորություն. առջևում Կովկասյան նախալեռներն էին՝ իրենց բազմաթիվ լեռնագագաթներով ու կիրճերով, իսկ հետևում թշնամին։ Մկրտումյանն արյունաքամ է լինում։ Հակառակորդի կործանիչները շարունակում էին գնդակոծումը։ Մկրտումյանի մեքենան ընթացքի համար այլևս համապատասխան արագություն չուներ։ Այդ պատճառով նա ամբողջովին փակում է գազը. Նրան հետապնդող կործանիչը իներցիայով առաջ է սլանում, իսկ Մկրտումյանը նրա հետևից բացում է գնդացրային կրակահերթ և շարքից հանում։ Մյուս կործանիչներն ավելի մեծ կատաղությամբ են սկսում հետապնդել Մկրտումյանին։ Գերմարդկային ճիգերով նա վերջապես կարողանում է վայրէջք կատարել սարի գագաթին՝ փոքրիկ հարթավայրում, և հավաքելով վերջին ուժերը, դուրս է գալիս ինքնաթիռից։ Ապա նա կորցնում է գիտակցությունը և ուշքի է գալիս միայն հոսպիտալում՝ վիրահատությունից հետո։

Օրջոնիկիձեի շրջանում մղված մարտերում Մկրտումյանի ղեկավարած էսկադրիլիան կատարում է 163 մարտական թռիչք, որի ընթացքում ոչնչացնում է 116 ավտոմեքենա, 86 տանկ, 9 զենիթային հրանոթ, 14 զենիթային կետ։

Այս մարտերում ցուցաբերած բացառիկ խիզախության և հերոսության համար ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1942 թվականի դեկտեմբերի 13-ի հրամանագրով կապիտան Սամսոն Մովսեսի Մկրտումյանին շնորհում է Սովետական Միության հերոսի կոչում։

Վերքերը բուժելուց հետո, Մկրտումյանը մեկնում է Մոսկվա՝ սովորելու։ Կուրսերն ավարտելուց հետո նշանակվում է գրոհային գնդի հրամանատարի տեղակալ և նորից վերադառնում ռազմաճակատ։ Նա մասնակցում է Կրասնո-

դար, Նովոռոսիյսկ, Չերկասկ, Խարկով, Կիև, Գոմել քաղաքների ազատագրման և վերջին մարտերից մեկում, մարտական առաջադրանքը կատարելիս, զոհվում հերոսի մահով։

Ռազմաճակատում անվեհեր օդաչուի համբավ վաստակած Սամսոն Մկրտումյանի մարտական հաշվում գրանցված է 219 մարտական թռիչք, որոնց ընթացքում նա այրել և շարքից հանել է ավելի քան տասն ինքնաթիռ, 140 տանկ, հարյուրավոր մեքենաներ, ռադիոկայաններ, զենիթային կետեր և ոչնչացրել մեծ քանակությամբ կենդանի ուժ։



# ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԽԱՉԻԿԻ ՋԱՔՐՅԱՆ




## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**Կարմիր բանակի սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին**

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել Սովետական Միության հերոսի կոչում, հանձնելով Լենինի շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ*

*Կապիտան Հարություն Խաչիկի Ջաքրյանին։*

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 24 մարտի 1945 թ.*






Հարություն Խաչիկի Զաքրյանը ծնվել է 1918 թվականին Սուխումիի շրջանի Գումիստա գյուղում, աշխատավորի ընտանիքում։ Սովորել է գյուղի 7-ամյա դպրոցում, ապա ավարտել է Սուխումիի միջնակարգ դպրոցը, որտեղ և ընդունվել է լենինյան կոմերիտմիության շարքերը։

Դպրոցն ավարտելուց հետո, 1939 թվականին նա զինակոչվում է զինվորական ծառայության։ 1941 թվականին Ժիտոմիրի զինվորական հետևակային ուսումնարանն ավարտելուց հետո, Զաքրյանը դառնում է ջոկի հրամանատար։

Հիտլերյան ֆաշիզմի դեմ սովետական ժողովրդի մղած մահու և կենաց պայքարի առաջին իսկ օրից Հարությունը գտնվում էր ռազմաճակատի առաջավոր գծում, որպես ականանետային գումարտակի շտաբի պետ։ 1942 թվականին նա ընդունվում է կոմունիստական պարտիայի շարքերը։ Զաքրյանը մարտնչել է Կովկասյան, Հարավային և Ուկրաինական չորրորդ ռազմաճակատներում։

1944 թվականի ապրիլին Ուկրաինական չորրորդ ռազմաճակատի զորքերը, ջախջախելով թշնամուն, նրան դուրս են վռնդում Ղրիմից։ Այդ ժամանակ կապիտան Զաքրյանը Օրջոնիկիձեի անվան 77-րդ հրաձգային դիվիզիայի 276-րդ

հրաձգային գնդում գումարտակի հրամանատարի օգնական էր։ Սիվաշից մինչև Սևաստոպոլի մատույցները նա անձամբ ղեկավարում է գումարտակի առջևից ընթացող ստորաբաժանումների մարտական գործողությունները։

Ապրիլի 11-ին Կիրկ Իշուն բնակավայրի շրջանում, մարտի բռնվելով հակառակորդի հետ, խիզախ և համարձակ գործողությամբ, գումարտակը երթից գրավում է հիշյալ բնակավայրը։ Այդ կռվում Զաքրյանը անձամբ ոչնչացնում է հիտլերյան տասը զինվոր ու սպա։

Մի այլ մարտից, որը տեղի է ունենում ապրիլի 15—18-ը, գումարտակը դուրս է գալիս հաղթանակով, որը կարևոր նշանակություն է ունենում Սևաստոպոլի ուղղությամբ գումարտակի առաջխաղացումն ապահովելու համար։ Այդ մարտում Զաքրյանը վիրավորվում է, բայց չի թողնում մարտադաշտը և շարունակում է ղեկավարել գումարտակի գործողությունները մինչև վերջ։

Մայիսի 7-ին մեր միավորումները սկսում են Սևաստոպոլի ազատագրման մարտերը։ Հենց առաջին օրը հակառակորդին քշում են քաղաքի վրա իշխող մի շարք բարձունքներից և պաշտպանության ուժեղ հանգույցներից։ Այդ բարձունքներից էր Սապուն-Գորան, որը թշնամին վերածել էր դիմադրության ուժեղ հենակետի։ Նրա գրավման գործում աչքի է ընկնում Զաքրյանի ղեկավարած գումարտակը։ Սապուն-Գորայի գրոհի ժամանակ, իր տեղամասում գումարտակը, Զաքրյանի հրամանատարությամբ, առաջինն է թափանցում թշնամու խրամատները, որտեղ խիզախ հրամանատարն անձամբ ոչնչացնում է 12 հիտլերականի։ Գերի է վերցվում 60 զինվոր ու սպա։

Հաջորդ օրը՝ մայիսի 8-ին, կատաղի կռիվները շարունակվում էին։ Այդ մարտում զոհվում է կապիտան Հարություն Զաքրյանը, որի ղեկավարած գումարտակը մեկ օր անց հաղթողների թվում մտնում է Սևաստոպոլ։

Սևաստոպոլի գրավման համար մղած մարտերում ցուցաբերած արիության և խիզախության, սովետական ժողովրդի ազատությունն ու անկախությունը պաշտպանելու համար իր կյանքը զոհաբերած կապիտան Հարություն Խաչիկի Զաքրյանին, ՍՍՌՄ Գերագույն սովետի Նախագահության 1945 թվականի մարտի 24-ի հրամանագրով, հետմահու շնորհվեց Սովետական Միության Հերոսի կոչում։



# ՎԱՍԻԼ ՆԱԳՈՅԻ ՍԱՐԳՍՅԱՆ






## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

### Կարմիր բանակի գեներալներին, սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Դնեպրի հաջող գետանցման, Դնեպր գետի արևմտյան ափին ամուր հենակետ հաստատելու և այդ ժամանակ ցուցաբերած հերոսության ու խիզախության համար, շնորհել Սովետական Միության հերոսի կոչում, հանձնելով Լենինի շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ.*

*56. Գվարդիայի լեյտենանտ* Վասիլ Նագոյի Սարգսյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ. 17 նոյեմբերի 1943 թ.*





Սովետական բանակի 1943 թվականի հաղթանակների մեջ փառավոր էջ է կազմում Դնեպրի գետանցման մարտական օպերացիան, որը հազարավոր հերոսներ ծնեց. այդ հերոսներից մեկն է հայ ժողովրդի արժանավոր զավակ գվարդիայի լեյտենանտ Վասիլ Սարգըսյանը։

Վասիլ Նազոյի Սարգսյանը ծնվել է 1922 թվականի մարտի 15-ին Օդեսա քաղաքում՝ նավահանգստային բեռնակիր բանվորի ընտանիքում։

Վասիլը յոթ տարեկան հասակից հաճախում է Օդեսայի հայկական յոթնամյա դպրոցը։ Պատանին առանձնապես սիրում է պատմությունը և հայ գրականությունը։ Դպրոցն ավարտելուց հետո Վասիլը ընտանիքին օգնելու համար դառնում է կոշկակարի աշակերտ։ Տիրապետելով արհեստին, նա շուտով ընդունվում է Օդեսայի մոդելային կոշիկի պետական ֆաբրիկան՝ որպես բանվոր։

1941 թվականի մայիսին 19-ամյա բանվոր Սարգսյանը զինակոչվում է բանակ հերթական ծառայության։ Հիտլերյան Գերմանիայի դեմ սկսված պատերազմը նա դիմավորում է Լատվիայում։ Հայրենական մեծ պատերազմի առաջին օրերի ծանր մարտերը նրա համար եղան մեծ փորձությունների ու մարտական մկրտության օրեր։ Պատերազմի սկզբից, շարունակ լարված մարտերի

մեջ գտնվելով, 1941 թվականի հուլիսի 29-ին նա Ստարայա Ռուսայի շրջանում ծանր վիրավորվում է գլխից։ Բուժվելուց հետո Սարգսյանը գործուղվում է Ռյազանի հետևակային դպրոցը, որն ավարտում է 1942 թվականի հուլիսին և կրտսեր լեյտենանտի կոչումով նշանակվում է դասակի հրամանատար 5-րդ տանկային բանակում։ Այդ միավորման կազմում էլ Սարգսյանը իր ստորաբաժանումով մասնակցում է Վոլգոգրադի, իսկ 1943 թվականին նաև Օրյոլ–Կուրսկ արյունահեղ ճակատամարտերին։ Նա երկու անգամ ծանր վիրավորվում է։ Այդ մարտերում Սարգսյանը աճում և առաջ է քաշվում ավելի բարձր հրամանատարական պաշտոնների։ 1943 թվականին նա արդեն լեյտենանտի կոչում ուներ և ծառայում էր 3-րդ տանկային բանակում, կատարում մոտո-հրաձգային վաշտի հրամանատարի, ապա գումարտակի շտաբի պետի պարտականությունները։

Շարքային կարմիրբանակայինից բարձրանալով հրամանատարի աստիճանի, Սարգսյանը շարունակ հոգ է տանում իր ռազմական գիտելիքները բարձրացնելու ուղղությամբ։ Հանդես բերելով կայունություն, անձնական խիզախություն ու արիություն, նա դեռևս ժամանակավոր նահանջի ծանր օրերին պարգևատրվել էր Կարմիր աստղի շքանշանով և քաջի անուն վաստակել միավորման շարքերում։

Սարգսյանի ռազմական հմտությունը և հերոսությունը ավելի պերճախոս կերպով դրսևորվում է Դնեպրի գետանցման ժամանակ, հետագա հարձակողական գործողությունների ու պատերազմի հաղթական եզրափակիչ մարտերում։

1943 թվականի սեպտեմբերի վերջին սովետական բանակի զորքերը ճեղքելով գերմանացիների պաշտպանության գիծը, հասան Դնեպրին։ Լեյտենանտ Սարգսյանը մարտնչում էր հարձակվող գվարդիական 7-րդ տանկային կորպուսի 54-րդ բրիգադայի մոտո-հրաձգային գնդացրային գումարտակում՝ որպես առաջին վաշտի հրամանատար։ Գետանցման ժամանակ Սարգսյանը առաջադրանք է ստանում իր ինը հրաձիգներով Պերեյասլավլի շրջանում գետանցել Դնեպրը և իրենց զորամասերի համար հենակետ գրավել նրա աջ ափին։ Խիզախների խումբը գիշերով, թշնամու տեղատարափ կրակի տակ սկսում է գետանցումը։ Դեռ ափը չհասած, հերոսի մահով զոհվում են երեք մարտիկներ, մնացած մարտիկները Սարգսյանի ղեկավարությամբ առաջ են գնում և իրենց փոքրիկ ուժերով հենակետ գրավելով մի ամբողջ օր պահում են այն։ Շուտով պոնտոնային նավակներով և այլ տեխնիկական միջոցներով համալրում և սպառազինություն է առաքվում դեսանտայիններին, որոնք ավելի մարտունակ դառնալով, աստիճանաբար ընդլայնում են հենակետը և հնարավորություն են ստեղծում իրենց զորամասերին հաջողությամբ գետանցում կատարելու։ Այստեղ լեյտենանտ Սարգսյանը ձեռքից վիրավորվում է, բայց չի հեռանում մարտադաշտից։ Ավելի քան քսան ժամ ճիգեր գործադրելով, նա ղեկավարում է գետն անցած իր վաշտի մարտերը, որն ավարտվում է փայլուն հաջողությամբ։

Միավորման հրամանատարությունը, բարձր գնահատելով ՍՄԿԿ-ի անդամության թեկնածու լեյտենանտ Վասիլ Սարգսյանի անձնական խիզախությունը, որը նա հանդես էր բերել գետանցի և պլացդարմի ընդլայնման մարտերում, նրան 1943 թվականի դեկտեմբերի 5-ին ներկայացնում է Սովետական Միության Հերոսի կոչման։ Այդ կապակցությամբ հրամանատարության կազմած պարգևաթերթիկում ասված է. «Գվարդիայի լեյտենանտ Վ. Ն. Սարգսյանը Կարմիր Բանակի համարձակ, ձեռներեց ու արիասիրտ հրամանատար է։ Նրա հրամանատարությամբ դասակի 9 մարտիկները ուժեղ կրակի տակ առաջինը անցան Դնեպր գետը։

Հանդիպելով հակառակորդի ուժեղ դիմադրությանը, այդ խումբը նրան մարտերով դուրս մղեց կարևոր խրամուղիներից, ապահովեց ամբողջ գումարտակի անվտանգ գետանցումը։

Ընկ. Վ. Ն. Սարգսյանը Տրակտամիրովո, Վերխնի Կարկին գյուղերի գրավման ժամանակ, գիշերային գրոհի ամենաակտիվ մասնակիցներից մեկն է եղել։

Գվարդիայի լեյտենանտ Վ. Ն. Սարգսյանը արժանի է Սովետական Միության Հերոսի կոչման»։

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահությունը 1943 թվականի դեկտեմբերի 17-ի հրամանագրով գվարդիայի լեյտենանտ Վ. Ն. Սարգսյանին շնորհում է Սովետական Միության Հերոսի կոչում, նրան հանձնելով Լենինի շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ։ Հերոսի կոչում է շնորհվում նաև նրա մյուս զինակիցներին՝ Բ. Վ. Միխայլովին, Ն. Ի. Ռոգովին, Բ. Գ. Գեսցին և Մ. Պ. Օկորկովին։ Միավորման ռազմաճակատային թերթը տպագրելով Սարգսյանի և նրա մարտական ընկերների խմբանկարը, վերնագրել է այսպես. «Մեր պարծանքը, մեր փառքը»։

Սարգսյանը կարճ ժամանակով հոսպիտալում բուժվելուց հետո, դեռևս ձեռքը գիպսի մեջ, վերադառնում է ռազմաճակատ։

Երկրորդ անգամ Սարգսյանը Դնեպրը գետանցում է Կիև—Ժիտոմիրի ուղղությամբ։ Ժիտոմիրի ազատագրման ժամանակ, 1944 թվականի հունվարի 2-ին ականի բեկորով նա ծանր վիրավորվում է գլխից (5-րդ վիրավորում) և հարկադրված է լինում չորս ամիս բուժվել բանակի հոսպիտալում։ Բուժվելուց հետո Սարգսյանը հրաժարվելով հանգստի գնալու իրեն տրված արտոնությունից, նորից ներկայանում է միավորման շտաբ և նշանակվում մոտո-հետևակային գումարտակի հրամանատար։

Այս գումարտակի շարքերում Սարգսյանը ակտիվորեն մասնակցում է Կորսուն-Շևչենկովսկիի խմբավորման ջախջախման մարտերին, որտեղ սովետական բանակը մի նոր Վոլգոգրադ սարքեց ֆաշիստական բանակի համար, շրջապատեց ու ջախջախեց մինչև 11 դիվիզիա։ Այս օպերացիայից հետո միավորման հրամանատարությունը Սովետական Միության Հերոս Սարգսյանին ուղարկում է վերապատրաստվելու սովետական բանակի զրահատանկային



270—15

*բարձրագույն սպայական դպրոցում, որը նա ավարտում է կապիտանի աստիճանով։ 1945 թվականի գարնանից նոր եռանդով և նոր գիտելիքներով նա վերադառնում է գործող բանակի շարքերը։*

*Սարգսյանը իր վերջին զինվորական ծառայությունը կատարում է գվարդիական 11-րդ տանկային բանակում, Սովետական Միության Հերոս, տանկային զորքերի գնդապետ (հետագայում գեներալ-գնդապետ) Համազասպ Բաբաջանյանի տանկային բրիգադայում, որպես մոտո-մեքենայացված գումարտակի հրամանատար։ Այս միավորման կազմում էլ Սովետական Միության Հերոս, գվարդիայի կապիտան Սարգսյանը մասնակցում է Բեռլինի գրավման վիթխարի ճակատամարտերին։ «Մեր բանակի շատ հրամանատարների և մարտիկների թվում,—գրել է Սարգսյանը,—ինձ նույնպես բախտ վիճակվեց իմ ազգանունը գրելու Ռեյխստագի շենքի վրա։*

*Պատերազմից հետո Սարգսյանը մինչև 1946 թվականի նոյեմբերը ծառայում էր Դրեզդենում (Գերմանիա)՝ սովետական օկուպացիոն զորքերի կազմում։ Դեկտեմբերին նրան փոխադրում են Անդրկովկասյան ռազմական օկրուգ, որտեղից նա զորացրվում է։*

*Սովետական Միության Հերոս, պահեստի կապիտան Սարգսյանը պարգևատրվել է Լենինի և երկու Կարմիր աստղի շքանշաններով, «Ոսկե աստղ» և մի շարք այլ մեդալներով։ Նա այժմ ապրում է Օդեսա քաղաքում և աշխատում է որպես կոշիկի ֆաբրիկայի դիրեկտոր։*



# ՀՐԱՆՏ ԱՌԱՔԵԼԻ ՕՀԱՆՅԱՆՑ





## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ը

Կարմիր բանակի սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում Հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել Սովետական Միության հերոսի կոչում, հանձնելով Լենինի շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ.*

*Կապիտան Հրանտ Առաքելի Օհանյանցին:*

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 24 մարտի 1945 թ.:*



Հրանտ Առաքելի Օհանյանը Հայրենական պատերազմի հենց առաջին օրերից մասնակցում է մեր երկիրը ներխուժած օտարերկրյա զավթիչների դեմ մղած ծանր մարտերին և զոհաբերում է իր երիտասարդ կյանքը։

Հրանտ Օհանյանը ծնվել է 1918 թվականին Ուզբեկստանի Կոկանդ քաղաքում, արհեստավորի ընտանիքում։ Այստեղ էլ նա անց է կացրել իր մանկությունն ու պատանեկությունը։

1933 թվականին Օհանյանի ծնողները տեղափոխվում են Կիսլովոդսկ։ Նույն թվականին նա ընդունվում է Պյատիգորսկի բանֆակը։ Ուսման ընթացքում Հրանտը աչքի է ընկնում որպես առաջավոր ու լավագույն ուսանող և ընդունվում լենինյան կոմերիտմիության շարքերը։ Բանֆակն ավարտելուց հետո, 1936 թվականին նա ընդունվում է Նալչիկի մանկավարժական ինստիտուտի կենսաբանական ֆակուլտետը։ Ինստիտուտն ավարտելուց հետո, 1940 թվականին Օհանյանն աշխատանքի է անցնում քաղաքի միջնակարգ դպրոցներից մեկում, որպես քիմիայի և բնագիտության դասատու։ Սակայն նրա ուսուցչական գործունեությունը երկար չի տևում։ Օհանյանը շուտով զորակոչվում է սովետական բանակ և գործուղվում սովորելու Անդրկովկասյան ռազմական

օկրուգի 42-րդ հրաձգային դիվիզիայի գնդերից մեկի հատուկ դպրոցում, որն ավարտում է 1941 թվականին և նշանակվում հետախուզային դասակի հրամանատար։ Այնուհետև Հրանտը ռազմական գիտելիքները կատարելագործում է Սարատովի ռազմական հետևակային ուսումնարանում, որտեղ նա ընդունվում է կոմունիստական պարտիայի շարքերը։

1942 թվականի փետրվարին Հրանտը ավարտում է ուսումնարանը, ստանում քաղղեկի կոչում և նշանակվում ավիացիոն էսկադրիլիայի կոմիսար։

Կոմիսար Օհանյանը 1942 թվականի դեկտեմբերից մինչև 1943 թվականի մայիս ամիսը մասնակցում է Հյուսիսային Կովկասը ֆաշիստական զավթիչներից ազատագրելու մարտերին, իսկ նույն թվականի սեպտեմբերին կռվում է Ուկրաինական երկրորդ ռազմաճակատում։ Այստեղ ցուցաբերած խիզախության համար հրամանատարության կողմից պարգևատրվում է Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով։ Ռազմական հատուկ դպրոցում շուտով նա ձեռք է բերում նոր մասնագիտություն, դառնում է տանկիստ և նշանակվում վաշտի հրամանատար 11-րդ տանկային դիվիզիայի 71-րդ գնդում։

1944 թվականի օգոստոսին, երբ սովետական զորքերը, հետապնդելով նահանջող թշնամուն, հասել էին Հունգարա-ռումինական սահմանին, Հրանտ Օհանյանցին առաջադրանք է տրվում Ռոտունդա Աչյուդենի շրջանում իր տանկային վաշտով անցնել Սերետ գետը և ուղի հարթել մեր զորամասերի համար։

Գետի աջ ափին խրամատավորվել էին հիտլերականները և այնտեղից անընդհատ գնդակոծում էին ձախ ափը՝ դժվարացնելով գետանցումը։ Օգտվելով գիշերվա խավարից, Օհանյանցն առաջինն է մոտենում գետին։ Նա հետախուզում է շրջակայքը, դուրս է գալիս տանկից և 30 րոպե շարունակ լողալով գետում, ուսումնասիրում է անցահունը, ապա ափին մոտեցած տանկիստներին հրամայում է անցնել գետը։ Օգոստոսի 26-ին անցնելով գետը, Կարպատների լեռնա-անտառային տեղանքի դժվարին պայմաններում, կապիտան Օհանյանցի քաջակորով տանկիստները, Հունգարա-ռումինական սահմանի մոտ գտնվող Ուզվեյդի շրջանում թնդանոթային ավերիչ կրակով ճեղքում են հակառակորդի ամրությունները, անցք են բացում հակատանկային արգելափակոցներում և դուրս են գալիս ականապատված դաշտը։ Տանկերը կանգ են առնում։ Հակառակորդը դոտերից և դզոտերից տեղատարափ կրակ է տեղում։ Չնայած դրան, բացվում է առաջապահ տանկի աշտարակը, այնտեղից դուրս է գալիս անվեհեր հրամանատարը և անցման ուղի որոնում։ Վտանգի տակ դնելով իր կյանքը, նա շարունակում է հետախուզությունը ականապատված դաշտում։ Վերջապես Օհանյանցին հաջողվում է գտնել անցման ուղին։ Այն պահին, երբ նա մոտենում է տանկին, որպեսզի գրոհելու հրաման տա, թշնամու գնդակը մահացու վերք է հասցնում նրան։ Երիտասարդ կապիտանը նույն օրը իր ռազմիկների ձեռքերին մահանում է։ Սիրելի հրամանատարի մահվան համար վրեժով լցված տանկիստները անցնելով ականադաշտով, հաղթահարում են հա-

*հակառակորդի ամրությունը և նրան պատճառում կենդանի ուժի ու տեխնիկայի մեծ կորուստ։*

*Կապիտան Օհանյանցի հրամանատարությամբ գործող տանկային վաշտը հնգօրյա մարտերում ոչնչացնում է թշնամու 4 տանկ, 31 հրանոթ, 15 ականանետ, 90 գնդացիր, 41 ավտոմեքենա, 16 մոտոցիկլետ, 14 դոտ և 926 զինվոր ու սպա։ Գրավում է 2 տանկ, 24 ավտոմեքենա, 62 հրանոթ, 15 ականանետ, 700 սայլ՝ ռազմական բեռներով, գերի վերցնում ֆաշիստական 1.493 զինվոր ու սպա։*

*Հունգարա-ավստրիական սահմանի մոտ հակառակորդի ամրությունները ճեղքելու ժամանակ ցուցաբերած խիզախության և անձնազոհության համար ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1945 թվականի մարտի 24-ի հրամանագրով կապիտան Հրանտ Առաքելի Օհանյանցին հետմահու շնորհվում է Սովետական Միության Հերոսի կոչում։*





# ԷԴՈՒԱՐԴ ՄԵԼԻՔԻ ԱՅԱՆՅԱՆ






## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

### ՍՍՌՄ Զինված ուժերի սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում Հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել Սովետական Միության հերոսի կոչում, հանձնելով Լենինի շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ.*

*1. Ավագ սերժանտ* Էդուարդ Մելիքի Այանյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Մ. Կալինին

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 15 մայիսի 1946 թ.*





Էդուարդ Մելիքի Այանյանը ծնվել է 1919 թվականի մարտի 25-ին Գանձակի գավառի (այժմ Ադրբեջանական ՍՍՌ Խանլարի շրջան) Գետաշեն գյուղում։ 1925 թվականին նրանց ընտանիքը տեղափոխվում է Կիրովաբադ։ 1936 թվականին ավարտելով Կիրովաբադի միջնակարգ դպրոցը, նա ընդունվում է Բաքվի պետական համալսարանի ֆիզիկո-մաթեմատիկական ֆակուլտետը։ 1941 թվականին, երբ նա վերջին պետական քննությունն էր հանձնում, սկսվում է Հայրենական պատերազմը։ է. Այանյանը մեկնում է սովետական բանակ և գործուղվում հրետանային դպրոց։ 1942 թվականի հոկտեմբերին ավարտում է դպրոցը և նշանակվում Պենզա քաղաքում գտնվող 91-րդ պահեստային գնդում իբրև դասակի հրամանատար, ապա այնտեղից մեկնում է Վորոնեժի ռազմաճակատ՝ 183-րդ զենիթա-հրետանային գունդը։

Այդ միավորումը պաշտպանում էր Վոլգոգրադ տանող երկաթգիծը։ 1943 թվականի դեկտեմբերին նրան փոխադրում են 5-րդ զենիթային դիվիզիա։ Այստեղ նա դասակի հրամանատար էր։ Միավորումը 1943 թվականի հուլիսին մասնակցում է Բելգորոդ—Կուրսկի ուղղությամբ մղվող ճակատամարտին։ Այստեղ Այանյանի մարտիկները խփում են գերմանական 3 ինքնաթիռ։ Ռազմա-

*ճակատի զորքերի մյուս միավորումների հետ նրանց զորամասը, հետապնդելով թշնամուն, հասնում է մինչև Խարկով։ Վերջինիս ազատագրման մարտերում Այանյանը խփում է թշնամու մի ինքնաթիռ, որի համար պարգևատրվում է Խիզախության համար մեդալով։*

*Խարկովն ազատագրելուց հետո նրանց զորամասը գետանցում է Դնեպրը։ Հազարավոր մարտիկների հետ Դնեպրի աջ ափին պլացդարմ են գրավում նաև Այանյանի մարտիկները, որոնք հերոսաբար պաշտպանում են գրաված հենակետը թշնամու օդային հարձակումներից։ Մարտական այդ առաջադրանքի կատարման համար Այանյանը պարգևատրվում է Կարմիր աստղի շքանշանով։*

*1944 թվականի մայիսի 5-ին սովետական զինված ուժերի միավորումները հասնում են Ռումինիա։ Ռումինիայում Այանյանի ղեկավարած ստորաբաժանումը մարտի է մղում Կուկուտեն գյուղի մոտ։ Գերմանացիները հինգ անգամ հարձակման են անցնում։ Այանյանի հրետանավորները թշնամու գրոհները հետ են մղում և պաշտպանում այդ տեղամասը։ Դրա համար հրամանատարությունը Այանյանի ստորաբաժանմանը շնորհակալություն է հայտնում, իսկ իրեն պարգևատրում է Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանով։*

*1944 թվականի օգոստոսի 22-ին մեր զորքերը հասնում են ռումինական Ագչյուանովո քաղաքը, որի մի մասը գերմանացիների ձեռքում էր։ Գերմանական սավառնակները թույլ չէին տալիս մեր տանկերին առաջ շարժվելու։ Այանյանի մարտկոցը առաջադրանք է ստանում քաղաքի հրապարակից կրակել գերմանական ինքնաթիռների վրա։ Ի կատարումն այդ առաջադրանքի նրանք խփում են մի ինքնաթիռ և թույլ չեն տալիս, որ թշնամին քաղաք թափանցի։*

*Ռումինիայից հետո մեր զորքերն անցնում են Հունգարիա և մոտենում են Բուդապեշտին, ուր գերմանացիները պաշտպանության ուժեղ գծեր էին ստեղծել։ Մի շարք միավորումների հրետանավորներ, որոնց թվում նաև Այանյանի մարտկոցը, 1944 թվականի դեկտեմբերի վերջերին առաջադրանք է ստանում գրոհել Բուդապեշտի վրա։ Ինչպես նախորդ, այնպես էլ Բուդապեշտի ազատագրման համար մղվող մարտերում մարտկոցի հրամանատար է. Այանյանը իրեն դրսևորում է որպես ուժեղ կամքի տեր անձնավորություն։ Նա գերազանց տիրապետելով հրանոթին՝ իր ստորաբաժանումն առաջնորդում է սխրագործությունների, մեծ կորուստներ պատճառում թշնամուն։ Այանյանի մարտկոցի մարտական հաշվում կա՝ թշնամու խփված 14 ինքնաթիռ, 3 տանկ և մինչև 300 զինվոր ու սպա։ Նրա պարգևաթերթիկում գրված է. Բուդապեշտ քաղաքի շրջապատում թշնամու խմբավորման լիկվիդացման համար մղված մարտերում գործող մյուս միավորումների հետ, Այանյանի մարտկոցը համառ մարտեր է մղել թշնամու հակագրոհի անցած հետևակի դեմ՝ ոչնչացնելով կրակային կետերը տներում։*

*1945 թվականի հունվարի 5—18-ը, Բուդապեշտում մղված մարտերի ժամանակաշրջանում, Այանյանի մարտկոցը հետ է մղել թշնամու 27 հակագրոհ, ոչնչացրել է 36 հրանոթային, 20 սնայպերական և 40 տներում տեղավորված*

կրակային կետեր, 12 ավտոմեքենա՝ ռազմական բեռներով և այլն։ Բուդապեշտի փողոցներում հրանոթային և գնդացրային ուժեղ մարտերի ժամանակ է. Այանյանը արհամարհելով մահը, իր հրանոթները հարմար դիրքերում տեղադրելով և հայտնաբերելով թշնամու կրակային կետերը հաճախ ինքն անձամբ 300—400 մետրի վրա ուղիղ նշանառությամբ ոչնչացնում էր դրանք։

1945 թվականի հունվարի 6-ին թշնամու հակագրոհի ժամանակ ավագ լեյտենանտ Այանյանը վիրավորվում է, բայց նա այդ վիճակում շարունակում է ղեկավարել իր մարտկոցի գործողությունները։

1945 թվականի հունվարի 10-ին Այանյանը ոչնչացնում է երկու սնայպերական կետ, որով մեր ստորաբաժանմանը հնարավորություն է տալիս առաջ շարժվելու։ Բուդապեշտի արևելյան մասի ազատագրման համար մղած մարտերում Այանյանը իր մարտկոցի անձնակազմով առաջինն է անցնում Դանուբ գետը։

Բուդապեշտի մարտերում աչքի ընկած քաջագործությունների համար ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1946 թվականի մայիսի 15-ի հրամանագրով ավագ լեյտենանտ Էդուարդ Մելիքի Այանյանին շնորհվում է Սովետական Միության Հերոսի կոչում։

Հայրենական մեծ պատերազմն ավարտվում է սովետական ժողովրդի հաղթանակով։ 1946 թվականին, շատերի հետ միասին, տուն է վերադառնում նաև Այանյանը։ Նա 1947 թվականին ընդունվում է Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի ֆիզիկա-մաթեմատիկական բաժանմունքի ասպիրանտուրան։ Ավարտելով ասպիրանտուրան՝ նա տեղափոխվում է Մոսկվա, ընդունվում ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի մեխանիկական ինստիտուտ, իբրև գիտական աշխատող, ուր աշխատում է մինչև այժմ։



# ԳԵՎՈՐԳ ԱՐԿԱԴԻԻ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ





## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի գեներալներին, սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում Հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել* Սովետական Միության Հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

*16. Գվարդիայի ավագ լեյտենանտ* Գեորգի Արկադիի Առուստամովին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 27 հունիսի 1945 թ.։*





Հայրենական մեծ պատերազմում, սոցիալիստական Հայրենիքի ազատության ու անկախության համար զոհված դյուցազունների շարքում անթառամ փառքով է պսակվել գվարդիայի ավագ լեյտենանտ Գեորգ Արկադիի Առուստամյանը (Գեորգի Արկադիի Առուստամով)։

Գեորգ Առուստամյանը ծնվել է 1919 թվականի հուլիսի 28-ին Կիսլովոդսկ քաղաքում։ Նրա հայրը՝ Ա. Մ. Առուստամյանը, նախքան Հոկտեմբերյան ռևոլյուցիան, աշխատանք որոնելու համար, Զանգեզուրի Շաղաթ գյուղից մեկնել էր Հյուսիսային Կովկաս։ 1929 թվականին Գեորգն ընդունվում է Կիսլովոդսկի № 4 միջնակարգ դպրոցը և 1938 թվականին ավարտում 8-րդ դասարանը։ 1939 թվականին Առուստամյանը զինակոչվում է բանակ և մասնակցում Արևմտյան Ուկրաինայի ազատագրմանը։ 1940 թվականին նա կռվում է սովետա-ֆիննական պատերազմի ռազմաճակատում։

Հայրենական պատերազմի առաջին իսկ օրից Հայրենիքի պաշտպանների շարքերում կանգնում է նաև կոմունիստ Գ. Առուստամյանը։ Անընդհատ մասնակցելով կռիվներին, նա իրենց զորամասում անվախ ու քաջ զինվորականի համբավ է վայելում և միշտ հանդես գալիս մարտական գործողությունների

ամենադժվարին տեղամասերում։ Մարտերի ընթացքում նա երեք անգամ վիրավորվում է և բուժվելուց հետո նորից վերադառնում ռազմաճակատ։

1944 թվականի օգոստոսին գվարդիայի ավագ լեյտենանտ Գևորգ Առուստամյանը նշանակվում է Ուկրաինական առաջին ռազմաճակատի Ժիտոմիրյան 7-րդ գվարդիական հեծյալ դիվիզիայի 26-րդ գվարդիական հեծյալ կարմրադրոշ գնդում, որպես հետախուզության սպա։

Գերմանական Սիլեզիայի տերիտորիայում տեղի ունեցած հարձակողական մարտերում և Օդերի ափերին նա իրեն դրսևորում է որպես հմուտ ու քաջ հրամանատար, ցուցաբերում անձնազոհություն։

1945 թվականի հունվարի 22-ին Առուստամյանը մարտական առաջադրանք է ստանում՝ յոթ տանկով, հետևակի դեսանտային խմբի հետ միասին, հրետանու աջակցությամբ գրավել թշնամու կարևոր հենակետը Սիլեզիայի Բիշովստալ քաղաքի մոտ։

Երբ տանկերը և հետևակը մխրճվում են Բիշովստալի մոտ գերմանացիների պաշտպանության բնագծի մեջ, Առուստամյանը հրամայում է տանկային անձնակազմին՝ զենքի բոլոր տեսակներից փոթորկալի կրակ բացել հակառակորդի վրա, իսկ ինքը, դեսանտային հետևակի գլուխն անցած, տանկերի ետևից նետվում է գրոհի։

Թշնամու պաշտպանության բարդ սիստեմում տեղի ունեցած կարճատև, բայց դաժան ու վճռական մարտում սովետական տանկիստները լռեցնում են հակառակորդի հրանոթային չորս կրակակետ և ջախջախում երկու դրահատրանսպորտյոր, իսկ հետևակի մարտիկների կողմից ոչնչացվում է 70 հիտլերական ու գերի վերցվում 24 զինվոր ու սպա։ Գվարդիայի ավագ լեյտենանտ Գևորգ Առուստամյանն անձամբ ավտոմատային կրակով շարքից հանում է 20 հիտլերականի, բայց այդ մարտում նա ոտքից ծանր վիրավորվում է։ Հաղթահարելով այրող ցավը և ոգևորված ձեռք բերած հաջողությամբ՝ ընկերների օգնությամբ, Գևորգը նստում է առաջատար տանկի աշտարակին և հայրենասիրական լոզունգներով կոչ է անում մարտիկներին շարունակել հաղթական գրոհը։

Ահեղ «ուռա»-ների թնդյունով, գվարդիայի ավագ լեյտենանտ Գ. Առուստամյանի մարտիկները, հակառակորդի ուժեղ կրակի տակ, նետվում են դեպի թշնամու պաշտպանության երկրորդ բնագիծը։

Տանկիստները դիպուկ նշանառությամբ լռեցնում են գերմանական մարտկոցները և մեկը մյուսի ետևից շարքից հանում մի քանի տանկ, իսկ խիզախ հետևակայինները ոչնչացնում են հակառակորդի ավելի քան 100 զինվոր ու սպա։ Միաժամանակ առաջատար տանկը, որի վրա գտնվում էր Առուստամյանը, ջախջախում է գերմանական երկու հրանոթ՝ իրենց անձնակազմերի հետ միասին։

Սակայն հենց այդ մարտում էլ հերոսի մահով զոհվում է քաջարի հրամանատար Գևորգ Առուստամյանը։

*Իմանալով իրենց սիրելի հրամանատարի մահվան մասին, մարտիկներն էլ ավելի մոլեգին թափով են շարունակում գրոհը և ճանապարհ հարթում գնդի առաջխաղացման համար։*

*ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահությունը, բարձր գնահատելով գվարդիայի ավագ լեյտենանտ Գևորգ Սարկավագի Առուստամյանի ցուցաբերած քաջությունն ու անձնազոհությունը, 1945 թվականի հունիսի 27-ի հրամանագրով նրան հետմահու շնորհեց Սովետական Միության հերոսի կոչում։*



# ԹԵՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԱՎԹԱՆԴԻԼՅԱՆ






## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**Կարմիր բանակի գեներալներին, սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին**

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել* Սովետական Միության հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

3. *Ավագ լեյտենանտ* Թեմիկ Հովհաննեսի Ավթանդիլյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 27 հունիսի 1945 թ.*





Հազիվ էր բոլորել Սովետական Միության Հերոս Թեմիկ Ավթանդիլյանի կյանքի քսաներկու գարունը, երբ նա զոհվեց սովետական ժողովրդի ազատության և անկախության համար մղվող Հայրենական Մեծ պատերազմում։

Թեմիկը ծնվել է 1923 թվականին Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Մարտակերտ գյուղում, հովվի ընտանիքում։ Նա սովորել է նախ՝ տարրական, ապա՝ միջնակարգ դպրոցներում։ Այստեղ ընդունվում է լենինյան կոմերիտմիության շարքերը։

Կոմերիտական Թեմիկն իններորդ դասարանի աշակերտ էր, երբ հիտլերյան ֆաշիստները ներխուժեցին մեր երկիրը։ 1942 թվականին սովետական զինված ուժերը Կովկասում մահու և կենաց կռիվ էին մղում մինչև ատամները զինված թշնամու դեմ։ Թեմիկ Ավթանդիլյանը այդ ժամանակ կամավոր մեկնում է բանակ՝ համալրելու սովետական Հայրենիքի պաշտպանների շարքերը։ Նա ընդունվում և ավարտում է Բաքվի հետևակային ուսումնարանը՝ ստանալով լեյտենանտի կոչում, որից հետո 89-րդ հայկական դիվիզիայում նշանակվում է հրաձգային դասակի հրամանատար։

1942 թվականի օգոստոսի սկզբին 89-րդ հայկական հրաձգային դիվիզիան

մեկնում է Կովկասյան ռազմաճակատ։ Այստեղ յուրաքանչյուր թիզ հողի համար արյունահեղ մարտեր էին մղվում։ 1943 թվականի հունվարին 89-րդ հայկական դիվիզիան Կովկասյան ռազմաճակատի զորքերի հետ միասին հարձակման անցնելով, ազատագրում է Մոզդոկը և հետապնդելով թշնամուն, 1943 թվականի սեպտեմբերին համառ կռիվներ է մղում Նովոռոսիյսկի մատույցներում։ Այդ հարձակողական մարտերի ժամանակ Թեմիկը ցուցաբերում է խիզախություն և ռազմական գործին տիրապետելու հմտություն։ Նովոռոսիյսկի ազատագրման մարտերից մեկի ժամանակ վիրավորվում է սովետական մի ինքնաթիռ և ընկնում ծովը։ Նկատելով այդ՝ Ավթանդիլյանը իսկույն նետվում է ջուրը և արագորեն լողալով, փրկում է օդաչուի կյանքը։ 1943 թվականին Ավթանդիլյանը ընդունվում է ՍՄԿՊ շարքերը։

Ժելտորըյուխ գյուղի մոտ գտնվող մի բարձունք թշնամին դարձրել էր դիմադրության ուժեղ հենակետ։ Այն պաշտպանում էր 50 հոգուց բաղկացած կայազորը։ Բարձունքի գրավումը հանձնարարվում է Ավթանդիլյանի դասակին։ Առաջնորդելով դասակը, նա առաջինն է նետվում մարտի, ճեղքում թշնամու պաշտպանության գիծը և մտնում խրամատների դասավորության մեջ։ Դասակը ոչնչացնում է թշնամու բոլոր կրակակետերը և գրավում է բարձունքը։ Կռվում Ավթանդիլյանը վիրավորվում է, բայց չի թողնում մարտադաշտը։ Մարտական առաջադրանքի հաջող կատարման շնորհիվ ապահովվում է զորամասի առաջխաղացումը դեպի Վերխնիյ Բականսկ։ Բարձունքը գրավելու համար հրամանատարությունը լեյտենանտ Ավթանդիլյանին պարգևատրում է Կարմիր դրոշի շքանշանով։

Բուժվելուց հետո, ավագ լեյտենանտ Ավթանդիլյանը նշանակվում է կարմրադրոշ 389-րդ հրաձգային Բերդիչևյան-Կլեցկյան դիվիզիայի կարմրադրոշ 545-րդ հրաձգային գնդի 2-րդ վաշտի հրամանատար, որն այդ ժամանակ մարտեր էր մղում Ուկրաինական 1-ին ռազմաճակատում։ Այստեղ նա աչքի է ընկնում իր քաջագործություններով։ 1944 թվականի նոյեմբերի 7-ին Ավթանդիլյանի մորն ուղղած նամակում հրամանատարությունը գրում է. «Ձեր որդին Թեմիկ Հովհաննեսի Ավթանդիլյանը համարձակ սպա է։ Նա արիաբար մարտնչում է գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ։ Ձեր զավակը մեր ստորաբաժանման պարծանքն է։ Նրա լայն կուրծքը զարդարում են Կարմիր դրոշի և Կարմիր աստղի շքանշանները»։

Ահեղ մարտերի բովով անցավ այն գումարտակը, որի կազմում էր Թեմիկ Ավթանդիլյանի վաշտը։ 1945 թվականի հունվարին այդ վաշտը կռիվներ էր մղում Լեհաստանի տերիտորիայում։ Հունվարյան հաղթական հարձակման ժամանակ Սլոպեց Շլյախեցկիի շրջանում թշնամու ամրություններից մեկի ճեղքման առաջադրանքը հանձնարարվում է ճակատամարտերում կոփված ավագ լեյտենանտ Ավթանդիլյանի հրամանատարությամբ գործող վաշտին։ Հունվարի 13-ին գրոհային մարտերի վարպետը իր վաշտով ճեղքում է թշնամու խրամատները, դուրս գալիս մի բարձունք և ամրանում նրա արևմտյան լանջերին։



270—16

*Վաշտի խիզախ մարտիկների առաջին կրակային հարվածից ոչնչացվում է մեկ կրակային կետ։ Անձամբ Ալթանդիլյանը ձեռքի նռնակով ոչնչացնում է մի ինքնագնաց հրանոթ, իսկ թշնամու գրաված գնդացրով ոչնչացնում ավելի քան 50 հիտլերականի։*

*Իշխող բարձունքում գտնվող հակառակորդը երեք անգամ դիմում է հակագրոհի, բայց Ալթանդիլյանի կտրուկ և վճռական միջոցառումների շնորհիվ այդ հակագրոհները ետ են մղվում։ Այդ հերոսական մարտերում Ալթանդիլյանի վաշտը ոչնչացնում է ավելի քան 100 ֆաշիստ, գերի վերցնում 50 զինվոր ու սպա, ոչնչացնում 8 հաստոցավոր և 16 ձեռքի գնդացիր, շարքից հանում 7 զրահատրանսպորտյոր։ Այդպիսով, Ալթանդիլյանի վաշտի զինվորները ապահովում են ամբողջ գումարտակի առաջխաղացումը մինչև Օդերի գետանցումը։*

*1945 թվականի փետրվարի 10-ին Ալթանդիլյանի վաշտին մարտական առաջադրանք է տրվում՝ մասնակցել գերմանական Կլեյն քաղաքի գրավմանը։ Ալթանդիլյանը կազմելով քաղաքի մի հատվածի գրավման պլանը՝ անցնում է հարձակման։ Թշնամին մոլեգին դիմադրում է՝ փորձելով դարան սարքել սովետական վաշտի համար։ Կռահելով թշնամու մտադրությունը, Ալթանդիլյանը իր մարտիկներին հրամայում է թեանցել հակառակորդին և հարվածել թիկունքից։ Առաջադրանքը կատարվում է հաջող. վաշտը սրընթաց գրոհով մասնակցում է քաղաքի գրավմանը։ Կլեյն քաղաքի գրավման մարտերում Ալթանդիլյանի վաշտի կողմից ոչնչացվում է 60 հիտլերական, 5 կրակային կետ և ռազմական տեխնիկա։ Սակայն այդ մարտում հերոսաբար զոհվում է հայ ժողովրդի զավակ Թեմիկ Ալթանդիլյանը։*

*ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1945 թվականի հունիսի 27-ի հրամանագրով ավագ լեյտենանտ Թեմիկ Ալթանդիլյանին հետմահու շնորհվում է Սովետական Միության Հերոսի կոչում։*



# ՍԵՐԳԵՅ ԱՎԴԵՅԻ ԲՈՒՌՆԱԶՅԱՆ





## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ը

Կարմիր բանակի ռազմա-օդային ուժերի սպաներին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել* Սովետական Միության հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

6. *Ավագ լեյտենանտ* Սերգեյ Ավդեյի Բուռնազյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 2 օգոստոսի 1941 թ.:*





Կործանիչ ավիացիայի օդաչու, էսկադրիլիայի հրամանատար Սերգեյ Ավդեյի Բուռնազյանը իր ամբողջ էներգիան, գիտելիքներն ու կյանքը նվիրեց սովետական Հայրենիքի պաշտպանությանը և հերոսի մահով ընկավ Հայրենական մեծ պատերազմում։

Սերգեյ Բուռնազյանը ծնվել է 1918 թվականին Ռոստովի մարզի Պրոլետարսկայա ստանիցայում։ 1931 թվականին տասներեքամյա պատանին ծնողների հետ միասին տեղափոխվում է Հայաստան և իր ուսումը շարունակում է Երևանի Պուշկինի անվան միջնակարգ դպրոցում։ Այստեղ նա հմուտ մանկավարժների ձեռքի տակ դաստիարակվում է սովետական վառ հայրենասիրությամբ։ Նա ակտիվորեն մասնակցում է ավիամոդելիստների խմբակի աշխատանքներին։

1935 թվականին Բուռնազյանը անդրկովկասյան ավիամոդելիստների մրցման ժամանակ իր պատրաստած մոդելով գրավում է երկրորդ տեղը։ Այդ հաջողությունը վերջնականապես որոշում է նրա ապագան։

1937 թվականին Սերգեյը ընդունվում է Երևանի ավիաակումբը։ Այստեղ ուսումնասիրելով օդանավի նյութական մասը և թռիչքային առաջին քայլեր կատարելուց հետո նա զորակոչվում է Խերսոնի կործանիչ ավիացիայի դպրո-

րական դպրոցը, որն ավարտում է գերազանց գնահատականներով և դառնում հմուտ կործանիչ օդաչու։

Ավիադպրոցի հրամանատարությունը Բունիաթյանին պահում է դպրոցում՝ հրահանգիչ օդաչուի պաշտոնով։ Այդ մեծ վստահությունը խիստ պարտավորեցնում է Բունիաթյանին։ Նա ամբողջապես նվիրվում է իր սիրած գործին և լավագույն կադրեր պատրաստում սովետական բանակի ռազմա-օդային ուժերի համար. միաժամանակ շարունակում է կատարելագործել իր վարպետությունը։

Բայց ահա վրա է հասնում Հայրենական մեծ պատերազմը, ընդհատվում է սովետական ժողովրդի խաղաղ ստեղծագործական աշխատանքը։

Այդ շրջանում օդաչուական դպրոցը Խերսոնից տեղափոխվում է Բորիսոգլեբսկ, որտեղից շարունակ ռազմաճակատ էին ուղարկվում օդաչուների նորանոր խմբեր։

Օր-օրի բարդանում է դրությունը ռազմաճակատում։ 1942 թվականի աշնանը ֆաշիստական զորքերը դուրս գալով կովկասյան նախալեռները, միաժամանակ լուրջ վտանգ են ստեղծում Վոլգոգրադի համար։

Մեր Հայրենիքի համար բախտորոշ ճակատամարտերի այդ ծանր օրերին իր մի խումբ ընկերների հետ միասին ռազմաճակատ է մեկնում նաև Սերգեյ Բունիաթյանը։ Նա, կործանիչ ավիացիայի 629-րդ ավիագնդի կազմում, իր օդակով մասնակցում է Հարավ-արևմտյան ռազմաճակատի ուղղությամբ, Բրյանսկ-Խարկովի շրջաններում մղվող մարտերին։ Մարտական մի շարք առաջադրանքներ կատարելուց հետո, 1942 թվականի հունիսի 6-ին Սերգեյը փոխադրվում է Վոլգոգրադ և շուտով՝ նրա հերոս պաշտպանների շարքերում, մասնակցում վիթխարի ճակատամարտերին։

Այստեղ, օգոստոսի 9-ին Բունիաթյանին մեծ դժբախտություն է պատահում։ Հակառակորդի կողմից քաղաքի ռմբակոծության ժամանակ սպանվում է նրա կինը՝ Կատյուշան, որբանում է նորածին տղան՝ Ավդիկը։ Այս դեպքը խիստ ցնցող տպավորություն է թողնում երիտասարդ օդաչուի վրա։ Նա, վրեժխնդրության ցասումով լցված, կրկնապատկում է իր հարվածները։

—Ես միայն մեկ բավականություն ունեմ,—գրել է այդ օրերին Բունիաթյանը իր հարազատներին,—կատարել մարտական առաջադրանք՝ թռչել և ոչնչացնել հիտլերականներին։

Հայրենասեր օդաչուն Վոլգոգրադում խիզախ օդաչուի համբավ է ձեռք բերում։ Նրա անունը անջնջելիորեն մտնում է գվարդիական 2-րդ դիվիզիայի պատմության մեջ։ Գործելով դիվիզիայի պաշտպանության հատվածում, Բունիաթյանը իր էսկադրիլիայով պաշտպանում է արդյունաբերական շրջանի գործարանները, օժանդակում է ցամաքային զորքերի գործողություններին։

Վոլգոգրադում, չորս ամիս տևող մարտերի ընթացքում, լեյտենանտ Բունիաթյանը մասնակցում է 23 օդային մարտերի և անձամբ ցած է գցում հակառակորդի 5, իսկ խմբային մարտերում՝ 2 ինքնաթիռ։

1943 թվականի հունվարի 1-ին «Защитник Отечества» բանակային թեր-

թում հրապարակված «Օդային մարտ» հոդվածում Բուռնազյանը նկարագրելով իր մղած օդային մարտերից մեկը, գրել է.

«Հիշողության մեջ առանձնապես մնացել է Ս. քաղաքի մոտ (Վոլգոգրադ—խմբ.) տեղի ունեցած օդային մարտը։ Բացառիկ լավ եղանակ էր։ Վաղ առավոտյան մենք թռանք պաշտպանելու ռազմական կարևոր օբյեկտները։ Արևը դեռ չէր ծագել։ Քաղաքը վառվում էր, թանձր ծխի ամպեր էին բարձրանում նրա վրա։ Մենք երեք հոգի էինք։ Քաղաքի երկնքում դեռ ոչ մի ինքնաթիռ չկար։ Մենք առաջինն էինք։ Բայց գերմանացիները չստիպեցին, որ իրենց երկար սպասենք։ Արևմուտքից թռչում էր ֆաշիստական ռմբակոծիչների մի բազմություն։ Դրանց թիվը մոտ 50 էր, և նրանց ուղեկցում էին «Me-109» տիպի 15—20 կործանիչներ։

Նկատելով թշնամուն, ես ընկերներիս հավաքեցի և գնացի արևի կողմը, որպեսզի օդային ավազակներին գրոհեմ հանկարծակի։

Երբ «Յունկերսները» վերադասավորվեցին ռումբեր նետելու համար, ես գրոհեցի առաջատարի վրա և արկով հրկիզեցի նրան։ Ինձ հետևող ավագ Եվսեևը հենց առաջին գրոհով հրկիզեց երկրորդին։ Մեր երրորդ ընկերը՝ ավագ Սմիրնովը, պաշտպանում էր մեզ։ Հերթով գրոհելով, մենք ֆաշիստներին ստիպեցինք ռումբերը ցած թափել որտեղ պատահի։ Հետո մեզ նկատեցին «Մեսսերշմիտները», բայց արդեն ուշ էր։ Մենք մեր հիմնական խնդիրը կատարեցինք։ Ավագ Եվսեևը ցած գցեց դարձյալ մեկ «Յունկերս»։

Երբ ռազմամթերքը սպառվեց և բենզինը վերջանալու վրա էր, մենք կործանիչներից պաշտպանվելով, սկսեցինք հեռանալ դեպի մյուս կողմը։ Այդ ժամանակ հինգ «Մեսսերշմիտ» ինձ սեղմեցին, շրջան կազմեցին և հեռանալու հնարավորություն չէին տալիս։

Բենզինը քիչ էր մնացել, բայց այդ ժամանակ ավագ Սմիրնովը հաջող գրոհով ցած գցեց ֆաշիստական մեկ գիշատիչ։ Օղակը բացվեց, և մնացած «Մեսսերշմիտները» փախան։ Այդ մարտում մենք ցած գցեցինք 4 ինքնաթիռ առանց կորուստ ունենալու։

Ես սիրում եմ իմ Հայրենիքը և ամբողջ հոգով ատում եմ ֆաշիստներին, ուստի և անխնա ոչնչացնում եմ նրանց։ 1943 թվականին էլ ավելի լավ կկռվեմ, և ցած գցած ինքնաթիռների հաշիվը կմեծանա։ Ֆաշիստներին խփելը ինձ համար ամենամեծ երջանկությունն է»։

Վոլգոգրադյան մարտերի ժամանակ Բուռնազյանը ընդունվում է կոմունիստական պարտիայի շարքերը և պարգևատրվում է Կարմիր դրոշի շքանշանով, իսկ գնդի հրամանատարությունը նրան ավագ լեյտենանտի կոչում շնորհելով, նշանակում է կործանիչ ավիացիայի էսկադրիլիայի հրամանատար։

1942 թվականի հոկտեմբերի 28-ից Բուռնազյանը փոխադրվում է Հարավ-արևմտյան ռազմաճակատ և 866-րդ կործանիչ ավիացիայի գնդի կազմում, իր էսկադրիլիայով, մասնակցում է Հյուսիսային Դոնեցի մոտ, Իզյում-Բարվենկովոյի շրջանում տեղի ունեցող կատաղի ու երկարատև մարտերին, ապա Ոսկ-

բանակի ազատագրման համար ծավալվող հարձակողական գործողություններին։

Կատարելով հրամանատարության առաջադրանքները, Բունիաթյանն իր կործանիչներով ամեն օր մարտական թռիչքներ է կատարում Դոնեցի ջրային բնագծերում ամրացված թշնամու դիրքերի վրա։ Այդ մարտերում աչքի են ընկնում նրա էսկադրիլիայի բոլոր օդաչուները՝ Բունիաթյանի դաստիարակած արիասիրտ աշակերտներն ու մարտական ընկերները՝ կրտսեր լեյտենանտներ Կոնդրատենկոն, Դենիսենկոն, Սիրոտինը, ավագ Դավրաևը, սերժանտներ՝ Գույը, Անատոլի Լոգինովը և ուրիշներ։ Նրանք ամեն բանում աշխատում են նմանվել Բունիաթյանին, որը կարգապահության, խիզախության, թռիչքային վարպետության կենդանի օրինակ էր ենթակաների համար։

«Նա համարձակ, անվախ օդաչու էր,—ասված է Բունիաթյանի պարգևաթերթիկում,—գերազանցապես տիրապետելով թռիչքային տեխնիկային՝ օդային բոլոր մարտերում նախաձեռնությունը շարունակ վերցնում էր իր ձեռքը։

Մարտերում իրեն պահում էր սառնարյուն և վստահ։ Հակառակորդի գերազանց ուժերի դեմ մարտերի մեջ մտնելով՝ միշտ նրանց թելադրում էր իր կամքը»։

Ահա մի քանի օրինակներ Ուկրաինայում մղած մարտերից։ 1943 թվականի հունվարի 17-ին, Լիսայա կայարանի շրջանում, մեր ցամաքային զորքերին պաշտպանելու ժամանակ Բունիաթյանը իր ղեկավարած «ЯК-1» կործանիչների վեցյակով հանդիպում է գերմանական «Ю-87» տիպի տասը ռմբակոծիչների, որոնց ուղեկցում էին ութ «Me-109» տիպի գրոհիչ ինքնաթիռներ։ Չնայած թշնամու ուժերի գերազանցությանը, Բունիաթյանը իր անձնական օրինակով ոգևորելով ենթականերին, համարձակորեն գրոհում է թշնամու վրա։ Ակնթարթաբար նրան են հետևում նաև իր ռազմիկները։

Նրանք խոյընթաց ու վերասլաց ճարպիկ ճախրումներով իրար հետևից խփում են ֆաշիստական ինն ինքնաթիռ, որից երեքը անձամբ ցած է գցում Բունիաթյանը։

Հունվարի 31-ին Բունիաթյանն իր 4 կործանիչներով նորից թռչում է ցամաքային զորքերին պաշտպանելու։ Նշանակված վայրում նրանք դուրս են գալիս հակառակորդի 12 ռմբակոծիչների և նրանց ուղեկցող վեց կործանիչների դեմ։ Բունիաթյանը, իր սովորության համաձայն, չխուսափելով մարտից, ճակատային գրոհով խառնում է թշնամու ռմբակոծիչների մարտակարգը։ Սկսվում է անհավասար, կատաղի օդային մարտը։ Հրամանատարի օրինակով, մյուս օդաչուները իրար հետևից կրկնելով գրոհները, թույլ չեն տալիս, որպեսզի հակառակորդը ռմբակոծի մեր ցամաքային զորքերին։ Բունիաթյանը և իր օդաչուները առանց շփոթվելու խփում են ֆաշիստական վեց ինքնաթիռ, որից երկուսը անձամբ խփում է Բունիաթյանը։

Ավագ լեյտենանտ Սերգեյ Բունիաթյանի էսկադրիլիան 1943 թվականի մարտին արդեն կատարել էր 815 մարտական թռիչք, մղել էր 62 օդային մարտ

և ցած էր գցել թշնամու 65 ինքնաթիռ։ Այդ թվից 24 ինքնաթիռը ցած էր գցել անձամբ ինքը Բուռնազյանը, կատարել էր 244 մարտական թռիչք, մասնակցել էր 52 օդային մարտի, որի համար պարգևատրվել էր երկու Կարմիր դրոշի և Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշաններով։

Բայց խիզախ օդաչուն չապրեց մինչև հաղթանակը։ 1944 թվականի ապրիլի 15-ին նոր տիպի ինքնաթիռ ստանալու համար երկաթուղով ճանապարհվելիս՝ Դուգինկա և Խրենովայա կայարանների ուղեմասի կիսակայարանում ֆաշիստական օդանավերի կողմից գնացքի ռմբակոծման ժամանակ, ռումբի բեկորից սպանվում է մարտերում փառաբանված Սերգեյ Բուռնազյանը և թաղվում Բորիսոգլեբսկ քաղաքում։

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահությունը, բարձր գնահատելով կործանիչ օդաչու, ավագ լեյտենանտ Սերգեյ Բուռնազյանի մարտական ծառայությունները սոցիալիստական Հայրենիքի պաշտպանության գործում և ռազմաճակատում կատարած անձնական խիզախությունները, 1944 թվականի օգոստոսի 2-ի հրամանագրով հետմահու նրան շնորհեց Սովետական Միության Հերոսի կոչում։

Հերոսի № 49 մարտական օդանավը, որի վրա շողշողում էին նրա խփած՝ թշնամու 24 ինքնաթիռների խորհրդանիշը ներկայացնող աստղերը, բերվեց Հայաստան՝ որպես հավերժ հիշատակ։ Բուռնազյանի անունով կոչվեցին պիոներական դրուժինաներ, փողոցներ։ Ի հավերժացումն Բուռնազյանի հիշատակի, Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահությունը պատվոգրով պարգևատրեց Երևանի Պուշկինի անվան միջնակարգ դպրոցը, որը դաստիարակել էր Սովետական Միության հերոս Սերգեյ Բուռնազյանին։



# ՎԱՂԻՆԱԿ ՍԻՄՈՆԻ ՋԱՔԱՐՅԱՆ






## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի գեներալներին, սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում Հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել* Սովետական Միության հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

*91. Գվարդիայի ավագ լեյտենանտ* Վաղինակ Սիմոնի Զաքարյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 27 հունիսի 1945 թ.:*





Վաղինակ Սիմոնի Զաքարյանը ծնվել է 1920 թվականին Ադրբեջանական ՍՍՌ Խանլարի շրջանի Մարտունաշեն գյուղում։

Կիրովաբադում միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո, 1939 թվականին Վաղինակը մեկնում է զինվորական պարտադիր ծառայության։

Երբ սկսվեց Հայրենական պատերազմը, կոմունիստ, տանկիստ Վաղինակ Զաքարյանն անմիջապես մարտերի մեջ մտավ թշնամու դեմ։ 1943 թվականի դեկտեմբերից, Ուկրաինական առաջին ռազմաճակատում, քաջարի տանկիստը մասնակցել է Աջափնյա Ուկրաինայի, Արևմտյան Ուկրաինայի, ինչպես նաև Լեհաստանի մի շարք շրջանների ազատագրմանը՝ աչքի ընկնելով Շեպետովկա, Տերնոպոլ և այլ քաղաքների համար մղած կռիվներում, ուր նա երկու անգամ վիրավորվել էր.

Մարտերում ցուցաբերած խիզախության և արիության համար անվախ տանկիստը 1944 թվականի փետրվարին պարգևատրվել է Կարմիր աստղի, 1944 թվականի օգոստոսին՝ Հայրենական պատերազմի առաջին աստիճանի և նույն թվականի սեպտեմբերին՝ Կարմիր դրոշի շքանշաններով։

1945 թվականի սկզբին Ուկրաինական առաջին ռազմաճակատում Վաղի-

նակ Զաքարյանը նոր սխրագործություններ կատարեց։ Այդ ժամանակ անգլիական կառավարության խնդրանքով սովետական զորքերը, նախատեսված ժամկետից շուտ, հարձակման էին անցել՝ գերմանացիների կողմից Արդենների շրջանում ծանր դրության մեջ ընկած անգլո-ամերիկյան զորքերին օգնելու, նրանց դրությունը թեթևացնելու համար։ Ուկրաինական առաջին ռազմաճակատի զորքերը, նույն թվականի հունվարի 12-ին անցնելով հարձակման, ճեղքեցին հակառակորդի պաշտպանությունը և շարունակեցին ազատագրել Լեհաստանի հարավային շրջանները։ Այդ մարտերի ժամանակ գվարդիայի ավագ լեյտենանտ Վաղինակ Զաքարյանը տանկային դասակի հրամանատար էր 4-րդ գվարդիական տանկային կորպուսի 13-րդ գվարդիական գնդի 2-րդ գումարտակում։ Այդ մարտերում,—ինչպես գրել է հրամանատարությունը,—նա իր գործողություններով ցուցաբերեց բացառիկ հերոսություն, կայունություն և խիզախություն։ Ղեկավարելով հետախուզությունը, Զաքարյանն իր տանկով թշնամու համար հանկարծակի, առաջինը մտավ Իվանովիցա գյուղը, որտեղ գտնվում էր հակառակորդի դիմադրության ուժեղ ամրացված հանգույցը։ Հանկարծակիի բերելով և շշմեցնելով գերմանացիներին, Զաքարյանն իր տանկով ճզմեց երկու հակատանկային հրանոթ՝ նրանց անձնակազմով, և դիպուկ կրակով ոչնչացրեց երկու գնդացիր։

Այնուհետև գերմանացիները Զաքարյանի տանկի դեմ արագորեն նետեցին երեք ինքնագնաց հրանոթ։ Անհավասար մարտի մտնելով, Զաքարյանը հմտորեն մանևրելով, մեկը մյուսի հետևից նրանց ճզմեց իր տանկի թրթուրների տակ։ Տեխնիկական կորստից բացի, թշնամին կռվի դաշտում թողեց 110 զինվոր ու սպա։

Այսպիսով, հակառակորդին պատճառելով կենդանի ուժի և տեխնիկայի մեծ կորուստ, Զաքարյանի տանկային դասակը գրավեց մեր զորամասի առաջխաղացման համար կարևոր նշանակություն ունեցող Իվանովիցա գյուղը։ Այնուհետև, վիրավորված վիճակում, նա հաջողությամբ հետ է մղում թշնամու հակագրոհները՝ մինչև մեր հիմնական զորամասերի օգնության հասնելը։ Հենց այդ ժամանակ տանկային դասակի հրամանատար կոմունիստ Վաղինակ Զաքարյանը զոհվում է թշնամու գնդակից (1945 թվականի հունվարի 16)։

Գերմանական զավթիչների դեմ մղած պայքարի ճակատում հրամանատարության առաջադրանքը գերազանց կատարելու և ցուցաբերած հերոսության համար ՍՍՌՄ Գերագույն սովետի Նախագահության 1945 թվականի հունիսի 27-ի հրամանագրով գվարդիայի ավագ լեյտենանտ, տանկային դասակի հրամանատար Վաղինակ Զաքարյանին հետմահու շնորհվեց Սովետական Միության Հերոսի կոչում։



# ԽՈՐԵՆ ԱՐՄԵՆԱԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ




## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար,* շնորհել Սովետական Միության հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

*Լեյտենանտ* Խորեն Արմենակի Խաչատրյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 24 մարտի 1945 թ.*







Նորեն Արմենակի Խաչատրյանը ծնվել է 1923 թվականի մարտի 16-ին Երևանում։ 1940 թվականին նա ավարտել է Երևանի Մաքսիմ Գորկու անվան միջնակարգ դպրոցը, որից հետո մտել է Երևանի գյուղատնտեսական ինստիտուտ։ Պատերազմն սկսվելուն պես նա զորակոչվում է բանակ և սովորում Սուխումիի հետևակային դպրոցում։ 1942 թվականի մարտին ավարտելով դպրոցը, Խ. Խաչատրյանը ստանում է լեյտենանտի կոչում և 409-րդ հետևակային դիվիզիայի կազմում մեկնում է Կովկասյան ռազմաճակատ։

1943 թվականի մարտին նա փոխադրվում է 151-րդ հրաձգային դիվիզիան, որն այդ ժամանակ պաշտպանական դիրքեր էր գրավել Տագանրոգի մոտ։ Մարտի 28-ին հրաձգային դասակի հրամանատար Խ. Խաչատրյանը առաջադրանք է ստանում գնալ Սանրեկ գյուղը՝ հետախուզության և «լեզու» բերել։ Նրա դասակը գիշերով անցնում է գետը և կատարում է մարտական առաջադրանքը։ Գերվածը կարևոր տեղեկություններ է տալիս։ Մարտական այդ առաջադրանքի կատարման համար Խ. Խաչատրյանը պարգևատրվում է Խիզախության համար մեդալով։ Նույն թվականի հունիսի 16-ին հետախուզության գնալու ժամանակ Խ. Խաչատրյանը վիրավորվում է։ Ռոստովի հոսպիտալում

*բուժվելուց հետո, նա մեկնում է 248-րդ հրաձգային դիվիզիան, որը գործում էր Տագանրոգի ուղղությամբ։ Խ. Խաչատրյանը մասնակցում է Տագանրոգ և Մարիուպոլ քաղաքների համար մղվող մարտերին։ Այդ մարտերի ընթացքում նորից վիրավորվում է։ 1943 թվականի դեկտեմբերի սկզբներին նա նշանակվում է 89-րդ հայկական հրաձգային դիվիզիայի 390 գնդի հրաձգային դասակի հրամանատար։ Դիվիզիան այդ ժամանակ մարտեր էր մղում Կերչի համար։*

*1944 թվականի հունվարին Կերչ քաղաքի համար մղվող մարտերը շարունակվում էին։ Կատարելով ջրանցքն անցնելու համար Խ. Խաչատրյանը նշանակվում է գրոհային խմբի հրամանատար։ Այդ խումբը անցնելով ջուրը, մյուս ստորաբաժանումների հետ հաջողությամբ մարտեր է ծավալում քաղաքի փողոցներում և մեծ կորուստներ պատճառում թշնամուն, որի համար Խաչատրյանը պարգևատրվում է Կարմիր աստղի շքանշանով։*

*Կերչում թշնամու պաշտպանությունը ճեղքելու ժամանակ Խ. Խաչատրյանի դասակը ավանգարդում գտնվող ստորաբաժանումներից մեկը լինելով, համառ մարտերում հնարավորություն է ստեղծում մյուս վաշտերի համար՝ քիչ զոհերով առաջ շարժվելու։ Այդ գործողությունների համար, 1944 թվականի մարտին Խաչատրյանը պարգևատրվում է Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով։*

*1944 թվականի մայիսի 7-ին սկսվում է հարձակումը Սևաստոպոլը ազատագրելու համար։ Այդ մարտերում Թամանյան դիվիզիայի 390-րդ գունդը, որի շարքերում էր գտնվում Խաչատրյանի ստորաբաժանումը, գործում է Բալակլավայի ուղղությամբ։ Գնդի առաջադրանքն էր՝ «Բոլշևիկ» սովխոզից դեպի ձախ ճեղքել, դուրս գալ Գորնայա բարձունքի լանջերը և հարձակումը զարգացնելով, հասնել Կազաչիա ծովախորշը ու մյուս զորամասերի հետ համագործակցելով, լիկվիդացնել գերմանական խմբավորումը։ Խ. Խաչատրյանի դասակը պետք է ամրանար Գորնայա բարձունքի լանջին և ոչնչացներ գերմանական կրակային մի քանի կետերը, ապա գրավեր գյուղը։ Խ. Խաչատրյանի դասակի մարտիկները հաջող կերպով գրոհելով, աջ թևից մտնում են գյուղը, և լիկվիդացնում գերմանացիների դիտակետը, որտեղից ղեկավարվում էր նրանց հրանոթային կրակը։ Մարտական այդ առաջադրանքի կատարումով հնարավորություն է ստեղծվում մեր մյուս ստորաբաժանումներին գրոհի անցնել Գորնայա բարձունքի վրա։*

*Մեր ստորաբաժանումները, հասնելով Գորնայա բարձունքի գագաթը, մարտեր են սկսում հակառակորդի խրամատներում։ Լեյտենանտ Խ. Խաչատրյանը երկու մարտիկների հետ անցնում է դեռ դիմադրությունը շարունակող թշնամու թիկունքը։ Խիզախ եռյակը անսպասելի կերպով շրջապատման մեջ է ընկնում, երկու մարտիկները վիրավորվում են։ Խ. Խաչատրյանը մեն-մենակ մնում է 7 գերմանացու դեմ։ Նա հակառակորդի զինվորներից երկուսին սպանում է, մյուսներին փախուստի մատնում։ Մնալով թշնամու խրամատների հետևում՝ իր կրակով նա տպավորություն է ստեղծում, որ հակառակորդը շրջա-*

պատման մեջ է գտնվում, և դրանով 26 գերմանացու ստիպում է զենքը ցած դնել։ Նույն օրն է՝ լեյտենանտ Խ. Խաչատրյանի դասակը, ջրամբարի շրջանում, իր համարձակ մանևրով առաջինը ճեղքում է հակառակորդի պաշտպանության գիծը և տիրում այդ կարևոր կետին։

Սևաստոպոլի համար մղած մարտերում Խաչատրյանի դասակը ոչնչացնում է 43 գերմանացի և գերի վերցնում հակառակորդի մոտ հարյուր զինվոր ու սպա։

Գոռնայա բարձունքի գրոհին մասնակցելու, ջրամբարի շրջանում թշնամու պաշտպանության գիծը ճեղքելու և այդ կարևոր կետը առաջինը գրավելու համար ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահությունը 1945 թվականի մարտի 24-ի հրամանագրով Խորեն Արմենակի Խաչատրյանին շնորհում է Սովետական Միության Հերոսի կոչում։

1945 թվականի հունվարին մեր զորքերն սկսում են թշնամուն հարվածել Վիսլա գետի շրջանում։ Դիվիզիայի 390-րդ գունդը, մյուս գնդերի հետ միասին, սկսում է ոչնչացնել Ռուսկի Պրուտ գյուղի մոտ գտնվող հակառակորդի այն խմբավորումը, որը չէր հասցրել նահանջել։

Թշնամու ուժերը մի քանի անգամ գերազանցում են։ Այդ մարտերում Խ. Խաչատրյանի ստորաբաժանումն ընկնում է շրջապատման մեջ։ Նրա մարտիկները երեք օր անընդհատ կռիվներ են մղում, որպեսզի խանգարեն թշնամու նահանջը։ Խ. Խաչատրյանի մարտիկները գտնվում էին երկու ճանապարհների հատման կետում, որտեղից պետք է նահանջեր թշնամին։ Նրանք փակելով նահանջի ճանապարհը՝ հակառակորդին մեծ վնասներ են պատճառում՝ ոչնչացնելով նահանջող թշնամու խմբերը։ Խ. Խաչատրյանի մարտիկներն սպառելով իրենց ունեցած ռազմամթերքը՝ կռվում են թշնամուց խլած ռազմամթերքով։

1945 թվականի փետրվար ամսին էր, գունդն անցնում էր Օդերի սառույցների վրայով։ Հրաձգային վաշտի հրամանատար Խ. Խաչատրյանն առաջադրանք է ստանում՝ հետախուզություն կատարել և ընդլայնել հենակետը։ Նրա վաշտին, մյուս ստորաբաժանումների հետ հաջողվում է 300 մետրով ընդլայնել հենակետը։ Այդ տերիտորիայում գերմանացիների հինգ գրոհները հետ են շպրտվում։ Առավոտյան կապը կտրվում է մյուս ափի հետ՝ սառույցի կոտրվելու պատճառով։ Հենակետում գտնված ստորաբաժանումները մոտ մեկ շաբաթ հաղթահարում են սննդամթերքի և ռազմամթերքի մատակարարման կապակցությամբ ստեղծված դժվարությունները։ Խ. Խաչատրյանն այդ մարտերում վիրավորվում է։ Այստեղ նա պարգևատրվում է Կարմիր դրոշի շքանշանով։

1946 թվականի մայիսին Խ. Խաչատրյանը սովետական բանակից զորացրվում է, գալիս Երևան և ընդունվում գյուղատնտեսական ինստիտուտ, որտեղից մեկնել էր ռազմաճակատ։ 1951 թվականին ավարտելով մեխանիզացիայի ֆակուլտետը, իբրև գերազանց սովորող (2-րդ կուրսից մինչև 5-րդ կուրսը նա անվանական թոշակառու էր), մնում է ինստիտուտում որպես ասպիրանտ։

*1956 թվականի փետրվարին Խ. Խաչատրյանը պաշտպանում է թեկնածուական դիսերտացիա՝ «Հողի դեֆորմացիաները լեռնալանջերի վարի ժամանակ» թեմայով և ստանում տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան։ Այժմ նա դոցենտ է, ինստիտուտի գյուղատնտեսական մեքենաների ամբիոնի դասախոս։*



# ՌՈՒԲԵՆ ՂԱԶԱՐԻ ՀԱԿՈԲՅԱՆ



## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի գեներալներին, սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել* Սովետական Միության հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ.*

2. *Գվարդիայի լեյտենանտ* Ռուբեն Ղազարի Հակոբյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 16 մայիսի 1944 թ.*





Ռուբեն Ղազարի Հակոբյանը ծնվել է 1912 թվականին Իջևանի շրջանի Ուզունթալա գյուղում։ Տարրական կրթությունը ստացել է գյուղի դպրոցում։ 1930 թվականին գերազանց գնահատականներով ավարտելով Իջևանի ոչ-լրիվ միջնակարգ դպրոցը, Ռ. Հակոբյանն ընդունվում է Երևանի ավտո-ճանապարհաշինարարական տեխնիկումը։

1934 թվականին, տեխնիկումն ավարտելուց հետո, նա մի քանի ամիս աշխատում է որպես տեխնիկ և շուտով զինակոչվում պարտադիր ծառայության։ Նա ավարտում է Լենինգրադի ռազմա-ինժեներական դպրոցը, որից հետո վերադառնում է Թբիլիսի և նշանակվում դասակի հրամանատարի օգնական։

1936 թվականին Ռ. Հակոբյանը զորացրվում է, վերադառնում Հայաստան և աշխատում ճանապարհաշինարարության գծով։ 1940 թվականին նա ընդունվում է ՍՄԿՊ շարքերը։ Հայրենական պատերազմի սկզբներին Ռ. Հակոբյանը նշանակվում է Ղափանի աշխարհազորային միավորման գումարտակի հրամանատար և շուտով կանչվում է բանակ։

1943 թվականի սկզբներին Ռ. Հակոբյանը զորամասից գործուղվում է Թբիլիսի՝ «Վիստրել» սպայական հրաձգային դասընթացներում սովորելու։ Ավարտելով այդ դասընթացները, նա ստանում է լեյտենանտի կոչում և մեկնում Ուկրաինական չորրորդ ռազմաճակատ։ Նրան նշանակում են Վոլնովախյան

կարմրադրոշ № 3 դիվիզիայի ավտոմատավորների առանձին ստորաբաժանման հրամանատար։ Այդ դիվիզիան փառավոր էջեր է գրում Ուկրաինայի ազատագրման մարտերում։ Դնեպրի ձախ ափին Պոյմա քաղաքի ազատագրական մարտերին անձնուրաց մասնակցության համար Ռ. Հակոբյանը պարգևատրվում է Կարմիր աստղի շքանշանով։ Այդ մարտերում նա երկու անգամ վիրավորվում է, բայց երկու դեպքում էլ իր զորամասից չի հեռանում։ Շուտով նրանց միավորումը առաջադրանք է ստանում՝ ռազմաճակատի մյուս զորքերի հետ, մասնակցել Ղրիմի ազատագրմանը։

1944 թվականի ապրիլի 5-ի գիշերը Ռ. Հակոբյանի ղեկավարած վաշտը, մյուս ստորաբաժանումների հետ միասին, պետք է Պերեկոպում ճեղքեր թշնամու ամրությունը և թափանցեր Ղրիմ։ Այդ կապակցությամբ Ռ. Հակոբյանի վաշտին մարտական առաջադրանք էր տրված՝ մյուս ստորաբաժանումների հետ, հարձակվել Արմյանսկ քաղաքի հյուսիսային ծայրամասով, գրավել 15, 3 անանուն բարձունքը, ամրանալ այնտեղ, ապա ռազմաճակատի մյուս զորքերի հետ շարժվել դեպի Իշունյան բարձունքները, ուր գերմանացիները ուժեղ ամրություններ էին կառուցել։ Ապրիլի 7-ի վաղ առավոտյան մեր զորքերը հրետանային և ականանետային ուժեղ կրակ են սկսում։ Տեղի են ունենում արյունահեղ մարտեր։ Հակոբյանի վաշտի մարտիկները գրոհում են բարձունքի վրա և պատվով կատարում իրենց մարտական առաջադրանքը ու մյուս ստորաբաժանումների հետ գրավում 15, 3 բարձունքը։

Ռազմաճակատի զորքերը, ազատագրելով Արմյանսկ քաղաքը, առաջ են շարժվում։ Գերմանացիները հակագրոհի են դիմում՝ բարձունքը հետ խլելու համար։ Հակոբյանի վաշտի վրա գրոհում են ութ տանկ և ավտոմատավորների մի գումարտակ։ Բայց վաշտը, համառ դիմադրություն ցույց տալով, թշնամու հակագրոհները հետ է մղում։ № 9 գվարդիական հրաձգային գնդի հրամանատար մայոր Վիկտոր Դոցկոն իր դիտակետից տեսնում է Ռ. Հակոբյանի և նրա մարտական ընկերների հերոսական գործողությունները։ Նա տեսնում է բարձունքում ամրացված ու կարմիր դրոշը, որը բարձրացրել էին Հակոբյանի մարտիկները։ Այդ օրերից Հակոբյանը առաջ է քաշվում և նշանակվում գումարտակի հրամանատար։

Ապրիլի 10-ին Ռ. Հակոբյանը 19 մարտիկներով հետախուզության նպատակով շարժվում է դեպի Իշունյան լիճը։ Ճանապարհին նրանց դեմ հանկարծակի դուրս են գալիս մի քանի տասնյակ գերմանացիներ։ Այստեղ ուժեղ գոտեմարտ է սկսվում։ Հակոբյանը և իր մարտիկները իսկույն գործի են դնում ավտոմատները և ոչնչացնում հիտլերականներին, իսկ մի մասին էլ գերի վերցնում։ Ապրիլի 11-ին համառ մարտերից մեկում Ռ. Հակոբյանը աջ թևից ծանր վիրավորվում է ու մեկնում բուժման։

Իշունյան բարձունքների համար մղած ճակատամարտում Ռ. Հակոբյանի և նրա ստորաբաժանման մասնակցության մասին Անդրկովկասյան ռազմաճակատի օրգան «Боец РККА»-ն գրում է. «Հակոբյանն ու իր մարտիկներ

կռվում էին ինչպես վայել է սովետական քաջերին։ Ապրիլի 11-ի իրիկնադե-մին նրանք արդեն Իշունի մոտ էին։ Ճանապարհին նրանք մի քանի անգամ հանդիպեցին անհաղթահարելի թվացող խոչընդոտների։ Հակոբյանի գումար-տակի մարտիկները թշնամուն դուրս էին մղում խրամատներից։ Առյուծի պես էր կռվում Ռուբեն Հակոբյանը։ Նրա մարտիկները ոգևորված իրենց հերոս հրա-մանատարի տոկունությամբ՝ կռվում էին քաջաբար»։

Իշունյան բարձունքները և Պերեկոպի պարանոցը գերմանացիներից մաք-րելու համար մղված մարտերին անձնվեր մասնակցություն ունենալու համար ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1944 թվականի մայիսի 16-ի հրամանագրով Սովետական Միության հերոսի կոչում է շնորհվում գումարտակի հրամանատար Ռուբեն Ղազարի Հակոբյանին։

1945 թվականի հունվարին Ռ. Հակոբյանը վերադառնալով Ղափան, աշ-խատում է իբրև Ղափան-Քաջարան ճանապարհաշինարարության պետ և շա-րունակում է պատերազմի տարիներին կիսատ թողած իր գործը, որը պատվով է ավարտում։ 1946 թվականի սկզբին նա առաջ է քաշվում Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին կից ճանապարհների գլխավոր վարչության պետ։ 1949—50 ուս. տարում Ռ. Հակոբյանը գործուղվում է ՀԿՊ Կենտկոմին առընթեր երկամյա դպրոց՝ սովորելու։ Միաժամանակ նա ավարտում է Երևանի պետա-կան համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը։

Ավարտելով պարտիական դպրոցը, Ռ. Հակոբյանը 1952 թվականի սկզբին նշանակվում է անտառատնտեսության մինիստրի տեղակալ։

1953—1956 թվականներին Ռ. Հակոբյանն աշխատում է ճանապարհային շինարարության Կիրովականի, ապա № 2 ճանշին ռայոնի պետ, իսկ 1957 թվա-կանից մինչև այժմ ռեսպուբլիկայի Մինիստրների սովետին կից Խճուղային ճանապարհների գլխավոր վարչության նյութա-տեխնիկական մատակարարման վարչության պետ։



# ԽԱՉԱՏՈՒՐ ԲԵԳԼԱՐԻ ՄԵԼԻՔՅԱՆ





## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ը

**Կարմիր բանակի սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու մասին**

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում Հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել* Սովետական Միության Հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

*Ավագ սերժանտ* Խաչատուր Բեգլարի Մելիքյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 5 նոյեմբերի 1942 թ.:*





Սովետական Միության առաջին հայ հերոսների շարքերում իր արժանի տեղն է գրավում ավագ լեյտենանտ Խաչատուր Բեգլարի Մելիքյանը։ Նա անձնվիրաբար մարտնչել է ֆաշիստական զավթիչների դեմ և հերոսաբար ընկել մարտական առաջադրանքը կատարելիս։

Խաչատուր Մելիքյանը ծնվել է 1911 թվականին Ադրբեջանի Դաշքեսանի շրջանի Ջագլիկ գյուղում, չքավոր գյուղացու ընտանիքում։ 1920 թվականին նա ընդունվում է գյուղի յոթնամյա դպրոցը, որն ավարտում է 1927 թվականին։ 1928 թվականին Խաչատուրն ընդունվում է կոմերիտմիության շարքերը։ 1931 թվականին նա մեկնում է Գրոզնի և «Կրասնի մոլոտ» գործարանում աշխատանքի ընդունվում որպես խառատի աշակերտ։ Մեկ տարի աշխատելուց հետո, 1932 թվականին նա մտնում է Դոնի Ռոստովի մանկավարժական տեխնիկումը, որն ավարտելուց հետո վերադառնում է հայրենի գյուղը և աշխատանքի անցնում «Բոլշևիկ» կոլտնտեսությունում։

1934 թվականի հունվարին Խաչատուրը զինակոչվում է բանակ և ընդունվում հրաձգային գնդի դպրոցը։ Ավարտելով այդ դպրոցը, նա նշանակվում է ջոկի հրամանատար։ Ծառայության ընթացքում Խաչատուրը իրեն դրսևորում

է որպես օրինակելի և կարգապահ հրամանատար։ Զինվորական պարտադիր ծառայությունը կատարելուց հետո, Մելիքյանը 1935 թվականի սեպտեմբերին զորացրվում է և մեկնում Կիրովական՝ մինչև 1939 թվականի օգոստոսը աշխատում տարբեր հիմնարկներում։

1939 թվականի օգոստոսին նա նորից զինակոչվում է բանակ։ 1940 թվականի ապրիլին, Մելիքյանը նշանակվում է վաշտի հրամանատարի տեղակալ, իսկ երկու ամիս անց՝ վաշտի հրամանատար՝ 227-րդ հրաձգային դիվիզիայի 707-րդ գնդում։ Նույն թվականին նա ընդունվում է Սովետական Միության կոմունիստական պարտիայի շարքերը։

Երբ 1941 թվականի հունիսի 22-ին ֆաշիստական Գերմանիան ուխտադրժորեն հարձակվեց Սովետական Միության վրա, թշնամու անակնկալ հարվածներն իրենց վրա ընդունեցին սովետական սահմանապահ զորքերը, որոնց թվումն էր նաև Մելիքյանի ստորաբաժանումը։ Մարտերից մեկում ստորաբաժանումը շրջապատման վտանգի մեջ է ընկնում։ Ցուցաբերելով համառություն և ռազմական հմտություն, Մելիքյանը ստորաբաժանումը դուրս է բերում շրջապատումից։ Հրամանատարությունն ըստ արժանվույն գնահատելով նրա կատարած սխրագործությունները, շուտով նրան նշանակում է գումարտակի հրամանատար։

1941 թվականին ամառը հակառակորդը հասել էր Նիժնայա Սիրովատկա գյուղը և ամեն միջոց գործադրելով, ջանում էր գրավել այն։ Տեղի են ունենում ուժեղ մարտեր։ Մելիքյանի գումարտակի մարտիկները չորս անգամ անցնում են հակագրոհի՝ թշնամուն պատճառելով կենդանի ուժի և տեխնիկայի մեծ կորուստներ։

Պրոխորովկա գյուղում ամրացված թշնամու ուժեղ խմբավորումը ջախջախելու համար 223-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարությունը ավագ լեյտենանտ Մելիքյանին նոր առաջադրանք է տալիս։ 1941 թվականի դեկտեմբերի 7-ի լույս 8-ի գիշերը Մելիքյանի գումարտակը, օգտվելով մթությունից, հանկարծակիի բերելով թշնամուն, անսպասելիորեն մտնում է Պրոխորովկա, գրավում գյուղի հյուսիս-արևելյան մասը և ոչնչացնում տներում պատսպարված մոտ 150 ֆաշիստ։ Տեղի է ունենում փողոցային ուժեղ մարտ։ Հիտլերականները երեք անգամ գրոհում են մեր մարտիկների վրա, բայց հանդիպելով կատաղի դիմադրության, հետ են շպրտվում։ Լուսադեմին մարտը վերջանում է գումարտակի հաղթանակով։

Որոշ ժամանակ անց՝ դեկտեմբերի 28-ին, Մելիքյանի գումարտակին նոր խնդիր է տրվում՝ Դորժիևի գլխավորած գնդի հետ միասին, ոչնչացնել ֆաշիստական զավթիչներին՝ Դումնոյե գյուղում։

Մելիքյանը նախօրոք ուսումնասիրում է տեղանքը, թշնամու ուժերի քանակը և դասավորությունը, մշակում գիշերային գործողությունների պլանը։ Անցնելով ընդհանուր հարձակման, Մելիքյանի և Դորժիևի քաջերը հակառակորդին առնում են աքցանի մեջ, ջախջախում նրա գլխավոր ուժերը և ազա-

տագրում Դումնոյե գյուղը։ Նրանք գրավում են 1 թնդանոթ, 5 գնդացիր, 1 ականանետ, 16.000 փամփուշտ և կարևոր փաստաթղթեր։

Դումնոյե գյուղի գրավման ժամանակ Մելիքյանի մարտիկները, հետևելով իրենց հրամանատարի օրինակին, ցույց են տալիս խիզախության օրինակներ։ Մանր մարտերում ցուցաբերած խիզախության և զումարտակը հմուտ ղեկավարելու համար Մելիքյանը պարգևատրվում է Կարմիր դրոշի շքանշանով։

1942 թվականի հունվարի առաջին օրերին սովետական զորամասերը համառ մարտեր են մղում հակառակորդի դեմ Կուրսկի մարզի Օբոյան քաղաքի շրջանում։ Այդ օրերին բարձր հրամանատարությունը ավագ լեյտենանտ Մելիքյանի զումարտակին առաջադրանք է տալիս՝ քաղաքին մոտենալ հարավից։ Հրամանը կատարելու վճռականությամբ լցված՝ զումարտակը նախքան Օբոյան քաղաքին մոտենալը, մարտերով ազատագրում է Վեսյոլի, Պերեսիպ, Օրլովկա, Զորինսկիե Դվորի բնակավայրերը։ Պերեսիպ բնակավայրը հակառակորդի ձեռքից ետ վերցնելու ժամանակ զումարտակը գրավում է 2 ծանր գնդացիր, 14 հրացան, 2 ականանետ, 10.000 փամփուշտ, գերի է վերցնում 2 գերմանական սպա, ոչնչացնում ավելի քան 80 հիտլերականի։

Գիշերային մարտի վարպետը, 1942 թվականի հունվարի 4-ի գիշերը իր ստորաբաժանումով սրընթաց գրոհով ներս է խուժում Զորինսկիե Դվորի գյուղը և ոչնչացնում ֆաշիստական հետևակի մոտ մեկ զումարտակ, գրավում ռազմական բեռով բարձված 15 ավտոմեքենա, 10 ծանր գնդացիր և ռազմական հանդերձանք։ «Զումարտակի անվախ հրամանատարը Զորինսկիե Դվորի գյուղի համար մղվող մարտում ցույց տվեց քաջության, խիզախության և հերոսության հրաշքներ»,—գրել է հրամանատարությունը Մելիքյանի պարգևաթերթիկում։

Գյուղը ազատագրելուց հետո, զումարտակը դիրքեր է գրավում դեպի Օբոյան քաղաքը տանող ճանապարհի վրա։ Կոփված հրամանատարը և նրա մարտիկներն երկու օր կտրում են հակառակորդի առաջխաղացման ճանապարհը և գրավում ռազմամթերքով բեռնված 21 ավտոմեքենա, ծանր թնդանոթների 2 մարտկոց, 8 գնդացիր, 22 հրացան և ետ վերցնում բնակչությունից հափշտակված շատ մթերքներ։ Մոտ 40 կմ. ետ շպրտելով թշնամուն, զումարտակը խորանում է նրա թիկունքում և 223-րդ հրաձգային դիվիզիայի կազմում առաջինն է հասնում Օբոյան քաղաքի մատույցներին։ Սակայն այստեղ, քաղաքի մատույցներում մղած մարտում Մելիքյանն ընկնում է հերոսի մահով։

Օբոյան քաղաքի ազատագրման մարտերում ցուցաբերած հերոսության և անձնազոհության համար 1942 թվականի նոյեմբերի 5-ի հրամանագրով, ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահությունը ավագ լեյտենանտ Խաչատուր Բեգլարի Մելիքյանին հետմահու շնորհում է Սովետական Միության հերոսի բարձր կոչում։



# ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱԿՈԲԻ ՑԱՎՐՈՒՄՈՎ





## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության և հերոսության համար, շնորհել* Սովետական Միության հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

*Ավագ լեյտենանտ* Վլադիմիր Հակոբի Ցավրումովին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 27 հունիսի 1945 թ.:*

965



Հայ ժողովրդի զավակ, ավագ լեյտենանտ Վլադիմիր Հակոբի Ցավրումովը (Ցավրումյանը) սովետական բանակի 1945 թվականի հունվարին ծավալած ընդհանուր հարձակման ընթացքում՝ Վիսլայի Սանդոմիրյան պլացդարմի ճեղքման մարտերում աչքի ընկած հերոսներից մեկն է։

Վլադիմիր Ցավրումյանը ծնվել է 1922 թվականին՝ Բաքվում, տակառագործ բանվորի ընտանիքում։ Նախնական կրթությունն ստացել է տեղի միջնակարգ դպրոցում։ 1939 թվականի հունիսին Վլադիմիրը դուրս գալով դպրոցի 6-րդ դասարանից, աշխատանքի է անցնում Բաքվի լեյտենանտ Շմիդտի անվան մեքենաշինական գործարանում։ Այստեղ նա ընդունվում է կոմերիտմիության շարքերը և շուտով դառնում 4-րդ կարգի հմուտ պտտող բանվոր, միաժամանակ շարունակելով ուսումը իննամյա բանվորական երեկոյան դպրոցում։

Կոմերիտական Վլադիմիրը դեռ նոր էր ոտք դրել ինքնուրույն աշխատանքի ասպարեզ, երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը։ Նա 1941 թվականի նոյեմբերի 18-ին զինակոչվում է և ուղարկվում Վոլգոգրադի ավիա-զենիտային ռազմական դպրոցը։ Ինչպես գործարանում, այնպես էլ զինվորական դպրոցում առաջավորների շարքերում գտնվելով, Վլադիմիրը դառնում է մարտա-

կան ու քաղաքական պատրաստության գերազանցիկ։ Այդ մասին մորը գրած նամակներում նա հայտնում է՝ «Սովորում եմ գերազանց գնահատականներով, գերազանցորեն էլ պետք խփեմ հիտլերականներին... և տուն կվերադառնամ հաղթանակով»։

Զինվորական դպրոցն ավարտելուց հետո, Վլադիմիր Յավրումյանը կրտսեր լեյտենանտի կոչումով 1942 թվականի ապրիլի 15-ից մեկնում է գործող բանակ և նշանակվում Պոլտավյան կարմրադրոշ 9-րդ գվարդիական օդա-դեսանտային դիվիզիայի 28-րդ գնդի 2-րդ գումարտակի ավիա-դեսանտային դասակի հրամանատար։ Նա առաջին մարտական մկրտությունը ստանում է Հյուսիս-արևմտյան և Վոլգոգրադի ռազմաճակատներում։

1943 թվականի գարնանը լեյտենանտ Յավրումյանը փոխադրվում է հարավ և իր ստորաբաժանումով, Տափաստանային ռազմաճակատի զորքերի կազմում, մասնակցում է Օրյոլ-Կուրսկ աղեղի վիթխարի ճակատամարտին։

Գնդի հրետանու մատակարարման պետ կապիտան Ա. Կարապետյանը, նկարագրելով Բելգորոդի ուղղությամբ Օբոյան քաղաքի շրջանում իրենց զորամասերի ու ստորաբաժանումների մղած մարտերը, Յավրումովի մասին գրել է հետևյալը.

«Ռազմաճակատում մեր համատեղ աշխատանքում ես մոտիկից ծանոթացա և բարեկամացա Յավրումովի հետ... Նա միշտ կարողանում էր իր մարտիկներին հմտորեն կռվի տանել գերմանացիների դեմ և նրա ստորաբաժանումը շարունակ առաջավոր ու հաղթանակող ստորաբաժանումներից մեկն էր»։

1943—1944 թվականներին ավագ լեյտենանտ Յավրումյանը Ուկրաինական երկրորդ ռազմաճակատում մասնակցում է Կրեմենչուկ քաղաքի ազատագրմանը, Դնեպրի, ապա Դնեստրի գետանցմանը, ձախափնյա և աջափնյա Ուկրաինայի, Բեսարաբիայի տերիտորիայի ու բազմաթիվ բնակավայրերի ազատագրմանը։ 1944 թվականին Յավրումովը ռազմաճակատում ընդունվում է կոմունիստական պարտիայի շարքերը։ Այդ տարվա հուլիսի 15-ից նրանց դիվիզիան փոխադրվում է Ուկրաինական առաջին ռազմաճակատ։ Այստեղ Յավրումովը առաջ է քաշվում և նշանակվում է 28-րդ գնդի 2-րդ գումարտակի 5-րդ վաշտի հրամանատար և մասնակցում է Արևմտյան Ուկրաինայի համար մղվող մարտերին։

Այդ շրջանում Ուկրաինական առաջին ռազմաճակատի զորքերը հարաճուն տեմպով զարգացնելով հարձակողական գործողությունները մտնում են Լեհական հողը և հասնում Վիսլա գետին։ Կատաղի մարտեր են սկսվում Վիսլա-Վիսլոկա (Վիսլոկա) գետերի միջև, որտեղ գերմանացիները ուժեղ դիմադրություն են ցույց տալիս։

Առանձնապես դաժան մարտեր են ծավալվում Դեմբիցա քաղաքի համար։ Այս քաղաքը գրավելու ժամանակ աչքի է ընկնում ավագ լեյտենանտ Յավրումյանի ղեկավարած վաշտը, որը գնդի զորամասերից առաջինն է թափանցում քաղաք և մյուս զորամասերի հետ միասին կործանիչ կրակով ու սվինային հար-

*վածներով թշնամուն դուրս մղում դիրքերից, ոչնչացնում մեծ թվով հիտլերական զինվոր ու սպա։ Այդ հաղթանակների համար 28-րդ գունդը գերագույն գլխավոր հրամանատարության հրամանով ստանում է «Դեմբիցյան» անունը, մեծ թվով մարտիկներ պարգևատրվում են մարտական շքանշաններով ու մեդալներով։ Ավագ լեյտենանտ Յավրումյանը պարգևատրվում է Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանով։*

*Ավագ լեյտենանտ Յավրումյանը և նրա վաշտը, առանձնապես մեծ փառքի են հասնում և աչքի ընկնում 1945 թվականին սովետական բանակի հունվարյան ընդհանուր հարձակման ժամանակ։*

*Ուկրաինական առաջին ռազմաճակատի զորքերը հարձակման էին անցել Վիսլայի աջ ափից Սանդոմիր քաղաքից դեպի արևմուտք։*

*Այդ կատաղի մարտերում Յավրումովի վաշտին առաջադրված էր գրոհել Ստոպնիցա քաղաքի խճուղու երկարությամբ և թշնամուն դուրս շպրտել ամրացված կետերից։ Վաշտը մյուս զորամասերի հետ միասին հարձակվում է ըսկըսում հունվարի 12-ի վաղ առավոտյան։*

*Յավրումյանը շարունակ հարձակվող իր վաշտի ընդհանուր շղթայի կենտրոնում գտնվելով, «Հանուն հայրենիքի, հանուն հաղթանակի, առաջ իմ արծիվներ» բացականչություններով ոգևորում էր մարտիկներին։ Նա իր վաշտով հաղթահարելով հակառակորդի ուժեղ կրակը, հասնում է թշնամու խրամատների առաջին գծին և սրընթաց գրոհում հակառակորդի վրա։ Սկսվում է ձեռնամարտ։*

*Նռնակային ու ավտոմատային զենքերի կրակով ու սվինամարտով վաշտի ռազմիկները ոչնչացնում են 53 հիտլերական զինվոր ու սպա, 12 հաստոցավոր ու ձեռքի գնդացիր. ավագ լեյտենանտ Յավրումյանը անձամբ ոչնչացնում է 15 ֆաշիստական զինվոր ու սպա, վերցնում մեկ հաստոցավոր ու երկու ձեռքի գնդացիր։*

*Այսպիսով, Յավրումյանի վաշտը հաջողությամբ կատարում է մարտական առաջադրանքը։ Արագ կերպով լիկվիդացվում են խճուղու երկարությամբ հենակետային ամրություններում կենտրոնացված թշնամու կրակային միջոցները։ Այդ խոշոր չափով նպաստում է մեր զորամասերի կողմից Ստոպնիցա քաղաքը ազատագրելուն։*

*Մի այլ մարտի ժամանակ վաշտի աջ թևը դեմ է առնում ականապատված դաշտի։ Վաշտի հրամանատար Յավրումյանը, որը ուսից ծանր վիրավորվել էր և արյունաքամ էր լինում, հավաքելով իր վերջին ուժերը, անցնում է զորամասի աջ թևը։ Արագ կերպով կողմնորոշվելով տեղանքում, նա հմտորեն շարունակում է առաջ տանել մարտիկներին։ Այդտեղ, լեհական Ստոպնիցա քաղաքի շրջանում, Մարիյսկ գյուղի մոտ, վաշտը հաղթահարելով թշնամու դիմադրությունը, և հետապնդելով ջախջախված հակառակորդին, ոչնչացնում է 13 ֆաշիստական զինվոր ու սպա։ Հենց այդ մարտում էլ Յավրումյանը զոհվում է հերոսի մահով։*

*Գվարդիական 9-րդ կարմրադրոշ Պոլտավյան օդա-դեսանտային դիվիզիայի 28-րդ «Դեմրիցյան» գնդի հրամանատարությունը բարձր գնահատելով ավագ լեյտենանտ Վլադիմիր Յավրումյանի հրամանատարական հմտությունը և անձնական խիզախությունները, նրան ներկայացնում է Սովետական Միության Հերոսի կոչման, նրա պարգևաթերթիկում արձանագրելով, որ «Գլխավոր ուղղություններում թշնամու պաշտպանության գիծը ճեղքելու վերաբերյալ հրամանատարության առաջադրանքը կատարվեց շնորհիվ Վլադիմիր Յավրումովի հերոսության, որն իրեն զոհաբերեց հանուն հաղթանակի»։*

*1945 թվականի հունիսի 27-ին ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով գվարդիայի ավագ լեյտենանտ Վլադիմիր Հակոբի Յավրումյանին հետմահու շնորհվում է Սովետական Միության Հերոսի կոչում։*



# ՂԱԶԱՐՈՍ ԱՎԵՏԻՍԻ ԱՎԱԳՅԱՆ



## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել Սովետական Միության Հերոսի կոչում, հանձնելով Լենինի շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ.*

*1. Լեյտենանտ Ղազարոս Ավետիսի Ավագյանին:*

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 24 մարտի 1945 թ.:*





Խիզախ լեռնցի Ղազարոս Ավետիսի Ավագյանը ծնվել է 1918 թվականին Գանձակի գավառի, այժմ Ադրբեջանական ՍՍՌ Խանլարի շրջանի, Գետաշեն գյուղում, չքավոր գյուղացու ընտանիքում։ Նա սկզբում սովորում է իրենց գյուղի տարրական, ապա հարևան Զավդար գյուղի ոչ լրիվ միջնակարգ դպրոցում։ Այնուհետև շարունակելով ուսումը, ավարտում է Կիրովաբադի բանֆակը։ 1940 թվականի հունվարին Ղազարոսը զինակոչվում է սովետական բանակ և սովորում ռազմական դպրոցում։

Ավարտելով ռազմական դպրոցը, Ղ. Ավագյանը ստանում է լեյտենանտի կոչում։ Պատերազմի առաջին օրերից նա գտնվում է գործող բանակի շարքերում։ 1942 թվականին համառ մարտերից մեկի ժամանակ, մի խումբ մարտիկների թվում, նա ընկնում է շրջապատման մեջ՝ Սմոլենսկի մարզի Մեդվեդովկա գյուղում։ Ավագյանը որոշ ժամանակ թաքնվում է մի կոլտնտեսականի տանը, որից հետո դառնում է պարտիզան։ Սմոլենսկի մարզը ազատագրվելուց հետո նա վերադառնում է սովետական բանակի շարքերը և հերոսաբար շարունակում կռվել թշնամու դեմ, Օրյոլյան № հրաձգային գնդում իբրև հրաձգային դասակի հրամանատար։

Մարտերից մեկում լեյտենանտ Ղ. Ավագյանի դասակը դարան է մտնում,

իսկ ինքը՝ հրամանատարը, դիրք է գրավում մարտիկներից մի փոքր հեռու։ Մութն ընկնելուն պես թշնամու ստորաբաժանումները հարձակումներ են գործում՝ ճանապարհը փակելու համար։ Ավագյանի դասակը հերոսաբար կռվելով, հետ է մղում թշնամուն։ Հակառակորդը կրկնելով գրոհները, Ավագյանի դասակը առնում է օղակի մեջ։ Օղակը քանի գնում սեղմվում էր։ Լեյտենանտ Գ. Ավագյանը հիտլերականների վրա ուղղաձիգ կրակ է բաց անում։ Թշնամու զինվորները աղմուկով, աղաղակով վազում են դեպի Գ. Ավագյանը։ Նա մեկը մյուսի հետևից գետին է գլորում նրանց։ Գերմանացի մայորը, ատրճանակը օդում ճոճելով, հարձակվում է Ավագյանի վրա։ Բայց նրա ոտքերի տակ պայթում է Ավագյանի նետած նռնակը և նա անշնչացած ընկնում է գետին։ Գերմանացի զինվորները տեսնելով իրենց հրամանատարի մահը, հետ են քաշվում։

Բելոռուսիայում մղվող մարտերին ակտիվ մասնակցություն ունենալու համար Գ. Ավագյանը 1944 թվականի մայիսին պարգևատրվում է Կարմիր աստղի շքանշանով։ Նրա պարգևաթերթիկում այդ առթիվ գրված է. «Մոգիլևի մարզի Չերվենսկու շրջանի Պյատիգոսկա խորհտնտեսության մոտ 1944 թվականի հուլիսի 6-ին հակառակորդի շրջապատված խմբավորումը լիկվիդացնելիս՝ Գ. Ավագյանը պահում էր դժվարին տեղամասերից մեկը։ Գերմանացիների շրջապատված խմբավորումը խոշոր ուժերով վճռում է դուրս գալ շրջապատումից, այնտեղ, որտեղ դասավորված էր Գ. Ավագյանի հրաձգային դասակը։ Հակառակորդը վեց անգամ անդից բարձրանում է և գրոհի դիմում, բայց թշնամու գրոհները հետ են մղվում, ընդ որում ոչնչացվում է գերմանական 180 զինվոր ու սպա։ Գ. Ավագյանն անձամբ ոչնչացրեց գերմանական 22 զինվոր, մեկ մայոր և երկու օբեր լեյտենանտ։ Մարտի դաշտը զննելիս բոլոր սպանված գերմանացիները Գ. Ավագյանից 2—10 մետր հեռավորության վրա էին գտնվում»։

Լեյտենանտ Ավագյանը ծնողներին ուղարկած մի նամակում, նկարագրելով իր վարած մարտերից մեկը, գրում է. «Մեր վաշտով հարձակվեցինք գերմանացիների վրա։ Նրանք թողեցին իրենց չորս ականանետները, արկերը, ձիերը, սայլերն ու փախան։ Մենք այնպիսի կարկուտ թափեցինք նրանց վրա, որ նրանց մի մասը չհասցրեց փախչել, ոչնչացավ գետնափորում։ Մենք նրանց վրա նետեցինք մոտ 400 արկ»։

Հայրենիքի նկատմամբ ցուցաբերած անձնազոհության և այդ մարտերում կատարած խիզախության ու հերոսության համար ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահությունը 1945 թվականի մարտի 24-ի հրամանագրով Ղազարոս Ավետիսի Ավագյանին շնորհում է Սովետական Միության հերոսի կոչում։



# ԳՈՒՐԳԵՆ ՄԻՐԶԱՅԻ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ



## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**Կարմիր բանակի գեներալներին, սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու մասին**

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում Հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել* Սովետական Միության Հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

8. *Գվարդիայի լեյտենանտ* Գուրգեն Միրզայի Արզումանյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 15 հունվարի 1944 թ.*







273



Սովետական Միության հերոս Գուրգեն Արզումանյանը ծնվել է 1914 թվականին Գորիսի շրջանի Խնձորեսկ գյուղում, փականագործի ընտանիքում։

Գուրգենը դեռ մանուկ էր, երբ նրա հայրը՝ կոմունիստ Միրզո Արզումանյանը Խնձորեսկից տեղափոխվում է Բաքու։ Պատանի Գուրգենը 1922 թվականից սկսում է հաճախել դպրոց։ 1929 թվականին նա ավարտում է Բաքվի ոչ լրիվ միջնակարգ դպրոցը և աշխատանքի անցնում Ադրբեջան-Նեֆտ տրեստում։ 1930 թվականին նա ընդունվում է ՀամԼԿԵՄ շարքերը։

Գուրգենը 1935 թվականին մեկնում է սովետական բանակ՝ պարտադիր զինվորական ծառայության։ Բանակում նա ավարտում է հեծելազորային ուսումնարանը։ Զինվորական ծառայության ընթացքում Գուրգենն իրեն դրսևորում է որպես լավագույն մարտիկ, որի համար կարճ ժամանակամիջոցում հրամանատարությունը նրան շնորհում է նախ ավագ սերժանտի և ապա ավագի կոչում։

1939 թվականի նոյեմբերին, երբ սկսվում է սովետա-ֆիննական պատերազմը, Գուրգեն Արզումանյանն իր ստորաբաժանման մարտիկների հետ առաջավոր դիրքերում կռվում է սպիտակ-ֆինների դեմ և ցուցաբերած սխրա-

գործությունների համար պարգևատրվում է Կարմիր աստղի շքանշանով ու խիզախության համար մեդալով։

Գուրգենը 1940 թվականին ընդունվում է ՍՄԿՊ շարքերը։

Հայրենական մեծ պատերազմի սկզբում Արզումանյանը իր ստորաբաժանումով թշնամուն համառ դիմադրություն էր ցույց տալիս ՍՍՌՄ-ի արևմտյան սահմանի վրա։ 1941 թվականի սեպտեմբերին նա ծանր վիրավորվում է ու տեղափոխվում հոսպիտալ։ Ապաքինվելուց հետո նա կրկին մեկնում է գործող բանակ և մարտնչում Վոլգոգրադի պաշտպանների շարքերում, իսկ այնուհետև մասնակցում է հարավ-արևմտյան ու Կենտրոնական ռազմաճակատների ուղղությամբ մղվող մի շարք մարտերի։

1943 թվականի սեպտեմբերի 21-ին հակառակորդի հրետանային, ականանետային և գնդացրային ուժեղ կրակի տակ Արզումանյանի հեծելավաշտն առաջինն է անցնում Բրյանսկի մարզի Սնով գետը և առանց դադարի շարունակում է հետապնդել նահանջող թշնամուն։

Հաջորդ օրը, սեպտեմբերի 22-ին, ուժեղ մարտեր են բորբոքվում Ուկրաինական ՍՍՌ Չերնիգով քաղաքից հարավ-արևմուտք ընկած Կուլիկովկա խոշոր բնակավայրի համար։ Թշնամին «Վագր» ու «Ֆերդինանդ» տիպի տանկերի և ինքնագնաց հրանոթների պաշտպանությամբ անընդհատ գրոհում էր հարձակվող հեծելավաշտի վրա։ Արզումանյանի հեծելավաշտը, օգնության հասած սովետական տանկերի օժանդակությամբ, անցնում է հակագրոհի և թշնամուն դուրս շպրտում գրաված դիրքերից։ Այդ մարտում Արզումանյանը վիրավորվում է, բայց չի թողնում հրամանատարական պոստը։

Որոշ ժամանակ անց, գազազած հիտլերականները նորից են անցնում հարձակման՝ իրենց կորցրած դիրքերը ետ գրավելու նպատակով։ Հեծելավաշտի արիասիրտ հրամանատարը առաջինն է նետվում մարտի։ Մարտիկները, իրենց սիրելի հրամանատարի խիզախությամբ ոգևորված, քաջաբար կռվում են բնակավայրը թշնամուց ազատագրելու համար։

Այն պահին, երբ հեծելազորայինները հաղթականորեն առաջ էին սլանում, ականի պայթյունից զոհվում է Արզումանյանը։

Գվարդիական հեծելավաշտի մարտիկներն ու սպաները, իրենց սիրելի հրամանատարի կորստի կսկիծը սրտերում, անհուն վրեժով լցված, նետվում են թշնամու վրա և ներխուժում Կուլիկովկա բնակավայրը՝ թշնամուն դուրս վռնդելով այնտեղից։

Սնով գետի գետանցման և Կուլիկովկա բնակավայրի ազատագրման համար տեղի ունեցած մարտերում ցուցաբերած քաջության և անձնազոհության համար ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահությունը 1944 թվականի հունվարի 15-ի հրամանագրով գվարդիայի լեյտենանտ Գուրգեն Միրզոյի Արզումանյանին հետմահու շնորհում է Սովետական Միության հերոսի կոչում։



# ՌՈՒԲԵՆ ՔՐԻՍՏԱՓՈՐԻ ԲԱՂԻՐՈՎ





## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի գեներալներին, սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել* Սովետական Միության Հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

*10. Լեյտենանտ* Ռուբեն Քրիստափորի Բաղիրովին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 23 սեպտեմբերի 1944 թ.։*



Կարճ է նրա մարտական ուղին։ Պատերազմում եղավ ընդամենը մեկ ամիս և այդ կարճ ժամանակամիջոցում իր հմուտ ղեկավարությամբ և անձնական քաջությամբ աչքի ընկավ ու հայտնի դարձավ ամբողջ դիվիզիայում։

Մինչև ռազմաճակատ մեկնելը Ռուբեն Բաղիրովն աշխատել է Աշխաբադում, որպես Թուրքմենստանի կոմունալ-բնակարանային շինարարության աշխատողների արհմիության ռեսպուբլիկական կոմիտեի նախագահ։ Նրանց ընտանիքը Թուրքմենստան էր տեղափոխվել Շուշիից, որտեղ 1908 թ. ծնվել էր Ռուբենը։

1944 թվականին, ավարտելով Աշխաբադի ռազմա-հետևակային ուսումնարանը, կոմունիստական պարտիայի անդամ, լեյտենանտ Ռուբեն Բաղիրովը մեկնում է Ուկրաինական առաջին ռազմաճակատ և նշանակվում վաշտի հրամանատար 350-րդ դիվիզիայում։

Գունդը պետք է հաղթահարեր Արևմտյան Բուգ գետը։ Վաշտի հրամանատար լեյտենանտ Ռուբեն Բաղիրովն առաջադրանք է ստանում՝ հետախուզել գետանցի համար տեղը և գրավել Կրիստինոպոլ քաղաքի (Լվովի մարզ) մոտ գըտնըվող երկաթուղային կամուրջը, որով պետք է անցնեին մեր ռազմական



# ՄԻՀՐԱՆ ՄԻՀՐԱՆԻ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ




## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**Կարմիր բանակի սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու մասին**

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում Հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել* Սովետական Միության Հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

*8. Կարմիր բանակային* Միհրան Միհրանի Բոստանջյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 22 փետրվարի 1944 թ.*



*Այսպիսով, Բաղիրովի հրամանատարությամբ վաշտն առաջինն է անցնում Սան գետը և ապահովում գնդի գետանցումը։*

*1944 թվականի հուլիսի 27-ին զումարտակի 1-ին և 3-րդ վաշտերը Բաղիրովի հրմանատարությամբ հաջող մարտ են մղում Հակա-Հարձակման անցած հիտլերյան ուժերի դեմ։ Հետ մղելով թշնամու երկու ուժեղ գրոհները, Բաղիրովի մարտիկները նրան փախուստի են մատնում։ Կռվում Բաղիրովը գլխից վիրավորվում է։*

*Նույն օրը դիվիզիայի հրամանատարի մոտ է կանչվում իր քաջագործությամբ արդեն շատերին հայտնի Ռուբեն Բաղիրովը, որին տրվում է հետախուզական խիստ կարևոր և միաժամանակ դժվարին մի նոր առաջադրանք։ Հարկավոր էր պարզել գետանցի հարմար տեղը և թշնամու ուժերի դասավորությունն ու քանակը Վիսլա գետի մյուս ափին։ Բաղիրովն ուրախությամբ ընդունում է այդ առաջադրանքը և, շնորհակալություն հայտնելով վստահության համար, անցնում նրա կատարմանը։*

*Իր հետ վերցնելով հինգ քաջ մարտիկի, թփերով պատված տեղանքով նա մոտենում է գետին և լեհ պարտիզանների օգնությամբ հուլիսի լույս 28-ի գիշերը փոքրիկ նավակով անցնում այն։ Անհրաժեշտ տեղեկությունները հավաքելուց հետո, նույն գիշերը նա վերադառնում է։ Լուսադեմին ամբողջ դիվիզիան արդեն գետն անցել էր։ Թշնամին այդ մասին իմացավ և հարձակման անցավ միայն հաջորդ օրը, երբ մեր զորամասերն ամուր դիրքեր էին գրավել։ Հենակետը պահպանելու և ընդլայնելու համար ծավալվում են կատաղի մարտեր, որոնք չեն դադարում օրեր շարունակ։ Միայն մեկ օրվա ընթացքում՝ օգոստոսի 1-ին, Կոպշիվնիցա բնակավայրը գրավելու ժամանակ Բաղիրովի վաշտը հետ է մղում թշնամու հետևակի և տանկերի ինը հակագրոհ՝ ոչնչացնելով 60 զինվոր ու սպա, իսկ Բաղիրովն անձամբ խփում է մեկ տանկ։*

*Օգոստոսի 3-ին, կատարելով առաջադրանքը, Ռուբեն Բաղիրովը յոթ մարտիկի հետ միասին ոչնչացնում է թշնամու կրակակետը, 16 հիտլերական և վերցնում երկու հաստոցավոր գնդացիր ու այլ ռազմավար։*

*Այսպես, քայլ առ քայլ, կատաղի մարտերով մեր զորամասերն ընդլայնում էին գրաված հենակետը։ 1944 թվականի օգոստոսի 16-ին ուժեղ կռվում Ռուբեն Բաղիրովը ծանր վիրավորվում է։*

*Դա նշանավոր Սանդոմիրյան պլացդարմն էր Վիսլայի ձախ ափին։*

*Արևմտյան Բուգ, Սան, Վիսլա գետերը հաղթահարելու, «սխտեմատիկ կիրպով անձնական հերոսություն և ռազմական վարպետություն ցուցաբերելու համար», ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1944 թվականի սեպտեմբերի 23-ի հրամանագրով, վաշտի հրամանատար և պարտկազմակերպիչ Ռուբեն Բաղիրովին շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում։*

*Բուժվելուց հետո, մինչև 1945 թվականի վերջերը, Բաղիրովը ծառայում էր Երևանում գտնվող զորամասերից մեկում, որտեղից զորացրվելով, մեկնում է Աշխաբադ։*

*Այժմ Սովետական Միության հերոս Ռուբեն Բաղիրովն աշխատում է Պյատիգորսկի կուրորտների տերիտորիալ վարչությունում։*



# ՄԻՀՐԱՆ ՄԻՀՐԱՆԻ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ





## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքները օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել* Սովետական Միության Հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

*8. Կարմիր բանակային* Միհրան Միհրանի Բոստանջյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 22 փետրվարի 1944 թ.:*





Սև ծովի ափին Սուխումիի շրջանի Վերին Էշերի գյուղում, չքավոր գյուղացու ընտանիքում 1913 թվականին ծնվեց Միհրան Միհրանի Բոստանջյանը: Մի քանի տարի անց նրանց ընտանիքը տեղափոխվեց Գագրա: Միհրանը սովորել է գյուղում, ապա Գագրայի միջնակարգ դպրոցում։ Այնուհետև նա ուսումը շարունակել է Դոնի Ռոստովի բանֆակում։

1933 թվականին մահանում է նրա հայրը, և Միհրանը հարկադրված թողնում է բանֆակը և անցնում աշխատանքի։

Գերմանա-ֆաշիստական զորքերի դեմ սովետական ժողովրդի կենաց ու մահու պայքարի առաջին իսկ օրից կոմունիստական պարտիայի անդամ Միհրան Բոստանջյանը գործող բանակում էր։

Վոլգոգրադի ճակատամարտի ծանր օրերին 333-րդ հրաձգային դիվիզիայում հետախուզական վաշտի մարտիկ Միհրան Բոստանջյանը շարունակ հետախուզում էր հակառակորդին, «լեզու» էր բերում, հաջողությամբ կատարում հրամանատարության յուրաքանչյուր առաջադրանքը։ Միայն մեկ հետախուզության ժամանակ, 1942 թվականի նոյեմբերի 29-ին, ընկերներով, խորանա-

չով թշնամու թիկունքում, բերում են չորս «լեզու», որոնք տալիս են կարևոր տեղեկություններ։

Մարտերում աչքի ընկած կոմունիստ Միհրան Բոստանջյանը 1943 թվականի ապրիլից վաշտի, իսկ նոյեմբերից գումարտակի պարտկազմակերպիչ էր։ Նա մարտիկներին բացատրում էր մարտական խնդիրների կարևորությունը, առաջինը նետվում կռվի մեջ՝ անձնական օրինակ ծառայելով մյուսների համար։

Այն գումարտակը, որի պարտկազմակերպիչը Բոստանջյանն էր, հատկապես աչքի է ընկնում Դնեպրն անցնելու մարտերում։ Ուկրաինական երրորդ ռազմաճակատում, թշնամու կրակի տակ, գումարտակը առաջիններից մեկն է անցնում լայն ու ջրառատ Դնեպրը, որը մինչև այդ մեր զորքերը հաղթահարել էին Կիևից հյուսիս և հարավ ընկած շրջաններում ու այլ տեղերում և գրավել կարևոր նշանակություն ունեցող հենակետեր գետի արևմտյան ափին։

Դնեպրը անցնելու ժամանակ գումարտակի մարտիկները նավակից պատասխան կրակ են բացում հիտլերականների վրա։ Ափ դուրս գալով, «ուռա» բացականչություններով նրանք նետվում են թշնամու պաշտպանական դիրքերի վրա։ Հարձակվողների առաջին շարքումն էր գումարտակի պարտկազմակերպիչը։ Հաղթահարելով թշնամու պաշտպանությունը, մեր մարտիկներն առաջ են շարժվում և Դնեպրի աջ ափին հենակետ գրավում սովետական զորամասերի անցման համար։ Շուտով հակառակորդն անցնում է հակահարձակման։ Ուժեղ մարտ է բորբոքվում։ Այդ մարտում վիրավորվում է երկրորդ վաշտի հրամանատար ավագ լեյտենանտ Մուշնիկովը։ Բոստանջյանն իր վրա է վերցնում վաշտի հրամանատարությունը և կազմակերպում նրա պաշտպանությունը գումարտակի ձախ թևում։ Ետ մղելով թշնամու երեք հակագրոհը, գումարտակն սկսում է առաջ շարժվել։ Այդ կռվում Բոստանջյանն անձամբ ոչնչացնում է ութ հիտլերական։ Մի կարևոր բարձունքի համար մղած կռվում, գումարտակի հետախույզների հետ միասին, Բոստանջյանը հայտնաբերում է հակառակորդի կրակակետը. նա նռնակներով ոչնչացնում է երկու հաստոցավոր գնդացիր, նրանց հաշվարկի հետ միասին։ Նույն օրը հակատանկային հրացանով Բոստանջյանը շարքից հանում է մեկ զրահամեքենա։

Կատաղի կռիվը տևեց մեկ օր։ Գումարտակը գրավեց Կանևսկոյե գյուղը և ամուր հենակետ ստեղծեց մեր զորամասերի անցման համար։

Դա 1943 թվականի նոյեմբերի 26-ին էր։

Հաջորդ օրը, հետախուզական առաջադրանքը կատարելու ժամանակ, Բոստանջյանը և նրա ընկերները ոչնչացնում են քսան հիտլերական։

Նույն օրը գերմանացիների գերակշռող ուժերը, տանկերի պաշտպանությամբ, երեք անգամ հարձակվում են գումարտակի վրա։ Վերջինս հաջողությամբ ետ է մղում բոլոր հակագրոհները։ Հակառակորդը տալիս է ավելի քան հարյուր սպանված։

Այսպես, գումարտակը, որի պարտկազմակերպիչը Միհրան Բոստանջ-

*յանն էր, համառ կռիվներում պաշտպանում է գրաված հենակետը՝ այն քայլ առ քայլ լայնացնելով։*

*Այդ կռիվներում Բոստանջյանը մարտիկներին ոգևորում է անձնական օրինակով։ Միայն մի քանի օրվա ընթացքում նրա անձնական հաշվում գրանցվում է 47 սպանված հիտլերական։*

*Դնեպրը անցնելու և նրա աջ ափին հենակետ գրավելու, մարտերում ցուցաբերած անձնական խիզախության համար գումարտակի պարտիական կազմակերպիչ Միհրան Միհրանի Բոստանջյանը ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1944 թվականի փետրվարի 22-ի հրամանագրով արժանանում է Սովետական Միության հերոսի կոչման։*

*Բարձրագույն պարգևը նոր մարտերի ու հաղթանակների ոգեշնչեցին Բոստանջյանին ու նրա գումարտակին։ Ուկրաինական երկրորդ ռազմաճակատի զորքերի կազմում գումարտակն աչքի ընկավ Նիկոպոլ քաղաքի և եղբայրական Ուկրաինայի բազմաթիվ քաղաքների ու բնակավայրերի ազատագրման մարտերում։*

*1944 թվականի մարտին Բոստանջյանը գործուղվում է սովորելու քաղաշխատողների դասընթացներում, որը վերջացնելուց հետո լեյտենանտի աստիճանով վերադառնում է ռազմաճակատ։ Այնուհետև նա մասնակցում է Ռումինիայի ազատագրմանը։*

*Զորացրվելուց հետո Միհրան Բոստանջյանն աշխատում էր Գագրայում՝ որպես սանատորիայի, ապա պանսիոնատի դիրեկտոր։*

*Սովետական Միության հերոս Միհրան Բոստանջյանը մահացավ 1958 թվականին։*



# ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ



## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**Կարմիր բանակի շարքային և սպայական կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին**

*Դնեպր գետի հաջող գետանցման, Դնեպր գետի արևմտյան ափին գրաված պլացդարմը ամրապնդելու և ընդլայնելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել* Սովետական Միության հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և «Ոսկի աստղ» մեդալ.*

*21. Բժշկական ծառայության գվարդիայի լեյտենանտ* Սերգեյ Վարդանի Գրիգորյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 20 դեկտեմբերի 1943 թ.*





Դնեպր գետն անցնելու և նրա աջ ափին հենակետ ամրացնելու ժամանակ վիրավորներին բուժօգնություն ցույց տալու և հրամանատարի կյանքը փրկելու ժամանակ անձնազոհություն կատարելու համար ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1943 թվականի դեկտեմբերի 20-ի հրամանագրով բժշկական ծառայության լեյտենանտ Սերգեյ Վարդանի Գրիգորյանին հետմահու շնորհեց Սովետական Միության Հերոսի կոչում։

Սերգեյ Վարդանի Գրիգորյանը ծնվել է 1923 թվականի ապրիլի 14-ին Օրջոնիկիձե քաղաքում, բանվորի ընտանիքում։ 1930 թվականին նրանց ընտանիքը տեղափոխվում է Բաքու, ապա Վրացական ՍՍՌ Թեթրիծղարո շրջանի Աղբուլաղ գյուղը։ Պատանի Սերգեյը տասը տարուց ավելի գտնվելով Լենինի անվան պիոներ կազմակերպության և լենինյան կոմերիտմիության շարքերում՝ դաստիարակվել էր ջերմ հայրենասիրության ոգով։ Դպրոցական տարիներից նա ակտիվ մասնակցություն է ունենում հասարակական աշխատանքներին։

Ս. Գրիգորյանը 1940 թվականին ավարտում է Աղբուլաղի միջնակարգ դպրոցը և ապա բոլոր առարկաներից գերազանց քննություն տալով՝ ընդուն-

վում Թբիլիսիի Ա. Ս. Պուշկինի անվան մանկավարժական ինստիտուտը։ Մեկ տարի հետո, 1941 թվականի հունիսին նա փոխադրվում է Խարկովի ռազմաբժշկական ուսումնարանը։ Իբրև գերազանցիկի, նրան ժամանակից շուտ տալիս են բժշկական ծառայության լեյտենանտի կոչում։ Ուսումնարանի դիրեկցիան որոշում է նրան պահել ուսումնարանում դասատու, բայց Սերգեյը խնդրում է սանիտարական գլխավոր վարչությանը, որպեսզի իրեն ուղարկեն ռազմաճակատ։ Ս. Գրիգորյանը նշանակվում է 19-րդ ռազմա-օդային գվարդիական գունդը, որը մարտեր էր մղում Հյուսիս-արևմտյան ռազմաճակատում։ Այդ զորամասում կատարած օրինակելի աշխատանքի համար նա պարգևատրվում է խիզախության համար մեդալով և Կարմիր աստղի շքանշանով։

1942 թվականին Ս. Գրիգորյանն ընդունվում է ՍՄԿԿ շարքերը։ Պարտիայի անդամ Ս. Գրիգորյանի ղեկավարած բժշկա-սանիտարական ստորաբաժանումում օրինակելիորեն էր կազմակերպված վիրավոր և հիվանդ մարտիկներին օգնություն ցույց տալու գործը։

1943 թվականի օգոստոսին նրանց գվարդիական զորամասը փոխադրվում է Ուկրաինական ռազմաճակատ, ուր ակտիվ կերպով դրսևորվում է բժշկական դասակը ղեկավարելու Ս. Գրիգորյանի հմտությունը։ Նա ակտիվ մասնակցություն է ունենում Ուկրաինայի ազատագրման մարտերին, մարտադաշտում անձնվիրությամբ վիրավոր զինվորներին ու հրամանատարներին բժշկական օգնություն ցույց տալու գործում։ Դրա համար նա պարգևատրվում է Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով։ 1943 թվականի հոկտեմբերի 4-ին գերմանական զավթիչների դեմ մղվող հարձակողական մարտերի ժամանակ բժշկական դասակի հրամանատար Ս. Գրիգորյանը, հանդես բերելով հաստատակամություն, խիզախություն, կարողանում է կազմակերպել վիրավորների դուրս բերումը ռազմադաշտից։ Այդ մարտերում նրա դասակը կարողանում է կրակի տակից դուրս բերել 250 վիրավոր զինվոր ու սպա։ Ս. Գրիգորյանը անձամբ մարտադաշտից սանբուժմաս է տեղափոխում քառասունից ավելի վիրավորների։

Ուկրաինական ՍՍՌ Դնեպրոպետրովսկի մարզի Աննովկա գյուղի մոտ գնդի գումարտակներից մեկը մի ամբողջ օր մնում է շրջապատման մեջ։ Երբ հակառակորդի տանկերը շարժվում են ձորակով, Ս. Գրիգորյանը նրանցից մեկի վրա նետում է հակատանկային նռնակ և ոչնչացնում այն։ Շրջապատման մեջ գտնվող գումարտակի հրամանատարը, դուրս գալով թաքստոցից և մարտի կոչելով, գրոհի է տանում գումարտակը և ճեղքում թշնամու օղակը։ Այդ պահին թշնամու մեկ ուրիշ տանկ սկսում է կրակել հետևակի և նրա հրամանատարի վրա։ Ս. Գրիգորյանը իր մարմնով ծածկում է գումարտակի հրամանատարին և նրան փրկում գնդակից, իսկ ինքը մահացու վերք է ստանում։ Քսան տարին դեռ նոր բոլորած, 1943 թվականի հոկտեմբերի 4-ին մահանում է բժշկական ծառայության լեյտենանտ Սերգեյ Գրիգորյանը։

Բժշկական ծառայության գվարդիայի կապիտան Պլունիկը 1943 թվակա-

նի նոյեմբերի 22-ին ճակատային թերթում լույս ընծայած իր մի հոդվածում գրել է, որ հայ ժողովրդի պանծալի զավակ Սերգեյ Գրիգորյանը պատվով էր կատարում զինվորական բժշկի իր պարտականությունները։ Երբ կարիք էր զգացվում, նա ինքն էր գնում մարտի դաշտ և դաշտից դուրս բերում վիրավոր զինվորներին ու հրամանատարներին։ Մի անգամ ծանր վիրավորվեց նրա ստորաբաժանման հրամանատար Լոշակինը։ Ս. Գրիգորյանը նրան իր ուսերի վրա վերցրեց և հանեց մարտի դաշտից։ Նրանից ոչ հեռու պայթեց թշնամու արկը, և նրա բեկորներով վիրավորվեց Գրիգորյանը, բայց նա չթողեց վիրավոր հրամանատարին, հավաքելով իր վերջին ուժերը՝ տարավ նրան։

Կապիտան Պլենկի պատմած այսպիսի սխրանքներով լի է բժշկական դասակի հրամանատար Սերգեյ Գրիգորյանի կյանքը։

Վրաստանի Թեթրիծղարո ավանի ռուսական միջնակարգ դպրոցի պիոներական դրուժինայի նախաձեռնությամբ տեղական կազմակերպությունները դպրոցի բակում կանգնեցրել են իրենց դպրոցի նախկին սան, Սովետական Միության Հերոս, բժշկական ծառայության լեյտենանտ Սերգեյ Վարդանի Գրիգորյանի արձանը։



# ՎԼԱԴԻՄԻՐ ԱԲՐԱՀԱՄԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի գեներալներին, սպայական և սերժանտական կազմին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքները օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար,* շնորհել Սովետական Միության Հերոսի *կոչում, հանձնելով Լենինի շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

*8. Գվարդիայի լեյտենանտ* Վլադիմիր Աբրահամի Հովհաննիսյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 27 օգոստոսի 1943 թ.:*






Գվարդիայի լեյտենանտ Վլադիմիր Աբրահամի Հովհաննիսյանը Օրյոլ-Կուրսկ աղեղում մղված մարտերի աչքի ընկած հերոսներից է։ Նա ծնվել է 1905 թվականին Բաքվում, հորատող բանվորի ընտանիքում։ Վլադիմիրը 15 տարեկան հասակից սկսեց իր աշխատանքային գործունեությունը պարենային ժողկոմատի սիստեմում, վարելով զանազան պաշտոններ։

Հայրենական պատերազմի սկզբում Հովհաննիսյանն աշխատում էր Մոսկվայի մարզի առևտրի ցանցում։ Շուտով նա զորակոչվում է և ուղարկվում Հարավ-արևմտյան ռազմաճակատ։

Պարտիայի անդամության թեկնածու Հովհաննիսյանը ակտիվ կերպով մասնակցում է Մոսկվայի պաշտպանությանը։ Նա առաջին անգամ մարտի մեջ է մտնում 1941 թվականի սեպտեմբերին՝ Ելնյա քաղաքի համար մղվող կռիվներում։ Այստեղ նա վիրավորվում է ձեռքից, բայց շարքից դուրս չի գալիս։ Այնուհետև 11-րդ գվարդիական դիվիզիայի 27-րդ գվարդիական գնդի կազմում Հովհաննիսյանը մասնակցում է Յարցևո քաղաքի համար մղված մարտերին, որտեղ կրկին վիրավորվում է։

1943 թվականի ամռանը կատաղի մարտեր էին մղվում Կուրսկ-Օրյոլի



270—19

ուղղությամբ։ Այստեղ էր նաև 27-րդ գվարդիական գնդի 2-րդ գումարտակը, որի դասակներից մեկի հրամանատարն էր գվարդիայի լեյտենանտ Վլադիմիր Հովհաննիսյանը։ Հուլիսի 12-ին համառ մարտեր են սկսվում Օրյոլի մարզի Ուլյանովսկի շրջանի Տրոստյանկի գյուղի շրջակայքում։ Սովետական հրետանային մարտիկները հուժկու կրակ են բացում թշնամու ամրությունների վրա, որից հետո հարձակման են անցնում հետևակայինները։ Գվարդիայի լեյտենանտ Հովհաննիսյանն իր մարտիկների հետ միասին ընդհուպ մոտենում է գերմանական պաշտպանության առաջավոր գծին, հաղթահարում փշալարերի խիտ ցանցը և ներխուժում թշնամու խրամատները։ Հակառակորդի համար սովետական մարտիկների երևալը անսպասելի էր։ Սկսվում է ուժեղ մարտ, որի ընթացքում խիզախ վեցյակը ոչնչացնում է թշնամու 63 զինվոր ու սպա և գերի վերցնում 18 հիտլերականի։ Այդ մարտում գվարդիայի լեյտենանտ Հովհաննիսյանն ավտոմատի կրակով շարքից հանում է թշնամու 38 զինվոր ու սպա։

Ուլյանովսկի շրջանի Բելի Վերխ գյուղը պաշտպանող գերմանական երկու վաշտ գնդացրային և ավտոմատային կրակով խանգարում էին մեր հետևակի առաջխաղացմանը։ Հակառակորդը մի քանի անգամ փորձում է անցնել հակագրոհի։ Այդ ժամանակ գվարդիայի լեյտենանտ Հովհաննիսյանը որոշում է թշնամուն հարվածել հանկարծակի թիկունքից։ Նա յոթ խիզախների գլուխն անցած, հակառակորդի անդադար կրակի տակ թափանցում է թշնամու թիկունքը։ Մարտն ավելի է ուժեղանում. Հովհաննիսյանը հրամայում է խմբակին ավտոմատային կրակ բացել հակառակորդի վրա։ Թշնամին շփոթվում է։ Կարճատև, բայց թեժ մարտում հիտլերականները կորցնում են 70 զինվոր ու սպա։ Սովետական մարտիկները գրավում են մեկ հաստոցավոր գնդացիր և երեք ավտոմատ։ Այնուհետև առաջ շարժվելով՝ խիզախների յոթնյակը նռնակներով պայթեցնում է ռազմամթերքով բեռնված երկու ավտոմեքենա։

Ուլյանովսկ շրջանային կենտրոնի համար մղված մարտերում Վլադիմիր Հովհաննիսյանի ստորաբաժանումը ոչնչացնում է գերմանական 360 և գերի վերցնում 70 զինվոր ու սպա։ Հովհաննիսյանն անձամբ ոչնչացնում է գնդացրային երկու կրակակետ և հակառակորդի մի քանի տասնյակ զինվոր ու սպա։

Գվարդիայի ավագ լեյտենանտ Վլադիմիր Աբրահամի Հովհաննիսյանը զոհվում է Կարաչև քաղաքի համար մղված մարտերում՝ 1943 թվականի օգոստոսի 6-ին, մարտական առաջադրանքը կատարելու ժամանակ։ Նույն տեղում էլ, հաջորդ օրը, մարտական ընկերները նրա դին հանձնում են հողին և երդվում վրեժխնդիր լինել իրենց սիրելի ընկերոջ և հրամանատարի համար։

Հայրենիքը բարձր գնահատեց գվարդիայի ավագ լեյտենանտ Վլադիմիր Աբրահամի Հովհաննիսյանի անձնուրաց, հերոսական սխրագործությունները։ ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1943 թվականի օգոստոսի 27-ի հրամանագրով նրան հետմահու շնորհվում է Սովետական Միության Հերոսի կոչում։



# ԱՆԴՐԵՅ ՀԱԿՈԲԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի գեներալներին, սպաներին, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու մասին

*Դնեպր գետի հաջող անցման, Դնեպր գետի արևմտյան ափին ամուր հենակետի ամրապնդման և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել Սովետական Միության Հերոսի կոչում, հանձնելով Լենինի շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ.*

*19. Լեյտենանտ* Անդրեյ Հակոբի Մուրադյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 1 նոյեմբերի 1943 թ.:*







Հրաձգային վաշտի հրամանատար, լեյտենանտ Անդրեյ (Անդրանիկ) Մուրադյանը Դնեպրը առաջինը գետանցած փառապանծ հերոսներից մեկն է։ Նա իր խիզախություններով, իր կյանքի գնով արժանի ավանդ է ներդրել մեր Հայրենիքի ազատության ու անկախության համար ֆաշիստական զավթիչների դեմ սովետական ժողովրդի մղած Հայրենական մեծ պատերազմում։

Անդրանիկ Հակոբի Մուրադյանը ծնվել է 1911 թվականին Նովոռոսիյսկ քաղաքում, ցեմենտագործ բանվորի ընտանիքում։ Նախնական կրթությունը ստացել է տեղի հայկական դպրոցում։ Այնուհետև սովորելով ֆաբզավուչում, տարբեր ժամանակներում աշխատանքի է անցնում Կրասնի դվիգատել և վագոնավերանորոգման գործարաններում՝ որպես ձուլող բանվոր, որտեղ և 1933 թվականին ընդունվում է կոմունիստական պարտիայի շարքերը։

1937 թվականի հունվարին Մուրադյանը տեղափոխվում է Սովետական Հայաստան և աշխատանքի անցնում Երևանի Ձերժինսկու անվան մեքենաշինական գործարանի ձուլման ցեխում որպես կաղապարագործ։ Նա կարճ ժամանակամիջոցում դառնում է գործարանի առաջավոր բանվորներից մեկը, իսկ 1938 թվականի օգոստոսին գերազանց գնահատականներով պետական քննու-

թյուն հանձնելով և ավարտելով տեխնիկական մինիմումի կուրսերը, շարունակ կատարում ու գերակատարում է իր արտադրական պլանները։ Մի շարք անգամներ նա արժանանում է դրամական պարգևների, դիրեկցիայի ու պարտկազմակերպության շնորհակալության։

Գործարանում Անդրանիկի համար ստեղծվել էին լավագույն մասնագետ դառնալու լայն հեռանկարներ, բայց պատերազմը խանգարեց նրա ծրագրերը։

1941 թվականի հունիսի 28-ին սովետական բանակ զորակոչվելով, Անդրանիկը գնում է Լենինական՝ նոր կազմակերպվող զորամաս։ Այնտեղից զորամասի հրամանատարությունը նրան գործուղում է Կամենսկ քաղաքի հրամանատարական կարճատև կուրսեր, որն ավարտելուց հետո, լեյտենանտի կոչում ստանալով, Անդրանիկը նշանակվում է 236-րդ հրաձգային դիվիզիայի 177-րդ գնդում վաշտի հրամանատար. այդ վաշտի հետ էլ 1942 թվականի հունվարի 21-ին մեկնում է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ։

Անդրանիկ Մուրադյանը ապրելով ժամանակավոր նահանջի, պաշտպանական մարտերի ծանր ու դառն օրերը, մարտական փորձ է կուտակում, իրեն ու իր մարտիկներին նախապատրաստում առաջիկա հարձակողական գործողություններին։ Այդ օրերը վրա են հասնում։

Սովետական բանակի 1942—1943 թվականների ձմեռային հարձակման ընթացքում, հարավային ռազմաճակատի մեր զորքերը թշնամուն ջախջախելով, սկսում են նրան դուրս վռնդել Կովկասի նախալեռներից, Դոնի ու Կուբանի տափաստաններից, իսկ 1943 թվականի ամառը լրիվ կերպով ազատագրում են նաև ձախափնյա Ուկրաինան ու ընդհուպ մոտենում Դնեպրին։

Այդ հաղթական հարձակումներին մասնակցում էր նաև Մուրադյանը իր հրաձգային վաշտով։ Նրա մարտիկները անձնուրաց մարտեր են մղում Նովոչերկասկի, Դոնի Ռոստովի, Տագանրոգի, Մարիուպոլի ու մյուս քաղաքների համար։ Հենց այդ մարտերում 1943 թվականի օգոստոսի 27-ին Մուրադյանը ականի բեկորներից վիրավորվում է ուսից և գլխից, բայց մարտադաշտից չի հեռանում։

1943 թվականի սեպտեմբերին սովետական բանակը սկսում է Դնեպրի մասսայական գետանցումը։ Ուկրաինական երրորդ ռազմաճակատի զորքերի շարքերում դեպի Դնեպր է շարժվում նաև Մուրադյանի վաշտը՝ 236-րդ դիվիզիայի կազմում։ Սեպտեմբերի 24-ին վաշտը, որը ամրացել էր Դնեպրոպետրովսկի մարզի Վերխնիյե Դնեպրովսկի շրջանի երեք բարձունքների տեղանքում, շեշտակի գրոհով ոչնչացնելով հակառակորդի կրակային կետերն ու կենդանի ուժերը, գրավում է առափնյա Կուրիչի գյուղը և արագորեն Դնեպրի մյուս ափն է շպրտում ջախջախված ու բարոյալքված հիտլերականների մնացորդներին։ Մուրադյանի ղեկավարությամբ վաշտը մարտերում կոփվում, դառնում է գնդում աչքի ընկած ստորաբաժանումներից մեկը, որին վերադաս

հրամանատարությունը շարունակ պատասխանատու առաջադրանքներ է վստահում:

Սեպտեմբերի 25-ին գնդի հրամանատար փոխ-գնդապետ Պետրինը իր մոտ կանչելով Մուրադյանին, մարտական նոր առաջադրանք է տալիս՝ վաշտով առաջինը գետանցել Դնեպրը, աջ ափին պլացդարմ գրավել զորամասերի փոխադրման համար:

Մի ամբողջ օր լեյտենանտ Մուրադյանը ուսումնասիրում է թշնամու դիրքերը լայնահուն Դնեպրի աջ ափին: Անհրաժեշտ պատրաստություններ տեսնելով, 1943 թվականի սեպտեմբերի 26-ի գիշերվա ժամը 3-ին սկսում է գետանցումը: Անդրանիկի նավակը շարժվում է առաջին և երկրորդ դասակների նավակների միջև: Մարտիկների առաջին խումբը ափում արդեն կռվի էր բռնվել, երբ նրանց հետևից հասնում է Մուրադյանը: Հիտլերականները տագնապի հրթիռներ են արձակում, որից հետո հրետանային, ականանետային ու գնդացրային տեղատարափ կրակ է բացվում Մուրադյանի նավակի վրա: Դեռ ափից մի քանի մետր հեռու, մարտիկները, հրամանի համաձայն, ավտոմատները գլխներից վեր պահած, ցատկում են ջուրը և Մուրադյանի առաջնորդությամբ գիշերվա խավարում մագլցում են քարքարոտ զառիվայրը, ապա գրոհում բլինդաժներում ու խրամատներում գտնվող թշնամու վրա: Սկսվում է դաժան ձեռնամարտ: Պայթող արկերի դղրդյունը, ավտոմատային կրակահերթերը ու գնդերի շառաչյունը խառնվում է խրոխտ ուռայի ու վիրավորների անեծքների հետ: Մուրադյանը լարված ղեկավարում է մարտը, միշտ հասնելով այնտեղ, որտեղ թշնամին թարմ ուժեր կռվի մեջ նետելով, նեղում է ստորաբաժանմանը:

—Ոչ մի քայլ հետ,—հրամայում է հրամանատարը: Մարտիկները հավատարիմ զինվորական երդմանը և իրենց խիզախ հրամանատարին, հետ են մղում թշնամու շարունակ կրկնվող գրոհները: Գերմանացիները չդիմանալով, սկսում են նահանջել: Վաշտը ոչնչացնելով թշնամու ավելի քան 80 զինվոր ու սպա, քայլ առ քայլ առաջ շարժվելով, լուսաբացին գրավում է գետափի պաշտպանության առաջին գիծը և ամրանում Սաշինովկա գյուղի հարավային ծայրամասում:

Դնեպրի համար մղվող ահեղ դյուցազնամարտը մեկ օրում չավարտվեց: Գետն անցած մարտիկները երեք օր ու գիշեր անհավասար մարտեր մղեցին: Գերմանացիները մի քանի անգամ գերազանց ուժերով Մուրադյանի ստորաբաժանումը սեղմեցին գետի ափին, բայց արիասիրտ հրամանատարը ամեն անգամ վաշտին դուրս էր բերում անհուսալի թվացող դրությունից:

Սեպտեմբերի 9-ին հիտլերականները թարմ ուժեր բերելով, ձեռնարկում են իրար հաջորդող նոր, էլ ավելի կատաղի գրոհների, փորձելով գյուղից դուրս հանել մեր ստորաբաժանմանը: Բայց հանդիպելով համառ դիմադրության, ամեն անգամ հետ են շպրտվում, տալով մեծ կորուստներ:

«Այդ օրը Մուրադյանի վաշտը,—գրում է գնդի հրամանատար, փոխգնդապետ Պետրինը,—ոգեշնչված իր հրամանատարի անձնական խիզախության օրինակով, հետ մղեց թշնամու տասնմեկ հակագրոհ»:

Հենակետը պահպանվում է. Մուրադյանը օգնական ուժեր ստանալով սկսում է հարձակումներով ընդլայնել գրավված տերիտորիան: Նոյեմբերի 4-ին երկու կողմերի համար էլ արյունահեղ ու վճռական մարտ է տեղի ունենում: Հարձակման ընթացքում վիրավորվում է գնդացրորդ Յուրչենկոն. Մուրադյանը շտապում է օգնության, բայց այդ մոմենտին օգտվելով գնդացրային կրակի խափանումից, թևերից գրոհող հիտլերականները կատաղությամբ առաջ են խցկվում՝ վաշտին շրջանցելու համար: Ծանր դրություն է ստեղծվում. վաշտի հրամանատարը չընդհատելով մարտի ղեկավարումը, վազում է դեպի գնդացիրը, բայց դեռ չհասած վիրավորվում է ոտքից ու մեջքից: Արհամարհելով ցավը, նա պառկում է գնդացրի հետևը և բաց զիրքից երկար կրակահերթով հնձում առաջ շարժվող հիտլերականներին: Վաշտի դասակները թշնամու վրա գրոհում են նաև մյուս հատվածներից: Գերմանացիները կորցնելով մոտ 100 մարդ, նահանջում են: Այդ օրը Մուրադյանը անձամբ ոչնչացնում է ավելի քան 40 ֆաշիստական զինվոր ու սպա: Վտանգը վերացվում է. հենակետը ամրապնդվում ու ընդլայնվում է: Գունդը ապահով կերպով գետանցում է Դնեպրը և մյուս զորամասերի հետ միասին շարունակում շարժվել դեպի արևմուտք: Մարտական դժվարին ու պատվավոր առաջադրանքը գերազանց կատարելուց հետո է միայն, որ վիրավորված լեյտենանտ Մուրադյանը համաձայնվում է բուժման գնալ:

Այդ մարտերից անմիջապես հետո, գնդի հրամանատարի առաջադրանքով, 236-րդ դիվիզիայի, 46-րդ բանակի և Ուկրաինական երրորդ ռազմաճակատի զորքերի հրամանատարության համատեղ միջնորդությամբ Մուրադյանը ներկայացվում է Սովետական Միության Հերոսի կոչման: ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահությունը իր 1943 թվականի նոյեմբերի 1-ի հրամանագրով, Դնեպրի անցման ժամանակ հանդես բերած անձնական արիության ու խիզախության համար Սովետական Միության Հերոսի կոչում է շնորհում հրաձգային վաշտի հրամանատար լեյտենանտ Անդրեյ (Անդրանիկ) Հակոբի Մուրադյանին, նրան հանձնելով Լենինի շքանշան և ոսկե աստղ մեդալ:

Բարձր պարգևը նոր ուժեր է ներշնչում Մուրադյանին: Նա դուրս գալով հոսպիտալից, վերադառնում է ռազմաճակատ՝ իր վաշտը: Մարտիկները մեծ հրճվանքով են դիմավորում իրենց քաջարի հրամանատարին, որի ղեկավարությամբ նոր մարտերի մեջ են նետվում: Բայց նոյեմբերի 4-ին Դնեպրոպետրովսկի մարզի Բոժադարովկի շրջանի Միլորադովկա կայարանի հարավային ծայրամասում, վաշտի հակագրոհը ղեկավարելու ժամանակ, թեժ մարտում հերոսի մահով զոհվում է Սովետական Միության Հերոս Անդրանիկ Մուրադյանը:

*Գումարտակի հրամանատարի քաղ. գծով տեղակալ, ուկրաինացի Գրիգորենկոն խոր ցավակցություն հայտնելով Մուրադյանի զոհվելու առթիվ, գրել է. «Այդ անմահ հերոսին չի կարելի մոռանալ... Ամեն անգամ, երբ ես վերհիշում եմ Դնեպրի ափերին մղած մարտերը, իմ աչքի առջև գծագրվում է Մուրադյանի թուխ ու կրակոտ հայացքը, որը փայլատակող կայծակի պես լուսավորում էր խավար գիշերը և հաղթ ձայնով գոչում. «Առա՜ջ, ընկերնե՛ր, դե՛պի Արևմուտք, դե՛պի վերջնական հաղթանակ»։*



# ՄԱՐՏԻՐՈՍ ԿԱՐԱՊԵՏԻ ՆԱԳՈՒԼՅԱՆ



## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի ռազմա-օդային ուժերի գեներալներին և սպայական կազմին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքները օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել* Սովետական Միության Հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

*121. Լեյտենանտ* Մարտիրոս Կարապետի Նագուլյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 18 օգոստոսի 1945 թ.։*







Իր մարտական ուղին Մարտիրոս Կարապետի Նագուլյանը սկսել է շարքային օդաչուից և Հայրենական պատերազմի ահեղ մարտերում հասել ավիա-օղակի հրամանատարի աստիճանի։

Մարտիրոս Նագուլյանը ծնվել է 1920 թվականին Կրասնոդարի երկրամասի Ադլերի շրջանի Նիժնի Շիլովկա գյուղում։ Դպրոցում սովորելու տարիներին մտել է կոմերիտմիության շարքերը։ Ավարտելով միջնակարգ դպրոցը, Մարտիրոսը կամավոր մեկնում է սովետական բանակ և ընդունվում Մայկոպի օդաչուական դպրոցը։ 1942 թվականին նա ընդունվում է կոմունիստական պարտիայի շարքերը։ Օդաչուական դպրոցն ավարտելուց հետո ստանում է լեյտենանտի կոչում և մեկնում ռազմաճակատ։ Մերձբալթյան ռազմաճակատում 593-րդ գրոհային ավիացիոն Նովգորոդիևյան գնդի կազմում Նագուլյանը մասնակցում է Վիտեբսկ, Պոլոցկ, Վիլնա, Ռիգա, Լիբավա, Վարշավա, Սոպլին, Գդանսկ (Դանցիգ) քաղաքների համար մղվող մարտերին։

Մարտական գործողությունների ընթացքում լեյտենանտ Նագուլյանը հանդես է բերում հնարագիտություն ու համարձակություն։ Բազմաթիվ են երիտասարդ օդաչուի կատարած սխրագործությունները։ Բերենք դրանցից մի քանիսը։

*1944 թվականի հունիսի 23-ին գնդի օդաչուների մի խումբ Վիտեբսկի շրջանում հայտնաբերում է հակառակորդի առաջ շարժվող ավտոմեքենաների և հետևակի մեծ միավորում։ Խնդիրը պարզ էր։ Գրոհային օդաչուներն անցնում են գործի և առաջին իսկ համազարկերից թշնամուն հասցնում են մեծ վնաս։ Այս առաջադրանքի հաջող կատարման համար օղակը, որի կազմում էր Նազուլյանը, արժանանում է օդային 3-րդ բանակի հրամանատարության շնորհակալությանը և առավել աչքի ընկած զորամասերի թվում հիշատակվում գերագույն գլխավոր հրամանատարի 1944 թվականի հունիսի 25-ի հրամանում։*

*Հունիսի 25-ին Լիոայայի շրջանում ավիախումբը խելացի և մտածված հարվածներ է հասցնում հակառակորդի հրետանաականանետային մարտկոցներին, օժանդակելով մեր ցամաքային զորամասերի առաջխաղացմանը և թշնամու խոշոր խմբավորման ոչնչացմանը։ Այս առաջադրանքի կատարման համար ողջ ավիախումբն արժանանում է հարվածային 4-րդ բանակի հրամանատարության շնորհակալությանը։*

*Մարտեր էին մղվում Ռակիշկիս երկաթուղային կայարանի շրջանում։ Երկաթուղային էշելոնները ոչնչացնելու ժամանակ սովետական գրոհայինները հանդիպում են թշնամու կործանիչների ուժեղ դիմադրությանը։ Նազուլյանն իր նախաձեռնությամբ, խելացի մանևրով, խմբին առաջնորդում է գրոհի։ Նրան հաջողվում է ետ շպրտել հակառակորդի բոլոր գրոհները և շեշտակի հարվածներով շարքից հանել էշելոնը՝ առաջացնելով խոշոր պայթյուններ, հրդեհներ, թշնամուն պատճառելով տեխնիկայի և կենդանի ուժի մեծ կորուստներ։*

*Մեկ ուրիշ անգամ Ռակիշկիս կայարանի շրջակայքում Նազուլյանն իր խմբով մարտի է բռնվում գերմանական «Ֆվ-190» վեց ինքնաթիռների հետ։ Հակառակորդի գրոհը հետ է շպրտվում և Նազուլյանն իր օղակով առանց կորուստի վերադառնում է օդանավակայան։ Այս մարտում Նազուլյանը ոչնչացնում է գերմանական մեկ ինքնաթիռ։ Մարտերից մեկում, որը տեղի ունեցավ 1945 թվականի հունվարի 19-ին, Զրիշինոյի շրջանում, սովետական գրոհային խումբը խնդիր է ստանում՝ հարվածել ճանապարհով նահանջող թշնամուն։ Նազուլյանը կլիմայական անբարենպաստ պայմաններում կարողանում է ճըշտորեն դուրս գալ ճանապարհի վրա. նա շեշտակի կրակով շարքից հանում է թշնամու կենդանի ուժը և տեխնիկան, ցրելով զորասյունը։*

*Նազուլյանը հաջորդ հարվածը հակառակորդի ուժերին հասցնում է 1945 թվականի փետրվարի 27-ին Պրեյսաշ-Ստարգարդի շրջանում։ Մի փոքրիկ բնակավայրում նկատվել էր թշնամու հետևակի խոշոր խմբավորում։ Նազուլյանն իր օղակով երեք անգամ գրոհում է հակառակորդի վրա, ռմբակոծման, ապա գնդացրա-հրետանային հուժկու կրակով խուճապի է մատնում նրան, հասցնում զգալի վնաս և առանց կորուստի վերադառնում օդանավակայան։*

*Մեկ այլ անգամ Շենեկի շրջանում ավիախումբը հասել էր նպատակակետին, երբ հանկարծ Նազուլյանը նկատում է թշնամու զենիթային հրետանու*

*դասավորությունը։ Արագ շրջանցելով, նա տեղն ու տեղը հողին է հավասարեցնում նրանց և թշնամու երկաթուղային մեկ էշելոն։*

*Վերոհիշյալ մարտական գործողությունների համար Նագուլյանն արժանացել է երկու Կարմիր դրոշի, Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի, Կարմիր աստղի շքանշանների։*

*1945 թվականի մարտի 20-ին, զենիթային համատարած կրակի տակ, Նագուլյանի գրոհային խումբը մտնում է Գդանսկի նավահանգիստն և սկսում է ռմբակոծել այն։ Ուղիղ նշանառությամբ նա խորտակում է թշնամու մեկ բարժա։ Վերադարձին սովետական գրոհայիններին հանդիպում են հակառակորդի 12 գրոհային և ռմբակոծիչ ինքնաթիռներ։ Թշնամու երեք ինքնաթիռներ միաժամանակ գրոհում են Նագուլյանի վրա։ Հմուտ օդաչուն ետ է շպրտում ինքնաթիռների գրոհը, դուրս գալիս ամպերի մեջ և բարեհաջող վայրէջք կատարում իր օդանավակայանում։*

*1944 թվականի հունիսի 22-ից մինչև 1945 թվականի ապրիլի 6-ը Նագուլյանը կատարել է 113 մարտական թռիչք, որոնց ընթացքում անձամբ ոչնչացրել է 150 ավտոմեքենա, 100 սայլ՝ բեռով, 3 շոգեքարշ, 18 երկաթուղային վագոն, 6 տանկ, ջրասույզ է արել երկու բարժա, ոչնչացրել է մոտ 25 զենիթային կրակակետ, ցրել և մասամբ ոչնչացրել է մոտ 1000 զինվոր ու սպա։ Օդային մարտում նրա ինքնաթիռի անձնակազմը խորտակել է «ՖՎ-190» տիպի երկու ինքնաթիռ։*

*1945 թվականի ապրիլի 6-ին Շտետինի շրջանում մարտական առաջադրանքի կատարման ընթացքում թշնամու զենիթային արկից զոհվում է հայ ժողովրդի անձնուրաց զավակ Մարտիրոս Նագուլյանը։ Բարձր գնահատելով նրա մարտական ծառայությունները սովետական Հայրենիքի նկատմամբ, ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահությունը 1945 թվականի օգոստոսի 18-ի Հրամանագրով լեյտենանտ Մարտիրոս Նագուլյանին հետմահու շնորհում է Սովետական Միության Հերոսի կոչում։*



# ՖԵՈԴՈՐ ԻՍԱՅԻ ՍԱՐԿԻՍՈՎ






## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի գեներալներին, սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական ուժեղ պաշտպանության շերտի ճեղքման և Մելիտոպոլ քաղաքի ազատագրման ընթացքում Հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել* Սովետական Միության հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և «*Ոսկե աստղ*» մեդալ.*

57. *Լեյտենանտ* Ֆեոդոր Իսայի Սարկիսովին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 1 նոյեմբերի 1943 թ.*





1941 թվականի սեպտեմբեր ամիսն էր։ Գերմանական զավթիչները շարժվում էին դեպի Մոսկվա։ Մեր Հայրենիքի համար այդ ծանր օրերին Կրասնոդարի երկրամասի Նովոկուբանսկի շրջանի Պրոչնոկոպսկի գյուղի «Նովի միր» կոլտնտեսության նախագահ, կոմունիստ Ցեզար Իսայի Սարգսյանը (Սարկիսով) կազմակերպում է աշխարհազորային հեծյալ մեկ էսկադրոն և մեկնում ռազմաճակատ։

Էսկադրոնը առաջին իսկ մարտում կասեցնում է թշնամու հեծելազորի կատաղի գրոհները։ Այդ թեժ կռիվներից մեկում քաջարի Սարգսյանը ծանր վիրավորվում է և ուշքի է գալիս միայն հոսպիտալում։

Բուժվելուց հետո Սարգսյանը ցանկություն է հայտնում նորից վերադառնալ ռազմաճակատ՝ վրեժխնդիր լինելու զոհված մարտական ընկերների, հարազատ հոր և հնգամյա որդու համար։ Սակայն կադրերի բաժնում նրա բազմաթիվ խնդրանքներին պատասխանում են. «Ուզում ես վրեժխնդիր լինել, ապա սովորիր կռվել»։

Նա ռազմական ուսումնարանում ծանոթանում է ռազմական տեխնիկային և արդեն որպես հետևակային ստորաբաժանման հրամանատար, մեկնում է ռազմաճակատ։

1943 թվականի հոկտեմբերի երկրորդ կեսին ծանր մարտեր էին մղվում երկաթուղային խոշոր հանգույց Մելիտոպոլ քաղաքի համար։ Մելիտոպոլը

կարևոր հենակետ էր։ Թշնամին ռազմաճակատի այդ հատվածում կենտրոնացրել էր մեծ քանակությամբ ինքնագնաց հրանոթներ և տանկեր։ Մելիտոպոլի մարտերում աչքի է ընկնում 126-րդ Գորլովկյան հրաձգային դիվիզիայի 366-րդ հրաձգային գունդը, որի 3-րդ գումարտակի պարտկազմակերպիչն էր 28-ամյա լեյտենանտ Ֆեոդոր Սարգսյանը։

Մարտը բավականին ծանր էր և անսովոր։ Սովետական մարտիկները կենաց և մահու կռիվ էին մղում թշնամու տանկերի դեմ։ Միայն մեկ օրվա ընթացքում Սարգսյանի հրամանատարությամբ գործող զրահահարները ետ են շպրտում թշնամու տանկերի 14 հակագրոհներ և հարկադրում վերջիններիս ետ քաշվել։

Հոկտեմբերի 19-ին սովետական ռազմիկներին հաջողվում է գրավել Մելիտոպոլի ջրաղացը, էլևատորը և էլեկտրակայանը։ Սակայն հիտլերականները համառորեն կառչում էին քաղաքի կայարանից, այն վերածելով դիմադրության ուժեղ հանգույցի։

Կայարանի գրավումն առաջնահերթ խնդիր էր։

Այդ պատասխանատու առաջադրանքի կատարումը դրվում է նաև լեյտենանտ Սարգսյանի ջոկի վրա։ Շուտով սկսվում է կայարանի գրոհումը։ Գնալով մարտերը դառնում են կատաղի և վճռական։ Թշնամին այդ փոքրաթիվ խմբին վերցրել էր խաչաձև կրակի տակ։ Բայց ֆաշիստների համառ դիմադրությունը և մրրկային կրակը չեն կանգնեցնում հարձակվող սովետական ռազմիկների առաջխաղացումը։ Սովետական զրահահարների երկաթյա կամքով կոտրվում է հիտլերականների համառ դիմադրությունը։ Քաղղեկ Սարգսյանի զրահահարները ճանապարհ են բացում գումարտակի առաջշարժման համար, որը մյուս զորամասերի հետ միասին, գրավում է կայարանը։

Կայարանի գրավումից հետո, սովետական մյուս զորամասերը մտնում են քաղաք, և հաջորդ օրը ազատագրում այն։ Այս մարտերի ընթացքում գումարտակը ոչնչացնում է երեք տանկ, մեկ գրոհամեքենա, 39 կրակակետ, ավելի քան 400 զինվոր ու սպա, վերցնում ռազմավար՝ մեկ շոգեքարշ, 40 վագոն, 50 պլատֆորմ, պարենամթերքի և ռազմամթերքի երեք պահեստ։

Հրամանատարության առաջադրանքը կատարված էր։ Մելիտոպոլ քաղաքի ազատագրման մարտերում ցուցաբերած անձնական խիզախության և հերոսության համար ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահությունը 1943 թվականի նոյեմբերի 1-ի հրամանագրով գվարդիայի լեյտենանտ Ֆեոդոր Իսայի Սարգսյանին շնորհում է Սովետական Միության հերոսի կոչում։

Այնուհետև լեյտենանտ Ֆեոդոր Սարգսյանը մարտերով հասավ Սովետական Լիտվայի տերիտորիան և Մ. Ռուպին գյուղաքաղաքի համար մղվող կռիվներում 1944 թվականի հոկտեմբերի 8-ին հերոսաբար զոհվեց։



# ՍԱՐԳԻՍ ԱԲՐԱՀԱՄԻ ՍԱՐԽՈՇԵՎ

## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքների օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել Սովետական Միության Հերոսի կոչում, հանձնելով Լենինի շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ.*

*100. Ավագ սերժանտ Սարգիս Աբրահամի Սարխոշևին:*

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 22 փետրվարի 1944 թ.:*





Սակրավոր-հետախույզ լեյտենանտ Սերգեյ Սարխոշևի ռազմական փառքը ծնվեց Կովկասի համար մղած մարտերում և Դնեպրի գետանցման ժամանակ։

Սերգեյ Աբրահամի Սարխոշևը ծնվել է 1913 թվականին Կոտայքի շրջանի Արզնի գյուղում։ Սովորել է մինչև 6-րդ դասարանը, որից հետո աշխատել է գյուղի կոլտնտեսությունում։ 1937 թվականին նա գալիս է Երևան և աշխատանքի անցնում շինարարության վրա, որպես ծեփագործ-ներկարար։ 1941 թվականի մայիսին Սերգեյը զորակոչվում է բանակ հերթական ծառայության, այնտեղից էլ, Հայրենական պատերազմը սկսվելուց հետո նա մեկնում է ռազմաճակատ, մասնակցում Տագանրոգի, Դոնի Ռոստովի համար և հատկապես Միուս գետի շրջանում մղած կատաղի մարտերին։ Այնուհետև մենք նրան տեսնում ենք Կովկասի հերոսական պաշտպանների՝ Անդրկովկասյան ռազմաճակատի սևծովյան խմբի զորքերի շարքերում։

1942 թվականի ամառը՝ Կովկասի պաշտպանության օրերին, սերժանտ Սերգեյը, որը մի շարք անգամներ արդեն աչքի էր ընկել իր քաջագործություններով, ընդունվում է կոմունիստական պարտիայի շարքերը։ Մարտերում նա մեծ հմտություն է ձեռք բերում թշնամու թիկունքում գործելու ասպարե-



270—20

կում։ Նոյեմբերին Սերգեյը պարգևատրվում է Կարմիր աստղի շքանշանով, ապա նաև Խիզախության համար մեդալով։

Մինչև 1944 թվականի ամառը ջոկի հրամանատար ավագ սերժանտ Սարխոշևը իր սակրավորներով թշնամու թիկունքում կատարել էր ավելի քան 15 մարտական օպերացիա։ Նրանք շարունակ դեպի արևմուտք հարձակվող մեր զորքերի ավանգարդային զորամասերի մեջ գտնվելով, պայթեցրել, ոչնչացրել էին հակառակորդի կամուրջները, կապի միջոցները, ականապատել նրանց զորքերի շարժման ուղիները, «լեզու» որսացել, մեր զորքերի համար կամուրջներ շինել, մաքրել թշնամու ստեղծած ականադաշտերը, ուղի հարթել առաջշարժման համար։

Մի անգամ 17 սակրավոր-հետախույզները, որոնց թվում էր նաև Սարխոշևը, Սովետական Միության հերոս, լեյտենանտ Լուկինի ղեկավարությամբ թափանցելով հակառակորդի թիկունքը, անտառում դարան են սարքում այդտեղով անցնող ֆաշիստական զորամասին հարվածելու համար։ Հետախուզությունը հանձնարարվում է Սարխոշևին։ Նա իր մի խումբ մարտիկներով առաջինը հանդիպելով թշնամուն, նրան թույլ է տալիս ավելի մոտենալ։ Երբ գերմանացիները արդեն բոլորովին մոտ էին, Սերգեյը իրար հետևից չորս նռնակ է նետում նրանց վրա։ Թշնամուց երեք հոգի սպանվում են, մնացածները փորձում են փախչել, բայց այստեղ նրանց հետևից հասնում է նաև մյուս հետախույզների ավտոմատային տեղատարափ կրակը։ Սակրավորները ոչնչացնում են մոտ հարյուր ֆաշիստական զինվոր ու սպա, գրավում նրանց գումակը և արժեքավոր փաստաթղթեր, վերադառնում զորամաս։

Կուբանում, մեր զորքերի կողմից Կրասնոդարի ազատագրման հարձակողական մարտերի ժամանակ հրամանատարությունը Սարխոշևին առաջադրանք է տալիս իր հետախույզներով անցնել գերմանական մի խոշոր զորամասի թիկունքը, ականապատել նրա նահանջի ճանապարհները և խուճապ առաջացնելով այդտեղ, օժանդակել ոչնչացնելու թշնամու ուժերին։ Սարխոշևը իր 33 հետախույզներով օպերացիան կատարում է հաջողությամբ։ Ահաբեկված հիտլերականները խուճապահար փախչում են, թողնելով մեծ քանակությամբ զենք, սպառազինություն և պարեն, որի կարիքը մեծ էր անտառապատ լեռներում գործող մեր ստորաբաժանումների համար։ Իր ստորաբաժանումով Սերգեյը մեծ քաջագործություն է կատարում նաև Դոնեցի վրա, ուկրաինական Տարնովկա գյուղի մոտ հակառակորդի փոթորկալի կրակի տակ մեր հարձակվող տանկերի համար կամուրջ կառուցելու ժամանակ, ինչպես նաև Դոնբասի ազատագրման մարտերում, որի համար պարգևատրվում է Խիզախության համար մեդալով։

1943 թվականի սեպտեմբերի վերջին սովետական զորքերը հասնում են լայնահուն Դնեպրին։ Նրանց առջև խնդիր էր դրված՝ արագությամբ անցնել աջափնյա Ուկրաինան և թշնամուն դուրս վռնդել սովետական հողից։ Այդ զո-

րամասերի թվումն էր նաև 31-րդ հրաձգային դիվիզիան, ուր ծառայում էր Սարխոշևը։

Գետանցման գործողություններում առանձին դեր էր վերապահված սակրային զորամասերին և սակրավորներին։ Վերադաս հրամանատարության առաջադրանքով Սարխոշևի սակրային ստորաբաժանումը պետք է ապահովեր իրենց զորամասերի գետանցումը։ Գումարտակի հրամանատարից կոնկրետ առաջադրանք ստանալուց հետո, նա իր մարտիկներին հավաքելով, հայտարարում է.

—Մենք պետք է առաջինը անցնենք Դնեպրը և ապահովենք միավորման գետանցումը, այդ է պահանջում Հայրենիքը։

Բոլորը երդում են տալիս սրբությամբ կատարել Հայրենիքի հրամանը։ Անձնվիրությամբ էին աշխատում ուկրաինացի Գումեննիյը, թաթար՝ Սալիմովը, հայ ռազմիկներ Գևորգյանը, Մնացականյանը։ Դիվիզիան գետանցումը սկսում է սեպտեմբերի 28-ին։ Այն տևում է երկու օր։

Այդ գիշերը, երբեք չի մոռացվում,—գրում է լեյտենանտ Տվերսկոյը,—գետինը դողում էր երկկողմանի հրետանային և օդային ռմբակոծություններից, պայթող արկերը ջրի սյուներ էին բարձրացնում, քրքրում էին բարձրադիր ափերի հողը, չորս կողմում սուլում էին մահաբեր գնդակները։ Արհամարհելով մահը, այդ ժխորի մեջ, գիշերվա խավարում սակրավորները նավերով, մակույկներով ու լաստերով անընդհատ գետանց էին հանում, զորքեր ու տեխնիկա էին տեղափոխում Դնեպրի ձախ ափից դեպի աջ ափը։

Սարխոշևը կատարում է գետանցային նավակի հրամանատարի և թիավարողի պարտականությունները։ Երբ թշնամու հրանոթի արկի դիպուկ հարվածով խորտակվում է նավակը, նա արիությամբ անցնում է լաստի վրա, և մեկ գիշերվա ընթացքում 16—18 ռեյս կատարում։ Անցումներից մեկի ժամանակ Սարխոշևը տեսնում է խորտակված նավից ջուրն ընկած մեր սպային, որը կոնտուզիա ստանալով, չի կարողանում լողալ։ Սարխոշևը ակնթարթաբար ջուրը նետվելով, մոտենալով սպային հանում է աջ ափը, փրկում նրա կյանքը։

Մյուս օրը, երբ թշնամուց արդեն խլված էր աջափնյա փոքրիկ մի տերիտորիա, և այնտեղ էին փոխադրված որոշ զորամասեր, Սարխոշևի սակրային ջոկը դիտակետ է կառուցում դիվիզիայի հրամանատարի համար, որը գետի աջ ափն անցնելով, ղեկավարում էր զորամասերի մարտերը՝ հենակետը ընդարձակելու համար։

Սարխոշևը նույն անձնվիրությամբ շարունակում էր պայքարը նաև գետի աջ ափում։

«Հետևակի մարտակարգերի մեջ գտնվելով,—գրել է հենակետում Սարխոշևի մղած մարտերի մասին 104-րդ առանձին սակրային գումարտակի հրամանատար մայոր Կորոստիլովը,—սակրավոր ավագ սերժանտ Սարխոշևը համարձակորեն գրոհի էր տանում իր ջոկը և անձամբ ոչնչացրեց 12 գերմանացի։ Ներխուժելով հակառակորդի խրամուղիները, նա իր ջոկի հետ միասին սվի-

նամարտով գերմանացիներին դուրս մղեց գրավված բնագծից, ոչնչացնելով երկու հաստոցավոր գնդացիրների հաշվարկը, որոնք խփում էին թևերից գրոհող մեր զորամասերին, և ապահովեց հրաձգային գումարտակի առաջշարժումը։

Դիվիզիայի զորամասերի առաջշարժմանը խիստ խանգարում էր զրահագնացքը, որը երթևեկում էր Դնեպրոձերժինսկ-Վերխովցևո երկաթուղային ուղեմասում։ Ավագ սերժանտ Սարխոշևը մութը վրա հասնելուն պես, հակառակորդի ուժեղ կրակի տակ Վոսկրոյնայա կիսակայարանի շրջանում դուրս գալով գերմանացիների թիկունքը, երկաթուղագծի սլաքավայրում տոլով երկու պայթեցում կատարեց, ավերեց երկաթուղու ճանապարհը, անջատեց զրահագնացքը, որը խափանված երկաթուղագծի վրա դուրս գալով, խորտակվեց»։

Հրամանատարությունը բարձր գնահատելով Սարխոշևի ծառայությունները և անձնական խիզախությունները, նրան առաջադրում է Սովետական Միության Հերոսի կոչման։ ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահությունը իր 1944 թվականի փետրվարի 22-ի հրամանագրով ավագ սերժանտ Սերգեյ Սարխոշևին, որպես Դնեպրն անցած առաջին խիզախներից մեկի, շնորհում է Սովետական Միության Հերոսի կոչում։

1944 թվականի օգոստոսյան օրերին Պրուտ գետի վրա փոքրիկ գյուղում հանդիսավոր իրադրության մեջ 31-րդ դիվիզիայի հրամանատարը Սարխոշևին է հանձնում Լենինի շքանշանը և Հերոսի «Ոսկե աստղ» մեդալը։ Նա տարբեր ժամանակներում պարգևատրվել էր նաև Կարմիր աստղի շքանշանով և մի քանի մեդալներով։

Սարխոշևին Հերոսի կոչում շնորհելու լուրը արագությամբ հասավ հեռավոր Հայաստան՝ ընկերներին ու հարազատներին։ Գումարտակի հրամանատարը հատուկ նամակ գրեց Երևան, Սարխոշևի կնոջը. «Հրամանատարությունը հպարտանում է Ձեր ամուսնով,— ասված է նամակում,— նա որպես իր հայրենիքի իսկական հայրենասեր, չխնայելով իր ուժերն ու կյանքը, կատարում է մարտական բոլոր առաջադրանքները, դրա հետ միասին հանդես բերելով խիզախություն, արիություն ու հերոսություն»։

1944—1945 թվականներին սովետական բանակի վճռական հաղթական մարտերի ընթացքում Սարխոշևը ստանում է կրտսեր լեյտենանտի և ապա լեյտենանտի զինվորական կոչում, դառնում է առանձին սակրային դասակի հրամանատար, մասնակցում է գերմանացիների Կորսուն-Շևչենկովսկյան խմբավորման ջախջախման մարտերին, որից հետո, նա միավորման կազմում իր դասակով փոխադրվում է Ուկրաինական երկրորդ ռազմաճակատ։ Այստեղ Սարխոշևը մասնակցում է Լեհաստանի ազատագրմանը և աչքի է ընկնում Սանդոմիրից արևելք գերմանացիների պաշտպանությունը ճեղքելու, մի շարք ջրային նոր բնագծերի և ապա Օդերի գետանցմանը, Սիլեզիայի ու Բեռլինի գրավման կատաղի ճակատամարտերին։

*Լեյտենանտ Սարխոշևը իր ստորաբաժանումով գերազանց սակրային ծառայություն կատարելուց բացի շատ անգամներ համառ կռիվների մեջ է նետվել, երեք անգամ սվինամարտի է տարել իր մարտիկներին և 9 անգամ արժանացել Գերագույն գլխավոր հրամանատարության շնորհակալությանը։*

*Հայաստանի արիասիրտ զավակ, Սովետական Միության հերոս լեյտենանտ Սերգեյ Աբրահամի Սարխոշևը պատերազմը ավարտեց 1945 թվականի մայիսի 9-ին՝ Չեխոսլովակիայում։*

*Սարխոշևը պատերազմից հետո զորացրվեց բանակից, նա այժմ ապրում է Երևանում։*



# ԱՐԱՄ ՀՈՎԱԿԻՄԻ ՍԱՖԱՐՅԱՆ



## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքները օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար շնորհել* Սովետական Միության Հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

*Գվարդիայի լեյտենանտ* Արամ Հովակիմի Սաֆարյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 24 մարտի 1945 թ.:*





Սովետական բանակի շատ ռազմիկներ Հայրենական պատերազմի տարիներին իրենց կյանքը զոհեցին ֆաշիզմի դեմ մղած պայքարում։ Դրանցից մեկն է հայ ժողովրդի արժանավոր զավակ, գվարդիայի լեյտենանտ Արամ Հովակիմի Սաֆարյանը (Արամ Ակակիմովիչ Սաֆարով)։ 1944 թվականի աշնանը Հարավսլավիայում մղած անհավասար մարտում քաջաբար ընկան նաև նրա ղեկավարած գնդացրային վաշտի բոլոր մարտիկները։

Սաֆարյանը ծնվել է 1913 թվականին Լեռնային Ղարաբաղի Հաղորտի (Քենդխուրդ) գյուղում։ Երկու տարեկան էր նա, երբ 1915 թվականին հայրը զորակոչվում է ցարական բանակ և զոհվում առաջին համաշխարհային պատերազմում։ 1916 թվականին Արամն իր մոր և եղբոր հետ տեղափոխվում է Բաքու։ Նա սովորում է Բաքվի Ջերժինսկու (այժմ Նարիմանովի) շրջանի № 177 դպրոցում։ 1930 թվականին Սաֆարյանն աշխատանքի է անցնում Բաքվի Բուդյոննու անվան գործարանում, ուր 1940 թվականին ընդունվում է ՍՄԿՊ շարքերը։

1941 թվականի հունիսին Սաֆարյանը զորակոչվում է սովետական բանակ և շուտով ուղարկվում ռազմաճակատ։ Հայրենական մեծ պատերազմի

սկզբից մինչև իր հերոսական մահը Սաֆարյանն անընդհատ գտնվել է գործող բանակի շարքերում և մասնակցել ֆաշիստների դեմ մղած մարտերին՝ Հյուսիսային Կովկասում, Ուկրաինայում, Ռումինիայում և Հարավսլավիայում։

1944 թվականի հոկտեմբերի սկզբներին Ուկրաինական երրորդ ռազմաճակատի Սուվորովի շքանշանակիր կարմրադրոշ Բերիսլավյան 109-րդ հրաձգային գվարդիական դիվիզիայի 309-րդ գնդի առաջին գումարտակը, որի կազմում էր գտնվում նաև Արամ Սաֆարյանի հրամանատարությամբ գործող գնդացրային վաշտը, համառ մարտեր էր մղում Դանուբն անցնելու և նրա արևմտյան ափին հենակետ գրավելու համար։

Հոկտեմբերի 7-ին գվարդիայի ավագ լեյտենանտ Արամ Սաֆարյանն առաջադրանք է ստանում՝ իր վաշտով առաջինն անցնել Դանուբի աջ ափը, Հարավսլավիայի Ռիտոպեկ գյուղի շրջանում գրավել արևելքից դեպի Բելգրադ տանող խճուղին և այն ամեն կերպ պահել։ Գվարդիայի լեյտենանտ Սաֆարյանը հմտորեն կազմակերպում է վաշտի գետանցումը, դուրս գալիս խճուղին և դիրքավորվում նրա եզրերին։ Խճուղով անընդմեջ դեպի Բելգրադ էին ընթանում գերմանական զինվորներով ու ռազմամթերքով բեռնված ավտոմեքենաներ, հրետանի ու տանկեր։ Վաշտի տեղ հասնելու առաջին իսկ պահից սկսում է կատաղի մարտ։ Սաֆարյանի ստորաբաժանման քաջարի մարտիկները ոչնչացնում են հակառակորդի զինվորներով բեռնված չորս ավտոմեքենա, երկու մոտոցիկլ և երկու տանկ։ Սակայն թշնամու ուժերն անընդհատ աճում էին։ Վաշտի դրությունը գնալով դառնում է ավելի ու ավելի դժվարին։ Բայց չնայած դրան, սովետական խիզախ մարտիկները շարունակում են համառորեն մարտնչել։ Ավելի քան չորս ժամ շարունակվում է մարտը։ Վերջանում էին փամփուշտներն ու նռնակները։ Մարտիկներից շատերը վիրավորվել էին։ Վաշտը բավականին հեռու էր գտնվում մյուս ստորաբաժանումներից և չէր կարող նրանցից օգնություն ստանալ։ Սաֆարյանը գիտակցում է այդ, բայց աննկուն կերպով շարունակում է անհավասար մարտը թշնամու տասնապատիկ գերակշիռ ուժերի դեմ։

Այսպես անցնում է նաև գիշերը…

Հոկտեմբերի 8-ին, առավոտյան ժամը 7-ին, գերմանացիները Սաֆարյանի վաշտի դեմ են հանում Բելգրադից բերած լրացուցիչ երկու գումարտակ։ Սկսվում է թշնամու հակագրոհը։ Վաշտը ընկնում է շրջապատման մեջ։ Գազազած հիտլերականներն աստիճանաբար սեղմում են օղակը հերոս գվարդիականների շուրջը։ Դրությունը դառնում է բացառիկ ծանր, սպառվում են նույնիսկ վերջին փամփուշտները։ Այդ մոմենտին հնչում է հրամանատար Սաֆարյանի խրոխտ ու մարտական ձայնը. նա իր գվարդիականներին հրամայում է դիմել ձեռնամարտի։

Սկսվում է սովետական դյուցազունների հանդուգն պայքարը ֆաշիստական զինվորների դեմ։ Այդ ձեռնամարտում անձնական հերոսության օրինակ

*է տալիս կոմունիստ Արամ Սաֆարյանը։ Այդ մարտում Սաֆարյանը և նրա բոլոր մարտիկները հերոսաբար զոհվում են։*

*Նրանք մինչև վերջ կատարում են իրենց պարտքը Հայրենիքի հանդեպ՝ ոչ մի քայլ չնահանջելով դիրքերից։*

*Ցուցաբերած անձնական քաջության և հերոսության համար ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1945 թվականի մարտի 24-ի հրամանագրով զվարթիայի լեյտենանտ Արամ Հովակիմի Սաֆարյանին հետմահու շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում։*



# ՍԵՐԳԵՅ ԱՆԴՐԵԻ (ՄԱՄԲՐԵԻ) ՕՀԱՆՅԱՆ

## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի սպակազմին և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել Սովետական Միության հերոսի կոչում, հանձնելով Լենինի շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ.*

1. *Ավագ սերժանտ* Յեգոր Զախարի Բալեստային.
2. *Կրտսեր քաղղեկ* Սերգեյ Վասիլի Վավիլովին.
3. *Լեյտենանտ* Սերգեյ Անդրեի (Սամբրեի) Օգանովին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 22 փետրվարի 1943 թ.*






**1941** թվականի նոյեմբերին, երբ մինչև ատամները զինված թշնամին ձգտում էր դեպի Մոսկվա, մեր Հայրենիքի համար այդ ծանր օրերին ամբողջ Հարավային ռազմաճակատում իրենց անօրինակ խիզախություններով մեծ համբավ հանեցին լեյտենանտ Սերգեյ Օհանյանի գլխավորած կոմերիտական մարտկոցի 16 հրետանավորները։

Սերգեյ Մամբրեի Օհանյանը ծնվել է Թբիլիսիում, 1921 թվականի փետրվարի 23-ին, բանվորի ընտանիքում։ 1927 թվականին Սերգեյն ընդունվում է Թբիլիսիի № 82 հայկական դպրոցը, որտեղ սովորում է մինչև 1935 թվականը, ապա տեղափոխվում է № 38 միջնակարգ դպրոցը, որի դիրեկցիան և ուսուցչական կոլեկտիվը մինչև այժմ էլ անմոռանալի հիշողություններ են պահել ժրաջան, կարգապահ աշակերտ Սերգեյի մասին։

1939 թվականի հոկտեմբերին Սերգեյն ընդունվում է լենինյան կոմերիտմիության շարքերը, իսկ 1940 թվականի փետրվարին՝ Թբիլիսիի հրետանային դպրոցը։ Այստեղ նրա մտերիմ ընկերն է դառնում Վասիլի Պուզիրյովը։

Երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, Սերգեյ Օհանյանը և Վասիլի Պուզիրյովը արտահերթ ավարտեցին Թբիլիսիի հրետանային դպրոցը, որի ղեկավարության տված բնութագրում ասված է. «Օհանյանը վայելում է մեծ հեղինակություն։ Եռանդուն է, ակտիվ, նախաձեռնող և հնարագետ, կարգապահ և պահանջկոտ։ Մասնագիտական պատրաստականությունը լավ է։ Սխա-

ստեմատիկ կերպով զբաղվում է ինչպես իր, այնպես էլ ստորադրյալների գիտելիքների բարձրացմամբ։ Արժանի է արտահերթ ավարտման և լեյտենանտի զինվորական կոչման։ Կարելի է նշանակել մարտկոցի հրամանատար»։

Կարճ ժամանակ թիկունքային ծառայության մեջ գտնվելուց հետո, Սերգեյը նշանակվում է 606-րդ հրաձգային գնդում՝ հրետանային մարտկոցի հրամանատար, իսկ Վասիլին նույն մարտկոցի հրանոթներից մեկի հրամանատար։ 1941 թվականի հուլիսի 17-ին 317-րդ հրաձգային դիվիզիայի կազմում 606-րդ հրաձգային գունդը մեկնում է ռազմաճակատ։

Գունդը, որի կազմի մեջ էր Օհանյանի մարտկոցը, սկսում է մարտեր մղել եղբայրական Ուկրաինայի համար։ Այստեղ մարտկոցը ստանում է առաջին մարտական մկրտությունը։ Ռազմական գործողությունների հենց առաջին օրերից Սերգեյը ցուցաբերում է մեծ հմտություն և իր վրա գրավում գնդի հրամանատարության ուշադրությունը։ Մարտական բարդ իրադրության մեջ նա էլ ավելի է կոփվում և դառնում է համարձակ ու հնարագետ ռազմիկ։ Ընկերները «Ինտերնացիոնալ ընտանիք» էին անվանում 20-ամյա լեյտենանտի մարտկոցը։ Եվ իրոք 24 խիզախ կոմերիտականներից բաղկացած մի համերաշխ ընտանիք էր այդ, որտեղ կողք կողքի թշնամու դեմ կռվում էին ռուսներ ու հայեր, ադրբեջանցիներ և ուկրաինացիներ, որոնցից յուրաքանչյուրը պատրաստ էր իր կյանքի գնով պաշտպանելու ընկերոջը։

1941 թվականի նոյեմբերի վերջերին թեժ մարտեր էին մղվում Դոնի Ռոստովի շրջակայքում։ Հիտլերականները ճգնում էին գրավել Ռոստովը և սողոսկել Կովկաս։ Ռոստովը պաշտպանողների շարքերում էր նաև Սերգեյ Օհանյանի մարտկոցը։

Մարտկոցը բազմաթիվ մարտեր է մղում հարձակվող ֆաշիստների դեմ, շարքից հանում հարյուրավոր հիտլերականներ, խփում ու հրկիզում թշնամու տասնյակ տանկեր, հրանոթներ, ոչնչացնում կրակային շատ կետեր։ Այդ բոլոր սխրագործությունների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Ռոստովի շրջանի Բոլշիե Սալի գյուղի մոտ գտնվող Բերբեր Օբա կուրգանում տեղի ունեցած մարտը, որը փառքով պսակեց Օհանյանի մարտկոցի խիզախների անունները։

Երկար մարտերից հետո թշնամուն հաջողվում է սեպաձև ճեղքել գնդի բնագիծը։ Օհանյանի մարտկոցը, որն այն ժամանակ բաղկացած էր 16 ռազմիկներից, կտրվում է գնդից և նոր դիրքեր գրավում Բերբեր Օբա կոչվող բլուրում, որի պաշտպանությունը Ռոստովի համար մղվող մարտերում ուներ տակտիկական խոշոր նշանակություն։ Հետախուզությունը պարզում է, որ գերմանական 50 տանկ շարժվում են դեպի այդ բլուրը։ Դրությունը շատ լուրջ էր, բայց 16 խիզախները ընդունում են անհավասար մարտը։ Նրանցից յուրաքանչյուրն իր տեղում պատրաստ սպասում է երիտասարդ հրամանատարի հրամանին։ Օհանյանը դիտակետից անվրդով դիտում է թշնամու մեքենաների առաջխաղացումը։ Տանկերը մոտենում էին ու մոտենում, ամեն մի հաղա-

ղում կարող էր կործանիչ լինել, շարքից հանել մարտկոցը և ճանապարհ բացել թշնամու առջև։ Այդ ճակատագրական պահին հանկարծ հնչում է Օհանյանի հրամանը. «Կրա՛կ»։

Տրվում է առաջին համազարկը։ Արկերից մեկն ընկնում է թշնամու առջևից շարժվող տանկի թրթուրների տակ և շարքից հանում այն, իսկ երկրորդ համազարկը կանգնեցնում է մյուս տանկին։ Ֆաշիստներն ուղիղ հարվածելու հնարավորություն չունենալով, հուսահատ փորձում են շրջանցել բլուրը։ Մի քանի տանկ շարժվում են այդ ուղղությամբ։ Օհանյանի մարտկոցի մի քանի դիպուկ համազարկերով շարքից հանվում են բլուրը շրջանցող տանկերը ևս։ Թշնամին անկանոն կերպով, այնուամենայնիվ առաջ է շարժվում։ Այդ միջոցին արկի բեկորից վիրավորվում է մարտիկ Ասլան Վելիևը։ Քիչ անց զոհվում են հրետանավորներ Մալխաս Գուլյանը, Ֆազիլ Ահմեդովը և Ֆեոդոր Աբրամենկոն։ Մնացածները կռվում են ավելի կատաղի։ Թշնամուն ոչ մի կերպ չի հաջողվում այդ օրը մտնել բարձունքին։ Գրոհները գնալով դառնում են ավելի հաճախակի, իսկ մարտկոցի անձնակազմը հետզհետե նոսրանում է։

Հոգեկան ծանր ապրումների մեջ էր լեյտենանտ Օհանյանը։ Նրա աչքի առաջ մեկը մյուսի հետևից զոհվում էին մարտական ընկերները։ Այդ օրհասական կռվի թեժ պահին Սերգեյ Օհանյանը դիմում է ներկայացնում կոմպարտիայի շարքերն ընդունվելու համար և երդվում է կռվել մինչև արյան վերջին կաթիլը։

Մարտկոցի հրամանատար Օհանյանը ղեկավարում է մարտկոցի ընդհանուր գործողությունները և միաժամանակ գործում որպես նշանառու և արկեր մատակարարող։ Երիտասարդ հրամանատարը կռվում է որպես դյուցազուն։ Նա անձամբ ոչնչացնում է թշնամու երեք տանկ։ Բլուրի ստորոտում այրվում են թշնամու խփված տանկերը։ Խիզախ հրամանատարը դեռ շարունակում էր ղեկավարել մարտկոցի գործողությունները, երբ հրանոթին շատ մոտ պայթում է մի արկ և հերոսի մահով ընկնում է նաև մարտկոցի աննկուն հրամանատար Սերգեյ Օհանյանը։ Մարտկոցի հրամանատարությունն իր վրա է վերցնում Պուզիրյովը, որը վիրավոր Լազարևի հետ միասին կարողանում է շարքից հանել ևս մի քանի տանկ։ Կատաղած թշնամին դարձյալ ու դարձյալ նետվում է դեպի կուրգանը և սկսում է կրակի լավա տեղալ նրա փոքրաթիվ պաշտպանների վրա։ Հերոսաբար զոհվում են նաև Պուզիրյովը և Լազարևը։

Մարտկոցում մնում է միայն Բալխատան, որը վերջին արկով շարքից հանում է ևս մեկ տանկ, ապա նռնակների կապոցը ձեռքին սողում է բլրից ներքև և նետվում առաջ շարժվող տանկի թրթուրների տակ... Սոսկալի դղրդյունով պայթում է տանկը. նրա հետ զոհվում է նաև Բալխատան։

Հաջորդ առավոտյան, երբ սովետական զորքերն անցել էին հարձակման, դեպի բլուրը շարժվող հրետանային գնդի զինվորները այնտեղ գտնում են իրենց զոհված ընկերների դիակները, իսկ նրանց շուրջը խփված, հրկիզված

ու շարքից հանված ֆաշիստական մոտ 30 տանկ ու մեծ թվով սպանված հիտլերականներ։

Բլրակի հյուսիս-արևմտյան մասում մահամերձ վիճակում գտնում են վիրավոր Ասյան Վելիևին։ Նա ինտերնացիոնալ ընտանիքի վերջին անդամն էր, որը հազիվ, կցկտուր կերպով կարողանում է պատմել իր մարտական ընկերների անօրինակ սխրագործությունների մասին։

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահությունը բարձր գնահատելով զոհված կոմերիտականների հերոսությունը, 1943 թվականի փետրվարի 22-ի հրամանագրով, հետմահու Սովետական Միության հերոսի կոչում է շնորհում մարտկոցի հրամանատար՝ լեյտենանտ Սերգեյ Օհանյանին, կրտսեր քաղղեկ Սերգեյ Վավիլովին և ավագ սերժանտ Ֆեոդոր Բալեսստային։

Այժմ Ռոստովի Մյասնիկյանի շրջանի Բոլշիե Սալի, Բաքվի 26 կոմիսարների անվան կոլտնտեսության երախտապետ աշխատավորները, սոցիալիստական Հայրենիքի համար զոհված 16 խիզախ հերոսների եղբայրական գերեզմանը Բերբեր Օբայից փոխադրել են գյուղի կենտրոնը, որտեղ նրանց շիրիմի վրա կանգնեցրել են 12 մետրանոց մի հոյակապ հուշարձան հետևյալ մակագրությամբ.

«1941 թ. նոյեմբերի 17—18-ին լեյտենանտ Օգանովի մարտկոցի մարտիկները ետ մղելով գերմանա-ֆաշիստների հարձակումը ոչնչացրին թշնամու մոտ 30 տանկ։

Հերոսները զոհվեցին, բայց թշնամուն թույլ չտվեցին առաջ շարժվելու»։

Քառանկյունի հուշասյան ներքին մասում շրջանաձև տրված է հերոսների վերջին մարտը ներկայացնող խմբարձանը, որի ճակատային մասում մեծ տառերով գրված է.

«ՆՐԱՆՔ ՄԱՔԱՌԵՑԻՆ ՄԻՆՉԵՎ ՄԱՀ»։



# ԱԴՎԱՆ ՆԱՀԱՊԵՏԻ ԲԱԲԱՅԱՆ





## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**Կարմիր բանակի գեներալներին, սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու մասին**

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում Հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել* Սովետական Միության Հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

1. *Ավագ սերժանտ* Ադվան Նահապետի Բաբայանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 24 մարտի 1945 թ.*





Աղվան Բաբայանը Սովետական Միության այն հերոսներից է, որին բախտ վիճակվեց 1945 թվականի հունիսի 24-ին մասնակցել Մոսկվայում կայացած հաղթանակի զորահանդեսին։

Ա. Բաբայանը ծնվել է 1919 թվականին Դարալագյազի գավառի Թառաթումբ գյուղում, հողագործի ընտանիքում։ Նա սովորել է շրջանի Ագքենդ, ապա՝ Այնալար (Աղավնաձոր) գյուղերի դպրոցներում. 1934 թվականին ընդունվել է կոմերիտմիության շարքերը և ակտիվորեն մասնակցել հասարակական աշխատանքներին։ 1939 թվականին նա ավարտում է Երևանի հեռակա մանկավարժական տեխնիկումը և նշանակվում պատմության դասատու՝ Միկոյանի (Եղեգնաձոր) շրջանի Խաչիկ գյուղի միջնակարգ դպրոցում։

1940 թվականի հունվարին Աղվանը զորակոչվում է սովետական բանակ և ուղարկվում Միլլերովո քաղաքը, 271-րդ դիվիզիայի 525-րդ հրաձգային գունդը։

Երբ ֆաշիստական Գերմանիան հարձակվեց մեր երկրի վրա, 525-րդ հրաձգային գունդը Միլլերովոյից տեղափոխվեց Չերկասի։ Հուլիսի 14-ին գունդը հրաման է ստանում մինչև ռազմաճակատ և պաշտպանության բնագծեր գրավել Բելայա-Ցերկովի մոտ, Ալեքսանդրովկայի ուղղությամբ։ Հուլիսի 17-ի

կատաղի մարտերից մեկում Բաբայանը վիրավորվում է և կարճ ժամանակով դուրս գալիս ռազմադաշտից։ Այնուհետև Բաբայանին կարելի է տեսնել Դեսնայի ափերին՝ Օստյոր քաղաքի պաշտպանների առաջավորների շարքերում, որտեղ նա վիրավորվում է երկրորդ անգամ և հոսպիտալի էվակուացիայի ընթացքում ընկնում է ռմբակոծության տակ։ Գերմանացիները շատերի հետ միասին գերի են վերցնում նաև ծանր վիրավոր Աղվան Բաբայանին։ Գերության ընթացքում նա համակենտրոնացման ճամբարից փախչելու մի քանի փորձ է կատարում։ Շուտով այդ նրան հաջողվում է։

1941 թվականի դեկտեմբերի 28-ի գիշերը, երբ ռազմագերիներին Կիևից տեղափոխում էին Ժիտոմիր, Պետրուշկա գյուղում գտնվելու ժամանակ Աղվան Բաբայանը և նրա ընկեր Վաղինակ Հայրապետյանը միասին դիմում են փախուստի։ Բայց նրանց առաջին փախուստը հաջողությամբ չի ավարտվում. կարճ ճանապարհ անցնելուց հետո, նրանք բռնվում և վերադարձվում են ճամբար։ 1942 թվականի փետրվարի 27-ին ի վերջո նրանց հաջողվում է փախչել ճամբարից։ Մեծ զրկանքներ ու տանջանքներ կրելով, երկար թափառումներից հետո, հիվանդ և հյուծված վիճակում Աղվան Բաբայանն ու Վաղինակ Հայրապետյանը հայտնվում են Հյուսիսային Կովկասի Նևիննոմիսկի շրջանի Պավլովկա գյուղում։ 1943 թվականի հունվարին գյուղն ազատագրվում է և նրանք միանում են սովետական բանակի զորամասերին։

1943 թվականի ապրիլի 25-ին Բաբայանն ուղարկվում է Ուկրաինական չորրորդ ռազմաճակատ։ Այստեղ նրան նշանակում են դասակի հրամանատարի տեղակալ՝ 216-րդ դիվիզիայի 647-րդ հրաձգային գնդի 2-րդ գումարտակում։ Հունիսի 1-ին գումարտակին առաջադրանք է տրվում հարձակվել և գրավել № 114 բարձունքը։ Առաջադրանքը կատարվում է մեծ հաջողությամբ։ Բարձունքը գրավելուց հետո փոխ-գնդապետ Պանչինի հրամանատարությամբ գործող 647-րդ գունդն առաջ է շարժվում և գրավում թշնամու բնագծերը։ Ինչպես հաղորդել է սովետական ինֆորմացիոն բյուրոն, գնդի զրահայիններին հաջողվում է գրավել № 195 բարձունքի հակատանկային խրամատները, երկու հրանոթ, 15 գնդացիր և ուրիշ ռազմավար, և գերի վերցնել 40 գերմանացի։ Հիտլերականներն անցնում են հակագրոհի, որը վերջանում է նրանց համար մեծ կորուստներով։ Այնուհետև մասնակցելով Դոնբասի ազատագրմանը, միավորումը հասնում է Զապորոժիեի մարզի Սոֆիևկա կայարանը։

1943 թվականի հոկտեմբերի սկզբներին, գերագույն գլխավոր հրամանատարության հրամանի համաձայն, 216-րդ հրաձգային դիվիզիան տեղափոխվում է Մելիտոպոլ։ Դիվիզիայի ստորաբաժանումներին առաջադրվում է պաշտպանել անցման ուղին՝ Ուզաչնի գյուղի ուղղությամբ և թույլ չտալ թշնամուն անցնելու Ղրիմ։ Այն դասակը, որի հրամանատարն էր Աղվան Բաբայանը, պետք է մտներ գյուղին՝ երկաթուղային անկի ձախ կողմից։ Բաբայանը խելացիորեն է կազմակերպում այդ խնդրի կատարումը, որի համար պարգևատրվում է Կարմիր աստղի շքանշանով։



270—21

Հոկտեմբերի վերջին օրերն էին։ Սովետական զրոհային խմբերը, անցնելով Սիվաշը, հասել էին Թարխան գյուղին։ Նախքան գյուղի գրավումը, անհրաժեշտ էր ամրապնդել № 17 բարձունքը, որը գունդը հարկադրված եղավ պաշտպանել մինչև 1944 թվականի մայիսը։ Այստեղ Բաբայանի զրոհային դասակը գրավեց բարձունքը, որի շնորհիվ ճանապարհ հարթվեց գնդի առաջխաղացման համար և դասակը ապահովեց Թարխան գյուղի ազատագրումը։ Այս մարտերում Բաբայանը գործում է համարձակ ու վճռական։ Նա իր անձնական օրինակով մարտիկներին ոգեշնչում է սխրագործությունների։ Մարտերի բովով անցած ռազմիկը Սիվաշում դիմում է տալիս Սովետական Միության կոմունիստական պարտիայի շարքերն ընդունվելու համար։ Գումարտակի պարտիական կազմակերպությունը Բաբայանին միաձայն ընդունում է պարտիայի մեջ։

Թարխան գյուղի համար մղած մարտերում հրամանատարության առաջադրանքը հաջողությամբ կատարելու համար զրոհային դասակի հրամանատար, ավագ սերժանտ Աղվան Բաբայանն արժանանում է Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանի։

1944 թվականի մայիսի 7-ից համառ մարտեր են սկսվում սևծովյան կարևոր նավահանգիստներից մեկի՝ Սևաստոպոլի համար։ 647-րդ հրաձգային գունդը հրաման է ստանում հարձակման անցնել Սևաստոպոլի վրա՝ Սապուն Գորայի կողմից։ Ավագ սերժանտ Բաբայանի զրոհային դասակին առաջադրվում է ոչնչացնել զորամասի ճանապարհին ընկած հակառակորդի բոլոր կրակային կետերը և օժանդակել հարձակվող զորամասերի առաջխաղացմանը։ Բաբայանի դասակը առաջինն է ճեղքում թշնամու պաշտպանությունը Սապուն Գորա բարձունքի վրա, շրջափակում է հակառակորդի դոտերից մեկը և գնդացրային ու ավտոմատային կրակով շարքից հանում է դոտի անձնակազմը։ Մարտի այս թեժ պահին զոհվում է վաշտի հրամանատարը, և ավագ սերժանտ Բաբայանը ստանձնում է վաշտի հրամանատարությունը, Նրա վաշտը, մյուս ստորաբաժանումների հետ միասին, սրընթաց գրոհով գրավում է Անգլիական գերեզմանոցը, ապա թափանցում քաղաքի խորքը։

Վաշտը, Բաբայանի հրամանատարությամբ, մարտեր է մղում քաղաքի ամեն մի փողոցի, ամեն մի տան համար։ Մարտերի այդ վճռական ժամերին շարքից դուրս է գալիս գումարտակի հրամանատարը։ Բաբայանն ստանձնում է գումարտակի հրամանատարությունը։ Գնալով մարտերն ավելի կատաղի բնույթ են ստանում, հակառակորդը ցույց է տալիս համառ դիմադրություն։ Բաբայանի խիզախները, հաղթահարելով բոլոր արգելքներն ու խոչընդոտները, և ճնշելով թշնամու համառ դիմադրությունը, շատ զորամասերի թվում մասնակցում են Սևաստոպոլի ազատագրմանը։ Այդ կռիվներում գումարտակը ոչնչացնում է հակառակորդի ավելի քան 100 զինվոր ու սպա։

Սևաստոպոլի համար մղած մարտերում ցուցաբերած խիզախության ու հերոսության համար ավագ սերժանտ Աղվան Նահապետի Բաբայանը ներկա-

յացվում է Սովետական Միության Հերոսի կոչման, որը նրան շնորհվում է 1945 թվականի մարտի 24-ին։ Այդ օրերին Բաբայանն ստանում է նաև կրտսեր լեյտենանտի կոչում։

Այնուհետև 216-րդ հրաձգային կարմրադրոշ դիվիզիան գերագույն գլխավոր հրամանատարությունից հրաման է ստանում Բելոռուսական երկրորդ ռազմաճակատ մեկնելու մասին։ Այստեղ 1944 թվականի սեպտեմբերին դիվիզիայի 647-րդ գունդը հարկադրված է լինում երեք օր ու գիշեր ծանր մարտեր մղել։ Չորրորդ օրվա լուսաբացին միայն նա կարողանում է հետ շպրտել թշնամուն, դուրս գալ շրջապատումից և միանալ դիվիզիայի մյուս զորամասերին։ Դրանից հետո դիվիզիան օգնում է հարևան զորամասերին՝ դուրս գալու շրջապատումից։ Ապա, հրամանատարության հրամանի համաձայն, նա շարժվում է դեպի հյուսիս և Մերձբալթյան առաջին ռազմաճակատի զորքերի կազմում մասնակցում «Մահվան ձոր» կարևոր տեղանքի գրավմանը։ Այս մարտերում Բաբայանը հանդես է բերում գումարտակը ղեկավարելու մեծ կարողություն։ Այդ գործողությունների համար կրտսեր լեյտենանտ Աղվան Բաբայանը պարգևատրվում է Կարմիր դրոշի շքանշանով։ Այնուհետև անցնելով լեհ-գերմանական սահմանագիծը, 216-րդ դիվիզիան կատաղի մարտեր է սկսում թշնամու տերիտորիայում և մասնակցում Քյոնիգսբերգ (այժմ Կալինինգրադ) քաղաքի գրավմանը։

Հայրենական պատերազմի հաղթական ավարտից հետո 1945 թվականի վերջին Բաբայանը զորացրվում է, վերադառնում Հայաստան և աշխատում է Միկոյանի շրջանի Թարաթումբի գյուղսովետի գործադիր կոմիտեում, որպես նախագահի տեղակալ։ 1947 թվականին նա ընտրվում է Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի դեպուտատ։ Այնուհետև Բաբայանը ավարտում է ՀԿՊ Կենտկոմին կից պարտիական դպրոցը և աշխատանքի անցնում Երևանի քաղսովետի գործկոմում՝ իբրև «Հաղթանակ» հանգստի և կուլտուրայի պարկի դիրեկտոր, ուր աշխատում է մինչև այժմ։



# ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՌՈՒԲԵՆԻ ՄԵԼԵԹՅԱՆ



## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ը

Կարմիր բանակի սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել Սովետական Միության հերոսի կոչում, հանձնելով Լենինի շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ.*

*Գվարդիայի կրտսեր լեյտենանտ* Հարություն Ռուբենի Մե-լեթյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 27 հունիսի 1945 թ.*





Հարություն Ռուբենի Մելիքյանը Սովետական Միության հայ հերոսների ընտանիքում ամենակրտսերն է։ Նա ծնվել է 1925 թվականի նոյեմբերի 25-ին Կրասնոդարի երկրամասի Ադլերի շրջանի Նիժնի Շիլովկա գյուղում, գյուղացու ընտանիքում։ 1931 թվականին Մելիքյանների ընտանիքը տեղափոխվում է Գագրայի շրջանի Խոլոդնիյե Ռեչի գյուղը։ 1935 թվականին Հարությունն սկսում է հաճախել Գագրայի ռուսական միջնակարգ դպրոցը։ 1942 թվականին ավարտում է 7-րդ դասարանը և աշխատանքի անցնում գյուղի կոլտնտեսությունում որպես բրիգադիր։

*Հարություն Մելիքյանը սովետական բանակ է մեկնում 1943 թվականի մայիսին և ուղարկվում է ուսանելու Հայաստան փոխադրված Կրասնոդարի հրաձգային-հրետանային ուսումնարանում։ 1944 թվականի հուլիսին, ուսումնարանն ավարտելուց հետո, մյուս ունկնդիրների հետ միասին կրտսեր լեյտենանտ Մելիքյանը մեկնում է Ուկրաինական առաջին ռազմաճակատ և 17-րդ մոտո-մեքենայացված կարմրադրոշ բրիգադայի կազմում մասնակցում Լվովի ազատագրման մարտերին։ Այնուհետև բրիգադան շարունակում է կատաղի մարտեր մղել Սանդոմիրյան հենակետի համար։ Դեսանտային բրիգադայի առաջապահ զորամասերը ճեղքում են գերմանացիների պաշտպանությունը*

*հենակետի շրջակայքում և ճանապարհ բացում առաջ շարժվող հետևակի համար։ Այդ ժամանակ կրտսեր լեյտենանտ Մելիքյանը դեսանտային հետևակում դասակի հրամանատար էր։ Դեսանտայիններն առաջ են շարժվում տանկերի օժանդակությամբ։ Շուտով տանկային դեսանտային գվարդիական 4-րդ բանակի բոլոր զորամասերն անցնում են թշնամու թիկունքը և այնտեղ սկսում արյունահեղ մարտեր մղել։ Նրանք կարողանում են ճեղքել թշնամու պաշտպանությունը, խորանալ 30 կիլոմետր և անտառում կանգ առնել՝ ցրված ուժերը վերադասավորելու համար։*

*Կրտսեր լեյտենանտ Մելիքյանի դասակը կանգնած էր անտառի եզրին։ Ձախ կողմից մի խումբ զինվորներ, թշնամու հանկարծակի երևալը նկատելով, սկսում են հետ քաշվել։ Կրտսեր լեյտենանտը կանգնեցնում է նրանց և իր շուրջը համախմբելով մոտ 200 զինվոր, նրանց առաջնորդում է գրոհի՝ անտառի կենտրոնից առաջ շարժվող գերմանական չորս տանկերի և հետևակի դեմ։ Սովետական զինվորները բաց են անում խմբակային կրակ։ Այդ նույն ժամանակ անտառի աջ կողմից հիտլերականների վրա կրակ է բացում մարտիկների մի ուրիշ խումբ՝ բրիգադայի հրամանատար գնդապետ Զուբկովի գլխավորությամբ։ Գերմանացիները չդիմանալով գրոհին, դիմում են փախուստի։ 17-րդ բրիգադայի զորամասերը հետ են վերցնում նման դիրքերը։ Մի քանի ժամ անց թշնամին նորից է հարձակվում։ Այդ ժամանակ կրտսեր լեյտենանտ Մելիքյանի դասակին հաջողվում է գերի վերցնել գերմանական վեց ավտոմատավոր։ Այդ օրվա մարտական հաջող գործողությունների համար Մելիքյանն արժանանում է կառավարական պարգևի՝ Կարմիր դրոշի շքանշանի։ Կռվի բոցերի մեջ 19-ամյա Հարությունն ընդունվում է կոմերիտմիության շարքերը։*

*Հարձակումը շարունակվում է։*

*1945 թվականի հունվարի 17-ին տանկային միավորումների և հետևակի սրընթաց գրոհով Ուկրաինական առաջին ռազմաճակատի զորքերը գրավում են լեհական Չենստոխովա քաղաքը։ Այդ մարտերի ակտիվ մասնակիցներից էր նաև կրտսեր լեյտենանտ Հարություն Մելիքյանը։ Դեռևս հունվարի 15-ին, այն վաշտը, որի կազմում էր Մելիքյանի դասակը, հրաման է ստանում՝ հակառակորդի տանկային դիվիզիայի դասավորության շրջանում գիշերվա ժամը 2-ին հանկարծակի անցնել գրոհի, առաջացնել խուճապ, գրավել բնակավայրը և այն պաշտպանել մինչև օժանդակ զորամասերի հասնելը։*

*Գիշերվա ուղիղ ժամը 2-ին հարյուր դեսանտայիններ, մեծ ճանապարհ կտրելով, 16 տանկերի օժանդակությամբ անցնում են հարձակման։ Հակառակորդի տանկիստները հանգստանում էին մոտակա շենքում։ Տանկերի մոտ գտնվող ժամապահներին շարքից հանելուց հետո, դեսանտային վաշտի մարտիկները շարժվում են դեպի վերոհիշյալ շենքը։ Կրակոցներ լսելով, շենքից դուրս են թափվում գերմանացիները։ Սկսվում է կատաղի մարտ, որը տեղ-տեղ վերածվում է ձեռնամարտի։ Սովետական զինվորներին հաջողվում է*

*ոչնչացնել հակառակորդի մեծ թվով զինվոր ու սպա և 100 գերմանացի գերի վերցնել։ Առավոտյան թշնամին հավաքելով իր ուժերը՝ անցնում է հակագրոհի։ Սովետական զինվորները հարկադրված են լինում ետ քաշվել ու գրավել նոր բնագիծ։ Նոր համալրումներ ստանալով, հունվարի 17-ին նրանց հաջողվում է վերստին գրավել վերոհիշյալ բնակավայրը։*

*17-րդ գվարդիական մոտո-մեքենայացված բրիգադան սրընթաց գրոհով շարժվում է առաջ և 1945 թվականի հունվարի 24-ին մոտենում է Օդերին։ Հունվարի 25-ին հրամանատարության հրամանով բրիգադայի հրաձգային ստորաբաժանումները, ավտոմատային, գնդացրային և զենիթային հրետանու շտապ կրակի տակ, նավակների, լաստանավերի օգնությամբ գետանցում են Գերմանիայի ջրային խոշորագույն արգելքը՝ Օդեր գետը։*

*Հարություն Մելիքյանը զորամասում իր դասակով առաջինն է գետանցում Օդերը և գրոհելով գետի ձախ ափի բարձունքներում պատսպարված թշնամու վրա, նրան դուրս է քշում խրամատներից և Կեբեն քաղաքի հյուսիս-արևելյան ծայրամասում գրավում հենակետ։ Կրտսեր լեյտենանտ Մելիքյանի դասակի մարտական հաջող գործողության շնորհիվ ապահովվում է հրաձգային մյուս ստորաբաժանումների գետանցումը։ Թշնամին ամրանալով ներքնահարկերում, կատաղի դիմադրում է։ 1945 թվականի հունվարի 26-ի լուսադեմին թարմ ուժեր ստանալով, թշնամին նորից անցնում է հակագրոհի՝ նպատակ ունենալով սովետական զինվորներին շպրտել գետը։*

*Մելիքյանի դասակը միայն մեկ օրվա ընթացքում հետ է մղում թշնամու վեց հակագրոհ։ Գնալով Մելիքյանի դասակի շարքերը նոսրանում են։ Վերջին հակագրոհի ժամանակ սկսվում է ուժեղ ձեռնամարտ։ Մելիքյանն առաջինն է նետվում կռվի մեջ։ Հիտլերականները, կրելով կորուստներ, հարկադրված են լինում փախուստի դիմել։*

*Հունվարի 29-ին Օդերի ձախ ափին գրաված հենակետը պաշտպանելու ժամանակ Մելիքյանը ծանր վիրավորվում և ուղարկվում է Լվովի հոսպիտալը։*

*Բուժվելուց հետո Մելիքյանը նորից վերադառնում է իր զորամասը և մասնակցում Բեռլինի ճակատամարտին։ Այնուհետև զորամասը Պոտսդամից շարժվում է դեպի Չեխոսլովակիա և հաղթանակի օրը մտնում Պրագա։*

*Օդերը հաջող գետանցելու, նրա ձախ ափին պլացդարմ գրավելու և այն ընդարձակելու համար կրտսեր լեյտենանտ Հարություն Ռուբենի Մելիքյանին և նրա հինգ մարտիկներին 1945 թվականի հունիսի 27-ին ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում՝ հանձնելով նրանց Լենինի շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ։*

*Մելիքյանը զորացրվել է 1946 թվականին։ Այժմ նա աշխատում է Սոչիում, առևտրի ցանցում։*



# ԴԱՎԻԹ ՄԻՍԱԿԻ ՅԱԶԻՉՅԱՆ



## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր Բանակի գեներալներին, սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար,* շնորհել Սովետական Միության Հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

*374. Կրտսեր լեյտենանտ* Դավիթ Միսակի Յազիչյանին:

ՍՍՌՄ Գերագույն Սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն Սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 31 մայիսի 1945 թ.:*





Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմի տարիներին ֆաշիզմի դեմ մղված ճակատամարտերում բազմաթիվ սխրագործություններ է կատարել հայ ժողովրդի արժանավոր զավակ, տանկային անձնակազմի հրամանատար Դավիթ Ցաղիչյանը։

Դավիթ Միսակի Ցաղիչյանը ծնվել է 1915 թվականի մայիսի 15-ին Կրասնոդարի երկրամասի Ադլերի շրջանի Լոո գյուղում։ 1925 թվականին նա ընդունվում է տեղի տարրական դպրոցը։ 1929—1935 թվականներին Դ. Ցաղիչյանը սովորել է կոլտնտեսային երիտասարդության դպրոցում, ստացել թերի միջնակարգ կրթություն և ապա աշխատանքի անցել Սևերսկի շրջանի Աֆինսկոյե գյուղի կոլտնտեսությունում։ 1935/36 ուսումնական տարում նա սովորում է գյուղատնտեսության մեխանիզատորների դասընթացներում, տիրապետում կոմբայնավարի մասնագիտությանը և աշխատանքի անցնում Սևերսկի ՄՏԿ-ում։

1937 թվականին Ցաղիչյանը զորակոչվում է սովետական բանակ և շուտով դառնում հմուտ տանկիստ։ Կոլտնտեսային դաշտերի անվանի կոմբայնավարը տանկային ստորաբաժանումների կազմում մասնակցում է Արևմտյան Բելոռուսիայի և Արևմտյան Ուկրաինայի ազատագրմանը։ 1939—1940

*թվականների ձմռանը Ցավիչյանը մասնակցում է սովետա-ֆիննական պատերազմի ճակատներում, ուր վիրավորվում է և բուժվելուց հետո վերադառնում իր զորամաս։*

*1940 թվականի սեպտեմբերին Դ. Ցավիչյանը զորացրվում է բանակից և աշխատանքի անցնում Կրասնոդարի երկրամասի Լազարևսկայա ավանի նավաշինարանում։*

*Երբ սկսվում է Հայրենական պատերազմը, Հայրենիքի պաշտպանների շարքերը համալրում է նաև Դավիթ Ցավիչյանը։ Նա գործուղվում է սովորելու Վոլգոգրադի տանկային ուսումնարանում։*

*1942 թվականի փետրվարին տանկային ուսումնարանի ունկնդիրները Վոլգոգրադի մոտ, Պրուտոյ վայրում, մարտեր են մղում գերմանական դեսանտային խմբավորումների դեմ, որտեղ Ցավիչյանը վիրավորվում է։ Ապաքինվելուց հետո նա հանձնում է պետական քննությունները, ստանում կրտսեր լեյտենանտի կոչում և նշանակվում 155-րդ տանկային բրիգադայում՝ տանկի հրամանատար։*

*1943 թվականի գարնանը 61-րդ բանակի կազմում Ցավիչյանը մասնակցում է սովետական զորքերի հարձակողական մարտերին՝ Օրյոլի ուղղությամբ։ Այստեղ նա աչքի է ընկնում Օվսյաննիկի, Բանիկի, Դոկտորովկա և այլ ավանների ազատագրման, ինչպես նաև Դվուշ գետի անցման մարտերում։*

*1944 թվականի գարնանը 48-րդ բանակի 65-րդ տանկային գունդը մարտեր է մղում Լեհաստանում՝ Օստրով-Մազովեցկի ուղղությամբ։ Գնդի վաշտերից մեկը, որտեղ ծառայում էր Ցավիչյանը, առաջադրանք է ստանում Նարև գետի վրայով դեսանտ անցկացնել թշնամու թիկունքը։ Գերմանացիները նկատելով այդ, մի քանի անգամ գրոհում են սովետական դեսանտայինների վրա, բայց ջախջախվում են և ետ շպրտվում։ Տանկային վաշտը հաջողությամբ կատարում է մարտական առաջադրանքը։ Այդ մարտերում ցուցաբերած խիզախության համար Դավիթը պարգևատրվում է Կարմիր դրոշի շքանշանով։*

*1944 թվականի աշնանը 42-րդ տանկային գնդին, որտեղ ծառայում էր Ցավիչյանը, խնդիր է տրվում՝ դուրս գալ գերմանական զորքերի թիկունքը՝ Վարշավայից դեպի Արևելյան Պրուսիա տանող մայրուղու ուղղությամբ և նրանց կտրել հիմնական ուժերից։ Այդ մարտերում Ցավիչյանը վիրավորվում է և ուղարկվում հոսպիտալ։ Այդ ժամանակ նա պարգևատրվում է Կարմիր աստղի շքանշանով։ Ապաքինվելուց հետո Ցավիչյանը, որպես Տ-34 տանկի հրամանատար, Բելոռուսական առաջին ռազմաճակատի 5-րդ հարվածային բանակի 22-րդ ինժեներա-տանկային գնդի կազմում 1945 թվականի սկզբներին մասնակցում է Վարշավայի ազատագրմանը, այնուհետև Վիսլայի անցմանը և ապա շարժվում է Բեռլինի ուղղությամբ, որտեղ գերմանացիները ուժեղ դիմադրություն էին ցույց տալիս Կյուստրին քաղաքի մոտ, Օդերի վտակ Վարտայի ափին։*

Տանկային վաշտը, որի կազմում էր Յաղիջյանի ղեկավարած տանկը, առաջադրանք է ստանում ճեղքել թշնամու պաշտպանությունը, թափանցել նրա խորքը, գրավել դեպի քաղաք տանող կամուրջները և ապահովել հիմնական զորամասերի առաջխաղացումը։ Մարտի 7-ի վաղ առավոտյան տանկային վաշտը համառ մարտերով մտնում է Կյուստրին և գրավում երկու կամուրջ։ Այդտեղ զոհվում է վաշտի հրամանատար Օլեյնիկովը, վիրավորվում է դասակի հրամանատար ավագ Կոսարևը։ Յաղիջյանն իր վրա է վերցնում վաշտի հրամանատարությունը և շարունակում մարտական առաջադրանքի կատարումը։ Նրա ղեկավարած ականավերծող տանկը սրընթաց կրակով առաջ է ընթանում քաղաքի փողոցներով, միաժամանակ ճանապարհ բացում մյուս մեքենաների համար։

Յաղիջյանի տանկը ճանապարհը մաքրում է տասնյակ ականներից, ոչնչացնում հակառակորդի կողմից փողոցներում կառուցված կարճասյուններն ու բարիկադները։ Յաղիջյանի տանկային անձնակազմի կողմից ջախջախվում է թշնամու զենիթային հրետանու երկու մարտկոց, որոնք կրակ էին տեղում սովետական տանկերի վրա։ Տանկը իր դիպուկ կրակահերթով ոչնչացնում է նաև գերմանական մեկ գնդացրային կրակակետ։ Գնալով ավելի է թեժանում մարտը Կյուստրինի փողոցներում։ Յաղիջյանի ականավերծող տանկն արդեն մխրճվում է քաղաքի հակառակ ծայրում գտնվող գործարանային շրջանը և ուրիշ ստորաբաժանումների հետ միասին ջախջախում ու ոչնչացնում է հակառակորդի կրակային կետերն ու կենդանի ուժը։ Երբ Յաղիջյանի տանկը վնասվածք է ստանում, նա շարունակում է հակառակորդի վրա կրակ տեղալ և աջակցում է մյուս տանկերի առաջխաղացմանը։ Սակայն, քիչ անց, թշնամու արկը պայթում է ուղիղ Յաղիջյանի տանկի վրա և շարքից հանում նրան, իսկ անձնակազմի մարտիկները, այդ թվում նաև հրամանատար Յաղիջյանը, վիրավորվում են։ Աչքից և դեմքից վիրավորված Յաղիջյանն իրեն չի կորցնում։ Մեծ ճիգեր թափելով, նա կարողանում է վիրավոր ընկերներին դուրս բերել տանկից։

Իր համարձակ գործողություններով Դավիթ Յաղիջյանը կարողանում է ապահովել հրաձգային ստորաբաժանումների առաջխաղացումը և Կյուստրին քաղաքում հակառակորդի կարևոր մի շարք հենակետերի գրավումը։

Այս սխրագործությունների համար ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1945 թվականի մայիսի 31-ի հրամանագրով կրտսեր լեյտենանտ Դավիթ Միսակի Յաղիջյանին շնորհվում է Սովետական Միության հերոսի կոչում։

1946 թվականի սեպտեմբերին Յաղիջյանը զորացրվում է բանակից և վերադառնում Լազարևսկոյե, ուր և աշխատում է ներկայումս։



# ԵՐՎԱՆԴ ԳԵՎՈՐԳԻ ԳԱՐԱՆՅԱՆ






## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի գեներալներին, սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Դնեպրի գետանցման ընթացքում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության և հերոսության համար շնորհել* Սովետական Միության հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

*40. Ավագ* Երվանդ Գևորգի Գարանյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա. Կրեմլ, 15 հունվարի 1944 թ.:*





Թուրքիայի Սամսոնի մարզի Կուրշումլի գյուղի բնակիչ Գևորգ Մարտիրոսի Գարանյանի ընտանիքը ծայրահեղ թշվառության ու դժվարին վիճակի մեջ էր, երբ 1903 թվականին ծնվեց նրա որդին Երվանդը։

Դեռևս 1902 թվականի վերջերին Երվանդի հայրը, փախչելով թուրքական իշխանությունների հալածանքներից, գալիս է Աբխազիա ու երկար դեգերումներից հետո հաստատվում Գագրայի շրջանում, ուր շուտով տեղափոխվում է նաև ընտանիքը։ Սակայն Գագրայում էլ չի բարելավվում Գարանյանների ընտանիքի վիճակը։ Միայն սովետական իշխանության հաղթանակից հետո է գալիս բաղձալի երջանկությունը։

1930 թվականին, երբ Գագրայի շրջանի Քրիստոֆորովո գյուղում կոլեկտիվ տնտեսության ստեղծման հարց է առաջանում, Գևորգ Գարանյանը և նրա որդի Երվանդը դառնում են կոլտնտեսության ակտիվ կազմակերպիչներից։ Երվանդ Գարանյանը կոլտնտեսության մեջ սկզբում աշխատում է որպես բրիգադիր, ֆերմայի վարիչ, իսկ հետագայում, հինգ տարի շարունակ ղեկավարում է «Ախալի ցխովրեբա» («Նոր կյանք») կոլտնտեսությունը։

1940 թվականի ապրիլին Ե. Գարանյանն ընդունվում է Սովետական Միության կոմունիստական պարտիայի շարքերը։

Երբ մեր Հայրենիքի վրա ուխտադրժորեն հարձակվեց ֆաշիստական Գերմանիան և վտանգ ստեղծվեց սովետական մարդկանց ազատության ու անկախության համար, Ե. Գարանյանն ամեն կերպ մոբիլիզացնում է կոլտնտեսության ուժերը ռազմաճակատին օգնելու նպատակով։ 1942 թվականի մարտին Երվանդ Գարանյանը մեկնում է սովետական բանակ։ Կարճ ժամանակամիջոցում տիրապետելով հրետանավորի մասնագիտությունը, գվարդիայի ավագ Երվանդ Գարանյանը մեկնում է ռազմաճակատ և մասնակցում Վոլգոգրադի համար մղված մարտերին։ Նրա հրետանային անձնակազմն առաջին մկրտությունն ստանալով Վոլգոգրադի պատմական ճակատամարտում, հետագայում է՛լ ավելի է բազմապատկում իր սխրագործությունները, մասնակցում Դոնի, Բրյանսկի, Կենտրոնական, Արևմտյան և Բելոռուսական առաջին ռազմաճակատների մարտերին։

...Կենտրոնական ռազմաճակատի մի հատվածում գերմանացիները համառորեն դիմադրում էին՝ ձգտելով կասեցնել սովետական զորքերի հարձակումը։ Այն զորամասը, որտեղ գտնվում էր Գարանյանի հրետանային անձնակազմը, խրամատավորվում է, իսկ ինքը՝ գվարդիայի ավագ Երվանդ Գարանյանը, ստորաբաժանման հրամանատար ավագ լեյտենանտ Կուզնեցովի առաջադրանքով, թշնամու կրակի տակ առաջ էր անցել հակատանկային հրանոթի համար հարմար դիրք ընտրելու։ Վերադառնալիս, դեռ հեռվից Ե. Գարանյանը նկատում է, որ իր հրետանային անձնակազմը ենթարկվել է հակառակորդի ուժեղ գնդակոծմանը։ Անվնաս էր մնացել միայն մարտիկ Բալյանը, իսկ մյուսները վիրավորվել էին։ Գարանյանն անմիջապես վիրավոր մարտիկներին ցույց է տալիս առաջին օգնություն և նրանց ուղարկում սանիտարական մաս, իսկ ինքը Բալյանի հետ միասին հրանոթները, բաց տարածություն դուրս բերելով, երկու հարյուր մետր հեռավորությունից ուղիղ նշանառությամբ սկսում է գնդակոծել թշնամուն։ Արկերը պայթում էին հակառակորդի շարքերում, բայց հիտլերականները չնայելով կորուստներին, շարունակում էին առաջ նետվել։ Խիզախ հրետանավորներն իրենց չեն կորցնում։ Գարանյանը հանգիստ ասում է Բալյանին. «Կանգնենք մինչև վերջ, գերմանացիները մեզ չեն կարող տեղից շարժել, միայն թե դու հասցրու շրապնելային արկերը»։

Եվ երկու հոգուց բաղկացած հրետանային անձնակազմը թշնամուն դիմավորում է շրապնելով։ Գազազած հակառակորդն ամեն կերպ ձգտում է կոտրել քաջ ռազմիկների դիմադրությունը։ Գարանյանի հրետանու աջակցությամբ ստորաբաժանումը փայլուն կերպով կատարում է իր խնդիրը։ Այդ մարտերում ցուցաբերած խիզախության համար 1943 թվականի օգոստոսի 14-ին Երվանդը պարգևատրվում է Կարմիր աստղի շքանշանով։

Բայց այն, ինչ կատարեց Ե. Գարանյանը Չերնիգովի ազատագրման և Դնեպրի անցման ժամանակ, անթառամ փառքով պսակեց նրա անունը։

1943 թվականի աշնանը սովետական զորքերը համառ մարտեր էին մղում

աջափնյա Ուկրաինան գերմանական ֆաշիստներից ազատագրելու համար։ Ե. Գարանյանի հրետանային հաշվարկը, Կենտրոնական ռազմաճակատի 61-րդ բանակի 77-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի 215-րդ գնդի կազմում, առաջիններից մեկը հասավ Դնեպրին և սովետական մյուս զորամասերի հետ միասին արյունահեղ գոտեմարտի բռնվեց գետի աջ ափին ծվարած գերմանացիների հետ։

Սեպտեմբերի 28-ին Գարանյանի հրետանային հաշվարկը առաջադրանք է ստանում՝ գնդի առաջավոր խմբի հետ միասին, Չեռնիգովի ուղղությամբ անցնել Դնեպրը, հենակետ գրավել գետի աջ ափին և հնարավորություն ստեղծել ստորաբաժանման հիմնական ուժերի գետանցման համար։ Օգտագործելով ձեռքի տակ եղած բոլոր հնարավոր միջոցները, Գարանյանի հրետանավորները հաջողությամբ անցնում են գետը և ամրանալով նրա աջ ափին, մահացու կրակ են բացում հակառակորդի վրա։

Չնայած գազազած թշնամու կատաղի դիմադրությանը, Երվանդի հրետանավորները դիպուկ հարվածներով ոչնչացնում են հակառակորդի կենդանի ուժն ու տեխնիկան, իսկ այնուհետև գնդի մյուս ստորաբաժանումների հետ միասին ծավալում հարձակողական գործողությունները և հաջողությամբ կատարում մարտական առաջադրանքները։

Չեռնիգովի ազատագրման և Դնեպրն անցնելու ժամանակ ցուցաբերած հմտության, քաջության ու խիզախության համար ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1944 թվականի հունվարի 15-ի հրամանագրով, գվարդիայի ավագ Երվանդ Գևորգի Գարանյանին շնորհվեց Սովետական Միության Հերոսի կոչում։

Այդ լուրը խնդությամբ լցրեց Ե. Գարանյանի հայրենակիցների սրտերը։ Չէ՞ որ իրենց կոլտնտեսության անվանի նախագահը պատվով էր կատարել նաև իր հայրենասիրական պարտքը ռազմաճակատում։ Հերոսից ետ չէին մնում նաև նրա անդրանիկ որդին, քսանամյա ավագ լեյտենանտ Հովհաննես Գարանյանը՝ ռազմի դաշտում, իսկ ընտանիքի մյուս անդամները թիկունքում՝ կոլտնտեսային աշխատանքներում։

Սովետական Միության Հերոսի կոչմանն արժանանալու կապակցությամբ Ե. Գ. Գարանյանն իր հայրենակիցներին ուղարկած նամակում գրել է. «...Ես անսահման շնորհակալություն եմ հայտնում սովետական կառավարությանը, բոլշևիկյան պարտիային՝ իմ մարտական աշխատանքը բարձր գնահատելու համար։ Երդվում եմ, որ կրկնապատիկ ուժով, առանց խնայելու իմ կյանքն ու արյունը, կմասնակցեմ գերմանա-ֆաշիստական զավթիչների ջախջախմանը՝ հանուն մեր լիակատար հաղթանակի»։ Ե. Գարանյանը սովետական զորքերի հարձակողական հետագա մարտերում պատվով կատարեց իր խոստումը։

Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո, 1945 թվականի կեսերին Գարանյանը զորացրվում է բանակից և վերադառնում խաղաղ

ստեղծագործ աշխատանքի։ 1945—1948 թվականներին նա աշխատում է որպես Քրիստաֆորովկայի գյուղսովետի նախագահ, իսկ 1948—1951 թվականներին կոլտնտեսության նախագահ։

1951 թվականին Գարանյանը տեղափոխվում է Կրասնոդարի երկրամասի Ադլերի շրջանի Վեսյոլոյե գյուղը և ներկայումս աշխատում է որպես սովխոզի բրիգադիր։



# ԱՇԽԱՐՀԲԵԿ ՍԱՐԳՍԻ ՂԱԶԱՐՅԱՆ





## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում Հրամանատարության մարտական խնդիրներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել* Սովետական Միության Հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

*113. Սերժանտ* Աշխարհբեկ Սարգսի Ղազարյանին։

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 27 փետրվարի 1945 թ.։*





Աշխարհբեկ Սարգսի Ղազարյանը ծնվել է 1918 թվականին Լոռու գավառի Մարց գյուղում։ Այստեղ էլ, Լոռվա գեղատեսիլ բնության գրկում, նա անցկացնում է իր մանկությունը։ Աշխարհբեկին սկզբնական կրթությունն ստանում է Քոլագերանի (այժմ՝ Թումանյան) և Սանահինի երկաթուղային դպրոցներում։ 1938—1939 թվականներին Աշխարհբեկը որպես սպարավոր աշխատել է Քարերում։ 1939 թվականին նա ընդունվում է կոմերիտմիության շարքերը։

Սովետա-ֆիննական պատերազմի ժամանակ, 1940 թվականի ձմռանը, Աշխարհբեկը կամավոր մեկնում է սովետական բանակ և ծառայում երկաթուղային զորամասերում։

Հայրենական մեծ պատերազմի սկսվելուն պես, խիզախ լոռեցին ձգտում է անմիջապես մեկնել ռազմաճակատ։ Երբ սովետական զորքերը կովկասյան նախալեռներում կանգնեցրին գերմանացիների առաջխաղացումը և անցան ընդհանուր հակահարձակման, մարտերի մեջ է նետվում նաև կոմերիտական ավտոմատավոր Աշխարհբեկ Ղազարյանը։

1943 թվականի գարնանը կռիվներ էին ընթանում Հյուսիսային Կովկասի Կրիմսկայա կայարանում։ Ավտոմատավոր Ա. Ղազարյանն այստեղ հանդես է բերում մեծ հնարամտություն և համարձակություն։ Մարտերից մեկում գիշերով հարձակվելով թշնամու դնդացրորդի վրա, կարճ կրակահերթով Աշխարհբեկը շարքից հանում է նրան։ Այդ մարտերում աչքի ընկնելով, նա պարգևատրվում է Խիզախության համար մեդալով։ Սակայն շուտով նա վի-

թավարվում է։ Բուժվելուց հետո Աշխարհբեկը նորից մեկնում է ռազմաճակատ՝ այս անգամ մարտերի մեջ մտնելով Դոնբասում։ Այնուհետև Ղազարյանը հրամանատարության առաջադրանքը փայլուն կերպով է կատարում Դոնեցկ քաղաքի ազատագրման ժամանակ, որի համար էլ արժանանում է գերագույն գլխավոր հրամանատարության շնորհակալության։

Աշխարհբեկ Ղազարյանն իր ջոկով առաջիններից մեկն է գիշերով անցնում Դնեպր գետը, հենակետ գրավում աջ ափին և ետ մղելով հակառակորդի անընդհատ գրոհները, ամուր կերպով պաշտպանում այն, մինչև ստորաբաժանման հիմնական ուժերի գետանցումը։

Բարձր գնահատելով Ղազարյանի անձնական խիզախությունը, հրամանատարությունը նրան պարգևատրում է Կարմիր աստղի շքանշանով։ Հարվածելով նահանջող թշնամուն, սովետական զորքերը արագորեն դուրս են գալիս Ռումինիայի սահմանը։ Այս մարտերում ևս աչքի ընկնելով, Ղազարյանը արժանանում է Փառքի երրորդ աստիճանի շքանշանի։

Մարտերում կոփված սերժանտ Ղազարյանը բազմաթիվ սխրագործություններ է կատարել նաև Լեհաստանը ֆաշիստական լծից ազատագրելու ժամանակ։

1945 թվականի հունվարյան ցրտաշունչ օրերին Վարշավայի վոյևոդության Սոխաչևի գավառի Չերվինկա գյուղի շրջանում, գերմանացիների կողմից ամրացված և խոր էշելոնացված պաշտպանությունը ճեղքելու ժամանակ, սերժանտ Ղազարյանը, որպես հրաձգային դասակի հրամանատարի օգնական, դրսևորում է բացառիկ հերոսություն և արիություն։ Հունվարի 14-ին թեժ ու դաժան մարտ է տեղի ունենում։ Հակառակորդը կատաղի կերպով դիմադրում է, տեղ-տեղ անցնում հակագրոհի։ Աշխարհբեկին առաջադրանք է տրվում՝ մի ջոկատով անցնել վաշտի աջ թևը և գնդացրային կրակով իր վրա գրավել թշնամու ուշադրությունը։ Աննկատելիորեն դուրս գալով մոտակա անտառի եզրը, Ղազարյանը մարտի է բռնվում քանակապես գերակշռող հակառակորդի հետ։ Սակայն գնդացրի փամփուշտներն արդեն վերջանալու վրա էին։ Անմիջապես գնահատելով ստեղծված իրադրությունը, սերժանտը «Հանուն հայրենիքի» գոչելով, ոտքի է հանում իր մարտիկներին և նետվում առաջ՝ գործի դնելով ավտոմատները, հրացաններն ու նռնակները։ Այդ կարճատև, բայց թեժ մարտում Ղազարյանի ջոկատի մարտիկները՝ ուկրաինացի Արխիմենկոն, ռուս Պոլյակը և ուրիշներ, ոչնչացնում են մի քանի տասնյակ ֆաշիստների։ Ղազարյանն անձամբ ավտոմատային կրակով սպանում է 30 հիտլերական, իսկ նռնակներով ոչնչացնում երկու հաստոցավոր գնդացիր։ Իր համարձակ, վճռական ու խիզախ գործողությամբ Ղազարյանն ապահովում է ստորաբաժանման սրընթաց առաջխաղացումը։ Գերմանացիները խուճապահար դիմում են նահանջի՝ մարտի դաշտում թողնելով մեծ քանակությամբ սպանվածներ ու տեխնիկա։ Մարտական այս սխրագործությունների համար, ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1945 թվականի փետրվարի 27-ի հրամա-

նացրով, Աշխարհբեկ Ղազարյանին շնորհվեց Սովետական Միության Հերոսի կոչում:

Ոգեշնչված կառավարական բարձրագույն պարգևով, Աշխարհբեկը այնուհետև նորանոր սխրանքներ կատարեց գերմանական ֆաշիստների ջախջախման հերոսամարտերում և Բեռլինի գրավման համար մղած պատմական ճակատամարտում:

Բազմաթիվ են Աշխարհբեկի կատարած մարտական քաջագործությունները, որոնց համար նրա կուրծքը զարդարում են Լենինի, Կարմիր աստղի, Փառքի երրորդ աստիճանի, Բոգդան Խմելնիցկու շքանշանները, Կովկասի պաշտպանության, Հերոսի «Ոսկե աստղ», Խիզախության համար և այլ մեդալներ: Մի շարք օպերացիաներում աչքի ընկնելու համար նա 12 անգամ արժանացել է գերագույն գլխավոր հրամանատարության շնորհակալությանը, բազմիցս նշվել և խրախուսանքներ է ստացել վերադաս հրամանատարության կողմից:

1946 թվականին Աշխարհբեկ Ղազարյանը զորացրվում է բանակից և աշխատանքի անցնում Ալավերդու շրջանի Թումանյանի ավանային սովետում որպես կոմունալ բաժնի վարիչ, ապա ընտրվում ավանային սովետի գործկոմի նախագահ:

1950 թվականի սեպտեմբերին Ղազարյանը գործուղվում է սովորելու ՀԿԿ Կենտկոմին կից պարտիական դպրոցում, որն ավարտելուց հետո վերադառնում է նախկին աշխատանքին: 1955 թվականի մարտին նա աշխատանքի է անցնում Հրակայան ալյուրի գործարանում, սկզբում որպես խառնող, ապա ընտրվում է գործարկոմի նախագահ:



# ԱՆԴՐԵՅ ԽԱՉԻԿԻ ՄԵԼՔՈՆՅԱՆ





## ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի գեներալներին, սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել* Սովետական Միության հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

*30. Գվարդիայի ավագ սերժանտ* Անդրեյ Խաչիկի Մելքոնյանին:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 13 սեպտեմբերի 1944 թ.։*






Անդրանիկ Խաչիկի Մելքոնյանը ծնվել է 1915 թվականին Կուբանի Բեզիմյաննի վոլոստի Մելկանով խուտորում։ 1925—1931 թվականներին նա սովորել է տեղի դպրոցում, ապա աշխատել է խուտորի Վ. Ի. Լենինի անվան կոլտնտեսությունում։ 1937 թվականին Մելքոնյանը զորակոչվում է սովետական բանակ։ Նա մասնակցում է Արևմտյան Ուկրաինայի ու Արևմտյան Բելոռուսիայի ազատագրման մարտերին և սովետա-ֆիննական պատերազմին։ Այստեղ էլ Անդրանիկը վիրավորվում է և ուղարկվում բուժման։ Ապաքինվելուց հետո նա ուղարկվում է Հայաստանում գտնվող զորամասերից մեկը, ուր ծառայում է մինչև 1942 թվականի մայիսը և այնուհետև մեկնում է ռազմաճակատ։

Ավագ սերժանտ Անդրանիկ Մելքոնյանը հիտլերյան զորքերի ջախջախմանը մասնակցել է կովկասյան լեռներում և Վոլգոգրադի տափաստաններում, Ռոստովի, Խարկովի, Կուրսկի և Դոնբասի շրջաններում, Դոնի ու Դնեպրի ափերին։ Այդ մարտերում աչքի ընկնելու համար սակրավոր Մելքոնյանը պարգևատրվել է Կարմիր աստղի, Փառքի երկրորդ և երրորդ աստիճանի շքանշաններով, խիզախության համար և այլ մեդալներով։ Նա զորամասում ճանաչված էր որպես գետանցումների հմուտ վարպետ և խիզախ հետախույզ։

1944 թվականի գարնանը Ուկրաինական երրորդ ռազմաճակատի 15-րդ գվարդիական խարկովյան Լենինի շքանշանակիր հրաձգային դիվիզիան, որտեղ ծառայում էր գվարդիայի ավագ սերժանտ Անդրանիկ Մելքոնյանը, որպես ջոկի հրամանատար, կատաղի մարտեր էր մղում Դնեստր գետի ափին։ 1944 թվականի ապրիլի 16-ի լույս 17-ի գիշերը կոմունիստ Մելքոնյանի գետանցային նավակի անձնակազմի առջև խնդիր է դրվում ստորաբաժանումները փոխադրել Դնեստրի աջ ափը։ Երկու անգամ սահուն նավակը հաջող կերպով գետանց է տեղափոխում մյուս ափը, բայց երրորդ անցի ժամանակ, թշնամին նկատում և փոթորկալի հրանոթային ու գնդացրային կրակ է բացում նավակի գետանցման ուղղությամբ։ Լուսարձակային հակառակորդն ավելի է ուժեղացնում հրետանային կրակը, որի հետևանքով նավակը վնասվում է։ Նավակում էին գտնվում մի քանի վիրավոր զինվորներ։ Հենց ընթացքի ժամանակ վերանորոգելով նավակը, վիրավորներին հասցվում են գետի ձախ ափը։ Գիշերը Մելքոնյանի ջոկի մարտիկները նավակով, թշնամու կրակի տակ կատարում են 15 գետանցում, գետի աջ ափը տեղափոխելով ստորաբաժանումներն ու ռազմամթերքը։ Լուսաբացին, ականի պայթյունի հետևանքով, ափից ոչ հեռու, շարքից դուրս է գալիս նավակը։ Մելքոնյանը հնարամտորեն, անձնակազմի հետ միասին, ջրից դուրս է բերում նավակը և հասցնում ափ։ Այդ օպերացիայի ընթացքում նավակով կատարվում է 144 գետանցում և Դնեստրի աջ ափը տեղափոխվում մոտավորապես 1000 մարդ, ավելի քան 1500 արկղ ռազմամթերք։ Միաժամանակ գետի ձախ ափ է դուրս բերվում մոտ 100 վիրավոր մարտիկ։

Դնեստրի գետանցման ժամանակ հրամանատարության առաջադրանքը գերազանց կատարելու, ստորաբաժանումները ճիշտ ժամանակին, միակ նավակով գետի արևմտյան ափը տեղափոխելու և ցուցաբերած անձնական խիզախության ու արիության համար գվարդիայի ավագ սերժանտ Անդրանիկ Խաչիկի Մելքոնյանին ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1944 թվականի սեպտեմբերի 13-ի հրամանագրով շնորհվում է Սովետական Միության Հերոսի կոչում։

1945 թվականի հունվարին սովետական բանակի 27-րդ տարեդարձի առթիվ 15-րդ գվարդիական խարկովյան դիվիզիայի պատվիրակության կազմում Հայաստան է ժամանում նաև Սովետական Միության Հերոս, սակրավոր Անդրանիկ Մելքոնյանը և հանդիպումներ ունենում Սովետական Հայաստանի աշխատավորության հետ։

Վերադառնալով ռազմաճակատ՝ Մելքոնյանն էլ ավելի մեծ ոգևորությամբ և մոտալուտ հաղթանակի նկատմամբ լի հավատով շարունակում է պայքարը հանուն գերմանական ֆաշիզմի լիակատար ջախջախման։

Հայրենական պատերազմի հաղթական ավարտից հետո գվարդիայի ավագ Անդրանիկ Մելքոնյանը զորացրվում է սովետական բանակի շարքերից և բնակություն հաստատում Կրասնոդարի երկրամասի Տուապսեի շրջանի Նովո-Միխայլովկա գյուղում, որ և ապրում է ներկայումս։



# ԻՇԽԱՆ ԲԱՐՍԵՂԻ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ



## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար շնորհել* Սովետական Միության Հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

*Ավագ սերժանտ* Իշխան Բարսեղի Սարիբեկյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 24 մարտի 1945 թ.*






Իշխան Բարսեղի Սարիբեկյանը ծնվել է 1912 թվականին Բարանայի (այժմ Նոյեմբերյանի) շրջանի Ղոշղոթան գյուղում, չքավոր գյուղացու ընտանիքում։ Երկու տարեկան հասակում Իշխանը զրկվում է հորից։ Ընտանիքի հոգսը ստիպում է փոքրիկ Իշխանին զբաղվել ֆիզիկական ծանր աշխատանքներով։ 1924 թվականին Սարիբեկյանն ընդունվում է դպրոց, սակայն չորրորդ դասարանից դուրս է գալիս և ուսումը շարունակում աշխատանքին զուգընթաց։ Այնուհետև նա սովորում է այգեպտղաբուծական տեխնիկումում։ 1928 թվականին Սարիբեկյանն ընդունվում է ՀամԼԿԵՄ շարքերը։ Հետագայում նա աշխատում է Իջևանի շրջանի մի շարք հիմնարկներում։

1941 թվականի մայիսի 15-ին Իշխան Սարիբեկյանը զորակոչվում է սովետական բանակ։ 1942 թվականի գարնանը նա առաջին անգամ մտնում է մարտերի մեջ և աչքի ընկնում որպես հմուտ գնդացրորդ ու հետախույզ։

Բազմաթիվ են Սարիբեկյանի կատարած մարտական սխրագործությունները Հայրենական պատերազմի ռազմաճակատներում, թե՛ Հյուսիսային Կովկասում կատարած ժամանակավոր նահանջի օրերին, երբ թշնամին հասավ մինչև Օրջոնիկիձե քաղաքը, թե՛ Թերեքի ափերին՝ 1943 թվականի սկզբներին ծավալված ընդհանուր հարձակման օրերին, երբ խիզախ գնդացրորդը, ամբողջ զորամասում հռչակված էր որպես ամենավտանգավոր առաջադրանքների փայլուն կատարող։

Մի անգամ, հակառակորդի ուժերի դասավորությունն իմանալու համար, խիստ անհրաժեշտ էր հետախուզություն կատարել թշնամու պաշտպանության ընագծում: Առաջադրանքի կատարումը հանձն է առնում ավագ սերժանտ Սարիբեկյանը[1] վեց մարտիկների հետ միասին: Մոտենալով հակառակորդի դիրքերին, հետախույզները հանդիպում են գերմանական պահակությանը: Հիտլերականները նրանց վրա ուժեղ գնդացրային կրակ են բացում: Բայց հետախույզներն իրենց չեն կորցնում, գործի են դնում ավտոմատներն ու նռնակները և թշնամուն հարկադրում մարտի բռնվել: Հիտլերականները չդիմանալով խիզախ ռազմիկների ճնշմանը, փախուստի են դիմում՝ կռվի դաշտում թողնելով մեծ քանակությամբ զենք ու ռազմամթերք: Այդ կարճատև ընդհարման հետևանքով Սարիբեկյանի ղեկավարած հետախույզների խումբը գրավում է գերմանացիների խրամատները, ինչպես նաև հինգ ձեռքի գնդացիր, 17 հրացան, 15.000 փամփուշտ, ռադիոկայան, 10 արկղ գնդացրային ժապավեն և գերի է վերցնում մի քանի գերմանացիների:

Իշխան Սարիբեկյանը մասնակցել է նաև Դոնեցկի ու Զապորոժիեի մարզերի և սովետական այլ տերիտորիաների, քաղաքների ու բնակավայրերի ազատագրման համար մղած մարտերին:

Նրա անունը անթառամ փառքով պսակվեց 1944 թվականին Սևաստոպոլի մատույցներում, Սապուն Գորայի համար մղված մարտերում:

Այն զորամասը, որտեղ ծառայում էր Սարիբեկյանը, 1944 թվականի մարտին տեղափոխվում է Ղրիմ: Մոտ մեկ ամսվա ընթացքում զորամասը նախապատրաստվում է հարձակողական մարտերի: Սարիբեկյանը հանդես է գալիս որպես ավտոմատավորների դասակի հրամանատար և որոշ ժամանակ ղեկավարում է վաշտը: Մայիսի 7-ին, վճռական գրոհի գիշերը, Սարիբեկյանն ընդունվում է ՍՄԿԿ շարքերը: Նույն օրը սկսվում է գրոհը Սապուն Գորայի վրա: Կռվի ընթացքում Սարիբեկյանն իր ղեկավարած անձնակազմով բավական առաջ անցնելով և հմտորեն փոփոխելով կրակային դիրքերը, ոչնչացնում է հակառակորդի հինգ կրակային կետ, մի քանի տասնյակ զինվոր ու սպա, ապահովում գրոհող հետևակի հաջող առաջխաղացումը դեպի թշնամու պաշտպանության առաջին գիծը: Երբ թշնամու գնդակից զոհվում է գնդացրորդներից մեկը, Սարիբեկյանը փոխարինում է նրան և գնդացրի կրակահերթով ոչնչացնում հակառակորդի ավելի քան 20 զինվոր: Սակայն շուտով թշնամու գնդակը վիրավորում է Սարիբեկյանին՝ ձախ թևից: Հաղթահարելով այրող ցավը, նա մարտիկներին գրոհի է տանում: Հասնելով հակառակորդի խրամատներին, Սարիբեկյանն առաջինն է մխրճվում նրա պաշտպանության երկրորդ գծի մեջ և առողջ ձեռքով նռնակներ նետում հիտլերականների վրա: Այն պահին, երբ հակառակորդի գնդացրային փոթորկալի կրակը գրոհող սովետական հետևակայիններին սեղմել էր գետնին, Սարիբեկյանը, արհամարհելով մահը, վիրավոր վիճակում, սողալով հասնում է դզոտի հրակ-

*նարին և նռնակներ նետում ներս։ Այդ հանդուգն քայլով Սարիբեկյանն ապահովում է ստորաբաժանման առջև դրված խնդիրների կատարումը։*

*Մարտական այս սխրագործության համար ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1945 թվականի մարտի 24-ի հրամանագրով ավագ Իշխան Բաբկենի Սարիբեկյանին շնորհվում է Սովետական Միության հերոսի կոչում։*

*Ի. Բ. Սարիբեկյանը մասնակցում է նաև Մերձբալթիկան գերմանական ֆաշիստներից ազատագրելու համար մղված մարտերին և Հայրենական պատերազմն ավարտում է Լիբավա քաղաքում։*

*1945 թվականի վերջերին Իշխան Սարիբեկյանը զորացրվում է բանակից և վերադառնում Հայաստան։*



# ՀՄԱՅԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՍՆՈՊԼՅԱՆ





## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**Կարմիր բանակի սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու մասին**

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել* Սովետական Միության Հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

*Գվարդիայի ավագ Հմայակ Հարությունի Սնոպլյանին:*

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 24 մարտի 1945 թ.:*





Հմայակ Արմենի-Հարությունի Սնոպյանը ծնվել է 1907 թվականին Կրասնոդարի երկրամասի Տուապսեի շրջանի Աֆիպսիպի գյուղում, ուր, տարիներ առաջ փախչելով թուրքական վայրագություններից, բնակություն էին հաստատել նրա պապը և հայրը։

Հմայակը մի քանի տարի սովորել է գյուղի հայկական դպրոցում, որի փակվելու հետևանքով նա չի կարողանում շարունակել ուսումը։

1921 թվականին Հմայակի ծնողները մահանում են։ Նա մնում է ավագ եղբոր խնամքի տակ և վաղ հասակից սկսում է աշխատել։

1930 թվականին Աֆիպսիպում կազմակերպվում է կոլտնտեսություն, և Հմայակ Սնոպյանը դառնում է բրիգադիր։ 1932 թվականին նա ընտանիքով տեղափոխվում է Բելորեչենսկի շրջանի Սադլացկի գյուղի «Կրասնայա զվեզդա» կոլտնտեսությունը, ուր 1938 թվականից մինչև Հայրենական պատերազմի սկիզբը աշխատում է որպես կոլտնտեսության նախագահ։

1941 թվականի օգոստոսին կոմունիստ Հմայակ Հարությունի Սնոպյանը համալրում է Հայրենիքի պաշտպանների շարքերը։ Ականանետի հաշվարկի հրամանատար եֆրեյտոր Սնոպյանն առաջին անգամ մարտի մեջ է մտնում 1942 թվականի հունվարի վերջերին՝ Ստարայա Ռուսայի շրջանում։ Յուրև

գյուղը ազատագրողների մեջ էր Սնապյանի ղեկավարած հաշվարկը, որը այդ ժամանակ ոչնչացնում է հակառակորդի երկու գնդացրային կետ և մեկ հրանոթ իր հաշվարկով։ Փետրվարի 8-ի մարտերից մեկում նա վիրավորվում է։

1942 թվականի մայիսից Սնապյանը միաժամանակ քաղաքական աշխատող էր, ապա վաշտի պարտիական կազմակերպիչ։

1943 թվականի մարտին Արևմտյան ռազմաճակատում Սնապյանի հաշվարկը մասնակցում է թշնամու Ռժև-Վյազմա հենակետի լիկվիդացման մարտերին և Ռժև քաղաքի ազատագրմանը, իսկ օգոստոս-սեպտեմբերին՝ Սմոլենսկի ուղղությամբ մղված կռիվներին։ Այդ մարտերում Սնապյանի հաշվարկը ոչնչացնում է թշնամու երկու տանկ։

Ռազմաճակատի Օրշա-Վիտեբսկ հատվածում այն դիվիզիոնը, որի կազմում էր Սնապյանի հաշվարկը, պաշտպանում է խճուղին, որտեղ տեղի է ունենում ուժեղ մարտ։ Գերմանական տասնյակ տանկեր, անցնելով հարձակման, լուրջ սպառնալիք են ստեղծում մեր զորամասերի համար։ Այդ կռվում դիվիզիոնը խփում է հակառակորդի 12 տանկ, որից երեքը՝ Սնապյանի հաշվարկը։ Բայց Հմայակը ծանր վիրավորվում է։ Գերմանական մեծաքանակ տանկերի հարձակումը հաջողությամբ ետ մղելու մարտերին ակտիվորեն մասնակցելու համար նա պարգևատրվում է Կարմիր աստղի շքանշանով։

1944 թվականի փետրվարին ավագ Սնապյանը ջոկի հրամանատար էր և վաշտի պարտկազմակերպիչ։

Նույն թվականի հունիս-հուլիս ամիսներին Բելոռուսական երրորդ ռազմաճակատում 26-րդ գվարդիական դիվիզիայի 77-րդ գնդի 1-ին գումարտակի կազմում վաշտը մասնակցում է բելոռուսական և լիտվական քաղաքների ու գյուղերի ազատագրմանը։ Հուլիսի 14-ին վաշտը մարտեր է մղում Գրոդնո-Վիլնյուս խճուղին անցնելու և Նեման գետը հաղթահարելու համար։ Այդ մարտերում Սնապյանը ոչնչացնում է մի քանի հիտլերականի։ Խճուղու համար կռիվը դեռ չվերջացած, վաշտն առաջադրանք է ստանում հասնել Նեման գետը, որը երկու կիլոմետր հեռավորության վրա էր, և հենակետ գրավել նրա հակառակ ափին։ Այդ կարճ տարածության վրա վաշտի մարտիկները մի քանի անգամ ընդհարվում են հակառակորդի զինվորների հետ, որոնք փակում էին վաշտի առաջխաղացումը դեպի գետը։ Ընդհարումների ժամանակ վաշտի պարտկազմակերպիչն անձամբ ոչնչացնում է ևս երկու ֆաշիստական զինվոր և գրավում ձեռքի մեկ գնդացիր։ Վաշտի կողմից գետն անցնելու առաջին փորձն անցնում է անհաջող։ Լաստով լողացող մեր երեք մարտիկներին ջրի հոսանքը հեռացնում է զառիթափի սահմաններից և դուրս բերում բաց տեղ՝ թշնամու կրակակետերի դիմաց։ Սնապյանը իր հետ վերցնելով ավտոմատը, երեք նռնակ և հետախուզային կարթը, որը մեր մարտիկների համար պետք է ծառայեր որպես գետն անցնելու միջոց, լողում է դեպի մյուս ափը և կարողանում է դուրս գալ նախատեսված վայրը։ Թշնամին նկատում է այդ և անցնում հարձակման։ Սնապյանին օգնության են գալիս երեք մարտիկներ, որոնք

*պոնտոնային նավակով գետի արևմտյան ափն են տեղափոխում մեկ հաստոցավոր գնդացիր և անցկացնում նոր հետախուզախումբ: Անոպյանը, իր մարտիկների հետ խիզախությամբ դիմագրավում է հակառակորդի գերակշռող ուժերին, նրանց պատճառելով մեծ կորուստ: Այդ ժամանակ ամբողջ վաշտն անցնում է Նեմանը և գրոհում հակառակորդի վրա:*

*Գումարտակի մյուս վաշտերը, ավարտելով խճուղու գրավումը, մոտենում են գետին, սակայն այն անցնել չեն կարողանում, որովհետև թշնամին գետը պահում էր հրետանային գնդակոծության տակ: Մարտիկ Մինինի հետ միասին Անոպյանը մեկնում է հետախուզության՝ հակառակորդի կրակակետերը հայտնաբերելու համար: Հետախուզության տվյալների օգնությամբ մեր հրետանին լռեցնում է թշնամու կրակակետերը: Մեր մյուս ստորաբաժանումները հնարավորություն են ստանում անցնել գետը:*

*Հրամանատարության առաջադրանքը կատարված էր:*

*Զինվորական «Դեպի գրոհ» թերթը Անոպյանի այդ սխրագործության լուսաբանմանը նվիրելով մի ամբողջ էջ, գրել է. «Թշնամու կրակի տակ նա առաջինը լողաց լայն Նեմանը, իր խիզախությամբ ապահովեց գետանցման հաջողությունը և հենակետի նվաճումը գետի արևմտյան ափին»:*

*Նեմանի հենակետի համար մղված մարտերում ցուցաբերած անձնական խիզախության համար ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1945 թվականի մարտի 24-ի հրամանագրով վաշտի պարտկազմակերպիչ, ավագ Հմայակ Անոպյանին շնորհվում է Սովետական Միության Հերոսի կոչում:*

*Կոմունիստ Անոպյանն այնուհետև մասնակցում է Արևելյան Պրուսիայում գերմանացիների երկարատև խոր էշելոնացված պաշտպանությունը ճեղքելու մարտերին, ինչպես և Ինստերբուրգ, Քյոնիգսբերգ քաղաքների և Պիլլաու նավահանգստի գրոհներին, արժանանալով Գերագույն գլխավոր հրամանատարության շնորհակալագրերին:*

*1945 թվականի նոյեմբերին Սովետական Միության Հերոս Հմայակ Անոպյանը զորացրվում է բանակից և վերադառնում Կրասնոդարի երկրամաս, որտեղից մեկնել էր բանակ:*

*Հմայակ Հարությունի Անոպյանն այժմ աշխատում է Գորյաչի-Կլյուչի սպառկոոպմիությունում:*



# ԱՐՍԵՆ ԱՐԱՄԻ ՏԵՐ-ՕԳԱՆՈՎ



## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**Կարմիր բանակի սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու մասին**

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում Հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել* Սովետական Միության Հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

*284. Գվարդիայի ավագ* Արսեն Արամի Տեր-Օգանովին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 27 փետրվարի 1945 թ.:*







Սովետական Միության Հերոս Արսեն Արամի Տեր-Օհանյանը ծնվել է 1923 թվականին Բաքու քաղաքում, ծառայողի ընտանիքում։ Սկզբնական կրթությունն ստացել է Բաքվի № 133 լրիվ միջնակարգ դպրոցում։ Փոքր հասակից Արսենը սիրով զբաղվել է սպորտով։ 1941 թվականի հունիսին Արսենը ավարտելով դպրոցը, կամավոր մեկնում է բանակ՝ ընդունվում Բաքվի զենիթա-հրետանային ուսումնարանը, իսկ 1942 թվականին գործուղվում է Բաքվի հակաօդային պաշտպանության զորամասերում ծառայելու։

1942 թվականի վերջերին Արսենն արդեն մասնակցում է Հյուսիսային Կովկասում՝ Սալսկի լայնարձակ տափաստաններում մղվող արյունահեղ կռիվներին։ Շուտով նա նշանակվում է հրաձգային դասակի հրամանատար։

1943 թվականի օգոստոս-սեպտեմբերին Տեր-Օհանյանի դասակը կռվում էր Խարկովի և Պոլտավայի միջև ընկած շրջանում, որտեղ թշնամին մեծաքանակ տանկերի օգնությամբ համառ դիմադրություն էր ցույց տալիս սովետական զորքերին։ Այդ մարտերից մեկում Տեր-Օհանյանը կոնտուզիա է ստանում և ժամանակավորապես դուրս գալիս մարտադաշտից։ 1944 թվականի հունվարին Արսենը վերադառնում է նույն զորամասը և փետրվարին մաս-



270—23

նակցում Կորսուն-Շևչենկովսկիի շրջանում շրջապատված գերմանա-ֆաշիստական զորքերի ջախջախմանը։ Այստեղ Արսեն Տեր-Օհանյանը վիրավորվում է երկրորդ անգամ։ Բուժվելուց հետո, գվարդիական 94-րդ հրաձգային դիվիզիայի 288-րդ Քիշինևյան գնդի 3-րդ գումարտակում նշանակվում է գնդացրային ջոկի հրամանատար և մասնակցում Բալտա և Կոտովսկ քաղաքների համար մղված մարտերին։ Համառ մարտերից մեկում Տեր-Օհանյանը կրկին վիրավորվում է։ Հաղթահարելով ցավը՝ նա շարունակում է ղեկավարել ջոկի գործողությունները։ Հաջող կերպով անցնելով ականներով և փշալարերով պատված առաջադաշտով, Տեր-Օհանյանի մարտիկները կռվի են բռնվում հակառակորդի ջախջախված ուժերի մնացորդների դեմ։ Գնալով, կռիվը կատաղի բնույթ էր ստանում։ Թշնամու գերակշռող ուժերը, չնայած իրենց մեծ կորուստներին, ջանում էին ոչնչացնել սովետական ռազմիկներին։ Սակայն այդ նրանց չի հաջողվում։ Տեր-Օհանյանը մասնակցում է նաև հակառակորդի Յասսի-Քիշինևյան խմբավորման ջախջախմանը։ Նա 1944 թվականին ընդունվում է ՍՄԿԿ շարքերը և որպես կոմունիստ մասնակցում Լեհաստանի ազատագրմանը։

1945 թվականի հունվարյան հաղթական մարտերում գվարդիական 44-րդ հրաձգային դիվիզիայի վաշտերից մեկը առաջինն է ճեղքում թշնամու կարևոր ջրային արգելքը և անցնում Պիլիցա գետը ու ամրանում է գետի արևմտյան ափին։ Թշնամին ձեռնարկում է մի շարք գրոհներ՝ ջանալով գվարդիականներին թափել ջուրը։ Հակառակորդի մի գումարտակ ինքնագնաց հրանոթի պաշտպանությամբ անցնում է հարձակման։ Գվարդիական հրաձիգները, բացի Տեր-Օհանյանի «մաքսիմից», ուրիշ գնդացիրներ չունեին և դեռ չէին խրամատավորվել։ Սակայն նրանք չեն շփոթվում, թշնամու դեմ կռվում են քաջաբար։ Մարտիկ Իվան Բոյկոն վազում է դեպի գնդացիրը և Արսենի հետ միասին նետվում առաջ, դեպի թշնամին։ Արսենը մի քարե պատնեշի հետևում հարմար դիրք է գրավում, իսկ նշանառուներ Չերնեցկին և Սոբուտինսկին, տեղափոխելով գնդացիրը, սպասում են հիտլերականների մոտենալուն։ Երբ հարմար պահը մոտենում է, նրանք գնդացրային կրակով շարքից հանում են քսան հիտլերականի, փակում դեպի վաշտի դիրքերը տանող ճանապարհը և նրանցից խլում հարձակման նախաձեռնությունը։ Դրանից հետո վաշտի մարտիկները ավտոմատային, հրացանային ուժեղ կրակով անցնում են հարձակման և պարտության մատնում թշնամու գերակշռող ուժերին։

Վիսլայի ձախ ափին, Սանդոմիրի մոտ հակառակորդի խիստ ամրացված գիծը ճեղքելու, Պիլիցա գետն անցնելու և նրա ձախ ափին հենակետ ստեղծելու գործողությունների ժամանակ ցուցաբերած հերոսության համար ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1945 թվականի փետրվարի 27-ի հրամանագրով գնդացրային վաշտի ավագ Արսեն Տեր-Օհանյանին շնորհվում է Սովետական Միության հերոսի կոչում։ Թշնամու Սանդոմիրյան խմբավորումը ջախջախելուց հետո գնդացրային վաշտը մարտերով անցնում է Լեհաստանի տերիտորիայով և առաջիններից մեկը մտնում գերմանական Պոմերանիա։

1945 թվականի հունվարյան հարձակողական մարտերում Արսեն Տեր-Օհանյանի ցուցաբերած սխրագործությունների մասին միավորման հրամանատար գեներալ-մայոր Գասպարյանը գրել է. «...Հունվարյան հարձակման 15 օրում նա իր հաստատակամ գնդացրով անցել է 570 կիլոմետր մարտական ուղի, ոչնչացնելով տասնյակ հիտլերականների։ Նա թշնամուն հարվածում էր հմտորեն և քաջաբար, ֆաշիստներին հասցնելով հսկայական կորուստ։

Տեր-Օհանյանի սխրանքների փառքը տարածվել է միավորման սահմաններից շատ հեռու»։

Մի շարք քաղաքների ազատագրման և գրավման ժամանակ մարտական առաջադրանքները հաջողությամբ կատարելու համար Արսեն Տեր-Օհանյանը վերադասի հրամանատարության կողմից արժանացել է 19 շնորհակալագրի։ Նա մասնակցել է Օդերը գետանցելու և նրա ձախ ափին հենակետ ստեղծելու, ապա Բեռլինի գրավման մարտերին։

1946 թվականին Տեր-Օհանյանը զորացրվում է և վերադառնում Բաքու։ Նույն թվականին նա ընդունվում է Բաքվի ինդուստրիալ ինստիտուտի նավթամեխանիկական ֆակուլտետը։ Արսենն ինստիտուտը ավարտում է 1952 թվականին և ավագ ինժեներ է նշանակվում ՍՍՌՄ նավթարդյունաբերության մինիստրության նավթահանույթի մեքենա-վերանորոգման տրեստում։ Տեր-Օհանյանն այժմ աշխատում է Ադրբեջանական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր պետական անվտանգության կոմիտեում։



# ԱՎԱԳ ՎԱՐԴԱՆԻ ԱՆՏԻՆՅԱՆ



## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ *

Կարմիր բանակի գեներալներին, սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար շնորհել* Սովետական Միության Հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

5. *Ավագ* Ավագ Վարդանի Անտինյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 23 սեպտեմբերի 1944 թ.:*





**1941** թվականի հունիսին, երբ գերմանա-ֆաշիստական զավթիչները հարձակվեցին մեր Հայրենիքի վրա, Ավագ Վարդանի Անտինյանը գտնվում էր զինվորական պարտադիր ծառայության մեջ։

Ավագ Անտինյանը ծնվել է 1917 թվականի հունվարի 15-ին Ղարաքիլիսայի (այժմ Կիրովական) շրջանի Համզաչիման գյուղում, միջակ գյուղացու ընտանիքում։

1931 թվականին Ա. Անտինյանը սկսում է աշխատել սկզբում կոլտնտեսության դաշտավարական բրիգադում, ապա անասնապահական ֆերմայում՝ մինչև 1939 թվականը։ Այդ թվականի փետրվարին նա զորակոչվում է սովետական բանակ։ Երբ սկսվում է Հայրենական մեծ պատերազմը, նրանց զորամասը գտնվում էր Զապորոժիե քաղաքում։ Հունիսի 27-ին զորամասը մեկնում է ռազմաճակատ և մարտեր սկսում Շեպետովկա քաղաքի մոտ։

Բելայա-Ցերկովի ուղղությամբ տեղի ունեցած մարտերում Ա. Անտինյանը վիրավորվում է և ուղարկվում բուժվելու։ Բուժվելուց հետո նա նշանակվում է մի այլ զորամաս, որը շուտով մարտերի մեջ է մտնում Լենինգրադի ռազմաճակատում՝ Ստարայա Ռուսայի ուղղությամբ։

1942 թվականի մայիսին հրանոթի անձնակազմի հրամանատար Ա. Ան-

տինյանը ավագ սերժանտ էր։ Նա իր ստորաբաժանումով ոչնչացնում է հակառակորդի երեք գնդացրային կետ և մի քանի ավտոմատավորի։ Մարտական այդ գործողության համար ավագ սերժանտը գվարդիայի հրամանատարությունից ստանում է շնորհակալություն։ Այդ մարտերից մեկում Ա. Անտինյանը կրկին վիրավորվում է։

1943 թվականին նա ընդունվում է ՍՄԿԿ շարքերը։ Նույն տարվա սկզբին նրանց զորամասը կռվում է Վորոնեժ-Կաստոռնի-Բելգորոդի ուղղությամբ, ուր Անտինյանը վիրավորվում է երրորդ անգամ։ Բուժվելուց հետո նա մեկնում է իր նախկին զորամասը։ Վորոնեժ-Կաստոռնի-Բելգորոդի ուղղությամբ մղված մարտերին ակտիվ մասնակցություն ունենալու համար նրանց գունդը պարգևատրվում է Կարմիր դրոշի շքանշանով ու արժանանում գվարդիական կոչման, իսկ մի խումբ մարտիկների թվում նաև Անտինյանը պարգևատրվում է Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանով։ Այնուհետև Անտինյանի հրանոթի անձնակազմը մասնակցում է Չերնովիցի քաղաքի ազատագրմանը և Բուգ ու Սան գետերի գետանցմանը։

1944 թվականի հունիսին Անտինյանի ղեկավարած հրանոթի անձնակազմը գտնվում էր Յարոսլավից 7 կիլոմետր հեռավորության վրա։ Մարտերից մեկում հրանոթի վրա հարձակվում են թշնամու 15 տանկ։ Սկսվում են համառ և անհավասար մարտեր։ Հրանոթի անձնակազմը, մյուս ստորաբաժանումների օգնությամբ, ոչնչացնում է թշնամու 15 տանկ և հրետանային մեկ մարտկոց։ Այդ կռվում Անտինյանը ոչնչացնում է 8 տանկ։ Մարտական այդ համարձակ գործողությամբ ճանապարհ է բացվում գվարդիայի համար։ Յարոսլավ քաղաքի շրջանում մղված համառ մարտերում ցուցաբերած խիզախության, հերոսության համար ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1944 թվականի սեպտեմբերի 23-ի հրամանագրով Ավագ Վարդանի Անտինյանին շնորհվում է Սովետական Միության Հերոսի կոչում։

Ա. Անտինյանի հետ միասին Սովետական Միության Հերոսի բարձր կոչման է արժանանում նաև նրա ղեկավարած հրանոթի անձնակազմից նշանառու Ալեքսանդր Գորևը։

1945 թվականի մարտին Ա. Անտինյանը վերադառնում է հայրենի Համզաչիման գյուղը։ 1947—1950 թվականներին նա աշխատում է որպես գյուղսովետի գործադիր կոմիտեի նախագահ, այնուհետև կոլտնտեսության վարչության նախագահի տեղակալ՝ մինչև 1952 թվականը։ 1952 թվականից մինչև այժմ Ա. Անտինյանը Համզաչիմանի ավանային սովետի գործադիր կոմիտեի նախագահն է։



# ՍՈՒՐԵՆ ՍՄԲԱՏԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ




## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի գեներալներին, սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար,* շնորհել Սովետական Միության հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

*7. Ավագ սերժանտ* Սուրեն Սմբատի Առաքելյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 16 մայիսի 1944 թ.:*







Սոցիալիստական Հայրենիքի ազատության և անկախության համար մղած մարտերում աչքի ընկած ծառայությունների համար ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1944 թվականի մայիսի 16-ի հրամանագրով հետմահու Սովետական Միության հերոսի կոչման արժանացավ սերժանտ Սուրեն Սմբատի Առաքելյանը։

Առաքելյանը ծնվել է 1911 թվականին Գորիսի շրջանի Տաթև գյուղում։ Փոքր հասակից նա աչքի է ընկնում ճարպկությամբ, անվախությամբ և համարձակությամբ։ Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո Տաթևում բացվում է առաջին տարրական դպրոց, որի առաջին սաներից մեկը լինում է Սուրենը։ 1928 թվականին Առաքելյանը մտնում է կոմերիտմիության շարքերը, իսկ մեկ տարի հետո ղեկավարում է դպրոցի ԼԿԵՄ կազմակերպության աշխատանքները։

Գյուղում կոլտնտեսություն կազմակերպելիս Սուրենն առաջիններից մեկն է լինում, որ մտնում է նրա մեջ։ 1933 թվականին նա զորակոչվում է սովետական բանակ և ծառայում հայկական հեծյալ գնդում, որի հրամանատարն էր Ի. Ք. Բաղրամյանը (այժմ Սովետական Միության մարշալ)։ Զորացրվելուց հետո Առաքելյանն աշխատանքի է անցնում Գորիսի շրջանի միլիցիայի բաժանմունքում։

Երբ սկսվում է Հայրենական մեծ պատերազմը, Սուրենը մեկնում է սովետական բանակ։

1942 թվականի ամռանը, երբ թշնամին ձգտում էր թափանցել Դոնի ավազանը, հասնել Վոլգա գետը, խցկվել Կովկաս, հերոսական սովետական բանակի մարտակարգում էր նաև քաջ ռազմիկ Սուրեն Առաքելյանը։ Հայկական 89-րդ դիվիզիայի 526-րդ գնդի կազմում նա մասնակցում է Կովկասի պաշտպանողական, ապա հարձակողական մարտերին։

1943 թվականի հունվարին ռազմաճակատում Առաքելյանն ընդունվում է Սովետական Միության կոմպարտիայի շարքերը։ Նա իր կատարած սխրագործությունների, համարձակության և անվեհերության համար վայելում էր ստորաբաժանման ողջ անձնակազմի վստահությունն ու հարգանքը։

1943 թվականի սեպտեմբերի 18-ն էր։ Երրորդ օրն էր, ինչ կատաղի մարտեր էին մղվում Նովոռոսիյսկի ուղղությամբ, Կաբարդինկայա բնակավայրի և նրա մոտ գտնվող բարձունքի համար։ Հակառակորդը այդտեղ ստեղծել էր ամուր պաշտպանության բնագիծ և մոլեգնող կրակով դիմադրում էր մեր զորամասերի առաջխաղացմանը։ Մարտերը քանի գնում թեժանում էին։ Ամբողջ կրակագիծը հսկայական խորությամբ ու լայնությամբ գտնվում էր ականանետային, գնդացրային և հրետանային գնդակոծության տակ։

Բարձունքի համար մարտնչողների կազմում էր նաև այն դասակը, որի ջոկերից մեկի հրամանատարն էր ավագ սերժանտ Սուրեն Առաքելյանը։ Դասակի հրամանատար, կրտսեր լեյտենանտ Սամվել Մալխասյանը հրաման է ստանում՝ թևից մոտենալ թշնամու ամրություններին և գրավել դրանք։ Առաքելյանը դասակի հրամանատարի հրամանով իր ջոկը տանում է ստորաբաժանման առջևից։ Մարտի վճռական պահին վիրավորվում է դասակի հրամանատարը։ Հրամանատարությունը ստանձնում է Առաքելյանը և մարտիկներին առաջնորդում գրոհի։ Զինվորները ավտոմատային կրակ են տեղում թշնամու վրա և առաջ շարժվում։ Սակայն բարձունքից թշնամու խոշոր տրամաչափի գնդացիրը հանգիստ չի տալիս դասակի ռազմիկներին։

Ավագ սերժանտ Առաքելյանը դիմում է վաշտի հրամանատարին. «Թույլ տվեք գրավել բարձունքը»։ Վաշտի հրամանատարը, իր համաձայնությունը տալու հետ մեկտեղ, արիասիրտ մարտիկին է հանձնում նաև կարմիր դրոշակը։

Առաքելյանը իր մարտիկների հետ նետվում է գրոհի։ Նա ձգտում է ամենից շուտ հասնել բարձունքի գագաթը և այնտեղ ծածանել դրոշը։

Մահու և կենաց ճակատամարտ է սկսվում գրոհող սովետական մարտիկների ու հիտլերականների միջև։ Մի պահ թվում է, որ անհնարին է հաղթահարել թշնամու ստեղծած կրակային գիծը և հասնել նրա պաշտպանության հենակետներին։ Բոլորից առաջ սողեսող դեպի բարձունքն է առաջանում դասակի հրամանատարը։ Նրա օրինակին են հետևում բոլոր մարտիկները։ Առաքելյանի ավտոմատի փամփուշտները վերջանում են։ Այդ միջոցին վիրավորվում է նրա մարտիկներից մեկը։ Սուրենն անմիջապես կապում է նրա վերքը, ապա

վերցնելով վիրավոր մարտիկի հրացանն ու փամփուշտները՝ առաջ է շարժվում դեպի թշնամու գործող դզոտը։ Առաքելյանին հակառակորդից բաժանում է միայն 30 մետր տարածություն, երբ նա թշնամու դզոտի վրա նետում է երկու նռնակ։ Հակառակորդի կրակակետը լռում է, մարտիկները ոտքի են ելնում և գրոհում բարձունքը։ Քիչ հետո աջ թևից սկսում է գործել թշնամու մեկ հաստոցավոր գնդացիր։ Սուրենի շուրջը պայթում են մի քանի նռնակներ։ Նա շուռ է գալիս դեպի նոր գործող գնդացիրը, մի քանի գնդակ է արձակում և շարժվում դեպի դզոտի հրակնատը։ Հիտլերականները նրա վրա համազարկային կրակ են բացում։ Այդ վայրկյանին քաջարի ռազմիկին միաժամանակ խոցում են ֆաշիստական գնդացրի մի քանի գնդակներ։ Լարելով վերջին ուժերը, նա նետվում է թշնամու հրակնատի վրա։ Նրա վրիժառու մարտիկները կատաղի ձեռնամարտից հետո ոչնչացնում են թշնամուն. բարձունքում ծածանվում է կարմիր դրոշը։

Գնդի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ մայոր Պապիկ Ավալյանը, որը նույնպես քաջի մահով ընկավ 1945 թվականի ապրիլին՝ Օդեր գետի մոտ մղված մարտերում, այսպես է բնութագրել Սուրեն Առաքելյանի սխրագործությունը. «Գալիք սերունդը երբեք չի մոռանա վառվռուն այն երիտասարդին, հայ ժողովրդի ծոցից ելած անձնազոհ այն հերոսին, որը հետևելով հանրահռչակ, անմահ հերոս Ալեքսանդր Մատրոսովի օրինակին, իր մարմնով ծածկեց ֆաշիստական ծանր գնդացրի հրակնատը և իր կյանքի գնով ապահովեց հայ ժողովրդի հաղթական զորամասի առաջխաղացումը։ Դա խանդավառ այն երիտասարդն էր, որի մասին այնքան հպարտությամբ գրեցին ռազմաճակատային և կենտրոնական թերթերը։ Դա ավագ սերժանտ Սուրեն Առաքելյանն էր»։





# ՍՈՒՐԵՆ ԱՐՏԵՄԻ ԱՍԼԱՄԱԶԱՇՎԻԼԻ (ԱՍԼԱՄԱԶՅԱՆ)





## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի գեներալներին, սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու մասին

*Դնեպրը գետանցելու, Դնեպրի աջ ափին մարտերը հաջողությամբ զարգացնելու գործում հրամանատարության մարտական առաջադրանքները օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել* Սովետական Միության Հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ.*

*10. Գվարդիայի սերժանտ* Սուրեն Արտեմի Ասլամազաշվիլուն:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 22 փետրվարի 1944 թ.*





Դնեպրի գետանցման հերոսներից է Սուրեն Ասլամազաշվիլին (Ասլամազյանը)։ Նա ծնվել է 1914 թվականին Թիֆլիսի նահանգի Կասպիի շրջանի Կավթիսխևի գյուղում, գյուղացու ընտանիքում։ Վաղ հասակից նա գյուղատնտեսական աշխատանքներ է կատարել և հոգացել ընտանիքի ապահովության մասին։ Աշխատելուն զուգընթաց, նա սովորել է գյուղի յոթնամյա դպրոցում։ Ընտանեկան հոգսերը նրան հնարավորություն չեն տվել ավարտելու դպրոցը։

1931 թվականին Սուրենը տեղափոխվում է Թիֆլիս։ Այստեղ նա աշխատանքի է ընդունվում շոգեքարշա-վագոնային գործարանում որպես բանվոր, ապա սկսում է սովորել։ Ֆաբզավուչն ավարտելուց հետո, վերադառնում է նույն գործարանը և աշխատում որպես փականագործ մինչև 1938 թվականը։ Նույն թվականին Սուրենը զորակոչվում է սովետական բանակ։ Զորացրվելուց հետո նա մինչև Հայրենական պատերազմի սկիզբը աշխատում է ավտովերանորոգման գործարանում։

Հայրենական պատերազմի առաջին օրերից Ասլամազյանը համալրում է Հայրենիքի պաշտպանների շարքերը։ Որոշ ժամանակ անց նրան շնորհվում է սերժանտի կոչում։ 1942 թվականի օգոստոսին Սուրենը, որպես հակատանկային ջոկի հրամանատար, առաջին մարտերն է մղում թշնամու դեմ Օրջոնիկիձե քաղաքի շրջակայքում։

Նա մասնակցում է նաև Ուկրաինայի մի շարք քաղաքների ազատագրման համար մղված մարտերին։ 1943 թվականի սեպտեմբերին 110-րդ գվարդիական հրաձգային դիվիզիան, որի շարքերում էր նաև կոմունիստ Ասլամազյանը, հասնում է լայնահուն Դնեպրին։ Հրամանատարությունը սերժանտ Ասլամազյանի ջոկին առաջադրանք է տալիս՝ անցնել գետը և նրա արևմտյան ափին հենակետ ստեղծել նախապատրաստական աշխատանքից հետո, գիշերը։ Հակառակորդի ամրակայության տակ, ջոկը հաջողությամբ անցնում է գետը և ամրանում նրա աջ ափին։ Լուսաբացից առաջ կատարված հետախուզությունը պարզում է, որ թշնամին խոշոր ուժերով ամրացել է դիմացի խիտ անտառի մոտ գտնվող բարձունքում և այնտեղից անվերջ կրակ է բացում ջոկի գրաված դիրքերի ուղղությամբ։

Հակառակորդը շուտով գրոհի է անցնում։ Թշնամու վեց տանկ անցնում են գետի աջ ափին ամրացած մեր զորամասերից մեկի թիկունքը։ Այդ միջոցին Սուրենի ջոկի հակատանկային հրացանի կրակահերթերը խոցում են թշնամու կրակակետը։

Այնուամենայնիվ հիտլերականները շարունակում են գնդակոծել հենակետը։ Այլ ելք չգտնելով, Սուրենը և նրա մարտիկները վճռում են ինչ գնով էլ լինի, թույլ չտալ, որ գերմանացիները ետ խլեն հենակետը։ Շեշտակի կրակ է բացվում թշնամու մոտեցող տանկերի վրա, որոնցից չորսը շուտով այրվում են։ Տանկերի հետ մենամարտը շարունակվում էր, երբ ջոկի հրամանատարը նկատում է դեպի իր խրամատը սողեսող մոտեցող հիտլերյան մի խումբ ավտոմատավորների։ Սուրենը հակատանկային զենքը փոխարինելով ավտոմատով և զինելով վիրավոր ընկերոջը, միասին սկսում են կրակ տեղալ հիտլերյան զինվորների վրա։ Կռվի թեժ պահին թշնամու գնդակից վիրավորվում է Սուրենի թևը։ Չնայած արյունաքամ վիճակին, նա շարունակում է մարտնչել հակառակորդի դեմ՝ մինչև յուրայինների օգնության գալը։

Դնեպրն անցնելու, գետի աջ ափին մարտական գործողությունները հաջողությամբ զարգացնելու և ցուցաբերած քաջագործությունների համար ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1944 թվականի փետրվարի 22-ի հրամանագրով Սուրեն Ասլամազյանին շնորհվում է Սովետական Միության Հերոսի կոչում։

Շուտով Սովետական Միության հերոս Սուրենն իր խիզախ զրահահարներով հաջողությամբ անցնում է Բուգ գետը ու մասնակցում Մոլդավիայի, Ռումինիայի և Հունգարիայի ազատագրման մարտերին։

Հունգարիայում ստրատեգիական մի կարևոր հենակետի համար արյունահեղ մարտեր էին մղվում։ Գերմանացիները շղթայաձև շարժվում էին առաջ դեպի 110-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի հակատանկային վաշտի դիրքերը։ Գվարդիական զրահահարները հիտլերականներին դիմավորում են դիպուկ կրակով։ Սկսվում է ահեղ գոտեմարտ։ Թշնամու շատ զինվորներ շարքից դուրս են գալիս, բայց մնացածները համառորեն առաջ են խցկվում։

*Դուրս ցատկելով խրամատից, Սուրենը կարճ կրակահերթով սպանում է երկու ֆաշիստի: Հիտլերականներից մեկը նշան է բռնում դեպի հերոսը, բայց կոմերիտական Իվան Տյուլենևը խզակոթի ուժեղ հարվածով նրան գլորում է գետին: Զրահահարները մարտն ավարտում են հաղթանակով: Հրամանատարությունը Սուրենին պարգևատրում է Կարմիր աստղի շքանշանով:*

*Սովետական Միության հերոս Սուրեն Ասլամազյանը, Թբիլիսիի ավտովերանորոգման գործարանի նախկին փականագործը, իր մարտական ուղին սկսելով Հյուսիսային Կովկասից, հասնում է մինչև Չեխոսլովակիա:*

*1945 թվականին զորացրվելով բանակից, նա վերադառնում է Թբիլիսի և այժմ աշխատում է Ս. Մ. Կիրովի անվան մեքենաշինական գործարանում որպես փականագործ:*



# ՀՈՒՆԱՆ ՄԱԿԻՉԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ



## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի գեներալներին, սպաներին, սերժանտներին և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել* Սովետական Միության հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

*3. Ավագ սերժանտ* Հունան Մակիչի Ավետիսյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 16 մայիսի 1944 թ.*





Հայրենական մեծ պատերազմի տարեգրության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում հայ ժողովրդի պանծալի զավակ, ավագ սերժանտ Հունան Մակիչի Ավետիսյանը։ Նա սոցիալիստական Հայրենիքի ազատության համար գիտակցաբար զոհաբերեց իր կյանքը և դասվեց անմահ Մատրոսովյան դյուցազունների շարքը։

Հունան Ավետիսյանը ծնվել է 1914 թվականին Ղափանի շրջանի Ծավ գյուղում։ Զրկանքների ու թշվառության մեջ է անցել նրա մանկությունը։ Միայն սովետական իշխանության հաստատումից հետո է նոր կյանքի ուղի բացվում, ինչպես բոլոր աշխատավորների, այնպես էլ Հունան Ավետիսյանի համար։

1928 թվականին Հունանը ընդունվում է լենինյան կոմերիտմիության շարքերը, իսկ 1929 թվականին նա, իր ծնողների հետ միասին, առաջինների թվում, մտնում է կոլտնտեսություն։ Կոմերիտմիության շարքերում և կոլտնտեսային աշխատանքներում Հունանը կոփվում ու դաստիարակվում է սովետական մարդուն հատուկ գծերով։

Խառնվածքով համարձակ ու տոկուն Հունանը 1935 թվականին զորակոչվում է սովետական բանակ և այնտեղից վերադառնում ռազմաքաղաքական



Սովետական Միության հերոս Հունան Ավետիսյանի և նրա հետ միասին մարտում զոհված ընկերների եղբայրական գերեզման-հուշարձանը Նովոռոսիյսկ քաղաքի մոտ՝ Վերխնի-Բականսկի բանվորական ավանում:



Հրամանատարը ամեն օր երեկոյան ստուգականչի ժամանակ, առաջինը կարդում է (ՍՍՌՄ զինված ուժերի մինիստրի հրամանով), իրենց ստորաբաժանման մարտիկների ցուցակում առհավետ գրանցված Սովետական Միության հերոս Հունան Ավետիսյանի անունը:

Առաջին շարքի աջ թևում կանգնած դասակի հրամանատարի օգնականը խրոխտ ու հստակ ձայնով պատասխանում է.—Սովետական Միության հերոս, Հունան Մակիչի Ավետիսյանը ընկավ քաջի մահով մեր հայրենիքի ազատության ու անկախության համար ֆաշիստական զավթիչների դեմ մղված մարտերում:

*Ֆոտո՝ Հ. Մկրտչյանի, 1949 թ.*

զինակիցներով զինված ու միանգամայն կազմակերպված սովետական չէր Հայրենասեր։

Հոկտեմբերյանի շրջանի Լուկաշինի անվան այգեգործական սովխոզի առաջավոր բրիգադիր էր Հունան Ավետիսյանը, երբ սկսվում է Հայրենական մեծ պատերազմը։ Բազմաթիվ երիտասարդների թվում, ընդհատելով իր խաղաղ աշխատանքը, նա կանգնում է Հայրենիքի պաշտպանների մարտական շարքում և 1942 թվականի օգոստոսին 89-րդ հայկական հրաձգային դիվիզիայի կազմում մեկնում Հյուսիսային Կովկասի ռազմաճակատ։ Ռազմաճակատ են մեկնում նաև Հունանի չորս եղբայրները։

Կովկասի հերոսական պաշտպանության լարված օրերն էին։ Կովկասյան բաջակերով բոլոր ժողովուրդները, մի սիրտ, մի հոգի դարձած, ավագ եղբոր՝ ռուս մեծ ժողովրդի զավակների և Սովետական Միության մյուս ժողովուրդների հետ միասին, պաշտպանում էին Սովետական Կովկասը, նրա ժողովրդի պատիվն ու անկախությունը, փակում թշնամու ճանապարհը։

Դասակի հրամանատարի տեղակալ, ավագ սերժանտ Հունան Ավետիսյանը խորապես ապրում է սովետական Հայրենիքի ժամանակավոր անհաջողությունները և իր անձնական արիությամբ, թշնամուն հաղթելու անհողդողդ կամքով կենդանի օրինակ դառնում մարտիկների համար։ Ռազմաճակատում Հունանը շուտով աչքի է ընկնում հակառակորդից «լեզու» բռնելու, ճարպկորեն հետախուզություն կատարելու շնորհիվ։ 1942 թվականի դեկտեմբերին հերթական հետախուզության ժամանակ նա իր ջոկով շրջապատվում է հիտլերականների գերազանց ուժերի կողմից։ Թշնամու թիկունքում մարտերով կատարած հետախուզությունը և շրջապատումից դուրս գալու պայքարը տևում է մի քանի օր։ Նա երկու անգամ վիրավորվում է, բայց տոկունությամբ տանելով ցավերը, ղեկավարում է ջոկի մարտական գործողությունները, որը ճեղքելով թշնամու օղակը, դուրս է գալիս շրջապատումից և չորրորդ օրվա գիշերը, անցնելով ռազմաճակատի գիծը, վերադառնում է զորամաս, կարևոր տեղեկություններ բերելով հակառակորդի ուժերի և դասավորության մասին։ Հետախուզության ընթացքում Հունանի մարտիկները ոչնչացնում են տասնյակ հիտլերականների։ Այդ ժամանակ Հունանի մարտական հաշվում արդեն կար ոչնչացված 25 ֆաշիստական զինվոր ու սպա։

Կովկասի ռազմաճակատի զորքերը համառ պաշտպանական մարտերում կանգնեցնելով թշնամու առաջխաղացումը, 1943 թվականի հունվարի 3-ից անցնում են ընդհանուր հարձակման։

Այդ հաղթարշավի մեջ մի ամբողջ շղթա է կազմում նաև հայկական զորամասերի կատարած սխրագործությունները։ Կրնկակոխ հետապնդելով թշնամուն, նրանք մասնակցում են Մալգոբեկ քաղաքի ազատագրմանը և 38 օրում մարտերով 800 կիլոմետր ճանապարհ կտրելով, ռազմաճակատի զորքերի հետ միասին դուրս են գալիս Ազովի հարավային ափերը, ազատագրում են բազմաթիվ բնակավայրեր ու ստանիցաներ։ Թշնամու ջախջախումն ու

հետապնդումը կատարվում է ձմռան սառնամանիքներին։ Հունանը հարձակողական այդ գործողությունների ժամանակ իրեն դրսևորում է որպես կարգապահ և արիասիրտ կրտսեր հրամանատար, որին հրամանատարությունը շարունակ պատասխանատու առաջադրանք է վստահում։

1943 թվականի սեպտեմբերին սովետական բանակը հարձակողական նոր մարտեր է ծավալում Նովոռոսիյսկ քաղաքը և Թամանյան թերակղզին ազատագրելու համար։ Դրանք գերմանացիների պաշտպանության «կապույտ գիծը» ճեղքելու, հիտլերականներին Կովկասից վռնդելու եզրափակիչ մարտերն էին։

Սեպտեմբերի 16-ի վաղ առավոտյան ամբողջ ճակատամասում սկսվում է հարձակումը։ Օդից մոլեգնում է ռմբակոծությունը։ Անընդմեջ և ահեղորեն որոտում են հրանոթները, ականանետները ու գնդացիրները։ Փոշու ամպով ծածկված մարտադաշտում գնդերն ու գումարտակները իրենց ստորաբաժանումներով առաջ են նետվում, օդը թնդացնելով «ուռա», «հանուն հայրենիքի» խրոխտ բացականչություններով։

Այստեղ հրամանատարությունը Հունանին հանձնարարում է կատարել մի նոր և դժվարին առաջադրանք՝ դրոհային փոքրիկ խմբերով ճեղքել Վերխնե Բականսկի շրջանում Նովոռոսիյսկ քաղաքի մատույցները փակող Դոլգայա լեռան ֆաշիստական հենակետային մի քանի ամրությունները և ճանապարհ բացել հարձակվող ստորաբաժանման համար։ Հունանը արհամարհելով տեղատարափ կրակը, դրոհի է դուրս բերում իր ջոկը, ընթանալով հարձակվող վաշտի ավանգարդում։ Նա առաջինը բարձրանալով Դոլգայա լեռը, ուղղություն է վերցնում դեպի թշնամու կրակակետը։ Սակայն գերմանական դզոտի հաստոցավոր գնդացրի անընդհատ կրակը թույլ չի տալիս մոտենալու։ Դրոհայինները կարճ ոստյուններով, սողեսող առաջ շարժվելով, ստիպված են լինում հաճախակի սեղմվել գետնին։ Պետք էր լռեցնել թշնամու գնդացրային կրակը։ Հունանը և պարթևահասակ մարտիկ Սարգիս Սահակյանը ճարպկորեն մոտենում են դզոտին և նռնակներ նետելով ոչնչացնում են նրա անձնակազմը։ Հաղթանակը կատարյալ էր, բայց այստեղ հերոսի մահով զոհվում է Սահակյանը։

Դրոհայինները դեռ ուշքի չէին եկել այդ գործողությունից, երբ նրանց վրա գնդացրային կրակ է սկսում տեղալ գերմանական քողարկված երկրորդ դզոտը և խանգարում դասակի առաջշարժմանը։ Հունանը չի շփոթվում, նա արագ կողմնորոշվելով, մարտիկներին հրամայում է շրջանցել հակառակորդի երկրորդ դզոտը, իսկ ինքը փորսող դզոտին է մոտենում ճակատային մասից։ Դեռ հրակնատին չհասած Հունանը ծանր վիրավորվում է։

Բայց ոչ վերքը, ոչ արյունաքամությունը նրան չեն կանգնեցնում։ Դեպի դզոտը ձգտելով, Հունանը միայն մի բանի մասին է մտածում՝ լռեցնել թըշնամու կրակը, հեռացնել դրոհի ձախողման վտանգը, հասնել հաղթանակի։ Դզոտի մոտ Հունանը նկատում է սպանված իր մարտիկների՝ Վասիլ Սաքանյանի, Զավեն Գևորգյանի դիակները։ Անսահման վայրությամբ համակված,

նա հավաքելով վերջին ուժերը նետվում է առաջ և կրծքով փակում ֆաշիստական դզոտի գնդացրային հրակնատը, իր վրա ընդունելով մահաբեր գնդակները, ընկնում է այնւ

Մինչ բաբախելուց դադարում էր Հունանի բոցակեզ սիրտը, նրա դասակը և ամբողջ վաշտը, օգտվելով թշնամու կրակի խափանումից, սրընթաց գրոհով գրավում են Դոլգայա բարձունքը, ապա ազատագրում Վերխնե-Բականսկի բանվորական ավանը և ուղի հարթում դեպի Նովոռոսիյսկ:

Բարձր գնահատելով մեր հայրենիքի ազատության և անկախության համար մղված մարտերում Հունան Ավետիսյանի ցուցաբերած խիզախությունները և դյուցազնական ինքնազոհությունը, ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1944 թվականի մայիսի 16-ի հրամանագրով նրան հետմահու շնորհվում է Սովետական Միության հերոսի կոչում: Այդ որոշումը երախտագիտական բուռն զգացմունքով լցրեց հայ ժողովրդի սիրտը, մարտական նոր սխրանքների կոչեց Թամանյան պանծալի անվան արժանացած 89-րդ հայկական հրաձգային դիվիզիայի ռազմիկներին, որոնք Կովկասի նախալեռներից հաղթանակներով անցան մինչև Բեռլին—Էլբայի ափերը, անթառամ փառքով պսակեցին իրենց մարտական դրոշները, որի մեջ իր արժանի ավանդն ունի նաև Հունանը:

Պատերազմը ավարտվեց... Սովետական ժողովուրդը և նրա բանակը առաջվա պես մեծարում և հիշում են Հայրենական մեծ պատերազմում զոհված հերոսներին: 1949 թվականի ապրիլի 22-ին ՍՍՌՄ զինված ուժերի մինիստրի № 30 հրամանով Հունան Ավետիսյանի անունը առհավետ գրանցվեց այն վաշտի ցուցակում, ուր նա ծառայում էր: Ժողովուրդը հավերժացնելով Հունանի հիշատակը, հուշարձաններ է կանգնեցրել Վերխնե-Բականսկում, Երևանում, Ծաղ գյուղում, Հոկտեմբերյանում: Հունանի անունով են կոչվում դպրոցներ, քաղաքների փողոցներ, պիոներական դրուժինաներ, կոլտնտեսային և գործարանային բրիգադներ: Բանաստեղծներն ու գրողները գրքեր, բանաստեղծություններ և պոեմներ են գրել ու գրում Հունանի մասին:

Հունանի կերպարը սխրանքների օրինակ է դարձել աշխատանքում ու պայքարում:

## ՀՐԱՄԱՆ

### ՍՍՌ Միության զինված ուժերի մինիստրի

*22 ապրիլի 1949 թ.* *№ 30* *ք. Մոսկվա*

Սովետական Միության հերոս ավագ սերժանտ Հ. Մ. Ավետիսյանին 390-րդ հրաձգային գնդի ցուցակում առհավետ գրանցելու մասին:

*1943 թ. սեպտեմբերի 16-ին գերմանացիների պաշտպանության ճեղքման և Կրասնոդարի երկրամասի Վերխնե-Բականսկի շրջանը գերմանական*

զավթիչներից ազատագրելու ժամանակ 390-րդ հրաձգային գնդի 1-րդ հրաձգային վաշտի դասակի հրամանատարի տեղակալ ավագ սերժանտ Հունան Ավետիսյանը Դոլգայա լեռան գրոհի ժամանակ փառավորեց իրեն, ոչնչացնելով թշնամու կրակակետերը։

Հրաձգային դասակը, որի կազմում էր գտնվում ավագ սերժանտ Հ. Մ. Ավետիսյանը, հարձակման ժամանակ ընկավ թշնամու երկու ԴԶՕՏ-երի գնդացրային ուժեղ կրակի տակ։ Դասակը գետնին սեղմվեց։ Այդ ժամանակ ավագ սերժանտ Ավետիսյանը շարժվեց դեպի ԴԶՕՏ-երից մեկը և նռնակներ նետեց նրա վրա։ Դասակը առաջ շարժվելով դեպի Ավետիսյանի գրաված դիրքերը, ստիպված էր երկրորդ ԴԶՕՏ-ի գնդացրային կրակի տակ դարձյալ սեղմվել գետնին։ Ավագ սերժանտ Ավետիսյանը հրամայեց դասակին օղակել ԴԶՕՏ-ը, իսկ ինքը սողալով մոտեցավ հրակետին, որտեղից նռնակներ նետեց նրա վրա, բայց հենց ԴԶՕՏ-ի մոտ վիրավորվեց։ Արյունաքամ լինելով, նա հասավ մինչև հրակետը և իր մարմնով ծածկեց այն։ Գնդացրային կրակը դադարեց։ Օգտվելով ավագ սերժանտ Ավետիսյանի հերոսական սխրագործությունից, դասակը կատարեց իր մարտական խնդիրը։

Ավագ սերժանտ Ավետիսյանը զոհվեց հերոսի մահով։

ՍՍՌ Միության Գերագույն սովետի նախագահության 1944 թվի մայիսի 16-ի հրամանագրով ավագ սերժանտ Հ. Մ. Ավետիսյանին հետմահու շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում։

Նրա անվեհերաց նվիրվածությունը սոցիալիստական Հայրենիքին և անսահման հավատարմությունը երդմանը, օրինակ պետք է ծառայեն զինված ուժերի ամբողջ անձնակազմի համար։

Հրամայում եմ՝

Սովետական Միության հերոս, ավագ սերժանտ Հունան Մակիչի Ավետիսյանի անունը առհավետ գրանցել Սևաստոպոլյան 390-րդ հրաձգային գնդի 1-ին հրաձգային վաշտի ցուցակում։

Հրամանը կարդալ բոլոր վաշտերում, մարտկոցներում, էսկադրոններում և անձնակազմերում։

ՍՍՌՄ Զինված ուժերի մինիստր
Սովետական Միության մարշալ Վ.ԱՍԻԼԵՎՍԿԻ



# ԻՎԱՆ ԻՎԱՆՈՎԻՉ ԲՈՆԴԱՐԵՎ



## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Բանակի սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար շնորհել* Սովետական Միության Հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկի աստղ» *մեդալ.*

37. *Գվարդիայի ավագ սերժանտ* Իվան Իվանովիչ Բոնդարևին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 27 փետրվարի 1945 թ.:*







*Հայրենական մեծ պատերազմում մարտական փառքի արժանացած Իվան Բոնդարևը Հայաստանի շքնաղ Լոռվա զավակներից է։ Նա ծնվել է 1917 թվականին Ստեփանավանի շրջանի Մաքսիմ Գորկի (նախկին Ալեքսանդրովկա) գյուղում։*

*Իվանը շատ վաղ հասակից զրկվում է հորից, որին սպանում են գյուղի կուլակները։ Բոնդարևը դպրոցում սովորելու հետ միաժամանակ հարկադրված է լինում հովվություն անել, օգնել ընտանիքին։ Նրա մանկությունն անց է կենում Ստեփանավանի Լեջան գյուղի լեռնալանջերի բարավեր արոտավայրերում, գեղեցիկ բնության գրկում։*

*Բոնդարևը իր ազնիվ աշխատանքով շուտով դառնում է կոլտնտեսության Ֆերմայի առաջավոր անասնապահներից մեկը, որի օրինակելի աշխատանքների մասին հոդվածներ են հրապարակվում շրջանային թերթում, նրա լուսանկարը բարձրացվում է շրջանի առաջավորների պատվո տախտակին։*

*Իվան Բոնդարևը կոլտնտեսությունում ընդունվում է լենինյան կոմերիտմիության շարքերը և իր ամբողջ ուժերը նվիրում սոցիալիստական անասնապահության զարգացմանը, ակտիվորեն մասնակցում գյուղի հասարակական աշխատանքներին։*

1939 թվականին կոմերիտական Բոնդարևը զորակոչվում է սովետական բանակ և ծառայում տանկային զորամասում։ Զինվորական ծառայության մեջ նա հանդես է բերում ջանասիրություն, կարգապահություն, ուշիմությամբ ուսումնասիրում է տանկի բարդ տեխնիկան և դառնում մարտական-քաղաքական պատրաստության գերազանցիկ ռազմիկ։

Հայրենական մեծ պատերազմի հենց սկզբից կոմերիտական մարտիկ Բոնդարևը դեռևս իր պարտադիր ծառայության ժամկետը չավարտած մեկնում է ռազմաճակատ։

Ինչպես նահանջի ծանր օրերին, այնպես էլ հարձակումների ընթացքում Բոնդարևը աչքի է ընկնում ռազմական հնարքներով, ճարպիկ ու համարձակ գործողություններով։ Նրանց զորամասը արդեն գվարդիական կոչում ուներ։ Սերժանտ Բոնդարևը հպարտորեն կրելով գվարդիական կոչումը, իր հզոր մեքենայի հրանոթի դիպուկ կրակով ոչնչացնում է ֆաշիստական տանկեր ու կրակակետեր, որի համար պարգևատրվում է Կարմիր աստղի շքանշանով և 1944 թ. ընդունվում կոմունիստական պարտիայի շարքերը։

Այդ օրերին Բոնդարևը քրոջից նամակ է ստանում, տեղեկանում է ռազմաճակատում իր եղբոր՝ Պետրոյի զոհվելու և գյուղում՝ մոր մահվան մասին։ Նա խիստ վշտանում է, բայց չի ընկճվում, շարունակում է իր համառ պայքարը ատելի թշնամու դեմ։

—Երդվում եմ բազմապատիկ հակառակորդին հատուցելու հարվածների ուժը, վրեժ լուծել Հայրենիքիս համար, մեր խաղաղ ընտանիքին պատճառած դժբախտության համար,—ասում է Բոնդարևը և նորից կատաղի մարտերի մեջ նետվում։ Նա իր տանկի անձնակազմի հետ միասին մասնակցում է Գուշչին, Բլինդով, Լյուբեն, Խոդեչ և այլ քաղաքների ու բնակավայրերի ազատագրմանը։ Նրանք իրենց հզոր տանկով ոչնչացնում են թշնամու երկու հակատանկային մարտկոց, երեք ականանետ, վեց գնդացիր, ռազմամթերքով բարձված չորս ավտոմեքենա և մոտ 40 հիտլերական զինվոր ու սպա։

Բայց գվարդիայի ավագ սերժանտ Իվան Բոնդարևի մարտական փառքը իր գագաթին է հասնում 1945 թվականի հունվարին՝ սովետական բանակի հարձակումների ընթացքում՝ իրենց տանկային զորամասի կողմից Ռացլյով քաղաքի գրավման ժամանակ։ Այստեղ ավագ սերժանտի մեքենան քաղաքը գրոհող տանկային զորամասի առաջավոր շարքերումն էր։ Հրամանատարությունը Բոնդարևին առաջադրանք է տալիս գաղտնի դուրս գալ թշնամու թիկունքը և այնտեղից հարված հասցնելով, օգնել ճակատից գրոհող տանկերին։ Առաջադրանքը խիստ ծանր էր ու պատասխանատու։ Հմուտ ռազմիկ Բոնդարևը հանդես բերելով սառնասրտություն և արիություն, հաղթահարում է հակատանկային երկու արգելափակոցները և հաջողությամբ շրջանցելով հակառակորդի պաշտպանական գիծը դուրս է գալիս նրա թիկունքն ու այնտեղից համարձակ գրոհում թշնամու դիրքերի վրա և ուղիղ նշանառությամբ ոչնչացնում երկու մարտկոց նրանց անձնակազմով հանդերձ։ Այս գործողու-

թյամբ Բոնդարևը խուճապ է առաջացնում հակառակորդի շարքերում, կազմալուծում նրա դիմադրությունը։ Տանկային զորամասը օգտվելով հակառակորդի խուճապից ու շփոթությունից, շեշտակի հարվածով ճեղքում-խորանում է հիտլերականների մարտական դասավորության մեջ և ապա, վճռական գրո-ծավալելով, հաջողությամբ գրավում է Ռաձկյով քաղաքը և երկաթուղային կայարանը։

Զորամասի հրամանատարությունը բարձր է գնահատում այդ օպերացիայում ավագ սերժանտ Բոնդարևի կատարած բացառիկ, համարձակ, անձնական խիզախությունը և նրան ներկայացնում է Հերոսի կոչման։ 1945 թվականի փետրվարի 4-ին ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով գվարդիայի ավագ սերժանտ Իվան Իվանովիչ Բոնդարևին շնորհվում է Սովետական Միության Հերոսի բարձր կոչում, նրան հանձնելով Լենինի շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ։

Բայց, դժբախտաբար, Իվան Բոնդարևին բախտ չի վիճակվում կենդանի մնալ մինչև վերջնական հաղթանակը։ 1945 թվականի փետրվարի կեսերին նա զոհվում է հերոսի մահով թշնամու տերիտորիայում մղվող կատաղի կռիվներում։

Մարտական անթառամ փառք վաստակած Բոնդարևի անունն ու հիշատակը թանկ է ու հարազատ սովետական ժողովրդի և Հայաստանի բոլոր աշխատավորների համար։

Ստեփանավանի շրջանի Մաքսիմ Գորկի գյուղի յոթնամյա դպրոցի աշակերտությունն ու ուսուցիչները հպարտությամբ են հիշում սովետական Հայրենիքի համար զոհված իրենց հայրենակցին, ընկերոջը, նախկին սանին։ Նրա հիշատակը հավերժացնելու համար դպրոցի պիոներական դրուժինան կոչել են Սովետական Միության Հերոս Իվան Բոնդարևի անունով։



# ԵՐԵՄ ԻՎԱՆԻ ԴԱՆԻԵԼՅԱՆՑ





## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**Կարմիր բանակի գեներալներին, սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու մասին**

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում Հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել* Սովետական Միության Հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

8. *Գվարդիայի ավագ սերժանտ* Երեմ Իվանի Դանիելյանցին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 15 հունվարի 1944 թ.:*





**1943** թվականը Հայրենական պատերազմի արմատական բեկման տարին էր։ Այն սկսվեց Վոլգոգրադի մոտ սովետական բանակի կողմից թշնամու մեծաքանակ ուժերի ջախջախումով, որից հետո սովետական բանակը հարձակման նախաձեռնությունը վերցրեց իր ձեռքը և այն պահեց մինչև վերջնական հաղթանակը։ Սովետական բանակի հաղթարշավի մեջ փայլուն էջ է կազմում Դնեպրի պատմական գետանցումը, որի հերոսներից մեկն է գվարդիայի ավագ սերժանտ Երեմ Իվանի (Հովհաննեսի) Դանիելյանը։

Երեմ Դանիելյանը ծնվել է 1901 թվականին Ելիզավետպոլի նահանգի Շուշու գավառի Արանզամին գյուղում։ Հայրենի գյուղում Երեմն ստանում է տարրական կրթություն։ Այնուհետև, շատ հայ ընտանիքների հետ միասին, Դանիելյանների ընտանիքը նույնպես բռնում է պանդխտության ուղին։ Երկար թափառումներից հետո, 1915 թվականին նրանց ընտանիքը բնակություն է հաստատում Թերեքի նահանգի Մինեռալնիե Վոդի Նիկոլաևյան շրջանում։ Այստեղ Երեմը հորից սովորում է քարտաշություն և կարճ ժամանակից հետո դառնում որակյալ վարպետ։ Հոկտեմբերյան ռևոլյուցիայից հետո Երեմն աշխատում է որպես քարտաշ-որմնադիր, իսկ 1922—1924 թվականներին ծառայում սովետական բանակում։

Շուտով Դանիելյանների ընտանիքը հաստատվում է Պյատիգորսկ քաղաքում։ Երեմն աշխատանքի է անցնում նախ Պյատիգորսկում, ապա՝ Նալչիկում և նորից՝ Պյատիգորսկում։ Ամենուր նա արտադրության առաջավոր էր։

Հայրենական պատերազմի հենց սկզբից Դանիելյանը մեկնում է ռազմաճակատ։

1943 թվականի սեպտեմբեր ամիսն էր։ Կատաղի մարտեր էին մղվում ուկրաինական հինավուրց գետի՝ Դնեպրի անցման համար։ Մյուս զորամասերի թվում Դնեպրն անցնելու հրաման է ստանում նաև 60-րդ Չերնիգովյան հեծելազորային գունդը, որի 4-րդ էսկադրոնում կոմունիստական պարտիայի անդամության թեկնածու Երեմ Դանիելյանը հաստոցավոր գնդացրի հաշվարկի հրամանատար էր։

Սեպտեմբերի 27-ի լույս 28-ի գիշերը ականանետային և գնդացրային ուժեղ կրակի տակ գվարդիայի սերժանտ Դանիելյանը իր գնդացրային հաշվարկով առաջինն է անցնում Դնեպրը։ Դուրս գալով գետի աջ ափը նա հաստոցավոր գնդացրով կատաղի կրակ է բացում թաքնված հակառակորդի վրա։ Վերջինս, կրելով մեծ կորուստներ, ետ է քաշվում։ Դանիելյանի գնդացրային հաշվարկը, գրավելով մի փոքր հենակետ, ապահովում է գնդի մյուս ստորաբաժանումների բարեհաջող գետանցումը։ Ապա զարգացնելով առաջխաղացումը և հետապնդելով թշնամուն Վյալե և Գալկի գյուղակների շրջանում, Դանիելյանը անձամբ ոչնչացնում է թշնամու գնդացրային երկու կրակակետ, 28 զինվոր ու սպա։

Գվարդիայի ավագ սերժանտ Երեմ Դանիելյանը հերոսաբար զոհվում է 1943 թվականի հոկտեմբերի 28-ին Պոլեսյեի մարզում մղվող համառ մարտերում։

Մարտական գործողությունների ընթացքում հանդես բերած բացառիկ քաջության և հերոսության համար գվարդիայի ավագ սերժանտ Երեմ Հովհաննեսի Դանիելյանին ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1944 թվականի հունվարի 15-ի հրամանագրով հետմահու շնորհվում է Սովետական Միության Հերոսի կոչում։



# ՆՇԱՆ ԱՎԱԳԻ ԴԱՐԲԻՆՅԱՆ





## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

### Կարմիր բանակի սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել* Սովետական Միության Հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ.*

*76. Գվարդիայի ավագ սերժանտ* Նշան Ավագի Դարբինյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 27 փետրվարի 1945 թ.*





Նշան Ավագի Դարբինյանը ծնվել է 1922 թվականին Էջմիածնի գավառի Լուսագյուղ գյուղում, չքավոր գյուղացու ընտանիքում։ Նշանը նախնական ուսումը ստացել է հայրենի գյուղում, իսկ միջնակարգ կրթությունը՝ Ներքին Խաթունարխի միջնակարգ դպրոցում։ Նա կոմերիտմիության շարքերն է անցել 1938 թվականին։

1941 թվականի հունիսին Նշանն ավարտական վերջին քննությունն էր հանձնում, երբ հիտլերյան Գերմանիայի զորքերը ներխուժեցին Սովետական Միության սահմանները։ Այդ առթիվ օգոստոսի 5-ին հրավիրվում է դպրոցի կոմերիտական կազմակերպության ժողով։ Նշանը ցանկություն է հայտնում կամավոր մեկնել բանակ։ Նրա հայրենասիրական քայլին հետևում են համագյուղացի շատ երիտասարդներ։

Օգոստոսի 15-ին Նշանն արդեն Հայրենիքի պաշտպանների շարքերում էր։ Դարբինյանը կարճ ժամանակամիջոցում ձեռք է բերում ռազմական գիտելիքներ։ 1942 թվականի ամռանը, երբ հիտլերյան օկուպանտներն առաջանում էին դեպի Կովկաս և Վոլգոգրադ, Դարբինյանը գտնվում էր Վոլգոգրադի պաշտպանների շարքերում։ Այստեղ նա երկու անգամ վիրավորվում է։

1942 թվականի դեկտեմբերից Դարբինյանը սովորում է Ուրալի Նիժնի Տագիլ քաղաքի տանկային դպրոցում, որն ավարտելուց հետո ստանում է մեխանիկ-վարորդի կոչում և գվարդիական Կարմիր դրոշի, Սուվորովի շքանշանակիր 49-րդ տանկային բրիգադայի 3-րդ տանկային գումարտակի կազմում մեկնում է Բելոռուսական առաջին ռազմաճակատ։

1944 թվականի ամռանը սովետական զորքերը մտնում են Լեհաստանի տերիտորիան և ֆաշիստական զավթիչներից ազատագրում մի շարք քաղաքներ, այդ թվում Լյուբլինը, որի ազատագրման մարտերին մասնակցում էր նաև տանկային բրիգադայի 3-րդ գումարտակը։ Այստեղ հրամանատարությունն առանձնացնում է երեք տանկից բաղկացած մի ջոկ։ Տանկերից մեկը վարում էր ավագ սերժանտ Նշան Դարբինյանը։ Տանկային ջոկն առաջադրանք է ստանում հետախուզել քաղաքի շուրջը դասավորված հակառակորդի ուժերը և կրակային կետերը։

Խիտ մառախուղի միջով տանկային ջոկը շարժվում է քաղաքի ուղղությամբ և հասնում քաղաքից 5 կմ հեռավորության վրա գտնվող մի անտառ։ Անտառում թաքնված հիտլերականները, նկատելով մոտեցող տանկերը, անմիջապես կրակ են բացում։ Սովետական տանկիստները մարտի են բռնվում հակառակորդի հետ։ Անվախ տանկիստ Դարբինյանը շարունակում է առաջ շարժվել՝ տանկի թրթուրների տակ ճզմելով հակառակորդի հակատանկային մարտկոցը և գնդացրային կետերը։

Ճեղքելով պաշտպանության գիծը, նա ընդհուպ մոտենում է Լյուբլինին։ Շուտով թշնամու կրակային նոր արգելքները փակում են նրա ճանապարհը, մի քանի տեղից կրակի տակ առնում տանկը։ Նշանի տանկի անձնակազմը շարունակում է մենամարտը տարբեր շենքերում ամրացած հիտլերականների հետ՝ մինչև օգնության են գալիս մեր մյուս տանկերը։ Համառ մարտերից հետո մեր զորամասերը մտնում են Լյուբլին։

Այդ մարտերում ցուցաբերած խիզախության համար Դարբինյանը արժանանում է Կարմիր դրոշի շքանշանի։ Նրա մարտական ընկերները՝ Նիկոլենկոն, Կոզլովը, Մատվեևը, Միշկովը և Մոխսենկոն, 1944 թվականի հուլիսի 26-ին Նշանի մորն ուղղած նամակում այդ մասին գրել են.

«Հարգելի Քիշմիշ Ալեքսանդրովնա.

Մենք՝ կոմերիտական տանկիստներս, Ձեր որդու մարտական ընկերները, գերմանական զորքերի դեմ մղվող թեժ մարտերի օրերին Ձեզ հղում ենք մեր երախտագիտության խոսքերը՝ այնպիսի քաջ և խիզախ մարտիկ դաստիարակելու համար, ինչպիսին է Ձեր որդի Նշան Ավագովիչը։ Նա համարձակ և վճռականորեն է գործում մարտի ժամանակ։ Տասնյակ գերմանական զինվորներ և սպաներ ոչնչացված են նրա կողմից։ Համարձակության, խիզախության և հանձնած զենքին վարպետորեն տիրապետելու համար ընկ. Դարբինյանը ներկայացված է կառավարական պարգևի՝ Կարմիր դրոշի շքանշանի։

Նշան Ավագովիչը մեր ստորաբաժանման հպարտությունն է, զորամասում վայելում է սեր և հարգանք»։

Նշանը ակտիվ մասնակցություն է ցուցաբերում նաև լեհական Դեմբլին, Սեդլեց, Մինսկ-Մազովեցկի և Լուկով քաղաքների ազատագրման համար մղած թեժ մարտերին և արժանանում գերագույն գլխավոր հրամանատարության շնորհակալությանը։

Դարբինյանի մարտական գործողությունների մեջ հատուկ էջ են կազմում Սոխաչև և Ինովրացլավ քաղաքների համար մղած մարտերը։ 1945 թվականի հունվարի 14-ին տանկային գումարտակի 2-րդ վաշտի հրամանատար Աշոտ Ամատունուն առաջադրանք է տրվում՝ ճեղքել Սոխաչև, ապա Ինովրացլավ քաղաքների պաշտպանությունը։ Վարորդ Նշան Դարբինյանը, որը գտնվում էր վաշտի ավանգարդում, շարժվում է Սոխաչևի ուղղությամբ։ Հետախույզ տանկերը ճեղքում են թշնամու պաշտպանության գիծը և մտնում քաղաք։ Նշանն իր տանկով ոչնչացնում է հակատանկային 37 ավտոմեքենա, երկու ընդացիր, մեկ զենիթային սարքավորում, 22 սայլ՝ ռազմամթերքով և 68 զինվոր ու սպա։

Սոխաչևի ազատագրումից հետո տանկային վաշտն իր հաղթական երթը շարունակում է դեպի Ինովրացլավ։ Հունվարի 22-ի գիշերը սովետական երեք հետախույզ տանկեր, այդ թվում և ավագ սերժանտ Դարբինյանի տանկը, մտնում են Ինովրացլավ քաղաքը։ Հիտլերականներն սկսում են գնդակոծել։ Տանկային ջոկը պատասխան կրակով առաջ է շարժվում, ճեղքում թշնամու պաշտպանության գիծը և 8 կմ խորանում նրա թիկունքում։ Գումարտակից հրաման է ստացվում՝ միանալ հիմնական ուժերին, բայց ճանապարհին թըշնամին ուժեղ դիմադրում է, և տանկերը ստիպված վերադառնում են նրա թիկունքը։ Այս անգամ խորանալով 20 կմ, տանկային ջոկը գրոհում է թշնամու օդանավակայանը, որտեղ Դարբինյանն անձամբ ոչնչացնում է երեք կործանիչ և մեկ տանկ։ Առանց կորուստ տալու, տանկիստները գրավում են օդանավակայանը, երկաթուղային կայարանը, հեռագրատունը և ռադիոկայանը։ Մըղված մարտերում Նշանի տանկային ջոկի անձնակազմը կրակով և տանկի թրթուրներով ոչնչացնում է 42 ավտոմեքենա, 13 սայլ, 89 զինվոր ու սպա։

Ինովրացլավ քաղաքի ազատագրման ժամանակ տանկային 3-րդ գումարտակի հրամանատարներ և մի շարք վարորդներ, նրանց թվում նաև Նշան Դարբինյանը, ցուցաբերած անձնական արիության ու հերոսության համար ներկայացվում են Սովետական Միության հերոսի կոչման։

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1945 թվականի փետրվարի 27-ի հրամանագրով գվարդիայի ավագ սերժանտ Նշան Ավագի Դարբինյանին շնորհվում է Սովետական Միության հերոսի կոչում։

Արժանանալով բարձր կոչման, Դարբինյանը նոր ոգևորությամբ և անձնվիրությամբ մասնակցում է գերմանական մի շարք քաղաքների գրավմանը և գերագույն գլխավոր հրամանատարության կողմից արժանանում է շնորհակալագրերի։

*Նշան Պարրինյանը մասնակցում է նաև Բեռլինի գրավման համար մղված մարտերին: Փողոցային կռիվների ժամանակ նա ոչնչացնում է թշնամու երեք տանկ: Հրամանատարությունը Նշանին պարգևատրում է Փառքի երրորդ աստիճանի շքանշանով:*

*1945 թվականի սեպտեմբերին Նշան Պարրինյանը տուն է վերադառնում: Շարունակելով կիսատ թողած ուսումը, նա 1948 թվականին ավարտում է ՀԿՊ Կենտրոնական կոմիտեին առընթեր պարտիական երկամյա դպրոցը և աշխատանքի անցնում Էջմիածնի պարտիական շրջկոմում: 1957 թվականից Պարրինյանն աշխատում է Էջմիածնի շրջանում՝ առևտրի ցանցում:*



# ՎԱՉԻԿ ՀՄԱՅԱԿԻ ԼԵՎՈՆՅԱՆ





## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**Կարմիր բանակի գեներալներին, սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու մասին**

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում Հրամանատարության մարտական առաջադրանքները օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել Սովետական Միության Հերոսի կոչում, հանձնելով Լենինի շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ.*

*45. Ավագ սերժանտ* Վաչիկ Հմայակի Լևոնյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 27 հունիսի 1945 թ.:*



Հրետանավոր Վահիկ Լևոնյանը մարտական փառավոր ուղի է անցել Հյուսիսային Կովկասից մինչև Բեռլին։ 1942 թվականի վերջերից մինչև Հայրենական պատերազմի հաղթական վախճանը Վահիկը կռվել է մի շարք ռազմաճակատներում, մասնակցել բազմաթիվ մեծ ու փոքր մարտերի, այդ թվում՝ սովետական բանակի եզրափակիչ հաղթական ճակատամարտին՝ Բեռլինի գրավմանը։

Վահիկ Հմայակի Լևոնյանը ծնվել է 1923 թվականին Միկոյանի (այժմ Եղեգնաձոր) շրջանի Գնիշիկ գյուղում։ Գյուղի 7-ամյա դպրոցը ավարտելուց հետո նա սովորում և 1940 թվականին ավարտում է Երևանի ակումբա-գրադարանային տեխնիկումը։ 1941—1942 թվականներին Վահիկն աշխատում է, սկզբում որպես շրջանային պիոներական տան վարիչ, ապա՝ Հայրենի գյուղում՝ որպես դասատու։

1942 թվականին կոմերիտական Լևոնյանը մեկնում է բանակ։ Ուսումնասիրելով հրետանային գործը, նա, որպես հրանոթի հրամանատար, մարտերի մեջ է մտնում Մոզդոկի շրջանում։

Դոնի Ռոստովը ազատագրելու ժամանակ (1943 թվականի փետրվարի 14) Լևոնյանի հրանոթի անձնակազմը ոչնչացնում է թշնամու մեկ զրահամեքենա, երկու տանկ, իսկ Ազովի ծովում խորտակում մեկ նավ։ Մի քանի օր անց մեր զորամասերը թշնամուն դուրս են քշում Ռոստովի մարզի Չալցեր

*Երկաթուղային կայարանից, որտեղ Վահիկի մարտական ընկերները նորից են աչքի ընկնում և գնդի հրամանատարությունը նրանց շնորհակալություն է հայտնում։*

*Նույն թվականին Լեոնյանն ընդունվում է կոմունիստական պարտիայի շարքերը և պարգևատրվում Մարտական ծառայությունների համար մեդալով։*

*1944 թվականի ապրիլին Լեոնյանի ղեկավարած հրանոթի հաշվարկը Պերեկոպի պարանոցում մասնակցում է թշնամու ամրությունները խորտակելու և Արմյանսկը ազատագրելու գործողություններին, ինչպես նաև Ղրիմի բազմաթիվ այլ քաղաքների, այդ թվում Սիմֆերոպոլի, Բախչիսարայի ազատագրմանը, այդ մարտերում ոչնչացնելով թշնամու զգալի քանակությամբ տեխնիկա և կենդանի ուժ։*

*Այնուհետև Լեոնյանի մարտական ուղին անցնում է Բելոռուսիայով, Արևելյան Պրուսիայով, Լեհաստանով և հասնում մինչև Բեռլին։*

*Հրանոթի հրամանատար ավագ սերժանտ Վահիկ Լեոնյանը՝ մարտերում ցուցաբերած բացառիկ խիզախությունների և հերոսությունների համար 530-րդ հակատանկային հրետանային գնդի հրամանատարության կողմից 1944 թվականի դեկտեմբերին պարգևատրվում է Կարմիր աստղի, 1945 թվականի մարտին՝ Փառքի երրորդ աստիճանի շքանշաններով։*

*1945 թվականի ապրիլի 30-ին Բեռլինից 40 կիլոմետր հարավ ընկած Կումմերսդորֆ բնակավայրի մոտ, շրջապատման մեջ, Վահիկ Լեոնյանի հրանոթի անձնակազմը համառ կռիվ է մղում։ Գերմանական հետևակը տանկերի պաշտպանությամբ անընդհատ գրոհում է մի բուռ մարտիկների վրա։ Թշնամու գրոհները հետևում են մեկը մյուսին, որոնք բոլորն էլ ետ են մղվում նրա համար մեծ կորուստներով։ Լեոնյանի քաջարի մարտիկներն արդեն հետ էին մղել տասը գրոհ, հրանոթի ուղղակի կրակով և անձնական զենքով ոչնչացրել 85 ֆաշիստական զինվոր ու սպա, երկու տանկ և երկու զրահամեքենա, երբ հակառակորդը նորից անցնում է հարձակման. մեր մարտիկների մոտ ոչ մի արկ և փամփուշտ չէր մնացել։ Լեոնյանն սկսում է հակատանկային նռնակներ նետել գերմանացիների վրա, ոչնչացնելով բազմաթիվ զինվոր ու սպա։ Այդ ժամանակ նա կարողանում է երկու անգամ օդում բռնել և ետ շպրտել հակառակորդի նռնակները։ Կռիվը շարունակելով թշնամուց գրաված զենքերով և փամփուշտներով, Լեոնյանի խիզախները ետ են մղում ևս չորս գրոհ, ոչնչացնելով 30 հիտլերականի։ Ռազմապաշարը վերջացել էր։ Ոչ մի միջոց չէր մնացել կռիվը շարունակելու համար, և պարտությունը, կարծես թե, վերահաս էր։ Բայց ո՛չ։ Հնարամիտ հրետանավորները գերմանացիներին հարկադրում են դիմել ձեռնամարտի, ճեղքում են շրջապատման օղակը և միանում յուրայիններին։ Ընդ որում այդ ձեռնամարտում Լեոնյանը խզակոթով անձամբ սպանում է չորս ֆաշիստի, իսկ երկուսին գերի է վերցնում։*

*Բեռլինի ճակատամարտում՝ Կումմերսդորֆի մոտ տեղի ունեցած մարտում ցույց տված անձնական խիզախության և արիության համար, ՍՍՌՄ Գե-*

րագույն սովետի նախագահության 1945 թվականի հունիսի 27-ի հրամանագրով, հրանոթի հրամանատար ավագ սերժանտ Վահիկ Հմայակի Լեոնյանին շնորհվում է Սովետական Միության Հերոսի կոչում։

Սովետական ժողովրդի հաղթանակը հերոս հրետանավորը տոնեց Բեռլինում։ Դրանից մի քանի օր անց նա զոհվեց մարտական պոստում։

Եղեգնաձորի շրջանի աշխատավորները, հավերժացնելով իրենց հայրենակցի հիշատակը, Սովետական Միության Հերոս Վահիկ Հմայակի Լեոնյանի ծննդավայր Գնիշիկ գյուղում կանգնեցրել են նրա կիսանդրին։





# ԳԱՐՈՒՇ ՍԵՐԳԵՅԻ ԿՈՍՏԱՆԴԻՆՈՎ



## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքները օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար,* շնորհել Սովետական Միության հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

*Ավագ սերժանտ* Գարուշ Սերգեյի Կոստանդինովին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 24 մարտի 1945 թ.։*





Գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ մղված մարտերում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և ցուցաբերած անձնական խիզախության ու արիության համար գվարդիայի ավագ սերժանտ Գարուշ Սերգեյի Կոստանդինովին ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահությունը 1945 թվականի մարտի 24-ի հրամանագրով հետմահու շնորհեց Սովետական Միության հերոսի կոչում։

Հակատանկային հրանոթի նշանառու Գարուշ Կոստանդինովը ծնվել է 1921 թվականին Բաքվում, բանվորի ընտանիքում։ 1928 թվականին Գարուշը սկսում է հաճախել Բաքվի № 49 դպրոցը։ Աշակերտական տարիներին նա աչքի է ընկնում իր ընդունակություններով։ 1938 թվականին Գարուշը ընդունվում է ՀամԼԿԵՄ շարքերը և ամբողջովին նվիրվում կոմերիտական աշխատանքներին։

1939 թվականին ավարտելով դպրոցը, Գարուշը աշխատանքի է անցնում Ալի-Բայրամլի անվան կարի ֆաբրիկայում։ 1940 թվականի սեպտեմբերին նա զորակոչվում է սովետական բանակ, ուր զինվում է ռազմական գիտելիքներով և դառնում հակատանկային հրանոթի նշանառու։

Երբ սկսվում է Հայրենական պատերազմը, իր զորամասի հետ միասին

Կոստանդինովը մեկնում է ռազմաճակատ և ահեղ մարտերի բովում ընդունվում կոմունիստական պարտիայի շարքերը։

1944 թվականի հոկտեմբերին Բելոռուսական երրորդ ռազմաճակատի զորքերը ավիացիայի, հրետանային կրակի փոխգործողությամբ անցնում են հարձակման, ճեղքում գերմանացիների խոր էշելոնացված պաշտպանությունը և խորանում Արևելյան Պրուսիայի տերիտորիան։ Այդ զորքերի մարտակարգում էր առաջին գվարդիական կործանիչ-հակատանկային առանձին բրիգադան, որի 3-րդ գնդում ավագ սերժանտ Գարուշ Կոստանդինովը հմուտ հրետանավոր էր։

Հոկտեմբերի 23-ին, Արևելյան Պրուսիայի Գոլդապ քաղաքը գրավելուց հետո, Բելոռուսական երրորդ ռազմաճակատի մի խումբ զորամասեր ուժեղ մարտեր են սկսում Գոլդապից հյուսիս-արևելք։ Նոյեմբերի 4-ին թշնամին մի քանի անգամ անցնում է հակագրոհի Գոլդապից 2 կմ հյուսիս-արևելք գտնվող հրաձգարանի ուղղությամբ և նեղում հրետանային այն հաշվարկին, որի կազմում էր նաև Կոստանդինովը։ Հրետանային հաշվարկը գործում է հերոսաբար։ Քանի գնում թեժանում է անհավասար մարտը գերմանական հետևակի և 11 տանկերի հետ։ Առանձնապես մեծ վարպետությամբ է մարտնչում գվարդիայի ավագ սերժանտ Գարուշ Կոստանդինովը։

Ետ մղելով հակառակորդի հետևակի և 11 տանկերի հակագրոհը, Կոստանդինովը իր ընկերների հետ հրկիզում է երեք տանկ և ոչնչացնում թշնամու 40 զինվոր ու սպա։ Հակառակորդի երկրորդ տանկը հրկիզելիս, Կոստանդինովը ծանր վիրավորվում է, սակայն հրանոթը չի թողնում և շարունակում է կրակ տեղալ թշնամու վրա։ Երրորդ տանկը Գարուշը ոչնչացնում է արդեն վիրավոր վիճակում։ Կատաղի մենամարտը դադարում է միայն այն ժամանակ, երբ խիզախ ռազմիկը կորցնում է գիտակցությունը։ Գվարդիայի ավագ սերժանտ Կոստանդինովն ընկնում է հերոսի մահով։ Սովետական ռազմիկի անձնազոհության շնորհիվ գերմանացիների հակագրոհը տապալվում է։ Մեր հետևակն ամուր կերպով պահում է իր բնագծերը և նախապատրաստվում նոր հարձակման։

Այսպիսին է Սովետական Միության հերոս Գարուշ Կոստանդինովի կյանքի կարճատև, բայց փառահեղ ուղին։



# ԱՅԴԻՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ





## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**Կարմիր բանակի սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու մասին**

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքները օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար,* շնորհել Սովետական Միության Հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

17. *Ավագ սերժանտ* Այդին Հարությունի Հարությունյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 24 մարտի 1945 թ.:*





# 89-րդ

*Հայկական Թամանյան հրաձգային դիվիզիայի շարքերում աճած հերոսներից է Այդին Հարությունի Հարությունյանը։*

*Հարությունյանը ծնվել է 1918 թվականի հուլիսի 1-ին, այժմյան Հայկական ՍՍՌ Ղուկասյանի շրջանի Թորոս գյուղում։ Ավարտել է գյուղի ոչ-լրիվ միջնակարգ դպրոցը։ 1934 թվականին ընդունվել է Լենինականի Ա. Մռավյանի անվան մանկավարժական ուսումնարանը, որը ավարտելուց հետո նշանակվել է Ամասիայի շրջանի Ղոնչալու գյուղի ոչ-լրիվ միջնակարգ դպրոցի ուսմասվար։*

*1939 թվականի աշնանը Ա. Հարությունյանը մեկնում է սովետական բանակ։ Նա սովորում է Կրասնոդարի երկրամասի Եյսկ քաղաքում՝ գնդի դպրոցում։ Ավարտելով դպրոցը, նա աշխատում է նույն գնդում իբրև ջոկի հրամանատար։ 1941 թվականի հուլիսին, 158-րդ հրաձգային դիվիզիայի № 875 գնդի կազմում, նա մեկնում է ռազմաճակատ և մասնակցում Սմոլենսկ-Վիտեբսկ քաղաքների ուղղությամբ մղվող մարտերին։ Օգոստոս ամսին Սմոլենսկում Ա. Հարությունյանը վիրավորվում է։ Բուժվելուց հետո նա վերադառնում է զորամաս և իր մարտական ընկերների հետ մասնակցում Ելեցի ազատագրման մարտերին։ Ելեցի կռիվներում ակտիվ մասնակցության հա-*

մար նրանց դիվիզիան ստանում է գվարդիական կոչում։ 1941 թվականի սեպտեմբերի վերջերին Ա. Հարությունյանը նորից վիրավորվում է և ընկնում թշնամու շրջապատման մեջ։ Պարտիզանների օգնությամբ դուրս գալով շրջապատումից, նա ուղարկվում է Սլավգորոդ քաղաքը բուժման։ Ապաքինվելով, 1941 թվականի նոյեմբերին արձակուրդ ստանալով, նա գալիս է Հայաստան։

Արձակուրդից հետո Այդինը վերադառնում է զորամաս և № 111 բրիգադայի կազմում մասնակցում Կովկասի համար մղած մարտերին։ 1943 թվականի փետրվարին ծովային բրիգադայի շարքերում նա Նովոռոսիյսկի մոտ «Մալայա զեմլյա»-ում իջեցված դեսանտայինների մեջ էր և աչքի էր ընկնում իր սխրագործություններով։

1943 թվականի սեպտեմբերի 16-ին Նովոռոսիյսկ քաղաքի ազատագրման համար մղվող մարտերում նա դարձյալ վիրավորվում է և տեղափոխվում Գելենջիկի հոսպիտալը։ Բուժվելուց հետո, նույն թվականի հոկտեմբերին Ա. Հարությունյանը տեղափոխվում է 89-րդ հայկական հրաձգային դիվիզիայի 526-րդ հրաձգային գնդի 7-րդ վաշտը՝ սկզբում որպես դասակի հրամանատարի օգնական, այնուհետև դասակի հրամանատար։ Նույն թվականի նոյեմբերին դիվիզիան դեսանտ է իջնում Կերչ թերակղզում։ Կատաղի մարտեր են սկսվում Կերչ քաղաքի ազատագրման համար, որոնց ակտիվորեն մասնակցում է Ա. Հարությունյանը։

1944 թվականի հունվարի 26-ին Կերչ քաղաքի միջով անցնող Կատերլեզ ջրանցքի ափին մղվող մարտերում Այդինը վիրավորվում է։ Բուժվելուց հետո նա վերադառնում է իր զորամասը։ Այդ ժամանակ դիվիզիան արդեն մարտեր էր սկսել Սևաստոպոլի տակ։

Մայիսի 7-ին մեր զորքերը հասնում են Բալակլավայի մոտ՝ Սապուն Գորայի տակ, ուր ուժեղ մարտեր էին տեղի ունենում։ Կոմունիստ Ա. Հարությունյանին առաջադրվում է 12 ասավմիկներից բաղկացած գրոհային խումբ կազմակերպել։ Այդ խումբը, իր տեղամասում, առաջինը ճեղքելով թշնամու պաշտպանության գիծը, մյուս ստորաբաժանումների համագործակցությամբ շարժվում է մինչև բարձունքի գագաթը։

Մայիսի 9-ին հրաման է տրվում առաջ շարժվել և գրավել մի նոր բարձունք։ Լուսադեմին նշանակվում է գրոհը՝ գերմանացիների պաշտպանության մի այլ կարևոր պաշտպանական գիծը՝ Գորնայա բարձունքը, գրավելու համար։ Այդ բարձունքի լանջին դասավորված էին թշնամու 3 դոտերն ու 3 դզոտները։ Մեր ստորաբաժանումները հարձակվում են. համառ մարտեր են բռնկվում բարձունքի համար։ Ա. Հարությունյանը, իր մարտական ընկերների հետ անցնում է թշնամու թիկունքը և առաջինը նետվելով գրոհի, ներխուժում հակառակորդի խրամատները։ Գերմանացիներն անցնում են հակագրոհի։ Այդ թեժ մարտում զոհվում է դասակի հրամանատարներից մեկը։ Ա. Հարությունյանն իր վրա վերցնելով նաև այդ դասակի հրամանատարությունը՝ հաջողու-

թյամբ նա է շպրտում գերմանացիներին։ Այնուհետև երկու դասակով անցնելով հակահարձակման, նրանք թշնամուն դուրս են հանում բնագծերից։ Հակառակորդը մարտի դաշտում թողնում է իր զինվորների մի քանի տասնյակ դիակներ։

Գորնայա բարձունքի գրավման մարտերում Ա. Հարությունյանի հետ կողք-կողքի հերոսական սխրանքներ են գործում մարտիկներ Աշոտ Քոչարյանը, Աղասի Ստեփանյանը, ղազախ Կարմանգուլի Ժակսիմբաևը, Վարդգես Ռուստամյանը և ուրիշներ, որոնք արհամարհելով մահը, առաջինն են մտնում թշնամու խրամատները և հանկարծակիի բերելով՝ ճեղքում նրա ամրությունները, ոչնչացնում հակառակորդի տեխնիկան և հնարավորություն տալիս գործող մյուս ստորաբաժանումներին առաջ շարժվելու։

Սևաստոպոլի ազատագրման համար կարևոր նշանակություն ունեցող Գորնայա բարձունքի գրավման մարտերում հերոսություն ցուցաբերելու համար ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1945 թվականի մարտի 24-ի հրամանագրով Այդին Հարությունի Հարությունյանը արժանացավ Սովետական Միության հերոսի կոչման։

1944 թվականի սեպտեմբերից 89-րդ հայկական հրաձգային դիվիզիան մասնակցում է Լեհաստանի ազատագրման մարտերին, Օդերի անցմանը և Բեռլինի գրավման ճակատամարտերին։ Ա. Հարությունյանը այդ մարտերում նույնպես ցուցաբերում է խիզախություն և հմտություն։

Ա. Հարությունյանը պարգևատրվել է Լենինի շքանշանով, «Ոսկե աստղ» մեդալով, Կարմիր աստղի երկու շքանշաններով, ինչպես նաև Կովկասի պաշտպանության, Վարշավայի ազատագրման, Բեռլինի գրավման համար մեդալներով։

Ա. Հարությունյանը սովետական բանակից զորացրվում է 1945 թվականի նոյեմբերին։ Նա վերադառնում է հայրենի գյուղ և 1946 թվականի հունվարից աշխատում Ղուկասյանի շրջանային սովետում, որպես կուլտլուսբաժնի վարիչ, իսկ նույն թվականի սեպտեմբերին ընդունվում է ՀԿՊ Կենտկոմին առընթեր պարտիական դպրոցը, որը 1948 թվականին ավարտելով, աշխատանքի է անցնում Հայկական ՍՍՀ ներքին գործերի մինիստրության ցանցում։ Այժմ աշխատում է Երևանի քաղաքային սովետում։



# ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՌՈՒԲԵՆԻ ՄԿՐՏՉՅԱՆ





## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**Կարմիր բանակի սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու մասին**

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել Սովետական Միության Հերոսի կոչում, հանձնելով Լենինի շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ.*

*Ավագ սերժանտ Հարություն Ռուբենի Մկրտչյանին:*

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 24 մարտի 1945 թ.*



Հարություն Ռուբենի Միրզոյանը ծնվել է 1922 թվականին Ախուրյանի շրջանի Ներքին Ղանլիջա գյուղում։ Ավարտելով գյուղի տարրական և Վերին Ղանլիջայի յոթնամյա դպրոցները նա ընդունվում է Լենինականի Շահումյանի անվան երկաթուղային տեխնիկումը, որն ավարտելուց հետո աշխատանքի է նշանակվում երկաթուղում։ 1942 թվականի հունվարի 22-ին Միրզոյանը զորակոչվում է բանակ և մասնակցում Մոզդոկի տակ մղվող մարտերին, որպես դեսանտային։

1942 թվականի հոկտեմբերի վերջերին նրանց միավորումը տեղափոխվում է Օրջոնիկիձե քաղաքի շրջակայքը, որտեղից մարտերով հասնում է մինչև Նովո-Նիկոլաևկա։ Այդ մարտերից մեկում Հ. Միրզոյանը առաջադրանք է ստանում՝ տանկային դեսանտի հետ անցնել թիկունք և ջլատել թշնամու ուժերը։ Հ. Միրզոյանին և նրա մարտական ընկերներին հաջողվում է անցնել թշնամու թիկունք և կորուստներ պատճառել նրան։ Տրված առաջադրանքը գերազանց կատարելու համար Հ. Միրզոյանը պարգևատրվում է Խիզախության համար մեդալով։

Գվարդիական կորպուսը համառ մարտեր է մղում Օրջոնիկիձեի տակ։ Հ. Միրզոյանի ջոկին հանձնարարություն է տրվում «լեզու» բերել։ Մասնակցելով

թշնամու խրամատներին, ջոկի մարտիկները կտրում են հետախույզներին։ Քիչ անց երևում են երկու գերմանացիներ, որոնք գալիս են կապը վերականգնելու։ Հ. Մկրտչյանը և իր ընկերները նրանցից մեկին սպանում են, իսկ մյուսին բերում իբրև «լեզու»։

1943 թվականի փետրվարի վերջերին Հ. Մկրտչյանը տեղափոխվում է 89-րդ հայկական հրաձգային դիվիզիա՝ 526-րդ գնդի ավտոմատային վաշտը։ Նույն թվականի սեպտեմբերին դիվիզիան Նովոռոսիյսկի ուղղությամբ մարտերի մեջ է մտնում Սախարնայա Գոլովկա բարձունքի համար և գրավում այն։ Դիվիզիան այնուհետև մարտեր է մղում Կուրչանսկայայի մոտ՝ մի բարձունքի համար։ Թշնամուն հանկարծակիի բերելու նպատակով դիվիզիայի հրամանատար, գնդապետ Նվեր Սաֆարյանը թշնամու թիկունքն է ուղարկում 15 ավտոմատավորների, որոնց ղեկավարում է վաշտի հրամանատար, ավագ լեյտենանտ Խաչիկ Միրզոյանը։ Սրանց մեջ էր նաև Հ. Մկրտչյանը։ Սեպտեմբերի 24-ի գիշերը ավտոմատավորները անցնում են թշնամու առաջավոր գիծը, կտրում փշալարերը, մտնում նրա մարտական դասավորության մեջ և ուժեղ կրակ բաց անում։ Հանկարծակի կրակը խուճապ է առաջացնում, թշնամին դիմում է փախուստի։ Այդ առաջադրանքի կատարումով հնարավորություն է ստեղծվում գրավելու բարձունքը։ Մարտական այդ առաջադրանքի կատարմանն ակտիվ մասնակցություն ունենալու համար Հարություն Մկրտչյանը պարգևատրվում է Կարմիր աստղի շքանշանով։

1944 թվականի փետրվարին կռիվներ են տեղի ունենում Կերչ քաղաքի մատույցներում և ապա նրա փողոցներում։

Փետրվարի 4-ն էր։ Թշնամին աղյուսի գործարանի մոտ անցել էր հակահարձակման և մի տան պատուհանից ուժեղ գնդացրային կրակով արգելակում էր մեր հետևակի առաջխաղացումը։ Հ. Մկրտչյանին հանձնարարվում է լռեցնել այդ անընդհատ գործող գնդացրային կրակը։ Հ. Մկրտչյանը երեք ավտոմատավորների հետ մոտենում է այդ պատուհանին։ Գերմանացի զինվորներին շփոթեցնելու նպատակով Մկրտչյանը անցնում է տան հակառակ կողմի պատուհանի մոտ և ճարպկորեն վեր բարձրանալով երկու նռնակ է նետում դիմացի պատուհանից ներս։ Նռնակների պայթյունից հետո Մկրտչյանը ներս է նետվում և ձեռքի ավտոմատով ոչնչացնում սենյակում գտնվող թշնամու գնդացրորդներին։ Ներս են մտնում նաև նրա երեք ընկերները։ Վերցնելով գերմանական գնդացիրը, նրանք կրակ են բաց անում իրենցից ոչ հեռու գտնվող գերմանական ականանետների անձնակազմի վրա։ Մկրտչյանն իր մարտիկների հետ ոչնչացնում է նաև այդ կրակային կետը։ Նույն օրը երեկոյան Հ. Մկրտչյանն առաջադրանք է ստանում՝ ջոկով գնալ հետախուզության, որի ընթացքում ջոկը թշնամուց խլում է մեկ հաստոցավոր գնդացիր և այլ զենքեր ու վերադառնում զորամաս։ Այդ առաջադրանքը խիզախորեն կատարելու համար հրամանատարությունը Հ. Մկրտչյանին պարգևատրում է Կարմիր դրոշի շքանշանով։

*Հ. Մկրտչյանը 12 անգամ հետախուզության է գնացել թշնամու թիկունքում։*

*Կերչ քաղաքը մաքրելով հակառակորդից, մեր զորքերը շարժվում են դեպի Սևաստոպոլ։ 1944 թվականի մայիսի 7-ին սկսվում են գրոհային մարտեր Սևաստոպոլի համար։ 89-րդ Թամանյան դիվիզիան մարտերով առաջ է շարժվում։ Կատաղի կռիվներ են մղվում Գորնայա բարձունքի համար, որը թշնամու ամենաուժեղ հենակետերից մեկն էր։ Հարություն Մկրտչյանի ջոկին հրաման է տրվում ոչնչացնել թշնամու այն դզոտը, որը գործում էր իրենց վաշտի գրոհային խմբի ուղղությամբ և խանգարում Գորնայա բարձունքի գրավմանը։ Կռիվը քանի գնում սաստկանում է, թշնամու դզոտն անդադար գործում է։ Հ. Մկրտչյանի ջոկը կարողանում է շրջապատել դզոտը և հակատանկային նռնակներով ոչնչացնել այն։ Դրանով Մկրտչյանի ջոկը հնարավորություն է ընձեռում ստորաբաժանմանը առաջ շարժվելու։*

*Վերջին մարտերն էին մղվում Ղրիմի թերակղզու համար։ 1944 թվականի մայիսի 12-ին, հրետանային կրակի տակ, Մկրտչյանը, երկու մարտիկների հետ, սողեսող առաջ էր շարժվում։ Նրանք անցնում են թշնամու թիկունքը, մրրկալի կրակ բացում թշնամու նահանջող զինվորների վրա և խուճապ առաջացնում։ Երբ Հ. Մկրտչյանը տեսնում է, որ թշնամու ուժերը ցրիվ են եկել և շարքերը նոսրացել են, իսկույն դուրս է թռչում թաքստոցից և գերի է վերցնում մի քանի զինվորի ու երեք սպայի։ Մարտադաշտում մնում են քառասունից ավելի սպանվածներ։ Ղրիմի ազատագրման մարտերում ցուցաբերած հերոսության համար ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1945 թվականի մարտի 24-ի հրամանագրով գվարդիայի ավագ սերժանտ Հարություն Ռուբենի Մկրտչյանին շնորհվում է Սովետական Միության հերոսի կոչում։*

*Ղրիմի ազատագրումից հետո Թամանյան հերոսական դիվիզիայի շարքերում Հ. Մկրտչյանը մասնակցում է Լեհաստանի ազատագրման, Օդերի անցման, Ֆրանկֆուրտի գրավման մարտերին և սովետական զինված ուժերի միավորումների հետ հաղթականորեն մտնում Բեռլին, մասնակցում ֆաշիստական Գերմանիայի ջախջախմանը։*

*Հայրենական պատերազմի հաղթանակից հետո Սովետական Միության հերոս Հարություն Մկրտչյանը վերադառնում է Հայաստան, ընդունվում գյուղատնտեսական ինստիտուտ։ 1953 թվականին ավարտելով ինստիտուտի մեխանիզացիայի ֆակուլտետը, նա աշխատանքի է մեկնում Էջմիածնի շրջանի Վերին Ղարխունի մեքենա-տրակտորային կայանը՝ իբրև ինժեներ-մեխանիկ։ Այժմ նա աշխատում է Էջմիածնի ավտոգրասենյակում, որպես գլխավոր ինժեներ։*



# ԱՐԱՄԱՅԻՍ ՍԱՐԳՍԻ ՊՈՂՈՍՅԱՆ



## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**Կարմիր բանակի գեներալներին, սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին**

*Դնեպրը հաջող գետանցելու, Դնեպրի արևմտյան ափին ամուր հենակետ ստեղծելու գործում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել Սովետական Միության հերոսի կոչում, հանձնելով Լենինի շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ.*

32. *Ավագ սերժանտ* Արամայիս Սարգսի Պողոսյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 20 դեկտեմբերի 1943 թ.*







Դնեպրի անցման ժամանակ ցուցաբերած խիզախության և անձնազոհության համար ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահությունը 1943 թվականի դեկտեմբերի 20-ի հրամանագրով հետմահու Սովետական Միության հերոսի կոչում է շնորհում ավագ սերժանտ Արամայիս Սարգսի Պողոսյանին։

Արամայիս Պողոսյանը ծնվել է 1914 թվականի օգոստոսին՝ Դուզքենդի շրջանի Բայանդուր գյուղում, գյուղացու ընտանիքում։ 1923 թվականին նա ընդունվում է գյուղի առաջին աստիճանի դպրոցը, իսկ յոթնամյա կրթությունն ստանում է Լենինականում։ 1929 թվականին Պողոսյանն ընդունվում է Լենինականի տեքստիլ կոմբինատի ֆաբգործուսը և ավարտում այն՝ ստանալով նիթավարպետի կոչում։ Կարճ ժամանակ աշխատելուց հետո, 1930 թվականին Արամայիսը վերադառնում է գյուղ։ Այստեղ նա աշխատանքի է անցնում որպես կալսիչ մեքենայի մեքենավար։ Առաջավոր կոլտնտեսական Արամայիսը 1934 թվականին ընդունվում է Երևանի մելիորատիվ տեխնիկումը, ուր սովորելու հետ մեկտեղ աշխատում է պետական օպերայում, որպես բուտաֆորիստ։

1939 թվականի հոկտեմբերին Մոսկվայում կայացած հայկական արվես-



270—26

տի և գրականության տասնօրյակին պարգևատրվածների թվում էր նաև կոմերիտական Արամայիս Պողոսյանը։ Նա արժանացել էր Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի պատվոգրի։ Նույն թվականի վերջերին Պողոսյանը զորակոչվում է բանակ և 1940 թվականին մասնակցում Բեսարաբիայի ազատագրմանը։

Հայրենական պատերազմի հենց առաջին օրերից ավագ սերժանտ Արամայիսը մասնագիտացված պոնտոնա-կամրջային առանձին գումարտակում ջոկի հրամանատար էր։ Հարկադրական նահանջի ծանր իրադրության պայմաններում Պողոսյանն իր վարպետությունը դրսևորում է Դնեստր և Դնեպր գետերի վրա պոնտոնային անցումների կառուցման ժամանակ։ Այնուհետև նա ակտիվ կերպով մասնակցում է Վոլգոգրադի պաշտպանությանը։ 1943 թվականի փետրվարին Խարկովի ազատագրման մարտերում ցուցաբերած սխրագործության համար Արամայիսը պարգևատրվում է Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով։

1943 թվականի աշնանը սովետական զորամասերը կատաղի մարտեր էին մղում Դնեպրի անցման և նրա աջ ափին հենակետ ստեղծելու համար։ Դնեպրի գետանցման հերոսական մարտերում կռվում էին սովետական բազմազգ ժողովրդի զավակները, որոնցից ավելի քան 2000 հոգի արժանացան Սովետական Միության հերոսի բարձր կոչմանը։ Նրանց թվում էր նաև ավագ սերժանտ Պողոսյանը։ Սեպտեմբերի 29-ին հրամանատարության կողմից պոնտոնային առանձին գումարտակի ջոկի հրամանատար Պողոսյանին առաջադրանք է տրվում՝ մասնակցել Դիրնյովկա գյուղից դեպի Դնեպրի աջ ափը անցկացվելիք պոնտոնային կամուրջի կառուցմանը։ Հաղթահարելով բոլոր դժվարությունները, Պողոսյանը իր ջոկով հաջողությամբ կատարում է առաջադրանքը։ Եվ երբ նա կամուրջով անց էր կացնում մեր ռազմիկների առաջին խումբը, հակառակորդը հրետանային և ականանետային կրակով ռմբակոծում է Դիրնյովկա գյուղը։ Արկի բեկորից վնասվում է կամուրջը, Պողոսյանը վիրավորվում է ոտքից։ Սակայն այդ վիճակում, լարելով ուժերը, նա թշնամու անդադար կրակի տակ վերանորոգում է կամուրջը, և հենց ափին վիրավորվում է երկրորդ անգամ։

Պողոսյանը վերջին ճիգերը գործադրելով, չափազանց վտանգավոր պայմաններում աշխատում է պոնտոնը հեռացնել ռմբակոծության շրջանից։ Այստեղ էլ թշնամու արկի բեկորից նա զոհվում է։



# ԻՎԱՆ ԿՈՍՏԱՆԴԻՆԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ




## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի գեներալներին, սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Դնեպրը հաջող գետանցելու, Դնեպրի արևմտյան ափին ամուր հենակետ ստեղծելու գործում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար,* շնորհել Սովետական Միության հերոսի կոչում, *հանձնելով* Լենինի *շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ.*

*174. Սերժանտ* Իվան Կոստանդինի Շահումյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 30 հոկտեմբերի 1943 թ.*






Իվան (Հովհաննես) Կոստանդինի Շահումյանը ծնվել է 1913 թվականին այժմյան Լենինյան Ղարաբաղի Մարտունու շրջանի Բարա-բաթում գյուղում։ Նրա հայրը այդ տարիներին թողնում է գյուղը, մեկնում Տաշքենդ, ուր երկար տարիներ աշխատում է իբրև քարտաշ։ Հ. Շահումյանն այստեղ ընդունվում է գյուղատնտեսական տեխնիկում։ 1930 թվականին ավարտելով այն, մեկնում է Տաջիկական ՍՍՌ և մեքենա-տրակտորային կայաններից մեկում աշխատում որպես ագրոտեխնիկ։ 1934 թվականին նա գործուղվում է մերձարևադարձային կուլտուրաների Սուխումիի ինստիտուտը սովորելու, իսկ 1935 թվականին փոխադրվում է Մոսկվա՝ Տիմիրյազևի անվան գյուղատնտեսական ակադեմիա, որն ավարտում է 1941 թվականին։

Երբ սկսվում է Հայրենական մեծ պատերազմը, Մոսկվայում կազմակերպվում են աշխարհազորային հատուկ դիվիզիաներ, որոնց շարքերից մեկի մեջ էր նաև Հ. Շահումյանը։ 1941 թվականի սեպտեմբերին աշխարհազորային այդ դիվիզիան գործում էր Սմոլենսկից հարավ-արևելք՝ Ելնյայի մոտ, ուր մարտեր էին տեղի ունենում թշնամու զորքերի հետ։ Այնուհետև դիվիզիան մասնակցում է Վոլոկոլամսկի համար մղած մարտերին։ Այստեղ Հ. Շահումյանը վիրավորվում է։ Նրան փոխադրում են Տաշքենդի հոսպիտալ՝ բուժման։

Ապաքինվելուց հետո Հ. Շահումյանը նշանակում է ստանում միջինասիական 69-րդ դիվիզիան, որը նոր էր ձևավորվում։ Այդ դիվիզիան, ուր Հ. Շահումյանը ծառայում էր իբրև հրաձգային դասակի հրամանատար, մարտերի մեջ է մտնում Տուլայի տակ։

Այնուհետև դիվիզիան մասնակցում է Կուրսկի շրջանում մղված ուժեղ մարտերին, ազատագրում է Դմիտրիև-Լգովսկիի շրջանը։

Ջիմլիշա բնակավայրի ազատագրման համար Հ. Շահումյանը մարտական առաջադրանք է ստանում՝ իր ստորաբաժանումով անցնել թշնամու թիկունքը և խուճապ ստեղծել։ Նրա ստորաբաժանման մարտիկները, անցնելով դժվարին ճանապարհներով, հասնում են մինչև անտառ։ Առավոտյան ժամը 5-ին սկսում են հարձակումը։ Թշնամին հանկարծակիի գալով խուճապի է մատնվում։ Երկու ժամ տևող համառ ձեռնամարտերից հետո դիվիզիայի ստորաբաժանումներն ազատագրում են Ջիմլիշա խոշոր բնակավայրը։

69 և 31-րդ գվարդիական դիվիզիաները հմտորեն անցնում են Դեսնա գետը, ապա 1943 թվականի օգոստոսին գետանցում են Սոժը և մտնում Դնեպրին, որի աջ ափին թշնամին պաշտպանական ամուր գծեր էր ստեղծել։

Հ. Շահումյանի ջերմ հայրենասիրությունը և հերոսությունը ցայտուն կերպով դրսևորվում են Դնեպրի անցման օրերին, երբ թշնամին յուրաքանչյուր թիզ հողից կառչելով, զենքի բոլոր տեսակներից կրակ էր բացում մեր միավորումների վրա։ Այդ ծանր պայմաններում մեր դեսանտային ստորաբաժանումների առաջ խնդիր էր դրված՝ ինչ գնով էլ լինի՝ անցնել Դնեպրի աջ ափը։

Սևսկի կարմրադրոշ 69-րդ հրաձգային դիվիզիայի 120-րդ գնդի քիմիական պաշտպանության ջոկի հրամանատար Հովհաննես Շահումյանը 1943 թվականի հոկտեմբերի 15-ին Գոմելի մարզի Լոևի շրջանում Դնեպր գետն անցնելու համար կազմված դեսանտային խմբում էր։ Նա թշնամու հրանոթային ուժեղ կրակի տակ առաջիններից մեկն է անցնում աջ ափը և ստեղծելով ծխաքողարկում, համարձակ առաջ է շարժվում թշնամու վրա և մյուս ստորաբաժանումների հետ միասին ապահովում հետագա առաջխաղացումը։ Մխի ծածկույթն անցնելուց հետո, պաշտպանական գծում նրա ջոկը գրավում է իր տեղը և թշնամու ձեռնարկած երկու հակագրոհի ժամանակ ոչնչացնում գերմանական մի քանի տասնյակ զինվորի։ Ուժեղ սվինամարտից հետո գերմանացիները նահանջում են, թողնելով մեծ քանակությամբ զոհեր և ռազմական տեխնիկա։ Այդ սվինամարտում Հ. Շահումյանը ոչնչացնում է թշնամու 11 զինվոր։

Դնեպրի ափին մեր ստորաբաժանումներից մեկի ձախ թևում վտանգավոր վիճակ էր ստեղծվել։ Այդ վտանգը կանխելու նպատակով Շահումյանը 17 հոգուց բաղկացած մի խմբով յոթ անգամ գրոհի է դիմում։ Գրոհող խումբը Շահումյանի ղեկավարությամբ մինչև լուսաբաց հերոսաբար կռվում է։ Այդ խմբից 15 հոգի զոհվում են։ Գնդացրի վերջին ժապավենը և մի քանի նռնակ-

ներ էին մնացել, երբ հերոսաբար կռված զույգին՝ գնդի հրամանատարի հրամանով օգնության հասան մյուս ստորաբաժանման մարտիկները։ Շահումյանը կրակելով գնդացրի վերջին ժապավենը, վիրավորվում է. նրան փոխադրում են հոսպիտալ բուժման։ Երեք ամիս չանցած, նա կրկին վերադառնում է իր զորամասը և մասնակցում Ռումինիայի ազատագրման մարտերին։ Այդ մարտերում նա ծանր կոնտուզիա է ստանում և ուղարկվում բուժման։

Դնեպրի անցման ժամանակ ցուցաբերած խիզախության համար ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության իր 1943 թվականի հոկտեմբերի 30-ի հրամանագրով Սովետական Միության հերոսի կոչում շնորհեց ավագ սերժանտ Իվան (Հովհաննես) Կոստանդինի Շահումյանին։

Պատերազմի հետագա տարիներին Հ. Շահումյանը մասնակցում է ֆաշիստական Գերմանիայի վերջնական ջախջախմանը և մարտերի ընթացքում աճելով, դառնում է հմուտ հրամանատար։ Նախքան զորացրվելը Հ. Շահումյանը արդեն փոխ-գնդապետի կոչում ուներ և ծառայում էր Գերմանիայում՝ սովետական օկուպացիոն զորքերի շարքերում։

Հայրենական պատերազմից հետո, 1945 թվականին Հ. Շահումյանը ընդունվում է Մոսկվայի Տիմիրյազևի անվան գյուղատնտեսական ակադեմիայի ասպիրանտուրան, որն ավարտելուց հետո նշանակվում է Մոսկվայի բանջարեղենի փորձնական կայանի դիրեկտոր։ Այժմ Հ. Շահումյանը աշխատում է Մոսկվայում, բանջարեղենի տնտեսության գիտահետազոտական ինստիտուտում։



# ՎԱՐԴԳԵՍ ԱՐՇԱԿԻ ՌՈՍՏՈՄՅԱՆ




## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**Կարմիր բանակի սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու մասին**

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար,* շնորհել Սովետական Միության Հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

*Ավագ սերժանտ* Վարդգես Արշակի Ռոստոմյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 24 մարտի 1945 թ.:*





Վարդգես Արշակի Ռոստոմյանը ծնվել է 1908 թվականին Սուրմալուի գավառի Ալիղամար գյուղում։ Դառն օրերով լի է եղել նրա մանկությունը։ Համաշխարհային պատերազմի տարիներին նրա ծնողները վախճանվում են։ Վարդգեսը մեծանում է որբանոցում։ 1930 թվականին ավարտելով Երևանի Ջերժինսկու անվան միջնակարգ դպրոցը, Վ. Ռոստոմյանը սկսում է աշխատել գինու քաղաքամերձ տնտեսությունում, սկզբում իբրև բանվոր, ապա իբրև այգեգործ։

1942 թվականին Վ. Ռոստոմյանը զորակոչվում է բանակ և ծառայում 89-րդ հայկական դիվիզիայում։ Տամանյան դիվիզիան Գրոզնու մոտ մըտնում է մարտերի մեջ։ Այդ մարտերից մեկի ժամանակ Վ. Ռոստոմյանի ջոկը հետախուզության է գնում թշնամու թիկունքը։ Ջոկը կարևոր տեղեկություններ է բերում թշնամու ուժերի դասավորության վերաբերյալ։

1943 թվականի հունվարին Կովկասյան ռազմաճակատի զորքերը անցնում են հարձակման։ Ջախջախելով թշնամու դիմադրությունը և հետապնդելով նրան, շուտով մեր զորքերը հասնում են Կուբանի հարթավայրը և ապա մարտեր սկսում Նովոռոսիյսկի ազատագրման համար։

Նովոռոսիյսկի համար մղած մարտերում Վ. Ռոստոմյանի ջոկը, մյուս ստորաբաժանումների թվում, 6 անգամ գրոհի է գնում, թշնամուն պատճառում մեծ կորուստներ, նրանից խլում մեքենաներ, ավտոմատներ, գնդա-

ցիրներ և այլ ռազմամթերք։ Կատարած այդ քաջագործության համար հրամանատարությունը նրան պարգևատրում է Կարմիր աստղի շքանշանով։

Թամանում մղված մարտերում Վ. Ռոստոմյանը ոտքից վիրավորվում է ու մեկնում բուժման։ Բուժվելուց հետո նա վերադառնում է իր մարտական ընկերների մոտ։ 1944 թվականի սկզբներին նրանք մարտեր էին մղում Կերչ քաղաքում։ Այդ մարտերին իր ակտիվ մասնակցությունն է ունենում նաև Վ. Ռոստոմյանը։

Մի անգամ ավագ սերժանտ Վ. Ռոստոմյանը միայնակ գնում է հետախուզության՝ թշնամու դասավորության մասին տեղեկություններ բերելու։ Նա անցնում է թշնամու պաշտպանական գիծը և մտնում մի խրամատ։ Վարդգեսը տեսնում է, որ թշնամու գնդացրի անձնակազմը քնած է։ Իսկույն նռնակներով ոչնչացնում է նրանց և վերցնելով գնդացիրը՝ ետ է վերադառնում։ Թշնամու մյուս զինվորները Ռոստոմյանի վրա կրակ են բաց անում։ Ռոստոմյանը խորամանկությամբ թողնելով գնդացիրը՝ թաքնվում է։ Թաքստոցից նկատում է, որ թշնամու մի քանի զինվորներ մոտենում են գնդացրին։ Նա իսկույն նրանց վրա է նետում երկու նռնակ։ Խուճապի մատնվելով՝ գերմանացի զինվորները փախչում են, իսկ ինքը իսկույն վերցնում է գնդացիրը և անցնում իր ստորաբաժանման պաշտպանական գիծը։ Կատարած այդ խիզախության համար Վ. Ռոստոմյանը հրամանատարության կողմից շնորհակալության է արժանանում։

Վ. Ռոստոմյանը մարտական նոր քաջագործություններ է կատարում Սևաստոպոլի ազատագրման համար մղած մարտերում։

Գորնայա բարձունքում թշնամին իր մի քանի դոտերի և դզոտերի միջոցով ստեղծել էր ուժեղ ամրություն և կրակի տակ էր առել մեր հետևակին՝ թույլ չտալով առաջ շարժվել։ № 526 գնդի մի շարք ստորաբաժանումներ, այդ թվում նաև Վ. Ռոստոմյանի ջոկը, մարտական առաջադրանք ստանալով, 1944 թվականի մայիսի 9-ին հարձակվում է Գորնայա բարձունքի վրա՝ թշնամու ամրությունները լիկվիդացնելու համար։ Մյուս ստորաբաժանումների հետ Վ. Ռոստոմյանի ջոկի մարտիկները սողեսող մոտենում են թշնամու դոտերին և դզոտերին։ Վ. Ռոստոմյանը ձախ կողմից առաջինն է նռնակների կապոցը նետում թշնամու դոտի մեջ։

Դոտը խափանվում է։ Նրան հետևում են ինչպես իր, այնպես էլ մյուս ստորաբաժանման մարտիկները։ Ձախ կողմից հարձակվելով, նրանք խուճապի են մատնում հակառակորդի զինվորներին, որոնք փախուստի են դիմում։ Մարտերի թեժ պահին թշնամու ինքնաթիռը ներքև խոյանալով՝ փորձում է կրակ բացել մեր առաջ շարժվող ստորաբաժանման վրա։ Վ. Ռոստոմյանը ձեռքի գնդացրի մի քանի համազարկով խփում է թշնամու ինքնաթիռը։ Գորնայա բարձունքում թշնամու ուժեղ ամրությունը ոչնչացնելու ժամանակ հերոսություն ցուցաբերելու համար ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահությունը

իր 1945 թվականի մարտի 24-ի հրամանագրով Սովետական Միության Հերոսի կոչում շնորհեց ավագ սերժանտ Վարդգես Արշակի Ռոստոմյանին։

Բանակի քաղվարչությունը ռազմաճակատում, հայերեն և ռուսերեն լեզուներով, հատուկ թերթիկ է լույս ընծայում՝ նվիրված Վ. Ռոստոմյանի սխրագործություններին։ Այդ թերթիկը վերջանում է հետևյալ խոսքերով՝ «Մարտիկ, հետևիր Սովետական Միության Հերոսի օրինակին։ Թշնամուն խփիր այնպես, ինչպես խփում է Սովետական Միության Հերոս Վ. Ռոստոմյանը»։

Ղրիմի ազատագրումից հետո 89-րդ հայկական հրաձգային դիվիզիան Բելոռուսական առաջին ռազմաճակատի զորքերի կազմում շարունակում է մարտերը Լեհաստանի ազատագրման և Գերմանիայում թշնամու ուժերի ջախջախման համար։

Լեհաստանի բնակավայրերից մեկի՝ Ռուսկի-պրուտի մոտ էր գտնվում այն ստորաբաժանումը, որի մեջ էր Վ. Ռոստոմյանը։ Անհրաժեշտ էին տեղեկություններ թշնամու ուժի և դասավորության վերաբերյալ։ Նա իր հետ վերցնելով ջոկի մի քանի մարտիկների՝ անցնում է թշնամու թիկունքը և բերում կարևոր տեղեկություններ, որոնց հիման վրա դիվիզիայի հրետանին ուժեղ կրակ է բացում թշնամու դասավորության վրա, քարուքանդ է անում նրա պահեստները, խրամատները, դզոտները։ Թշնամին, թողնելով մեծ քանակությամբ ռազմամթերք, փախուստի է դիմում։ Դիվիզիան, շարունակելով մարտերը, հասնում է Օդեր գետին և մասնակցում Ֆրանկֆուրտի և ապա Բեռլինի գրավման մարտերին։

1945 թվականի աշնանը Վ. Ռոստոմյանը զորացրվելով բանակից, աշխատանքի է անցնում Երևանում, տաքսարի ցանցում, ուր և աշխատում է մինչև այժմ։



# ԼԻՊԱՐԻՏ ՄԻՐԶՈՅԻ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ



## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**Կարմիր բանակի գեներալներին, սպայական, սերժանտական ու շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին**

*Դնեպրը գետանցելու, Դնեպրի աջ ափին մարտերը հաջողությամբ զարգացնելու գործում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար,* շնորհել Սովետական Միության հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

*71. Գվարդիայի սերժանտ* Լիպարիտ Միրզոյի Իսրայելյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 22 փետրվարի 1944 թ.։*







Լիպարիտ Միրզոյի Իսրայելյանը ծնվել է 1922 թվականի նոյեմբերին Սիսիանի շրջանի Բռնակոթ գյուղում, գյուղացու ընտանիքում։ 1930 թվականին Լիպարիտն ընդունվում է Բռնակոթի միջնակարգ դպրոցը։ 1938 թվականին նա ավարտում է նույն դպրոցի 8-րդ դասարանը և աշխատանքի անցնում գյուղի կոլտնտեսությունում։ Իսրայելյանը 1939 թվականին ընդունվում է ՀամԼԿԵՄ շարքերը։

1941 թվականի հոկտեմբերին Լիպարիտը մեկնում է բանակ և որպես կապավոր ծառայում է 408-րդ հայկական դիվիզիայում։ Դիվիզիան 1942 թվականի սեպտեմբերին մեկնում է ռազմաճակատ և մարտերի մեջ մտնում Գելենջիկում։ Մարտերում Իսրայելյանը վիրավորվում է։ Առողջանալուց հետո, 1943 թվականի սկզբներին, 110-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի առանձին վաշտի կազմում կապավոր Իսրայելյանը նորից վերադառնում է ռազմաճակատ և մասնակցում Կրասնոդար քաղաքի ազատագրման համար մղած մարտերին, որտեղ կապը անխափան պահելու համար պարգևատրվում է Արիության համար մեդալով։

1943 թվականի հուլիսին հիտլերյան հրամանատարությունը նոր հարձակում է ձեռնարկում Օրյոլ-Կուրսկ և Բելգորոդ-Կուրսկ ուղղություններով։ Օրյոլի և Բելգորոդի գլխավոր հատվածներում գերմանական բանակը սանձել

էր խոշոր խմբավորում, որը ենթարկվեց սովետական զորամասերի խորտակիչ հարվածներին։ Բելգորոդ քաղաքի ազատագրման ժամանակ 110-րդ գվարդիական հրաձգային դիվիզիան կատաղի դիմադրություն էր ցույց տալիս և գրոհում հակառակորդի նախապես պատրաստված և խոր էշելոնացված պաշտպանական գծերի վրա։ Մեր զորքերը օգոստոսի 5-ին ազատագրում են Օրյոլ և Բելգորոդ քաղաքները։ Գվարդիական կապավոր Իսրայելյանը այս մարտերում հաճախակի հատուկ առաջադրանքներ է կատարում, որի համար հրամանատարությունը նրան պարգևատրում է Կարմիր աստղի շքանշանով։

Նույն թվականի սեպտեմբերին մեր զորամասերը հասել էին լայնահուն Դնեպրին։ Իսրայելյանին առաջադրանք է տրվում՝ չորս կապավոր ռազմիկներով անցնել Դնեպրի աջ ափը և հեռախոսային գիծ անցկացնել գետի վրայով։

Հակառակորդի տեղատարափ կրակի տակ, իր մարտական ընկերների հետ, Իսրայելյանը առաջադրանքը կատարում է գերազանցորեն։ Դիվիզիան հաջողությամբ գետանցում է կատարում։ Դրա համար հրամանատարությունը Իսրայելյանին ներկայացնում է Սովետական Միության Հերոսի կոչման։ Նրա պարգևաթերթիկում հրամանատարությունը գրել է. «Իսրայելյանը 1943 թ. սեպտեմբերի 30-ին Դնեպր գետն անցնելու և հենակետ ստեղծելու ժամանակ ցուցաբերել է արիություն ու խիզախություն։ Նրան առաջադրանք էր տրված հեռախոսային գիծ անցկացնել Դնեպրի վրայով։

Հակառակորդի կրակի տակ Իսրայելյանը նավակով հեռախոսի սարքավորումն սկսեց տեղափոխել Դնեպրի աջ ափը։ Արկի պայթյունից նավակը ջուրն ընկավ։ Իսրայելյանը չշփոթվեց և հեռախոսի ապարատն ու կաբելի կոճը շալակին, լողալով անցավ գետի մյուս ափը։ Նրան հաջողվեց միացնել գիծը։ Այնուհետև Իսրայելյանը նոր կաբել վերցնելով՝ գիծը տարավ առաջ շարժվող զորամասերի հետևից։ Այս առաջադրանքը կատարելու ժամանակ Իսրայելյանը շրջապատվեց գերմանական մի խումբ ավտոմատավորների կողմից։ Սկսված մարտում Իսրայելյանը ոչնչացրեց տասը հիտլերականի։ Երեք անգամ վիրավորվելով՝ Իսրայելյանը մինչև մարտի վերջը չթողեց մարտական դիրքերը»։

1944 թվականի փետրվարի 22-ին ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Իսրայելյանին շնորհվեց Սովետական Միության Հերոսի կոչում։ Սովետական կառավարության բարձր պարգևից ոգևորված, Դնեպրի հերոսն այնուհետև մասնակցում է Զվենիգորոդկա, Շևչենկովո, Կոտովսկ քաղաքների ազատագրման համար մղված մարտերին։

1945 թվականին Իսրայելյանն ակտիվ կերպով մասնակցում է նաև Հունգարիայի, Ավստրիայի և Չեխոսլովակիայի մի շարք քաղաքներում գերմանական ուժերի ջախջախման գործողություններին։ Այդ մարտերում ցուցաբերած սխրանքների համար քաջարի կապավորը պարգևատրվում է Կարմիր աստղի

*և Կարմիր դրոշի շքանշաններով, մի շարք մեդալներով և արժանանում գերագույն գլխավոր հրամանատարության շնորհակալագրերին։*

*1945 թվականի ապրիլի 5-ին Իսրայելյանը կարճատև արձակուրդով գալիս է Հայրենիք։ Վերադառնալով ռազմաճակատ, նույն ամսի 18-ից գվարդիական զորամասի շարքերում նա մասնակցում է Բեռլինի գրոհին և ֆաշիստական Գերմանիայի վերջնական ջախջախմանը։ Հաղթանակից հետո Լիպարիտը զորացրվում է և շարունակում խաղաղ, ստեղծագործական աշխատանքը իրենց գյուղում։*



# ՍՈՒՐԵՆ ՀԱԿՈԲԻ ԿԱՍՊԱՐՈՎ




## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**Կարմիր բանակի հրետանու սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու մասին**

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում Հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել Սովետական Միության Հերոսի կոչում, հանձնելով Լենինի շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ.*

*9. Գվարդիայի սերժանտ* Սուրեն Հակոբի Կասպարովին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 18 նոյեմբերի 1944 թ.:*





Չլիշբաղ

Սուրեն Հակոբի Կասպարովը (Գասպարյանը) ծնվել է 1924 թ. օգոստոսի 15-ին Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ Մարզի Ստեփանակերտի շրջանի Կլիշան գյուղում, գյուղացու ընտանիքում։ Նրա հայրը 1936 թվականին տեղափոխվում է Տաշքենդ և երկար տարիներ աշխատում որպես դարբին։ 1940 թվականին Ս. Գասպարյանը ավարտում է 7-րդ դասարանը և հենց այդ տարին էլ նա աշխատանքի է անցնում Տաշքենդի կարի ֆաբրիկայում։

1943 թվականի հունվարի 5-ին Ս. Գասպարյանը զորակոչվում է բանակ։ Սերժանտ Գասպարյանը մասնակցում է Ուկրաինական երրորդ և Բելոռուսական առաջին ռազմաճակատներում մղվող հերոսական մարտերին։ 82-րդ հակատանկային գվարդիական դիվիզիոնի 86-րդ հատուկ կործանիչ ջոկի հրանոթի նշանառու սերժանտ Սուրեն Գասպարյանի պարգևաթերթիկում, որը վավերացվել է 8-րդ գվարդիական բանակի հրամանատար գեներալ-գնդապետ, այժմ Սովետական Միության մարշալ Վ. Չույկովի կողմից, գրված է, որ 1944 թվականի օգոստոսի 20-ին № 146,8 բարձունքի շրջանում թշնամին ձգտում էր արգելակել սովետական մարտիկների առաջխաղացումը դեպի արևմուտք։ Այդ նպատակով ֆաշիստները նախաձեռնել էին հակահարձակում՝ գործողության մեջ դնելով 40 ծանր ու միջին քաշի տանկ և հետևակ։ Հարձակվող տան-

կերից 19-ը գրոհում էին գնդի հրանոթի նշանառու Գասպարյանի կրակա-կետը։ Գասպարյանը, առանց վարանելու, մտավ անհավասար մարտի մեջ և առաջին համազարկով հրկիզեց թշնամու տանկը։

Առաջին հաջողությունը սերժանտին հավատ ներշնչեց էլ ավելի խիզախորեն շարունակելու կրակը մյուս տանկերի դեմ։ Չնայած թշնամու մրրկային կրակին, Գասպարյանը իրար հետևից հրկիզեց գերմանական «վագր» տիպի չորս տանկ։ Մնացած տանկերը վերադարձան։ Ձախողվեց հարձակումը։ Բայց թշնամու տանկերից մեկին հաջողվեց մի քանի կրակոցով ոչնչացնել հրանոթը և ծանր վիրավորել Գասպարյանին։ Նույնիսկ վիրավոր վիճակում Գասպարյանը չթողեց մարտադաշտը։ Միայն հրամանատարի կարգադրությունից հետո նրան տեղափոխեցին թիկունք։

Ստորաբաժանման հրամանատար մայոր Ռեպինը և քաղգծով նրա տեղակալ Կովլերինը 1944 թվականի օգոստոսի 25-ին հատուկ նամակ են գրում Սուրեն Գասպարյանի հորը։ Այնտեղ ասված է.

«Հարգելի Հակոբ Գասպարյան.

Այն ստորաբաժանման հրամանատարությունը, որ ծառայում է Ձեր որդին՝ Սուրեն Գասպարյանը, շնորհակալություն է հայտնում Ձեզ, որ Դուք մեր հայրենիքի համար դաստիարակել եք հերոս զավակ։ Օգոստոսյան թեժ կռվի ժամանակ գերմանացիները ձգտում էին պահել իրենց գրաված դիրքերը։ Դրա համար նրանք մեկը մյուսի հետևից տանկային գրոհ էին կազմակերպում։ Այդ ժամանակ գերմանական 19 տանկեր ցանկանում էին խցկվել մեր հետևակի շարքերը։ Մերոնք սպասում էին թշնամու տանկերի հարձակմանը։ Ձեր որդու հրանոթի անձնակազմը, ուշադիր հետևելով գերմանական տանկերի շարժմանը, թողեց, որ նրանք մոտենան։ Մնաց չնչին տարածություն գերմանական տանկի և իրենց հրանոթի միջև։ Ս. Գասպարյանը, իբրև հրանոթի նշանառու, առաջին դիպուկ հարվածով այրեց գերմանական տանկը և այնուհետև իրար հետևից խփեց չորս ծանր տիպի տանկ, մնացած տանկերը հետ նահանջեցին։

Թշնամու տանկային գրոհը հետ մղվեց, և Ձեր որդի Սուրեն Գասպարյանը այդ մարտերում հաղթող դուրս եկավ»։

Գասպարյանը իր անօրինակ սխրագործությամբ ոգեշնչեց զրահահարնե-րին և հարձակվող հետևակի մարտիկներին, որոնք առաջ շարժվելով՝ ապահովեցին Վիսլա գետի ձախ ափում հենակետի գրավումը և ապա նրա ընդարձակումը։

Հաշվի առնելով այդ մարտերում Սուրեն Հակոբի Գասպարյանի ցուցաբերած խիզախությունը, ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահությունը 1944 թվականի նոյեմբերի 18-ի հրամանագրով գվարդիայի սերժանտ Սուրեն Հակոբի Գասպարյանին շնորհում է Սովետական Միության հերոսի կոչում։

1951 թվականին Ս. Գասպարյանը մեկնում է Օդեսա՝ հրետանային դպրոցում սովորելու։ 1952 թվականին ավարտելով դպրոցը, նա ծառայում է Ուկ-



270—27

րաինայում՝ սովետական բանակի զորամասերից մեկում, մինչև 1956 թվականի սեպտեմբերը։

1956 թվականի վերջերին Ս. Գասպարյանը զորացրվում է սովետական բանակից, վերադառնում է Տաշքենդ և աշխատանքի անցնում Լենինի անվան կարի արտելում որպես վարպետ, ուր աշխատում է մինչև այժմ։



# ՄԻՀՐԱՆ ՄԻՔԱՅԵԼԻ ՇԱԼՋՅԱՆ






## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում Հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել Սովետական Միության հերոսի կոչում, հանձնելով Լենինի շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ.*

*Գվարդիայի սերժանտ* Միհրան Միքայելի Շալջյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 27 հունիսի 1915 թ.*



Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմում հերոսի կոչման արժանացած հայ մարտիկների մեջ ամենաերիտասարդներից մեկն է գվարդիայի սերժանտ Միհրան Միքայելի Շալջյանը (Միխայիլ Միխայլովիչ Շալջյան)։ Նա ծնվել է 1925 թվականի հուլիսի 25-ին, Կրասնոդարի երկրամասի Գորյաչի-Կլյուչի շրջանի Բեզիմյաննայա ստանիցայում։ 1939 թվականին Շալջյանն ավարտում է ստանիցայի դպրոցի հինգերորդ դասարանը և աշխատանքի անցնում «Կոմունիզմի ուղիով» կոլտնտեսությունում, որպես տրակտորիստ։ 1942 թվականի սեպտեմբերին, ֆաշիստական զորքերի կողմից Բեզիմյաննայան գրավելուց հետո, շատերի հետ դեպի լեռներն է քաշվում նաև Շալջյանների ընտանիքը և ակտիվորեն մասնակցում գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարին։

Միհրանը 1943 թվականին զորակոչվում է բանակի շարքերը և ուղարկվում սովորելու 95-րդ հրաձգային գնդի դպրոցում։ 1944 թվականի սեպտեմբերին ավարտելով այն, նա մեկնում է Ուկրաինական առաջին ռազմաճակատ, որպես հրաձգային ջոկի հրամանատար։

1945 թվականի ապրիլի վերջերին հիտլերյան զորքերն իրենց վերջին օրհասական ճիգերն էին թափում հաղթական արշավով դեպի Բեռլին ընթացող սովետական զորքերի դեմ։

Վերջին վճռական հարվածն էր հասցվում Բեռլինը պաշտպանող ֆաշիստական զորքերին։ Այստեղ էր մարտնչում նաև կոմերիտական Միհրան Շալչյանը։

1945 թվականի ապրիլի 24-ին, Շպրեե գետի անցման համար ծավալված մարտերում, Շալչյանն իր ջոկով առաջինն է ներխուժում գերմանացիների պաշտպանության մեջ։ Սրընթաց գրոհի դիմելով, նրա ջոկի մարտիկները ավտոմատներով և նռնակներով ոչնչացնում են մոտավորապես 50 հիտլերական և խուճապ առաջացնում հակառակորդի թիկունքում։ Ջրանցքով անցնելով դեպի Բեռլին տանող խճուղին, Շալչյանի ջոկը հենակետ է գրավում և այն պահում մինչև վաշտի գլխավոր ուժերի հասնելը։ Միհրան Շալչյանը՝ վաշտի կոմերիտական լավագույն ագիտատորը, մարտերի դժվարին պայմաններում ցույց է տալիս անձնական խիզախության օրինակ և սխրագործությունների ոգեշնչում իր մարտիկներին։

Լուկկենվալդ (Լյուկկենվալդ) քաղաքի շրջանում (գրավվեց 1945 թվականի ապրիլի 23-ին) Շալչյանն անձամբ ոչնչացնում է հակառակորդի զենիթային հրանոթի անձնակազմը, երկու մոտոցիկլետիստների և իր ջոկով գերի վերցնում մոտ 40 զինվոր։ Սակայն այդ մարտում թշնամու գնդակից վիրավորվում է Շալչյանը և ուղարկվում հոսպիտալ։ Այդ մարտերում ցուցաբերած անձնական խիզախության ու քաջության համար ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1945 թվականի հունիսի 27-ի հրամանագրով գվարդիայի սերժանտ Միհրան Միքայելի Շալչյանին շնորհվում է Սովետական Միության Հերոսի կոչում։

Առողջանալուց հետո, 1945 թվականի նոյեմբերից մինչև 1946 թվականի հունիսը Շալչյանը սովորում է սանիտարական հրահանգիչների դասընթացներում, իսկ 1946—1947 թվականներին՝ 20-րդ առանձին ավտոգնդի դասընթացներում։ Այնուհետև նա ծառայում է որպես ավտոքարշային դասակի հրամանատարի օգնական։ 1950 թվականի մարտին Միհրանը զորացրվում է սովետական բանակից և վերադառնում իր ծննդավայրը։

Ներկայումս նա աշխատում է Կրասնոդարի երկրամասի Գորյաչի-Կլյուչի անտառատնտեսության «Կրասնոդարանտառ» կոմբինատում, որպես ավտովարորդ։ Իր լավագույն աշխատանքի համար Շալչյանը բազմիցս արժանացել է պարգևատրման։



# ԱՊԱՎԵՆ ՎԱՍԻԼԻ ՌՈՍՏՈՄՅԱՆ



## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**Կարմիր բանակի սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու մասին**

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել* Սովետական Միության Հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

*Ավագ սերժանտ* Ապավեն Վասիլի Ռոստոմյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 10 ապրիլի 1945 թ.:*





Ֆաշիստական զավթիչների դեմ մղված մարտերում, ռուս ժողովրդի անվեհեր զավակ Ալեքսանդր Մատրոսովի օրինակով, իրեն անմահացրեց նաև գվարդիայի սերժանտ Ապավեն Վասիլի Ռոստոմյանը։ Նա, հայ ժողովրդի զավակներ Հունան Ավետիսյանի և Սուրեն Առաքելյանի նման իր կրծքով փակեց ֆաշիստական դնդացրի հրակնատը և կյանքի գնով ապահովեց ստորաբաժանման մարտական խնդրի կատարումը։

Ապավեն Ռոստոմյանը ծնվել է 1905 թվականին Թիֆլիսի նահանգի Բոլնիս-Խաչեն գյուղում, չքավոր գյուղացու ընտանիքում։ Սկզբնական կրթությունն ստացել է գյուղի դպրոցում։

1921 թվականին Վրաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո, Ապավենը մտնում է կոմերիտմիության շարքերը, ակտիվ հասարակական աշխատանք է տանում։

Համատարած կոլեկտիվացման տարիներին Ռոստոմյանը կոլտնտեսության կազմակերպման նախաձեռնողներից և կոլտնտեսության ամենաառաջին անդամներից մեկն է եղել շրջանում։ Բարեխիղճ և պարտաճանաչ կոմերիտականը 1931 թվականին ընդունվում է կոմունիստական պարտիայի շարքերը և իր ողջ գիտակցական կյանքը նվիրաբերում պարտիայի մեծ գործին։ Ակտիվ

ու անձնվեր աշխատանքի շնորհիվ կարճ ժամանակում Ռոստոմյանը դառնում է բրիգադիր և ընտրվում կոլտնտեսության պարտկազմակերպիչ:

Երբ ոխոտագրաժ թշնամին հարձակվեց մեր երկրի վրա, Հայրենիքի պաշտպանների շարքերում էր նաև Ստյոպան:

Ռոստոմյանը Ուկրաինական երրորդ, ապա Ուկրաինական առաջին ռազմաճակատների զորքերի շարքերում մասնակցել է գերմանա-ֆաշիստական զավթիչներին մեր երկրի տերիտորիայից դուրս շպրտելու կատաղի մարտերին:

1945 թվականի հունվարին Ուկրաինական առաջին ռազմաճակատի զորքերը համառ մարտեր էին մղում Լեհաստանի ազատագրման համար: Հունվարի 18-ին լեհական Ժարկի քաղաքի շրջակայքում արյունահեղ կռիվ էր մղում Լենինի, Կարմիր դրոշի և Սուվորովի շքանշանակիր, 15-րդ գվարդիական Խարկովյան դիվիզիայի 44-րդ գվարդիական հրաձգային գունդը: Հակառակորդի գնդացրային և ականանետային կրակը հնարավորություն չէր տալիս մեր հրաձիգներին առաջ շարժվելու: Այդ ժամանակ սերժանտ Ռոստոմյանն իր ջոկի գլուխն անցած՝ շրջանցում է թշնամու գնդացրային կետը, ինքն անձամբ սողալով մոտենում է գնդացրին, նռնակների ուժեղ հարվածով լռեցնում այն և շարքից հանում թշնամու ավելի քան 20 զինվոր ու սպա: Վաշտը կարողանում է գրոհի անցնել, բայց այդ պահին սկսում է գործել թշնամու մեկ ուրիշ գնդացիր, որը գետնին է գամում մեր մարտիկներին: Գերմանացիների մի ուրիշ խումբ փորձում է թևից շրջանցել նրանց: Այդ միջոցին գվարդիայի սերժանտ Ռոստոմյանը սողեսող մոտենում է գնդացրի հրակետին և թեթև ռումբեր գործելով, կրծքով փակում է հրակետը, որով հնարավորություն է տալիս վաշտին՝ կանխել գերմանացիների գրոհը, հաղթահարել խիստ ամրացված պաշտպանության գիծը և ներխուժել քաղաք:

Թշնամու գնդացիրը լռում է… Ստյոպան իր կյանքի գնով ապահովում է հարձակվող զորամասի առաջխաղացումը:

Շուտով քաղաքը գրավվում է սովետական բանակի զորամասերի կողմից: 44-րդ գվարդիական հրաձգային գնդի մարտիկները հողին են հանձնում անմահացած հերոսի դիակը:

Սովետական Հայրենիքն ըստ արժանվույն գնահատեց իր զավակի սխրագործությունը. ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահությունը 1945 թվականի ապրիլի 10-ի հրամանագրով գվարդիայի սերժանտ Ստյոպան Վասիլի Ռոստոմյանին հետմահու շնորհեց Սովետական Միության հերոսի կոչում:



# ՎԱՉԱԳԱՆ ՀՈՒՆԱՆԻ ՎԱՆՑՅԱՆ






## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում Հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել* Սովետական Միության Հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

*47. Սերժանտ* Վաչագան Հունանի Վանցյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 24 մարտի 1945 թ.:*





Վաչագան Հունանի Վանցյանը ծնվել է 1913 թվականին Ախալքալաքի շրջանի Ջակ գյուղում։

Նա սովորել է գյուղի ոչ լրիվ միջնակարգ դպրոցում, որը ավարտել է 1928 թվականին։ Վանցյանների չքավոր ընտանիքը առաջիններից մեկն է ընդունվում նորաստեղծ կոլտնտեսության մեջ, որտեղ Վաչագանը դառնում է օղակավար։ Նա մի քանի տարի աշխատում է որպես գյուղի կոմերիտական կազմակերպության քարտուղար։ 1937—1939 թվականներին Վաչագանը աշխատում է Բաթումիի արդյունաբերական ձեռնարկություններում, ապա նորից հայրենի կոլտնտեսությունում։

Սովետական Միության վրա հիտլերյան Գերմանիայի ուխտադրուժ հարձակման առաջին իսկ օրից Վաչագանը մեկնում է գործող բանակ։ Նա շուտով հայտնի է դառնում որպես հմուտ և խիզախ գնդացրորդ։ Մինչև 1943 թվականը Վաչագանը երեք անգամ վիրավորվում է, բայց չի թողնում ռազմադաշտը։ Այդ թվականին էլ նա ընդունվում է կոմունիստական պարտիայի շարքերը։

1944 թվականի ամռանը սերժանտ Վանցյանը հաստոցավոր գնդացրի հաշվարկի հրամանատար էր 179-րդ հրաձգային Վիտեբսկյան դիվիզիայի 259-րդ գնդում, որը գործում էր Մերձբալթյան առաջին ռազմաճակատում։

Այդ ռազմաճակատի զորքերը, Բելոռուսական երրորդ ռազմաճակատի զորքերի համագործակցությամբ, նույն թվականի հունիսին, Վիտեբսկի շրջանում անցնում են հարձակման և ճեղքելով թշնամու պաշտպանությունը, սկսում առաջ շարժվել՝ ազատագրելով Բելոռուսիայի հյուսիսային շրջանները, ապա Լիտվան։

Մեր զորքերի հարձակման հենց առաջին օրը՝ հունիսի 23-ին, Վանցյանի գնդացրային հաշվարկը աչքի է ընկնում Վիտեբսկից հյուսիս-արևմուտք գտնվող Շումիլինո երկաթուղային կայարանի մոտ գերմանացիների պաշտպանության գիծը ճեղքելու մարտերում։ Այստեղ Վանցյանի գնդացրային անձնակազմը ոչնչացնում է հակառակորդի երեք գնդացրային կետ, որի շնորհիվ մեր հետևակայինները կարողանում են արագորեն առաջ շարժվել և թափանցել կայարան։ Միաժամանակ Վանցյանի մարտիկները գերի են վերցնում մեկ սպա, իսկ ինքն անձամբ ավտոմատով խփում է երկու ֆաշիստի։ Երբ մեր ստորաբաժանումը դուրս է գալիս կայարանի մոտով անցնող մեծ խճուղին, հակառակորդը երկու անգամ հակահարձակման է անցնում, որոնք հաջողությամբ ետ են մղվում Վանցյանի գնդացրային անձնակազմի օգնությամբ։ Հակառակորդը մարտադաշտում թողնում է 16 սպանված զինվոր ու սպա։

Ազատագրելով բելոռուսական և լիտվական բազմաթիվ քաղաքներ ու գյուղեր, 179-րդ դիվիզիան մոտենում է Մեմելե գետին և կռիվներ սկսում՝ գետն անցնելու և դեպի Սովետական Լատվիայի մայրաքաղաք Ռիգա առաջխաղալու համար։ Առաջիններից մեկն անցնելով գետի հակառակ ափը, Վանցյանի գնդացրային անձնակազմն սկսում է կրակել գրոհող հիտլերականների վրա, և պաշտպանելով գրաված հենակետը, գումարտակի զորամասերին հնարավորություն է տալիս գետանցելու։ Այդ մարտում նա ոչնչացնում է 9 ֆաշիստ։ Դա 1944 թվականի հուլիսի 29-ին էր։

Երկու օր անց, օգոստոսի 1-ին, ամբողջ օրվա ընթացքում հակառակորդը մի քանի անգամ դիմում է հակագրոհի՝ ձգտելով վերականգնել իր նախկին դիրքերը և գետը նետել հենակետը պահող մեր զորամասերը։ Այդ մարտերում Վանցյանի մարտիկները ցուցաբերում են բացառիկ խիզախություն և արիություն։ Պաշտպանելով հետևակայիններին, քաջարի գնդացրորդները հետ են մղում թշնամու՝ մեկը մյուսին հաջորդող հինգ հակագրոհները, մարտադաշտում փռելով հակառակորդի հարյուրավոր զինվորների ու սպաների դիակներ։ Չնայած ծանր կորուստներին, հիտլերականները չեն հրաժարվում իրենց մտադրությունից։ Նրանք դիմում են նոր հակագրոհի՝ մեկ գումարտակի և 9 տանկի օժանդակությամբ։ Սկսվում է անհավասար մարտ։ Վանցյանը իր մարտական ընկերներին կոչ է անում կռվել քաջաբար, թեկուզ և կյանքի գնով՝ պաշտպանել հենակետը։ Նա հրամայում է թշնամու տանկերին թողնել առաջ, իսկ հետևակին անջատել նրանցից և ոչնչացնել։ Այդպես էլ արվում է։ Խիզախ գնդացրորդների կրակից ոչնչանում են բազմաթիվ հիտլերականներ։ Բայց, ահա, թշնամու տանկը, ըստ երևույթին, նկատած լինելով գնդացրային

կրակակետ. շրջվում և շարժվում է դեպի խրամատը: Հաշվարկի հրամանատարը մնացել էր մենակ: Նրա ընկերները քաջաբար զոհվել էին: Վանցյանը շարունակում է անհավասար մենամարտը թշնամու տանկի դեմ, որից արձակված արկը շարքից դուրս է բերում գնդացիրը և վիրավորում Վաչագանին: Լարելով վերջին ուժերը, Վանցյանը հակատանկային նռնակներ է նետում տանկի տակ, պայթեցնում այն և ինքն էլ հերոսաբար զոհվում:

Բարձր գնահատելով անձնազոհ մարտիկի քաջությունը և խիզախությունը. ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1945 թվականի մարտի 24-ի հրամանագրով Վաչագան Հունանի Վանցյանին հետմահու շնորհեց Սովետական Միության Հերոսի կոչում:

Դեռևս 1943 թվականի հոկտեմբերին Վաչագանը ծնողներին գրել էր. «Ես կվերադառնամ հաղթանակով: Իսկ եթե ընկնեմ կռվի դաշտում, ապա իմացեք, որ ընկա Հայրենիքի համար»:



# ՄԻՔԱՅԵԼ-ՄՈՒՇԵՂ ԱՂԱԹԵԼԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ




## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի գեներալներին, սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում Հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել Սովետական Միության Հերոսի կոչում, հանձնելով Լենինի շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ.*

7. *Գվարդիայի եֆրեյտոր* Միքայել-Մուշեղ Աղաթելի Հարությունյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի Նախագահության Նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի Նախագահության Քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 22 հուլիսի 1944 թ.*







Միքայել-Մուշեղ Ազաթի Հարությունյանը ծնվել է 1898 թվականին Ղափանի շրջանի Գյուտկում (այժմ Գեղանուշ) գյուղում, չքավոր գյուղացու ընտանիքում։ Ութ տարեկան հասակում նա ընդունվում է գյուղի տարրական դպրոցը, բայց չի ավարտում։ Բազմանդամ ընտանիքի կարիքը 13-ամյա Մուշեղին ստիպում է հովվություն և բատրակություն անել։ Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո Մուշեղը թողնում է հայրենի գյուղը և բնակություն հաստատում Ուզբեկստանի Ուրգենչ քաղաքում։ 1928 թվականին նա տեղափոխվում է Սամարղանդ և աշխատում «Վաշխ» սովխոզում։

1942 թվականի հունվարին կոմունիստ Մուշեղ Հարությունյանը գործող բանակում արդեն մասնակցում է թշնամու դեմ մղված պաշտպանական մարտերին։ 1943 թվականի ամռանը ծանր մարտեր էին մղվում Ստարայա Ռուսսա քաղաքի համար։ Ֆաշիստ օկուպանտները ամեն ջանք գործադրում էին, որպեսզի կոտրեն սովետական ռազմիկների դիմադրությունը՝ ճեղքեն պաշտպանության բնագծերը և գրավեն քաղաքը։ Սակայն նրանց ջանքերը իզուր են անցնում։ Մեր զորքերը թշնամուն վճռական հակահարված են հասցնում։ Մարտերից մեկում Մուշեղը վիրավորվում է, բայց իր դիրքից չի հեռանում։

Այդ մարտերում ցուցաբերած խիզախության և արիության համար Մուշեղը պարգևատրվում է Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքա-

*նշանով։ Ստորաբաժանման հրամանատարի քաղգծով տեղակալ կապիտան Գասխենը Մուշեղի կնոջն ուղարկած նամակում գրում է.*

*«...Ձեր ամուսին Մուշեղ Աղաբեկի Հարությունյանը մեր ստորաբաժանման խիզախ, քաջարի մարտիկներից է և մեր սիրելի հայրենիքի համար մղվող մարտերում ցույց է տալիս նվիրվածություն։*

*Ֆաշիստական զավթիչների դեմ մղվող պայքարում ցուցաբերած խիզախության և արիության համար Ձեր ամուսին Մուշեղ Հարությունյանը պարգևատրվել է կառավարական բարձր պարգևով՝ Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով։*

*Հպարտանում ենք Ձեր ամուսնով։ Փառք հերոսին»։*

*Գվարդիական հրաձգային 201-րդ գունդը Մերձբալթյան առաջին ռազմաճակատի զորքերի շարքում 1944 թվականի հունիսին հարձակողական մարտեր էր մղում Բելոռուսական ՍՍՌ մարզային կենտրոն Վիտեբսկ քաղաքի ուղղությամբ։ Այդ քաղաքից հյուսիս-արևմուտք մեր զորքերը հաղթահարելով հակառակորդի պաշտպանական երեք բնագծերը, ազատագրում են Շումիլինո և Սիրոտինո կայարան հենակետերը։ Հունիսի 22-ին սովետական զորքերը ուժեղ մարտեր են մղում Արևմտյան Դվինայի բարձունքում գտնվող Օրեխի բնակավայրի համար, որը գերմանացիների դիմադրության կարևոր հանգուցակետն էր համարվում։ Կոտրելով հակառակորդի կատաղի դիմադրությունը, սովետական հետևակայինները՝ տանկերի և հրանոթների համագործակցությամբ, գրավում են Օրեխի բնակավայրը, ոչնչացնելով թշնամու մեծ քանակությամբ ուժ և տեխնիկա։*

*Գվարդիական եֆրեյտոր Մուշեղ Հարությունյանը գտնվելով ստորաբաժանման առաջին շարքում, անձնական օրինակով ոգեշնչում էր իր մարտական ընկերներին և թշնամու կրակային ուժեղ տարափի տակ, առաջինը նետվում հակառակորդի պաշտպանության դիրքերը։*

*Հունիսի 24-ին գվարդիական գունդը պետք է գետանցեր Արևմտյան Դվինան։ Հակառակորդի ուժեղ կրակի տակ առաջինը Մուշեղ Հարությունյանն է հայտնվում գետի ձախ ափում և իր ընկերների հետ համառությամբ պաշտպանում ու ընդարձակում հենակետը։ Այդ մարտում Մուշեղը մահացու վերք է ստանում և զոհվում քաջի մահով։*

*Գվարդիական 201-րդ հրետանային գնդի անձնակազմի անունից հրամանատարությունը հերոսի ծնողներին ուղարկած նամակում գրել է.*

*«Թանկագին ծնողներ.*

*Մեր սովետական Հայրենիքի ազատագրման համար գերմանա-ֆաշիստական օկուպանտների դեմ մղվող համառ մարտերում հերոսի մահով զոհվեց մեր Հայրենիքի խիզախ զավակ, գվարդիական, մեր թանկագին ընկեր, Ձեր որդի Մուշեղ Աղաբեկովիչը։*

*Դուք աճեցրել եք մեր սովետական Հայրենիքի հայրենասեր մի հիանալի, անվախ զինվոր։*

*Մենք դաստիարակել ենք մեր Հայրենիքի հերոսին և այժմ գվարդիականներս, մարտիկներս, սպաներս Ձեզ հետ միասին սգում ենք մեծ կորուստ։*

*...Մուշեղը մեր շարքերում հերոսաբար կռվում էր ընդդեմ մեր Հայրենիքի թշնամիների՝ գերմանական զավթիչների։ Այդ պայքարում մեր արդար գործի համար նա տվեց իր կյանքը»։*

*Օրեխի բնակավայրի ազատագրման և Արևմտյան Դվինայի գետանցման ժամանակ ցուցաբերած քաջության և անձնազոհության համար ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1944 թվականի հուլիսի 22-ի հրամանագրով Միքայել-Մուշեղ Հարությունյանին հետմահու շնորհվում է Սովետական Միության հերոսի կոչում։*



# ԱՐԱՄԱՅԻՍ ԱՍԱՏՈՒՐԻ ՍԱՐԳԻՍՈՎ.





## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**Կարմիր բանակի գեներալներին, սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու մասին**

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել* Սովետական Միության Հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե աստղ» *մեդալ.*

*103. Գվարդիայի եֆրեյտոր* Արամայիս Ասատուրի Սարգիսովին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 22 հուլիսի 1944 թ.:*



270--28



Հայրենական պատերազմի տարիներին Մերձբալթյան առաջին ռազմաճակատի № 51-րդ գվարդիական դիվիզիայի կազմումն է մարտնչել և մարտական փառքի հասել գվարդիայի եֆրեյտոր Արամայիս Ասատուրի Սարգսովը։

Արամայիս Սարգսովը ծնվել է 1922 թվականին Գորիսի շրջանի Տեղ գյուղում։ Շուտով ընտանիքը տեղափոխվում է Բաքու և նրա հայրը որպես բանվոր սկսում է աշխատել Բաքվի արդյունաբերական տարբեր ձեռնարկություններում։ Արամայիսը, ընտանիքին օգնելու համար, հարկադրված աշխատում է և միաժամանակ հաճախում դպրոց, որը ավարտելով, ստանում է տարրական կրթություն։ Նա վերին աստիճանի ընկերասեր էր, ազնիվ, համարձակ։ Բնավորության այդ հատկությունները Արամայիսի մոտ ավելի ցայտուն կերպով դրսևորվում են սովետական բանակում ծառայելու տարիներին։

Երբ սկսվում է Հայրենական մեծ պատերազմը, Սարգսովը դիմում է զինվորական կոմիսարիատ՝ կամավոր ռազմաճակատ գնալու համար։ Սկզբում նա 76-րդ նախկին հայկական լեռնա-հրաձգային դիվիզիայի կազմում մասնակցում է Վոլգոգրադի հերոսական էպոպեային։ Շուտով այդ դիվիզիան վերակազմվում է գվարդիական 51-րդ հրաձգային դիվիզիայի, որի 158-րդ գնդի 3-րդ գումարտակում Սարգսովը նշանակվում է գնդացրային հաշվարկի հրամանատար։

Գվարդիայի եֆրեյտոր Սարգսովի մարտական գործունեության մեջ առանձնահատուկ տեղ են գրավում Վիտեբսկի մարզի Սիրոտինոյի շրջանում մղած համառ մարտերը։

1944 թվականի հունիսի 22-ին 158-րդ գունդը Վիտեբսկի մարզի Սիրոտինոյի շրջանում, համառ և արյունահեղ մարտերից հետո, ճեղքում է հակառակորդի էշելոնացված պաշտպանությունը և տիրում ուժեղ ամրացված բնագծերին։ Հունիսի 24-ին գունդը դուրս է գալիս Արևմտյան Դվինա գետի շրջակայքը։ Գետի ձախ ափին գտնվող Բալրիշա գյուղը թշնամին դարձրել էր իր ուժեղ ամրացված հենակետերից մեկը և խանգարում էր մեր զորամասերի գետանցմանը։

Շուտով մարտի է դուրս բերվում նաև այն ջոկատը, որի կազմում էր գտնվում գվարդիայի եֆրեյտոր Սարգիսովի գնդացրային հաշվարկը։

Վերադաս հրամանատարության առաջադրանքով հունիսի 25-ի վաղ առավոտյան, 20 խիզախ մարտիկներ, նրանց թվում նաև Արամայիս Սարգիսովը, հակառակորդի փոթորկալից գնդակոծության տակ գետանցում են Արևմտյան Դվինան։ Ամրանալով գետափին, նրանք թշնամու վրա բացում են գնդացրային մրրկային կրակ։ Հակառակորդը կրում է մարդկային մեծ կորուստներ։

Կարճ ժամանակից հետո թշնամին անցնում է հակագրոհի, բայց այդ չի սարսափեցնում գնդացրորդին։ Նա արհամարհելով թշնամու տեղատարափ կրակը, իր գնդացրային հաշվարկով ետ է մղում նրա երկու գրոհը։ Վերջին գրոհի ժամանակ, անհավասար մարտում ճշտորեն կողմնորոշվելով ստեղծված իրադրության մեջ, Արամայիսը մարմնով ծածկում է վիրավոր հրամանատարին և իր կյանքի գնով փրկում նրան, ապահովելով մարտի հաջողությունը։

Դասակի հրամանատարը փրկվում է, գրոհը հաջողվում։ Հերոսաբար զոհվում է խիզախ գնդացրորդ Սարգիսովը. գունդը հնարավորություն է ստանում անցնելու Արևմտյան Դվինա գետի ձախ ափը։

Արևմտյան Դվինայի գետանցման ժամանակ ցուցաբերած խիզախության և անձնազոհության համար ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1944 թվականի հուլիսի 22-ի հրամանագրով գվարդիայի եֆրեյտոր Արամայիս Ասատուրի Սարգիսովին հետմահու շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում։



# ՍՈՒՐԵՆ ԱՐՏԱՇԻ ՍԱՐԳՍՅԱՆ




## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**Կարմիր բանակի սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին**

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել Սովետական Միության հերոսի կոչում, հանձնելով Լենինի շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ.*

*98. Եֆրեյտոր* Սուրեն Արտաշի Սարգսյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 24 մարտի 1945 թ.:*





Սուրեն Արտաշի Սարգսյանը հազիվ քսան տարեկան էր, երբ դարձավ Սովետական Միության հերոս։ Նա ծնվել է 1924 թվականին Աշտարակի շրջանի Ոսկեվազ գյուղում, աշխատավոր գյուղացու ընտանիքում։ Սուրենը սովորել է գյուղի միջնակարգ դպրոցում, որը ավարտել է 1942 թվականին։

Պատերազմը խանգարում է Սուրենին, ինչպես և նրա նման շատերին ստանալու բարձրագույն կրթություն։ Նույն թվականին կոմերիտական Սուրենը մեկնում է բանակ։ Մի քանի ամիս անհրաժեշտ ռազմական պատրաստություն ստանալուց հետո նա ուղարկվում է ռազմաճակատ։

Ռազմական առաջին մկրտությունը եֆրեյտոր Սուրենն ստանում է Բրյանսկի ռազմաճակատում։ Դա 1943 թվականի օգոստոսին էր, երբ մեր զորամասերը, կոտրելով հակառակորդի համառ դիմադրությունը, նրան դուրս են վռնդում Օրյոլի մարզի Կարաչև քաղաքից։

Դեսնա գետի շրջանում թշնամու նահանջի ճանապարհը փակելու ժամանակ ստորաբաժանումը, որի շարքերում էր գտնվում Սուրենը, ընկնում է շրջապատման մեջ։ Ավելի քան մեկ շաբաթ սովետական մարտիկները համառ կռիվներ են մղում շրջապատումից դուրս գալու համար։ Սուրենը վիրավորվում է, բայց մարտական գծերից չի հեռանում։ Մարտիկները, մեր մյուս

զորամասերի օգնությամբ շատով ճեղքում են օղակը և միանում յուրայիններին, մեծ կորուստ պատճառելով հակառակորդին։

Իր քաջագործություններով Սուրենը հատկապես աչքի է ընկնում Բելառուսիայում և Լենինգրադում մղված կռիվներում։ Մինչ այդ նա սովորում է ռադիոկապի գործը և դառնում խիզախ կապավոր։

1943 թվականի դեկտեմբերին Պրոնյա գետի (Սոժի վտակ) շրջանում պաշտպանվող մեր զորամասերին հրաման է տրվում բարելավել պաշտպանական դիրքերը։ Թշնամու ուժեղ կրակի տակ Սուրենը բազմիցս վերականգնում է կապը և ապահովում մարտի ղեկավարումը։ Գունդը հաջողությամբ կատարում է մարտական առաջադրանքը։

1944 թվականի հունիսի վերջերին հարձակման անցնելով, Բելառուսական երկրորդ ռազմաճակատի զորքերը Մոգիլյովի շրջանում լիկվիդացնում են հակառակորդի հենակետը Դնեպրի ձախ ափին և երթից անմիջապես սկսում գետանցումը։ Թշնամին մեծ հույսեր էր դրել Դնեպր գետի վրա, որպես բնական արգելքի։ Բայց ոչինչ չէր կարող կանգնեցնել սովետական զորքերին։ Նրանք դեռևս 1943 թվականի սեպտեմբեր-հոկտեմբերին Ուկրաինայում հաջողությամբ անցնում են լայն ու հորդառատ Դնեպրը։ Բազմաթիվ զորամասեր ու մարտիկներ աչքի են ընկնում գետանցման այդ անօրինակ մարտերում։

Հունիսի 27-ին Սուրենը հրաման է ստանում կապ ստեղծել գետն անցնող գնդի ստորաբաժանումների հետ։ Դնեպրի բարձրադիր աջ ափից թշնամին անընդհատ տեղում է հրետանային և գնդացրային կրակ։ Թրջված ու ծանրացած զգեստը դժվարացնում էր հորդառատ գետում լողալը։ Բայց առաջադրանքի կարևորությունը, ռազմական պարտականությունը և գետն անցած քաջերի օրինակը Սուրենին ուժ են տալիս և մղում առաջ։ Հեռախոսային երկու լարի ծայրերը պահելով ատամների տակ և շինելի մեջ փաթաթած հեռախոսային ապարատը մեջքին ամրացրած, անվախ կապավորը լողում է գետի մյուս ափը։ Վերջապես նա այնտեղ է։ Կապը ստեղծված է։ Մյուս զորամասերի հետ միասին գունդը մարտեր է սկսում Մոգիլյովի համար։ Սակայն թշնամու գնդակը կտրում է հեռախոսային գիծը։ Ոչ մի բոպե չհապաղելով, Սուրենը նորից մտնում է գետը և դուրս գալիս ձախ ափը։ Կրակի տակ, վտանգի ենթարկելով իր կյանքը, նա լողալով նորից է անցնում Դնեպրը և վերականգնում կապը։

Հարձակումը հաջողությամբ շարունակվում է։ Մեր զորքերը, ճեղքելով թշնամու պաշտպանության գիծը Դնեպրի աջ ափին, հունիսի 28-ին գրոհով գրավում են մարզային կենտրոն Մոգիլյով քաղաքը։ Քաղաքը ազատագրողներից էր նաև այն գունդը, որտեղ իրենց խիզախությամբ հայտնի դարձան կոմերիտական կապավոր Սուրեն Սարգսյանը, սերժանտ Յուրչենկոն և ուրիշները։ Հրամանատարության պատասխանատու առաջադրանքն օրինակելիորեն կատարելու համար, ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1945 թվականի մարտի 24-ի հրամանագրով, Սուրեն Սարգսյանին շնորհվեց Սովետա-

կան Միության Հերոսի կոչում։ Իսկ ՀամԼԿԵՄ Կենտրոնական կոմիտեն նրան պարգևատրեց պատվոգրով։

Բելոռուսիայում մարտնչելու ժամանակ Սուրենը դառնում է կապի ջոկի հրամանատար։ Ջոկը փորձված ռազմիկ Սուրեն Սարգսյանի հրամանատարությամբ մասնակցում է Մինսկի մոտ շրջապատված գերմանա-ֆաշիստական զորքերի ջախջախմանը և Բելոռուսական ՍՍՌ մի շարք քաղաքների ու բնակավայրերի ազատագրմանը։

1944 թվականի օգոստոսի 14-ին ազատագրվում է Արևելյան Պրուսիայի ուղղությամբ գերմանացիների ամուր հենակետերից մեկը՝ լեհական Օսովեց քաղաքն ու ամրոցը, որի գրավման ժամանակ կապավորը նոր քաջագործություն է կատարում։ ...Դեպի քաղաք շարժվող գումարտակն անցնում էր անտառով։ Հմտորեն կողմնորոշվելով խիտ, անանցանելի անտառում, Սարգսյանը շուտով գտնում է ամենակարճ ուղին և ապահովում հետախուզական կապը գումարտակի և գնդի հրամանատարության միջև։ Կարևոր նշանակություն ունեցող առաջադրանքը հաջողությամբ կատարելու համար Սուրենը պարգևատրվում է Կարմիր աստղի շքանշանով։ Մի այլ մարտում նա առաջադրանք է ստանում կապ հաստատել գումարտակի հետ, որի տեղը անտառում հայտնի չէր։ Մի քանի ժամ որոնելուց հետո, Սուրենը հայտնաբերում է գումարտակը և ապահովում կապը, արժանանալով հրամանատարության գովասանքին։

«Որտեղ Սարգսյանը, այնտեղ կապ»,—այսպես է գնահատել 238-րդ հրաձգային դիվիզիայի 837-րդ գնդի հրամանատարությունը Սուրեն Սարգսյանի մարտական գործունեությունը։

1945 թվականի մարտի 12-ին Դանցիգի (Գդանսկ) մոտ, կատաղի կռիվների ժամանակ, բարձունքի վրա, թշնամու աչքի առաջ խիզախ մարտիկը վերականգնում է վնասված կապը, որտեղ և նա ծանր վիրավորվում է։ Սուրենը թույլ է տալիս վերքերը կապել և իրեն տեղափոխել միայն այն ժամանակ, երբ ստուգելով համոզվում է, որ գիծն աշխատում է։ Դա նրա մարտական վերջին գործողությունն էր, որի համար նա արժանանում է Կարմիր դրոշի շքանշանի։

Ապաքինվելուց հետո նա վերադառնում է զորամաս։ Պատերազմն արդեն վերջացել էր։ Հայրենիքի հանդեպ իր պարտքը սրբությամբ կատարած Սուրեն Սարգսյանը 1945 թվականի վերջին զորացրվում է։

1951 թվականին Սուրենը ավարտում է Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտը և այժմ աշխատում է Հայկական ՍՍՌ Ժողտնտխորհում։



# ՍՈԿՐԱՏ ԱԼԵՔՍԵՅԻ ԳԱԼՈՒՍՏԱՇՎԻԼԻ





## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի գեներալներին, սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում Հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած հերոսության և խիզախության համար շնորհել* Սովետական Միության Հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և* «Ոսկե *աստղ» մեդալ.*

*12. Գվարդիայի կարմիրբանակային* Սոկրատ Ալեքսեյի Գալուստաշվիլուն:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝
Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝
Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 3 հուլիս 1944 թ.*





Սոկրատ Գալուստաշվիլին (Գալստյանը) ծնվել է 1920 թվականին Գորու շրջանի Ուփլիս Ցիխե գյուղում, գյուղացու ընտանիքում։ Ավարտելով տարրական դպրոցը, նա սկսում է աշխատել կոլտնտեսությունում։ Իր ազնիվ և բարեխիղճ աշխատանքով Սոկրատը մեծ հարգանք էր վայելում համագյուղացիների և կոլտնտեսականների շրջանում։

Երբ սկսվում է Հայրենական պատերազմը, Սոկրատը առաջին իսկ օրից համալրում է սովետական բանակի շարքերը։ Հրաձգային դիվիզիայում ջանասիրաբար ուսումնասիրելով ռազմական գործը, նա տիրապետում է գընդացրին և շուտով արժանանում «Գերազանցիկ գնդացրորդ» կրծքանշանին։ 1942 թվականի ամռանը Սոկրատը մարտնչում էր Վոլգոգրադի տակ։ Կռվելով արիաբար, նա այստեղ էլ ստանում է իր առաջին մարտական մկրտությունը, պարգևատրվում Կարմիր աստղի շքանշանով։

Ոգևորված մարտական բարձր պարգևով, Սոկրատը հայրենասիրական լի հույզերով ռազմաճակատից նամակներ է ուղարկում իր ծնողներին։ Նամակներից մեկում նա գրում է. «Թանկագին ծնողներ, քանի դեռ թշնամու ոտքը մեր հողումն է, չեմ կարող հանգստանալ։ Երբ ֆաշիստներին ջախջախենք և պատերազմի փոթորիկը ավարտվի, կգամ հայրենի գյուղ, կհավաքվենք բոլորս միասին և կպատմենք Հայրենական պատերազմի դեպքերից։ Աշ-

*խառնեցեք ազնվորեն, իսկ ես ձեզ ամոթով չեմ թողնի։ Հուսով եմ, որ փառքով կպսակեմ Հայրենիքի և ձեր անունը»։*

*Այնուհետև Սոկրատը արիությամբ մարտնչում է Կովկասյան նախալեռներում, Կուբանի դաշտավայրում և Օդեսայի ազատագրման համար մղած մարտերում։ Օդեսան հակառակորդը պաշտպանում էր համառությամբ, այն վեր էր ածել հզոր հենակետի։ Մեր զորքերը մարտնչում էին չտեսնված հաստատակամությամբ ու արիությամբ, արյունաքամ անում ֆաշիստական դիվիզիաներին։ Օդեսան գրոհող ռազմիկների շարքերում էր գտնվում նաև Սոկրատ Գալուստաշվիլին։ Նա իր անխափան գնդացրով հնձում էր թշնամուն։ Նրա խիզախության օրինակը ոգևորում էր իր մարտիկ ընկերներին և հպարտությամբ լցնում հայրենակիցների սրտերը։ 1944 թվականի ապրիլի 10-ին Օդեսան ազատագրվում է։*

*Հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և խիզախության ու հերոսության ցուցաբերելու համար ՍՍՌ Միության Գերագույն սովետի նախագահությունը գվարդիայի կարմիրբանակային Սոկրատ Ալեքսեյի Գալուստաշվիլուն 1944 թվականի հունիսի 3-ի հրամանագրով շնորհում է Սովետական Միության հերոսի պատվավոր կոչում, նրան հանձնելով Լենինի շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ։*



# ՋԱՀԱՆ ՍԱՐԳՍԻ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ

## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի գեներալներին, սպայական, սերժանտական ու շարքային կազմին Սովետական Միության հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար,* շնորհել Սովետական Միության հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի շքանշան և «Ոսկե աստղ» *մեդալ.*

*25. Կարմիրբանակային* Ջահան Սարգսի Կարախանյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա, Կրեմլ, 16 մայիսի 1944 թ.։*





Թամանյան դիվիզիայի Սովետական Միության առաջին հերոսներից մեկն է Ջահան Սարգսի Կարախանյանը, որը ռազմաճակատում խիզախ սակրավորի անուն վաստակեց։

Ջահան Կարախանյանը ծնվել է 1918 թվականի մայիսի 2-ին Բարանայի (այժմ Նոյեմբերյան) շրջանի Կողբ գյուղում։ Գյուղի յոթնամյա դպրոցն ավարտելուց հետո Ջահանն իր ուսումը շարունակում է Ալավերդու շրջանի Շնող գյուղի միջնակարգ դպրոցում և այն ավարտում գերազանց գնահատականներով։

1938 թվականին Ջահանն ընդունվում է լենինյան կոմերիտմիության շարքերը և դառնում Կողբ գյուղի ակտիվ կոմերիտականներից մեկը։

Երկու տարի հետո 20-ամյա Ջահանը զորակոչվում է բանակ։ Այստեղ նա ձեռք է բերում հաստատակամություն, զինվում ռազմական ու քաղաքական գիտելիքներով։ 1939—1940 թվականներին Կարախանյանը մասնակցում է Արևմտյան Ուկրաինայի, Արևմտյան Բելոռուսիայի ազատագրմանը և սպիտակ ֆինների դեմ մղած պատերազմին, որտեղ և ստանում է իր առաջին մարտական մկրտությունը։ Շուտով նա զորացրվում է և վերադառնում քաղաքացիական աշխատանքի։

Հայրենական մեծ պատերազմի առաջին օրից Կարախանյանը ցանկություն է հայտնում մեկնել ռազմաճակատ, բայց դա սկզբում նրան չի հաջող-

վում, որովհետև գործարանում նա կատարում էր պաշտպանական աշխատանք։ Այստեղ Ջահանն ընդունվում է Սովետական Միության կոմունիստական պարտիայի շարքերը։ 1941 թվականի դեկտեմբերին նա մեկնում է բանակ։ Կարախանյանը նշանակվում է նոր կազմակերպվող 89-րդ հայկական հրաձգային դիվիզիայի 280-րդ առանձին սակրային գումարտակում՝ ջոկի հրամանատար և միաժամանակ ընտրվում վաշտի պարտկազմակերպիչ։

Թիկունքում եղած ժամանակ սակրավորները կառուցում են վարժական կամուրջներ, կազմակերպում փորձնական դետոնացումներ, ուսումնասիրում սակրային գործի բարդ տեխնիկան։

1942 թվականի օգոստոսին դիվիզիան մեկնում է ռազմաճակատ և մասնակցում Կովկասի հերոսական պաշտպանությանը։ Այդ ծանր օրերին Կարախանյանի ջոկը, դիվիզիայի կազմում, մասնակցում է Մալգոբեկի և մի շարք այլ բնակավայրերի համար մղված մարտերին։ Այդ մարտերի ընթացքում Ջահանը անձամբ դնում է ավելի քան 3000 հակատանկային ական, որի համար արժանանում է «Գերազանց ականորդ» կրծքանշանի։

1943 թվականի սեպտեմբերի 10-ից արյունահեղ մարտեր են մղվում Նովոռոսիյսկ քաղաքի համար։ Հրամանատարության կողմից ծրագրված էր դեսանտային խմբերով, ծովի կողմից, գիշերը, աննկատելի մտնել նավահանգստին և այնտեղից ներթափանցել քաղաք։ Այդ օպերացիան կատարելու համար հայկական դիվիզիայի սակրային գումարտակի վաշտերից մեկը հանձնարարություն է ստանում օգնելու հարևան գվարդիական դեսանտային դիվիզիաներին։ Սակրային վաշտի մեջ էր նաև Կարախանյանի ջոկը։

Թշնամու անընդհատ տեղացող հրետանային ու գնդացրային կրակն ի վիճակի չի լինում խանգարելու սովետական սակրավորներին. նրանք կատարում են իրենց մարտական առաջադրանքը։

Հնգօրյա կատաղի մարտերից հետո, 1943 թվականի սեպտեմբերի 16-ին Հյուսիսային-Կովկասյան ռազմաճակատի զորքերը, Սևծովյան նավատորմի ռազմանավերի և զորամասերի փոխգործողությամբ, ազատագրում են ստրատեգիական խոշոր նշանակություն ունեցող Նովոռոսիյսկ քաղաքը։

Նովոռոսիյսկից դեպի Վերխնի Բականսկ տանող ճանապարհին, որով պետք է անցնեին թշնամուն հետապնդող մեր հետևակը, մոտո-մեքենայացված զորամասերը և տանկերը, կար երկաթուղային մի մեծ կամուրջ։

Կարախանյանն իր ընկերներով հասնում է կամուրջին և զարմացած կանգ առնում. նրան տարօրինակ է թվում, որ թշնամին այն չէր պայթեցրել։ Զննելով կամուրջը, նա նկատում է, թե ինչպես է թշնամին խնամքով նախապատրաստել նրա պայթեցումը։ Կարախանյանն իսկույն պատկերացնում է այն սոսկալի աղետը, որ կարող էր առաջանալ կամուրջի պայթյունից։ Պետք էր շտապել։ Խիզախ սակրավորը կախվելով կամուրջի սյուներից, կտրում է այրվող լարի ծայրը։ Սակայն կամուրջը դեռևս փրկված չէր, քանի որ նահանջող թշնամին սկսել էր հրետանային ռմբակոծության ենթարկել այն։ Բա-

վական էր արկերից մեկը դիպչեր որևէ ականի, և կամուրջը հիմնահատակ կլիներ։

Սակրավորներ Սերգեյ Հարությունյանը, Աշոտ Թամազյանը և մյուսներն սկսում են օգնել Ջահանին՝ որքան հնարավոր է, շուտ ականազերծելու կամուրջը։ Ջահանն արագորեն դուրս է գալիս կամուրջի տակից, դառնում է մեկ գերան և այն հենելով պատին, ընկերների օժանդակությամբ մագլցում է վեր, մեծ զգուշությամբ ու արագությամբ կտրում է լարերը, ցած նետում հրապատիչները և անվտանգ դարձնում 500 կիլոգրամ պայթուցիկ նյութ։

Կամուրջը փրկված էր։ Հետևակը հնարավորություն է ստանում անցնել առաջ։

Այնուհետև Կարախանյանն ակտիվ կերպով մասնակցում է Նովոռոսիյսկի շրջանի Գայդուկ և Վոլչի Վորոտա գյուղերի ազատագրմանը, որտեղ ականազերծում է երեք կամուրջ՝ անվնաս դարձնելով 196 ական և ճանապարհ է բացում դեպի Թաևսկայա, որտեղ ևս ականազերծում է երեք կամուրջ և մասնակցում Թաևսկայայի գրոհին։

1943 թվականի նոյեմբերին Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի մի շարք դեսանտային զորամասեր իջնում են Կերչ թերակղզին և մարտեր սկսում Ղրիմի ազատագրման համար։ Հարձակվող զորքերի առջևից գնում են քաջարի սակրավորները, որոնք ճարպիկ մաներներով մաքրում են ականապատված ուղիները և քարուքանդ անում թշնամու ստեղծած արգելակները։

1943 թվականի դեկտեմբերի 18-ին սակրային դասակը հրամանատարության համար նոր դիտակետ է կառուցում։ Թշնամին անընդհատ կրակի տակ է պահում տեղանքը։ Ջահանը շտապում է բույն առաջ ավարտել առաջադրանքը, երբ լուսաբացին, դեռ խնդիրը չավարտած, հակառակորդի արկերից մեկը պայթում է դիտակետի մուտքի առջև։ Ջահանը ծանր վիրավորվում է և շուտով մահանում։

Գերմանա-ֆաշիստական զորքերի դեմ մղած մարտերում հրամանատարության առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ մարտերի ժամանակ ցուցաբերած խիզախության և հերոսության համար ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահությունը 1944 թվականի մայիսի 16-ի հրամանագրով Ջահան Սարգսի Կարախանյանին հետմահու շնորհում է Սովետական Միության հերոսի կոչում։



# ՍԱՐԻԲԵԿ ՍՈՂՈՄՈՆԻ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ





## ՍՍՌՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Կարմիր բանակի գեներալներին, սպայական, սերժանտական և շարքային կազմին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու մասին

*Գերմանական զավթիչների դեմ մղվող պայքարի ճակատում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և այդ ժամանակ ցուցաբերած խիզախության ու հերոսության համար, շնորհել* Սովետական Միության Հերոսի *կոչում, հանձնելով* Լենինի *շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ.*

*360. Գվարդիայի կարմիրբանակային* Սարիբեկ Սողոմոնի Չիլինգարյանին:

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

*Մոսկվա. Կրեմլ, 31 մայիսի 1945 թ.*





Սարիենկ Սողոմոնի Զիլինգարյանը ծնվել է 1925 թվականի մայիսի 18-ին Հայկական ՍՍՌ Կրասնոսելսկի շրջանի Հին Բաշքենդ գյուղում, աշխատավոր գյուղացու ընտանիքում։ Սովորել է նույն գյուղի միջնակարգ դպրոցում։

1943 թվականի փետրվարին տասնութամյա պատանին մեկնում է բանակ։ Վեց ամսվա ընթացքում ռազմական գիտելիքներ ձեռք բերելուց հետո, նույն թվականի օգոստոսին Զիլինգարյանը արդեն գտնվում էր ռազմաճակատում և Սմոլենսկի մոտ տեղի ունեցած կռիվներում ստանում է իր առաջին մարտական մկրտությունը։ Հանձնարարված հետախուզական առաջադրանքները նա կատարում է հմտորեն և հաջողությամբ։ Այդ մարտերում նա երկու անգամ վիրավորվում է։ Ապաքինվելուց հետո Սարիենկը նորից վերադառնում է ռազմաճակատ, և 23-րդ կարմրադրոշ դիվիզիայի 66-րդ գնդի կազմում մասնակցում Դնոյի, Պորխովի, Օստրովի, Ռիգայի, և ապա Բելոռուսական առաջին ռազմաճակատի զորքերի շարքերում՝ Վարշավայի ազատագրման կռիվներին։

Վարշավայի համար մղած մարտերում Զիլինգարյանը հրամանատարությունից առաջադրանք է ստանում անցնել թշնամու թիկունքը և տեղեկություններ բերել նրա ուժերի ու դասավորության մասին։ Զիլինգարյանը և իր հետախույզները, հաջողությամբ կատարելով հրամանատարության առաջադրանքը, վերադառնում են զորամաս, բերելով արժեքավոր տեղեկություններ,

ների համար նա հրամանատարության կողմից պարգևատրվում է Կարմիր աստղի շքանշանով։

1945 թվականի փետրվարին մեր զորքերը մոտեցել էին Օդեր գետին՝ գերմանացիների պաշտպանության ամուր բնագծերից մեկին։ Համառ պայքար էր գնում Օդերը գետանցելու համար։

Այժմ անհրաժեշտ էին նոր տեղեկություններ։ Այդ պատասխանատու առաջադրանքի կատարումը հանձնարարվում է, փորձված հետախույզներ, Սովետական Միության Հերոս Սերգեյ Նիկիտինին և Սարիբեկ Զիլինգարյանին։ Երբ վրա է հասնում գիշերը, նրանք իրենց մարտիկների հետ միասին զգուշորեն անցնում են գետը։ Մի քանի օր մնալով թշնամու թիկունքում և անհրաժեշտ տեղեկություններ հավաքելով, նրանք վերադառնում են զորամաս։ Այդ տեղեկությունները օգնում են մարտական գործողությունների հաջող կատարմանը։ Հրամանատարության առաջադրանքն օրինակելիորեն կատարելու համար հետախույզները պարգևատրվում են շքանշաններով։ Զիլինգարյանը պարգևատրվում է Փառքի երրորդ աստիճանի շքանշանով։

1945 թվականի ապրիլի 17-ին Զիլինգարյանը հրամանատարությունից առաջադրանք է ստանում՝ յոթ մարտիկների հետ, Բեռլինի մատույցներում անցնել Բուշխովի շրջանի ջրանցքը և հենակետ գրավել նրա մյուս ափին։ Նրանք այդ խնդիրը նույնպես կատարում են հաջողությամբ։ Երբ Զիլինգարյանն իր խմբով արդեն ամրացած է լինում ջրանցքի մյուս ափին, հակառակորդը դիմում է հակագրոհի։ Զիլինգարյանի խիզախներն ուժեղ կրակ են բացում իրենց մոտեցող տանկերի վրա և շարքից դուրս բերում նրանցից երկուսին, իսկ մնացածները դիմում են փախուստի։ Հենակետը գնալով ընդարձակվում էր. ֆաշիստներն ավելի էին գազազում։ Ապրիլի 23-ին ուժեղ մարտեր են տեղի ունենում։ Այդ մարտերում Զիլինգարյանը ոչնչացնում է 15 հիտլերականի։ Մեր մարտիկները գրաված բնագիծն իրենց ձեռքում են պահում այնքան ժամանակ, մինչև օգնության են գալիս հիմնական ուժերը։

Բեռլինում հիտլերականները յուրաքանչյուր տուն վեր էին ածել պաշտպանության ուժեղ կետի։ Սովետական հրամանատարությունը գվարդիական 23-րդ կարմրադրոշ դիվիզիային առաջադրանք է տալիս 3 կմ. հեռավորության վրա գտնվող ամրոցներից մեկը գրավել՝ և նրա վրա բարձրացնել կարմիր դրոշ՝ որպես ընդհանուր հարձակման ազդանշան։ Այդ դժվարին խնդիրը կամավոր կերպով հանձն է առնում խիզախ հետախույզ Սարիբեկ Զիլինգարյանը։

Լուռ գիշեր էր։ Ժամանակավորապես դադարել էին թնդանոթների և մյուս զենքերի համազարկերը, իսկ զինվորները ցերեկվա կատաղի մարտերից հետո փոքր ինչ հանգիստ էին առնում։ Զիլինգարյանն իր հինգ ընկերների հետ զգուշությամբ սողում էր դեպի նպատակակետը։ Նա ձեռքին ամուր պահում էր սպիտակ սավանով փաթաթված կարմիր դրոշը։ Հեռվից հազիվ երևում էր նպատակակետը։ Բայց ինչպե՞ս հասնել այնտեղ. չէ որ թշնամին նրա շուրջն ստեղծել էր ամուր պատնեշ։ Մի պահ մտածելուց հետո, Զիլինգարյանն իր

ընկերներին հրամայում է առաջ նետվել։ Նրանք արդեն հաղթահարել էին հակառակորդի պաշտպանության երկու շերտ, երբ հիտլերականները նրանց նկատում են և ուժեղ կրակ են բացում։ Հետախույզների վեցյակը ավտոմատի կրակով լռեցնում է թշնամուն և թաքնվում։ Քիչ անց նրանք նկատում են, թե ինչպես թշնամու մի զրահապատ մեքենա շարժվում է իրենց ուղղությամբ։ Թաքստոցից Չիլինգարյանը մի քանի նռնակ է նետում մեքենայի վրա, որը մեխվում է տեղում։

Սակայն այդ ընդհարումների ժամանակ Չիլինգարյանը կորցնում է իր մարտական ընկերներին և մենակ, բայց առանց հուսահատվելու, շարունակում է առաջ սողալ դեպի նպատակակետը։ Սարիբեկը բազեի նման խոյանում է հակառակորդի պահակի վրա, խլում է նրա զենքն ու սպանում նրան։ Ճանապարհը բաց էր. ակնթարթային արագությամբ նա անցնում է ամրոցի պահակության մոտից և արագորեն բարձրանում վեր։

Ամրոցի 4-րդ հարկում Չիլինգարյանը հանդիպում է ֆաշիստական 15 զինվորի։ Սովետական ռազմիկի հայտնվելը անակնկալ է բերում նրանց։ Շփոթված հիտլերականների հետ Չիլինգարյանը մենամարտի է բռնվում, նրանցից մի քանիսին սպանում է, իսկ մյուսները փախուստի են դիմում։

Կարմիր դրոշը ձեռքին, նա բարձրանում է ամրոցի վրա և այնտեղ ամրացնում այն։ Կայծակի արագությամբ տարածվում է ամրոցում սովետական զինվորի հայտնվելու լուրը։ Հիտլերականները խաչաձև կրակով գնդակոծում են կարմիր դրոշը և այն հերոսին, որը այդ դրոշը հասցրել էր նպատակակետին։

Վաղ լուսաբացին գվարդիական զորամասն անցնում է հարձակման, գրավում է թշնամու ամրոցը, որի տանիքի վրա գտնում են ծանր վիրավորված հերոսին։ Սարիբեկին տեղափոխում են սկզբում Բեռլին, ապա Երևան՝ երկարատև բուժման։

Այդ սխրագործության համար ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահությունը 1945 թվականի մայիսի 31-ի հրամանագրով լենինյան կոմերիտմիության սան, գվարդիայի կարմիրբանակային Սարիբեկ Չիլինգարյանին շնորհում է Սովետական Միության հերոսի կոչում։

Ապաքինվելուց և զորացրվելուց հետո Սարիբեկ Չիլինգարյանը 1947 թվականին գործուղվում է Երևան՝ սովորելու կոլտնտեսության նախագահների վերապատրաստման եռամյա դպրոցում։ Այստեղ նա ընդունվում է կոմունիստական պարտիայի շարքերը։

1950 թվականին Չիլինգարյանը նշանակվում է Հին Բաշքենդ գյուղի կոլտնտեսության նախագահի տեղակալ, իսկ հաջորդ տարվանից աշխատում է որպես գյուղսովետի նախագահ։ Այդ պաշտոնում նա աշխատում է մինչև 1956 թվականը, ապա նույն թվականի աշնանը տեղափոխվում է Երևան, ուր մինչև այժմ աշխատում է առևտրի սիստեմում։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Առաջաբան . . . . . . . . . . . . . . 3
Գերագանցության բարձրագույն աստիճան՝ Սովետական Միության Հերոսի կոչում սահմանելու մասին . . . . . . . . . . . 12
Ե. Խալեյան—Իվան Քրիստափորի Բաղրամյան . . . . . . . . 14
Ե. Խալեյան — Համազասպ Խաչատուրի Բաբաջանյան . . . . . . . 22
Վ. Ղազախեցյան — Միքայել Արամի Պարսեղով . . . . . . . 28
Ե. Խալեյան — Սարգիս Սողոմոնի Մարտիրոսյան . . . . . . . 33
Բ. Գրիգորյան — Հմայակ Գրիգորի Բաբայան . . . . . . . . 42
Կ. Ոգումյան — Ասքանազ Գևորգի Կարապետյան . . . . . . . 47
Վ. Ղազախեցյան — Անդրանիկ Աբրահամի Ղազարյան . . . . . . 52
Լ. Մարտիրոսյան — Գագա Գրիգորի Ազամբով . . . . . . . . 57
Բ. Գրիգորյան — Գրիգոր Կարապետի Բաղյան . . . . . . . . 62
Բ. Գրիգորյան — Գրիգոր Շահամի Կալուստով . . . . . . . . 66
Ե. Խալեյան — Լևոն Ենիկանոսի Գաբրիելյան . . . . . . . . 69
Հ. Մելիքսեթյան — Գևորգ Թամրազի Հակոբյանց . . . . . . . 75
Բ. Գրիգորյան—Գեղամ Հայրապետի Միքայելյան . . . . . . . 80
Վ. Ղազախեցյան — Խըդըր Հասան Օղլի Մուստաֆաև . . . . . . 85
Լ. Մարտիրոսյան — Աշոտ Հարեթի Ամատունի . . . . . . . . 89
Վ. Ղազախեցյան — Հրանտ Արսենի Ավագյան . . . . . . . . 93
Վ. Ղազախեցյան — Թադևոս Արշակի Եղիազարյան . . . . . . . 97
Բ. Գրիգորյան — Գրիգոր Միքայելի Հայրապետյան . . . . . . 100
Լ. Մարտիրոսյան — Աշոտ Վաղարշակի Ղազարյան . . . . . . . 105
Ե. Խալեյան — Ղուկաս Կարապետի Մադոյան . . . . . . . . 110
Կ. Կոզմոյան — Ալեքսանդր Սիդորի Մնացականյան . . . . . . 116
Բ. Գրիգորյան — Կոստանդին Ալեքսանդրի Նազարով . . . . . . 121
Վ. Ղազախեցյան — Սուրեն Գրիգորի Պետրոսյան . . . . . . . 126
Կ. Կոզմոյան — Սամսոն Ալիի Սիրաբանդով . . . . . . . . 130
Ե. Խալեյան — Նելսոն Գևորգի Ստեփանյան . . . . . . . . 134
Ե. Խալեյան — Վազգեն Միքայելի Օգանեսով . . . . . . . . 143
Կ. Կոզմոյան — Աշոտ Մինասի Ասրյան . . . . . . . . . 148
Բ. Գրիգորյան — Հրանտ Գևորգի Բաբայան . . . . . . . . 152
Վ. Ղազախեցյան — Աշոտ Ջումշուդի Կասպարով . . . . . . . 157
Լ. Մարտիրոսյան — Իսահակ Մարկոսի Մանասյան . . . . . . . 162
Լ. Մարտիրոսյան — Հակոբ Բալաբեկի Մանուկյան . . . . . . . 166
Ե. Խալեյան — Ալեքսանդր Իոսիֆի Սուրգուչյան . . . . . . . 171
Բ. Գրիգորյան — Լազար Սերգեյի Չապչախով . . . . . . . . 176
Վ. Ղազախեցյան — Կարապետ Սիմոնի Սիմոնյան . . . . . . . 180
Լ. Մարտիրոսյան — Գառնիկ Բարսեղի Վարդումյան . . . . . . 185
Կ. Կոզմոյան — Գարեգին Շեկոյի Բալայան . . . . . . . . 190

Հ. Միքայելյան — Արման Կարապետի Բաղդասարյան . . . . . . . . 194
Հ. Միքայելյան — Կոստանդին Իլիայի Խաչիև . . . . . . . . . 195
Լ. Մարտիրոսյան — Արմեն Թևանի Հայրյան . . . . . . . . . 201
Կ. Կոզմոյան — Համլետ Լևոնի Ղազարյան . . . . . . . . . 205
Ն. Խալեյան — Անդրանիկ Ալեքսանդրի Մանուկյան . . . . . . . . 208
Բ. Գրիգորյան — Սամսոն Մովսեսի Մկրտումյան . . . . . . . . . 214
Վ. Ղազախեցյան — Հարություն Խաչիկի Ջաքրյան . . . . . . . . 219
Ն. Խալեյան — Վասիլ Նազարի Սարգսյան . . . . . . . . . 222
Լ. Մարտիրոսյան — Հրանտ Առաքելի Օհանյանց . . . . . . . . 227
Կ. Կոզմոյան — Էդուարդ Մելիքի Պյանյան . . . . . . . . . 231
Հ. Միքայելյան — Գևորգ Արշակի Առուստամյան . . . . . . . . 235
Լ. Մարտիրոսյան — Թեմիկ Հովհաննեսի Ավթանդիլյան . . . . . . . . 239
Ն. Խալեյան — Սերգեյ Ավդեյի Բունիաթյան . . . . . . . . . 243
Վ. Ղազախեցյան — Վալերիկ Սիմոնի Զարարյան . . . . . . . . 249
Կ. Կոզմոյան — Խորեն Արմենակի Խաչատրյան . . . . . . . . 252
Կ. Կոզմոյան — Ռուբեն Ղազարի Հակոբյան . . . . . . . . . 257
Լ. Մարտիրոսյան — Խաչատուր Եգորի Մելիքյան . . . . . . . . 261
Ն. Խալեյան — Վլադիմիր Հակոբի Յամբուլով . . . . . . . . . 265
Կ. Կոզմոյան — Ղազարոս Ավետիքի Ավագյան . . . . . . . . . 270
Լ. Մարտիրոսյան — Գուրգեն Միրզոյի Արզումանյան . . . . . . . . 273
Վ. Ղազախեցյան—Ռուբեն Քրիստափորի Բաղիրով . . . . . . . . 276
Վ. Ղազախեցյան — Միհրան Միհրանի Բաստանջյան . . . . . . . . 280
Կ. Կոզմոյան — Սերգեյ Վարդանի Գրիգորյան . . . . . . . . . 284
Բ. Գրիգորյան — Վլադիմիր Աբրահամի Հովհաննիսյան (Իվանիսյան) . . . . . 288
Ն. Խալեյան — Անդրեյ (Անդրանիկ) Հակոբի Մուրադյան . . . . . . . 291
Բ. Գրիգորյան — Մարտիրոս Կարապետի Նազարյան . . . . . . . . 297
Բ. Գրիգորյան — Ֆեոդոր Իսայի Սարգսյան . . . . . . . . . 301
Ն. Խալեյան — Սերգեյ Աբրահամի Սարխոշև . . . . . . . . . 304
Հ. Միքայելյան — Արամ Ամբակումի (Հովակիմի) Սաֆարյան . . . . . . 310
Բ. Գրիգորյան — Սերգեյ Մամբրեի Օհանյան . . . . . . . . . 314
Բ. Գրիգորյան — Աղվան Նահապետի Բարսյան . . . . . . . . . 319
Բ. Գրիգորյան — Հարություն Ռուբենի Մելիքյան . . . . . . . . 324
Հ. Միքայելյան — Դավիթ Միսակի Յաղիջյան . . . . . . . . . 328
Հ. Միքայելյան — Երվանդ Գևորգի Գարանյան . . . . . . . . . 332
Հ. Միքայելյան — Աշխարհբեկ Սարգսի Ղազարյան . . . . . . . . 337
Հ. Միքայելյան — Անդրանիկ Խաչիկի Մելքոնյան . . . . . . . . 341
Հ. Միքայելյան — Իշխան Բարսեղի Սարիբեկյան . . . . . . . . 344
Վ. Ղազախեցյան — Համլետ Արմենի (Հարությունի) Սևոյան . . . . . . 348
Լ. Մարտիրոսյան — Արսեն Արամի Տեր-Օհանյան . . . . . . . . 352
Կ. Կոզմոյան — Ալիկ Վարդանի Անտոնյան . . . . . . . . . 356
Բ. Գրիգորյան — Սուրեն Սմբատի Առաքելյան . . . . . . . . . 359
Լ. Մարտիրոսյան — Սուրեն Արտեմի Ասլամազշվիլի (Ասլամազյան) . . . . . 363
Ն. Խալեյան — Համլետ Մանիչի Կիկոսյան . . . . . . . . . 367
ՍՍՌՄ Զինված ուժերի մինիստրի հրամանը Սովետական Միության Հերոս Համլետ Ավետիսյանին 390-րդ հրաձգային դիվիզիայի ցուցակում առհավետ գրանցելու մասին . 371
Ն. Խալեյան — Իվան Իվանովիչ Բոնդարև . . . . . . . . . 373
Բ. Գրիգորյան — Երեմ Իվանի (Հովհաննեսի) Դանիելյանց . . . . . . 377
Լ. Մարտիրոսյան — Նշան Աղայի Դարբինյան . . . . . . . . . 380

Վ. Ղազախեցյան — *Հայկ (Վահիկ) Հմայակի Լևոնյան* . . . . . . 385
Ք. Գրիգորյան — *Գարուշ Սերգեյի Կոստանդինով* . . . . . . . 389
Ն. Կոզմոյան — *Այգին Հարությունի Հարությունյան* . . . . . . . 392
Ն. Կոզմոյան — *Հարություն Ռուբենի Մկրտչյան* . . . . . . . 396
Լ. Մարտիրոսյան — *Արամայիս Սարգսի Պողոսյան* . . . . . . . 400
Ն. Կոզմոյան — *Իվան Կոստանդինի Շահումյան* . . . . . . . . 403
Ն. Կոզմոյան — *Վարդգես Արշակի Ռոստոմյան* . . . . . . . . 407
Լ. Մարտիրոսյան — *Լիպարիտ Միրզոյի Իսրայելյան* . . . . . . . 411
Ն. Կոզմոյան — *Սուրեն Հակոբի Կասպարով (Գասպարյան)* . . . . . 415
Հ. Մելիքսեթյան — *Միհրան Միքայելի Ճալչյան* . . . . . . . . 419
Ք. Գրիգորյան — *Աղավնի Վասիլի Ռոստոմյան* . . . . . . . . 422
Վ. Ղազախեցյան — *Վաչագան Հովհանի Վանեցյան* . . . . . . . 425
Լ. Մարտիրոսյան — *Միքայել-Մուշեղ Աղաբեկի Հարությունյան* . . . . . 429
Ք. Գրիգորյան — *Արամայիս Աստվածատուրի Սարգիսով* . . . . . . . 433
Վ. Ղազախեցյան—*Սուրեն Արտաշի Սարգսյան* . . . . . . . 436
Լ. Մարտիրոսյան — *Սոկրատ Ալեքսեյի Գալուստաշվիլի (Գալստյան)* . . . . 440
Ք. Գրիգորյան — *Ջահան Սարգսի Կարախանյան* . . . . . . . . 443
Լ. Մարտիրոսյան — *Սարիբեկ Սողոմոնի Չիլինգարյան* . . . . . . . 447

## СОДЕРЖАНИЕ

ПРЕДИСЛОВИЕ . . . . . . . . . . . . . . . . . . 5
Об установлении высшей степени отличия звания Героя Советского Союза . 12
Е. Халеян — Баграмян Иван Христафорович . . . . . . . . . . 14
Е. Халеян — Бабаджанян Амазасп Хачатурович . . . . . . . . . 22
В. Казахецян — Парсегов Михаил Артемьевич . . . . . . . . 28
Е. Халеян — Мартиросян Саргис Согомонович . . . . . . . . 33
К. Григорян — Бабаян Амаяк Григорьевич . . . . . . . . . 42
К. Удумян — Карапетян Асканаз Геворкович . . . . . . . . 47
В. Казахецян — Казарян Андраник Абрамович . . . . . . . . 52
Л. Мартиросян — Агамиров Гога Григорьевич . . . . . . . . 57
К. Григорян — Багян Григор Карапетович . . . . . . . . . 62
К. Григорян — Галустов Григор Шаумович . . . . . . . . . 66
Е. Халеян — Дарбинян Левон Хикаросович . . . . . . . . . 69
О. Меликсетян — Акопянц Геворк Тамразович . . . . . . . 75
К. Григорян — Микаелян Гедеон Айрапетович . . . . . . . 80
В. Казахецян — Мустафаев Хдир Гасан оглы . . . . . . . . 85
Л. Мартиросян — Аматуни Ашот Апетович . . . . . . . . . 89
В. Казахецян — Авакян Грант Арсенович . . . . . . . . . 93
В. Казахецян — Егиазарян Татевос Аршакович . . . . . . . 97
К. Григорян — Айрапетян Григор Михайлович . . . . . . . 100
Л. Мартиросян — Казарян Ашот Вагаршакович . . . . . . . 105
Е. Халеян — Мадоян Гукас Карапетович . . . . . . . . . 110
К. Козмоян — Мнацаканян Александр Сидорович . . . . . . 116
К. Григорян — Назаров Константин Александрович . . . . . . 121
В. Казахецян — Петросян Сурен Григорьевич . . . . . . . 126
К. Козмоян — Сибабадов Саманд Алиевич . . . . . . . . . 130
Е. Халеян — Степанян Нельсон Геворкович . . . . . . . . 134
Е. Халеян — Оганесов Вазген Михайлович . . . . . . . . 143
К. Козмоян — Асриян Ашот Минаевич . . . . . . . . . . 148
К. Григорян — Бабаян Грант Геворкович . . . . . . . . . 152
В. Казахецян — Гаспаров Ашот Джумшудович . . . . . . . 157
Л. Мартиросян — Минасян Исаак Маркосович . . . . . . . 162
Л. Мартиросян — Манукян Акоп Балабекович . . . . . . . 166
Е. Халеян — Мурдукян Александр Иосифович . . . . . . . 171
К. Григорян — Чанчахов Лазарь Сергеевич . . . . . . . . 176
В. Казахецян — Симонян Карапет Симонович . . . . . . . 180
Л. Мартиросян — Вартумян Гарник Барсегович . . . . . . . 185
К. Козмоян — Балаян Гарегин Шекоевич . . . . . . . . . 190

О. Меликсетян — Багдасарян Симон Карапетович . . . . . . . 194
О. Меликсетян — Хаджиев Константин Ильич . . . . . . . . 198
Л. Мартиросян — Айриев Армен Теванович . . . . . . . . . 201
К. Козмоян — Казарян Амаяк Левонович . . . . . . . . . 205
Е. Халеян — Манукян Андраник Александрович . . . . . . . . 208
К. Григорян — Мкртумов Самсон Мовсесович . . . . . . . . 214
В. Казахецян — Чакрян Арутюн Хачикович . . . . . . . . . 219
Е. Халеян — Саркисов Васил Надеевич . . . . . . . . . 222
Л. Мартиросян — Оганянц Грант Аракелович . . . . . . . . 227
К. Козмоян — Айанян Эдуард Михайлович . . . . . . . . . 231
О. Меликсетян — Арустамов Геворк Аркадьевич . . . . . . . . 235
Л. Мартиросян — Автандилян Темик Оганесович . . . . . . . . 239
Е. Халеян — Бурназян Сергей Авдеевич . . . . . . . . . 243
В. Казахецян — Захарян Вагинак Симонович . . . . . . . . 249
К. Козмоян — Хачатрян Хорен Арменакович . . . . . . . . . 252
К. Козмоян — Акопян Рубен Казарович . . . . . . . . . 257
Л. Мартиросян — Меликян Хачатур Бегларович . . . . . . . . 261
Е. Халеян — Яврумов Владимир Акопович . . . . . . . . . 265
К. Козмоян — Авакян Казарос Аветисович . . . . . . . . . 270
Л. Мартиросян — Арзуманян Гурген Мирзоевич . . . . . . . . 273
В. Казахецян — Багиров Рубен Христофорович . . . . . . . . 276
В. Казахецян — Бостанджян Мигран Мигранович . . . . . . . 280
К. Козмоян — Григорян Сергей Вартанович . . . . . . . . . 284
К. Григорян — Иоаннисян (Оганесян) Владимир Абрамович . . . . . 288
Е. Халеян — Мурадян Андрей (Андраник) Акопович . . . . . . . 291
К. Григорян — Нагулян Мартирос Карапетович . . . . . . . . 297
К. Григорян — Саркисов Федор Исаакович . . . . . . . . . 301
Е. Халеян — Сархошев Сергей Абрамович . . . . . . . . . 304
О. Меликсетян — Сафаров Арам Амбакумович (Овакимович) . . . . . 310
К. Григорян — Оганов Сергей Мамреевич . . . . . . . . . 314
К. Григорян — Бабаян Агван Нагапетович . . . . . . . . . 319
К. Григорян — Мелетян Арутюн Рубенович . . . . . . . . . 324
О. Меликсетян — Язычян Давид Мисакович . . . . . . . . . 328
О. Меликсетян — Гаранян Ерванд Геворкович . . . . . . . . 332
О. Меликсетян — Казарян Ашхарбек Саркисович . . . . . . . . 337
О. Меликсетян — Мелконян Андраник Хачикович . . . . . . . . 341
О. Меликсетян — Сарибекян Ишхан Барсегович . . . . . . . . 344
В. Казахецян — Сионлян Амаяк Аржинович (Арутюнович) . . . . . . 348
Л. Мартиросян — Тер-Оганов Арсен Арамович . . . . . . . . 352
К. Козмоян — Антинян Авак Вартанович . . . . . . . . . 356
К. Григорян — Аракелян Сурен Смбатович . . . . . . . . . 359
Л. Мартиросян — Асламазашвили (Асламазян) Сурен Артемьевич . . . . 363
Е. Халеян — Аветисян Унан Мкртичевич . . . . . . . . . 367
Приказ Министра Вооруженных сил СССР о зачислении Героя Советского Союза Аветисяна Унана навечно в списки 390 С/П. . . . . . . 371
Е. Халеян — Бондарев Иван Иванович . . . . . . . . . 373
К. Григорян — Данелянц Ерем Иванович (Оганесович) . . . . . . 377

Л. Мартиросян — Дарбинян Ишан Авакович . . . 380
В. Казахецян — Левонян Гайк (Вагик) Амаякович . . . . . 385
К. Григорян — Константинов Гаруш Сергеевич . . . . . . . 389
К. Козмоян — Арутюнян Айдин Арутюнович . . . . . . 392
К. Козмоян — Мкртчян Арутюн Рубенович . . . . . . 396
Л. Мартиросян — Погосян Араманс Саркисович . . . . . . 400
К. Козмоян — Шаумян Иван Константинович . . . . . . . . 403
К. Козмоян — Ростомян Вардкес Аршакович . . . . . . . . 407
Л. Мартиросян — Исраелян Липарит Мирзаевич . . . . . . . 411
К. Козмоян — Каспаров (Гаспарян) Сурен Акопович . . . . . . . 415
О. Меликсетян — Шалджян Михаил (Мигран) Михайлович . . . . 419
К. Григорян — Ростомян Анавен Васильевич . . . . . . . . 422
В. Казахецян — Ванцян Вачаган Унанович . . . . . . . . 425
Л. Мартиросян — Арутюнов Михаил-Мушег Агателович . . . . . 429
К. Григорян — Саркисов Араманс Асатурович . . . . . . . 433
В. Казахецян — Саркисян Сурен Арташесович . . . . . . . 436
Л. Мартиросян — Галусташвили (Галстян) Сократ Александрович . . . 440
К. Григорян — Караханян Джаан Саркисович . . . . . . . . 443
Л. Мартиросян — Чилингарян Сарибек Сугулович . . . . . . . 447

---

## ԳԻՐՔ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ

*Հրատ. խմբագիր Ռ. Խ. ՄԱՆՈՅԱՆ*
*Նկարչական ձևավորումը Կ. և Մ. ՏԻՐԱՏՈՒՐՅԱՆՆԵՐԻ*
*Տեխ. խմբագիր Հ. Լ. ԳՈՐՈՅԱՆ*
*Սրբագրիչ Ջ. Խ. ՕՐՄԱՆՅԱՆ*

*ՎՖ 06728, Հրատ. № 2110, Խմբ. № 776, պատվեր 270, տպաքանակ 8000*

*Հանձնված է արտադրության 3/IV 1963 թ., ստորագրված է տպագրության 10/X 1964 թ., տպագրական 28,5 մամուլ+3 ներդիր, հրատարակչական 27,7 մամուլ, թուղթ 60×92 1/8: Գինը կազմով 1 ռ. 95 կ.:*

*Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի հրատարակչության տպարան, Երևան, Բարեկամության 21:*

## ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

| Էջ | Տող | Տպված է | Պետք է լինի |
|---|---|---|---|
| 15 | 8 ն. | ուսուցման | ուսուցման |
| 18 | 10 վ. | Նախապատրաստում | Նախապատրաստել |
| 20 | 16 վ., 12 ն. | Շաուլայ | Շաուլյայ |
| 21 | 3 վ. | Տուկումսս | Տուկումս |
| 25 | 12 ն. | Վինիցայի | Վիննիցայի |
| 38 | 11—12 վ. | Առաջին | Առաջինը |
| 39 | 12 վ. | Տիլզիտ | Դրեզդեն |
| 65 | 5 վ. | Մորավյան կզզինների | Մորավսկա-Օստրավայի |
| 170 | 8 ն. | մայիսի 16-ի | մայիսի 15-ի |
| 176 | 3 վ. | ՍՍՌՄ | ՍՍԽՄ |
| 225 | 18 վ. | դեկտեմբերի | նոյեմբերի |
| 373 | 5 վ. | պայական | սպայական |
| 376 | 10 վ. | փետրվարի 4-ին | փետրվարի 27-ին |
| 410 | 1 ն. | 3 հուլիսի . | 3 հունիսի |
| 445 | 19—20 ն. | դիվիզիաներին | գնդամասին |


ЛЕНИН

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0068511

ЦЕНА
Л 2856